ՊԼՈՒՏԱՐԿԵՆԱՑ

ՔԵՐՈՎՆԱՑԻՈՅ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ՀԱՏՈՐ Գ.

ՊԼՈՒՏԱՐՔԵՄԱՅ

9(37)
П70

ՔԵՐՈՎՆԱՅՈՅ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԲՆԱԳՐԷՆ
Հ. ԵՂԻԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹՈՄԱՃԱՆ
Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ԱՐԴԵԱՄԲՔ ՔԱՋԱՔԱՅԼ ԱՊԵՏԻ
ՊԱՐՈՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՌԱՓԱՅԷԼԻ
ՂԱՐԱՄԵԱՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՌՄԶԲ



ՊԼՈՒՏԱՐՔԵԱՆ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ԱՐԻՍՏԻԴԵԱՆ

ԵՒ

ՄԱՐԿՈՍԻ ԿԱՏՈՎՆԻ

ԱՐԻՍՏԻԴԷՍ

ԱՐԻՍՏԻԴԷՍ Լիւսիմաքեան էր ՅԱՆ-տիոքեան ցեղէն, և ՅԱԼՈպիկեան ժողո-վրդենէ։ Իսկ յաղագս գոյից և ընչից նո-րա տարբերեալ են բանք։ Կէսք ասեն՝ ե-թէ 'ի վերջին աղքատութեանէ եկեաց այրն. և յետ մահուն դատելք նորա երկու՝ այն-պէս հարուստ մի ժամանակ մնացին ան-ինչք։ Ապ ընդդէմ կայ Փաղերէոս Դե-մետրիոս 'ի Սոկրատէսն, և ասէ՝ տեսեալ իւր 'ի Փաղերոն դաստակերտ յանուն Ա-րիստիդեայ, ուր և Թաղեցաւն իսկ. իսկ զբաղմահարուստ լինել տան նորա ցուցա-նէ առաջին՝ զի եկաց նա իշխանապետ յորմէ անուանեալ կոչէին զտարին. և յայն իշխանութիւն վիճակաւ ընտրեցաւ նա յարս աւագս քաղաքին, որոց անուն կար-դային ՓԷՆԴԱՓՕՒՇՕՄԷՓԻՆ։ Եւ երկրորդ անգամ՝ զի խեցեկոյտ վճռով վտարեցաւ

նա. իսկ խեցեկոյտ վՃիռ ոչ տան վասն աղքատի, այլ որոց քաջազգիք ելցեն և ականաւորք։ Իսկ և երրորդ անգամ, զի կան նորա եռոտանիք հանդիսածուք կախեալք 'ի ձօն 'ի մեհենին Դիոնիսեայ վասն յաղթութեանն. և ցուցանեն զայն մինչև ցայսօր ժամանակի վերոտառութիւն այսպիսի.

"Անտիոքեան ցեղն յաղթեաց.
Արիստիդէս հանդէս էած.
Արքեստրատոս վարժեաց"։

Այլ հաւաստիք այսոքիկ՝ Թէպէտև 'ի վերին երեսս անդրժելիք՝ չեն ինչ հաստատունք։ Քանզի և Եպամինոնդաս ինքնին, որ քաջ իսկ սնաւ և եկաց 'ի մեծի աղքատութեան, դարձեալ և Պղատոն իմաստասէր, հատուցին և դոքա զհանդիսին ծախսն ըստ արժանեաց. առաջինն հատոյց սընգահար որերոյն, և վերջինդ՝ մանկանց դասուն։ Սակայն վասն Պղատոնին հատոյց Դիոն Սիրակուսացի. և վասն Եպամինոնդեայ՝ Պեղոպիդէս։ Եւ քանզի և ոչ միշտ արք լաւք հրաժարեն յընծայից բարեկամացն. այլ զոր օրինակ անարդ և դժպատեհ համարին զպարգևսն ընչաքաղցս և զոշաքաղս, սակայն և ոչինչ խորշին նոքա առնուլ ինչ՝ յորմէ պարկեշտաբար հանդերձին պատիւք։

Բայց և Պանեթիոս յայտ առնէ՝ եթէ վասն եռոտանւոյն սխալէ Դեմետրիոս 'ի

համանուանցն. քանզի 'ի մարտից անտի Պարսից մինչև 'ի վախճան Պեղոպոննիսեան մարտին արձանագրին միայն երկու Արիստիդէսք հանդիսաածուք յաղթականք, և ոչ մի ոք 'ի նոցանէն չէ Արիստիդէսն Լիւսիմաքեան. այլ մին ունի հայր զՔսենոփիլոս, և միւսն եկաց բազմաք զկնի. ըստ որում յայտնի կայ 'ի տառագրութենէն՝ որ եկաց զկնի քերականին Եւկլիդեայ։ Դարձեալ և յանուանէն Արքեստրատոսին, զոր չէք գտանել 'ի մատենագրութիւնս իբրև վարժիչ դասուց առ պատերազմաքն Մարաց, այլ յաճախ Պեղոպոննիսացւոց։ Այլ զբան զայս Պանետեայ 'ի դէպ ելցէ արդեօք մանր ևս ճշդրտել։

Իսկ յաղագս խեցեկոյտ վճռոյն, զոյն պատուհաս կրեն առհասարակ վեհագոյնք խուժանին 'ի համբաւն և 'ի զարմին և 'ի ճարտարաբանութեանն. ուստի և վտրանգութիւն զնոյն կրեաց և Դամոնն այն՝ վարժապետ Պերիկղեայ, զի միայն կարի զգօն և հանճարեղ թուեցաւ այրն։ Առ այս և Իդոմենեւս ասէ, եթէ իշխանաց իշխան կարդեցաւ Արիստիդէս ոչ վիճակաւ, այլ յընտրութենէ Աթենացւոցն։ Եւ արդեօք եթէ յայն աւագութիւն ամբարձաւ նա յետ Պղատեան մարտին՝ որպէս պատմէ մեզ Դեմետրիոսդ այդ, ապա 'ի դէպ է ասել՝ եթէ գեղեցիկ նահատակութիւս այնպիսի նահատակեալ նորա անդանօր, և փառս այնչափ ժառանգեալ անձին, արժանի վասն առաքինութեանն հա-

մարեցաւ բարձին այնմիկ, զոր վիճակաւ վասն ընչաւէտութեանն առնուին այլք։ Սակայն յայտնի դա ինքն Դեմետրիոս՝ ոչ զԱրիստիդէս միայն, այլ և զՍոկրատէս ինքնին ճգնի ազատ յաղքատութենէ առնել՝ իբրև 'ի մեծէ չարէ. քանզի պատմէ ունել Սոկրատայ ոչ տուն միայն, այլ և եօթանասուն մնասս՝ 'ի վարձու տուեալ Կրիտոնի։

Ապա Արիստիդէս ընկեր Կղեսթենեայ՝ որ քաղաքականութիւն հաստատեաց յետ բռնաւորացն, գեղեցիկ նախանձաւոր առաւել քան զամենայն քաղաքագէտս՝ Լիւկուրգոսի Լակեդեմոնացւոյ, թեկն ածէր աւագպետականին. և սատան իւր ունէր զթեմիստոկղէս Նէոկղեան թիկնածուռամկին։ Իսկ կէսք ասեն՝ անդստին 'ի տղայ տիոց երկոցուն դոցա սննդակցաց՝ յամենայն 'ի գործ և 'ի բան անմիաբան եղեալ եթէ 'ի լուրջս, և եթէ յումպէտս։ Եւ ապա 'ի հակառակութենէ ասոի յայսմանէ 'ի վեր երևէր բոյս բարուց երկոցուն նոցա։ Թեմիստոկղէս՝ ժիր և յանդուգն և նենգաժէտ, և հեշտին և արագ ձգէր յամենայնն։ Իսկ Արիստիդէս՝ հաստատուն և անդրդուելի 'ի բարս, անդուլ հակամիտեալ յարդարութիւն. երբէք սուտ չասէր՝ թէպէտ և ընդ կատակս. և խաբանս չնիւթէր՝ թէպէտ և 'ի խաղս։ Այլ Արիստոն Քիացի ասէ, եթէ նոցա հակառակութեան սկիզբն կալաւ անդստին 'ի պատճառաց սիրոյ, և ապա ըստ նմանէն ա-

ՀԵաց։ Քանզի Երկոքին նոքա 'ի սէրն հա-
րեալք Ստեսիղէյոսի ազգաւ Կէացւոյ,
դիմաքն և կերպարանքն քան զամենայն
պատանիս հոյակապ և երևելի, ոչինչ կա-
րացին նոքա չափաւորապէս բերել զկիրան.
ապա և ոչ յետ այնորիկ 'ի նուազել գե-
ղոյ պատանւոյն դադարեցան ինչ նոքա 'ի
հակառակութենէն, և իբրու բնաւորեալք
'ի գժտութիւն՝ այնպէս և 'ի գործս քա-
ղաքին դրգռեալք անմիաբան կային այր
ընդ ընկերի։

Ապա գուն գործեալ Թեմիստոկղէս
հաստել բարեկամութիւնս և ընկերշակել,
արար իւր Թիկունս և զօրացաւ ոչ սակաւ.
ուստի և յասել անդ ուրումն առ նա, Է-
թէ գեղեցկապէս ուրեմն նա իշխէ 'ի վե-
րայ Աթենացւոց՝ զուգահաւասար ամե-
նեցուն ցանգ յարդարելով զանձն, Եւ
պատասխանի. "Քա՛՝ Եթէ երբէք 'ի գահ
բազմեցայց Ես յայն՝ յորում ոչինչ կալ-
ցեն բարեկամք իմ աւելի քան զօտարսն"։
Իսկ Արիստիդէս ինքնին միայնակ՝ իբրու
ընդ առանձին շաւիղ այնպէս գնայր 'ի
քաղաքականութեան իւրում. առաջին՝
զի մի Թերևս միաբանեալ ընդ բարեկամն
գործ անիրաւ ինչ գործեսցէ. և զի մի դար-
ձեալ՝ և ծանրատաղտուկ ինչ լինիցի առ
նոսա՝ ոչ շնթելով նոցա. և երկրորդ՝ տե-
սեալ զի զօրութիւն ամրածածուկ 'ի բա-
րեկամն՝ ածէր ձգէր զբազում գործել
զանիրաւս, ուստի և ինքն անձնապահ լի-
նէր՝ արժանի քաղաքացւոյ բարւոյ համա-

ըեալ զմեծապէս անհրկեանութիւն նորա 'ի գործել և 'ի խօսել միայն զբարին և զարդարն։

ԱՅԼ քանզի Թեմիստոկղէս շատ ինչ իրս յանդուգն շարժէր և յուզէր, և ցանգ հակառակ նմա ամբառնայր 'ի գործս քաղաքին և կարձէր զնա, ապա այնուհետև և Արիստիդէս հարկաւորեցաւ դիմադարձ լինել ամենայն գործոցն Թեմիստոկղեայ՝ 'ի պաշտպանել անձին և 'ի խափանս արկանել զօրութեան նորա, որ 'ի Թիկունս ռամկին գնալով գնայր յառաջադէմ. լաւ ևս համարեցաւ եղծանել զնորա ինչ ինչ ձեռնարկութիւնսն զպիտանիսն անգամ քաղաքին, քան Թոյլ առնել զօրանալ նմա յամենայնի և յաղԹել։ Եւ ապա էր զի առաջի արկեալ Թեմիստոկղեայ իր մի 'ի վայելչականաց անտի, ընդդէմ դարձեալ Արիստիդեայ և յաղԹեալ, չհանդուրժեալ ասէր յելանել իւրում արտաքս յեկեղեցւոյն. եԹէ՝ փրկութիւն չէք վասն Աթենացւոցն գործոց, մինչև զԹեմիստոկղէս՝ 'ի նոյն և զինքն ոչ խարդաւանեսցեն 'ի վիհ անդր։ Դարձեալ և յայլում նուագի առաջի արկեալ խուժանին զկարծիս իւր, և ամենայն դիմամարտութեանցն յաղԹեալ, այն ինչ բարձերեց ժողովոյն հարցանէր վասն այնորիկ զժողովուրդն, նա 'ի բանից անտի նոցա խելամուտ եղեալ ինասուն հանդերձելոյ՝ ինքնակամ յետս կայր 'ի վճռոյն։ Է՛ր և բազում անգամ զի զնորհուրդս իւր առաջի առնէր յայլոցն բերա-

նոյ, զի մի թերևս անդուստ թեմիստոկ-
ղէս տնկակից հակառակութեամբն խոչ
ընդ ոսն լինիցի պիտանեացն։

Բայց պանչելի էր նորա անդրդուելի
հաստատութիւնն յամենայն 'ի փոփոխու-
թիւնս քաղաքականութեանն. ոչ 'ի շուք
պատուոյն հպարտութեամբ երբէք փքա-
նայր. դարձեալ և յորժամ ոչ յաջողէր՝
կայր մնայր անդորր և անխռով. զմտաւ ա-
ծէր եթէ պարտ և արժան է ցանդ զնոյն
օրինակ սպաս տանել հայրենեացն ձրի և
անվարձ՝ ոչ 'ի շահուց միայն այլ և 'ի փա-
ռաց գլխովին։ Ուստի և 'ի վերծանել եր-
բեմն 'ի տեսարանին զմեծավերջն զայն
զՈղբերգութեանն Եպիւղեայ որ վասն
Ամփիարոսին, եթէ. "Քանզի ոչ եթէ
երևեալ կամի արդար՝ այլ լինել. զիսոր ա-
կօսն պտղաբերեալ զհանճարոյն, յորմէ
արդոյքն այն բողբոջեն խորհուրդք". ան-
դ առհասարակ դարձաւ եկեղեցին և
հայէին յԱրիստիդէս. իբրու որ նմա յա-
ւէտ 'ի դէպ դայցէ առաքինութիւնն, այն՝
որ 'ի շնորհս արդարութեանն ոչ բարեկա-
մութեանն և սիրոյ ինչ երեսս առնէր, և
ոչ բարկութեանն և թշնամութեանն։
Քանզի և պատմեն՝ եթէ էր զի ամբաստա-
նեալ նա յատենի զթշնամին, և լուեալ
զամբաստանութիւնն՝ իբրև ոչ կամեցան
դատաւորք ունկն անգամ մատուցանել
ամբաստանելոյն՝ այլ հանդերձեցան ան-
դէն 'ի դատակնիքն՝ ինքնին յայնժամ Ա-
րիստիդէս 'ի միասին ընդ ամբաստանելոյն

յողոք անկանէր դատաւորացն տալ խօսել և յանցաւորին, և զնրաւունսն օրինացն շնորհել նմա։ Սակայն և դատաւոր երբեմն նստեալ Արիստիդէս'ի հակառակութեան երկուց ոմանց, իբրև մի ոմն 'ի նոցանէն ասէր վասն ընկերին՝ եթէ և Արիստիդեայ նա վիշտս բազում հասուցեալ է, ետ պատասխանի. "Սա՛ մանաւանդ ո՞վ քաջդ, եթէ քեզ ինքնին չար ինչ հասուցեա՞լ ի-ցէ դորա. քանզի վասն քո աւադիկ նստիմ դատաւոր և ո՛չ վասն իմ"։

Իսկ յետ այնորիկ կարգեալ Արիստիդէս խնամակալ 'ի վերայ մոիցն հասարակաց, եցոյց եթէ ո՛չ ոք միանգամ առ նովաւ կային 'ի պաշտամանն յայնմիկ, այլ և ոք 'ի նախնումն, շատ ինչ խորեցին 'ի դրամոցն. և յաւէտ Թեմիստոկղէս՝ որ Թէպէտև այր հանճարեղ՝ չէր ձեռին իւրում իշխան։ Ուստի և Թեմիստոկղէս միաբան ընդ բաղմաց ամբաստան զնմանէ կացեալ՝ 'ի տալ զհամար պաշտամանն, հնարս հնարեցաւ իբրև գող դատապարտել զԱրիստիդէս. ըստ որում գրեաց Իդոմենեւս։ Յայնժամ յոյժ 'ի խոր խոցեալ և բողոք կալեալ աւագ և լաւ որեար քաղաքին վասն այնորիկ, դէպ եղև՝ զի ո՛չ միայն յամենայն պատուհասէն արձակեցաւ Արիստիդէս, այլ և կրկին աւագացաւ նա 'ի նոյն պաշտօն։ Իսկ Արիստիդէս 'ի ժամանակին կեղծաւորեալ՝ իբրու ստրջացեալ ընդ առաջին գնացան, և հեշտընկալ ցուցեալ զանձն և ամոք՝ հաճոյ դատանէր առ-

հասարակ ամենեցուն նոցա՝ որ խորէին 'ի հասարակաց ընչեցն, ոչ քննէր և ոչ ճըշգրիտ պահանջէր համար. որպէս զի և լիացեալ նոքա այնուհետև 'ի հասարակաց գոյեցն, մեծապէս 'ի գովութիւն առնուին զԱրիստիդէս. դարձեալ և վասն նորա թախանձ առաջի արկանէին ժողովրդեան՝ փութոյ պնդութեամբ միւսանգամ զնա հաստատել իշխան։ Ա՛յն ինչ նոքա հանդերձեալ էին տալ նմա զքուէայսն, կայր նա և կշտամբէր զԱթենացիսն այսպէս. "Մինչ ես ինքնին հաւատարիմ և գեղեցիկս վարեցայ 'ի գործ իշխանութեան, խոտան գտայ. իսկ յորժամ յանհոգս կացի՝ խորեալ շատ ինչ 'ի հասարակաց ընչեցն, քաջ համարիմ ձեզ քաղաքացի զարմանալի։ Այլ իմ զարդիս առաւել զամօթի հարեալ է ընդ առաջիկայ պատիւդ, քան ընդ առաջին գատակնիքդ. և ցաւ է ինձ վասն ձեր՝ առ որս փառք են առաւել՝ թիկունս տալ չարաց, քան պահել զհասարակացն"։ Զայս ասաց, և զգողութիւնն նշաւակեալ՝ խցանէր զբերանս գովչացն, և գովութիւն ճշմարիտ և արդար ձգէր յայնժամ յանձն զլաւաց արանցն։

Իսկ յետ այնորիկ Դատիս առաքեալ 'ի Դարեհէ՝ 'ի վերին երեսս իբրև վրէժխնդիր լինել Աթենացւոցն վասն հրկիզութեանն Սարդիոյ, այլ 'ի նեղքոյ նուաճեալ ունել առհասարակ զՀելլենացիս, եկն եհաս նա 'ի Մարաթոնն հանդերձ ամենայն նաւուքն՝ յաւարի առեալ առհասարակ ըզ-

գաւառն։ Յայնժամ 'ի զօրավարսն Աթեն-
նացւոց այրընտիր վասն մարտին՝ աւագու-
թեամբ վեհագոյն էր Միլտիադէս. իսկ
երկրորդ 'ի շուք համբաւոյն և 'ի զօրութե-
էր Արիստիդէս. որ և համաշունչ Միլ-
տիադեայ դիմագրաւ խաղալ ընդդէմ թըշ-
նամւոյն՝ մեծապէս զօրավիգն էր կողմանն
Միլտիադեայ։ Այլ իբրև օր ըստ օրէ այր
այր 'ի զօրավարացն զանձամբ առնոյր զա-
ռաջնորդութիւն բանակին, կարգ հասեալ
Արիստիդեայ՝ նա կամակար տայր զայն 'ի
ձեռս Միլտիադեայ. և այնպէս ուսուցա-
նէր իշխանակցացն եթէ հնազանդ իմաստ-
նագունիցն կալ արանց՝ դժպատեհ չէ,
նա փառաւոր է և մեծապէս շահ. ուստի
և ամոքեալ զնոցա նախանձաւորութիւնն,
մտադիւրագոյնս կալ ընդ քաջախոհիցն ա-
ռաջնորդութեամբ՝ զօրացուցանէր զկողմն
Միլտիադեայ, և հաստատուն ևս զնորա
գործէր հրամանատարութիւնն. և այր այր
այնուհետև զաւուրն զկարգ իւրաքանչիւր
տայր մտադիւր հլութեամբ 'ի ձեռս նորա։

Բայց 'ի մարտին յայնմիկ վատթարեալ
Աթենացւոցն, և առաւել ևս՝ 'ի միջոցին,
և հարուստ մի անդանօր բարբարոսացն 'ի
դիմի հարեալ Լևոնեան և Անտիոքեան ցե-
ղիցն, Միլտիադէս 1 Լևոնեան և Արիս-
տիդէս Անտիոքեան կացին կարգեցան ա-
ռընթեր միմեանց՝ մարտ եղեալ կռուէին
քաջապէս զօրութեամբ։ Ապա վանեալ
զբարբարոսսն մինչև 'ի նեղքս անդ նաւաց
նոցա, տեսեալ՝ զի ոչ դէպ ուղիղ նաւէին

'ի կղզիսն, այլ բուռն 'ի հողմոյն և 'ի ծո-
վէն բերէին նոքա յԱտտիկէ կոյս. զանգի-
տեալք գուցէ հասեալ ըմբռնեսցեն նոքա
զԱթէնս թափուր 'ի զօրականէն, շտապե-
ցան անկան յուղի յոսսանն հանդերձ ինն
ցեղիւք՝ և 'ի նմին աւուր ժամանեցին անդր:

Իսկ զԱրիստիդէս Թողին յայնժամ 'ի
Մարաթոն հանդերձ իւրով ցեղիւն 'ի պահ-
պանութիւն գերեալոյն և աւարին, ոչինչ 'ի
դերեւս ելեալ 'ի գեղեցիկ կարծեացն վասն
առն. քանզի 'ի վրանսն և 'ի նաւսն գե-
րեալս ամբաւ էին մթերք արծաթոյ և
ոսկւոյ և պատմուճանք հանդերձեալք գու-
նակ գունակ, և այլ ինչ բազում յոյժ. ոչ
ինքն մերձեցաւ 'ի նոսա, և ոչ այլոցն թոյլ
ետ. բայց եթէ ոմանք զանխուլ 'ի նմանէն
կալան ինչ անտի, յորոց մի էր և Կալլիաս
Ջահընկալ: Քանզի առ ոտս սորա եկեալ
անկեալ մի ոմն 'ի բարբարոսաց անտի, 'ի
գիսակացն և 'ի վարսակալէն կարծեալ զնա
թագաւոր և երկրպագեալ նմա և զաջոյն
կալեալ ցուցանէր նմա մթերս ոսկւոյ թա-
ղեալ ուրեք 'ի գրի: Յայնժամ Կալլիաս
յոյժ անագորոյն գտեալ և ամբարիշտ ա-
ռաւել՝ առնուլ էառ զոսկին, և զբարբա-
րոսն անդէն սպանանէր՝ զի մի 'ի վեր ելցէ
բանն: Եւ վասն այսորիկ՝ ասեն՝ եթէ ձե-
տին սորա Կատակերգակ քերթողք անուն
կարգացին Լաքոքլոնիք, այս է՝ Գրահա-
րուաղք, կատակեալ 'ի տեղւոյն՝ ուր զոս-
կին եգիտ Կալլիաս:

Ջայսու ժամանակաւ Արիստիդէս ամ-

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

բառնայր վաղվաղակի յաւագութիւն մեծ՝ յորմէ զտարին յորջորջեն. Թէպէտ և Փաղերեւս Դեմեարիոս ասէ՝ ունել նմա զաւագութիւնն զայն սակաւ մի յառաջ քան զմահ վախճանին յետ Պղատեան մարտին։ Սակայն յԱրձանագրութենէն յետ Քանթիպիդեայ՝ առ որով պարտեցաւ Մարագոնիոս 'ի Պղատէա, 'ի բազումն որ ըստ նմանէն՝ չլիք գտանել զանունդ Արիստիդէս. իսկ անդէն յետ փաննիպպոսի առ յաղթութեամբն Մարաթոնայ՝ է գտանել իշխանաց իշխան զԱրիստիդէս։

Բայց յայլ ամենայն առաքինութիւնս նորա՝ առհասարակ զհամբաւի հարեալ է արդարութիւն առն. զի և յաճախ են պէտք առաքինութեանդ և յընթանուրս ծաւալեալ. ուստի և նա Թէպէտև աղքատ և 'ի սոսկականաց, ժառանգեաց անձին զմեծաբքայականն զայն և զաստուածային յորջորջումն Արդար. զորոյ և թեկն չէած ոչ 'ի թագաւորաց և ոչ 'ի բռնաւորաց, մեծապէս հեշտացեալ նոքա յանուանակոչութիւնսն՝ Փիլիոր+իդէ, այն է՝ Քաղաքամարտ. և Քէրաւնէ, այն է՝ Շանթք. և Նի+ապօ՝ն, այն է՝ Յաղթողք. և կէսք դարձեալ՝ Արծո՝ի+ և Բաղէ+. և սիրեցին նոքա առաւել զփառս զքրնութեանն և զզօրութեանն, քան զառաքինութեանն։ Եւ այն զի յերից անտի՝ յորս թուի թէ ինքնին աստուածութիւնն (որում տեսչացան նոքա նմանութեանն և ընտանութեանն) առաւել փայլէ, յանապակա-

նութիւնն ասեմ և 'ի զօրութիւնն և յա-
ռաքինութիւնն, արդոյ և պատուական է
առաքինութիւնն և աստուածայնագոյն։
Քանզի անապականութեան հաղորդք են
և Դատարկն, գարձեալ և Տարերքդ. իսկ
զօրութիւն մեծ ունին և գետնաշարժքն և
շանթք կայծականց և հողմոց մրրիկք և
զայրացեալոց գետոց հոսանք. սակայն ար-
դարութեան և ուղղութեան հաղորդ լի-
նել չեն հնար առանց հանճարեղ և աս-
տուածային խորհրդոյ։ Եւ քանզի մարդիկ
երբակի զգածեալք առ աստուածութիւն,
վասն երանութեանն, վասն երկիւղին, և
վասն պատուոյն. թուի թէ՝ հիացեալք ե-
բանեն զնա 'ի պատճառս անապականու-
թեանն և յաւիտենականութեանն. իսկ
երկնչին գողան՝ 'ի պատճառս ինքնակալ
զօրութեանն. իսկ սիրեն և պատուեն
և պաշտեն՝ 'ի պատճառս արդարութեանն։
Այլ թէպէտ և օրինակ զայս զգածեալք
ցցեն, ոչ այլ իմիք տենչան նոքա՝ բայց
անմահութեան, զոր բնութիւնս մեր ջն-
գունի 2. նոյն և զօրութեանն՝ այն որ ա-
ռաւելագոյն մասամբն կախի զբախտէն.
և անփոյթ լինին զառաքինութենէն՝ այն
որ միայն յաստուածային բարեացն 'ի մեզ
յինքեանս է, սխալեալք 'ի խորհուրդս ի-
րեանց. զի և որք 'ի զօրութեան վայելեն
և 'ի յաջողութեան և 'ի տէրութեանն,
զայնպիսեացն զկեանս արդարութիւնն ինք-
նին գործէ աստուածային, իսկ անիրաւու-
թիւնն՝ դազանական։

Եւ արդ 'ի մականուանէ այսի զԱրիս-
տիդէս՝ զառաջինն սիրեցին, և ապա խան-
տացան ընդ նա. առաւել ևս՝ յորժամ
անդուստ Թեմիստոկղէս ձայն համբաւէր՝
եթէ Արիստիդէս 'ի բաց զատեանս խոր-
հրդոյ բարձեալ՝ առ 'ի դատել և տանել
բերել զամենայնն, գաղտաբար միապե-
տութիւն անձին գրաւեալ լոյէ անպահա-
պան և անզէն։ Առ այս՝ և ժողովուրդն
ինքնին փքացեալ 'ի յաղթութենէն զոր
տարան՝ և ամբարտաւանեալ խեռայր ընդ
ականաւոր որեարն և ընդ փառաւոր։ Վասն
որոյ և 'ի կողմանց կողմանց մարդիկ 'ի մի
վայր եկեալ 'ի քաղաքն, խեցեկոյտ վճռով
վտարանդի առնէին զԱրիստիդէս. 'ի վե-
րին երեսս առ ահի բռնաւորութեանն,
իսկ 'ի ներքոյ առ նախանձուն փառացնո-
րա։ Քանզի խեցեկոյտ վճիռ ոչ պատու-
հաս ինչ էր չարութեան, այլ նազելի կոչ-
մամբ անուն կարդային նմա՝ խոնարհու-
թիւն և սանձակոծել պերճութեան և զօ-
րութեան. և էր այն սիրելանս ինն և դիւր
նախանձուն կրից ընդդէմ փառաւորացն.
ոչ պատուհաս վերջին 'ի վերայ ածեալ
նոցա, այլ տասնամեայ տարաշխարհիկ առ-
նելով զնոսա։ Բայց յորժամ օրինակ զնոյն
վտարանդութեան առին և արք անաւագք
և անզգամք՝ և 'ի վերջէ ուրեմն և Իսպեր-
բոզոս, ապա յետ այնորիկ կասեցան Ա-
թենացիք 'ի բանէն յայնմանէ։ Իսկ Իսպեր-
բոզոսին իրք այսպիսի էին։ Աղկիբիադէս և
Նիկիաս յայնժամ մեծապէս ճոխացեալք

էին 'ի քաղաքին, և էին նոքա հերձեալք 'ի միմեանց։ Արդ հանդերձեալ ժողովուրդք 'ի խեցեկոյտ վճիռն, և յայտնի իսկ միում 'ի նոցանէն հասանէր վտարանդութիւնն, եկեալ նոքա առ միմեանս և զբանիւք անկեալ և միաբանեալք՝ զվճիռն զայն առեալ կուտեցին 'ի գլուխ անդր Իւպերբոլեայ։ Յայտնանէ զչարեալ ժողովուրդք՝ զի վտարանդութիւն այնպիսի տուեալ ընդդէմ անաւադ առն Իւպերբոլոսի՝ անփառունակ գտաւ, իսպառ այնուհետև խափանեցին զայն։

Եւ էր վտարանդութիւնդ այդ՝ կարճ 'ի կարճոյ պատմութեամբ՝ այսպիսի ինչ։ Այր այր 'ի ձեռն առնոյր խեցի, և 'ի վերայ գրեալ զանուն առն քաղաքացւոյ՝ զոր վտարէն կամէին, առեալ զնեցին բերէր 'ի վայր մի խորհրդարանին վանդակապատ շուրջանակի։ Ապա աւադանին նախ 'ի հաշիւ արկեալ զկոյտ խեցեացն, եթէ պակաս քան զվեց հազար գտանէր, անվճար էր վճիռն։ Բայց գտեալ և ուրոյն զատուցեալ զմէն մի յանուանցն՝ զոր ոք գտանէին 'ի բազմագունիցն գրեալ, վտարանդի առնէին ընդ ամս տասն, տուեալ նմա վայելել 'ի հասս իւր։ Արդ և յայնժամ օրինակ զայս գրեալք 'ի խեցիս, ասեն՝ եթէ այր ոք անդրագէտ և բնաւ իսկ գուեհիկ անդանօր զիւր խեցին առեալ կարկառեաց Արիստիդեայ՝ իբրու սոսկականի առն, աղաչէր գրել 'ի վերայ զԱրիստիդէան. զարմացեալ Արիստիդէս հարցանէր ցայրն,

միթէ Արիստիդէսդ այդ չար ինչ երբէք գործեա՞լ իցէ նմա. եւ պատասխանի այրն և ասէ. "Ոչինչ. այլ և ո՛չ ճանաչեմ իսկ զայրն. սակայն տաղտկացեալ եմ՝ զի ա-մենայն ուրեք ՝ԷՐԷՐ լսեմ զնա": Զայն լուեալ Արիստիդէս, լուռ եղև ամենեքին. և զիւրական անուանն առեալ գրէր 'ի խեցին և տայր առն: Իբրև օրինակ զայս վտա-րանդի գնաց Արիստիդէս, յելանել իւ-րում 'ի քաղաքէն խնդրուածս առնէր ներ-հակաբար Աքիլլեայ. 'ի վեր զձեռս ամ-բարձեալ աղօթէր, մի երբէք պատահել ժամուն՝ յորում ասիցեն Աթենացիք յիշատակ ածել զԱրիստիդեայ:

Յետ այսորիկ յամին երրորդի չու արա-րեալ Քսերքսէս տագնապաւ ընդ Թեսա-ղիա և ընդ Բիոտիա յԱտտիկէ կոյս, Ա-թենացիք զիւրեանց օրէնսն եղծեալ՝ վճիռ տային դարձի ամենայն վտարելոցն. խի-թացեալք առաւել ևս յԱրիստիդեայ, գուցէ միաբանեալ ընդ Թշնամին և զբա-զումս 'ի քաղաքացեացն յանկուցէ նա 'ի բարբարոսն. ո՛չինչ ուղղապէս դատաստան վասն այնպիսւոյ առն դատելով, այն՝ որ և մինչև եղեալ դարձի վճռոյն՝ հանապա-զորդեալ իսկ էր 'ի քաջալերը Հելլենաց-ւոցն և թելադրէր 'ի պաշտպանութիւն ազատութեանն: Նա և յետ վճռոյն՝ զո-րավար ինքնակալ կացեալ Թեմիստոկղէս, սա այս Արիստիդէս գործակից և խորհրդ-դակից էր նմա յամենայնի. և այնպէս վասն հատարակաց փրկութեան շքեղ յարդարէր

նա զիւր ոխերիմ Թշնամին։ Քանզի յորժամ Եւրիւբիադէս ինդրէր լքանել զԱթենամինա, և գիշերի յառաջ խաղացեալ էառաթիք բարբարոսացն շուրջանակի հասեալ կալան զանցս և զկղզիսն փակեցին, մինչդեռ իրազգած չէր ոք բանին՝ ինքնին Արիստիդէս գիշերային անցեալ քաջութիւն ընդ մէջ նաւացն Թշնամեացն, եկն եհաս յԵգինեայ առ Թեմիստոկղէս, և կոչեալ զնա միայնակ արտաքս 'ի վրանէն, ասէր այսպէս.

"Մեք ինքնին, ով Թեմիստոկղէս, եթէ մոացիք իցեմք, 'ի բաց զարդիս զմերն էդեալ զանոսին զայն գժտութիւն և զմանկականն, բուռն հարցուք աւադիկ մրցել ընդ միմեանս գեղեցիկ և ողջախոհ պատուասիրութեամբ 'ի փրկութիւն Եղլադայ, դու ինքն հրամայելով բանակին, և ես գործակից քեզ գոլով և խորհրդակից։ Եւ քանզի որպէս իրազգած լեալ է իմ, դու միայն քաջախորհուրդ աւադիկ յորդոր 'ի նեղեալս էառուր՝ անդէն յանձուկս յայտնիկ նաւամարտ ընդ Թշնամին լինել, այլ քեզ չանսան նիզակակիցք. Թուի Թէ և Թշնամիք ինքնին գլխովին գործակից Ճգնին 'ի բանիդ յայդմիկ. քանզի և ծովագահս ողջոյն շուրջանակի ծածկեալ կայ 'ի նաւացն Թշնամեացն. որպէս զի և ոչք ոչն անգամ կամեացին, 'ի հարկէ ուրեմն մարտ եղեալ կռուեսցին այժմ քաջութեամբ, զի և ուղի փախստեան ջնեայ"։ Եւ պատասխանի Թեմիստոկղէս և ասէ. "Եւ ինձ

ևս չէն կամք ոմ Արիստիդէս, զի 'ի մրցանս յայս յաղթեսցես դու ինձ. վասն որոյ և եկ և էլ զքեզ արարից 'ի գեղեցիկ սկզբանդ՝ դուն գործեալ յաղթել արդեամբք "։ Եւ պատմեալ նմա միանգամայն զհնարիմաց խորհուրդն իւր 'ի պատրել զբարբարոսն, յորդորեաց զնա գնալ հաւանեցուցանել զԵպրիբիադէս, և խելամուտ առնել եթէ չէ՛ք փրկութիւն՝ բայց նաւամարտիկ լինելով. քանզի և Արիստիդեայ մեծապէս հաւատայր Եպրիբիադէս։ Վասն որոյ և 'ի ժողովն անդ խորհրդոյ զօրավարացն, իբրև Կղէոկրիտոս Կորնթացի ասէր առ Թեմիստոկղէս՝ եթէ ընդ խորհուրդ նորա յաղագս մարտի՝ և ո՛չ Արիստիդէս հաւանեալ է՝ զի ասա մերձ է և լուռ կայ, էառ պատասխանի Արիստիդէս՝ եթէ անշուշտ ինքն չլռէր, եթէ Թեմիստոկղէս քաջիկ խօսեցեալ չէր. ուստի և լուռ կայ՝ ո՛չ շնորհս առնելով նմա, այլ լռութեամբն հաստատէ զխորհուրդ նորա։ Զայս ինչ յայնժամ գործէին նաւապետ իշխանք Հելլենացւոց։

Բայց Արիստիդէս տեսեալ զՊսիւտոսալիա կղզի ոչինչ մեծ՝ յանցան 'ի հանդիպոյ Սալամինոյ՝ ողջոյն գրաւեալ 'ի Թշնամեաց, առեալ 'ի քաղաքացեաց զնահատական և զքաջամարտիկսն, մուծանէր 'ի մակոյկսն և խաղայր գնայր 'ի կղզի անդր. մարտ եդեալ կռուէր ընդ Բարբարոսսն և առհասարակ 'ի սուր մաշէր, բաց 'ի փառաւորաց անտի որ կենդանւոյն ձերբակալ եղեն. յորս էին և որդիք երեք քեռ Թա-

դաւորին՝ որում անուն կարդային Սան-
դաւկէ։ Առեալ զնոսա Արիստիդէս վաղ-
վաղակի արձակէր առ Թեմիստոկղէս. և ա-
սէն՝ եթէ ը հրամանի Եւփրանոիդեայ ըղ-
ձին՝ 'ի պատգամէ իմեմնէ յաղեցան նոքա
'ի զոհ Դիոնիսեայ Գիշախանձին։ Իսկ Ա-
րիստիդէս պատեալ շուրջ զօրականաւք զկըղ-
զեակն, կայր և պահ ունէր առհասարակ 'ի
վերայ ամենեցուն՝ որ հասանէին անդր,
զի մի ոք 'ի բարեկամացն կորիցէ, և մի ոք
'ի թշնամեացն փախստեամբ զերծանիցի։
Քանզի և քաջ իսկ 'ի վայրն Թեւակոխէին
նաւք, և զայրանայր անդանօր դոռ պատե-
րազմին. և ապա նշան յաղթութեան անդ
'ի Պսիւտոսալիա կանգնէր Արիստիդէս։

Այլ 'ի վճարել մարտի պատերազմին
փորձեաց Թեմիստոկղէս զԱրիստիդէս և
ասէր, գեղեցիկ արդեաք է գործ նահա-
տակութեան նոցա, սակայն և լաւ ևս այլ
կայ նոցա առաջի 'ի գործել. այն է՝ առ-
նուլ փակել զԱսիա յԵւրոպա՝ փութա-
պէս նաւարկեալ 'ի Հելլեսպոնտոս և խոր-
տակեալ անդանօր զկամուրջն։ Բայց Ա-
րիստիդէս բողոք բարձեալ առ Թեմիստոկ-
ղէս ասէր՝ 'ի բաց թողուլ համբուն զխոր-
հուրդն, և հնարս մանաւանդ հնարել
վանել զՄարն յԵլլադայ, զի մի 'ի ներքս
փակեալ և փախստեան վայր չգտեալ, մե-
ղեգինս այնուհետև հորդան ահագին տայ-
ցէ բանակին մարտ դնել կռուել։ Իբրև նա
զայս ասաց, Թեմիստոկղէս առեալ միւ-
սանգամ առաքէ առ թագաւորն զԱռնա-

կէս նեղբինին 'ի գերեզոյն. հրաման տայր նմա ասել արքային գաղտաբար, եթէ՝ յանդորը Թեմիստոկղէս զարքայն կամելով հանել՝ արդել Հելլենացւոցն նաւել 'ի կամուրջն կոյս, ուր նոքա բուռն դէմ ելեալ խաղային առհասարակ։ 'Ի լուր բանին զահի հարեալ Քսերքսէս՝ 'ի խուճապ տագնապի չու առնէր 'ի Հելլեսպոնտոս. սակայն և մնայր անդէն Մարդոնիոս հանդերձ բանակաւ երեսուն բիւրուց քաջամարտիկ զօրականաց։

Այս Մարդոնիոս այր ահաւոր և մեծապէս յօրացեալ 'ի բանակ ցամաքին, ոտնհար եղեալ սպառնալիս 'ի վերայ ածէր Հելլենացւոց, գրեալ առ նոսա օրինակ զայս. "Յաղթեցէք դուք ծովական լաստափայտիւք ցամաքային մարդկանդ՝ անգէտք 'ի թիավարել. այլ արդ աւադիկ կայ մեր առաջի լայնատարը սահման թեսաղացւոց, և գեղեցիկ դաշտագետին Բիոտիոյ՝ 'ի կռիւ մարտի քաջաց այրուձիոյ և հեռաւակաց"։ Իսկ առ Աթենացիսն տայր նամականի մանաւոր, և ասէր և կռէր խոստումն յանուն արքային՝ նորոգել շինել զքաղաքն նոցա և տալ նոցա մեթերս ամբաւ դրամոց, և տեարս առնել զնոսա 'ի վերայ ամենայն Հելլենացւոց, եթէ միայն նոքա 'ի բաց կացցեն 'ի մարտէն։

Իրազեկ Լակեդեմոնացիք եղեալք, զանգիտեալ՝ եթէ երբէք հաւանեսցին Աթենացիք, հրեշտակս արձակեցին յԱթէնս աղաչել զնոսա առաքել 'ի Սպարտիա ըզ-

մանկունս իւրեանց և զկանայս, և առնուլ
'ի նոցանէ զամենայն զպէտս կերակրոյ
վասն ծերունեացն, զի չքաւորեալ էին
ժողովուրդք և միանգամայն 'ի կալուա-
ծոցն և 'ի քաղաքէն վրիպեալ էին նոքա։
Իսկ Աթենացիք լուեալ զայս 'ի հրեշտա-
կացն՝ պատասխանի արարին ձեռնագրու-
թեամբն Արիստիդեայ սքանչելի. եթէ՝
ողորմեալք ներեն նոքա թշնամեացն բար-
բարոսաց, եթէ գնոց համարեսցին առ-
նուլ զամենայնն արծաթովք և դրամովք՝
քան զոր լաւագոյն ոչինչ ճանաչեն նոքա.
սակայն սրտնեալք ցասնուն ընդ Լակեդե-
մոնացիսն՝ որք միայն յաղքատութիւն և 'ի
չքաւորութիւն Աթենացւոցն դէտակն կա-
լեալ, իսկ զառաքինութիւն նոցա 'ի մոռա-
ցօնս դարձուցեալ և զնոցա պատուասիրել՝
խրախոյս կարդան նոցա մարտ դնել կռուել
'ի վերայ Եղլադայ 'ի շնորհս ցորենոյն՝ զոր
ջամբեն նոցա։ Զայս ինչ պատասխանի
տուեալ Արիստիդէս, և մուծեալ ապա
զհրեշտակսն յեկեղեցին՝ հրաման տայր
նոցա երթալ ասել Լակեդեմոնացւոց, է-
թէ՝ մթերք չկիր ոսկւոյ այնչափ ոչ 'ի վե-
րայ հողոյդ և ոչ 'ի ներքոյ, զոր երբէք
առցեն Աթենացիքն՝ իբրև նախապատիւ
քան զՀելլենացւոց ազատութիւնն։ Ապա
և առ հրեշտակս Մարդոնիոսին՝ մատնա-
նիշ զարեգակն ցուցեալ՝ ասէր այսպէս.
"Ցորչափ դա զդոյն բոլորէ շրջան, ցանդ
և Աթենացիք մարտ եդեալ կռուեսցին
ընդ Պարսից. զի քանդեցին դոքա զդա-

սառն նոցա, և պղծեալ հրկէզ արարին և զմեհեանսն»: Առ այս և վճիռ դրեաց, նզովս քահանայից կարգալ 'ի վերայ մարդոյ՝ որ առաքեսցէ խօսել խաղաղութիւն ընդ Մարս, կամ որ 'ի բաց օձտեսցի 'ի նիզակակցութենէ Հելլենացւոց:

Ապա հորդան տուեալ թշնամութեամբ Մարդոնիոս յԱտտիկէ այս երկիցս անգամ, յայնժամ միւսանգամ անցին Աթենացիք 'ի Սաղամինէ: Բայց Արիստիդէս առաքեալ 'ի Լակեդեմոնիա բոլոր բառնայր վասն դանդաղկոտ յուլութեանն Սպարտացւոց, զի այնպէս միւսանգամ 'ի բարբարոսին ձեռս լքանեն զԱթէնս, և աղաչէր ձեռն տալ մասին Եղեգայ՝ որ ցայն վայր յանդորրու կայր: Լուեալ զայն Պարետացն, աղդ արարին՝ եթէ զցերեկ հասանէ նոցա պարապել 'ի սփոփութիւնս տօնախմբութեանն, քանզի և էին իսկ նոցա յայնժամ աւուրք Յակինթեան: Զայս առացին, և զցայգն այրընտիր զէնընտիր արարեալ հինգ հազար 'ի Սպարտացւոց, որոց մէն մի 'ի նոցանէն առ ընդ իւր ոգիս եօթն յԻլոտաց անտի, առեալ արձակեցին զնոսա արտաքս զանխուլ յԱթենացւոց. որոց ապա յանդիման եկեալ Արիստիդէս և զնոյն բոլոր բարձեալ, նոքա 'ի ծաղր հատեալ պատասխանի առնէին, եթէ ցնորեալ ուրեմն բանդագուշէ նա և 'ի քուն կայ. զի աւադիկ բանակ նոցա հասեալ կայ յՈրէստիոն, և խաղայ ընդառաջ եկացն, (զի եկք կոչէն նոքա ըղ-

Պարսս)։ Վասն որոյ և Արիստիդէս պա-
տասխանի առնէր, տարաժամ ուրեմն կա-
տակել զոցա՝ իսաբ գործեալ փոխանակ
թշնամեաց՝ ընդ բարեկամսն։ Զայսոսիկ
գրէ մեզ Խգոմենեւս. այլ 'ի հրովարտա-
կին Արիստիդեայ չէ նա 'ի կարգ հրեշտա-
կացն, այլ Կիմոն և Քսանթիպպոս և Մի-
լտոնիդէս։ Ապա կարգեալ նորա զօրավար
ինքնակալ 'ի մարտին, խաղաց գնաց 'ի
Պղատէա ուր հազար հետևակօք Աթե-
նացւոց։ Իսկ Պաւսանիաս սպարապետ ող-
ջոյն բանակին Հելլենացւոց՝ ածեալ ընդ
իւր զՍպարտացիսն եկն յարեցաւ ընդ Ա-
րիստիդեայ. անդանօր և բազմութիւն ևս
այլոց Հելլենացւոց գայր խուռնէր կուռ ըզ-
հետ միմեանց։ Այլ ամբոխ բարբարոսաց
զօրուն բանակ հարեալ առ Ասովպ գետովն՝
պատնշափակ չեղեն առ ամբաւութեանն.
սակայն կարասիք և գոյք նոցա պատուա-
կանք յապահովի եդան 'ի պատուար մի
շրջեալ կուսի, մէն մի 'ի կողմանցն տասն աս-
պարիսաց։

Յայնժամ գուշակ 'ի մէջ արձանացեալ
Տիսամենոս Եղէոս՝ նախապատուսմ յաղ-
թութեանն լինէր Պաւսանեայ և առհա-
սարակ Հելլենացւոցն, եթէ միայն պաշտ-
պանեալ անձանց, և դիմագրաւ ոչ շահա-
տակեսցեն ընդդէմ թշնամւոյն։ Բայց Ա-
րիստիդէս առաքեալ 'ի Դելփիս, պատ-
գամ առնոյր յաստուծոյն՝ յաղթական
լինել Աթենացւոց, եթէ ուխտիւք խընդ-
դրեալ յԱրամազդայ և 'ի Կիթերովեան

Հերայ, և 'ի Պանեայ, և 'ի Յաւերժահարսանցն Սփրագիտեանց, և զոհս յաղեսցեն դիւցազանցն Անդրոկրատեայ, Լեւկոնեայ, Պիսանդրեայ, Դամոկրատեայ, Իպսիոնիի, Ակտէոնիեայ, և Պողիւդեայ. և մարտ մղեսցեն յերկրին իւրեանց, 'ի դաշտին Դեմետրի Եղեւսինեան և Պերսեփոնեայ։

Ահա 'ի պատգամէն վարանեցաւ յոյժ յայնժամ Արիստիդէս։ Քանզի դիւցազունքն՝ որոց զոհ հրամայէր, էին նահապետք Պղատացւոցն. և քարանձաւ Յաւերժահարսանցն Սփրագիտեանց էր 'ի բլուր մի Կիթերոնեայ՝ 'ի կոյս ամարայնոյ մոկց արևուն. և էր 'ի քարանձաւին՝ որպէս ասեն՝ 'ի նախնումն պատգամախօս, յորմէ և կոկոզանային բազումք 'ի դաւառականաց անտի, և անուն կարդային նոցա Նիմֆօլէպտի, այս է՝ Յաւերժահարսնամոլք։ Առ այս և ըստ պայմանի յաղթութեանն, այն՝ եթէ յերկրի իւրեանց մարտ մղեսցեն Աթենացիք և 'ի դաշտին Դեմետրի Եղեւսինեան, պարտ էր անդրէն ըզմարտն առնուլ տանել յԱտտիկէ։ Մինչդեռ յայս վարանս կային, Արիմնեստոս զօրավար Պղատացւոց 'ի քունել իւրում՝ թուէր նմա հարցանել 'ի նմանէ Արամազդայ Փրկողն վասն խորհրդոյ մտացն Հելլենացւոց, և նմա պատասխանի առնել, եթէ "Առ վաղիւն ոմ տէր, առեալ ածցուք մեք զզօրն յԵղեւսինէ, և անդ ըստ պատգամին Պիւթեան՝ մարտ եղեալ կռուեսցուք ընդ բարբարոսաց"։ բայց Ա-

բամաղդ կրկնեաց առ նա, եթէ բնաւ իսկ սխալեն Հելլենացիք. զի Պիւթեան պատգամախօսեալդ մերձ կայ անդանօր 'ի Պղատէա. և եթէ խնդրեացեն՝ գտցեն։

Տեսիլ ապա զայս յայտնապէս տեսեալ Արիմնեստոս՝ զարթեաւ 'ի քնոյն. և առաքէր վաղվաղակի կոչէր զսեղեական 'ի քաղաքացեաց և 'ի հինաւուրց ծերունեաց. և առաջի նոցա պատմեալ և 'ի խորհուրդ մտեալ վասն բանին, գտանէ մօտ 'ի Նիսիոնէն առ ստորոտով Կիթերոնէի մեհեան մի վաղնջուց յոյժ, որում անուն կարդային Դեմեորի Եղեւանեան և Օրիորդին Պերսեփոնեայ։ Ապա փութանակի առեալ ընդ իւր զԱրիստիդէս ածէ զնա 'ի վայր անդր՝ վայր դիպաւոր յոյժ 'ի կարդ ճակատու փաղանգի հեռևակազօրուն. քանզի զառ 'ի վայրեք Կիթերոնէին անմատոյց այրուձիոյն գործէին զաւարտս դաշտագետնոյն սահմանակից մեհենին։ 'Ի նմին վայրի էր և շիրիմ Անդրոկրատեայ պատեալ շուրջ 'ի թաւ ծառոց անտառախիտ։ Եւ զի պակաս մնասցէ և ոչինչ 'ի պատգամէն՝ 'ի յոյս անխաբ յաղթութեն, հաճոյ թուեցաւ Պղատացւոց ձեռնարկութեամբն Արիմնեստեայ բառնալ զսահմանն զայն Պղատեայ՝ անջրպետ Աստիկոյ, և տալ զայն վայր Աթենացւոցն՝ զի այնպէս ըստ պատգամին մարտ մղեսցեն նոքա յերկրին իւրեանց 'ի վերայ Եղլագայ։ Եւ ապա այնչափ իմն զհամբաւի հարաւ այս մեծանձնութիւն Պղատացւոց, որպէս

զի և 'ի հոլովել ամաց բազմաց, Աղեքսանդր մեծ կալեալ զԱսիա և եկեալ պատուար ածեալ զՊղատեաւ, 'ի ձայն քարոզի յՈղոմպիականն հռչակէր՝ զքաղաք զայն տալ Պղատացւոց՝ շուք եդեալ առաքինի մեծանձնութեան նոցա, զի մտադիր եւոուն նոքա Հելլենաց զդեսին իւրեանց 'ի մարտին Մարաց։

Բայց յայնժամ 'ի դասաւորել զօրականին՝ հակառակութիւն յուզէր ընդ Աթենացիս և ընդ Տեգէացիս վասն տեղւոյն. զի Լակեդեմոնացիք կալեալ անդանօր զաջոյ թևն, խնդրէին և Տեգէացիք ըստ սովորութեանն զձախոյն՝ պանծացեալք ընդ նախնիսն իւրեանց։ 'Ի սրտմտութիւն բերեցան Աթենացիք ընդ խնդիրն և ընդ պարծանսն. յառաջ եկաց Արիստիդէս խօսեցաւ և ասէ. "Ժամանակդ՝ որ առաջի կայ՝ ոչինչ ներէ 'ի պայքար ընդ Տեգաբացւոցդ մտանել վասն ազնուականութեան և քաջութեան։ Այլ առ ձեզ ո՞վ Սպարտացիք են բանք մեր և առ. ամենեսեան. զքաջութիւն ո՛չ տեղին բառնայ և ո՛չ տայ։ Որ զինչ և տեղի հրամայեսջիք մեզ 'ի դասուդ՝ մեք զնոյն կալեալ և շքեղ յարդարեալ, գուն գործեսցուք ստուերածս 'ի վերայ առաջնոցն մերոց չածել նահատակութեանց։ Քանզի հասեալ կամք ո՛չ գժտել ինչ ընդ նիզակակիցս, այլ մարտ դնել կռուել ընդ թշնամիս. ո՛չ պարծել յօրանալ ընդ նախնիս, այլ զմեզ ինքեանս յանդիմանել ողջոյն Եղլադայ իբրև արս

զօրութեան. զի մարտս այս ցուցցէ՝ քա-
նիօն արդոյ 'ի Հելլենացիս մէն մի 'ի քա-
ղաքացն էցէ, մէն մի 'ի զօրավարացն, և մէն
մի 'ի զօրականէն "։ Զայս բանս լուեալ
առհասարակ եկեղեցին և զօրավարք, հա-
ճեալք ընդ Աթենացիսն՝ ետուն նոցա
զմիւս թիւն։

Իսկ անդ մինչդեռ Ելլադա ողջոյն վա-
րանեալ կայր ընդ ելս իրացն, և առաւել
իրք Աթենացւոցն 'ի մեծապէս վտանգի
կային, արք ոմանք տոհմիկք և ընչաւէտք
երբեմն՝ և յայնժամ տնանկացեալք, տե-
սեալ զի միանգամայն ընդ ընչից վրիպեցան
նոքա 'ի զօրութենէ իւրեանց և 'ի փառաց,
և այլք ոմանք 'ի պատուի կան տիրացեալք,
եկին ժողովեցան գաղտաբար 'ի տուն մի
'ի Պղատէա. անդանօր երդմնակուռ դաշ-
նաւորք լինէին ընդ միմեանս քակել տա-
պալել զռամկին պետութիւնն. իսկ 'ի կա-
մագիւտն չլինել, եղծանել ողջոյն և մա-
տնտու առհասարակ լինել 'ի ձեռս բար-
բարոսաց։ Իբրև այս իրք յուղէին 'ի բանա-
կին և բազումք ևս յանկուցեալ էին 'ի
բանն, իրազեկ լինէր Արիստիդէս և զահի
հարեալ վասն ժամանակին՝ եդ 'ի մտի ոչ
խսպառ անփոյթ առնել, և ոչ խսպառ նշա-
ւակել. զի և գիտէր իսկ ոչ՝ քանի՞ որերոյ
հասցէ 'ի վերայ փուրշիշ գատաստանին.
լաւ համարեցաւ 'ի ժամուն սահման դնել
արդարութեանն, քան մեծապէս շահուն։
Ապա 'ի բազմաց դաշնաւորաց անսի
ետ ձերբակալ առնել ոգիս ութ միայն,

և 'ի սոցանէն երկուք ոմանք՝ Եպքինէս Լամպրեւս և Ագեսիաս Աքարնեւս՝ որոց մեծ էր դատաստան Ինասուն՝ փախատեամբ մազապուր լինէին. բայց և զայլսն ինքնին Արիստիդէս արձակեաց յազատութիւն. քաջալերը և ապաշաւանաց ժամանակ տուեալ այսուիկ մարդկանն՝ որ յաներևոյթս 'ի ժամուն կարծէին զանձինս. սակայն և զայն տայր գիտել նոցա՝ զի ատեան մեծ աւագիկ արդարութեան կալցեն նոքա անձանց զմարտն զայն՝ 'ի դերևս զամբաստանութիւնն հանել, ողջախոհ մտածութիւն նահատակեալ իրաւապէս 'ի վերայ հայրենեացն։

Այսոցիկ այսպէս եղելոց, ձեռնամուխ այնուհետև 'ի կռիւն լինէր Մարդոնիոս, հորդան տուեալ ամբաւ այրուձիոյն ընդդէմ Հելլենացւոցն՝ որ բանակեալ կային առ ստորոտովն Կիթերոնի յամուր վայրս և յառապարս, բայց 'ի Մեգարացւոցն երից հազարաց որ բանակ 'ի գիւրի հարեալ էին. վասն որոյ և տագնապեցան յերեսաց այրուձիոյն, որ 'ի կողմանց դիմեալք պատեցին զնոսա։ Ապա հրեշտակ մի փութապէս արձակէին Մեգարացիք առ Պաւսանիաս ձեռն տալ նոցա, զի չէին իսկ բաւական միայնակ զդէմ ունել այնչափ բազմութեան գնդին բարբարոսաց։ Զայն լուեալ Պաւսանիաս և տեսեալ ևս զՄեգարացիսն 'ի տեղատարափն ծածկեալ նետից և 'ի տագնապի, ոչ կարացեալ 'ի ժամուն ձեռն տալ սպարտացի սպառա-

զէն փաղանգաւն, փորձ փորձէր 'ի գեղեցիկ նախանձ դրդէլ որ զիւրև զզօրագլուխս և զգնդապետս Հելլենացւոց՝ դիմագրաւ ձեռն տալ Մեդարացւոց. իբրև այլք դանդաղեցան՝ Արիստիդէս յԱթենացիսն իւր ապսպարեալ զբանն, առեալ արձակէր զՈղիւմպիոդովրոս այր նահատակ գնդապետ՝ և գունդ մի ընդ նմա երեքհարիւր ընտիր ընտիր զօրականին. էին ևս ընդ նոսա խառնեալք դիպաղեղունք քաջք։

Իբրև սոքա փութապէս խաղացին յարձակեցան 'ի վերայ Թշնամեացն, անդուստ Մասիստիոս զօրավար այրուձիոյն բարբարոսաց յակն արկեալ՝ այր անհնարին հուժկու և հասակաւ վեթիարի և գեղով մարմնոյն հոյակապ, դարձուցեալ զերիվարն մորակ 'ի կուշտ խաղայր ընդդէմ նոցա։ 'Ի դիմի հարեալ Աթենացիք և մարտ եղեալ՝ բուռն և սաստիկ լինէր գոռն, իբրու եթէ 'ի ժամուն սահմանել զյաղթութիւնն։ Բայց անդանօր նետահարեալ երիվարն ընկենոյր 'ի վայր զՄասիստիոս. և անկեալ առ 'ի յոյժ զինուցն ծանրութէ՝ ոչ ինքն հեշտին կանգնէր յոտին, և ոչ դարձեալ Աթենացիք հեշտեաւ մահ 'ի վերայ ածէին առն. զի և համակ 'ի մարմնին՝ և ոչ 'ի լանջան միայն և 'ի գլուխն՝ ողջ սպառազէն էր այրն յոսկի, 'ի պղինձ, և յերկաթ. ապա 'ի զօրականէն ոմն 'ի սայր աշտէին խոցեալ զնա ընդ ծակ աչացն 'ի սաղաւարտին, այնպէս դիտապատ առնէր զնա։ Իսկ այլք 'ի Պարսիցն թողեալ

անդէն զմեռեալն՝ խուճապեալ 'ի փա-
խուստ դառնային։

Բայց զմեծութիւն նահատակութեանն
գիտացին Հելլենացիք ոչ 'ի դուշնաքէից
անտի տապաստ անկեալոցն, այլ 'ի կոծոյն
և յաշխարէ բարբարոսացն. քանզի 'ի պատ-
ճառս մահուն Մասիստիոսին հասին կորե-
ցին նոքա զվարս իւրեանց և զերիվարացն
և զջորւոցն, և յողբ և 'ի լալիւն լցին առ
հասարակ զդաշտագետինն. իբրու որք
զկրկք մնացին յառնէն, որ քաջութեամբ
արութեամբ և տէրութեամբ՝ բնաւեցն էր
վեհագոյն յետ Մարդոնիոսին։ Ամլ զկնի
հեծելամարտին այնորիկ՝ բանակք երկո-
քին դադարեցան 'ի կռուոյն հարուստ
ժամանակ. քանզի և խղճք և լերդահմայք 'ի
սպանդից անտի՝ յաղթութիւն հմայէին և
Պարսից և Հելլենացւոց՝ եթէ 'ի պաշտպա-
նութեան միայն կացցեն. դարձեալ պար-
տութիւն՝ եթէ առաջին գրգռեսցին նո-
քա 'ի մարտ։

Բայց քանզի նպարակ և վայրիկ մի ևս
պակասէր Մարդոնիոսի, իսկ անդուստ
Հելլենացւոցն գունդ երթալով երթայր և
ստուարանայր 'ի նորեկ զօրականէն, չհան-
գուրժեալ Մարդոնիոս՝ եդ 'ի մտի անդէն
'ի ծագել աւուրն խաղալ անցանել ընդ
Ասովպ և յանակնկալ ժամու անկանել 'ի
վերայ Հելլենացւոց. և ընդ երիկունն կան-
խեալ աղդ առնէր զօրագլխացն։ Ամլ 'ի
մէջ գիշերոյն ձիաւոր ոմն այր մերձեցեալ
անշշունջ 'ի զօրն Հելլենացւոց մնա առ

պարեկապանն, ասէր կոչել առ ինքն զԱ-
րիստիդէս Աթենացի. նա իբրև մտադիւ-
րագոյնս գայր անդր, խօսէլ սկսաւ այրն և
ասէ. "Աղեքսանդրոս եմ ես արքայ Մա-
կեդոնացւոց, և ասա հասեալ կամ՝ ոչինչ
զանգիտեալ 'ի մեծէ վտանգէ առ մեծա-
պէս սիրոյն իմոյ առ ձեզ. զի մի թերևս
հրոսակ անկարծ զարհուրեցուցէ զձեզ, և
լքջիք 'ի մարտիս: Քանզի առ վաղիւն Մար-
գոնիոս մարտ հանդերձի մղել ընդ ձեզ,
ոչ եթէ յուսով ինչ վստահութեան՝ այլ
զի նորա նուաղեցան ամբարք. առ այս՝ և
իղձք և դուշակք 'ի ձախողակ սպանդիցն և
'ի պատգամաց՝ յետս զնա կասեցուցանեն,
և բանակն ողջոյն սրտաբեկ կայ: Սակայն
և 'ի հարկէն ստիպի նա փորձ փորձել ըզ-
բալդին, կամ թէ զտեղի ունել և վերջին
կարօտութեամբն տուայտիլ":

Զայս ասաց Աղեքսանդրոս և խնդրէր
յԱրիստիդեայ մի ումեք այլ պատմել,
այլ ինքնին գիտել և յուշի կապել զբանն:
Արիստիդէս ասէր, դեղեցիկ չէ 'ի ծածուկ
պահել 'ի Պաւսանեայ (զի նմա անդ է զօ-
րավարութիւնդ), բայց յայլոց զանխուլ
կայցէ բանդ յառաջ քան զմարտն. իսկ 'ի
յաղթել Եղլադայ, և ոչ ոք այնուհետև
անծանօթ կայցէ փութոյն և առաքինու-
թեանն Աղեքսանդրի վասն նոցա: Իբրև
զայս ասաց Արիստիդէս, յայնժամ ար-
քայն Մակեդոնացւոց անդրէն մեկնէր 'ի
բաց. և Արիստիդէս եկեալ 'ի վրանն Պաւ-
սանեայ՝ պատմէր յունկն նորա զամենայնն:

Յայնժամ կոչեալ զզօրագլուխսն՝ հրաման տային 'ի կարգի զզօրն ունել, իբրու որ արագ արագ խառնեսցին 'ի մարտ։ Բայց 'ի նմին պահու՝ ըստ որում Հերոդոտոսն պատմէ՝ հարցանէր Պաւսանիաս զկամն Արիստիդեայ, անցանե՞լ արդեօք նմա յաջոյ թևն հանդերձ իւրովքն Աթենացւովք և ճակատել ընդդէմ Պարսից, զի լաւ ևս մարտ մղեսցեն ընդ նոսա՝ զփորձ փորձեալ զնոցա և արիացեալք յառաջին յաղթութենէն. իսկ ինքեան տալ զձախոյն՝ 'ի դիմի հարկանել Հելլենացւոցն՝ որ 'ի կողմն անցեալ էին Մարաց։ Լուեալ զայս զօրագլուխք Աթենացւոց, այր անխորհուրդ առէին զՊաւսանիաս և դժոխըմբէրելի, զի առհասարակ զայլսն անփոփոխ 'ի կայսն պահեալ՝ միայն նա զԱթենացիսն 'ի վեր և 'ի վայր առեալ շրջշրջէ՝ դիմագրաւ զնոսա առնելով իբրև զգէրին Իղոսաց ընդդէմ այրընտիր զօրուն Թշնամեաց։ Բայց Արիստիդէս 'ի մէջ եկեալ խելամտեցուցանէր զնոսա, զի ողք վայրիկ մի յառաջ 'ի պայքար մտեալ ընդ Տէգէացւոց վասն ձախոյ թևին և Ճոխացան 'ի պատուին, իսկ յորժամ Լակեդեմոնացիք մտադիր տեղի տան նոցա վասն աջոյն՝ իբրու զառաջնորդութիւնն տուեալ նոցա, դժկամակս բերեն զշուքն. և ոչ մեծ համարին մարտ դնել կռուել՝ ո՛չ ընդ ցեղակիցսն և ընդ ազգակիցսն, այլ ընդ խժդժիցն և բնակաւոր թշնամեացն։

'Ի բանից աստի նորա 'ի գեղեցիկ՝ կա-

մակարութեամբ Աթենացիք փոխեցին զկայս իւրեանց ընդ Սպարտացւոցն. և առ հասարակ քաջալերէին զմիմեանս և ասէին, թշնամիք աւադիկ դիմեալ գան ո՛չ զօրաւորագոյն ինչ զինու կամ կորովի ևս մարմնով քան զՄարաթոնեան մարտին, այլ են գոցա աւադիկ աղերդունք՝ նոյն, և հանդերձք նոյն խայտաճամուկք, և զարդք ոսկւոյ՝ նոյն, և մարմինք դարձեալ նոյնօրինակ գիրգք, և ոգիք նոյնպէս անարիք։ Ապա յաւելեալ 'ի բանս ասէին. "Իսկ և մեք ինքնին զնոյն ունիմք զէնս և զնոյն մարմին. առ այսոսիկ՝ և արիութիւն մեծ ևս վասն յաղթութեանցն՝ զոր տարաք. և մարտ այժմիկ ո՛չ մարտնչիմք մեք իբրև ըզդոսա 'ի վերայ քաղաքի միայն և գաւառի, այլ և 'ի վերայ յաղթանակացն Մարաթոնայ և Սաղամինոյ, զի մի՛ քան Աթենացւոցն՝ առաւել Միլտիադեայ և բախտին նահատակութիւն կարծեսցին յաղթանակքդ այդոքիկ"։ Իբրև այնպէս փութապէս փոփոխութիւն առնէին կարգաց և կայիցն, իրազեկ այնմ թեբայեցիք եղեալ 'ի դասալիք զօրացն, իսկ և իսկ ազդ առնէին Մարդոնիոսի։ Իսկ նա՝ կամ զի ՅԱթենացւոցն զանգիտեալ, կա՛մ թէ թեկն ածեալ 'ի կռիւ ընդ Սպարտացւոցն կաքաւէլ, փոխէր և ինքն զպարսիկս և ճակատեցուցանէր ընդդէմ Լակեդեմոնացւոցն յաջոյ թևն. և հրաման տայր որ ընդ իւրև յունացն՝ ճակատել 'ի միւս թևն ընդդէմ Աթենացւոց։ Այլ Պաւսանիաս իրազգած

փոփոխութեանն Պարսից, անդրէն փոխեցաւ յաջոյ թեւն. զնոյն առնէր և Մարդոնիոս՝ կրկին անցեալ 'ի ձախոյն ընդդէմ Լակեդեմոնացւոց. և այսպէս ապա անցեալ կարճատէր օրն առանց ինչ գործոյ պատերազմի։

Բայց յետ այնորիկ Հելլենացիք խորհուրդ 'ի մէջ առեալ՝ հաստատեցին խաղալ և 'ի բացեայ բանակ հարկանել 'ի վայր մի բարեջուր, զի աղբիւրք՝ որ անդանօր՝ խանգարեցան յայրուձիոյ բարբարոսացն։ Իբրև գիշեր 'ի վերայ հասանէր նոցա, և զօրագլուխքն ածէին 'ի տեղի բանակհարութեանն, զօրականք ոչինչ այնպէս մտագիւր և միախուսմբ զհետ խաղացեալ, բազմութիւն 'ի նոցանէն յառաջին պատնշացն 'ի դուրս ելեալ միանգամ՝ դէմ եդեալ դնային 'ի քաղաքն Պղատէացւոց. ուստի և աղմուկ շփոթից յուզէր 'ի նոսա՝ մինչդեռ յայսկոյս յայնկոյս օձտեալք՝ անկարգաբար հարկանէին վրանս։ Իսկ Լակեդեմոնացիք յակամայ կամս մնացին անդ վերջոտնեալք։ Քանզի Ամոմփարետոս այր վայրագ և դիմագրաւ 'ի վտանգս, անդրստին գոռ պատերազմասէր, չհանդուրժեալ ընդ բազում դեգերանս մարտին, և յայնժամ զայն չու զօրուն՝ փախուստ անշուշտ կոչէր, և ասէր՝ իւրով իսկ գլնդաւն անդէն զտեղին կալեալ անշարժ՝ ընդդէմ ունել Մարդոնիոսի։ Իսկ յասել առնա Պաւսանեայ վասն չուոյն այնորիկ՝ իբրև 'ի վճռոյ անտի Հելլենացւոց և 'ի

քուեայց նոցուն, յայնժամ Ամոմփարե-
տոս վէմ մի մեծ կալեալ 'ի ձեռանն՝ ձգէր
առ ոտսն Պաւսանեայ և ասէր. "Դա՛ այդ
է իմ քուեայ վասն մարտի պատերազմին,
ոչինչ ուշ եդեալ այլոցն անարի խորհրդ-
դոց և վճռոց": Յայնժամ վարանեալ
Պաւսանիաս՝ առաքէր առ Ամֆենացիսն՝
որ յառաջադէմ չուեալք էին, խնդրէր
վայր մի զտեղի ունել զի 'ի միասին խա-
ղասցեն. և ինքն դէմ եդեալ չու առնէր
հանդերձ մնացեալովքն 'ի Պղատէա, զի այն-
պէս ինքնին և զԱմոմփարետոս յօժարե-
ցուսցէ յուղին:

Իբրև այդն մերկանայր, յայնժամ Մար-
դոնիոս իրազգած չուոյն Հելլենացւոց՝
խաղայր 'ի վերայ Լակեդեմոնացւոց, յօրի-
նեալ 'ի կարգ պատերազմի մեծաւ աղա-
ղակաւ և ահագին դղորդմամբ խուժա-
դուժ հրոսակին, իբրու ոչ 'ի կռիւ՝ այլ
յաւարել յափշտակել զՀելլենացիսն 'ի
փախչել նոցա, և արդեօք վայրիկ մի ևս և
այնպէս յաջողէր գործն: Բայց անդուստ
Պաւսանիաս դէտ ակն կալեալ և զտեղի ա-
ռեալ զօրքն, հրաման տայր առն առն
կալ յակաստանի կազմ և պատրաստ 'ի
մարտ պատերազմի. սակայն և ոչ ուշ կա-
լաւ նա (կամ առ ցաւման սրտմտութեանն
ընդդէմ Ամոմփարետեայ, կամ զի խու-
ճապեցաւ 'ի հրոսակէ անտի բարբարո-
սացն) տալ նշան առհասարակ Հելլենաց-
ւոցն. ուստի և ոչ միահամուռ ամենեքին,
այլ մեկին և տակաւ յորդէր զօրականն

ձեռն տալ օգնականութեան, մինչդեռ անդ խառնեալ իսկ էր դոռ պատերազմին։

Ուրդ իբրև յայնժամ 'ի զոհին իւրում պարապեալ կայր Պաւսանիաս և բարեգուշակք չէին զոհքն, հրաման տայր Լակեդեմոնացւոցն 'ի բաց զվահանն դնել առ ոտս իւրեանց, և զտեղի կալեալ ակնկառոյգք առ ինքն՝ չընկրկել զթշնամին. և ինքն դարձաւ 'ի զոհել։ Այլ անդուստ այրուձի թշնամւոյն յանդուգն խիզախեալ միջամուխ մօտ նետաձիգ լինէին, զի և 'ի սպարտացւոց անտի ոմն այր խոցեալ, անդանօր և Կալլիկրատէս այր՝ որպէս ասեն՝ յոյժ գեղաւոր քան զամենայն Հելլենացիս և հասակաւ բարձր քան զորս 'ի բանակին՝ աղեղնահար եղեալ, մինչդեռ յոգւոցն պարզել սկսաւ՝ ասէր ոչ զմահն ողբալ այր աղագաւ հասեալ կայ 'ի փրկութիւն Եղլադայ, այլ զի անգործ 'ի նահատակութենէն մեռանի։ Եւ թէպէտև այնպէս բուռն էր տագնապ աղեսից նոցա, սակայն և յոյժ աքանչելի էր համբերատար ժուժկալութիւն Սպարտացւոցն 'ի ժամուն, զի չընկրկեցին զթշնամին որ 'ի վերայ խուժէին. այլ կացին մնացին այնպէս ակնկալեալք գեղեցիկ ժամուն յայտնութեան նոցա առ 'ի յաստուծոյ և 'ի զօրավարէն, քաջութեամբ բերեալք անդանօր նետահար տապաստ անկանել անշարժք յիւրաքանչիւր կարգին։

Եւ պատմեն բազումք՝ եթէ 'ի զոհել անդ Պաւսանիասայ և կալ յաղօթս վայր

մի 'ի բայեայ 'ի զօրուէն, 'ի Լիւդացւոց անտի յանկարծ դիմեալք անդր՝ յափշտակեալ ցիր և ցան առնէին զկրս զոհիցն առ հասարակ. իսկ Պաւսանիաս յայնժամ և որք շուրջ զնովաւ՝ չունելով զէնս՝ գաւազանօք և խարազանօք հարեալ վանէին զնոսա։ Եւ վասն այսորիկ 'ի յիշատակ հրոսակին այնորիկ՝ և մինչև ցայսօր կատարի 'ի Սպարտիա տօնախմբութիւն, խարազանելով ըզպատանիսն որ շուրջ գան զսեղանովն, և ապա զհանդէսն կատարեն զԼիւդացւոցն։

Արդ յայնժամ 'ի զոհին 'ի խոր խոցեալ յոգին Պաւսանիաս, մինչդեռ և իրձն պարապեալ սպանդս 'ի սպանդից վերայ յազէր ցանգ, դարձաւ հայեցաւ 'ի մեհեանն կոյս լի՛ արտասուօք, 'ի վեր զձեռսն ամբարձեալ հեղոյր խնդրուածս Կիթերոնեանն Հերայ և այլոց ևս դիցն Պղատայոց երկրին. յաղերս անկեալ մաղթէր, զի եթէ և նախասահման չիցէ յաղթութիւն տանել Հելլենացւոց, գոնեա այնպէս քաջութեամբ նահատակեալ անկանիցին. և գիտացեն թշնամիք՝ եթէ ընդդէմ քաջաց և նահատակաց մարտ եդեալ կռուին։ Այն ինչ զդիսն կարդայր Պաւսանիաս, և անդէն զոյդ աղօթիցն հմայք բարեհնչանք երևեցան, և իրձք և դուշակք յայտ առնէին զյաղթութիւնն, ապա տուեալ նշան առհասարակ շարժել խաղալ ընդդէմ թշնամեացն, անդ էր տեսանել ոչիչն ըզփաղանգ զՍպարտացւոցն՝ իբրև գազան ահագին անգառադեղ որ մազիւքն և բա-

շինքն և մարմնոքն առ հասարակ դիղացեալ՝ խոյացեալ կազմ զամենայն ոյժն Ճգնեաց՝ ի Թափել 'ի ժամուն։

Խելամուտ անդուստ լինէին բարբարոսք՝ եԹէ ընդ մարդկան այնուհետև 'ի վեդ գալ հասանէ նոցա, որ զկեանս 'ի բռին կալեալ՝ մահուչափ մարտ սաստիկ եղեալ կռուեցին։ Յայնժամ 'ի հանդիպոյ ըզպարսկական վահանն խիտ առ խիտ կալեալ՝ այնպէս նետաձիգ 'ի Սպարտացիսն լինէին։ Իսկ սոքա ասպար առ ասպար կուռ և հոծ՝ այնպէս յառաջադէմ խաղային շարժէին, և դիմեալք 'ի վերայ՝ զպարսիկ վահանսն հարեալ ընդոտնէին, և աշտէիւն խոցեալք 'ի դէմս և 'ի լանջս նոցա՝ Թաւալգլոր արկանէին զբաղումս 'ի նոցանէ. նոքա Թէպէտ և տապաստ անկեալք, արուԹիւն նահատակուԹեան ցուցեալ՝ մերկ ձեռօք բուռն զաշտէիցն հարեալ՝ ջարդէին. և սուսերամերկք ևս եղեալ ոչինչ վայրապար, միանգամայն և զկտրոցս իւրեանց 'ի գործ առեալ և զդաշնակսն՝ և զասպարսն վանեալք և 'ի վեդ եկեալք այնպէս հարուստ ժամն կռուեալք 'ի դիմի հարան։

Բայց անդուստ Աթենացիք դէտ ակն կալեալք Սպարտացւոցն, իբրև ձայն մարտի ահագին աղաղակին հասանէր առ նոսա, միանգամայն և հրեշտակ մի ևս՝ որպէս ասեն՝ պատգամաւորեալ դայր առ նոսա 'ի կողմանէն Պաւսանեայ վասն անցկոյն անցելոց, փուԹապէս արագ արագ շարժեցան խաղացին նոքա գալ Թիկունս

տալ նմա։ Իբրև յառաջ դիմեցին ընդ դաշտն 'ի կողմն ձայնի աղաղակին, 'ի վերայ նոցա յարձակեալ խաղացին յայնժամ Հելլենք որ 'ի կողմն անցեալ կային Մարաց։ Անդ Արիստիդէս յակն արկեալ զնոսա, յառաջ նահատակեցաւ եկաց՝ ձայն բարձեալ մեծագոչ կարդայր նոցա յանուն դիցն Ելլադայ՝ 'ի բաց կալ 'ի կռուոյն. մի խուճընդոտն լինել որոց դիմեալ գնան՝ ձեռն տալ նահատակելոցն 'ի մարտ 'ի փրկութիւն Ելլադայ։ Իբրև նոքա ունկն չմատուցին և կարգեցան Ճակատեցան 'ի կռիւ, Թողեալ Արիստիդէս զԼակեդեմոնացիսն՝ դիմեաց անկաւ 'ի վերայ. և էր նոցա Թիւ իբրև հազարաց յինանց. և անդէն 'ի նոցանէն բազմագոյնք վերջոտնեալք յետս կացին. և բարբարոսք ինքնին յայնժամ տեղի տուեալ իսկ էին։

Ասեն՝ եթէ 'ի գոռին յայնմիկ սաստիկ արութեամբ մարտ եղեալ կռուեցան, և առաւել 'ի Թև անդր Թեբայեցւոց՝ որոց արք աւագք և Ճոխք Թիկունս տային Մարաց՝ ձգեալք յայն կռիւ և զիւրեանց ամբոխն Ճոխաբար իշխանութեամբ։ Եւ այսպէս ապա յերկուս բաժանեալ մարտ պատերազմին, առաջին Լակեդեմոնացիք ընկերակեալ վանեցին զՊարսս. իսկ 'ի Սպարտացւոց անտի ոմն Արիմնեստոս անուն անդանօր տապաստ արկանէր և զՄարդոնիոս՝ վիմաւ հարեալ 'ի գլուխն. ըստ որում և նմին Մարդոնիոսի նախագուշակ լեալ իսկ էր պատգամախօսն Ամփիարեան

'ի ձեռն առն Լիւդացւոյ՝ զոր Մարդոնիոս ինքնին արձակեաց առ նա, ըստ որում և առ Տրոփոնեանն՝ զայր ոմն Կարիացի։ Կարիացւոյն պատասխանի տայր հարցումն 'ի բարբառ Կարիացի. իսկ Լիւդացւոյն՝ մինչդեռ 'ի քուն կայր 'ի գաւթին Ամֆիարեայ, թուէր իմն այնպէս մտեալ առ նա պաշտօնէի ուրումն աստուծոյն, և հրամայեալ նմա գնալ 'ի բաց. իսկ 'ի կալն նորա անդէն տակաւին՝ վէմ մի մեծ 'ի գլուխն արձակեալ նորա, և կարծեալ դիտապաստ 'ի հարուածոյն լինել։ Օրինակ զայս պատմեն պատահել բանին։

Իսկ փախստեայքն հալածեալ վանեցան մինչև 'ի Նեղքս 'ի շերտափակն իւրեանց։ Այլ յետ սակաւուց և Աթենացիք թիկնադարձոյց առնէին զԹեբայեցիս, տապաստ արկեալ 'ի դաշտին ոգիս երեքհարիւր յաւագաց անտի նոցա և 'ի փառաւորացն։ Ապա զհետ մտեալ փախչողացն էին և լուր առեալ զբարբարոսացն՝ պաշարեալ 'ի պատնշին, թողեալ զփախստեայն Հելլենացւոց՝ դիմեցին նիզակակիցք ընդդէմ պատնշացն. և հասեալք առ Լակեդեմոնացիսն ոչք բնաւ իսկ վերջացան պատնշամարտ լինել, սոքա հասին կալան ըզբանակետն և հարուածս անհնարինս ածէին 'ի վերայ. քանզի և ասեն իսկ՝ յերեսուն բիւրուց անտի բարբարոսաց՝ քառասուն հազարաց միայն ապրեալ փախստեամբ ընդ Արտաբազայ։

Բայց ոչք յայնժամ 'ի վերայ Եղեգայ

մարտ եղեալ կռուէցան, հազար երեք հարիւր և վեթասուն ոգիք տասպատ անկան 'ի նոցանէ. յորոց յիսուն և երկու էին Աթենացիք՝ առհասարակ յԷանտիդեան ցեղէ մեծապէս արուեստեամբ նահատակեալք՝ որպէս Կղիդեմոս ասէ. և վասն այնորիկ Էանտիդեանք զոհ զոհէին Սփրագիտեան Ցաւերժահարսանցն 'ի Պիւթեան պատգամէ վասն յաղթութեանն 'ի հասարակաց գանձէն։ Իսկ 'ի Լակեդեմոնացւոց անկան ինն սուն և մի, և 'ի Տէգէացւոց անսի՝ վեշտասան։ Այլ զարմանալի է Հերոդոտոս. եթէ զի՛արդ սոցա միայն ասէ կռուել ընդ բարբարոսացն, և ո՛չ այլոց Հելլենացւոց. քանզի բազմակոյտ դիականցն անդանօր և նոցուն շիրիմք՝ առհասարակ Հելլենացւոց վկայեն զյաղթութիւնն. և եթէ արդարև այլք առհասարակ հանդիսատեսք կացին անդանօր և միայն քաղաքք երեք նահատակեցան, ո՛չ արդեօք 'ի վերայ սեղանոյն արձանագրեալ էին, եթէ "Զայս երբեմն Հելլենացիք՝ յաղթական զօրութեամբ 'ի գործ Արեսի զՊարսս վանեաք, ազատն Եւրոպայ՝ զհասարակացն կանգնեցին Արամազդայ սեղան ազատողին"։ Այլ զմարտ զայս մարտեան՝ ըստ Աթենացւոցն՝ 'ի չորրորդի աւուր Պոէդրոմիոնի. և ըստ Բիոտացւոց՝ 'ի քսաներորդի եօթներորդի Պանեմոնի, յորում աւուր և մինչև ցայսօր 'ի Պղատէա կատարի աշխարհաժողն Հելլենացւոց, և քաղաքացիքն զոհ յաղեն Արամազդայ

փրկողն վասն յաղթութեանն։ Իսկ յաղագս տարբերելոյ աւուրն չէն զարմանք. զի և առ մեզ՝ ուր Ճշգրտագոյն ևս են այժմիկ իրք աստեղաբանութեանն, աւուրք նոյն՝ առ ոմանս յաւարտ ամսոյն են, և առ այլս՝ 'ի սկզբանն։

Յետ այսորիկ իբրև Ա̀թենացիք չետոն տեղի Սպարտացւոց 'ի փառս քաջութեան՝ և թոյլ չտային նոցա կանգնել սեպհական նշան յաղթութեան, արագ արագ յայնժամ խանգարեալ տապալէին արդեօք իրք Հելլենացւոց՝ գրգռեալք և օձտեալք 'ի միմեանց և 'ի զէն ընթացեալք, եթէ 'ի մէջ եկեալ Արիստիդէս չէր մեծապէս ամոքեալ զզօրագլուխսն՝ առաւել ևս զԼէով կրատէս և զՄիւրոնիդէս, զպայքարն զայն 'ի դառնասման ապսպարել Հելլենացւոց։ 'Ի խորհուրդ ապա մտեալ Հելլենացւոց վասն բանին, յարեաւ եկաց Թէոդիտոսն Մեգարացի և ասէր՝ զփառս յաղթութեան ո՛չ Ա̀թենայ ընծայել և ո՛չ Սպարտիոյ՝ այլ այլոց ումեմն 'ի քաղաքաց, եթէ մարտ ընտանի յուզել չկամեսցին։ Յետ նորա յարեաւ Կղէոկրիտոս Կորնթացի. և մինչդեռ այր այր ասասեալ մեայր՝ խնդրել նմա զփառսն զայն վասն իւրոցն հայրենեաց, (քանզի և յետ Սպարտիոյ և Ա̀թենայ՝ քաղաք համբաւաւոր էր ինքնին Կորնթոս), բարբառեցաւ նա հեշտալուրս ամենեցուն և զարմանալի. քանզի թեկն ածեալ Պղատացւոց, խորհուրդ ետ վախճան առնել գժտութեան, և զնոյն փառսն

ընծայել Պղատացւոց. քանզի և ընդ շուքն նոցա ոչինչ խեռային կողմանքն երկոքին։ Զայս ասաց Կորնթացին, և նախ Արիստիդէս տեղի տայր յանուն Աթենացւոցն, ապա և Պաւսանիաս՝ 'ի Սպարտացւոցն։

Օրինակ զայս 'ի հաշտութիւն բերեալք, առին ուխտուն քանքար և ետուն 'ի ձեռս Պղատացւոց. նոքա առեալ շինէին նովաւ տաճար Աթենասայ, և դրոշեալ ձուլէին նմա, և զտաճարն ևս պճնեալ զարդարեցին նկարուք, որ և ցայսօր անվթարք կան։ Ապա և Սպարտացիք մասնաւոր կանգնէին ախոյեան, և ուրոյն դարձեալ Աթենացիք։ Եւ առաքեալ յայնժամ հարցանել զպատգամախօսն վասն զոհին, տայր պատասխանի Պիւթիաս՝ կանգնել բագին Արամազդայ ազատողի, և մի ինչ յապրել զոհ՝ մինչև անցուցեալ ողջոյն զկրակ դաւառին. իբրու որ պղծեալ իսկ էր 'ի բարբարոսաց անտի, և կրակ լուցանել սուրբ՝ առեալ 'ի Դեղփեայ 'ի հասարակաց վառարանէն։ Ապա զօրագլուխք Հելլենացւոց փութապէս շուրջ ընթացեալ այսր անդր՝ հարկ 'ի վերայ ածէին ամենեցուն անցուցանել զկրակն։ Իսկ Եւքլիդաս ոմն 'ի Պղատացւոց յանձին կալեալ 'ի դից անտի բերել կրակ 'ի շտապ տագնապի, եկ չոքաւ 'ի Դեղփիս։ Անդ սրբութիւն տուեալ մարմնոյն և սրսկեալ ջրով և պսակեալ դափնեաւ և առեալ 'ի սեղանոյն զկրակն, յուղի անկանէր անդրէն արագավազ 'ի Պղատէա. եկն ետհաս անդր մինչև արևուն մը-

տեալ, ասպարէզս հատանելով հազար 'ի միում աւուր։ Ողջոյն տուեալ քաղաքացեացն՝ եւ զկրակն, և ինքն անդէն տապաստ անկանէր. և վայր մի այնպէս կացեալ՝ փչէր զոգին։ Զնա Պղատացիք առին թաղեցին 'ի մեհենին Եւկղիայ Արտեմիդեայ, և արձանագրեցին զայս քառաչափ. "Զոքաւ Եւքիդաս 'ի Դեղփիս, և դարձաւ 'ի նմին աւուր"։ Այլ բազումք այն են՝ որ Եւկղիա կոչեն և իմանան զԱրտեմիս. իսկ կէսք՝ եթէ էր նա դուստր Հերակլեայ և Միւրտեայ՝ դստեր Մենեսիոսի և քեռ Պատրոկղեայ. և զի կոյս մեռաւ՝ շուք մեծապէս ընկալաւ առ Բիոտացիս և առ Լոկրացիս. զի և յամենայն հրապարակս նոցա կանգնեալ կայ բագին և դրօշեալ նորա, ուր փեսայք և հարսունք զոհ զոհեն՝ մինչեւ ածեալ հարսանեացն։

Իսկ յետ այնորիկ եկեղեցի աշխարհս օրէն խմբեալ 'ի Հելլենացւոց, վՃիռ զայս արձանագրեաց Արիստիդէս. զի ողջոյն Յելլադայ ամի ամի խմբեացին 'ի Պղատէա արք աւագք խորհրդականք և պատուիրակք, զի անդ յամենայն հինգ տարւոջ մրցեացին խաղք Ազատականաց. և առհասարակ Յելլադայ զօրաժողով լեցին 'ի մարտ ընդդէմ բարբարոսաց, ասպարաւորք բիւր մի, և այրուձի հազար, և նաւք հարիւր. և զի՝ և Պղատացիք յաղատութիւն գրեալք՝ համարեացին նոքա իբրև որեար անկապուտ և նուիրական աստուծոյ, և դորձ նոցա լեցի զոհ զոհել վասն Ելլա-

դայ։ Իբրև հաճեալ հաւանեցան առհասարակ, մոագիւր և Պղատացիք յանձին կալան ամի ամի յուղարկաւորութիւն կատարել Հելլենացւոցն՝ որ անդ Թաղեցան. զոր և առնեն նոքա մինչև ցայսօր ժամանակի օրինակ զայս։

'Ի վեշտասաներորդի աւուր Մեմաքտերիոնի՝ զոր Բիոլոտացիք կոչեն Ալալկոմենիոն, յուղի անկեալ ածեն հանդիսաւոր Թափօր ընդ այգանալ աւուրն. յառաջոյ փողարն հարկանէ զմարտ պատերազմի. ածեալ գան զկնի կառք լի մրտենեօք և բոլորիւք պսակաց, և ցուլ մի սեաւ։ Զհետ գան սափորք ձօնից նուիրաց գինւոյ և կաթին, և սրուակք իւղոց և օծանելեաց՝ բարձեալք յաղատ պատանեաց. (զի և օրէն չէ՛ ումեք 'ի ծառայից մտանել 'ի հանդէսն յիշատակի մեռելոց 'ի վերայ ազատութեան)։ Յետ ամենեցուն անցեալ գայ իշխանապետ Պղատացւոց. սա երբէք իշխան չէ՛ մերձենալ յերկաթ, և հանդերձ այլ չարկանէ բայց սպիտակ. այլ յայնժամ պատմուճան արկեալ ծիրանի, բարձեալ 'ի ձեռին կուժ մի 'ի գիւանէն, սուսերաւոր անցեալ ընդ քաղաքն գայ 'ի գերեզմանն։ Ապա ջուր առեալ յաղբերէն՝ ինքնին լուանայ զսիւնն և օծանէ իւղոյն, և փողոտեալ զցուլն 'ի վերայ խարուկին, և յաղօթս կացեալ առ Ապամազդ և առ Հերմէս երկրային՝ հրաւէր կարդայ քաջորերոյն այնմիկ որ մեռան 'ի վերայ Եղլադայ՝ 'ի ճաշ և 'ի ճաշակ յարենէ

անտի։ Ապա լցեալ բաժակ մի գինի և հե-
ղեալ զայն, ասէ զայս. «Եա ինքնին մա-
տուռակեմ քաջորերոյն այնմիկ, որ տա-
պաստ անկան 'ի վերայ ազատութեան
Հելլենացւոց»։ Արդ Պղատացիք զնոյն
կարդ պաշտաման պահեն մինչև ցայսօր
ժամանակի։

Եւ կատարեալ զայսոսիկ՝ իբրև դարձ
յԱթէնս արարին Աթենացիք, տեսեալ
Արիստիդէս՝ զի ռամկապետութիւն խըն-
դրեն նոքա. և զմնաւ ևս ածեալ զարժա-
նիս ռամկին 'ի պատճառս արութեան քա-
ջութեան նոցա. և զի՝ և հեշտին չէր 'ի
ժամուն բռնանալ 'ի վերայ նոցա, զի զէն
'ի ձեռին ճոխացեալք էին, և պերճացեալք
'ի վերայ յաղթութեանցն զոր տարան,
դրեաց վճիռ՝ զի վարչութիւն քաղաքին
հասարակ կացցէ ամենեցուն, և իշխանա-
պետք ընտրեսցին առհասարակ յամենայն
Աթենացւոց։ Եւ յասել երբեմն Թեմիս-
տոկղեայ առ ժողովուրդն, եթէ խորհուրդ
անկաւ 'ի միտս իւր 'ի գաղտնեաց կարդի՝
սակայն օգտակար քաղաքին և փրկաւէտ,
ասաց նմա ժողովուրդն՝ պատմել զխոր-
հուրդն յունկն Արիստիդեայ միայն, զի
նա 'ի քնին առցէ։ Իբրև 'ի վեր Արիստի-
դեայ հանէր Թեմիստոկղէս զխորհուրդն՝
եթէ հրկէզ զնաւահանդէսն պարտ է առ-
նել զՀելլենացւոց, զի այնպէս 'ի բարձ-
րութիւն մեծ եկցեն Աթենացիք և առհա-
սարակ տիրասցին, էկն եկաց յայնժամ
Արիստիդէս յանդիման ժողովրդեանն և

ասէր. Գործ՝ զոր Թեմիստոկղէսն խորհի, չէք ինչ քան զայն առաւել օգտակար, և չէք ինչ քան զայն առաւել անիրաւ։ Իբրև զայն լուան Ժողովուրդք, պատուիրեցին Թեմիստոկղեայ՝ մի՛ ևս այլ ամենևին ժառել վասն բանին այնորիկ։ Այնչափ ինն արդարասէր էին Ժողովուրդք, և այնչափ վստահացեալք յԱրիստիդէս։

Յետ այսորիկ առաքեալ Արիստիդէս 'ի զօրավարութիւն 'ի միասին ընդ Կիմոնի, դէտ ակն կալեալ տեսանէր՝ զի Պաւսանիաս և այլ ևս զօրագլուխք Սպարտացւոց ճոխաբար գնային ընդ նիզակակիցսն. այլ ինքն հեզաբար ցուցանէր բարս, և զԿիմոն ինքնին հեշտ յարդարէր և հասարակորդ 'ի զինուորութիւնսն. և այնպէս սա այս Արիստիդէս ո՛չ զէնս շարժեալ, ո՛չ նաւս խաղացուցեալ և ո՛չ այրուձի, քաղցր և հեշտալուր քաղաքավարութեամբն զգօնացաւ հանել առնուլ 'ի Լակեդեմոնացւոցն զնախաթոռ աւագութիւնն, և նոքա չիմացան։ Քանզի և անդատին Աթենացիք փարելիք գտեալ այլոցն Հելլենացւոց 'ի պատճառս արդարութեանն Արիստիդեայ և մարդասիրութեանն Կիմոնի, իսկ յայնժամ առաւել ևս՝ 'ի պատճառս ընչաքաղցութեանն Պաւսանեայ և վայրենութեանն, այն՝ որ ցանգ սրտմտութեամբ և յայրատագոյնս գնայր ընդ զօրագլուխս նիզակակցաց, և պատուհաս 'ի վերայ կապէր զօրականին 'ի գանս հարուածոց, կամ թէ խարիսխ երկաթի արկանելով զան-

ձամբ նոցա՝ այնպէս յոտին տայր նոցա
կալ զօրն ողջոյն. և նախ քան զԱպարտա-
ցիսն ումեք այլ ջտայր թոյլ առնուլ խըշ-
տիս, և ո՛չ խոտ, և ո՛չ գնալ ջուր առնուլ
յաղբերաց. այլ անդանօր ոսոխկանս կա-
ցուցանէր վարոցաւորս 'ի բաց վանել զմեր-
ձեցեալսն։ Վասն այսոցիկ ապա իբրև յա-
ւուր միում բոլոք բարձեալ Արիստիդէս՝
խնդրէր խրատ 'ի նեղքս բերել նմա, նա
խելթիւ հայեցեալ ասէր՝ չունել ժամա-
նակ միտ դնելոյ բանիցն. և ո՛չ լուաւ նմա։

Ապա յետ այնորիկ խմբեալ առ Արիստի-
դէս նաւապետք և զօրավարք Հելլենացւոց,
մանաւանդ Քիացիք և Սամոսացիք և Լես-
բացիք, ածեալ հաւանեցուցանէին զնա
առնուլ զանձամբ զբարձերէց աւագու-
թիւնն և ժողովել զնիզակակիցսն, որք 'ի
վաղնջուց իսկ խնդրէին լծընկէց 'ի Սպար-
տացւոցն լինել՝ հնազանդեալք Աթենաց-
ւոց։ Իբրև պատասխանի առնէր նոցա Ա-
րիստիդէս՝ հարկ և արդարութիւն նկա-
տել նմա 'ի բանս նոցա, սակայն և ար-
գեանց պէտք իցեն 'ի ժամուն ցուցանել՝
'ի վստահութիւն, և 'ի լինել այնմ՝ ոչինչ
թոյլ տացէ և ինքն խուժանին փոխել միա-
սանգամ 'ի կարծեացն. յայնժամ երդ-
ճնակուռք դաշնաւորք լինէին Սամոսացին
Ուլիադէս և Քիացին Անտագորաս, և մօտ
'ի Բիւզանդիոն գիմեալք յարձակեցան 'ի
վերայ Եռաթիոյն Պաւսանիայ որ յառա-
ջոյ խաղայր այլոցն, և զնա 'ի մէջ փակե-
ցին։ Յայն տեսիլ Պաւսանիաս 'ի վեր վա-

զեալ՝ 'ի մեծ բարկութիւն պատմութեան սպառնալիս 'ի վերայ կապէր, վայրիկ մի ևս և ցուցանել նոցա՝ եթէ մեղս նոքա յարձակմամբն մեղան ընդդէմ իւրեանց հայրենեացն, և ոչ եռաթիոյն նորա։ ԱՅԼ նոքա հրաման 'ի վերայ ածէին նորա երթալ չուել 'ի բաց, և գոհ եղեալ 'ի ժամուն՝ երթալ չնորհս ունել դեղեցիկ բախտին իւրոյ 'ի Պղատեան մարտին, որ աղագաւ միայն շուք նմա եդեալ Հելլենացիք՝ չածին նմա զարժանահան պատուհաս։ Եւ այսպէս ապա ընդվզեալք անցին նոքա առ Աթենացիս։

ԱՅԼ յայնժամ պքանչելապէս երևէր մեծանձնութիւն Սպարտիոյ և հանճար. քանզի լուր առեալ զիւրոց զօրավարացն վատթարութեան 'ի պատճառս մեծի աւադութեանն, անդէն ինքնակամ հրաժեշտ տայր նա 'ի նախաթոռ զօրավարութենէն՝ ոչ ևս արձակեալ զօրավարս 'ի մարտ. լաւ համարեցաւ քաղաքացիս ունել պարկեշտս և հայրենեաց աւանդապահս, քան հրամանատար ողջոյն լինել Եղլադայ։ Արդ Հելլենացիք անդուստ 'ի վերուստ առ զօրավարութեամբն Լակեդեմոնացւոց հարկս հարկանէին 'ի պէտս մարտից. իսկ իբրև կամեցան զնոյն հարկ բաշխել 'ի մէն մի քաղաքացն արդարապէս չափմամբ, խնդրեցին զԱրիստիդէս յԱթենացւոց և 'ի նա յանձն առնէին յառնել գնալ և քննել զննել զգեստին և ըզհասս, և այնպէս ապա սահմանել իւրա-

քանչիւր զհարկան ըստ չափու գոյին և բաւականութեանն։ Ապա Արիստիդէս զմեծ զայն աւագութիւն առեալ յանձն, և ելեալ յայնժամ իբրու եթէ զնուրն զամենայն 'ի մին յայն Արիստիդէս աւանդեալ, եւ նա 'ի քաղաքէն աղքատ, և անդրէն դարձաւ առաւել աղքատ. 'ի նոյն գործ դրամահաշուին քաղաքավարեալ ոչ միայն անարատ սրբութիւն և արդարութիւն, այլ և մարդասէր բարոյիւք և ամենեցուն փարելի։

Այր աղագաւ՝ զորոշինակ անդ ուրեմն ծերունիք մեծապէս 'ի գովութիւն առնուին զժամանակ կենացն Կոռնոսեան, սակայն և յայնժամ նիզակակիցք Աթենացւոց զբաժ հարկին Արիստիդեայ, և անուն կարդային՝ Երանութիւն Եւլոգեայ. մանաւանդ՝ և յորժամ յետ սակաւուց կրկնեալ տեսին զայն, և ապա՝ երեքկնեալ ևս։ Քանզի բաժն Արիստիդեան էր չորեքհարիւր և վաթսուն քանքարաց. և ապա Պերիկղէս առնեցուցանէր իբրու երրորդ մասամբ. որպէս Թուկիդիդէս պատմէ՝ 'ի սկիզբն մարտին տալ նիզակակցաց Աթենացւոցն քանքարս վեցհարիւր. իսկ յետ մահուն Պերիկղեայ՝ վարիչք ժողովրդեան տակաւ յաւելեալ հասուցին 'ի չափ քանքարաց հազարաց և երից հարիւրոց. ոչ զի այնչափ ինչ բազմանդերձ էր մարտն յերկարաձգութիւնն և բազմադէմ պատահարօքն, այլ զի սովորեցուցին նոքա զժողովուրդն 'ի բաշխս դրամոց. առ այս՝ և 'ի պէտս Տեսարանացն, և 'ի կանգնել դրօշելոցն և մեհենիցն։

Արդ համբաւ ժառանգեալ պանչելի Արիստիդէս 'ի բաժ անդր հարկացն, ասեն՝ եթէ Թեմիստոկղէս ունչս առնէր. իբրու եթէ՝ քան մարդոյ՝ ոսկեպահ արկեղացն առաւել 'ի դէպ գալ գովութեանն։ Եւ դժպատեհս Թեմիստոկղէս վրէժ խնդրեաց բանիւն զազդողաբանութեանն՝ զոր երբեմն Արիստիդէս նմա 'ի դէմս եհար։ Քանզի էր զի՝ լուեալ Արիստիդեայ ասել Թեմիստոկղէսի, եթէ առաքինութիւն վեհագոյն զօրավարի՝ որպէս ինքն համարի՝ է ճանաչել և Թշնամւոյն նախատես խորհրդոցն լինել. կրկնեաց Արիստիդէս և ասէ. "Դա՛ այդ ո՞վ Թեմիստոկղէ քա՛ջ 'ի կարևորաց է. իսկ որ դէղեցիկ ևս է և արդարև արժանի զօրավարի՝ է ժուժկալութիւն ձեռաց"։

Իսկ յետ այսորիկ տայր Արիստիդէս Հելլենացւոցն երդմնի լինել 'ի նիզակակցութեանն։ Կռէր և ինքն երդումն յանուն Աթենացւոցն. և անէծս ևս կարդացեալ՝ առեալ հրաշէկս երկաթոյ ամայր 'ի ծով։ Այլ ապա հարկաւորեալ Աթենացւոց՝ որպէս Թուի՝ յիրաց անտի տիրագոյն ևս իշխանութիւն 'ի ներքս բերել, յորդորեաց Արիստիդէս՝ 'ի գլուխ իւր առնուլ կուտել զերդմնահարութիւնն, եթէ այնպէս օգտակար իցէ՝ զայնօրինակ վարել յիշխանութեանն։ Այլ Թէոփրաստոս հասարակ խօսելով վասն առնս, ասէ եթէ Թէպէտ և բնաւ յառտնինն և առքաղաքացիս արդարութեամբ պանչելի էր

Արիստիդէս, սակայն 'ի հասարակացն՝ շատ ինչ գործէր նա ըստ պիտոյից հայրենեացն, որպէս զի ստէպ հարկաւորել յինչ մի անարդար։ Քանզի և պատմէ, եթէ 'ի խորհել խորհուրդ յաղագս փոխադրութեան գանձուն 'ի Դեղոսէ յԱթէնս ընդդէմ դաշանցն կռէլոց, և 'ի թելադիր լինել Սամոսացւոցն, ասէր Արիստիդէս՝ եթէ արդար չէ բանդ, սակայն օգտակար։

Արդ՝ թէպէտ և այնչափ վերացաւ բարձրացաւ քաղաքն՝ հրամանատար 'ի վերայ բազմաց ժողովրդոց, նա եկաց մնաց յիւրում աղքատութեանն. և յամենայն 'ի կեանս յաւերժացաւ սիրել զփառս զաղքատութեն՝ ոչինչ պակաս քան զյաղթանակացն. որ և յարդեանցն վկայեցաւ։ Քանզի Կալլիաս ջահընկալ ազգական էր Արիստիդեայ, իսկ թշնամիք Կալլիասայ ամբաստան կացեալ յատենի զնմանէ յաղագս գլխապարտ ինաւուց, իբրև չափով առաջի եդին զամբաստանութիւնն, ապա 'ի բուն ամբաստանութեանն զարտուղեալ, սկսան խօսել առ դատաւորսն զայս ինչ և ասել. "Դուք ինքնին ճանաչէք քաջ զԱրիստիդէս Լիսիմաքեան, այր պանչելի առ ամենայն Հելլենացիս։ Արդ զիարդ համարիցիք կալ դմա 'ի տան իւրում, տեսեալ զդա 'ի հրապարակիդ արկեալ գրդեակ։ Թերևս ոչ՝ որ 'ի հրապարակիդ պաղեալ տեսանի 'ի ցրտոյ, յիւրում տան նքթեալ կայցէ՝ կարօտեալ կարևորացն։ Յայսր ամենայնի վերայ՝ Կալլիասդ այդ քեռորդի

նորա և բազմահարուստ քան զամենայն Ա-թենացիս, անտես զնովաւ արարեալ և զկնաւն և զորդւովքն՝ ձեռն չտայ նմա յայնչափ կարիս նորա։ Կալլիասդ այդ՝ որ 'ի շատ ինչ իրս զնա գործի 'ի ձեռն ա-ռեալ է, և շատ անգամ 'ի զօրութենէ նորա առ ձեզ՝ վայելեալ իսկ է"։ Յայն-ժամ իբրև ետես Կալլիաս զդատաւորսն՝ մեծապէս վասն այնորիկ սրտնեալ և զչարել, կոչեալ զԱրիստիդէս՝ ողբէր աղաչէր տալ վկայութիւն առաջի դատաւորացն, եթէ շատ ինչ իրս բազում անգամ նա 'ի նեբքս մատոյց նմա և ժտեաց ևս առնուլ՝ այլ ինքն հրաժեշտ ետ. պատասխանի առնե-լով եթէ քան Կալլիասայ ընչաւէտու-թիւնն, մեծ ևս փառք են նմա աղքատու-թիւն նորա. զի և շատ զոք է տեսանել 'ի լաւն և 'ի յոռին միանգամայն վարել զմե-ծութիւնն, այլ հեշտին չէ գտանել՝ որ քաջաբար բերցէ աղքատութեանն. քան-զի ընդ աղքատութիւն ամաչեսցեն ար-դեօք նոքա՝ որ միանգամ ակամայ աղ-քատքն լցեն։

Իբրև զայսոսիկ բանս վկայեաց անդա-նօր ինքնին Արիստիդէս 'ի կողմն Կալլիա-սայ, այր այր ապա յայնժամ յունկնդրաց անտի մեկներ 'ի վայրացն՝ մտադիւրագոյնս յանձն առեալ զաղքատութիւնն զԱրիս-տիդեայ, քան զընչաւէտութիւնն Կալլիա-սայ։ Եւ զայսոսիկ մեզ արձանագրէ Էս-քինէս Սոկրատեան։ Նաև Պղատոն ինքնին՝ յաւագան Ա-թենացւոց և 'ի հոյակապան՝

միայն զԱրիստիդէս զայս՝ ասէ արժանա-
փառ և մեծարոյ։ Քանզի Թեմիստոկղէս և
Կիմոն և Պերիկղէս սրահիւք իմն լցին զե-
ղին զքաղաքն և ընչեղութեամբք և այլ ևս
բազմադէմ ումպէտիւք. իսկ Արիստիդէս
յառաջնորդութեան քաղաքին՝ զառաքի-
նութիւնն ցանգ կալաւ կէտ նպատակի։
Եւ արդեօք հաւաստիք մեծամեծք հեղու-
թեան նորա՝ 'ի նեղքս ընծային մեզ 'ի քա-
ղաքավարութենէ անտի նորա առ Թեմիս-
տոկղէս։ Քանզի Թշնամի անդուլ ունելով
զնա իւր յամենայն 'ի գործս քաղաքին, և
'ի սադրելոյ ևս նորա վտարանդի եղեալ,
համայն և այնպէս յորժամ և զնոյն անցս
անցուցանել ձեռնհաս իսկ էր Արիստի-
դէս ընդ Թեմիստոկղէս ամբաստանեալ իբ-
րև ինաստակար ընդդէմ հայրենեաց, էր-
բէք նա ոչ յուշ ած զանկրաւութիւնն՝
զոր կրեաց. այլ մինչ անդանօր Ալկմէոնն
և Կիմոն և շատք ևս ամբաստան կային
զնմանէ, միայն Արիստիդէս ինչ մի 'ի տու-
գանս առն ոչ գործեաց և ոչ ասաց. էր-
բէք և ոչ ինդաց տեսեալ զԹշնամին յա-
ղէտս ամբաւս, որպէս և ոչ խանդացաւ
յառաջն տեսեալ զնա 'ի փառս։

Իսկ յաղագս մահու վախճանին Արիս-
տիդեայ՝ կէսք ասեն պատահեալ 'ի Պոն-
տոս, ուր ջրքաւ նա 'ի պէտս ինչ հասարա-
կաց. և կէսք՝ յԱթէնս 'ի ծերացեալ հա-
սակէն, մինչդեռ 'ի շուք պատուոյն կայր
և պանչացեալ իսկ էր առ քաղաքացիսն։
Այլ Կրատերոս Մակեդոնացի յաղագս

մահուն նորա ունի պատմութիւն օրինակ զայս։ Յետ վտարանդութեանն, ասէ, Թեմիստոկղէայ ստահակեալ ժողովրդեանն, 'ի վերս բուսաւ բազմութիւն զբարպարտչաց ընդդէմ արանց լաւաց և քաջաց և Ճոխից՝ նախանձուկս արկեալ ամբոխին՝ որ բարձրապարանոց ևս էր 'ի գեղեցիկ բախտ իւր և 'ի զօրութիւն. արդ՝ 'ի միասին ընդ արան ընդ այնոսիկ, ասէ, դասեալ և Արիստիդէս և ամբաստանեալ 'ի Դիոփանդեայ Ամիլիտրոպոսացւոյ՝ իբրև կաշառաբեկ 'ի Յոնիացւոց 'ի բաշխի անդ հարկացն, և անձեռնհաս գոլով 'ի հատուցանել զպատուհաս տուգանացն մինասից յիսնից, մոռեալ 'ի նաւ էլ դնաց. և անդ ուրեք 'ի Յոնիա վախճան հասանէր նմա։ Այլ 'ի պատմութեանդ ոչ հաւաստիս ինչ արձանագրութեան ածէ մեզ Կրատերոս, և ոչ վճիռ ինչ, և ոչ հրովարտակ ինչ. Թէպէտ և ինքն Կրատերոս միշտ բնաւորեցաւ տալ մեզ Ճոխաբար յայսպիսեաց հմտութեանց, և ծանօթս ևս տայ զպատմագրացն՝ յորոց առեալ աւանդէ։ Բայց և այլք առհասարակ գոգցես՝ որ միանգամ գրեն զժողովրդեանն զայնորիկ զանշնորհակալս խեռութիւնն ընդդէմ զօրավարացն, Թէպէտ և զԹեմիստոկղէայ վտարանդութիւնն պատմեն, և զՄիլտիադեայ բանտարգելութիւնն, և զՊերիկղէայ ըզդատակնիքն, դարձեալ և զՊաքետայ ըզմահն յատենի անդ, որ յաղթահարեալ՝ 'ի բեմին անձին առնէր, և շատ ևս յայս-

պիսեաց առուի աւանդեն նոքա և բողոք ևս բառնան, դարձեալ և յաղագս Արիստի-դեայ ասեն զիսեցեկոյտ վՃիռ վոտրան-դուԹեանն, սակայն յիշատակ չառնեն նոքա դատապարտուԹեանդ այդմիկ։

Աբդ զգերե զման նորա ցուցանեն 'ի Փաղերոն, և ասեն զայն պատրաստեալ նմա 'ի դրամոց քաղաքին. զի և ոչ 'ի Թաղումն բաւական ինչ ԵԹող նա։ Եւ պատմեն ԵԹէ զդատերս նորա հարանացոյց Պրիւտանիոն 3, և քաղաքն ինքնին երաշխաւոր լինէր վասն հարսանեացն, և առ մէն մի հարսանցն տայր օԺիտ երից հազարաց դրամակշռոց։ Իսկ Լիսիմաքեայ որդւոյն Արիստիդեայ եառն ԺողովուրդՔ հարիւր մնաս արԺաԹոյ, և նոյնչափ օրավար ծառայունկ գեռնոյ. առ այս՝ և դրամակշիռս ևս չորս աւուր աւուր կարգեաց նմա և զվՃիռն գրեաց Աղկիբիադէս։ Հանդերձ այսու՝ և դուստր մի ևս ԹողեալԼ Լիսիմաքեայ՝ անուն Պողիւկրիտէ, տալ եառն վՃիռ ԺողովուրդՔ՝ որպէս ԿալլիսԹենէս պատմէ՝ կարգեալ և դատերն զհաւասար պարէնս զյաղԹականացն Ոզիմպիականաց։

Իսկ Դեմետրիոս Փաղերէոս և Հերոնիմոս Ռոդացի, և Արիստոքսենէս երաԺիշտ, և ինքնին Արիստոտէլ (սակայն ԵԹէ որ յաղագս ԱզնուականուԹեանն գիրք՝ ի-ցէ 'ի հարազատացն Արիստոտէլի), աւանդեն ԵԹէ զՄիւրտոնէ Թոռնուհի դատերն Արիսաիդեայ բնակակից իւր արար Սոկրատէս իմաստուն. զի ԹԷպէտ և կին այլ

ունէր Սոկրատէս, Ժողովեաց և զսա զայ-
րիացեալն 'ի պատճառս տնանկութեանն
և 'ի կարևորսն կարօտութեանն։ Սակայն
Պանեթիոս շատ իսկ ընդդէմ դառնայ սո-
ցա՝ 'ի բանսն յաղագս Սոկրատայ։ Սա այս
Փաղերէոս յիւրում Սոկրատին ասէ ինք-
նին տեսեալ և զԼիսիմաքոս զոմն Թոռն
դստերն Արիստիդեայ, յոյժ աղքատ. զի
և զպարէն զաւուրն պատրաստէր անձին
յերաշահան իմն պնակէ՝ որով մեկնէր նա
զերազս՝ նստեալ մօտ 'ի վայրն՝ անուն
Եակքիոն. և թէ՝ ինքնին Փաղերէոս թա-
խանձ արկեալ Ժողովրդեան վասն մօր սո-
րա և մօրաքեռն՝ կարդէ նոցա յաւուրն 'ի
պարգև նաքարակիտս երիս։ Եւ ապա սա
ինքն Դեմեարիոս օրինադիր եղեալ՝ եա
վՃիռ՝ կարդել միում միում 'ի նոցանէ
դրամակշիռ մի։

Եւ արդեօք չէ՞ ինչ զարմանալ ընդ մե-
ծապէս խնամս Աթենացւոց 'ի տնանկս
քաղաքին. ուր նոքա լուր առեալ և վասն
Թոռնուհւոյն դստերն Արիստոգիտոնին՝
հիքաբար վարել կեանս 'ի Լեմնոս ամուրի
'ի պատճառս աղքատութեանն, առա-
քեալ կոչեցին զնա յԱթէնս. և առեալ
հարանացուցին քաջազգի առն, տուեալ
նմա 'ի պաշտատական կալուած մի 'ի Պո-
տամոն։ Իսկ զմարդասիրութեանն և զլա-
ւութեանն իւրոյ և մինչև ցայսօր 'ի նեղքս
ընծայէ մեզ այս քաղաք օրինակս շատ,
որ աղագաւ և իրաւապէս աքանչելի է և
նախանձելի։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Յայժմեան Քսիւլանդրեան բնագրին Յն. Է՝ Թեմիստոկլէս։ Բայց յայտնի է վրիպակն։

2. Բնութիւն մարդոյ չընդունի զանմահութիւն՝ անհաղորդապէս իբրև զԱստուած, այլ ընդունի հաղորդաբար 'ի բուն աղբերէ անմահութեանն Աստուծոյ, ըստ որում հոգիս մեր անմահ։

3. Պրիւտանիոն։ Տեղի յԱթէնս՝ ուր բուծանէին 'ի հասարակաց գանձէ ազգ արդիւնաշատք քաղաքին։

ՄԱՐԿՈՍ ԿԱՏՈՎՆ

Օ՜ ՄԱՐԿՈՍ Կատոն ասեն ծնունդ լինել 'ի Տուսկուղեայ. և քաղաքավարութիւն և կեանս վարել նմա 'ի կալուածս հայրենիս մօտ առ Սաբինացիս, մինչև նորա ձեռնամուխ լեալ 'ի զինուորութեան իրս և 'ի քաղաքականութեան: Եւ քանզի նախահարք նորա դլխովին անծանօթք են մեզ, ինքնին Կատոն զհայր իւր զՄարկոս Լիբրու այր լաւ և քաջամարտիկ 'ի գովութիւն առնու. առ այս՝ և զԿատոն զնախահաւ իւր՝ ասէ՝ բազում անդամ մրցանակս տարեալ զքաջութեանն, և երբ վարս հինգ մարտիկս կորուսեալ 'ի մարտս պատերազմաց, զորոց զդինն հատուցանէր նմա քաղաքն վասն արութեան քաջութեան առն: Եւ քանզի սովորեցան Հռոմայեցիք Ն՞ՐԷՐ կոչել զորս միանգամ շուք ինչ չունելով զզարմին, անձամբ ան-

ձին նոքա ականաւորք լինէին, ուստի և զայս անուն կարդացեալ և Կատոնիի, ա-սէր ինքնին Կատոնն՝ եթէ թէպէտ և նոր է ըստ աւագութեանցն և ըստ փառացն, սա-կայն ըստ արութեանց քաջութեանց և առաքինութեան նախնեացն՝ վաղնջուց յոյժ է։

Բայց կոչէր նա յառաջն երրորդ ա-նուամբ՝ ոչ Կատոնն, այլ Պրիսքոս 1, և ապա մականուն զուշիմութեանն ընկալաւ-նա՝ զԿՈՊՈՆ։ Քանզի Հռովմայեցիք զայր փորձ և զհմուտ անուանեն ԳՈՊՈՆ։ Եւ էր նա 'ի դէմս կերպարանացն շառագոյն և խաժակն. ըստ որում զայս յայտ առնէ այրն, որ թշնամութեամբ քերթեաց նմա զվերտառիկն զայն, ասելով, եթէ "Զշա-ռագոյնն զայն, զխածանողն, զխաժակնն, և ոչ 'ի մահուն արդեօք, զՊրիսքոսն՝ 'ի Դժոխս նետեալն Պերսեփոնէ առեալ ժո-ղովեցէ"։ Ա՛ռ այս և զբոյս մարմնոյն՝ աշ-խատութեամբն և ժուժկալութեամբն և անգստին յառաջին տիոց սննդակից զի-նուորութեան կարգաքն՝ յոյժ առոյգ յար-դարեաց նա և կորովի և քաջառողջ։ Այլ զՃարտարախօսութիւն համարեալ իբրու երկրորդ մարմին և գործարան գեղեցիկ և կարևոր այնմ՝ որ ոչն կեանս հանդերձեալ ի՛ցէ վարել անաւագ և անգործ, մարդէր զանձն 'ի նմա՝ փաստաբան հղեալ մերթ ընդ մերթ 'ի գիւղս գաւառին և յաւանսն՝ որոց միանգամ պէտք լինէ էին. և այնպէս նախ իբրև պայքարող քաջ համբաւեցաւ

նա, և ապա յետ այնորիկ իբրև ատենաբան քաջուշիմ։

Ալ կենակից՝ նորա համբէն 'ի վերայ կային նորա բուսոյ բարուցն ծանրութեան և ուշիմութեան, քաջադէպ 'ի նահատակութիւնս մեծամեծս և յառաջնորդութիւն իրաց մեծաց քաղաքի։ Քանզի ոչ միայն վարձս չառնոյր նա զաշխատութեանն 'ի պայքարսն, այլ և ոչ մեծ ինչ համարէր և խնդայր ընդ փառսն որ յայսպիսեաց պայքարաց. և հռչակաւոր էր՝ թէկն ածեալ՝ լինել 'ի մարտս և 'ի նահատակութիւնս, նա լի 'ի սպիս վերայ ունէր զիւր մարմինն ողջոյն յառաջոյ կողմանէն՝ մինչդեռ տակաւին պատանեակն էր. և ասէր՝ ամաց եօթանց և տասանց առաջին խաղալ նմա 'ի մարտ՝ յորժամ Ամենիբաղ նահատակեալ 'ի սուր 'ի հուր դատէր զԽտալիս։ Բայց 'ի կռուին երևէր նա կորովի 'ի բազուկս և անդրդուելի յոտս և ահընկէց 'ի դէմս և գոռայր սպառնալիս և ուժգնակի արձակէր ձայն ընդդէմ թշնամեաց. քանզի զմտաւ ածեալ և ուսուցեալ էր՝ եթէ է՛ բազում անգամ զի քան 'ի սուսերաց՝ յայսպիսեաց աստի առաւել զահի հարեալ կան ախոյեանք։ Իսկ 'ի չուն խաղայր գնայր նա ինքնին բարձեալ զզէնսն. և սպասաւոր մի զհետ իւր ընթացուցանէր՝ բարձեալ 'ի նա զպարէնս կերակրոյն. ըստ որում և երբէք՝ որպէս ասեն՝ ոչ զայրացաւ, և ոչ կշտամբեաց՝ զիսրդ և կազմէր նա նմա զճաշն և զընթրիսն. նա և 'ի պարապել իւրում 'ի

զինուորականէն՝ ինքնին գործակից նմա պատրաստէր զերան բազմագոյն մասամբ։ 'Ի բանակին՝ միայն ջրմբուռ էր. իսկ 'ի սաստիկ ծարաւոյն տանջէլ, ինդրէր քաջախ. կամ թէ 'ի վատել յուժոյն՝ առնոյր սակաւիկ մի և գինի։

Մօտ անդ յագարակս նորա էր ամբրանոց Մարկիոսի Կուրիոսի, այն՝ որ յաղթանակ կանգնեաց երիցս։ Անդանօր ձեմ առեալ սուէպ գնայր Կատոնն, և գէտակն կալեալ հայէր 'ի փոքրկութիւն կալուածոյն և 'ի տուն նորա այնպէս անպաճոյճ, յորմէ և խելամուտ ևս լինէր քաջալաւութեան առն. որ Հռոմայեցւոցն բնաւից վեհագոյն և ընդ լծով ազգս նուաճեալ քաջամարտիկս և զՊիւռոս ինքնին վանեալ յԻտալիոյ, եկեալ ապա ինքնին իւրովք ձեռօքն մշակէր զկալուած իւր փոքրիկ. և յետ զյաղթանակսն տանելոյ՝ յայն տաղաւար օթագայէր. և 'ի նմին դարձեալ դեսպանք Սաննիտացւոց գտանէին զնա նստեալ մերձ վառարանին և եփել շողգամս. և 'ի մատուցանել նմա ոսկի շատ, նա չառնոյր յանձն. և ասէր ևս՝ ոսկւոյ պէտս ամենևին չունել մարդոյ՝ որում այն ճաշ շատ լցէ. և թէ՝ նա գեղեցիկ ևս համարի՝ քան զստանալ ոսկւոյ՝ յաղթել ստացողացն նորա։ Յայսոսիկ մտախոհ՝ Կատոնն դառնայր դայր. և զիւր տունն յակն արկեալ և զկալուածն և զծառայսն և զօրինակ կենացն, առաւել ևս տքնէր 'ի վաստակս, և զբազմահանդերձ զծախսն նուազեցուցանէր։

Իսկ 'ի ժամանակին՝ յորում Փաբիոս Մաքսիմոս առնոյր զՏարանտացւոց քաղաքն, Կատոնն պատանեակ՝ 'ի զինուորութեան կայր նորա. անդանօր հիւր երբեմն եղեալ նորա Նէարքոսի ուրումն Պիւթագորեան՝ ունկն դնէր բանից նորա. և լուեալ 'ի նմանէ խմաստասիրեալ զնոյն բանսն, զոր և ինքնին Պղատոն ասէր, կոչեալ զհեշտութիւնն՝ հրապոյրս սատանիկ 'ի չար անդր, և կոչէր ևս զմարմինն՝ առաջին աղէտս հոգւոյն, յորմէ մաքրեալ ազատանայ հոգին խորհրդովք՝ որք անչափիչքն ելցեն 'ի կրից մարմնոյ. յայնժամ Կատոնն սատանիկ ևս հարաւ 'ի սէր գեղեցիկ տնտեսութեան և ժուժկալութեանն։ Սակայն ասեն՝ անագան ուրեմն պարապեալ Կատոնի 'ի դպրութիւնս Հելլենացիս. և անցեալ ևս էր զաւուրքք՝ յորժամ բուռն եհար նա 'ի մատեանս նոցա, և շահ մեծապէս առթեաց անձին 'ի Ճարտարաբանութենէն Թուկիդիդեայ, և առաւել ևս 'ի Դեմոսթենեայ։ Եւ արդեաք մատենագրութիւնք նորա լի՛ և զեղուն են զրուցիւք և պատմութեամբք Հելլենացւոց. և յառակաց նորա և յառածիցն բազում այն են՝ որ թարգմանեալ իսկ են ըստ բառին։

Զայնու ժամանակաւ էր այր ոմն քաջատոհմիկ յոյժ 'ի Հռոմայեցիս և աւագամեծար։ Սա այր կորովամիտ՝ խելամուտ էր գեռաբուսիկ առաքինութեանն և քաջամոյն բարոյիւքն բուծանէր զայն, և 'ի փառս ևս յառաջադէմ առնոյր ածէր։

Եւ էր սա Վաղերիոս Փղակկոս։ Էին սո-
րա արարք սահմանակից Կատոնին.
լուեալ սա յընտանեկացն զվաստակ ձե-
ռին նորա և զքաղաքավարութիւն կենացն՝
զարմանայր, զի՛արդ նա վաղ քաջ ընդ-
առաւօտն յարուցեալ երթայր 'ի հրապա-
րակ անդր ձեռն տալ կարօտելոցն. և ապա
դարձեալ յագարակն՝ վաստակէր 'ի միա-
սին ընդ ընտանեացն՝ կողոք արկեալ զան-
ձամբ ձմերանի, իսկ մերկ՝ ամարայնի. և 'ի
միասին ընդ նոսա նստեալ և ուտեալ զնոյն
հաց և ըմբեալ զնոյն գինի. և լուեալ ևս էր
'ի նոցանէ զնորա մարդասիրութենէն և
զչափաւորութենէն, և ինչ ինչ ևս 'ի հան-
ճարեղ զրուցացն. ապա հրաւիրէ Վաղե-
րիոս զԿատոնն յընթրիս։ Անդ անօր կենա-
կից գոլով նմա, և քաջիկ ևս 'ի վերայ կա-
ցեալ հեզ և մարդասէր բարոյից նորա,
իբրև տունկ գոլով նա նորատունկ՝ որում
ճշակութեան պէտք լցեն և քաջաբեր
գեանոյ, յորդոր 'ի նեղքս տայր նմա յառ-
նել գնալ 'ի Հռոմ քաղաք և ձեռնամուխ
'ի գործս լինել։

Իբրև չոքաւ նա 'ի Հռոմ, անդէն 'ի
ձեռն գործակցացն գտանէր իւր թիկնա-
ծուս և բարեկամս. և 'ի Վաղերիոսէ դար-
ձեալ շուք յաւելեալ նմա և աւագութիւն,
առաջին կարգեալ ընտրեցաւ հազարա-
պետ զօրականին, ապա գանձաւոր, ապա
ականաւոր ևս եղեալ՝ 'ի միասին ընդ Վա-
ղերիոսի մեծաց հասանէր աւագութեանց,
և ընդ նմա լինէր հիւպատոս, և ապա հա-

մարակալ։ Ա՛յլ 'ի մէջ ծերունեացն քա-
ղաքին 'ի Փաբիոս Մաքսիմոս նա գլխովին
հակամիտեալ՝ այր մեծափառ և աւագ ա-
ռաւէլ, և զնա եդեալ իւր կէտ նպատա-
կի՝ հանգունատիպ նորայն լինէր վարուցն
և կենացն՝ իբրև արդարև ամենագեղեցիկ
օրինակաց։ Եւ վասն այսորիկ ներհակա-
բար բերեալ լինէր նա մեծին Սկիպիոնի,
որ յայնժամ երիտասարդ՝ թուէր իմն 'ի
նախանձաւոր իրիցն Ը հակառակս ելանել
աւագութեանն Փաբիոսի։ Ապա առա-
քեալ Կատոնն ընդ Սկիպիոնի գանձաւոր
'ի մարտն Լիբիոյ, և տեսեալ զնորա զանխը-
նայաբար բաշխս դրամոց զօրականին, եկաց
և ազատադէմ խօսէր. Եթէ ո՛չ վասն ա-
ռաւէլազանց ծախուցն փոյթ այնչափ իցէ
նմա, որչափ զի դովին աւագիկ վատ-
թարեալ եղծանի հայրենաւանդ չափաւո-
րութիւն կենաց զօրականին, որ յաւէլորդ
գոյիցն 'ի գրգանս փափկութեան անկան-
տասցի։ Պատասխանի առնէր Սկիպիոն,
Եթէ այնպէս կարի՛ Ճշգրիտ գանձաւորի
չէն ինձ պէտք՝ որ առագաստալից խաղամ
'ի մարտ պատերազմին, համար տալ քա-
ղաքին ո՛չ զդրամոցն՝ այլ զգործոց նահա-
տակութեանն։ Իբրև նա զայս ասաց, Կա-
տոնն դարձ 'ի Սիկիլիոյ արարեալ 'ի Հռոմ՝
բողոք կալաւ 'ի Սենկղիտոսին 'ի միասին
ընդ Փաբիոսի. Եթէ դրամն ամբաւ վատնէ
Սկիպիոն, և մանկաբար գեղեցի յըմբշա-
ռանս և 'ի թատերս. իբրու որ անդր երթեալ
իցէ ո՛չ 'ի զօրավարութիւն, այլ 'ի հան-

գէսս տօնից։ Ապա արձակեցան 'ի Սիկիլիա ժողովրդապետք առնուլ ածել զնա 'ի Հռոմ, եթէ ճշմարիտ գոցեն զամբաստանութիւնն։ Այլ Սկիպիոն յայտ արարեալ, զի յաղթութիւնն գլխովին 'ի մեծաց հանդերձանաց կատարեսցի մարտին. և զի՝ նա ընդ բարեկամացն թէպէտ և զբօսնուցու ևս պարապեալ, ոչինչ պղծրդացեալ կայ առատաձեռնութեամբն 'ի գործսն կարևորս և 'ի մեծամեծսն. խօսեցաւ՝ և ամբարձեալ 'ի նաւ խաղայր 'ի մարտ պատերազմին։

Բայց Կատոն երթալով երթայր և բարգաւաճէր 'ի պատճառս ճարտարաբանութեանն, զի և բազումք անուն նմա կարդային՝ Դեմոսթենէս Հռոմայեցի։ Իսկ որ առաւել համբաւէր զայրն՝ օրինակ քաղաքավարութեան կենաց նորա։ Քանզի ճարտարախօսութեան ըղձացեալ պատանիք առհասարակ 'ի ժամանակին, մի զմիով էլև էլս առնէին. այլ դուն ուրեք ոք յանձն առնոյր մշակել ինքնին զկար անդն ըստ հայրենի սովորութեանն, և ընթրիս առնուլ դուզնաքեայ, և ճաշ ոչ եռացեալ 'ի հուր, և հանդերձ արկանել անպատճոյճ, և տուն ունել գռեհիկ, և քան զաւելատացութիւնն՝ մեծ ևս համարել զհրաժեշտն յայնմանէ։ Քանզի 'ի բարգաւաճել յայնժամ քաղաքին՝ խրթնացաւ և 'ի բնակաւոր սրբութենէն. նա՝ 'ի ձգել տարածել տէրութեանն 'ի բազում ինչ իրս և 'ի վերայ ազգաց ազգաց, խառնեցաւ

նա 'ի բազմադիմակ սովորութեանց և 'ի քաղաքավարութեանց գունակ գունակ։

Ուստի և իրաւապէս պանչացաւ Կատոն. յորժամ այլք վատեցան 'ի վաստակս և վարիկացան 'ի գրգանս, նա յերկոսին միանգամայն անպարտելի մնաց. ոչ միայն 'ի պատուասէր պատանութեանն՝ այլ և յորժամ ծերս էր ալևոր, յեռ հիւսպատեան բարձին և յեռ յաղթանակին վառաց. զոր օրինակ ըմբիշ յաղթանակաբեր, որ միանգամ նահատակեալ՝ տակաւին 'ի նոյն կարգ կրթանացն յաւերժաւցի, և նոյնօրինակ զամենայն աւուրս կենացն կացցէ մնացէ։ Քանզի և ինքնին Կատոն պատմէ, եթէ հանդերձ չարկաւ երբէք աւելի քան զդրամակշռոց հարիւրոց. և 'ի զօրավարութեանն և 'ի հիւսպատուութեանն զնոյն գինի ըմպէր զգործաւորացն. իսկ թէ երեսուն դրամոց պատրաստէր սպաս 'ի հրապարակէն վասն ընթրեացն, վասն քաղաքին առնէր՝ կորովացուցանել զմարմինն 'ի վաստակս զինուորութեանն։ Առ այս՝ և պատմէ եթէ ժառանգութեամբ հասեալ նմա վերարկու բաբելացի երփն երփն նկարէն, առեալ վաճառեաց զայն. և ամարանոց չունել նմա բռեալ. և ստրուկ նա ոչ գնեաց դրամակշռոց աւելի քան հազարաց և հինգհարիւրոց՝ և ոչ գիրս խնդրեաց զնոսա և գեղեցիկս՝ այլ ժիրս և կորովիս, իբրու որում պէտք իցեն ձիադարման որեբոյն և խաշնադարման. իսկ 'ի ծերանալ նոցա,

լաւ համարէր վաճառել զնոսա և ոչ բու-
ծանել զանպէտսն։ Եւ ասէր եւ՝ դիւրագնի
և ոչ զմի ինչ յաւելորդացն համարել, այլ
ծանրագնի՝ թէպէտ և միոյ դրամոյ իցէ
այն. և թէ՝ լաւ ևս է գէտին առնուլ սեր-
մանական և արօտական, քան վայրս ջրաւ-
էոս և պաղպաջուն։ Այլ կէսք ճղճիմ
բարոյից առն տան զայսոսիկ. և կէսք դար-
ձեալ՝ եթէ առ 'ի չափու պահել զայլս՝
այնպէս ինքն ճշդելով գնայր։

Իսկ յաղագս ծառայեցուցանելոյ զծա-
ռայն՝ իբրու գրաստս ոմանս և պաճարս,
և 'ի բաց հանելոյ և 'ի վաճառ հանելոյ
'ի ծերանալ նոցա, ինձ թուի յոյժ վատ-
թար սովորութիւնդ և անաւադ. և գործ
առն՝ որ 'ի պէտս կարեաց միայն կարծեսցէ
մարդոյ ընդ մարդոյ հաղորդ լինել։ Այլ
ես՝ քան զարդարութեանն ընդարձակ ևս
ասպարէզ գիտեմ զմարդասիրութեանն.
քանզի զօրէնս և զիրաւունս միայն առ մար-
գիկ վարեմք, այլ է զի և 'ի վերայ անբա-
նից պաճարաց տարածեմք մեք բարիս և
շնորհս բղխեալ 'ի հեզութենէս մերմէ՝
իբրև 'ի բազմահարուստն աղբերէ։ Եւ
արդեօք քաջ 'ի դէպ է առն բարւոյ դար-
մանել զերիվարն վատեալն յաշխատու-
թիւնս, և զշանց դարձեալ ոչ զկորիւնս
միայն՝ այլ և զծերացեալսն։ Իսկ Ժողովուրդ
Աթենացւոց 'ի շինել զԵկատոմպեդոն,
ազատ արձակեաց յարօտ առատ զՋորիսն
վաստակաբեկս. իսկ մին 'ի Ջորեաց անտի՝
ասէն՝ վազեալ ինքնին յաշխատութիւն

ընթանայր 'ի միասին ընդ այլոց լծաձիգ ջորեացն՝ որ ձգէին զսայլսն 'ի դղեակ անդր, և յառաջոյ կարապետեալ նոցա, իբրու խրախոյս կարդայր նոցա. ուստի և Ա՛թենացիք վՃիռ տային՝ բուծանել զայն ջորի ցմահ 'ի հասարակաց դրամոց։ Առ այս՝ և մերձ շիրմին Կիմոնի են և գերեզմանք մասակ երիվարաց նորա, որովք յաղթական գտաւ նա ՅՈղիւմպիականսն։ Եւ յայսմանի՝ բաղումք ևս թաղումն ետուն իւրեանց շանց բուծելոց և ընդելացելոց. և առ այսոսիկ՝ նախնին այն Քսանթիպպոս, որ առ նաւուն 'ի լիւղ անկելոյ շանն մինչև 'ի Սաղամինէ՝ 'ի լեռանեալ Ա՛թենացւոց զքաղաքն, ետ նմա թաղումն ընդ հողով 'ի հրուանդանին, որում և ցայսօր անուն կարդան՝ Շիրիմ Շան։

Քանզի և արժան չէ արդեօք զշնչաւորսն վարել ըստ օրինակի կօշկաց ոմանց և սպասուց անօթոց, զոր 'ի բաց ձգեմք 'ի խորտակելն և 'ի հնանալն և 'ի մաշելն. այլ թէպէտ և ո՛չ յայլ ինչ՝ գոնեա 'ի կրթանս մարդասիրութեան՝ հեզ և համբոյր սովորել արժան է և առ ազգդ պաՃարաց։ Բայց ես առանձին՝ և ո՛չ զմի յանդէոցս վաստակաւորաց 'ի վաՃառ հանեմ 'ի շահուն սակս, թո՛ղ թէ զմի 'ի ծառայիցն ծերացելոց յաղագս որ անտի գուշնաքեայ շահուն, տարադէմ զնա արձակելով իբրև 'ի հայրենեացն՝ 'ի բնականունդ յարկէն և 'ի բնակակից քաղաքավարութենէն. նա զի և անպիտան արդեօք ի՞նչ նա ստացողին,

ըստ որում և վաճառողին։ Այլ Կատոնն իբրու պանծալով ասէր, եթէ ելնք եթող նա յԻբերիա և զԵրիվարն՝ զոր վարեաց 'ի զինուորութեան հիւպատոս դոլով, զի մի քաղաքին Ծանրասցի նաւավարձն նորա։ Արդ թէ մեծանձնութեան արդեօք այդոքիկ ելցեն կամ ճղճիմ բարոյից, այր այր ինքնին խելամուտ լինիցի։

Սակայն 'ի բաց թողեալ զայս՝ յոյժ պանչելի էր նա 'ի անտեսութեան իւրում. չառնոյր 'ի զօրավարութեանն վասն իւր և վասն իւրոցն աւելի քան զերիս դրիւս Ատտիկեցիս զցորենոյ՝ ամենոյ յամիս, և առնոյր պակաս քան զմի և կէս զգարուոյ յաւուրն վասն դրաստուցն։ Իսկ իբրև զՍարդոնեայ զեպալքոսութիւնն զանձամբ առնոյր, յորում իւրն նախորդ զօրավարք վրանս կալան 'ի հասարակաց դրամոց, և մահիճս անկողնոց և պատմուճանս, և սպասարկութիւն մեծ, և բազմութիւն ըղբարեկամաց, և ծանրանալ 'ի ծախս մեծահաց ընթրեացն և 'ի հանդերձանսն. սա այս Կատոնն տարբերութիւն անպատուամ գործեաց սակաւապէտ չափաւորութեանն. զի և ոչ վասն ինչ իրաց պէտք եղեն նմա հասարակաց ընչից. և'ի գնալն 'ի քաղաքս՝ ոչ 'ի կառս այլ հետի ընթանայր. զհետ իւր առեալ զմի յարքունի պաշտօնէիցն՝ բերել զհանդերձ նորա, և անօթ մի 'ի ձօն նուիրագործութեան։

Եւ այսպէս ապա հեշտ և բաղձալի և անպաճոյճ ընծայէր յայսոսիկ հնազան-

դելոց Լուրոց. սակայն պերճ կերպարան և անաչառ և անողոքելի 'ի դէմս բերէր յիրս արդարութեան, և խստիմբեր և անդրդուելի 'ի կատարումն հրամանաց. որպէս զի և զՀռոմայեցւոցն իշխանութիւն ո՛չ ահընկէց յոյժ առադրէր ժողովրդոց և ո՛չ յոյժ փարեալ։ Հանգուցեալ այսմ և զրոյցն՝ միանգամայն և հեշտընկալ և ծանր, քաղցր և սաստիկ, զուարճաբան և հանճարաւոր, առակաբան և պայքարող. ըստ որում վասն Սոկրատայ ասէ Պղատոն, եթէ որում ումեք պատահէր՝ 'ի վերին երեսս շինականագոյն երևէր նա և երգիծաբան և թշնամանադիր. բայց 'ի ներքոյ լի՛ էր նա հանճարով և բանիւք՝ որ յարտասուս հատանէր զլսելիսն և գորովեր զսիրտս։ Վասն որոյ և չգիտեմ՝ ուստի արդեօք շարժեալ կէսք ասացին զԿատովնին ոՀ բանին՝ յոյժ հանգուցեալ Լիսիայն։ Սակայն վասն այսորիկ գատեսցեն՝ որք համօրէն և ոՀով 'ի վերայ կացեալ իցեն Հռովմայեցւոց բարբառոյն։ Իսկ մեք որ համարիմք՝ քան 'ի գիտակէ կերպարանաց՝ (որպէս կէսք կարծեն) առաւել 'ի բանից յայտնեալ բուսոյ բարուց մարդկան, առաջի արկցուք սղագունիւք 'ի նորայն բանից՝ զոր պատմեն։

Իբրև էր երբեմն 'ի բաց զՀռոմայեցւոց խուժանն քեցեալ 'ի բաշխից ցորենոյ, զոր փութոյ պնդութեամբ 'ի տարաժամու խնդրէր խուժանն, սա այս Կատոնն սկիզբն ատենաբանութեանն առնէր այս-

պէս . " Դժնդակ է արդեօք ով քաղաքա-
ցիք խօսել առ որովայնն՝ որոյ չիք ականջք":
Իսկ և յայլում նուագի կշտամբեալ զծայ-
բայեղ զծախսն , ասէր . գործ դժուարին
է պահել զքաղաքն՝ յորում առաւել
ծանրագնի վաճառի ձուկն մի՝քան եղն մի։
Ասաց դարձեալ. Հռոմայեցիք նմանօրինակ
խաշին են . քանզի զոր օրինակ առանձինն
չիք ածել զնա , այլ տաւաղեալք հորդան
տան նոքա զհետ առաջնորդին , " Սա-
պէս՝ ասէր՝ և դուք ինքնին միախումբ ա-
ծեալ բերիք 'ի խորհրդականացդ . որոց
ոչինչ արդեօք անասայիք խորհրդոցն՝ առան-
ձինն": Իսկ երբեմն 'ի պայքար մտեալ նա
վասն իշխանութեանն՝ զորոյ թեկն ածէին
կանայք, ասէր." Արք առ հասարակ իշխեն
կանանց , մեք ամենայն արանց , և կանայք
մեզ գլխովին : " Այլ է դա յառաջիցն
Թեմիստոկղեայ , որ 'ի տալ նմա որդւոյն
առնել շատ ինչ միջնորդաւ մօրն , " Ո՞վ
կին դու , ասէր , Աթենացիք աւագիկ իշ-
խեն Հելլենացւոց . ես ինքն Աթենացւոց.
դու՝ ինձ գլխովին . և քեզ որդին . այլ դա
վերջացեալ ելցէ յիշխանութենէն , որով
անխորհրդաբար տարապայման տիրանայ
Հելլենացւոց":

Եւ ասէր դարձեալ Կատոնն . եթէ
ժողովուրդ Հռոմայեցւոց ոչ միայն ծիրա-
նեաց գին հատեալ յարգէ, այլ և վարժիցն
ուսանց:" Քանզի զոր օրինակ՝ ասէր՝ ներ-
կարարքն զառաւել հեշտալին ներկանեն ,
սանդէս և պատանիք ուսանին՝ զմիմեանքն

ելեալ յառաւել գովանիսն առ ձեզ ։ Ապա յորդորակ 'ի նեղքս տայր Հռոմայեցւոց, զի թէ առաքինութեամբ և ժուժկալութեամբ այնպէս բարձրացան նոքա, մի՛ ապա վատթարեալք բերցին 'ի յոռեգոյնսն. ապա եթէ անժուժկալութեամբ և մոլութեամբ եղծան, փոփոխեսցին 'ի լաւագոյնսն. քանզի և շատ իսկ նոքաք մինչև ցայնժամ բարգաւաճեցան նոքա ։ Իսկ վասն որոց ստէպ թեկն ածէին զհնուպատոսական բարձին, ասէր. եթէ են իսկ դոքա նման որերոյն, որ ճանապարհին անտեղեակք գոլով խնդրեսցեն միշտ յառաջոյ գաւազանակիրս՝ զի մի՛ յանկարծ մոլորեսցին ։ Բայց կշտամբելով և զքաղաքացիսն, զի յաճախ զաւագութիւնն զայն զմեծ 'ի ձեռս տային նոցուն արանցն, ասէր. " Թուի թէ կամ շատ ինչ արժանաւոր չհամարիք զբարձդ զայդ, կամ թէ կարծէք չլինել շատից արժանաւորաց բարձիդ այդմիկ" ։ Իսկ խօսելով նա երբեմն և վասն միոյ ուրուք 'ի թշնամեացն, որ անարգաբար վարէր կեանս, ասէր. " Մայր դորա անէծս արդեօք համարի և ո՛չ օրհնութիւն, թողուլ զդա յետ մահուն 'ի վերայ երկրի " ։ Այլ և երբեմն մատնանիշ ցուցեալ զայր ոք՝ որ վաճառէաց զանդիւր առ ծովեզերբն՝ ժառանգութեն հայրենի, հիացեալ ընդ այրն՝ իբրու որ զօրաւորագոյն ևս իցէ քան զծով, ասէր. ,, Քանզի զոր ծովդ ինքնին դժուարաւ կարէր ողողել, դա աւադիկ հեշտին եկուլ ծախեաց" ։

Իսկ յորժամ Եւմենէս արքայ եկեալ 'ի Հռոմ քաղաք հիւրընկալութիւն մեծապէս գտանէր 'ի Սինկղիտոսէն, և այր զարամբ ուղի հորդէին նմա Ճոխք քաղաքին, անդուստ Կատոնն ընդ ակամբ հայէր և խորշէր. իբրև ասացին, "Այլ դա Թագաւոր բարի է և Հռովմէասէր," ետ պատասխանի. "Այդպէս լցէ արդեօք. սակայն այր Թագաւոր գազան շաղղակեր է. և չիք ոք արդեօք յերջանկաւէտ արքայից՝ որ զուգակշիռ Եպամինոնդեայ լցէ, և Պերիկղեայ, և Թեմիստոկղեայ, կամ Մարկոսի Կուրիոսի, կամ Ամիլկեայ՝ մականուանեալն Բարկայ,, : Եւ ասէր նա՝ նախանձել ընդ նա Թշնամեացն իւրոց, զի զամենայն գիշերն յառնէր նա 'ի հասարակաց գործն՝ անփոյթ զառանձնականքն արարեալ. և զի՝ կամէր մանաւանդ 'ի բարեգործել իւրում ոչ ունել նմա շնորհս, քան 'ի չարագործելն՝ անպատուհաս արձակիլ. և զի՝ ներէր յանցանաց առհասարակ ամենեցուն՝ բայց յիւրայնոցն : Իսկ իբրև երբեմն դեսպանս երիս ընտրեցին Հռոմայեցիք առաքել 'ի Բիւթիւնիա, յորոց մին ոանառուութեամբ տանջէր, և միւսն 'ի ծակեալոյ և 'ի հատածէն՝ խոռ ունէր ըզգլուխն, իսկ երրորդն 'ի մորոսաց ոմն երևէր, Կատոնն 'ի ժամուն ծիծաղեալ ասէր. Հռովմայեցիք աւագիկ հրեշտակութիւն մի առաքեն, որում ոչ ոտք են և ոչ գլուխ և ոչ սիրտ :

Իսկ յորժամ Սկիպիոն 'ի շնորհս Պո-

ղիւբեայ միջնորդ լինէր վասն Աքայեցւոցն վտարանդելոց, և պայքար մեծ էր 'ի Սինկղիտոսին, կէսք ասէին դարձուցանել զվտարանդեալսն, և կէսք դարձեալ ընդդէմ դառնային, յոսն եկաց Կատոնն և ասէ. „Իբրու եթէ մեր չունելով ինչ գործ՝ նստիմք աւադիկ զօրն ողջոյն պայքարեալ վասն ծերացելոցդ այդոցիկ Յունաց, եթէ արդեօք մեզ ինքնին հասանիցէ յուղարկել զդոսա 'ի գերեզման, եթէ մերելաբարձիցն Աքայիոյ "։ Իբրև վՃռտուաւ դարձին նոցա, յետ ո՛չ բազում ինչ աւուրց Պոլիւբիոս ինքնին 'ի վտարանդելոց անտի, գուն գործէր միւսանգամ մտանել 'ի Սինկղիտոսն, և վտարանդելոցն ունել անդրէն զառաջին պատիւն. և հարցեալ՝ վասն այսորիկ խորհուրդ 'ի Կատոնէ՝ ժպտեցաւ Կատոնն և ասէր. Պոլիւբիոս ինդրէ իբրու զՈդիւսեւսն անդրէն մտանել 'ի քարայր անդր Կիւկղոպպայ, իբրու զարտախուրակն և զկամարն անդանօր մոռացեալ ելցէ։

Եւ ասէր դարձեալ Կատոնն, եթէ քան յիմաստնոց անմիտք՝ իմաստունք առաւել օգտին յանմտաց. քանզի սոքա զգուշանան անձանց 'ի խակութեանց նոցա. իսկ նոքա չնմանին ուղղութեանց սոցա։ Իսկ 'ի պատանեկաց ասէր նա, առաւել սիրել զորս շառագնին, քան որք դեղնին։ Եւ ասէր դարձեալ՝ չեն նմա պէտք զօրականի որ զբազումսն շարժեսցէ 'ի չուել իւրում, և զոտս՝ 'ի կռուել իւրում. և որ

սատանիկ ևս խորդասցէ 'ի քուն, քան որ գոռասցի 'ի գոռին։ Էր երբեմն՝ և այպանեալ զայր ոմն յոյր յոյժ, ասէր. ,, Ցի՞նչ իրս օգտակար քաղաքին եղիցի մարմին այդպիսի, յորում ողջոյն որ ընդ որկորն և որ ընդ երանսն՝ գրաւեալ կայ յորովայնէն "։ Իսկ այր ոմն հեշտասէր կամեցեալ ընտանի լինել նմա, նա օտարանայր ասելով. Զէ՞ մարթ բնակել նմա ընդ մարդոյ՝ որոյ քիմք ազդողագոյն լցեն քան զսիրտն։ Եւ ասէր նա դարձեալ. Հոգի սիրողին կեայ 'ի մարմին օտարին. և թէ՝ Զամենայն աւուրս կենաց իւրոց ապաշաւեալ է վասն երից ինչ միայն. մի՝ զի զծածուկս գաղտնեաց հաւատաց կնոջն. և միւս ևս՝ զի նաւագնաց եղև, յորժամ մարթէր ընդ ցամաք գնալ. և երրորդ՝ զի օր մի անցոյց անգործ։

Իսկ ծերոյ ումեմն՝ որ վատթար կեայր, ասէ "։ Ա՛յր դու, ծերութիւնն ինքնին շատ ինչ աւագիկ ունի 'ի յոռեաց. մի՛ դու և ևս յոռեցուսցես զդա չարութեամբ "։ Դարձեալ և առ ժողովրդապետս մի՝ զորմէ կասկածէին գեղատուութիւն գործեալ, և որ փութոյ պնդութեամբ օրէնս չարաչար առաջի առնէր, ասէր. Ո՞վ պատանեակ դու, չգիտես՝ որ այն վատթար ևս լցէ. ըմբեալ՝ զոր խառնես, եթէ վաւերական գործեալ՝ զոր գրես "։ Եւ յիշոցս առեալ երբեմն 'ի մարդոյ՝ որ խառնակեցիկ վարէր կեանս, ասէր. " Անհաւասար է որ ընդ մեզ պատերազմ. զի դու հեշտին

ասես նախատինս, և մոռացիր ասես նա-
խատինս. իսկ ես ոչ ասել ախորժեմ, և ոչ
ասել սովորեմ։ Արդ այսպիսի ինչ են հան-
դէպք բանից Կատոնի՝ զոր պատմեն։

Իսկ յետ այնորիկ կարգեալ նա հիւ-
պատոս 'ի միասին ընդ Վալերիոսի Փղակ-
կոսի իւրում մտերմի, առնոյր զկուսակա-
լութիւն գաւառին՝ որում անուն կար-
դան Հռոմայեցիք՝ Ցանիս Սպանիա։ Ան-
դանօր 'ի նուաճել իւրում զինուք ժողո-
վուրդս բազումս, և շատ ևս՝ Ճարտարաբա-
նութեամբ, բանակ մի 'ի բարբարոսացն 'ի
վերայ դիմեալ՝ տագնապեցաւ նա յետս ըն-
կրկիլ։ Առաքեաց կոչեաց 'ի Թիկունս
զմերձակայ Կելտիբերացիսն. իբրև նոքա 'ի
վարձ խնդրեցին տաղանդս երկերիւր, առ-
հասարակ իրս իմն դժոխամբեր ելի Հռո-
մայեցւոց համարէին՝ տալ վարձս բարբա-
րոսաց վասն օգնականութեան։ Այլ Կա-
տոնն ոչինչ դժնդակ ասէր զնոսն. զի թէ
յաղթեսցեն՝ ասէ, հատուսցեն ոչ յիւ-
րեանց գոյից, այլ 'ի թշնամեացն. ապա
եթէ յաղթեսցին, այնուհետև չիք՝ ոչ հա-
տուցանող ոք և ոչ պահանջող։ Այլ
գոսաւ նա յաղթական 'ի մարտին, և այլն
ամենայն գեղեցիկ յաջողեցան նմա։ Բայց
Պողիւբիոս ասէ՝ 'ի հրամանէ նորա քան-
դել 'ի միում աւուր պատուարաց քաղա-
քացն՝ որ յայս կոյս գետոյն Բետեայ,
քաղաքաց բազմաց յոյժ և լցեալ մարտիկ
որբոով։ Իսկ Կատոնն ինքնին ասէ, եթէ
բազմաթիւ ևս էին քաղաքքն՝ զոր կա-

լաւ, քան զաւուրսն՝ զոր դեգերեցաւ նա Իսպերիա. և չեն պարծանք բանքն. քանզի թուով չորեքհարիւր էին քաղաքքն։ Եւ թէպէտ և 'ի զինուորութեան յայնմիկ մեծապէս շահեցան զօրականք, 'ի վերայ այսր և լիսոր մի արծաթոյ ևս առեալ բաշխէր միւսմ միւսմ 'ի նոցանէ. և ասէր՝ լաւ ևս է բազմոց Հռոմայեցւոց դառնալ արծաթով, քան սակաւուց ոմանց՝ ոսկւով։ Իսկ վասն անձին վկայէ իսկ ինքն, եթէ ողջոյն յաւարէն կալաւ նա և ոչինչ, բայց զոր եկեր յայնժամ և էարբ։ " Իսկ ես ինքնին՝ ասէ՝ ոչինչ մեղադիր լինիմ որոց յայսպիսեաց ասոսի խնդրեն շահավաճառ լինել. այլ կամիմ ես մանաւանդ էլև էլս առնել յառաքինութեան ընդ առաքինեացն, քան յընչաւէտութեան՝ ընդ ընչէղեցն, և յարծաթասիրութեան՝ ընդ արծաթասիրացն "։ Եւ այսպէս ապա ոչ զանձն միայն, այլ և զիւրսն չեթող մեծանալ յաւարէ անտի։ Եւ էին նորա 'ի բանակին ծառայք հինգ. մին 'ի նոցանէ Պակկոս անուն գնեալ պատանիս երիս 'ի գերեալն, գիտաց՝ եթէ իրազեկ եղև Կատոնն, մինչև յանդիման էլեալ նորա՝ խեղդ առնոյր անձամբ. ապա Կատոնն վաճառեալ զպատանիսն, զգինան առեալ կուսէր 'ի գանձն արքունի։

Այլ մինչդեռ տակաւին դեգերէր նա 'ի կողմանսն Իսպերիոյ, անդուստ Սկիպիոն մեծ՝ սատանդեղեցիկ նահատակութեանց նորա փոխանորդել զնա 'ի մրցանսն Իսպերիայ, հետամուտ եղեալ ընտրեցաւ 'ի

յաջորդ նորա. ուստի և 'ի շտապ տագնապի փութացաւ խաղալ գնալ առնուլ զիշխանութիւնն 'ի Կատոնէ։ Բայց Կատոն առեալ ընդ իւր գունդս հինգ զինուորաց և այրուձի հինգհարիւր 'ի կարապետս, վանեալ նուաճէր զԼակենատացիսն, և 'ի ձեռս բերեալ զդասալիք զօրականն զվեցհարիւրսն, առհասարակ 'ի մահ վարէր. և անդ հեգնեալ զՍկիպիոն կարեկից հիքացելոցն, ասէր. զայսօրինակ ապա բարձրասցի Հռոմ՝ յորժամ ալիք տոհմիկք յառաքինութեան ոչինչ վերջասցին քան զվատատոհմիկսն. և յորժամ 'ինձմա եալ և ելս ապրասցեն և ժողովրդականք՝ որպէսի ոք ինքն է՝ ընդ քաջազարմիցն և ընդ աւագացն։ Իսկ իբրև և վճիռ եառ Սինկլիտոսն՝ ինչ մի 'ի կարգաց անտի Կատոնի մի՛ շարժեալ Սկիպիոնի, հիքացաւ նա անփառունակ յառաջնորդութեան անդ իւրում, անցուցեալ անգործ ողջոյն զայն ժամանակ։

Յետ այսորիկ յաղթանակի հանդէս կատարեալ Կատոնի, ոչ ինչ վատացաւ իբրև զբազումսն՝ ոչ ոչ յառաքինութեան սակս մրցեալ՝ այլ 'ի փառաց, 'ի ժամանելն 'ի ծայրն և 'ի հիւպատոսանալն միանգամ և 'ի յաղթանակելն, մենացեալք տեղի տան այնուհետև 'ի գործոց քաղաքին, և յանդորրու և 'ի գրգութեան անցուցանեն զնշխարեալ աւուրսն. այլ սա անդուլութեամբ առաքինացաւ. իբրև արդարև ոչ ձեռնամուխք միանգամ 'ի հասարակաց գործս՝ իբրև 'ի սաստիկ ծարաւոյ

բերեալք ելեն գեղեցիկ փառաց և պատ-
ուոյ, մեծաքայլս և պնդագոյնս խաղայր 'ի
սպասարկութիւնս բարեկամացն և քաղա-
քայնոցն, և յառաջագէմ միսէր և 'ի փառ-
տաքանութիւնս և 'ի նահատակութիւնս
զինուորութեան: Եւ Թիկունս ևս տայր
նա իւրով Ջանիւն Տիբերիոսի Սեմպրոնիո-
սի հիւպատոսին 'ի խաղալ նորա 'ի Թրա-
կիա և յԻտալոս, և Նիզակակից երթայր ընդ
նմա: Ապա յետ այնորիկ և յԵլլադա խա-
ղաց նա իբրև հազարապետ 'ի միասին ընդ
Մանեայ Ակիլլեոսի ընդդէմ մեծին Ան-
տիոքոսի. այն՝ որ 'ի մեծ արհաւիրս պա-
շարեաց զՀռոմայեցիս, որպէս և ոչ ոք այլ՝
յետ Աննիբաղայ:

Քանզի սա այս Անտիոքոս անդրէն ընդ
բռամբ կալեալ վայրիկ մի և ողջոյն զԱսիա,
զոր 'ի վաղուց գրաւեալ իսկ էր Նիկա-
նովը Սելևկոս, և շատ յոյժ 'ի մարտիկ ազ-
գաց բարբարոսաց նկուն արարեալ՝ փքա-
ցաւ բարձրացաւ. զի և մինչև ընդ Հռո-
մայեցւոց մարտ գնել կռուել, իբրու ոչք
միայն բաւական էին 'ի ժամուն 'ի վեգ-
գալ ընդ նմա. և ցուցանէր իմն այնպէս՝
իբրև 'ի գեղեցիկ պատանեաց մղել ըզ-
մարտն և յաղթութիւն իւրեանց զՀելլե-
նացիսն փոխել, որում և ոչ պէտք ինչ էր
նոցա. քանզի Հռոմայեցւոց յաղթութ-
թիւն ինքնիշխանութեան հանեալ իսկ էր
զնոսա յայնժամ 'ի ձեռաց Փիլիպպոսի և
Մակեդոնացւոց: Ապա Անտիոքոս խաղայր
գնայր անդր սատիկ զօրու, և անդէն ոչ-

ջոյն Եղլադա յուզեալ ծփեցաւ գիւթեալ
'ի հռետորաց անոմ՝ որ գեղեցիկ յուսոմն
արքային Թակարթեցին զխուժանն։ Այլ
Մանիոս առեալ հրեշտակս արձակէր 'ի
քաղաքս, և Տիտոս Փլամինիոս անշշունջ
սանձակոծեալ խաղաղացուցանէր զաղ-
մուկս շփոթիցս՝ որպէս 'ի վարս նորա ար-
ձանագրեալ է. անդուստ և Կատոնն նկուն
առնէր զԿորնթացիսն և զՊատրացիս և զԵ-
գիպտացիս, և շատ ևս ժամանակ եկաց նա
յԱթէնս։

Եւ պատմեն՝ ճառս խօսեալ անդանօր
Կատոնի Հելլենացի առ ժողովուրդն՝ 'ի
գովութիւն առեալ զառաքինութիւն ըզ-
ծերունեացն Աթենացւոց. և մեծապէս
ևս գոհ ցուցեալ զանձն 'ի վերայ քաղա-
քին՝ վասն մեծութեանն և գեղեցկու-
թեանն։ Այլ չէ՞ ճշմարիտ. քանզի թարգ-
մանաւ խօսեցաւ նա ընդ Աթենացիս, ո՛չ
զի անտեղեակ էր հելլէն բարբառոյն, այլ
զի զսովորոյթ պահեաց զՀայրենեացն.
ծիծաղեալ զնոքօք՝ որ հիացեալ ինն էին ընդ
իրս Հելլենացւոցն։ Ուստի և Պուտուամիոսի
Ալբինոսի յարձանագրելն երբեմն պատ-
մութիւն 'ի Հելլենականն և 'ի խնդրելն
ներումն, հեգնեալ Կատոնի ասէր. Ար-
դարև դա ներողութեան արժանի է, եթէ
արդեօք 'ի վնասոյ անոմ Ամիլիկտիոնեանցն
սոխպեցաւ առնել այնպէս։ Եւ ասեն ևս՝
պանեչանալ Աթենացւոցն ընդ լակոնա-
բանութիւնն Կատոնի և ընդ կորովու-
թիւն խնասիցն. զի զոր նա սղագունիւք

վճարէր, զնոյն թարգմանն բազմամանուած մերկանայր և երկարս. և համբուն՝ կարծէ-ցին եթէ Հելլենացւոցն 'ի շրթանց վազեն բանքն, իսկ Հռոմայեցւոցն՝ 'ի սրտէն։

Իսկ Իբրև Անտիոքոս պատեաց փակեաց զօրօքն զանձուկն շուրջ զթերմոպիղեաւ, և շերտափակ և պատուարափակ ամրացոյց զամուրս անխաբ վայրացն, և անդէն բանակ հարեալ նստաւ յանդորրու, յայնժամ ապա բնաւ իսկ յուսահատ լինէին Հռոմայեցիք վանել զանձուկն։ Բայց Կատոնն յուշ ածեալ զպարագայ շրջանն՝ զոր անդ երբեմն արարին Պարսիկք, առեալ ընդ իւր հատուած 'ի զօրուէն՝ անկաւ յուղի գիշերի։ Իբրև եկին հասին նոքա 'ի կատար անդր բարձանցն, ուղեցոյցն որ 'ի դերեւոյն՝ մոլորեալ յուղւոյն, յայս կոյս յայն կոյս թափառեալ ընդ դժուարս և ընդ անկոխս, յայնժամ խապառ սրտաբեկ լինէին զօրականք յահի մեծի ըմբռնեալք. ապա Կատոնն զվեշտ վտանգին՝ հրաման տայր առհասարակ զտեղի ունել անշշունչ. իսկ ինքն առեալ ընդ իւր զԼեվկիոս զորմն Մալլիոս՝ այր յաջողակ 'ի մարդեալ 'ի վեր ընդ լերինս, դնայր զուլին զայն մեծապէս վտանգաւ և անձկութեամբ յանլուսին 'ի խոր գիշերի՝ ընդ ժանտաձիթենիսն և ընդ կոթողսն՝ որ ցցուեալք խոչընդակն ևս լինէին և խոչընդոտն ճանապարհին. մինչև հասեալ ժամանեալ 'ի պողոտայ մի զոր կարծէին ելանել 'ի բանակ անդր թշնամեացն, նշանս առեալ

կանգնէին 'ի ծայրս երեսելիս կարկառացն Կալլիդրոմեայ. անդուստ ապա դարձեալք յետս և առեալք զզօրականն աձին բերին մինչև 'ի նշանն. կալան զՊողոտայն, և ընդ այն խաղային 'ի վայր։ Իբրև վայր մի յառաջ խաղացին, կարճատեր պոլոտայն և եկեալ աւարտեր յանդունդս ինն ահագինս։ Ապա անդրէն միւսանգամ տագնապեցան և զահի հարեալ դողային, ոչ գիտելով եթէ մոտ իսկ հասեալ էցէ նոցա առ թշնամին։ Իբրև այդն մերկացաւ, թուէր այնպէս լսելի լինել ձայնից աղաղակաց, և արագ արագ յակն իւրեանց արկանել և զղակիչ զՀելլենացւոցն, և զառաջապահս նոցա 'ի նեղքոյ ափավոյեցն։

Անդանօր ապա բանակեցուցեալ Կատոնի զզօրն՝ հրաման տայր յառաջ մատչել միայն Փիրմիացւոցն, զոլոց և զփորձ գիտէր զՀաւատարմութեանն և զնահատակութեանն։ Իբրև նոքա խռնեցան զնովաւ, խօսել սկսաւ և ասէ. "Պարտ է ինձ զայր մի ձերբակալ կենդանւոյն ունել 'ի թշնամեացն, իմանալ՝ ոյք ոմանք էցեն յառաջապահեսոքդ, քանիսն բազմութիւն նոցա, զի՞նչ այն էցէ և յօրինուած և կարգողքոյն բանակին, և կազմածք՝ որով մեզ սպասեալ մնան։ Բայց առ 'ի հասանել ունել ձեզ զայրդ՝ արագավազ յափշտակութեան և քաջարութեան պէտք են ըստ անզէն առիւծուցդ օրինակի, յորժամ նոքա թեթևք և յանձնապաստանք խոյացին յերկչոտան 'ի գազանաց"։ Ասաց Կա-

տուին, և անդէն Փիրմիացիք՝ որպիսիք գը-
տան 'ի Ժամուն՝ յարուցեալ խուժէին առ
հասարակ ընդ զառ 'ի վայրն 'ի վերայ
յառաջապահիցն. և յեղակարծումն 'ի վե-
րայ անկեալ՝ խռովս հարեալ ասա անդ
վարատեալ ցիր և ցան առնէին. և զայր
ոմն 'ի նոցանէն զինու զարդու ձերբակալ
արարեալ՝ ածեալ կացուցանէին առաջի
Կատոնի։ 'Ի նմանէն ապա իրազեկ եղեալ
Կատոնի՝ զի բանակ ողջոյն Թշնամեացն
յանձուկն անդր զտեղի կալեալ նստի
հանդերձ Թագաւորաւն, և յառաջա-
պահք վեցհարիւր էն Թուով այրընտիր յԵ-
տուզացւոց, նա ունչս արարեալ սակաւա-
ձեռն գնդին նոցա և անհոգուԹեանն,
անդէն առաջին ինքն մերկացեալ զսուրն՝
խաղայր ընդդէմ նոցա 'ի ձայն աւագաւոր-
ղոցն և մեծ աղաղակաւ։ Նոքա տեսեալ
զՀռոմայեցիսն 'ի վայր դռոյԹ 'ի Ժայռիցն
տուեալ, զոտս արձակեալ փախչէին 'ի
բուն բանակ անդր, և զնա խռովուԹեամբ
ընուին։ Յայնմ պահու անդուստ և Մանիոս
'ի նեբքոյ նեղէր տագնապէր զպատնէշն,
և հարկանէր վանէր զանձուկն միահա-
մուռ ամենայն զօրուԹեամբ. ուրանօր և
Անախոքոս վիմով հարեալ 'ի բերանն, և
ատամանցն սարսեալ և Թափեալ, յան-
հնարին ցաւոցն՝ առեալ ընդ կրունկն դար-
ձուցանէր զերիվարն։ Անդ ապա և ոչ
գունդ մի 'ի զօրաց նորա 'ի դիմի հարաւ
Հռոմայեցւոցն. այլ Թէպէտ և ոչ դաշտ
փախստեան էր անդանօր և ոչ տե-

զի թաքստեան, զի և գթեալք 'ի վայր հոսէին ընդ ափափայսն և ընդ վախսն և 'ի ճահիճս ճախճախուտս, այնպէս ցիր և ցան ընդ անձուկսն ընդ այնոսիկ և ընդ միմեանս ընդ հարեալք, և յահէ հարուածոցն և երկաթոյ թշնամւոյն վանեալք, 'ի միմեանց հարեալք սատակէին։

Իսկ Կատոնն՝ անդստին իսկ երևեալ անձնագով և յայնժամ յայտնի ևս պանծայր ընդ գործն՝ իբրու ընդ էլս մեծագործ նահատակութեանն և պերճանայր ընդ մրցանսն ընդ այն և ասէր. եթէ և ոչք յայնժամ ականատեսք եղեն նահատակութեանն նորա առ 'ի թշնամիսն, քաջ իսկ վկայէին՝ եթէ քան Կատոնն ժողովրդոց, ժողովուրդք առաւել պարտական կացին Կատոնի. և թէ՝ ինքնին Մանլիոս հիւպատոս դեռ ևս ջերմին 'ի յաղթութենէն՝ փարեալ զջերաջերմ Կատոնիս և ժամն հարուստ այնպէս գիրկ ընդ խառն՝ ձայն բարձեալ գոչէր առ խնդին, եթէ ոչ ինքնին և ոչ ժողովուրդք առհասարակ չունին զուգակշիռ չափել մրցանացն Կատոնի։

Ապա յետ մարտի պատերազմին՝ զնա ինքնին առեալ արձակէին 'ի Հռոմ քաղաք՝ աւետաբեր իւրոց նահատակութեցն։ Նա յաջողակս նաւեալ 'ի Բրենտէսիոն, անսի զմի օր անցանէր 'ի Տարանտոն. և ճանապարհ արարեալ այլ ևս աւուրս չորս՝ եկեալ հասանէր 'ի Հռոմ յաւուրն հինգերորդի եղեցն իւրոց 'ի նաւէն, և լինէր

ինքն նախընծայ աւէտաւոր յաղթութեան։ Եւ ընդ յայնժամ քաղաքն ուրախութեամբ 'ի տօնախմբութիւնս և 'ի նուէրս զոհից, և ինդայր ժողովուրդն 'ի խորհուրդս իմն մեծամեծս, իբրու առհասարակ տիրել ծովու և ցամաքի։

Եւ արդ 'ի պատերազմական մրցանացն Կատոնէի՝ այդոքիկ են հոյակապքն։ Իսկ ըստ քաղաքական կարգացն յայնժամ թուի թէ ոչ գուշնաքեայ ինչ համարէր նա՝ ամբաստան կալ և հալածիչ արանց չարաց. զոր և արար իսկ առ բազումս 'ի նոցանէ. դարձեալ և գործակից լինէր հալածչացն, և այլոց ևս թելադիր 'ի նոյն. ըստ որում և զՊեսիղլիոսն գրդեաց ընդդէմ Սկիպիոնի։ Այլ քանզի 'ի մեծ զարմէ էր Սկիպիոն, և բնաւ իսկ յանձնապատման՝ առ ոսս զամբաստանութիւնսն հարկանէր, ոչինչ ուժեալ ընդդէմ նորա՝ էթող և այլ ամբաստան առեալ ընդ իւր յարեաւ ընդդէմ Լուկիոսի Եղբօր նորա, և շատ դրամոց տուգանէր զայրն՝ տալ 'ի գանձ արքունի. որում անձեռնհաս այրն և արդելեալ 'ի բանսի, ապա հաղիւ ուրեմն բողոք կալեալ առ ժողովրդապետսն՝ արձակէր յազատութիւն։ Եւ էր երբեմն՝ զի 'ի պատանեկաց ոմն պատուհաս 'ի վերայ ածելով թշնամւոյն հօր իւր վախճանելոյ, ասեն՝ եթէ Կատոնէ ընդառաջ ելեալ պատանւոյն 'ի հրապարակին յետ վճռոյ պատուհասին, կալաւ զաջոյն և ասէր նմա, եթէ՝ Այդպիսի յուղարկաւոր

բութեամբ պարտ է զոհել ծնողացն ոչ գառինս և ոչ ուլս, այլ զարուստս և ըզդատակնիք արանց թշնամեաց նոցա։

Սակայն և ոչ ինքնին Կատոն 'ի քաղաքականութեանն անբամբաս գտաւ. այլ պատճառս երբէք տուեալ թշնամեացն, ցանգ քարշեցաւ նա 'ի դատաստան և 'ի վտանգս պաշարեցաւ՝ ցորչափ և եկեաց։ Քանզի պատուեն՝ ամբաստանութիւնս կրեալ նորա գոգ յինքեցս անգամ. և զվերջին նուագն՝ լեալ նա ամաց ութսուն և վեցից, բարբառել նմա յայնժամ զհռչակելին զայն առած, եթէ "Դժնդակ է՝ որ 'ի մէջ այլոց մարդկան կեցեալ ելցէ, և այլոց առաջի՝ վատն անձին պատասխանի արասցէ"։ Այլ և ոչ ցայս վայր սահման եդ նա իւրոց մրցանացն. այլ ամբաստան եկաց նա և վատն Սերվիլիոսի Գալբայ յեռ չորից ամաց՝ մինչդեռ զիննանամենիւք ուրեմն էր. քանզի և եկեաց նա իբրու զայլ ոմն նեստոր մինչև յերրորդ ազգ, և ցանգ պարապեալ 'ի գործ. 'ի վեգ եկեալ բազում անգամ՝ որպէս ասացաքն՝ յառաջնորդութեան քաղաքին՝ ընդ մեծին Սկիպիոնի, և ժամանեալ մինչև 'ի Սկիպիոն կրտսեր՝ որ էր որդեգրեալ թոռն առաջնոյն և որդի Պաւղոսի, այն՝ որ զՊերսէոսն վանեաց և զՄակեդոնացին։

Բայց տասն ամաք զկնի հիւպատոսութեանն զհետ կրթեցաւ Կատոն համարակալութեան։ Եւ արդեօք այս բարձ պսակ է ամենայն փառաց, և լուսն ամե-

նայն պաշտամանց քաղաքին. քանզի և է
իսկ ինքնին համարակալն՝ հանդերձ բա-
զում այլ իշխանութեամբն՝ և ոստիկան
քննիչ կենաց և վարուց մարդկան։ Քանզի
և ոչ լաւ համարեցան Հռոմայեցիք Թո-
ղուլ զայր այր ըստ հաճոյս՝ կին ածել կամ
զաւակս առնել կամ զհանապազօրեայ
կեանսն վարել կամ կոչունս առնել ըստ
ցանկութեան և ըստ կամաց անձինն, ա-
ռանց ուրուք խորհրդոյ և քննութեան.
այլ զմտաւ ածեալ եթէ քան 'ի գործսն
հասարակաց և 'ի քաղաքականսն՝ առաւել
յայնոսիկ բոյս բարուց մարդոյ 'ի վեր ե-
րևի, ուստի և զմի ոք 'ի պատրկաց անտի և
զմիւս այլ 'ի ժողովրդականացն՝ կարգէին
պահապան և ուղղիչ և պատուհասադիր
վարուց. զի մի ոք Թերևս 'ի բնաշխարհիկ
և 'ի տնկակից քաղաքավարութենէն զա-
ռածեալ՝ կեանս ըստ հաճոյից վարեսցէ.
և նոցա անուն կարգային Հոմբոյլ. ոչք
և իշխան էին՝ յասպետաց 'ի բաց զերիվարն
առնուլ, և 'ի Սինկղիտոսէն 'ի բաց զան-
ժուժկալն և զխառնակեցիկն հանել։ Նո-
քա տքնէին և 'ի վերայ զոհիցն և զծախսն
սահմանէին. և կարգէին զաշխարհադիրն
և զպաշտամունս զքաղաքացն. և իշխանու-
թիւն մեծ էր նոցա և 'ի վերայ բազում
ինչ իրաց։ Ուստի և ընդդէմ դառնային
հետամտութեանն Կատոնի գոգ ամե-
նայնաբք աւագք 'ի Սինկղիտոսին։ Քանզի
Պատրիկք նախանձաբեկ լինէին, իբրու
յանարգութիւն հասանել ազնուականու-

թեանն՝ եթէ որք անաւադք ամբարձին
'ի բարձրագոյն պատիւն և զայնչափ իշխա-
նութիւնն 'ի ձեռին կալցեն։ Իսկ այլք գի-
տակք ևս անձանց վատթարութեանն և
հայրենի աւանդիցն օրինազանցութեան,
զանգիտեալ գողային յանաչառութենէ
առն՝ որ բնաւ իսկ անողոքելի կայցէ ար-
դեօք յիշխանապանծ աւագութեանն։
Վասն որոյ և 'ի խորհուրդ մտեալ նոքա
ընդ միմեանս՝ քարընդոսան լինել խորհըր-
դոցն նորա, հետամուտս այլ եօթն ընդ-
դէմ յարուցին նմա. որք շնթեալք խու-
ժանին յանգուցանէին զնա՝ խնդրել յայն
աւագութիւն զայր քաղցր և ըստ իւրեանց
ըղձին։

Իսկ անդուստ Կատոնն երբէք ոչ քաղց-
րութիւն 'ի դէմս բերեալ և ոչ հեզու-
թիւն, նա և սպառնալիս 'ի բեմէ անտի
'ի վերայ կապեալ չարացն և բոլոր կա-
լեալ՝ եթէ մեծապէս մաքրութեան պէտք
են քաղաքին, նախանձ գեղեցիկ արկանէր
ժողովրդոցն. զի եթէ ուշիմք իցեն՝ ա-
ռեալ կարգեսցեն իւրեանց բժիշկ զոմն
ոչ ամոք և հեշտ, այլ անաչառ և անողո-
քելի. և ասէր զանձնէն՝ այնպիսի ոք լի-
նել, այնպիսի և 'ի պատրիկս միայն զՓղակ-
կոս Վաղերիոս. և ապա 'ի միասին ընդ
նմա ակն ունէր կտրել 'ի բաց և 'ի հուր
դատել իբրև զԻդրայն զայն՝ զչարչարութիւն
զամենայն և զգրգանս, և դորձ գործել
գեղեցիկ. և խնթայր վասն այլոցն հետա-
մտից վատանալ յիշխանութեանն յայնմիկ՝

իբրև զանգիտեալ խուսափեն նոքա յանա-
ջառ իշխանէն։

Եւ արդ վեհ արդարև գտաւ Ժողովուրդ
Հռովմայ, և վեհագունեցին արանց արժա-
նի առաջնորդութեան. զի և երբէք զահի
չհարեալ 'ի սպառնալեացն և 'ի խրոխտ և
'ի պերճ կերպարանէն Կատոնի, 'ի բաց
միանգամայն մերժեալ զհետամուտ մար-
դելոյզն, առեալ կարդէր համարակալ
զՓղակկոս 'ի միասին ընդ Կատոնի. իբ-
րու ոչ եթէ հետամուտ ինչ լեալ Կատո-
նի բարձին այնմին, այլ թէ արդէն իսկ
զնոյն զանձամբ առեալ՝ բուռն հարցէ այ-
նուհետև 'ի գործ զիշխանութիւնն վարել։
Ուստի և Կատոնն արագ արագ առեալ
գրէր 'ի թիւ Սինկղիտոսին զիշխանակից
իւր և զբարեկամ զԼեւկիոս Վալերիոս
Փղակկոս. և անտի 'ի բաց մերժէր զբա-
զումս, յորս և զԼեւկիոս Կուինտոս՝ որ
եօթն ամաւք յառաջ եկաց հիւպատոս. և
որ մեծ ևս էր քան զհիւպատոսութիւնն,
զի էր նա եղբայր Տիտոսի Փլամինիոսի՝ որ
'ի պարտութիւն մատնեաց զՓիլիպպոս։
Իսկ պատճառք 'ի բաց հանելոյն՝ էր այս-
պիսի։

Էր իսկ զօրհանապազ առ Լեւկիոսի
տարփածու 'ի պատանեկաց ոմն չքնաղա-
գեղ. որում 'ի զօրավարութեան անդ իւ-
րում շուք մեծապէս և իշխանութիւն
տայր Լեւկիոս, որչափ ինչ յառաջին բա-
րեկամացն նորա կալաւ և ոչ ոք։ Իսկ ու-
րեք 'ի կուսակալութեան իւրում բազ-

մեալ նա 'ի կոչունն, և ընդ նմա՝ ըստ սո-
վորութեանն՝ և պատանեակն, շատ ինչ
աղուաբանեալ պատանեկին առ Լեւկիոս
մեղկեալ 'ի գինեբբուն, ասէր՝ այնչափ
ինն սատիկ սիրեալ զնա, զի և՝ "Տեսարան
մերձ գոլով ասա մենամարտկաց՝ զոր իմ
բնաւ, ասէ, չէք տեսեալ, 'ի վերայ այսր՝
և ըղձակաթ ընթացայց առ քեզ, թէպէտ
և սիրելի յոյժ ինձ տեսանել զայր մի
'ի սպանդ վարեալ": Իսկ յայնժամ Լեւ-
կիոս տարփանս հաւասար փոխարինեալ
պատանեկին, ետ պատասխանի. "Այլ մի
դու վասն այդորիկ նեղեսցիս յանձն՝ բազ-
մեալ առիս. Ես հաճեցից զքեզ": Ասաց,
և տայր հրաման զմի ոք 'ի մահապարտաց
ածել զառաջեաւ, և զսակրաւոր պաշտօ-
նեայն. ապա հարցեալ ցպատանին՝ կա-
մի՞ տեսանել զհարուածն, իբրև պատաս-
խանեաց՝ Այո՛. հրաման տայր պաշտօ-
նէին գլխատել զայրն: Եւ զայսոսիկ պատ-
մեն մեզ բազումք. և Կիկերոն ինքնին 'ի
Տրամախօսութեան յաղագս ծերութեան՝
տայ զայս պատմել նմին Կատոնի: Իսկ
Լիվիոս ասէ, եթէ սպանեալն յայնժամ
էր դասալիք ոմն Գաղատացի. և եթէ՝ ո՛չ
պաշտօնեայն՝ այլ ինքնին Լեւկիոս ձեռաք
իւրովք սպան զայրն: Եւ զայսոսիկ արձա-
նագրեաց Կատոնն յիւրում Առեղծա-
նութեանն:

Ապա տարագիր 'ի Սինկղիտոսէն հա-
նեալ Լեւկիոս, եղբայր նորա մեծապէս
պատեալ՝ բողոք առ ժողովուրդն բառնայր՝

խնդրէր տալ Կատոնի զհամար զտարա-
գրութեանն. իբրև անդ Կատոնն կայր և
պատմէր ոճով զամենայն զբանս զկոչնոցն.
անդուստ Լեւկիոս ժխտեալ յուրաստ լի-
նէր. սակայն յերդումն հրաւիրեալ'ի Կա-
տոնէ՝ տեղի տայր. և այնպէս կնքեցաւ
արժանահաս պատուհասն: Այլ ապա եր-
բեմն 'ի Թատրոնի սա այս Լեւկիոս 'ի բա-
ցեայ յոյժ 'ի կարդէ հիւպատեանցն՝ գնա-
ցեալ բազմեալ ուրեք, այնչափ ինն 'ի կա-
րեկցութիւն շարժեաց զժողովուրդն, զի
և ձայն բարձեալ բռնադատեցին զնա մատ-
չել յառաջ, դարման զայս՝ ըստ կարի՝ տա-
նելով վշտին նորա: Առ այս՝ և զՄանիլ-
լիոս, որում ըստ առհասարակ ակնկալու-
թեանն հասանէր բարձ հիւպատոսութեն՝
'ի բաց 'ի Սինկղիտոսէն Եհան Կատոնն. զի
'ի տունջեան յանդիման դատերն համբոյր
ետ նա կնոջ իւրում: Եւ ասէր Կատոնն՝
եթէ գիրկս ինքն երբէք չէած իւրում
կնոջն, բայց 'ի մեծ յորոտալ ամպրո-
պացն. և ընդ խաղ դարձեալ ասէր նա, է-
թէ երջանիկ է նա յորժամ Արտամազդ
որոտայ: Իսկ որ ստդիւտ նախանձու արկ
զԿատոնիս, զի զերիվարն 'ի բաց Եհան
նա յեղբօրէն Սկիպիոնի 'ի Լեւկիոսէ 'ի
յաղթանակող առնէն. զի այնպէս ինն
թուեցաւ՝ նովին թշնամանել նմա զԱֆրի-
կանոսն Սկիպիոն: Բայց որ գժոխբմբերե-
լի յոյժ գտաւ բազմաց, զի կարձել խըն-
դրեաց նա զշռայլութիւն գրգանացն՝ յո-
րում անկղիտացեալ առհասարակ բազ-

մութիւնն և ոչինչ կարացեալ Կատոնի յայտնի 'ի դիմի հարկանել, շուրջանակի սանձ ածեալ բանին՝ ետ հրաման զի ամենայն պատմուճան և ամենայն կառք, և ամենայն կանացի զարդ, և ամենայն կահք սեղանոյ՝ աւելի քան դրամակշռոց հազարաց և հինգհարիւրոց, տասնպատիկ առաւել արժեսցեն. և ըստ այնմ ածցի 'ի վերայ և սակ առաւել. և էր սակն՝ ընդ հազար պղինձս երիս. որպէս զի ծանրացեալ սակին նոցա, և տեսեալ զի արք սակաւապէտք և ժուժկալք՝ թէպէտ և հաւասարագոյք՝ հարկս նուազ հարկանէին արքունի գանձուն, 'ի բաց կացցեն նոքա 'ի դրդանացն:

Ապա վասն այնորիկ դրդռեցան ընդ նմա, ոչ միայն որք անդուլք 'ի դրդանացն՝ հարկ զայն ծանր հարկանէին, այլ և որք յազատանալ 'ի հարկէն՝ տեղի ետուն 'ի դրդանացն: Քանզի և բազումք ընչաւէտութեան բացբարձուն կարծեսցեն ըզսանձակոծել ենապարծութեանն, յորում և յօրանան նոքա ոչ 'ի կարևորսն՝ այլ յաւելորդսն: Եւ վասն այսորիկ՝ ասեն՝ մեծապէս զարմանալ Արիստոնի իմաստասիրի, զի երջանիկ ևս կարծին աւելաստացուք, քան որք կարևորքն և պիտանեաքն լցեալք իցեն: Իսկ Սկոպաս թեսսալոս՝ 'ի խնդրել բարեկամին 'ի նմանէ իրս ինչ ոչ յոյժ պիտանացու Սկոպեայ և յասելն եթէ յանպիտանեացն խնդրէ և յանկարևորացն, ետ պատասխանի. "Եւ

սակայն երջանիկ աւագիկ եմ ես և ընչաւէտ սակս աւելորդացդ այդոցիկ և անպիտանեացն»։ Եւ այսպէս ապա ցանկութիւն ընչաւէտութեանն ոչ 'ի բնաւորական ինչ կրկից է, այլ սպրդի 'ի մեզ 'ի ռամկացն և յօտարին կարծեաց։

Բայց Կատոն երեսս ինչ չարարեալ խազմարար մարդկանն, և անողոքելի ևս զանձն 'ի նեղքս բերեալ, քանդեաց միանդամայն զամենայն ջրմուղսն՝ որ ջուր զհասարակացն բաշխէին 'ի տունս և 'ի պարտէզս, և տապալէր քակէր զամենայն կոճանս շինուածոց 'ի քաղաքին. և նուազ առնէր զվարձս աշխատութեանցն, և աճեցուցանէր տուրս 'ի վերայ վաճառաց։ Ուստի և յատելութիւն մեծ գրգռեցան ընդդէմ նորա. և դաշնաւորք ևս ընդ Տիտոսի եղեալ՝ Եւտուն Սինկլիտոսին եղծանել զպայմանն զոր կռեաց նա 'ի նորոգութիւն մեհենիցն և հասարակաց շինութեանցն, իբրև պայմանս իմն ումեքեաս։ Ա՛ռ այս՝ դերդեցին և զանդգունս 'ի ժողովրդապետացն ամբաստան զնմանէ կալ առ ժողովուրդն և տուգանել զնա քանքարաց երկուց. և շատ ևս ընդդէմ դարձան նորա 'ի շինութեան ալքունեացն, զոր շինեաց նա 'ի հասարակաց դրամոցն առ երի հրապարակի խորհրդարանին, և անուն կարդայր նմա՝ Արքունիք Պորկիան։

Ա՛յլ յայսր ամենայնի վերայ՝ յոյժ պանչացեալ էին ժողովուրդք ընդ նահատակութիւնս առն 'ի համարակալութեանն.

քանզի և անդրի մի կանգնեցին նմա 'ի տա-
ճարին Փրկութեան. և առ պատուանդա-
նին արձանագրեցին ոչ զմարտին մրցանսն
Կատոնի կամ զյաղթանակն, այլ զուղ-
ղութիան. որպէս 'ի վերատաւութեան անդ
կայ. եթէ 'ի ժամանակին՝ յորում նուա-
զեալ Հռոմ 'ի վատթարն նկրտէր, սա
այս Կատոնն կացեալ համարակալ, գեղե-
ցիկ սահմանօքն և հանճարեղ կարգօք, և
իւրովք իսկ վարժիւք միւսանգամ յոտին
կանգնեաց զնա։ Այլ յառաջ ժամանա-
կաւ նա ինքն Կատոնն ծիծաղէր՝ որք միան-
գամ տեսչայինն ունել յայսպիսեաց աս-
ի, և ասէր՝ եթէ անմտաբար նոքա պար-
ծին ընդ արուեստակերտս պղնձագործաց
և նկարչաց. և ինքն պանծայ՝ զի պատկերս
գեղեցիկս յոյժ զիւրոյ անձինն կանգնեալ
է յոգիս անդր քաղաքացեացն։ Իսկ առ
որս զարմացեալ էին՝ զի որք բազումք ան-
փառունակք ունէին անդրիս՝ և ինքն չու-
նէր, տայր պատասխանի. "Քանզի մանա-
ւանդ կամիմ ես ինդրել, եթէ էր աղա-
գաւ ինձ անդրի չկանգնեցին, քան եթէ՝
էր աղագաւ կանգնեցին"։ Եւ գլուխս բա-
նին՝ ասէր նա, առն բարւոյ քաղաքացւոյ
չինք ժուժալ 'ի լուր գովութեանց՝ որք
չյանգեսցին յօգուտ քաղաքին. Թէպէտ և
ինքն առաւել քան զամենեսեան մեծա-
պէս անձնգով էր. որպէս զի և 'ի կշտամ-
բանս այլոցն խակութեանց՝ պատմեն ա-
սել նմա. Կշտամբել չէ արժան, զի չեն
իսկ գոքա Կատոնք։ Իսկ որք միանգամ

Թեսակոխէին նմանեալ ինչ գործոց նորա և
ջայլողէր նոցա, կոչէր զնոսա՝ Կոպոչն
Յաղողակ։ Եւ ասէր նա՝ եթէ 'ի գործս
գժուարինս և 'ի բազմավտանգս՝ ողջոյն
Սինկղիտոսն ակնկառոյց էր 'ի նա, որպէս
ողբ 'ի յուզել մրրկաց դէտ ակն 'ի նաւա-
պետն կալցէն. և թէ՝ էր բաղում անգամ՝
յորժամ նա մերձ չէր, այնպէս անվճար
մնային իրք մեծամեծք մինչև 'ի գալուստ
նորա։

Եւ զայսոսիկ՝ և այլք ևս վկայեն մեզ.
քանզի և էր իսկ մեծապէս իշխանութիւն
նորա 'ի քաղաքին, և քաղաքավարութիւն
կենացն և ճարտարաբանութեամբն և
ծաղկեալ ալեօքն։ Էր նա հայր բարի. և
ընդ ամուսնոյն գնայր բարեմոյնս. և մտա-
դիր ևս էր 'ի շահատացութիւն՝ իբրև ոչ 'ի
հարևանցի պարապեալ գործ և 'ի դուշնա-
քեայ. ուստի և 'ի դէպ իսկ առ այս պատ-
մեցիս ես համօրէն զնորայն։ Քանզի ած
նա կին քաջաղդի առաւել՝ քան ընչա-
ւէտ. զմտաւ ածէր, զի թէպէտ և հաւա-
սար՝ երկու ևս աղգդ այդ կանանց բարձ-
րայօնք բնաւորեալ են և ամպարհաւաճք,
սակայն առաջինքդ պատկառեալ 'ի յոռ-
ոյն՝ 'ի գեղեցիկսն և 'ի պարկեշտսն հլուք
առաւել հանդիպեացին և հնազանդք ա-
ռանց։ Եւ ասէր նա՝ եթէ որ զկինն հար-
կանէ կամ զորդին, ձեռն արձակէ յիրս
ինն յոյժ նուիրականս և սուրբս. և թէ՝
արդոյ ևս է նմա լինել ամուսին բարի,
քան աւագ 'ի Սինկղիտոսին. և աքանչա-

ցեալ յոյժ է ինքն ընդ նախնին այն Սո-
կրատէս՝ ոչ յայլ ինչ պատճառս, քան
եթէ զի ցանգ այնպէս հեզ և հանդարտ
ընդ դժխեմ կնոջն եկեաց նա և ընդ ա-
պուշ զաւակացն։ Իսկ իբրև որդի ծնաւ
Կատոնի, միանգամայն զամենայն գործ
կարևոր այնուհետև՝ բայց 'ի հասարակացն՝
'ի բաց թողեալ, զի մերձ կնոջն գտանիցի
'ի լուանալ և 'ի խանձարրել զողայն. քան-
զի և ինքնին մայրն իւրով կաթամբն դիե-
ցուցանէր զնա. էր բազում անգամ զի և
տղայոց ծառայիցն իւրոց տայր զիւր ըս-
տինան 'ի դիեալ, զի հաւասար կաթնածուծք՝
բարեմոյնս յարդարեսցին նոքա առ իւր
զաւակն։ Իսկ իբրև յարբունս խելացն հա-
սանէր մանուկն, ինքնին Կատոնն առեալ
վարժէր զնա 'ի դպրութիւնս։ Թէպէտ և
էր իսկ նորա ծառայ մի Քիլոնն անուն
դրամատիկոս քաջ, և վարժապետ ևս կա-
ցեալ էր բազմաց տղայոց, 'ի դէպ չհամա-
րեցաւ՝ որպէս ասէ իսկ ինքն՝ եթէ իւր որ-
դեակն կշտամբանս 'ի ծառայէն առցէ,
կամ թէ յամրուս տղայն՝ ուսկնատանջ 'ի
նմանէն լինիցի. կամ թէ շնորհս ապա
կալցի ծառային զգեղեցիկ դաստիարակու-
թեանն. այլ ինքն անձամբ անձին էր նորա
վարժապետ, ինքն օրէնսուսոյց, և ինքն դար-
ձեալ ըմբշամարտ. ոչ միայն արդնընկէց
լինել և զենամարտ լինել և ձիաւորել ու-
սոյց որդւոյն, այլև բռնամարտիկ մրցել,
և ջերմին և ցրտոյն ժուժալ բերել, և ընդ
դեռս բազմայորձանս և սրընթացս 'ի լիւղ

անցանել։ Եւ ասէր եւս Կատոնն, եթէ նստաւ ինքն և մատամբք իւրովք արձանագրեաց պատմութիւնս 'ի տառս խոշորս, զի իւր որդեակն առ ունին հմուտ և տեղեակ վաղնջուց իրաց հայրենեաց լինիցի. և թէ՝ մեծապէս զգուշացեալ էր խօսել բանս գժպատեհ առաջի մանկանն, իբրու որ գլխովին առաջի կացեալ ի՛ցէ նուիրական կուսիցն զոր Վեստեանս կոչեն. և թէ՝ ինքն 'ի միասին ընդ մանկանն չեմուտ երբէք 'ի բաղանիս։ Այլ այս հասարակ թուի սովորոյթ Հռոմայեցւոց. քանզի և փեսայքն նոցա զգուշանային մտանել անդ 'ի միասին ընդ անեռոցն, չերևել մերկ առաջի նոցա. այլ ապա յետ ժամանակաց ուսեալք 'ի Հելլենացւոց մերկանալ, փոխարէն և նոքա ուսուցին Հելլենացւոց առնել զնոյն և ընդ կանանց։

Զայս օրինակ ջան եդեալ Կատոնին՝ կրթանս բարիս տալ զաւակին, և յառաքինութիւն հրահանգել զնա, թէպէտ և 'ի յոժարութեան եռանդանն անտոգիւտ էր մանուկն, և ոգւոյ բարւոյ դիպեալ և քաջամոյն և հլու, այլ քանզի մարմնոքն տկար էր 'ի վաստակս, վայր մի 'ի խստամբերութենէ կենացն թոյլ արար հայրն։ Այլ թէպէտ և այնպէս վտիտ, այր քաջ երևեցաւ նա 'ի զինուորութեան. և մեծապէս արութեամբ մարտ եդեալ կռուեցաւ ընդ Պերսէոսի առ զօրավարութեամբն Պաւղոսի Եմիլիոսի. ուր և հարեալ նորա սուսերին և 'ի քրտնահոծ ձեռացն զեր-

ծեալ 'ի նմանէ, 'ի տագնապ անկեալ պա-
տանին և հանդերձ նիզակակցօքն միւսան-
գամ յարձակեալ 'ի խռան թշնամեացն, և
մեծաւ մրցանօք և բռնութեամբ վանեալ
զնոսչ և զնուրթ՝ բանայր զվայրն, և 'ի զի-
նակոյտ անդր և 'ի թանձրակոյտ դիականց
բարեկամացն և թշնամեաց դատանէր զսու-
սերն. ոյր աղագաւ և Պաւղոս զօրավար
մեծապէս զարմացեալ էր ընդ պատանին:
Եւ նամակ մի ևս նորուն Կատոնի կայ ար-
ձանագրեալ առ որդին, 'ի գովութիւն
յոյժ առեալ զգեղեցիկ ջանան վասն սու-
սերին: Եւ ապա այս պատանի ածէր 'ի
կին զՏերսիա դուստր զԵմիլիոսին և զքոյր
Սկիպիոնի, հարազատութեամբ կապեալ
ընդ տոհմիկ զարմին վասն քաջութեան
անձինն և իւրոյ հօրն: Եւ էլք այս եղեն
գեղեցիկ դաստիարակութեանն Կատոնի
վասն որդւոյն:

Էին Կատոնի և արծաթագինք բազումք
'ի գերւոյ պատերազմին. և առաւել 'ի
մանկահասակաց անտի, որք իբրև զկունդս
կամ զմորուկս՝ դիպողագոյնք ևս իցեն 'ի
մարզս դաստիարակութեան: Իսկ 'ի նոցա-
նէն գնայր և ո՛չ ոք 'ի տուն օտարի, բայց
'ի Կատոնէ առաքեալ կամ 'ի տիկնոջէն.
և հարցեալ անդանօր ծառայն վասն Կա-
տոնի, ո՛չ այլ՝ բայց զանգիտութիւն պա-
տասխանէր: Ալ առ տնին պարտ էր ծա-
ռային կամ 'ի գործ պարապել, կամ 'ի
քուն լինել. և յոյժ սիրէր Կատոն՝ 'ի
քուն տեսեալ զծառայն, իբրու ոչք հե-

զսգոյնք ևս բնաւորեալք իցեն քան զոր-
նեալսն, և յետ վայելից քնոյն՝ յաջողա-
գոյնք ևս իցեն յամենայն սպասարկութիւն։

Բայց յառաջն յաղքատութեան իւ-
րում 'ի զինուորութեանն կատուին չէր
անհամբոյր, և 'ի սեղանի ջցանոյր երբեք
ինչ վասն կերակրոյն. իբրև գժպհի կար-
ծէր կագէլ ընդ ծառային 'ի պատճառս
պորտոյն։ Այլ ապա 'ի մեծութեանն և 'ի
կոչունսն բարեկամացն և իշխանակցացն՝
անդէն յետ ճաշուն ելեալ պատուհաս 'ի
վերայ ածէր փոկով՝ անհոգացելոցն 'ի
սպասարկութեան։ Եւ կամէր նա՝ ծա-
ռայիցն ցանգ 'ի գժտութեան լինել ընդ
միմեանս, քանզի խիթայր և զանգիտէր 'ի
համաշնչութենէն նոցա։ Իսկ 'ի նոցանէ
զինուսակարսն մահու՝ լաւ համարէր յետ
դատակնքոյն տալ սպանանել յանգիման
այլոց ծառայիցն։

Այլ յետ այնորիկ յոյժ հետամուտ
եղեալ 'ի շահատացութիւն, և զերկրագոր-
ծութիւնն՝ քան եթէ շահ՝ զբօսանս առա-
ւել համարեալ, Թեւակոխէր 'ի հասս հաս-
տատունս և աներկեանս. ստացաւ իւր լինս
և աղբերակունս ջերմկաց, վայրս յարմա-
րաւորս Թափչաց, և գետինս արօտաբերս
և անտառաբոյսս. և այնպէս հասս կը-
Թէր առաս 'ի կալուածոց անտի. որոց՝
որպէս սովորեցաւ նոս ասել՝ և ո՛չ Արա-
մազդ ինքնին դրժել կարող էր։ Ապա 'ի
գործ արկանէր նա՝ և վաշխ նաւական
քան զամենայն վաշխ առաւել խոտան,

օրինակ զայս։ Որոց միանգամ տայր 'ի վաշխի՝ կամէր և նոցա առնուլ ընդ իւրեանս յինքիւ չափ նաւակիցս և նաւս, յորս ունէր և զիւր բաժինն. և էր իւր գործակալ Կուինտիոս ազատագրեալն՝ վաճառակից և նաւագնաց ընդ վաշխառուացն. և այսպէս ոչ ողջոյն վտանգէր նա զգոյսն, այլ մասն միայն, կրթել անտի մեծապէս շահ։ Տայր և դրամ ծառայիցն՝ որ շահավաճառն կամէին լինել. և գնոց գնէին նոքա մանկունս և մարդեալք դաստիարակէին դրամովք Կատոնի, և 'ի գլուխս տարեալն առեալ վաճառէին. յորոց և գնէր իւր ինքնին Կատոն՝ որչափ գնոց իսկն դրէին նոքա՝ 'ի բաց զիւրն հանեալ դրամ։ Յորդոր 'ի նեղքս տայր և որդւոյն շահել յայնպիսեաց շահից. և ասէր ևս՝ եթէ նուազ առնել զգոյս անձին՝ ոչ մարդոյ գործ է, այլ այրի կնոջ։ Ա՛ռ այս՝ ազդողագոյն ևս է և այլ բան նորա՝ զոր ժողովեաց ասել, եթէ՝ Այր սքանչելի է և աստուածայնոյն արժանի փառաց, որում 'ի մեռանելն՝ մեծ է հաշիւ տացելոցն ընչից՝ քան զժառանգութեանն։

Իսկ իբրև յաւելոյթ ծերութեանն յեցեալ իսկ էր Կատոն, եկին հասին 'ի Հռոմ քաղաք հրեշտակք յԱթենայ Կարնէադէս Ակադեմեան և Դիոգինէս իմաստասէր Ստոյիկեան, ազատ առնել զժողովուրդ զԱթենացւոց յանպարտ տուգանաց հինգ հարիւր քանքարացն՝ 'ի վճռոյ անտի Սիկիոնացւոց ըստ դատախազու-

թեանն Ովրոպեանց։ Յայնժամ պատա-
նեալք Հռովմայ բանասէրք մոռավարժք խրա-
նէին յայց Եղանել հրեշտակացն, և գե-
դերեալք ընդ նոսա և յակՃիռս կացեալք
ունկն դնէին նոցա։ Առաւել իմն Կար-
նէադէս յայնժամ շնորհաշուք բարբա-
ռոիկն ազդոյ յոյժ և արդոյ և պատուա-
կան, իբրև այնպիսի ունկնդիրս մեծարոյս
և քաջամոյնս շուրջ զիւրև տեսանէր,
շնչեաց ապա Եղից իբրև հողմ՝ ողջոյն զքա-
ղաքն 'ի դղրդիւն և 'ի համբաւ մեծ. զի և
առհասարակ 'ի կողմանց կողմանց շշնջիւն
լսելի էղև, եթէ Հելլենացի ոմն այր է-
կեալ հասեալ կայ աւադ այր սքանչելի և
չնաշխարհիկ. որ առհասարակ ամբքեալ և
նկուն զամենայնն արարեալ՝ սէր ուժգնա-
կի ազդէր 'ի պատանիսն, 'ի բաց զամենայն
դրդանան եղեալ և զսփոփութիւնս՝ իբ-
րու 'ի գեղեցիկ մոլութենէ բերիլ յիմաս-
տասիրութիւն անդր։ Եւ ապա առհասա-
րակ Հռոմայեցիք խնդացեալք յոյժ էին,
զի խրատանց պատանեակք 'ի մարդս պա-
րապեալք Հելլենականին՝ կենակից ա-
ռանցն լինէին սքանչելեաց։ Բայց Կատոն
անգամին՝ յորմէ այն տենչ վարժիցն ըն-
թանայր ընդ քաղաքն, դժկամակս բերէր՝
զանդիտեալ եթէ յանկարծ պատանիք 'ի
նոյն զիւրեանց պատուասիրութենն շըր-
ջեալք՝ սկրեսցեն զփառս զբանիցն՝ քան
զարդեանցն և զմարտին նահատակութեց։
Իսկ իբրև համբաւ խնաստասիրացն և ևս ա-
ձեաց, և զի՝ և զառաջին ՃառԱ բանից նո-

ցա ինքնին Գայիոս Ավելիոս ականաւոր 'ի Սինկղիտոսին առ և Թարգմանեաց յիւրոց ջանից և յայլոցն ինդրոյ, խորհուրդ խորհեցաւ այնուհետև Կատոն՝ քաջավայելուչս ինն 'ի բաց զիմաստասէրսն արձակել 'ի քաղաքէն։ Ապա յանդիման Սինկղիտոսին ելեալ դանդատէր ընդ աւագանին, զի այնչափ հարուստ ժամանակ անվնաս հրեշտակութեամբ թողին կալ անդէն ապրանցն. որք՝ որք քաջ իսկ բաւական են կամագիւտ յամենայնին լինել համոզակեր բանիւքն. և ասէր եւ՝ փութապէս խորհել սահմանել վասն հրեշտակութեանն, զի իմաստասէրքդ դարձ յիւրեանց արարեալ վարժարանն՝ անդանօր զմանկտին վարժեսցեն զՀելլենացւոց, և Հռոմայեցւոց պատանիքդ դարձցին անդրէն 'ի հնազանդութիւն օրինաց և աւագանւոյն։ Զայս ինչ գործեաց Կատոն ոչ չարակամութիւն ինչ ընդդէմ Կարնէադեայ, որպէս կարծեն ոմանք, այլ զի ինքնին ներհակակիր իմաստասիրականին էր, և բարձրայօնս ընդվայր հարկանէր միանգամայն և զՄուսայն և զվարժս Հելլենականին։ Եւ ասէր Կատոն՝ եթէ և ինքնին Սոկրատէս շաղակրատ և յանդուգն՝ նկրտեալ իսկ էր՝ ըստ կարին՝ բռնաւոր ընդդէմ ամբաստնալ հայրենեացն, տապալեալ զվաղնջուց սովորոյթսն և յանդուգնեալ զքաղաքացիսն 'ի կարծիս ինն հակառակ օրինացն։ Ա՛ռ այս՝ և զԽոկրատեայ վարժարանն հենդնեալ, ասէր՝ եթէ մանկունք ուսանողք առ նմա

ալևորեալք ծերանան. զի գնասցեն ապա վարել զարուեստն և փաստաբանել անդանօր 'ի գժոխս ներքինս։ Եւ առ 'ի յաջաց հանել որդւոյն զհելլեն դպրութիւն՝ ձայն բառնայր առաւել քան զծերունւոյ առն՝ ձայն պատգամաւոր և նախագուշակ, եթէ կորուսցեն Հռոմայեցիք զքաղաքն 'ի ներկրթիլն իւրեանց հելլեն դպրութեամբք։ Այլ սակայն ձախողակի գուշակութիւնդ նանրացաւ, յորժամ քաղաքն 'ի ծագ վերջին բարձրացաւ, և թարթափեալ ևս էր առհասարակ 'ի վարժս և 'ի դպրութիւնս հելլենացւոց։

Բայց Կատոնն ոչ հելլենացի միայն ի մաստասիրացն թշնամի ընդդէմ կքրեցաւ, այլ 'ի կասկածի էր նա՝ և վասն արանցն բժշկաց որ 'ի Հռոմ։ Եւ քանզի լուեալ ևս էր՝ զոր Հիպպոկրատէսն ասաց առ թագաւորն՝ 'ի հրաւիրել նորա և քանքարս ևս բազում 'ի ներքս ընծայել նմա։ Իսկ Հիպպոկրատէս տայր պատասխանի, եթէ երբէք մի լիցի նմա ապաս բարբարոսացն հարկանել՝ որ թշնամիքն են հելլենացւոց. ապա ասէր Կատոնն՝ եթէ սա այս էր երդումն հասարակ և բժշկացն ամենեցուն. և յորդորէր զնոսա որդին՝ անձնապահ լինել յամենեցուն նոցա. և ասէր՝ ինքնին իսկ գրեալ խրատս և մարգս՝ բաւական 'ի բուժել զհիւանդս տանն, և կարգ և սահման դնել կենաց նոցա. երբէք ոչ պահս օրինադրելով նոցա, այլ բանչարաք բուծանելով զնոսա և 'ի միս բադից և հաւփալաց և

նապաստակաց. զի են իսկ այդոքիկ փոք-
րոգիք և հիւանդաց շահաւորք. բայց թէ՝
յերաշտովք ապա յերաշտեսցեն այնոքիկ՝
որք շատն ուտիցեն 'ի նոցանէ։ Եւ ապա օ-
րինակ զայս բժշկութեամբ և դարմանով
ասէր նա պահեալ ցանգ քաջառողջ զիւր
անձն և զիւրսն առհասարակ։ Սակայն և
առ այս ոչինչ արդեօք անստգիւտ էցէ
Կատոնն 'ի մեռանել կնոջն նորա և որդ-
ւոյն։ Իսկ ինքն Կատոնն էկաց քաջառողջ՝
յոյժ հարուստ ժամանակ, քանզի և առոյգ
և կորովի էր մարմնով. զի և 'ի ծերութե
պարարտութեան մտանէր նա առ կին իւր.
և ած ևս նա 'ի կին զօրիորդ՝ անձահ հասա-
կին. և էր պատճառք այսպիսի ինչ։

Յետ մահու կնոջն, ամուսնացուցանէր
նա զորդին իւր ընդ Պաւղոսի դստերն՝ քեռ
Սկիպիոնի. իսկ ինքն մնացեալ անկին՝ մը-
տանէր առ աղախին իւր աղջիկ, որ 'ի ծա-
ծուկ գնայր առ նա. այլ զի 'ի միում անդ
յանձուկ տանն բնակէր և հարսնն՝ 'ի վեր
ելանէր բանն. և անցեալ երբեմն այն ա-
ղախին յանդգնագոյնս ի մն և պերճս 'ի
հանդիպոյ նոցա՝ իբրու որ 'ի սենեակն էր-
թայ Կատոնի, անդանօր պատանին ասաց
և ոչինչ, սակայն խեթիւ հայեցաւ 'ի նա և
դարձաւ 'ի միւս կողմն. իրազգած այսմ
եղեալ ծերունւոյն և 'ի վերայ կացեալ
դժկամակութեան փեսայի և հարսին, ոչ
սրտնեցաւ և ոչինչ կալաւ դանդատ. այլ
ինքեալ՝ որպէս սովորն էր՝ հանդերձ բարե-
կամքն 'ի հրապարակ անդր, և 'ի ձայն

բարձր կարդացեալ զՍալոմէիոս զոմն՝ որ դպիր կացեալ իսկ էր նորա և մերձ հեռանէր ընդ նմա, հարցանէր՝ եթէ զդուստրն առն տուեալ ի՞նչ է. նա պատասխանի տուեալ՝ եթէ ո՛չ, մինչև հարցեալ զայն 'ի Կատոնէ, ասէ Կատոն. "Քա՛ջէ. իմ քեզ աւագիկ 'ի դէպ դառեալ է փեսայ, թէ ո՛չ՝ օ՛ն և օ՛ն Աբրամազդ՝ անհաճոյասցի քեզ վասն հասակին. քանզի անատգիւտ ամենևին է այրն, բայց յոյժ ծեր է": Իբրև Սալոմէիոս ասէր՝ 'ի նա ինքն հաւատալ զբանն, խնամ ունել կուսին և տալ զնա առն և հովանի լինել կուսին՝ որպէս և գիտէ, զի և ինքն կոյսն նորա խնամոցն պէտս ունի. ապա Կատոնէ ոչինչ յամեաց, և խնդրէր 'ի նմանէ զկոյսն վասն իւր: Յապուշ կրթեցաւ Սալոմէիոս՝ տեսեալ զԿատոնէ անցեալ զաւուրքք ամուսնութեանն. առ այս՝ և զանձին վիճակ յոյժ օտար 'ի հիւպատեան և 'ի յաղթանակող որերոյն: Սակայն փութաջան 'ի բանն տեսեալ զԿատոնէ՝ մոտդիւրագոյնս յանձն առնոյր. և անդէն իջեալ 'ի հրապարակն՝ կռեցին դաշն:

Իբրև հարսանեացն հանդէս 'ի պատրաստի էր, որդին Կատոնէի առեալ զազգականսն՝ ջղքաւ հարցանել ցհայրն, եթէ երբէք խէթ ինչ կամ վնաս հասուցեալ իցէ հօրն, զի մօրու ածէ նմա: Իսկ ընդ հարցումն ձայն բարձեալ Կատոնէի՝ ասէր. "Ա՛ղէ դու ո՛վ որդեակ, ուշիմս խոստաց. Ամենայնքն առ 'ի քէն՝ սիրելիք ինձ են. և չիք իմ ինչ դանդաստ զքէն երբէք.

բայց ես որդիս բազմագոյն ևս այլ, և քա-
ղաքացիս ըղձամ թողուլ հայրենեաց՝ իբ-
րու զքեզդ "։ Այլ պատմեն՝ զբան զայս
շատ ինչ կանուխ ասացեալ Պիսիտրատո-
սի բռնաւորի Աթենացւոց. յորժամ և
էին իսկ նորա որդիք յարբունս հասեալք,
և անց նա յերկրորդ հարսանիսն ընդ Ար-
գոսուհւոյն Տիմոնիսասայ, յորմէ և ծնան
նմա՝ որպէս ասեն՝ Յովփոնդէս և Թես-
սաղոս։

Իսկ Կատոնի 'ի հարսանեաց աստի
ծնաւ որդի, որում և անուն առ 'ի մօրէն
եդ նմա Սալոնիոս։ Այլ որդի նորա երէց
մեռաւ 'ի զօրավարութեան. և յաճախ
նա 'ի գիրս իւր յիշատակ առնէ զորդւոյն՝
իբրու այր քաջ և լաւ։ Սակայն և հեղա-
բար՝ որպէս ասեն՝ տարաւ նա ցաւոցն իբ-
րև արդարև իմաստասէր, և ոչ վասն այնո-
րիկ լուծաւ ինչ նա 'ի սպասաւորութենէ
քաղաքին։ Քանզի և ոչ՝ որպէս յետ նորա
Լեւկիոս Լուկուղղոս և Մետեղղոս Պիոս,
պարտասեցաւ ինչ նա առ 'ի ծերութենէն՝
ձեռնամուխ 'ի գործս լինել. եդ 'ի մտի՝
եթէ գործ իւր այն է։ Եւ ոչ դարձեալ՝
որպէս յառաջն Սկիպիոնն Աֆրիկանոս,
այն՝ որ 'ի նախանձել ընդ փառս իւր՝ ու-
ծացեալ նա 'ի ժողովրդոցն և զքաղաքա-
վարութիւն փոխեալ զկենացն, յանգոր-
ծութեան անցուցանէր զնշխարեալ ա-
ւուրսն. այլ իբրու զայրն՝ որ զԴիոնեսիոսն
խելամուտ արար՝ եթէ գեղեցիկ յոյժ թա-
ղումն է բռնաւորութիւնն, այսպէս և կա-

տուն գործ ամենագեղեցիկ համարէր անցուցանել զծերութիւնն 'ի քաղաքականին. և ապա 'ի պարապեալ ժամանն և 'ի պքօսանան՝ սփոփութիւն էր նմա արձանագրութիւն մատենից և մշակութիւն երկրի։ Եւ գրեաց նա բազմագիմ ճառս, և պատմութիւնս։ Իսկ 'ի մշակութիւն երկրի պարապեցաւ՝ մինչդեռ տակաւին պատանի էր՝ առ 'ի պէտս. քանզի և ասէր իսկ նա՝ կրկին միայն ունել իւր շահավաճառութիւնս, զմշակութիւն և զտնտեսութիւն. այլ յայնժամ 'ի ծերութեանն դեգերանս և մոաց սփոփութիւն էին նմա իրք ագարակին։ Եւ արձանագրեաց ևս նա գիրս զՄշակականին. յորում և վասն գործելոյ պլակինդիս և վասն պահպանութեան մրգաց, ճշգրիտ սպատուասիրեաց յամենայնի և ոճով։

Իսկ էր նորա ընթրիք 'ի գեղջն առաւել մեծահաց, ցանդ հրաւիրեալ զմերձակայսն գեղջն և զգաւառականսն, և խնդամտեալ դեգերէր ընդ նոսա. զի և քաղաքավարութեամբն հեշտ և բաղձալի էր ոչ հասակակցացն միայն, այլ և պատանեացն գլխովին. զի և 'ի բազում ինչ իրս՝ այր քաջափորձ էր, և 'ի գործս բազումս նահատակեալ և 'ի բանս բազումս արժանալուրս։ Եւ այնպէս լիմն համարէր նա զսեղան կոչնոցն՝ իբրու բարեկամութեան առիթ. և զոյգք անդանօր՝ դրուատիք էին արանց լաւաց և առաքինի քաղաքացեաց, և երբէք յիշատակ չլինէր յոռեացն և անպիտանեացն.

զի և թոյլ չտայր երբէք Կատոնն յիւր կո-
չունն ոչ բամբասանաց ինչ և ոչ դովու-
թեանց ինչ վասն նոցա։

Բայց նահատակութիւն նորա վերջին
յառաջնորդութեան քաղաքին՝ թուի թէ՝
քանդումն եկաց Կարքեդոնին. և 'ի գլուխ
զայն տարաւ Սկիպիոն կրսերն, սակայն
ըստ քաջ խորհրդոյն և խելամտութեանն
Կատոնի։ Եւ դրդեցան 'ի նոյն մարտ
յայսպիսի ինչ պատճառաց։ Առաքեալ
Կատոնն 'ի սինկղիտոսէն երթալ իմանալ,
զի՞նչ պատճառք մարտին և գժտութեանն
իցեն ընդ Կարքեդոնացիս և ընդ Մասսա-
նասսա Նումիդացի. քանզի Մասսանասսա
ցանդ բարեկամ կացեալ Հռոմայեցւոց,
բայց և Կարքեդոնացիք դաշնաւորք էին
նոցա՝ յետ հարուածոյն իւրեանց 'ի Սկի-
պիոնէ, որ զտէրութիւնն հատեալ էր 'ի
նոցանէ և 'ի ծանր հարկի կացուցեալ էր
զնոսա։ Ապա Կատոնի յակն զԿարքեդոն
արկեալ և զնեալ՝ ոչ իբրու վատեալ ինչ
յուժոյ, որպէս կարծէին Հռոմայեցիք,
այլ բարգաւաճ և բազմաժողով յերիտա-
սարդաց, լի և բազմահարուստ մեծութեբ,
և զինուք դունակ դունակ պատարուն և
մարտի հանդերձանօք, որով և ոչ խոնար-
հագոյն ինչ վասն իւր ունէր զկարծիսն։
Խելամուտ լինէր Կատոնն՝ զի ոչինչ յաջո-
ղեսցին Հռոմայեցիք համոզել զերս զՆո-
մադացւոցն և զՄասսանասսայն. այլ թէ
ոչ գօտէպինդք վաղվաղակի հասեալ վա-
նեսցեն նոքա զԿարքեդոն զվաղնջուց զայն

զԹշնամին և զծանրացասումն ընդդէմ նոցա՝ որ մեծապէս բարգաւաճեալ էր յայնժամ, անշուշտ դարձեալ միւսանգամ 'ի նոյն վտանգ պաշարեսցին Հռոմայեցիք իբրու զառաջինն։

Ապա փութապէս դարձ արարեալ Կատոնին՝ իրազեկ զՍինկղիտոսն առնէր, եԹէ յառաջին հարուածոցն և յաղէտիցն Կարդեգոնացիք նուազեալ ոչ այնչափ 'ի զօրութենէ՝ քան Թէ յանմտութենէ իւրեանց, չէն ինչ նոքա վատեալք. նա փորձք և հմուտք լեալ էն 'ի կռիւ մարտի. և ասէր ևս՝ մարտին նոցա ընդ Ղոմադացիսն նախամարտութիւն լինել հանդերձելոյ կռուոյն ընդդէմ Հռոմայեցւոց. իսկ հաշտութեան դաշինքն՝ անուանք մերկ ի ցեն դեգերանաց նոցա 'ի կռիւն՝ ակնկալեալք դէպ ժամանակին։ Իբրև զայս բանս ասաց Կատոնն, պատմեն՝ եԹէ անդէն ԹօԹափեալ զպատմուճան իւր 'ի մէջ անդր Սինկղիտոսին՝ տայր 'ի վայր անկանել Թըզոցն՝ զոր 'ի Լիբիոյ բերեալ իսկ էր. և տեսեալ՝ զի ընդ պարարտութիւն պտղոցն և ընդ գեղն առհասարակ հիացաւ ակումբն՝ յաւել և ասէ. գաւառ պտղոցդ մրգաբեր՝ 'ի բացեայ կայ աւադիկ 'ի Հռովմայ աւուրց երից նաւագնացութեամբ։ Այլ աղդողագոյն ևս առ այս գործեալ զբանն՝ և յամենայն իսկ իրս տուեալ զիւր խորհուրդն, ցանգ կրկնէր և երեքկնէր նա՝ ըզհետ բերեալ զայս ինչ. "Եւ ինձ Թուի՝ եԹէ չէ պարտ կալ Կարքեդոնի"։ Բայց և

անդուստ Պոպղիոս Սկիպիոն՝ անուանեալն Նասիկաս, յանդէր և նա ցանդ զիւր խորհուրդն յայս բարբառ. «Եւ ինձ Թուի՝ եթէ պարտ է կալ Կարքեդոնի»։ Այլ սորա՝ որպէս հաւանեալս եմ՝ այն կարծիք էին, քանզի տեսեալ զժողովուրդն առ գեղեցիկ բախտին խրոխտս և բարձրապարանոցս և վայրիկ մի ևս Սինկղիտոսին անսասան, և մեծապէս զօրութեամբ՝ բուռն ըստ քմաց ձգէր տանէր ողջոյն զքաղաքն, ինդրէր Նասիկաս՝ զի ահ երկիւղին Կարքեդոնացւոց անկեալ իբրու սանձ գեղեցիկ՝ զսեռութիւն կոծեսցէ խուժանին. զի և ոյժ զօրութեան նոցա ոչ 'ի վանել ըզՀռոմայեցիս՝ այլ միայն ահիւ չափ ի՝ցէ և արհամարհելիք ի՝ցեն։ Իսկ ներհակաբար՝ Թուէր ինն այնպէս և Կատոնի, եթէ քանզի բանդագուշեալք են ժողովուրդք և հաստահարուստք եղեալ՝ գործեն զանպատեհս, վտանգ անշուշտ ի՝ցէ Թողուլ այնպէս կանգուն զքաղաքն՝ որ միշտ բարգաւաճ գտաւ, և յայնժամ առաւել ևս զգօնացեալ կայր՝ յիւրոց անտի աղէտից. և ոչ ազատ գլխովին առնել զնոսա յարտաքին յահէ տէրութեան՝ պատճառս տալով նոցա և խթան 'ի յանցաւորութիւնս ընտանիս։ Եւ ապա զայս օրինակ՝ ասէն՝ Կատոնի տալ ձեռնամուխ լինել յերրորդն յայն և 'ի վերջին մարտ Կարքեդոնեան։

Այլ 'ի սկսանել մարտին մեռանէր Կատոնն, նախագուշակ զառնէն լինելով ո-

րում հասանէր յամբոկ գործոյն ժամանել. որ էր յայնժամ տակաւին պատանի և 'ի կարգ զինուորականին հազարապետ լեալ՝ նահատակէր 'ի գործ հանձարոյ և 'ի մրցանս քաջութեան, որոյ և համբաւն 'ի Հռոմ մինչև յունկն հասեալ Կատոնի, պատմեն ասել նմա յայնժամ ըզտողն զայն. "Դա՛ հանձարեղ, իսկ այլք ստուերք շարժունք": Եւ ապա զնախաձայնութիւն իւր զայն վաղվաղակի արգեամբք ճշգրտէր Սկիպիոն:

Եւ թողոյր Կատոնն զարմին իւրոյ զաւակ յերկրորդ կնոջէն՝ Սալոնիոս անուն՝ որպէս ասացաք, և թոռն մի ևս յառաջին որդւոյն՝ որ մեռաւ: Եւ վախճանեալ Սալոնիոս 'ի զօրավարութեան, թողոյր որդի Մարկոս անուն՝ որ եկաց հիւպատոս. նա էր հաւ Կատոնի խմաստասիրի՝ այն որ առաքինութեամբ և փառօք գերազանցեալ գտաւ զամենեքումբք՝ որ առ իւրովքն ժամանակաւք:

ԶՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ԱՐԻՍՏԻԴԵԱՅ
ԵՒ
ԿԱՏՈՎՆԻ ՄԵԾԻ

Լ՚Ի արդ զլիշատակաց արժանիսն արձանագրեալ մեր վասն երկոցուն դոցա, եթէ զամենայնն զնոցայն 'ի կշիռ առցէ ոք միանգամայն ընդ ամենայնին, ոչինչ այնպէս տարբերեալ գտցէ արդեօք՝ 'ի պատճառս շատ ինչ և մեծամեծ նմանութեանց։ Ապա եթէ ըստ մասին ուրոյն՝ իբրու քերթուած մի կամ նկար մի, տեսցէ՝ զի բարգաւաճեալ դոցա յիրս քաղաքին և փառք նոցա և համբաւ, քան յաղգատոհմէն՝ առաւել յանձանցն առաքինութենէն ելցէ և 'ի քաջութենէն։ Այս հասարակ է երկոցուն նոցա։

Սակայն Արիստիդէս ականաւոր եղև՝ յորժամ չև էին մեծացեալ Աթենացիք. և յառաջադէմ գտաւ նա 'ի զօրավարս և

'ի ժողովրդապետս, յորժամ ընչիւք չա-
փաւորք էին և հաւասարագոյք. քանզի
առաջին կարգին հան՝ էր յայնժամ գը-
րուաց հինգհարիւրոց. իսկ երկրորդին՝
ասպետացն, երից հարիւրոց. իսկ երրոր-
դին՝ լծակցելոցն, երկերիւր գրուաց:

Իսկ Կատոն 'ի դուշնաբերայ կալուա-
ծոյն իւրմէ և 'ի շինական կենացն էկեալ՝
էջ ելբրու յահագին ինն ծով 'ի Հռոմ քա-
ղաք, յորժամ ոչ Կուրիոսք ոմանք առաջ-
նորդք կային քաղաքին կամ Փաբրիկիոսք
կամ Ոստիղիոսք. և ոչ յանձն էա առնոյր
քաղաքն՝ զի աղքատք և մշակք ամբարձ-
ցին 'ի ցուկանաւս իւր, կամ թէ յարօրաց
և 'ի փայտատից անցեալ՝ կացցեն իւր ա-
ռաջնորդք և զօրավարք. այլ 'ի քաջազար-
մուելթիւնն նա դէտակն ունէր և յընչաւէ-
տութիւն և 'ի պարգևս և 'ի հետամտու-
թիւնս, և ամբարտաւանութեամբ և զօ-
րութեամբ պերճացեալ էր, և արհամար-
հատ էա նոցա՝ որ 'ի խնդիր ելանէին ա-
ւագութեան: Եւ քանզի Թեմիստոկղէս
ոչ տոհմիկ ոք էր և ոչ ընչաւէտ (զի ասեն
'ի սկզբանն գոյաւոր լինել նմա երից տա-
ղանդաց, կամ թէ առաւել հնգից). ուա-
ռի և չէ ընդ մի համար՝ ունել անձին նա-
խանձաւոր զԹեմիստոկղէս, և մրցել և ել
և ելս առնել ընդ Սկիպիոնից Ափրիկանո-
սից և ընդ Սերվիլիոսից Գալբայից և ընդ
Կուինտոսից Փլամինիոսից, անզօրավիդն և
անթիկունք՝ միայն զհամարձակաձայն լե-
զուն ունելով և զարդարախօսն:

Դարձեալ առ այս՝ 'ի Մարաթոն և 'ի Պղատէա Արիստիդէս տասներորդն էր 'ի զօրավարս. այլ Կատոնն զերկրորդ նուագն ինքն կարդեցաւ հիւպատոս՝ 'ի հետամտել բազմաց. դարձեալ և զերկրորդ նուագն ինքն եկաց Համարակալ՝ թէպէտ և արք աւագք և ականաւորք եօթն թուով թեկն ածէին զաւագութեն։

Առ այս՝ և Արիստիդէս յամենայն իսկ 'ի նահատակութիւնսն չեկաց բարձերէց. այլ Միլտիադէս՝ 'ի Մարաթոն. և Թեմիստոկղէս՝ 'ի Սաղամինէ. իսկ 'ի Պղատէա՝ որպէս Հերոդոտոսն ասէ՝ Պաւսանիաս տարաւ զգեղեցիկ յաղթութիւնն. նա՝ և յերկրորդ բարձին մրցին ընդ Արիստիդեայ Սովփանէսք և Ամինէսք և Կալլիմաքոսք և Կինեգիրոսք, որք արուբ քաջութեբ նահատակեցան անդանօր։ Իսկ Կատոնն 'ի մարտին Իբերեան հիւպատոս գոլով՝ առաջին եկաց և զամենեքումբք գերազանցեաց 'ի կորովութեան ձեռին և 'ի խորհրդեան. այլ և 'ի Թերմոպիւղէ ինքն հազարապետ և այլ ոք հիւպատոս, մեծապէս փառաք ինքնին տարաւ զյաղթութիւնն՝ բացեալ առաջի հռոմայեցւոց հուն մեծ ընդդէմ Անտիոքոսի. և պարագայութեամբն ածեալ մարտ 'ի Թիկանց կուսէ արքային՝ որ յառաջոյ միայն զգուշացեալ կայր։ Եւ նահատակութիւն այս Կատոնի 'ի բաց յԵլլադայ վանեաց զԱսիա. և Սկիպիոնի հորդեաց Ճանապարհ յԱսիա։

Բայց և երկոքին սոքա անպարտելիք

կացին 'ի մարտի. սակայն 'ի քաղաքակա-
նին Արիստիդէս նկուն գտաւ 'ի Թե-
միստոկղէայ, և վտարանդի ևս չդքաւ խե-
ցեկոյտ վճռուին։ Իսկ Կատոնն գոգցեաւ
զամենայն աւագս և զճոխս Հռովմայ ու-
նելով ընդդէմ իւր ախոյեանս, իբրև ար-
դարև ըմբիշ քաջ մինչև յալևոյթն զդէմ
կալեալ՝ ցանգ անդրդուելի ճնաց. և բա-
զում յոյժ անգամ յանդիմանեալ ժողո-
վրդեան՝ իբրև դատախազ և իբրև դատա-
խազեալ, տալ ետ դատակնիք 'ի վերայ
բազմաց, ինքն անճնապուր յամենայն դա-
տակնքոյ. ոչ այլ ունելով ապաստանա-
րան կամ գործի ազդողական, բայց զճար-
տարաբանութիւնն. որպէս զի և քան բազ-
դին և քան Քաջի ումեմն՝ առաւել ևս
ճարտար լեզուին գրեսցէ ոք՝ զի ինչ մի
յանպատշաճից երբէք նա ոչ կրեաց։ Քան-
զի և նմին իսկ Արիստոտէլի իմաստասիրի՝
բաց յայլոց քաջալաւութեանցն, զճշգրիտ
համոզողականն՝ տայ 'ի մեծապէս գովու-
թիւն Անտիպատրոս՝ գրեալ յետ մահուն
նորա։

Բայց և այս ինչ խոստովանեալ է առ
հասարակ՝ եթէ առաքինութիւն չեք մար-
դոյ առաւել արդոյ քան զքաղաքակա-
նին. և ոչ գուշնաքեայ մասն զնորա՝ զտրն-
տեսականին ունին բազումք։ Քանզի և
քաղաքն գլխովին համախմբութիւն գոլով
տանց, 'ի գեղեցիկ կարգաց առն առն քա-
ղաքայնոյ՝ միանգամայն և բոլորն զօրա-
ցեալ գտանի։ Ուստի և Լիւկուրգոս տա-

բագիր զոսկին և զարծաթն հանելով 'ի Սպարտիոյ, և 'ի տեղին դրամս փոխանակելով երկաթի եղծեալ 'ի հուր, ոչ եթէ 'ի տնտեսականէն զքաղաքացիսն յետս ընկրկէր, այլ զի զդրդանսն 'ի բաց բարձեալ, և զի այսպէս ասել՝ զբնաւ իսկ զաղտ զընչաւէտութեանն, և առհասարակ զամենեսեան լիացուցեալ յօգտակարն և 'ի կարևորսն, քաջախորհուրդ ևս դտաւ քան զամենայն օրինադիրս. սիրեաց մանաւանդ ունել քաղաքացի չքաւոր և անհանդերձ և աղքատ, քան ընչաւէտ զոք ունել և գողոզ, և երկնչել։ Արդ թուի թէ Կատոնն ոչինչ պակաս քան 'ի հասարակացն՝ քաջացաւ յառանին իրս. բարգաւաճ՝ զիւր գոյսն առնելով, և վարժապետ ևս այլոց կացեալ 'ի տնտեսականին և 'ի մշակականին. զորոց և ծաղկաքաղ ամբաւ զպիտանեացն՝ առեալ կուտեաց յիւր մատեանսն։

Իսկ Արիստիդէս աղքատութեամբն՝ ստգիւտ արդեօք զարդարութեամբն արկանէր. և կարծեցուցանէր ինն զնա առաքինութիւն քանդիչ տանց, անընչութեան պատճառս, և ամենեցուն շահաբեր՝ բայց յունողացն զնա։ Սակայն Հեսիոդոս շատ ինչ արձանագրեալ խրատել զմեզ՝ միանգամայն և 'ի տնտեսութիւն և յարդարութիւն, և խոտեալ այպանէ զվատութիւնն՝ իբրև աղբիւր անիրաւութեան։ Քաջիկ և ինքնին Հոմերոս քերթեաց օրինակ զայս 2.

Ա՛յլ ինձ երբէք չէր սիրելի
Գործ և վաստակ 'ի ձեռին,
Ո՛չ տանց խընամ՝ յորմէ շահեալ
Զաւակք արդոյք բուծանին։
Ա՛յլ փարելիք ցանգ ինձ եղեն
Նաւք քաջաթիւք հաստատուր,
Խոշիւնք մարտից ահրեբթևեան
Նետք և սրլաք սայրատուր։

Խրոու արդարև զայնոսիկ՝ որք անհոգաց-
ցեալքն իցեն յառանինան, և որք զպարէնս
պատրաստեսցեն յանիրաւութենէ։

Քանզի և չէ իսկ արդեօք վայելուչ, է-
թէ զոր օրինակ ձէթ՝ ըստ բժշկացն՝ ար-
տաքնոյն մարմնոյ օգտակար, և նեղքնոյն
ճնաստակար, սապէս և արդարն՝ այլոցն
միայն պիտանի իցէ, իսկ իւրում անձինն
և իւրոյն անպիտան։ Ուստի և 'ի մասինդ՝
թուի թէ՝ թերացեալ իցէ քաղաքականն
Արիստիդեայ. բայց զի (որպէս ասեն բաղ-
մագոյնք) փոյթ եղև նմա թողուլ ինչ զկնի
յոժիտ դատերաց, և 'ի թաղուումն անձինն։
Վասն որոյ և Կատոնի զարմն մինչև յազգ
ջորրորդ ընծայեցոյց Հռովմայ և հիւպա-
տոսս և զօրավարս, քանզի և նորա կալան
թողուցեալ և թողնեալք աւագութիւնս
մեծամեծս։ Իսկ վերջին չքաւորութիւնն
Արիստիդեայ՝ թէպէտ և ինքն նախապա-
տիւ 'ի Հելլենացիս, զկէսս 'ի զարմէն ած
ձգեաց 'ի պնակս իմն սուտակասպաս ձեռ-
նածուաց. և զկէսս դարձեալ մուրիկ կա-
ցոյց կարօտեալ դանձուն դիմոսական. և

քաջնափայլս ոչ յարդարեաց զնոսա և այնպիսւոյ արժանիս ծնողն։

Ա՛յլ վասն այսոցիկ 'ի պայքար ոք թե-բևս մոցէ։ Քանզի ինքն ըստ ինքեան աղ-քատութիւնն խոտան չէ. բայց թէ՝ ծնունդ գոլով դատարկութեան և անժուժկալու-թեան և դրդանաց և անմտութեան։ Իսկ յորժամ յայր հանձարեղ օթադայեալ ելցէ և 'ի վաստակասէր և յարդար և արի, և որ առաքինութեամբ զարդարեալ ելցէ յառաջնորդութեան քաղաքին, մեծանձ-նութեան և մեծախոհութեան նշանակ է։ Քանզի և չէ իսկ այր վատախորհուրդ բա-ւական 'ի նահատակութիւնս մեծամեծս. և ո՛չ դարձեալ բազմաց կարօտելոց օգնել կարող է՝ որ բաղում ինչ իրաց կարօտ ի-ցէ։ Եւ քաջալաւութիւն առաջնորդի քաղաքին՝ ո՛չ յընչաւէտութեանն է, այլ 'ի գոհութեանն և յինքնաբաւութեանն. ուստի և աւելախնդիր չլինելով երբէք զմիտսն 'ի բաց ո՛չ քեցէ 'ի քաղաքէն։ Եւ քանզի աստուած ինքնին գլխովին անկա-րօտ է. ապա և մարդ՝ որ սակաւապէտն ելցէ, ամենակատար է և աստուածայնոյն մեծապէս հաղորդ։ Քանզի զորօրինակ մարմին բարեկազմ և քաջառողջ՝ աւելոր-դաց պէտս չունի և ճշգրտութեան հան-դերձի և կերակրոյ. սա՛պէս և կեանք և գերդաստան քաջառոյգ՝ սովորականաբար շատացեալ է և դուշնաքէիւք։ Ապա պարտ և արժան է շատանալ ըստ պիտոյիցն. իսկ որ ինչս մթերեալ կուտէ և դուշնաքէիւք

վալի 'ի պէտսն, չէ՞ նա գոհ և ինքնաբաւ. այլ՝ թէ պէտս չունի այնոցիկ և չցանկայ, ունայնութիւն է մթերելն. ապա եթէ պէտս ունի և չվարէ զայն առ ագահութեանն, թշուառական է:

Ա՛յլ ինձ մոռադիւրագոյնս էր հարցանել Կատուլլի, եթէ արդարև առ 'ի պէտս գոլով ընչաւէտութիւնն և առ 'ի ծախս, առ ի՞նչ դա պարծի կուտեալ մթերս ամբաւ, յորժամ շատ էին նմա չափաւոր ծախքն: Եւ եթէ գեղեցիկ յոյժ է՝ որպէս և է իսկ՝ զսովորականն առնուլ հաց, և զնոյն ըմպել գինի զմշակացն և զծառայիցն, և ոչ ինգրել ոչ հանդերձ ծիրանի և ոչ յարկ երևելի և բռեալ, ապա ուրեմն ոչ ինչ թերացան 'ի պատշաճականն ոչ Արիստիդէս և ոչ Եպամինոնդաս և ոչ Մարիոս Կուրիոս և ոչ Դայիոս Փաբրիկիոս, զի չեղեն հետամուտք ստանալ զայն ինչ, զորոյ զպէտսն յանձն չառնուին. քանզի և վասն մարդոյ՝ որում սպաս համեղաճակ էին շողդամք և ինքեան ձեռաքն եփէր զնոսա, անգուսա և կիներն ինքնին զհայսն հարկանէր, չէին ինչ պէտք արդեաք այնչափ բանս շարժել և շառաչիւնս արձակել վասն միոյ խերևէշի. և նստել մատենագրել, եթէ զիարդ ոք արագ արագ ընչաւէտ կարասցէ լինել. քանզի սակաւապէտ կեանք և ինքնաբաւութիւնն ինքնին յոյժ մեծ է. քանզի 'ի բաց զմեզ քեցէ 'ի ցանկութենէ և 'ի հոգոյ աւէլորդացն: Նաև պատմեն՝ եթէ Արիստիդէս յամբաստանութե

անդ Կալլիասայ ասաց, եթէ՝ ընդ աղքատութիւնն պատկառեն՝ ակամայ աղքատացեալքն. իսկ կամաւորքն՝ որպէս և ինքն գլխովին՝ պարծին նովաւ։ Քանզի և ծիծաղելի արդեօք ի՞նչ կարծել, եթէ Արիստիդէայ անընչութիւնն 'ի վատութէն ի՞նչ. քանզի և անստգիւտ արդեօք՝ միայն զաւար մի ժողովեալ զբարբարոսի ուրումն, և վրան մի միայն յինքն տարեալ, անդէն ձեռնհաս էր ընչաւէտ լինել։ Այլ յաղագս այսոցիկ այսչափ ինչ։

Բայց և զինուորական մրցանք Կատոնի ո՛չ մեծ ինչ յաւելին քաղաքին, որ բարգաւաճն իսկ էր. իսկ զԱրիստիդէայն տեսանեմք նահատակութիւնս մեծամեծս, դեղեցիկ առաւել և հոյակապ քան զամենայն Հելլենացւոցն. ըստ որում՝ Մարաթոնայն և Սալամինայն և Պղատեայն։ Ա՛ռ այս՝ և ո՛չ զԱնտիոքոս պարտ է զուգակշռուն ել ընդ Քսերքսեայ. և ո՛չ դարձեալ զքաղաքս քանդեալս զԻրեր իոյ՝ ընդ բազում բիւրաւորաց մարդկանն կոտորածի ընդ ծով և ընդ ցամաք։ Եւ արդեօք 'ի նահատակութիւնսն յայնոսիկ ումեք 'ի մարդկանէ տեղի ո՛չ եւ Արիստիդէս. այլ տեղի եւ նա 'ի փառաց և 'ի պսակաց, ըստ որում և յընչից և ողջոյն յաւարէն՝ զոր թողոյր նա կարօտելոցն. քանզի և յայսոսիկ ամենայն ականաւոր էր նա և բնաւից վեհագոյն։

Սակայն և ո՛չ զԿատոնն ինչ բամբասեմ 'ի պատճառս պարծանացն և գիմագրաւու-

թեանն. թէպէտ և ինքնին նա 'ի ձառս ուրեք ասէ, եթէ՝ Օտար է և դժպատեհ՝ եթէ անձնագովն լինել և եթէ անձնանախատ: Այլ ես այնպէս համարիմ, եթէ քան զայր անձնագով առաւել կատարեալ յառաքինութեան նա է, որ ոչ այլոցն գովութեան պէտս երբէք ունիցի: Քանզի անփառասէր բարք մեծապէս թիկունս տայ հեզութեանն՝ որում պէտք են առաջնորդի քաղաքին. ըստ որում և ներհակաբար՝ դժոխըմբերելի է փառասիրութիւնն և ատելութեան և նախանձուն սատար. իսկ 'ի կրից սատի՝ մին գլխովին անբաժ էր, և միւսն՝ մեծապէս գրաւեալ: Ուստի և Արիստոդէս նիզակակից եղեալ Թեմիստոկղեայ 'ի մեծամեծսն, և իբրու անձնապահապէտ նմին կացեալ 'ի նորա զօրավարութեանն, յոտին կանգնեաց զնրա Աթենացւոցն: Իսկ Կատոնն 'ի վեգ ընդ Սկիպիոնի եկեալ, և վայրիկ մի ևս վեր 'ի վայր տապալէր զնորա արշաւանն ընդդէմ Կարքեդոնացւոց՝ յորում վանեալ նկուն լինէր յայնժամ անպարտելին Աննիբաղ. և ապա ցանգ խէթ խին և բարուր ընդդէմ նորա շարժեալ՝ տարագիր վանէր զնա 'ի քաղաքէն. և անարգաբար դատակնիք ըզգողոյ տայր տալ վասն եղբօրն նորա:

Ա. այսոսիկ՝ և զայն ժուժկալութիւնն՝ զոր բազմագէմն և գեղեցիկս գովէ Կատոնն, բնաւ իսկ անբիծ և սուրբ պահեաց Արիստիդէս. այլ ոչ նոյնպէս և Կատոնն. որում ամուսնութիւնն այն՝ անձահ ա-

սաղուլթեանն և հասակին, ոչ գուշնա-
քեայ զնովաւ արկանէր ստգիւտ։ Քանզի
և չէ ինչ գեղեցիկ արդեաք՝ յայնչափ ծե-
րուլթեանն և որդի ևս ունելով յարբունս
հասեալ և կանամբի, կին իւր ածել զաղ-
ջիկ զմարդոյ՝ որ վարձու պաշտօնատար ի-
ցէ քաղաքի։ Այլ թէպէտ և 'ի ցանկու-
թենէն գործեալ զայն ի՛ցէ, թէպէտ և 'ի
ցասմանէն՝ վրէժ խնդրեալ յորդւոյն 'ի բան
հարձինն, միանգամայն ամօթալի գոյ և
գործն և պատճառք գործոյն։ Եւ բանն
զոր յայնժամ առ որդին ասաց, կեղծու-
պատիր ուրեմն էր և ոչ ճշմարիտ։ Քանզի
արդարև եթէ կամէր որդիս այլ ծնանել
հանգիստապատիւս 'ի լաւուլթեան, պարտ
էր յառաջագոյն քաջ կշռուլթեամբ զու-
գել ընդ կնոջ քաջազգւոյ, և ոչ հանդար-
տել մոռանել առ կին անհարազատ և ռա-
միկ, մինչդեռ զանխուլ էր բանն. և ոչ
դարձեալ յորժամ առակեցաւ՝ իւր աներ
առնել զմարդն՝ որ թէպէտ և նա մոգիւ-
բագոյնս յանձն առնոյր, սակայն Կատուլի
չէր գեղեցիկ ազգակից նմա լինել։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Էին առաջին անուանք նորա՝ Մարկոս Պորկիոս Պրիսքոս։

2. Հոմերոս. Հագնեբրդ. ԺԴ. Ոգիսական։

ՊԼՈՒՏԱՐՔԵԱՅ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ՊԻԻՌՈՍԻ

ԵՒ

ԳԱՅԻՈՍԻ ՄԱՐԻՈՍԻ

ՊԻՒՌՌՈՍ

ԳՈՒՆԱՅԻՆ յետ ջրհեղեղին թագ կապեալ 'ի վերայ Թեսպրոտացւոց և Մողոսացւոց՝ պատմեն զՓայեթոն, որ մի էր յընկերացն ոչք ընդ Պեղասգոսի եկեալ հասին յԵպիռոս. իսկ կէսք ասեն՝ եթէ Դեւկալիոնն և Պիւռռաս յետ կանգնելոյ զմեհեան Դովգոնեայ՝ անդանօր առ Մողոսացիս կալան բնակութիւն : Իսկ յետ ժամանակաց Նէոպտողէմոս Ադիլլեայ որդի ածեալ Ժողովուրդ՝ ինքն զնոյն աշխարհ կալաւ ընդ ձեռամբ, և զարմն ևս զարքայից յիւրմէ թողեալ անդանօր , որոց անուն կարդային Պիւռռոսեանք. քանզի նա 'ի տղայ տիոցն մանկանուն կալաւ Պիւռռոս. և զնոյն անուն եդ նա միում յորդւոց անտի իւրոց հարազատաց՝ զոր ծնաւ նմա Լանասսա դուստր Կղէոդէոսի Իւղոսեան : Ուստի և շուք աստուածեան կալաւ

Աքիլլէս յԵպիռոս. և 'ի բարբառ աշխարհին անուն կարդային նմա Աֆէրօս այն է՝ Անմատոյց։

Բայց ապա յետ առաջնոց Թագաւորացն այնոցիկ՝ զկնի եկեալքն մինչև 'ի Թարրիւտաս՝ խուժադուժք գտեալք և անաւագք, մինչև ոչ գիտել նոցա ոչ զտէրութիւն և ոչ զկեանս. և պատմեն՝ եթէ սա այս Թարրիւտաս առաջին զարդարեալ զքաղաքսն հելլենացի բարոյիւք և դպրութեամբք և մարդասէր օրինօք, զհամբաւի հարաւ։ 'Ի Թարրիւտասայ ծնաւ Աղկետաս, յԱղկետեայ Արիւբաս, և յԱրիբասէ և 'ի Տրովադէայ ծնաւ Էակիդէս՝ որ ած 'ի կին զՓԹիա դուստր Թեսսաղոսի Մենոնեայ, որ ականաւոր գտաւ 'ի Լամիակեան պատերազմին, և զկնի Լէոսթենեայ բարձերէց էր 'ի մէջ նիզակակցացն։ Իսկ Էակկիդոսի ծնան 'ի ՓԹիայ դստերք երկուք Դեդամիա և Տրովադա, և ուստր մի անուն Պիւռռոս։

Ապա աղմուկ չփոԹից յուզեալ 'ի Մողոսացիս և տարագիր զԷակիդէս արարեալ, և փոխանակ զորդին կացուցեալ զԷնէոպտողէմեայ՝ զբարեկամն զԷակիդեայ 'ի մահ վարէին. սակայն Անդրոկղիդէս և Անգեղոս մաղապուր զՊիւռռոս տղայ արարեալ 'ի ձեռաց Թշնամեացն, փախստեայք երԹային ածեալ ընդ իւրեանս սակաւս ոմանս 'ի ծառայից և 'ի նաժշտաց դիեցուցանել զտղայն։ Այլ դանդաղեալք 'ի փախստեան՝ 'ի ժամանել

հեռամոլին՝ առեալ զտղայն տային 'ի ձեռս Անդրոկղեոնիեայ և Խալկիասայ և Ղէանդրոսի՝ պատանիք հաւատարիմք և կորովիք. հրաման տուեալ խուճապել 'ի փախուստ շտապաւ, և գնալ 'ի Մեգարոնն յերկիր Մակեդոնիոյ։ Իսկ ինքեանք է զի յողոք անկեալ հեռամոլին, և է զի 'ի գիմի արձանացեալք, այնպէս քար ընդ ոտն լինէին նոցա մինչև ցերեկոյ. մինչ հազիւ ուրեմն վանեալ զնոսա՝ էկին հասին առ պատանին որ բարձեալ տանէին զՊիւռռոս։ Ապա յետ մոլոյ արևուն իբրև յապահովն կարծեալք զանձինս, անդ յանկարծակի 'ի յուսոյն 'ի դերևս ելանէին. քանզի գետ ընդ առաջեալ նոցա՝ որ առերի գնայ քաղաքին, 'ի ժամանակին սրընթաց յոյժ՝ ահ արկանէր. զի և հնար չէր ամենևին անցանել ընդ նա, որ յուղևոց անձրևաց լցեալ գայր պղտոր դարիւ և դարիւ. առ այս և մուրթ գիշերոյն առաւել արհաւրոք ընդոյր զամենայնն։

Ապա զտեղի կալեալ անդէն և զանդիտեալք անցուցանել զտղայն և զանուցիչսն, և յայնկոյս գետոյն լուեալ զձայն բարբառոյ գաւառաբնակացն, սկսան աղաչել օգնութիւն. և առեալ ցուցանէին նոցա ըզՊիւռռոս, ձայն բարձեալ յողոք անկանէին. այլ նոքա 'ի գրգանս և 'ի դնդչիւն հոսանաց գետոյն ոչ լսէին զբարբառն. մի կողմն կայր և աղաղակէր, և միւսն՝ խմանայր և ոչինչ. մինչև 'ի միտս եկեալ մի ոմն՝ գերծոյր կեղև 'ի կաղնւոյ և առեալ գծէր

'ի վերայ Ճարմանդիւն գիրս ինն և նշանակէր զկարիս և զբաղդ մանկանն. ապա զկեղևն պատեալ 'ի քար՝ հաստատան 'ի քարընկէց անդր, այնպէս առեալ ձգէր 'ի միւս ափն։ Այլ կէսք ասեն՝ եթէ զկեղևն պարուրեալ շուրջ 'ի նեռաբուն՝ այնպէս արձակեաց յայնկոյս։ Իսկ որք յայնկոյս կային առեալ ընթերցեալ զգիրն և 'ի վերայ կացեալ տագնապին նոցա, անդէն հատեալ ծառս և լաստս կապեալ, այնպէս անցանէին ընդ գետն։ Արդ որ առաջին նահատակեցաւ յանցան՝ անուն էր նորա ըստ գիպաց Աքիլլէս, և առեալ յինքն զՊիւռռոս աղոյ՝ անցուցանէր. և ապա այլք ըստ նմանէ՝ ըստ որում պատահէրն՝ անցուցանէին և զայլսն։

Եւ այսպէս ապա զերծեալք, ջոքան 'ի Լիւրիկեցիս առ Գլաւկիոս աղքայ, և գտեալ զնա 'ի տան ընդ տիկնոջն բաղմեալ, եդին 'ի գետնի զմանուկն առաջի երկոցուն նոցա։ 'Ի վերայ հասեալ բանին Գլաւկիոս, կայր և զմտաւ ածէր՝ զանդիտեալ 'ի Կասսանդրոսէ՝ որ թշնամին էր Էակիդեայ. և այնպէս հարուստ ժամանակ անշշունջ մոսխորհ լինէր Գլաւկիոս 'ի սրտի իւրում։ Այլ 'ի պահուն յայնմիկ յոսիսիթերս գնացեալ Պիւռռոս առ արքայն և կալեալ ձեռաքն զվերարկուն և 'ի վեր կանգնեալ զծնգովքն Գլաւկիոսի, զառաջինն 'ի ժպիտ շարժեաց զաղքայն, ապա 'ի գուռթ խանդաղատանաց 'ի վերայ մանկանն՝ իբրու արտասուալից ողոքաւորի։

Իսկ կէսք պատմեն եթէ ոչ առ Գլաւկիաս այնպէս չոքաւ տղայն աղաչաւոր, այլ 'ի սեղան անդր աստուածոյն՝ յոտին կանգնեալ առընթեր նորա և շուրջ զձեռսն ածեալ զնովաւ. ոյր աղագաւ և Գլաւկեայ այնպէս թուեցաւ՝ աստուածական պատահել իրացն, ուստի և անդէն առեալ զՊիւռռոս տայր 'ի ձեռս ամուսնոյն, հրաման տուեալ սնուցանել զնա 'ի միասին ընդ իւրոց զաւակացն. և յետ սակաւուց թէպէտ և զմանուկն խնդրեցին թշնամիք, և ինքնին Կասսանդրոս քանքարս երկերիւր 'ի ներքս մատուցանէր, ոչինչ յանձն էառ Գլաւկիաս. այլ յարբունս հասեալ մանկանն ամաց երկոտասանից, ածեալ զնա զօրու ծանու յԵպիռոս՝ անդանօր թագկապէր նմա։

Իսկ էր Պիւռռոսին դէմք արքենի կերպարանացն ահընկէց առաւել՝ քան եթէ պերճ. և չէին նորա շարք ատամանցն 'ի վերին կողմանն բաժանեալ, այլ ոսկր միաձոյլ՝ խուն մի քերածով գծեալ անջրպետութիւն ատամանցն։ Եւ կարծէր ինն այնպէս՝ ունել Պիւռռոսի զօրութիւն ապաքինելոյ զփայծաղնացաւ՝ յաղէլով աքաղաղ ապիտակ, և յորսայս արկեալ զախտակիրսն՝ մեղմով աջոյ ոտամբն ձ՝նչելով զախտնգիս նոցա. և այր այր թէպէտ և 'ի սինլըքորաց զնոյն դարման գտանէր 'ի նմանէ, և ապա առնոյր վասն իւր զյաղեալ հաւն. և էր այն նմա 'ի վարձ տարփալի։ Առ այս պատմեն՝ և բուն մատին

այնր ոտինն աստուածեան ունել զօրութիւն. իբրու որ յետ մահուն ողջոյն նորա աճիւնացեալ մարմինն, այն մասն նորա անկէզ և անապական մնայր 'ի հրոյն։ Այլ յաղագս այսորիկ յետոյ ուրեմն 1։

Ապա ամաց գոլով նա եօթն և տասանց, և անեղկեան զանձն կարծեալ յարքայութեանն, եկ ջոքաւ առ Լիւրիկեցիս 'ի հարսանիս միոյ ուրուք յորդւոցն Գլաւկեայ գայեկորդւոց իւրոց։ Իսկ յայնժամ միւսանգամ վտարանջեալ Մողոստացիք՝ 'ի բաց զբարեկամն նորա հալածեն, և յաւարի առեալ զդանձն արքունի՝ նուաճին ընդ ձեռամբն Նէոպտոլոմեայ։ Եւ այսպէս ապա յարքայութենէն զրկեալ Պիւռռոս և լքեալ յամենեցուն, ջոքաւ առ Դեմետրիոս որդի Անտիգոնոսի, որոյ կին էր Դեղամիա քոյր նորա. այս Դեղամիա՝ մինչդեռ մանուկ էր՝ խոստացեալ 'ի հարսնութիւն Աղեքսանդրոսի որդւոյ Ռովքսանեայ, սակայն ընդ ձախողակս իրք նորա գնացեալ, հարանացու եղեալ Դեղամիա՝ ամուսնացաւ ընդ Դեմետրիոսի։

Եւ ապա 'ի մեծի պատերազմին Իպսոն, ուրանօր մարտ եղեալ կռուէին ամենայն թագաւորք երկրի, Պիւռռոս տակաւին պատանեակ միշտ անմեկնելի էր 'ի Դեմետրեայ, և նկուն արարեալ զամենայն հակառակամարտս նորա՝ մեծապէս երևելի լինէր 'ի զօրականին։ Ապա և Դեմետրիոս նկուն եղեալ, նա երբէք չեթող զքեռայրն. այլ ընդ նորա ձեռամբն հաս-

տատուն պահէր զքաղաքն Եկեղեայ՝ որք հաւատացեալքն էին 'ի նա։ Եւ ապա հաշտութեան պայմանք կռեալ ընդ Պտղոմեայ՝ եկեալ նաւէր Պիւռռոս յԵգիպտոս 'ի պատանդի։ Անդանօր յորս և 'ի վարժս մրցանաց 'ի ներքս բերէր նա զկորովութիւն իւր և զանվկանդ ոգին. և տեսեալ նա յամենայն կանայան Պտղոմեայ զԲերենիկէ ճոխ և առաքինութեամբ և հանճարով գերազանցեալ, նմա յաւէտ իմն սպաս հարկանէր. և քանզի գիտէր իակ քաջ առ շահ անձինն շքագիր աւագացն լինել. ըստ որում և արհամարհոտ էր նա խոնարհագունիցն քան զինքն. այլ պարկեշտ և ժուժկալ 'ի կերակուրս, առաւել քան զբազում արքայորդիսն ընտրեցաւ նա 'ի փեսայութիւն Անտիգոնեայ դստերն Բերենիկեայ, զոր ծնաւ նա Փիլիպպոսի մինչև եկեալ յերկրորդ հարսանիսն ընդ Պտղոմեայ։ Եւ ապա յետ փեսայութեանն առաւել ևս արդոյ եղեալ Պիւռռոս, և զօրավիգն ևս նմա լինելով ամուսին նորա պատուական Անտիգոնէ, արձակեալ լինէր յԵպիռոս հանդերձ ընչիւք և զօրու ծանու հաստատել զաթոռ արքայութեան իւրոյ. ուր և մոռադիւրագոյնս ընկալան զնա ժողովուրդք առ ատելութեան Նէոպտղոմեայ, քանզի բռնացեալ էր։ 'Ի վերայ այսր և զանգիտեալ Պիւռռոս՝ գուցէ օգնականութիւն 'ի Թագաւորաց գտցէ Նէոպտղոմէոս, բարեկամութիւն հաստէր ընդ նմա՝ Թագ երկոցուն կապեալ միանգամայն։

Ապա յետ այնորիկ աղք փասքուսք գաղ-
տաբար ընդ միմեանս ձգէին զնոսա. և որ
առաւել գրգռեաց զՊիւռռոս՝ որպէս ա-
սեն՝ էր այսպիսի. Էր սովորութիւն ար-
քայիցն գնալ 'ի զոհ Արէսեանն Արամազ-
դայ 'ի Պասսարոն՝ վայր գաւառին Մողոտ-
տացւոց. և զոհեալ՝ երդումն կռել առա-
ջի ժողովրդեանն՝ ըստ օրինացն վարել զտէ-
րութիւնն. նոյնպէս և ժողովրդոցն՝ պա-
հել նոցա զտէրութիւնն ըստ օրինացն ըստ
այնոցիկ։ Կատարեցան և յայնժամ այսո-
քիկ յանդիման Թագաւորացն երկոցուն՝
որ անդր էկին հասին հանդերձ բարեկա-
մաքն. ուր և մեծապէս ընծայաբերք լի-
նէին նոքա միմեանց։ Անդ Գեղոնն հաւա-
տարիմ Ենէոպտղոմեայ՝ ըղձակաթ առ
Պիւռռոս եղեալ՝ պարգևէր նմա ամուլս եր-
կու արօրաձիգ եզանց։ Զսոսա խնդրեալ
'ի Պիւռռոսէ Միւրտիղոս մատռուակ նո-
րա, և 'ի յանձն չառնուլ Պիւռռոսի և 'ի
տալ այլում, յոյժ սրտնեալ խեթացաւ
Միւրտիղոս. որում և իրաւգած լինէր Գե-
ղոնն, և յընթրիս հրաւիրեալ զնա (և որ-
պէս կէսք ասեն՝ գինեհարութեամբն է-
ղեալ ևս ընդ նմա՝ զի էր գեղեցիկ), հրա-
պոյրս արբուցանէր նմա՝ զկողմն կալեալ
զՆէոպտղոմեայ՝ դեղել զՊիւռռոս։ Անդ
Միւրտիղոս ընկալեալ զհրապոյրսն իբրու
'ի վերին երեսս հաւանեալ ընդ բանն և
անդասին ևս կամել զայն, երթեալ ապա
'ի վեր հանէր զբանն առ Պիւռռոս։

Ապա 'ի հրամանէն Պիւռռոսի Միւր-

տիղոս առեալ ածէր առ Գեղոնն զԱլեք-
սիկրատէս տակառապետ, իբրու սատար
դաւաճանութեանն լինել. քանզի կամէր
Պիւռռոս 'ի բազում վկայից հաւատոյս
ունել զամբաստութեանն։ Ապա Թա-
կարթեալ Գեղոնն, Թակարթեցաւ ինք-
նին և Ենէոպտողէմոս. կարծեալ եթէ յան-
դորրու յաջողակի լարեցան հաղբքն, ոչինչ
հանդուրժեաց առ խնդին մերկանալ ըզ-
բանն առաջի բարեկամացն. ապա և 'ի գի-
շերի միում դարձեալ 'ի գինեբբուս 'ի
տան Կադմեայ քեռն իւրոյ՝ սկսաւ բան-
դագուշել ընդ նմա վասն բանին այնորիկ.
համարեցաւ եթէ լսէ և ոչ ոք, զի և չէր
ոք անդ բայց Փէնարէտէ կին Սամուէլի՝ որ
իշխան էր 'ի վերայ հօտից և անդէոց Ենէո-
պտողոմեայ. սա անկեալ 'ի բազմոցի և ե-
ռեաք իւր յորմն կոյս՝ Թուէր եթէ նիր-
հեսցէ. սակայն լուեալ նա զամենայնն
լուիկ ունջիկ, 'ի գալ աւուրն վաղվաղակի
երթեալ առ Անտիգոնէ կին Պիւռռոսի՝
պատմէ նմա զամենայնն զոր խօսեցաւ
Ենէոպտողէմոս առ քոյրն։ Իրազեկ և այսմ
եղեալ Պիւռռոս, լուռ եկաց և հանդար-
տեաց. ապա 'ի զոհ մի հրաւիրեալ 'ի կո-
չունս զԵնէոպտողէմոս, անդէն սպանանէր
զնա. քանզի և գիտէր իսկ իւր կուսակից
զաւագան Եպիռոսացւոց և Թեսալացիս նմա
բառնալ 'ի միջոյ զԵնէոպտողէմոս, և ո՛չ
շատանալ միայն դուշնաքեայ մատամբ ար-
քայութեանն, այլ 'ի գործ զբնութիւնն
վարել՝ Թեկն ածելով զմեծաց իրաց։ Ուա-

տի և նա զառաջն առեալ՝ բառնայր ըղ-
նէոպտողէմոս 'ի կենաց, յորժամ 'ի միա-
սին բարգեցաւ և այն խէթ մահահոտ։
Յետ այնորիկ Պիւռռոս յուշի կապեալ
զԲերենիկէ և զՊտղոմէոս, յանուն պտղո-
մեայ կոչէր զորդին՝ զոր ծնաւ նմա Անտի-
գոնէ. և շինէր ևս քաղաք 'ի Փերսոնէսոն
Եպիռոսի, և անուն կարգայր նմա Բե-
ռենիկիդէս։

Իսկ յետ այսորիկ բազում ինչ և մե-
ծամեծ նահատակութիւն խնդրեալ Պիւռ-
ռոս և յուսով խնդացեալ, նախ քան զա-
մենայն՝ որ առ ոտս կայր՝ գոտանէր հնարս
իմն ձեռնամուխ յիրս Մակեդոնացւոցն՝
օրինակ զայս. էր Անտիպատրոս երեց որ-
դի Կասանդրոսի սպանեալ զմայր իւր
Թեսաղոնիկէ, և 'ի բաց զեղբայր իւր վա-
ռեալ զԱղեքսանդրոս։ Սա առաքեալ խընդ-
դրեր Թիկուռնս 'ի Դեմետրիոսէ, կոչէր և
զՊիւռռոս ինքնին. իբրև Դեմետրիոս ան-
պարապեալ գանդաղէր, գնացեալ առ նա
Պիւռռոս խնդրէր 'ի վարձ մարտին զՆիմ-
փէա և զծովամերձեայն Մակեդոնիոյ. դար-
ձեալ և 'ի ժողովրդոցն նուաճելոց զԱմ-
բրակիա և զԱկարնանիա և զԱմիլիոքիա։
Զորս և առհասարակ առեալ, կարգէր անդ
պահանորդս. և խաղայր գիմէր այնուհետև
առնոյր նուաճէր ընդ ձեռամբ Աղեքսան-
դրի զվայրսն՝ հանեալ 'ի ձեռաց Անտի-
պատրեայ։

Իսկ Լիւսիմաքոս արքայ կամեցեալ
ձեռն տալ Անտիպատրոսի և խափանեալ

յանպարապուԹեանցն, ապա գիտելով չափ եԹէ ըստ կամս Պողոմեայ երբէք չելանէ Պիւռռոս՝ առեալ առաքէ առ Պիւռռոս նամակ մի կեղծ իբրև 'ի Պողոմեայ. հրաման տուեալ նմա տեղի տալ յարշաւանաց անտի իւրոց, և վասն այնորիկ քանքարս երէքհարիւր առնուլ յԱնտիպատրեայ։ Իբրև զնամակ զայն բանայր Պիւռռոս, անդէն 'ի վերայ հասանէր նենդին Լիւսիմաքեայ. քանզի զսովորականն չգտանէր 'ի նմա գրեալ զանուանակոչուԹիւնն, զայն, եԹէ Հայր ՈՐԴԻ, ԽՆԴՐԵԼ այլ ԹԷ՝ ԱՐԻՈՅ ՊՈՂՈՄԷՈՍ ՈՐԴՈՅ ՊԻՌՌՈՍ, ԽՆԴՐԵԼ. Ուստի և կշտամբանս առաքեալ նա առ Լիւսիմաքոս, հակամիտէր ապա և 'ի հաշտուԹիւնն. և երէքին նոքա միանգամայն եկեալ հասին՝ երդմամբք 'ի զոհս կռուել զպայմանսն։ Իբրև 'ի զոհսն 'ի մէջ ածին նոխազ մի և ցուլ մի և խոյ մի. դէպ եղև խոյին մինչև յազեալ՝ մեռանել ինքնին, և 'ի ծաղր շարժեաց առհասարակ. այլ անդ Թէոդոտոս իսկ չտայր Թոյլ Պիւռռոսի երդնուլ, և ասէր զայն դէպսն նշանակ մահու միոյ ուրուք 'ի Թագաւորացն. ուստի և Պիւռռոս յայնժամ ձեռնԹափ լինէր 'ի խաղաղուԹենէն։

Իսկ յետ այնորիկ 'ի հանդարտուԹիւն դարձեալ իբք Ալէքսանդրի, համայն և այնպէս Դեմետրիոս եկն ելհաս անկոչ 'ի նմանէն և յոչինչ պէտս. ուստի և ահ անկաւ 'ի վերայ նորա։ Իբրև աւուրս սակաւ կացին նոքա առ միմեանս, յերկուսցեալ

այր ընդ ընկեր՝ ոլոգայթ լարէին միմեանց. այլ Դեմետրիոս դէպ ժամանակ գտեալ և կանխեալ՝ բառնայր 'ի կենաց զԱղեքսանդրոս, և ինքն համբաւէր թագաւոր Մակեդոնիոյ։ Բայց էր և 'ի վաղնջուց խէթ Դեմետրի ընդդէմ Պիւռռոսի, զի և ասպատակեալ էր Պիւռռոս 'ի Թեսսալիա. առ այս և ցանկութիւն աւելաստացութեան՝ տնկակից ախտ թագաւորաց՝ զնոցա զառ միմեանս մերձաւորութիւնն ահագին և կեղակարծելի յարդարէր, յաւէտ իմն յետ մահուանն Դեդամեայ։ Այլ իբրև երկոքին նոքա գրաւեալ զՄակեդոնիա՝ 'ի նոյն և 'ի մի հետամուտք լինէին, և թշնամութեան նոցա այնուհետև մեծամեծք էին բարուքք, Դեմետրիոս խաղացեալ ընդդէմ Եւոողացւոց և նուաճեալ զնոսա՝ թողոյր անդէն զՊանտաւքոս քաղում զօրու, և ինքն դիմէր ընդդէմ Պիւռռոսի. 'ի նոյն և Պիւռռոս ընդդէմ նորա վաղվաղակի՝ իբրև ազդ չինէր նմա. այլ երկոքին մոլորեալք յուղղոյն՝ ոչ պատահէին միմեանց։ Դեմետրիոս միսեալ յԵպիռոս աւար հարկանէր, և Պիւռռոս պատահեալ Պանտաւքոսին՝ կարգեցաւ 'ի կռիւ մարտի։

Իբրև պատերազմն խառնեցաւ, ահագին և մեծ էր գոռն՝ յաւէտ իմն առ կողմամբք զօրավարացն։ Քանզի Պանտաւքոս արութեամբ քաջութեամբ և ուժով մարմնոյն և յաջողակի վարժուքն առաջին 'ի զօրավարան Դեմետրի՝ մեծապէս գոռ և խի-

զախ՝ ասպարէզ Պիւռռոսի կարդայր 'ի վեդ ընդ նմա։ Անդուստ և Պիւռռոս առաջին արդարև 'ի Թագաւորս 'ի կորովութեան և 'ի փառս, քան յաղդականութենէ զարմին՝ առաւել յառաքինութէն խնդրեալ զփառսն սեպհականել զԱքիլլեայ, դիմեալ դայր նահատակ 'ի հանդիպոյ ընդդէմ Պանտաւքոսին՝ ուղի իւր հատեալ յառաջոյ նախամարտկացն։ Առաջին ձգեալ արձակեցան գեղարդունք. ապա 'ի մօտոյ բռնագոյն ևս 'ի վեդ եկեալք և զպողովատիկսն մերկեալք՝ զարուեստ զամենայն և զձիգն թափէին երկոքին նոքա։ Անդ վէրս մի առնոյր Պիւռռոս, և կրկին դարձեալ տայր ախոյենին. մի՝ 'ի զատին, և միւս ևս՝ առ պարանոցաւն Պանտաւքեայ, և թաւալգլոր յերկիր տապաստ արկանէր զքաջն. սակայն և զկեանսն չկարաց բառնալ, քանզի 'ի բաց 'ի վայրէն առին բարեկամք զՊանտաւքոս։ Ապա Եպիռացիք զարմացեալք ընդ քաջութիւն արքային իւրեանց, բարձրապարանոցք ընդ յաղթութիւն՝ նահատակեալ վանէին հարկանէին զփաղանդ Մակեդոնացւոցն. և հետամուտք ևս եղեալք՝ զբաղումս տապաստ արկանէին, և ձերբակալ ոդիս հինգ հազար գերէին 'ի նոցանէ։

Եւ ապա այս հարուածս ոչ այնչափ 'ի բարկութիւն և յատելութիւն դրդեաց զՄակեդոնացիսն ընդդէմ Պիւռռոսի, քան թէ հիացեալ սքանչացան նոքա ընդ քաջութիւն նորա. որ և ստէպ բարբառեալ

խօսէին որ միանգամ ականատես կացին շահատակութեանցն նորա, և ընդ նմա 'ի վէգ եկին։ Քանզի թուէր իմն այնպէս նոցա՝ 'ի դէմս կերպարանացն և յարագութեանն և 'ի դարձն բերել Պիւռռոսի զնմանութիւն զԱղեքսանդրին, զոյր և ըզթափոյն յարձակմանն և զբուռն զօրութեանն 'ի կռուին զնկարագիրն՝ 'ի Պիւռռոս տեսանել. քանզի զնմանութիւն բերէին զԱղեքսանդրին այլք 'ի թագաւորաց 'ի հանդերձս ծիրանեացն և 'ի բազմակոյտ անձնապահպետսն և 'ի թեքել պարանոցին և 'ի պերճանալ բարբառոյն. մի միայն Պիւռռոս հանգունատիպ եկաց նմա 'ի զէնս և 'ի կորովութեան ձեռացն։ Իսկ յաղագս հմտութեան վարժից նորա 'ի կարգել և 'ի վարել բանակաց, գեղեցիկ հաւաստիք գոն մեզ յարձանագրութեանց անտի նորա յաղագս իրացս այսոցիկ։

Եւ ասեն՝ եթէ հարցեալ Անտիգոնոս, ո՞ ւոյէ առաւել քաջ 'ի զօրավարաց, էտ պատասխանի. Պիւռռոս 'ի ծերանալ իւրում. յայտ արարեալ զնա քաջ՝ որ միայն առ իւրովքն էին ժամանակաւք. այլ ապա Աննիբալ վկայէր՝ զի և քան զամենայն զօրավարս համօրէն ըստ վարժիցն հմտութեան առաջին եկաց Պիւռռոս. և երկրորդ՝ Սկիպիոն. և երրորդ՝ ինքն գլխովին. ըստ որում 'ի վարսն Սկիպիոնի արձանագրեալ կայ 2։ Եւ գլուխ բանին՝ թուի թէ 'ի զինուորականին՝ անգուլ բանասիրութեամբ պարապեցաւ Պիւռռոս, զայն

վարժ գեղեցիկ յոյժ համարելով առն թագաւորի առաւել քան զամենայն, և այլ բազմաքանդակն մակացութեանց չտանելով փոյթ։ Քանզի և պատմեն՝ եթէ հարցեալ նա 'ի կոչունս ուրեք՝ զո՞ ոք քաջ ևս համարեացի սինգահար, արդեաք զՊիւթոնն՝ եթէ զԿափիսիաս, տայր պատասխանի՝ եթէ զՊողիւսպերքոն զօրավար. իբրու որ 'ի դէպ առն թագաւորի ելեալ՝ այսոցիկ միայն պատկառ կալ և գիտել։ Եւ էր Պիւռռոս հեշտ բաղձալի առ ընտանիսն, և հեզ և հանգարտ 'ի բարկութեանն, և կազմ յօժարամիտ փոխարինել երախտեաց. ոյր աղագաւ և մեծապէս ցաւեաց նմա օրհաս մահուն Երոպեայ. և ասէր՝ եթէ Երոպոս 'ի մահուն իւրում կրեաց զհասարակաց կիրս կանանցածնաց. և միանգամայն կշտամբէր զանձն Պիւռռոս, զի դանդաղագոյնս չէր փոխարինեալ երախտեաց նորա։ Քանզի զպարտս մարթին և ժառանգք հատուցանել պարտատերց. իսկ եթէ դարձ փոխարինի ոչ տացի երախտաւորացն կենդանեաց, վիշտ մեծապէս է այն արանց լաւաց և արդարոց։

Իսկ էր երբեմն 'ի կարծել ոմանց՝ եթէ Պիւռռոս ինքնին գոլով յԱմբրակիա՝ տարրագիր արասցէ զայր ոք լեզուագար և ըզհայհոյիչ, ասէր Պիւռռոս. "Նա՛ մանաւանդ կացցէ մնասցէ այրդ այդ և լեզուագարեսցէ զմէնջ 'ի մէջ սակաւ ամբոխից, քան եթէ շուրջ ելեալ արտաքս 'ի մէջ ամենայն մարդկան"։ Է՛ր դարձեալ՝ զի

յերիտասարդաց ումանք ընդ գինի մոռեալ և յիշոցս առ նա արձակեալ, և յրմբռնիլն իւրեանց՝ հարցանէր Պիւռռոս եթէ ՝Ճշմարիտ բարբառեցան յայնպիսեաց անտի, եւ պատասխանի մի ումն 'ի նոցանէ և ասէ. "Այո՛ բարբառեցաք ա՛ղքայ. այլ արդեօք մեր առաւել բարբառեալ էր, եթէ առաւել ևս արբեալ էր մեր": Ծիծաղեցաւ Պիւռռոս և արձակէր յազատութիւն:

Յետ այսորիկ առ 'ի բարգաւաճ ևս զիրս իւր առնել և զզօրութիւնն, զկնի մահուն Անտիգոնեայ ած նա և զայլ կանայս, զդուստր Աւտոլէոնտեայ արքայի Պէոնացւոց, և զԲիրկենենա դուստր Բարդիւլիոսի արքային Լիւրիկեցւոց, և զԼանասսա զԱգաթոկղէսի Սիրակուսացւոց, որ եբեր նմա յօժիտ զԿերկիւրացւոց քաղաքն՝ զոր էառ ինքնին Ագաթոկղէս: Եվ նմա յԱնտիգոնեայ որդի Պտղոմէոս, 'ի Լանասսայ՝ Աղեքսանդրոս, և 'ի Բիրկենենայ՝ Եղենոս կրսերագոյնն որդւոց: Եւ ապա ինքն գեղեցիկ դաստիարակութեամբ առհասարակ զնոսա յարդարեաց 'ի զէնս, և յարիութեան և յաշխոյժս վառեաց էլից զնոսա անդրսային յառաջին տիոց հրահանգեալ զնոսա: Քանզի պատմեն՝ եթէ հարցեալ 'ի միոյ յորդւոցն՝ տակաւին տղայ, ո՞ւմ ումեք 'ի նոցանէն թողցէ զարքայութիւնն, եւ պատասխանի. Ոչ 'ի յԷնէլ որդոյն Լս իշէ սոռոէր: Եւ այս ոչինչ օտար է յՈղբերգական նեղուից անտի, եթէ՝ 'ի սայրասուր յերիսոն՝ փոռնն Լիճակէոսի էղբարց: Այնչափ

ինն անհաղորդական և դաղանական է ցանկութիւն աւելաստացութեանն։ Այլ յետ պատերազմին այնորիկ դարձ 'ի տուն արարեալ Պիւռռոս, այնպէս երևելի 'ի փառս և 'ի խորհուրդս մեծամեծարս զուարճացեալ բերկրէր. և յԵպիռացւոց ևս վասն այնորիկ անուն առեալ Արծուի, ասէր. "Զեզք Արծուի եմ ես. զի զիարդ ապաոչ յաջողեացի ինձ՝ ձերովք զինուք իբր սրաթևովք ոմանքք բարձրաթռիչ լինել"։

Բայց յետ սակաւուց լուր առեալ Պիւռռոս զդժուարին հիւանդութեանն Դեմետրի, յանկարծակի յեղակարծումն ժամու հորդան տայր անկանէր 'ի Մակեդոնիա. ասպատակ սփռէր և աւար հարկանէր, և վայրիկ մի ևս առհասարակ տիրանայր անարդել 'ի վերայ արքայութեան. յառաջագէմ անդիմամարտ խաղայր գնայր մինչև յԵդեսսա, և շատք ևս գային յաւելուին 'ի նա՝ զինուորեալք ընդ ձեռամբ նորա։ Ապա վիշտ վտանգին յայնժամ դրդէր 'ի վեր կանգնէր զԴեմետրիոս՝ թէպէտ և վատեալ յուժոյ. և անդէն բարեկամք նորա և զօրավարք բազում ամբոխիւ կազմութիւն տուեալ ստուար բանակի՝ դիմէին 'ի վերայ Պիւռռոսի։ Իսկ Պիւռռոս՝ որ սաղակաբար մանաւանդ յասպատակ անդր հասեալ կայր, խուճապեալ 'ի փախուստ դառնայր, և տապատ ևս անկանէր 'ի զօրուէն նորա. զի և անդուլ յուղղոջն 'ի վերայ նորա անկանէին Մակեդոնացիք։

Ա՛յլ թէպէտ և այնպէս վաղ ընդ փոյթ վանեաց Դեմետր զՊիւռռոս, ոչինչ այն-պէս արհամարհէր զնովաւ. այլ 'ի մոի ե-դեալ զմեծամեծաց թեկն ածել, և ան-դրէն ողջոյն զարքայութիւն հայրենի 'ի բուռն արկանել, և հանդերձեալ նաև հինգ հարիւր և ամբոխ զօրաց բիւրուց տա-սանց՝ ո՛չ 'ի կռիւ ընդ Պիւռռոսի կաքա-ւէր, և ո՛չ դարձեալ մերձաւոր զոք կամէր թողուլ Մակեդոնիոյ 'ի զօրաւորաց անտի. և քանզի ժամանակն չնեղէր նմա 'ի կռիւ ընդ Պիւռռոսի, խաղաղութիւն արարեալ ընդ նմա՝ խաղայր գնայր ընդդէմ այլոց թագաւորաց: Ապա զգաչն կռեալ, և 'ի մեծապէս պատրաստութենէն յերևան ևս եկեալ խորհուրդ կամացն նորա, զահի հարեալ այլք 'ի թագաւորացն՝ առեալ հրեշտակս և նամականի յղէին առ Պիւռ-ռոս, զարմացեալք յոյժ՝ իբրու որ զդէպ ժամանակն 'ի ձեռաց հանեալ Պիւռռոս՝ սպասեալ միայ մարտ գնել կռուել ընդ Դեմետրի 'ի զօրանալ նորա. և ձեռնհաս առ օրին գոլով 'ի Մակեդոնիոյ զնա 'ի բաց վանել 'ի բազում անպարապութեան նորա, դանդաղէ մինչև 'ի պարապել նորա և 'ի յօրանալ. զի ապա այնուհետև մարտ եդեալ կռուեսցի 'ի վերայ տաճարաց և շիրմաց գերեզմանացն Մողոստացւոց. և նա այսպէս՝ յորժամ անդ Դեմետր վայր մի յառաջ եհատ 'ի նմանէ զԿերկիւրա, դարձեալ և զամուսինն՝ օժտաբեր նորա: Քանզի Լանասսա դժկամակս բերեալ ընդ

Պիւռռոս, զի յաւէտ լիմն հակամիտէր յայլս յամուսնացն՝ Թէպէտ և 'ի բարբարոսաց, մեկնեցաւ 'ի Կերկիւրա. և 'ի խնդիր նոր հարսանեաց ելեալ արքայից՝ կոչեաց զԴեմետրիոս, իբրու որ առաւել հեշտալուր 'ի Թագաւորս յամուսնութիւն անդր. և արդեամբք իսկ ելեալ նաւեաց անդր Դեմետր և հարանացոյց զԱնասսա, և Թողցր 'ի քաղաքին պահանորդս:

Զայս ինչ ապա գրեալ Թագաւորաց առ Պիւռռոս, միանգամայն և ինքնին նոքա խոչ ընդ ոսն լինէին Դեմետրի 'ի գեղերանս նորա: Քանզի Պտղոմէոս նաւեալ նաւաց բազմութեամբ՝ յապստամբութիւն դրդեաց զՀելլենացի քաղաքսն. անդուստ և Լիւսիմաքոս 'ի Թրակիոյ գրոհ տայր 'ի Մակեդոնիա վերին և աւերէր քանդէր. և Պիւռռոս դարձեալ յարուցեալ խաղաց գնաց 'ի վերայ Բերրիեայ, զմտաւ ածէր՝ որպէս և եղև իսկ՝ եԹէ Դեմետրիոս չու արարեալ ընդդէմ Լիւսիմաքեայ՝ ամայի լքցէ զվայրագաւառն: Բայց 'ի գիշերին՝ մինչև խաղացեալ Պիւռռոսի, Թուէր նմա 'ի քուն կոչել զինքն Աղեքսանդրի մեծի. և 'ի մեռ երԹալ՝ տեսանել նմա զԱղեքսանդր խօԹադին անկեալ 'ի մահճի. որ և գգուանօք ընկալեալ զնա՝ խոստանալ նմա մտադիւրագոյնս օգնել. իսկ Պիւռռոսի համարձակեալ ասել, "Եւ զիարդ, ո՞վ արքայ, խօԹացեալ դոլով քո, զօրավիգն ինձ եղիցես". և տալ պատասխանի Աղեքսանդրի, եԹէ Ա՛ռ-ա՛մբ. և անդէն յերիվար

նիսեան աշտանակեալ Աղեքսանդրի, հոր դեալ նմա Ճանապարհ։ 'Ի տեսլենէն մեծապէս խրախուսեալ Պիւռռոս, ձեռով հատեալ զմիջնավայրն հասեալ ունի ըզ Պերրիա. և անդ բազմակոյտ զօրուն դադար տուեալ, խաղայր և ընդ լծով արկանէր զկողմանս այլ զգաւառին 'ի ձեռն զօրավարացն։

Լուր հասեալ առ Դեմետր, և իրաղեկ ևս եղեալ զի 'ի բանական խռով հարեալ է 'ի Մակեդոնացիս սասակ և մեծ, զահի հարաւ երկեաւ՝ եթէ և յառաջագէմ ևս խաղացեալ՝ նոքա մօտ իւրեանց ունելով զոք արքայ ընիկ Մակեդոնացի և Ճոխ՝ (որ պէսի ոք Լիւսիմաքոսն էր) 'ի նորա կողմն կացցեն։ Ապա չուոյ հրաման տուեալ զօրուն՝ խաղայր դայր ընդդէմ Պիւռռոսի, իբրու որ յօտարաց ելցէ այն այր և Մակեդոնացւոց ատելի։ Իբրև անդ մօտ բանակ հարեալ նստաւ և Դեմետր, շատք ոմանք յայնժամ գնացեալ 'ի Պերրիայ 'ի բանակ անդր նորա, 'ի գովութիւն զՊիւռռոս առնուին՝ իբրու անպարտելի այր 'ի զէնս, և հոյակապ այր և շքեղ, և հեզ և մարդասէր առ նուաճեալսն։ Էին էին անդր և գաղտաբար արք ոմանք՝ առաքեալք 'ի Պիւռռոսէ, որ ասէին զանձինս Մակեդոնացիս դոլ. և թեղադիր ևս լինէին՝ իբրու 'ի դէպ ժամանակի յայնժամ թօթափիել զլուծ ծանր զԴեմետրեայ, և անցանել առ Պիւռռոս՝ իբրև առ ժողովրդական այր և զօրականին սիրող։

'Ի հրապուրից ասսի՝ բազումք այն էին որ 'ի բանակէն շուրջ ակնկառոյցք 'ի բանակ անդր Պիւռռոսի լինէին զօրականք. խըն-դրէին զնա յակն արկանել։ Իսկ էր յայն-ժամ Պիւռռոսի ըստ դիպաց 'ի բաց 'ի գլխոյն զսաղաւարտն առեալ, մինչև ապա 'ի միտս եկեալ՝ առեալ միւսանգամ դնէր 'ի գլուխն. և յայնժամ ճանաչէին զնա 'ի հոյակապ ցցունիցն և 'ի նոխազեան եղջե-բացն. ապա Մակեդոնացիք խուռն գի-մեալ առ նա խնդրէին նշան. և կէսք ոս-տովք կաղնւոյ առեալ բոլորէին զգլու-խըս. քանզի և այնպէս պատկաւորս տե-սանէին՝ զորս շուրջ զՊիւռռոսիւն. իսկ և կէսք դարձեալ ժոռեցան անդ ասել առ Դեմետր՝ մեծապէս խմաստնանալ նմա եթէ երբէք տեղի և հրաժեշտ տացէ յամե-նայնէն։ Ցեսեալ Դեմետրի՝ զի բանիցն նմա-նատիպ և շարժումն էր բանակին, զահի հարուս. Կաւսիաս 3 մի՝ արտախուրակ 'ի գլուխն արկեալ, և զանձամբ քղամիդ հնոտի՝ այնպէս մինչիկ ոտնխթի 'ի բաց եկա-նէր։ Ապա 'ի վերայ հասեալ Պիւռռոս՝ անարգել տիրանայր 'ի վերայ բանակին նորա, և քարոզեալ համբաւէր արքայ Մա-կեդոնիոյ։ Բայց անդանօր և Լիւսիմաքոս հասեալ, և Նիզակակից ևս զանձն 'ի նեբքս ընծայեալ 'ի պարտութեան Դեմետրի, բաժին խնդրէր զթագաւորութեանն. իսկ Պիւռռոս ողջ վստահ չև 'ի Մակեդոնացիսն եղեալ, յանձն առնու զԼիւսիմաքեայ խըն-դիրն. և այնպէս ապա զքաղաքսն և ող-

ջոյն զաշխարհն բաժանէին նոքա 'ի մէջ իւրեանց. երկոցուն ևս կողմանցն մեծապէս շահ, և դուլ և դադար առ 'ի մարտէն, այլ ոչ բազում ժամանակ. զի նոյն այն բաժանել չարդել խսպառ զթշնամութիւնն. նա՛ և պատճառք գլխովին լինէր կագին և գժտութեանն նոցա։

Քանզի չէ՛ և չէ՛ իսկ հնար, եթէ երբէք նոքա որոց ցանկութեան աւելաստացութեանն ոչ ծով ինքնին համ գնել բաւական եղև և ոչ լերանցն գօսիք և ոչ անապատք ամայիք, և որոց կիրք ոչինչ գրաւեալ պարանեսցին 'ի սահմանացն՝ որ զԵվրոպէ անջրպետեն և զԱսիա, եթէ երբէք այնպիսիք դրացիք միմեանց գոլով յանդորրու կացցեն, և երբէք այր զընկեր չզրկեսցէ. այլ 'ի հարկէ իմեքէ անդուլ մարտ եղեալ կռուեսցին նոքա անկակից առելութեամբ և դաւով. և ապա 'ի վար առնուն նոքա զանուանն զկրկին՝ զմարտին և զխաղաղութեան՝ իբրու արդարև դահեկանս ոմանս, ծախեալ զայնոսիկ ըստ դէպ ժամանակին յանձանց շահ՝ և ոչ յարդարութիւն։ Սակայն լաւ ևս նոքա էն՝ որ յայտնի 'ի մարտն պատրաստին, քան որք զդուլ և զդադար զանկրաւութեանն՝ արդարութիւն կոչեն և բարեկամութիւն։ Զսոյն յայտնի 'ի դէմս երբեր Պիւռռոս։

Քանզի անդրէն միւսանգամ յարուցեալ նա 'ի վերայ Դեմեորի՝ որ երթալով երթայր և զօրանայր, և հակառակ ամբարձեալ նորա զօրութեանն՝ որ իբրև 'ի դը-

ժուարին խօթուԹէ իմեՃնէ կաղդուրեալ՝ անդրէն կորովանայր, ձեռն էարկ Թի-
կունս Հելլենացւոցն տալ, և վասն այնորիկ եկն եմուտ նա յԱԹէնս։ Անդ եկեալ՝ի
դղեկին, և զոհ դիցուհւոյն զոհեալ, և՝ի նոյն օր դարձեալ իջեալ անտի՝ մեծա-
պէս գոհ ընդ մարդասիրուԹիւն ժողովրդեանն, ասէր այսպէս. Սակայն եԹէ ու-
շիմք իցեն Ա Թենացիք, զդոյշ երբէք լինի-
ցին մի՛ ևս ումեք՝ի Թագաւորաց բանալ
առաջի զդուրսն և մուտ՝ի քաղաքն տալ։
Զկնի այնորիկ հաշտուԹիւն արարեալ ընդ
Դեմետրի, այլ յետ սակաւուց՝ի գնալ
նորա յԱսիա, ինքնին Պիւռռոս հրապու-
րեալ՝ի Լիւսիմաքեայ՝ ապստամբեցուցա-
նէր՝ի նմանէ զԹեսաղիա. և մարտ ե-
դեալ կռուէր ընդ հելլենացի պահա-
նորդսն Դեմետրի. զի և քաջս առաւել
գտանէր զիւր Մակեդոնացիսն՝ի զինուո-
րուԹեանն, քան՝ի պարապորդուԹեանն.
զի և նորա ևս բոյս բարուցն երբէք ո՛չ գի-
տէր հանդարտել։

Իսկ Դեմետրիոս հուսկ ապա խորտա-
կեալ՝ի Սիւրիա, այնուհետև Լիւսիմա-
քոս ժամ գտեալ խաղայր՝ի վերայ Պիւռ-
ռոսի. և մինչ նա բանակ հարեալ նստէր
յԵդեսսա՝ անկեալ՝ի վերայ համբարոյն՝
որ գնայր անդր, և տիրեալ՝ նախ սովու
նեղէր զնա. ապա և նամականի տուեալ,
դարձեալ և՝ի ձեռն բանբերից յինքն յան-
դուցանէր զաւադս Մակեդոնացւոց. մեղ
դնէր՝ զի արքայ իւրեանց ժողովեցին զայր

օտարական, որ նախնիք ցանգ 'ի Ծառայ-
ութեան կացին Մակեդոնացւոց. իսկ զմե-
ծին Աղեքսանդրի զբարեկամն և զընտա-
նիս հանին վանեցին 'ի Մակեդոնիոյ։ Իբրև
բազումք ոմանք հրապուրեցան 'ի բանն,
զահի հարեալ Պիւռռոս եկ մեկնեցաւ
հանդերձ Եպիռացւովքն և նիզակակ-
ցօքն. և օրինակ զայն 'ի ձեռաց հանէր
զՄակեդոնիա, որով և 'ի բուռն արկ։
Ուստի և արքայից չէ արժան մեղադիր
ռամկին լինել, եթէ երբէք խլրտեսցին ինչ
նոքա 'ի շահ անձանցն. քանզի նմանողք
վարժապետացն լինին դրժանացն և մատ-
նութեանն, և համարին իմն այնպէս եթէ
շատ ինչ օգտի՝ որ սակաւս 'ի վար զարդա-
րութիւնն առնու։

Ապա յայնժամ մեկնեալ Պիւռռոսի
յԵպիռոս և թողեալ զՄակեդոնիա, էր
իսկ նմա առ 'ի բաղդէն նստեալ վայելել
յիւրսն՝ յանդորրու թագ կապեալ ան-
գանօր. այլ սակայն թուէր իմն նմա եթէ
աշխատ զայլս չառնել, և աշխատ յայլոց
չլինել, ժամավաճառութիւն ինչ տաղ-
տուկ. ըստ որում և Աքիլլէս ոչինչ հան-
գարտէր պարապորդութեանն. "Այլ
հիւծէր մաշէր 'ի սիրած յոգին՝ անգանօր
կալով մնալով, և ցանկայր գոռին և մարտի
պատերազմի" 4։ Ապա դէպ եղև ըղձին
Պիւռռոսի՝ օրինակ զայս զնորոց բուռն
հարկանել նահատակութեանց։

Զայնու ժամանակաւ մարտ եղեալ
կռուէին Հռոմայեցիք ընդ Տարանտինա-

ցոց. որոց և ոչ ժուժեալ մարտին կամ
երբէք վճարեալ ինչ առ գոռութեան և յո-
ռութեան սուտակասպասիցն խուժանին,
խորհուրդ հաստատէին զօրավար կարգեալ
իւրեանց զՊիւռռոս՝ 'ի նա ապատան ըզ-
մարտն առնել. քանզի և էր իսկ նա պա-
տրաստեալ յայնժամ 'ի Թագաւորս, միան-
գամայն և զօրավարաց ամենեցուն վեհա-
գոյն: Բայց 'ի քաղաքացեաց անտի արք հի-
նաւուրց և ուշիմք՝ կէսք ընդէմ դառնային
խորհրդոյն, սակայն և հարկաւորեալք
լռէին 'ի բռնութենէ աղաղակի ամբո-
խին. և կէսք տեղի տային 'ի ժողովոյն:
Իսկ անդ այր ոմն Մետոնին անուն՝ այր լաւ,
յորում աւուր սահմանեալ հանդերձեալ
էին զվճիռն, մինչդեռ անդ ժողովուրդք
նստեալ կային 'ի խորհրդեանն, պսակ մի
առեալ ջոր և Թառամ, և զամբար մի ըստ
արբեցելոցն սովորութեան, այնպէս ջո-
քաւ յեկեղեցի անդր՝ յառաջոյ իւր ունե-
լով վարձակ մի արնգահար: Անդանօր 'ի
բազմակոյտ խառնամբոխ խուժանին, կէսք
յայն տեսին սկսան ծափս և կայթս հար-
կանել, և կէսք դարձեալ 'ի քրքիջ հատա-
նել. և այր այր առհասարկ ուղի բացեալ
առաջի առն, ստիպէին ևս հարկանել վար-
ձակին, և երգել Մետոնին՝ անցեալ 'ի մէջ
անդր. մոադիւրագոյնս Մետոնին՝ իբրև յայն
պատճառս առհասարակ նոքա դարձան 'ի
լռութիւն՝ սկսաւ խօսել և ասէ. "Կա-
ցի գեղեցիկ դուք արք Տարանտինացիք
Թոյլ առնէք, զի որ խաղալն կամի-

ցի՝ որպէս արժանն է՝ և զբօսնուլ և կայ-
թել, չարգելուք։ Արդ եթէ ուշիմք ի՛ցէք,
առհասարակ ամենեքեան վայելեցէք գուք
յաղատութիւնդ՝ զոր ունիմքս աւադիկ.
քանզի այլ ինչ իրս արդեօք հասանիցէ
ձեզ գործել և այլ օրինակ վարել կեանս
և այլ քաղաքավարութիւն, յորժամ Պիւռ-
ռոս մուտ 'ի քաղաքս արասցէ ,, ։ 'Ի բանից
աստի շատք ոմանք 'ի Տարանտինացւոցն
հաւանէին և շնչիւն էր 'ի ժողովին իբրու
գովել զՄեռոմնին։ Բայց ոչք խիթային՝ 'ի
հաստատել խաղաղութեանն՝ անձնատուր
'ի Հռոմայեցիսն լինել, սկսան կշտամբել
զխուժանն՝ զի այնպէս հեզաբար տարաւ
ըբենի ոանհարութեանն և ժպրհութենն.
և ապա առհասարակ յարուցեալ արտաքս
վարէին զՄեռոմն։

Ապա կարգեալ զվճիռն՝ արձակէին
հրեշտակք պատարագօք յԵպիռոս ոչ 'ի
Տարանտինացւոց միայն, այլ և յԻտալա-
ցւոց անտի, ազգ առնել Պիւռռոսի՝ զի
հանձարեղ և քաջի զօրավարի պէտք են
նոցա. և զի՝ զօրաժողով մեծ 'ի գաւառաց
առ ձեռն կայ, բանակ կազմեալ 'ի Լևկա-
նացւոց և 'ի Մեսապացւոց և 'ի Սամնիա-
ցւոց և 'ի Տարանտինացւոց՝ այրուձի եր-
կուց բիւրուց, և հեռևակք՝ երեսուն և
հինգ բիւրուց։ Եւ ապա այս ազգումն ոչ
զՊիւռռոսին միայն ոգին վառեաց, այլ և
իղձ սաստիկ յորդեաց Եպիռացւոցն խա-
ղալ գնալ 'ի կռիւ մարտին։

Իսկ էր ղայնու ժամանակաւ Կինէաս

ոմն Թեսաղացի այր՝ զհամբաւի հարեալ այր քաջուշիմ և զգօն։ Սա այս կինէաս աշակերտ կացեալ Դեմոսթենեայ հռետորի, Թուէր իմն՝ միայն 'ի մէջ Ճարտասանից ժամանակին իբրու Ճշդիւտ պատկերաւ յուշ ածէլ լսողին զՃարտասարբանութիւն և զզօրութիւնն Դեմոսթենեայ։ Եւ բնակէր սա ընդ Պիւռռոսի, և 'ի նմանէ առաքեալ 'ի քաղաքս քաղաքս, Ճշդիւտէր զԵպիկիդեայ զնուադն, եթէ "Զամենայնն տապալէ քանդէ բանն, որչափ ինչ միանգամ զօրէ պողովատիկ թշնամւոյն"։ Եւ վկայէր ինքնին Պիւռռոս, եթէ շատ ևս 'ի քաղաքաց ժառանգեցոյց նմա կինէաս Ճարտարաբանութեամբն, քան եթէ ինքն զինու զարդուստի և մեծապէս պատուէր զնա, և ստէպ գործի 'ի ձեռն առնոյր զնա։

Արդ տեսեալ սա յայնժամ զՊիւռռոս պատրաստեալ խաղալ յԻտալիա, ժամ գտեալ զբուցէր ընդ նմա ասէր. "Քաջամարտիկք յոյժ են ոմ Պիւռռոս՝ որպէս ասեն՝ Հռովմայեցիք. և նուաճեալ ևս են ժողովուրդս բազումս հզօրս. և եթէ Աստուած ինքնին տացէ մեզ պարտել զնոսա, զի՞նչ շահ կայցէ մեզ 'ի յաղթութենէ անտի"։ Եւ պատասխանի Պիւռռոս և ասէ։ "Զյայտնեաց դու հարցումն առնես ոմ կինէաս. 'ի պարտութիւն մատնեալ Հռովմայեցիք, այնուհետև ոչ 'ի բարբարոսաց ոք և ոչ 'ի Հելլենացւոց քաղաք երբէք 'ի վէգ դայցէ ընդ մեզ. այլ անդէն

ողջ Զիտալիա 'ի բուռն կալցուք, որ մեծութեանն և զօրութեանն և տէրութեն անտեղեակ՝ թող այլ ոք մանաւանդ իցէ, քան թէ դու ինքնին "։ Անդ Կինէաս վայր մի մոախոհ, կրկնեաց և ասէ. "Այլ ապա Զիտալիա կալեալ մեր ով արքայ, զի՞նչ գործեսցուք "։ Ձև Պիւռռոս համբրէն 'ի վերայ կացեալ մոացն նորա, ասէր. "Անդանօր մերձ կայ Սիկիլիա՝ ձեռնտու զօրավիգն մեր, կղզի երանելի և բազմաժողով, զոր և հեշտին կալցուք մեք։ Քանզի և զարդիս՝ յորմէհետէ տեղի եւ անուն Ագաթոկղէս, ով Կինէաս, 'ի հերձուածս ամբաւ պաշարեալ նստի Սիկիլիա, և անիշխանութիւն է անդ քաղաքաց, և անդ ողջոյն թագաւորէ խորագիտութիւն հռետորացն խուժանին "։ Կրկնեաց Կինէաս և ասէ. "Եւ կարի իսկ քաջ են բանքդ. այլ կէտ նպատակի զինուորութեանս մերոյ՝ իցէ՞ թերևս առնուլ Սիկիլիոյ "։ Պիւռռոս ասէ. "Տացէ մեզ Աստուած ինքնին յաղթութիւն և եկ գեղեցիկ. և ապա Սիկիլիոյ առնուլ՝ նախամարտութիւն մեծաց նահատակութեանցն իցէ՝ զոր ապա նահատակեսցուք մեք։ Քանզի ոք այնուհետև հանդուրժել բաւական իցէ ոչ անցանել անդուստ 'ի Լիբիա և 'ի Կարքեդոն՝ որ այնչափ մօտ կայ. զոր և ինքնին Ագաթոկղէս գոգցես հասեալ կալաւ, գաղտագնաց 'ի Սիրակուսացւոց անցեալ հատեալ սակաւ նաւուք զծովդ։ Իսկ յորժամ այնց վայրացն տիրացուք, երբէք ո՞

ոք այնուհետև ասասցէ՝ եթէ զդէմ մեր կալցեն թշնամիքդ որ այժմդ չարչարեն զմեզ"։ Եւ պատասխանի կինէաս և ասէ. "Եւ ո՛չ ոք արդեօք. քանզի յայտնի իսկ՝ մեծապէս զօրութեամբ կալցուք մեք միասանգամ զՄակեդոնիա, և յանդորրու տիրասցուք ոչիոն Եղլադայ։ Այլ յաջողեալ մեր յայսոսիկ, զի՞նչ և յետ այնորիկ ասասցուք մեք"։ Յայնժամ Պիւռռոս ժըպտեալ, ասէր. "Կացցուք 'ի մեծի յանդորրու, ո՛վ երանելի. քամեալ անապակին զօրհանապաղ եղեցի մեր, և 'ի սփոփութիւնս կենակից կենցաղակից այր ընդ ընկերի եղեցուք մեք"։ Իսկ իբրև բան 'ի բանէ ցայն վայր ածեալ եբեր նա զՊիւռռոս, ապա ասէր Կինէաս. "Եւ զի՞նչ. զի՞նչ ապա արդեւոցու մեզ զարդիս անցուցանել զաւուրս՝ եթէ կամիցիս՝ յարբու�և 'ի քամեալ անապակին, և 'ի մեծի յանդորրու կենակից կենցաղակից գոլ միմեանց. յորժամ մեզ ինքնին անքիրան աւադիկ առ ձեռն կայցեն իրքդ. զոր 'ի պատրաստել՝ հասանէ մեզ աւադիկ թաթաւեալ յապաժոյժ արեանց, և ընդ քիրան դալ և ընդ ապաւառ և ընդ վտանգս, և դործեալ ամբաւս 'ի դժնդակաց և կրեալ ամբաւս"։ Եւ ապա այս բանիւք վիշտ անհնարին Պիւռռոսի հասուցանէր Կինէաս, քան եթէ 'ի բաց զնա 'ի խորհրդոցն քեցէր. քանզի անգուալ յայնժամ մոռանոհ լինէր Պիւռռոս, քանիսն երանութեանց հրաժեշտ հասանէր տալ նմա. սակայն և 'ի տար-

փալի յուսոյն իւրմէ ուժգինս ձգեալ բերէր յայնժամ այրն։

Ապա առաջին առեալ արձակեաց զԿիւնէաս առ Տարանտինայիս հանդերձ երեք հազար զօրականօք. և յետ այնորիկ տայր բերել 'ի Տարանտեայ նաւս բազումս ձիաբարձս. և նաւս գարձեալ յարկածածուկս, և զազգ ազգ նոսացս բեռնաբարձից. և առեալ կարգէր 'ի նոսա փիղս քսան, այրուձի երեքհազար, հետևակս երկուց բիւրուց, ալեղնաւորս երկու հազար, և պարսաւորս հինգհարիւր։

Եւ այսպէս կազմ տուեալ ամենայնին՝ անկանէր յուղի. սակայն 'ի մէջն հասեալ Յոնիոյ՝ խուճապեալ պաշարէր 'ի հիւսին բռնութենէ, որ ուժգինս շնչեալ արտաքոյ ժամանակին՝ ձգեալ ընդ իւր վարէր զնաւսն։ Եւ թէպէտև բուռն և սաստիկ էր հողմն, ինքն 'ի քաջութենէ նաւաստեացն և ղեկավարացն՝ հատանէր անցանէր զօրութեամբ և մօտէր 'ի ցամաքն մեծաւ աշխատութեամբ։ Իսկ այլք 'ի նաւացն որոշեալք 'ի միմեանց՝ յայսկոյս յայնկոյս ցանեալք ցրուէցան. կէսք վարեալք տարադէմ 'ի ծով Լիբիոյ և 'ի Սիկիլիոյ՝ ոչինչ կարացեալ ունել զԻտալիա. և կէսք դարձեալ ոչինչ բաւականք զդէմ ունել հրուանդանին Յասիւգեայ՝ պատեալք 'ի մութ գիշերոյն՝ հարեալք ծփայլին յամեհի կոհակացն ծովուն 'ի խրուտս ինն և 'ի վայրս ծանծաղս. և առ հասարակ ամենայնն հարեալք և հարուածեալք՝ բայց յարբու-

նի նաւէն՝ ուր կայր ինքնին Պիւռռոս՝ որ-
պէս ասացաք. որ և 'ի ծովէն բաղխեալ
կայր յակատանի, իբրև յաղթ էր և քա-
ջամուր և ժուժայր բերէր բռնութեանն.
սակայն շնչեալ 'ի նա հողմոյն՝ որ 'ի ցա-
մաքէն, տագնապեցաւ և նա քայքայիլ 'ի
բռնութենէ ահագին ալեացն բախեալ
առաջակողմն նաւուն: Եւ քանզի թողուլ
միւսանգամ 'ի ծովն վայրենացեալ և 'ի
թափ հողմոյն շնչելոյ բազմօրինակ և փո-
փոխ՝ յոյժ ահագին էին կիրք, անդէն
վաղեալ Պիւռռոս 'ի ծով անդր արկանէր
զանձն, 'ի նոյն և բարեկամք և անձնապա-
հապէտք ընդ նմա. և անդ 'ի ջուրսն այր
զարամբ 'ի խուճապ տագնապին խնդրէին
ձեռն տալ նմա. սակայն և յաղջամուղջ
գիշերոյն և 'ի կոհակացն յահագին գոչ-
մանէն և 'ի սաստիկ խորտակելոյ ալեացն՝
կարի դժնդակ էր զօրավիգն. մինչև 'ի լու-
սանալ աւուրն և 'ի դադարել հողմոյն՝ հա-
զիւ ուրեմն հասանէր ունէր նա զցամաքն.
Թէպէտ և վատեալ յոյժ մարմինն՝ այլ
անվկանդ և կորովի ոգին 'ի կիրս ամբաւ
աղէտիցն: Անդ Մեսապացիք յորոց յա-
փունսն անկաւ Պիւռռոս՝ փութապէս ըն-
թացեալ ձեռն տային ըստ ժամուն պի-
տոյից, որպէս և այլոց ևս նաւացն ապրե-
ցելոց. յորս և նուաղունք յերիվարաց,
հեռևակք իբրև երկու հազար, և փիղք
երկու միայն: Զսակաւաձեռն զայն գունդ
առեալ Պիւռռոս՝ անկաւ յուղի 'ի Տա-
ռանտոն:

Լուր առեալ Կինէասայ՝ հանդերձ զբոլն ընդ առաջ խաղաց Պիւռռոսի. և այնպէս մոռեալ 'ի քաղաքն, ոչինչ բռնանայր և ոչ դժկամակս ինչ Տարանտինացւոցն գործէր, մինչև ապրեալք հասին Նորա նաւք և 'ի մի խմբէր զբոլն բազմագոյն մասամբ։ Եւ ապա տեսեալ Պիւռռոս, զի մինչև 'ի մեծէ բռնութենէն ստիպեալ Տարանտինացւոց՝ ոչինչ յաջողեացին նոքա ոչ յանձանցն փրկութիւն և ոչ յայլոցն, այլ իբրու որք յանդորր եղեալք 'ի նահատակութենէն Նորա, ինքեանք դադարեալ կային 'ի տունս՝ պարապեալք զբօսանաց 'ի բաղանիս և յակումբս բազմականին, տայր ապա Պիւռռոս կնքել փակել զասպարէզս նոցա և զՃեմ մելիսն՝ ուր Ճեմ առեալք զբրուցէին տարապարտս այր այր իբրու զբրավարք ոմանք զմրցանաց մարտին. արգել կնքեաց և զդիմեալբուս նոցա, և զևնՃոյս կայթիցն, և զդժպատեհ սփոփութիւնսն. և ձայն տուեալ կարդաց զնոսա 'ի զէն և 'ի զարդ, և խիստ և անողոքելի գտանէր նա յայնժամ 'ի համար զօրաժողովին. որպէս զի և շատք եղեալ մեկնեցան 'ի քաղաքէն, զի և բնաւորեալ չէին՝ եթէ ոք հրամայեսցէ նոցա, և ծառայութիւն ասէին՝ եթէ ոչ ըստ կամի վարէին կեանս։

Իակ իբրև լուր հասանէր առ Պիւռռոս, եթէ Լեվինոս հիւպատոս Հռոմայեցւոց դիմեալ գայ ընդդէմ զօրու ծանու և քանդէ աւերէ զԼեվանիա. թէպէտ և նիզակակիցքն չև էին հասեալ, դժպատեհ հա-

մարեցաւ՝ դէգերել մինչև 'ի մօտել Թշնա-
մեացն. եկ արտաքս իւրովք զօրականօքն.
քարոզ մի առեալ յղէր յառաջոյ առ
Հռովմայեցիս, ասել եթէ հաճոյ լիցէ նո-
ցա մինչև գրգռեալ մարտին՝ դաշինս կռել
ընդ այլոց Խռալացւոցն, զինքն ունելով
դատաւոր և միջնորդ։ Իբրև պատասխանի
տայր Լեվինոս, եթէ երբէք Հռոմայեցիք
չկարդեցին զՊիւռռոս 'ի միջնորդ, դար-
ձեալ՝ և չերկեան ինչ 'ի նորա Թշնամու-
թենէն, յառաջ խաղաց Պիւռռոս և է-
կեալ բանակ հարկանէր 'ի դաշտին ընդ
մէջ Պանտոսեայ և Երակլեայ։ Անդանօր
լուր առեալ եթէ մօտ կան Հռոմայեցիք՝
բանակեալ յայնկոյս գետոյն Սիրեայ,
մերձ 'ի գետ անդր գայր յերիվար աշտա-
նակեալ 'ի զնին կալ Թշնամեացն. տե-
սեալ զդասաւորութիւնն և զպատկերաց
զդուշութիւնն և զդեղեցիկ զկարգն և համ-
բուն զզօրուն ճակատ, հիացեալ Պիւռ-
ռոս՝ դարձաւ առ որ 'ի բարեկամացն մերձն
կայր, ասէր. "Դա՛ այդ դասաւորութեան
կարգ բարբարոսացդ ո՞վ Մեգակղէ, չէ՞
բարբարոսական. այլ տեսցուք զարդիւնս
գործոց դոցա"։ Եւ անդ հոգ մեծապէս
զՀանդերձելոցն կալեալ՝ խորհէր մնալ նի-
զակակցացն, և հանէր կարգէր առ ափամբ
գետոյն պարեկապանս 'ի քաջաց. զի թէ
երբէք կանուխ զգետն անցցեն Հռոմայե-
ցիք՝ ընկրկեսցեն զնոսա։

Բայց անդուստ Հռոմայեցիք աճապա-
րեալք քան զակնկալութիւնն Պիւռռոսի,

պատրաստեցան անցանել. հետևակք ընդ հունն, և այրուձին աստ անդ 'ի վայրաց վայրաց խուժեցան ընդ գետն. ուստի և Հելլենացւոց պահակք զանդիտեալք եթէ 'ի նեղքս փակեսցին, տեղի տուեալ գնային: Լուր առ Պիւռռոս հասեալ՝ 'ի շտապ տագնապի հրաման տայր զօրագլխաց հետևակին վաղվաղակի կարգ տալ զօրուն, և կազմ ճնալ հրամանին նորա: Եւ ինքն հանդերձ երեքհազարեան այրուձիովն յառաջ խաղայր. ակն ունէր արհաւիրս ըզհռոմայեցւովքն արկանել 'ի վարատական անցան: Բայց առ ափամբն յակն արկեալ նա զփայլուն բազմախուռն վահանաց, դարձեալ՝ զի և կարգ առ կարգ գեղեցիկ այրուձին այնպէս ընդդէմ նորա խաղայր, խիտ առ խիտ խմբեալ զիւրան՝ այնպէս ինքն առաջին նահատակեցաւ 'ի Թշնամիս անդր. և որպէս ականաւոր և երևելի Պիւռռոս 'ի գեղ և 'ի շողիւն հրաշալարդ զինուցն, սակայն և նահատակութեամբն ոչ ինչ նուազեալ լինէր առ ետեղ 'ի գեղեցիկ համբաւոյն, ճիգն մեծաճիգն թափեալ մարտ դնել կռուել կորովի բազկօք և քաջապէս վանել ընկրկել զախոյեանն. առ այս և անշփոթ զառաջնորդականն կալեալ անվթար ուշիւ մտացն, այնպէս գեղեցիկ իբրու բնաւ իսկ անդրժելի 'ի վտանգաց՝ տանէր բերէր զգոռ մարտին. ընթանայր վազէր առհասարակ, և ձեռն տայր ընդդէմ բռնութեան թշնամեացն:

Յայնմ մեծի տագնապի գէտակն 'ի վեր

ամբառնայր Լէոնատոս Մակեդոնացի, տեսանէր զոմն Յիտալացւոց անտի՝ զի ուշ անքթիթ կալեալ մնայր Պիւռռոսի, և անդուլ 'ի նա կոյս զերիվարն մորակեալ՝ փոխէր շարժէր զուգահետ Պիւռռոսի, ձայն տուեալ նմա՝ ասէր. "Տեսանե՞ս ո՞վ արքայ զբարբարոսդ 'ի սեաւն աշտանակեալ ձի և 'ի ձերմակոսն. անշուշտ դա՛ մեծ ինչ և ահաւոր 'ի միտն յուզէ, 'ի քեզ ինքնդ միայն դէտակն կալեալ և քո 'ի հանգիպոյ ցանդ արձանացեալ խաղայ՝ զայրագին լի՛ քաջութեամբ՝ զայլովքն զանց արարեալ։ Բայց դու յառնէդ պահ կալցես անձինդ"։ Եւ պատասխանի Պիւռռոս և ասէ. "Յօրհասէն ո՞վ Լէոնատէ փախչել չի՛ք հնար. սակայն ո՛չ դա և ո՛չ այլ ոք Յիտալացւոց ո՛չ խնդասցէ՝ 'ի վեգ ընդ մեզ եկեալ"։ Այն ինչ նոցա բանքն 'ի բերան էին, անդուստ Իտալացին զտէգն ճօճեալ և երիվարին ճախր տուեալ՝ թափ արձակէր ընդդէմ Պիւռռոսի. և այնպէս միահետ հարեալ խոցէր նա զերիվար արքային, և Լէոնատէս զերիվար նորա։ Իբրև երկոցուն երիվարք տապաստ անկանէին, շուրջ բարեկամացն վազեալ՝ զՊիւռռոս ապրեցուցեալ 'ի բաց հանէին. և Իտալացին 'ի կռուել իւրում անդէն դիտապաստ անկանէր։ Էր սա ազգաւ Փրենտացի զօրապետ մոյ գնդի, Ոպլակոս անուն նորա։

Իսկ յայնմանէ մեծ ևս զգուշութիւն իւրում անձինն առնէր Պիւռռոս. և տեսեալ զայրուձին տեղի տալ՝ յառաջ զվա-

ղանգն կոչէր և Ճակատ յարդարէր։ Ապա զիւր քղամիդն և զղէնսն՝ Մեգակղեայ տուեալ բարեկամին, և զնորայսն ինքն առեալ, այնպէս քօղարկեալ հարկանէր 'ի դիմի Հռոմայեցւոցն. իսկ նոքա քաջապէս 'ի կռիւ ելեալք զդէմ ունէին, զի և հարուատ մի ժամանակ այնպէս անվՃար լինէր մարտն. և պատմէին ևս՝ Եթէ և երկոքին կողմանք եօթն անգամ քա՛ջ քա՛ջ 'ի փախուստ դարձան, և նոյնչափ դարձեալ հետամուտք հալածեցին։ Եւ թէպէտ և 'ի Ճահ զինուցն փոփոփեալ արքային՝ պատՃառք նորա փրկուեթեանն լինէր, վայրիկ մի ևս յայնմանէն խանգարեալ եղծանէր առհասարակ ամենայն և 'ի դերևս յաղթութիւնն ելանէր։ Քանզի շատք ոմանք յայնժամ յարձակեալք 'ի Մեգակղէս, մի ոմն անուն Դէսոս՝ առաջին հարեալ սպանանէր զնա. և զսաղուսարտն և զքղամիդն կապեալ 'ի նմանէ՝ մորակ 'ի կուշտ ձիաւորեալ առ Լեվինոս՝ ցուցանէր շքով ըզկապուտն. ձայն բարձեալ ասէր սպանեալ զՊիւռռոս։ Մինչդեռ այն կապուտ շուրջ 'ի դասս զօրականին յերևան գայր՝ 'ի ձայն ցնծութեան ուրախացեալ Հռոմայեցիք աղաղակ բառնային. իսկ անդուստ Հելլենացիք սրտաբեկք սրտառուչք 'ի սուգ թաղծութեան համակեցան։ Ազդ եղեալ Պիւռռոսի՝ անդէն զդէմն առեալ մերկանայր և յերիվար աշտանակեալ ընթանայր շուրջ զբանակաւն. ձեռս շարժեալ տատանէր առ մարտիկսն, և 'ի ձայնէն դար-

ձեալ ծանօթս տայր աձինն։ Ապա 'ի վերջէ 'ի գաղանաց անտի յաւէտ ինն բա-
խեալ ընդոտնեալ Հռոմայեցիք և նոցուն
երիվարք, մինչև 'ի վերայ խուժեալ փը-
ղացն՝ ոչինչ հանդարտեալք և խառն 'ի
խուռն ասա և անդ ահաբեկք յախոյե-
նիցն, մինչ այս մինչ այն առհասարակ ամ-
բոխ շփոթից յուզեալ 'ի նոսա, 'ի վերայ
անկանէր Պիւռռոս այրուձիովն թեսա-
ղացւոց, և 'ի փախուստ դարձուցեալ՝ հա-
րուածս մեծամեծս ածէր 'ի վերայ նոցա։

Ադդիոնիւսիոս պատմէ՝ իբրև բիւրուց
և հնգից հազարաց Հռոմայեցւոց անկեալ
անդէն 'ի մարտին. այլ Երոմնիմոս ասէ՝
եօթն հազարաց միայն։ Իսկ 'ի Պիւռռո-
սեանց՝ Դիոնիւսիոս ասէ՝ մեռեալս երեք-
տասան հազար. իսկ Երոմնիմոս՝ և ոչ չորս
հազար. սակայն էին նոքա լաւ և քաջ ո-
րեար 'ի բարեկամաց անտի Պիւռռոսի և 'ի
զօրավարացն՝ պիտանիք նմա և հաւատա-
րիմք յոյժ։ Բայց հասեալ կալաւ Պիւռ-
ռոս և զբանակ Հռոմայեցւոցն զոր լքին
նոքա. և քաղաքս ևս յայնժամ յինքն յան-
գուցանէր 'ի դաշնաւորացն, և աւերէր
քանդէր շատ ինչ 'ի գաւառէն, յառաջա-
գէմ խաղացեալ՝ 'ի Հռովմայ ոչինչ 'ի բա-
ցեայ աւելի քան երեքհարիւր ասպարէզս։
Ապա յետ մարտին եկեալ հասանէին
անդր Լևկացիք և Սաւնիացիք, որոց և 'ի
գէմն հարկանէր նոցա զդանդաղէլն. սա-
կայն և խնդացեալ յոյժ էր Պիւռռոս՝ զի
միայն տարանտինացի գնդաւն և իւրովքն

զսուտաբ զայն բանակ զՀռոմայեցւոցն ե-
հար խորտակեաց։

Բայց Հռոմայեցիք յայնժամ ոչ 'ի բաց
առին զզօրավարութիւնն 'ի Լեվինոսէ.
թէպէտ և պատմեն՝ ասել Դայիոսի Փա-
բրիկիոսի, եթէ ոչ Հռոմայեցիք ինչ յԵ-
պիռացւոց անտի՝ այլ ինքնին Լեվինոս
պարտեցաւ 'ի Պիւռռոսէ, ոչ զօրականին
գրեալ զՀարուածն՝ այլ զօրավարին նո-
ցա։ Անդէն ապա զօրաժողով նոր 'ի հան-
դէս արկեալ նոցա, և հոչակ հարեալ
յանձնապաստան և անզարհուրելի վասն
մարտին այնորիկ՝ պրոսթափ առնէին ըզ-
Պիւռռոս. որում և հաճոյ թուեցաւ յայն-
ժամ՝ առաջին ինքն առաքել առ Հռո-
մայեցիս 'ի պայմանս հաշտութեան. զմտաւ
ածէր՝ զի առնուլ քաղաքին և ոչ զոյն դրա-
ւել՝ ոչինչ գուշնաքեայ ելցէ նահատակու-
թիւնն. և ոչ դարձեալ առ ձեռն զօրա-
կանաքն վճարեսցին ինչ իրքն. առ այս՝ զի
և հաշտութիւն կռել և բարեկամութիւն
հաստել յետ յաղթութեանն՝ մեծ ևս ըզ-
համբաւի հարցէ զնա։

Ապա առաքեալ առ նոսա Կինէաս՝
երթեալ խօսս 'ի մէջ առնոյր ընդ աւագս
քաղաքին. և ամենեցուն նոցա՝ դարձեալ
և կանանց նոցա՝ առեալ պատարագս 'ի
նեղբս մատուցանէր յանուն արքային. այլ
առնոյր և ոչ ոք 'ի նոցանէն զպարգևսն. և
առհասարակ նոքա և կանայք նոցա պա-
տասխանի առնէին, եթէ 'ի հասարակաց
հաստել խաղաղութեն, ապա և ինքեանք

առանձինն յօժարեսցին 'ի կամս արքային։ Իսկ յատենաբանութեան անդ իւրում Կինէաս 'ի ծերակուտին՝ շատ ինչ մարդասիրութեամբ խօսեալ և բանս բարեաց և հաւանականս, ոչինչ մոռացիւրացոյնս լսելի լինէր. Թէպէտ և խոստումն ևս 'ի ներքս բերէր՝ արձակել Պիւռռոսի առանց փրկանաց զգերին, և նիզակակից ևս Հռոմայեցւոց՝ ընդ նոցա ձեռամբ ողջոյն նուաճել զԻտալիա, և 'ի դարձ փոխարինին միայն զնոցա բարեկամութիւնն խնդրել, և զՏարանտինացւոցն անդորրութիւն։ Սակայն էին անդ և բազումք 'ի հաշտութիւն անդր հակամիտեալք յայտնապէս յետ պարտութեանն 'ի մեծի պատերազմին. առայս՝ զի և խիթային ևս միւսանգամ հարուած առնուլ 'ի մեծէ ևս բանակէ. քանզի և յԻտալացւոց անսի նորոգ խմբեցան ընդ Պիւռռոսի։

Յայնժամ Կղաւդիոս Ապպիոս՝ այր հոյակապ, որ 'ի ծերութենէն և առ կուրութեանն տեղի տուեալ 'ի քաղաքին գործոց՝ մենայեալ նստէր, լուր առեալ զառաջարկութեան արքային և զհակամտել առ նա ծերակուտին, չհանդուրժեալ՝ հրաման տայր ծառայիցն շալակաւ ածել զինքն մինչև 'ի ծերակոյտ անդր՝ անցեալ ընդ մէջ հրապարակին։ Իբրև 'ի դուրսն հասանէր Ապպիոս, անդ որդիք նորա և փեսայքն ժողովեալ զնա՝ մուծանէին 'ի ներքս. իսկ ծերակոյտն 'ի շուք աւադ առն 'ի լռութիւն դառնայր. ապա խօսել սկսաւ

Ապպիոս և ասէ. «Զառաջինն էս ոմ Հռովմայեցիք՝ վերաբերեալ մեծաբերբէի զաղէտս զոհեսանելեացս, այլ զարդիս ցաւէ ինձ՝ զի կոյր գոլով իմ, չեմ և խուլ. այլ լսեմ էս զանարդաբար ձեր զխորհուրդն և զվճիռն՝ աղարտեալ եղծանեալ զՀռովմայ զփառան։ Ո՞ւր արդ պարծանքդ իցեն՝ հռչակ առ հասարակ հարեալ առ մարդիկ, որով մեծամեծս կոտորէիք ասել՝ եթէ յԻտալիա երբէք մեծին Մեսալ էր Աղեքսանդրի և մարտ ընդ մեզ ընդ պատանեացս եղեալ և ընդ մերն նախնիս 'ի ծաղկի հասակին նոցա, արդեաք չէր նորա իբրև անպարտելի զհամբաւի հարեալ. այլ կամ փախստեայ կամ ասոէն դիտապատ, շքեղ էս զմերն յարդարէր Հռովմ։ Արդ յայանի 'ի դէմս բերէք, զի ողջոյն մեծաբանք անուտեաց և կոկոզանք էին՝ որ յայնժամ բանքդ։ Դուք որ զահի հարեալ կայք 'ի Քայոնացւոց և 'ի Մոլոսացւոց. ժողովուրդ՝ որ 'ի հանապազորեայ յաւարի կան Մակեդոնացւոց, և զդողանի հարեալք 'ի Պիւռռոսէ՝ որ զկեանսն մաշեաց ապաս հարկանել միւսմ ուսեալ 'ի Թիկնապահաց Աղեքսանդրի, և զարդիս Թափառեալ շրջի դա ընդ Իտալիա, քան 'ի զբաւիղն Հելլենացւոց որ ասա՝ առաւել էս փախստեայ 'ի Թշնամեացն որ անդ. խոստումն կռեալ՝ մեծ էս Ժառանգեցուցանել մեզ տէրութիւն 'ի ձեռն զօրականին՝ որով և ոչ մասն գուշնաքեայ զՄակեդոնիոյ բաւական եղև պահել վասն իւր։

Մի՞ ինչ կարծեսջիք բարեկամ՞ զդա ունե-
լով՝ աղատանալ՝ ի նմանէ. նա՛ կացէք մնա-
ցէք՝ ի ձեզ յարձակմանն՝ որոց արհամար-
հեցին զձեզ՝ իբրև ժողովուրդ դիւրավա-
նելի, եթէ Պիւռռոս ասսի՝ ի բաց գնասցէ
ոչ անպատուհաս միայն վասն հարստահա-
րութեանցն, այլ և զՏարանտինացիս գԸլ-
խովին և զՍաւնիացիս տարեալ մրցանակ՝
զի խաղ արարին զՀռոմայեցւովք"։

՝Ի բանից ասսի Ապպիոսի գրգեալ Հռով-
մայեցիք՝ ի կռիւ մարսի, առեալ՝ ի բաց
արձակէին զԿինէաս՝ պատասխանի արա-
րեալ զայս ինչ. եթէ՝ մինչև՝ ի բաց յԻ-
տալիոյ երթեալ Պիւռռոսի, մի՞ ինչ դա
աշխատ լինի վասն առ միմեանս բարեկա-
մութեանն. այլ մինչ դա զինու զարդու
ասսա դեգերեալ կայ, անդուլ Հռոմայե-
ցիք մարտ եդեալ կռուէսցին ոգւով չափ,
Թէպէտ և Լեվինոսս բիւրս՝ ի մարտին պար-
տեսցէ։ Եւ պատմեն՝ եթէ Կինէաս ան-
դանօր յաւուրս հրեշտակութեանն մանր
դէտակն կալեալ զիներ զքաղաքականու-
թիւն զՀռոմայեցւոցն և քիներ խմանայր
զկարգն նոցա. և կենակից աւագացն է-
ղեալ և համարէն՝ ի վերայ կացեալ, ապա
բաց յայլոցն բանիցն՝ ասէր առ Պիւռռոս.
եթէ՝ ծերակոյտդ ինքնին խումբ իմն թուէր
նմա աղքայից բաղմաց. և զի՝ առ բազմու-
թեամբ մարգկանն՝ թերևս ընդ Լերնեանն
Հիդրայի ինքեանք մարտ եդեալ կռուէս-
ցին. քանզի և բանակ ստուար կրկին քան
զառաջինն զօրաժողով արարեալ իսկ է

հիւպատոսին. և զի՝ Հռոմայեցիք յոգնաթիւք յաջողակք 'ի զէնս՝ և շատ ևս այլ յայսպիսեաց կազմեսցեն բանակաց։

Ապա յետ այսորիկ դային դեսպանք առ Պիւռռոս խօսել վասն դերեւոյն. էր ընդ նոսա և Գայիոս Փաբրիկիոս, զորմէ ազգեալ իսկ էր Կինէաս՝ յոյժ մեծապէս շուք նմա գնել Հռոմայեցւոց՝ իբրու լաւի առն և քաջի զօրավարի, թէպէտ և աղքատ յոյժ։ Արդ Պիւռռոս՝ մանաւոր ցուցեալ մարդասիրութիւն զամենայն առ Փաբրիկիոս, գուն գործէր հաւանեցուցանել զնա՝ առնուլ մթերս զոսկւոյ ոչ 'ի գժպատեհս ինչ՝ այլ 'ի նշան հիւրամեծար բարեկամութեան. իբրև Փաբրիկիոս չառնոյր յանձն զպարգևսն, լռեաց առ ժամն Պիւռռոս. այլ յաւուրն երկրորդի՝ ահ իմն խնդրեալ արկանել նմա՝ գիտելով չափ՝ զի փիղ տեսեալ բնաւ չէիք նորա, հրաման տայր՝ 'ի խօսել նոցա ընդ միմեանս՝ զահագինն 'ի գաղանաց անտի սպառազէն վառեալ՝ ունել 'ի ծածուկ յետոյ վասաւատին։ Այսորիկ այսպէս եղելոյ, տայր ապա նշան Պիւռռոս՝ և 'ի բաց զվոտաւատն ձգեալ, անդէն զպատիճն 'ի վեր առեալ գաղանին՝ առնոյր ածէր զդլխոնն Փաբրիկիոսի, ձայն արձակեալ՝ պոռոտէր ահեղ և սոսկալի։ Փաբրիկիոս հանդարտ և հեզ յետս զակն դարձուցեալ և մանր ժպտեալ՝ ասէր առ Պիւռռոս. "Ո՛չ երեկ ոսկիդ շարժեաց զիս, և ոչ այսօր գաղանդ"։

Ապա 'ի կոչունս ընթրեացն բազմորի-

նակ անկեալ զբանիւք, և յաւէտ ի՛մն վասն Եղեգայ և վասն խմաստասիրացն, դէպ լինէր Կինէասայ յուշ զԵպիկուրոս ածել և զբանս զաղանդոյն զայնորիկ վասն դիցն և վասն քաղաքականին. և զի՝ զծայրագոյնն ունին դոքա 'ի հեշտութեան, և 'ի գործոց խոյս տան քաղաքին՝ իբրու որ աղարտիչք և խռովիչք երանութեանն լցեն. և զաստուածակողմինն գլխովին օտարացուցանեն նոքա 'ի շնորհաբաշխութեանց և 'ի ցասմանէն և 'ի խնամոցն առ մեզ, և կեանս տան նոցա ողջ անգործ և բերկրապատար: Մինչդեռ նա տակաւին խօսէր, Փաբրիկիոս ձայն բարձեալ ասէր. "Բա՛ռէ Հերակլէս, Թո՛ղ Պիւռռոս և Սաւնիացիք ձեռն տացեն վարդապետութեանդ՝ ցոր վայր մարտ եդեալ կռուին ընդ մեզ": Հիացեալ Պիւռռոս ընդ գեղեցիկ խորհուրդս մտացն Փաբրիկէայ և ընդ պերճութիւն անձինն, քան զմարտ պատերազմին՝ սաստիկ ևս ըղձայր բարեկամութիւն սերտել ընդ քաղաքին նորա. և 'ի կողմն մի ածեալ զնա 'ի բանի առնէր՝ 'ի խաղաղել իրացն գալ բնակել ընդ նմա առաջին 'ի սիրելիս և 'ի զօրավարս նորա: Առ այս՝ ասեն՝ 'ի ցած պատասխանի զայս առնել Փաբրիկէայ. "Ա՛յլ ո՛չ օգուտ քեզ՝ ո՛վ արքայ՝ եղիցի բանդ. զի որ այժմդ պատուեն զքեզ և առ քեզ յակնիս կան, յորժամ և զիմ առցեն զփորձ՝ անշուշտ քան զքեզ՝ առաւել զիս ինքն ինդրեսցեն իւրեանց թագաւոր": Այսպիսի ոք Փաբրիկիոսն էր:

Ա՛յլ Պիւռռոս ո՛չ ցանոյր իբրև բռնաւոր ընդ բանն. նա՛ առաջի բարեկամացն գովէր զմեծութիւն ոգւոյն Փաբրիկեայ, և 'ի նա միայն հաւատայր զգերին. զի թէ երբէք Սինկղիտոսն ոչինչ հաճեսցի ընդ հաշտութիւնն, դարձուսցեն զնոսա առ ինքն՝ յետ համբուրի ողջունի ազգականացն, և յետ կատարելոյ Կռոնոսեան տօնիցն, զոր և արարին իսկ նոքա յետ տօնին. դատակնիք մահու ինքնին Սինկղիտոսն 'ի վերայ ածեալ՝ որ միանգամ ո՛չ դարձցի առ Պիւռռոս։

Զկնի այսորիկ Փաբրիկիոս անցեալ 'ի բարձ իշխանութեանն, հրեշտակ մի հասանէր առ նա 'ի բանակին նամակ մի բերեալ նմա 'ի բժշկապետէն Պիւռռոսի. յորում և խոստանայր նա գեղ մահու արբուցանել արքային՝ եթէ վարձ գեղեցիկ տացեն նմա Հռոմայեցիք. և այնպէս հեշտին ապրեցուցանել զնոսա 'ի կռուոյն։ Ա՛յլ Փաբրիկիոս զայրագին լի՝ բարկութեամբ խոժոռեալ ընդ եղեռն առնն, և 'ի նոյն զիշխանակիցն ձգեալ, անդէն նամականի տայր առ Պիւռռոս՝ ազդ առնէր պահ անձին ունել 'ի դաւոյն, օրինակ զայս. "Գայիոս Փաբրիկիոս և Կուինտոս Եմիւլիոս հիւպատոսք Հռոմայեցւոց, առ արքայ Պիւռռոս՝ խնդալ։ Թուի իմն այնպէս, եթէ քո ոչինչ յաջողեալ իցէ հաւաստի քննութեամբ 'ի վերայ կալ՝ ո՛չ բարեկամացն քոց և ոչ թշնամեաց։ Արդ ընթերցեալ քո զնամականիդ առաքեալ առ

մեզ, համբրէն 'ի վերայ կայցես՝ զի մարտ եղեալ կռուիս դու ընդ լաւաց արանց և ընդ արդարոց. և զանձնդ հաւատացեալ է քո արանց անիրաւաց և ամբարշտաց։ Սա կայն և ոչ 'ի շնորհս ինչ քո 'ի վեր հանեմք քեզ զբանդ. այլ զի մի թերևս 'ի պատճառս քոց կրիցդ մեզ ինքնին հասցէ զրպարտութիւն, և կարծեսցի՝ եթէ քաջութեամբ անձեռնհասք՝ դաւով վճարեցաք զկռիւն"։ Առեալ Պիւռռոսի զնամականին, և ճշդրտիւ 'ի վերայ հասեալ դաւոյն, պատուհաս 'ի վերայ ածէր յանցաւորին. ապա և Փաբրիկիոսի և Հռոմայեցւոց 'ի դարձ փոխարինին ձրի 'ի նեղքս մատուցանէր նոցա զգերին. և անդրէն դարձեալ զնոյն Կինէաս արձակէր խօսել վասն հաշտութեանն։

Այլ Հռոմայեցիք յանձն չառեալ առանց փրկանաց զգերին, ոչ իբրև շնորհս ինն 'ի թշնամւոյն և ոչ դարձեալ իբրև կաշառ առ 'ի չանիրաւել ինչ, արձակէին և նոքա յաղաստութիւն նովին չափով 'ի գերւոյն Տարանտինացւոց և 'ի Սաւնիացւոց։ Իսկ յաղագս բարեկամութեանն և հաշտութեանն՝ և ոչ բան մի թոյլ ետուն խօսել Կինէասայ, մինչև Պիւռռոսի 'ի բաց յիտալիոյ առեալ զզէնսն՝ դարձցի անդրէն յԵպիրոս նովին նաւուք որովք և եկն։

Ապա միւսանգամ 'ի կռիւ հարկաւորեալ Պիւռռոս, խաղաց և 'ի դիմի Հռոմայեցւոցն հարեալ առ Ասկղոն քաղա-

քաւն, և բուռն վանեալ 'ի նոցանէ՝ անկանէր 'ի վայրս իմն գժուարինս այրուձիոյ, և 'ի գետափն մի խարձաւէտ և անկոխ, զի և հնար չէր դազանացն անցանել միանալ ընդ փաղանգին. և անդ բազում վիրաւորք և դիտապատաք Թաւալգլոր խաղային. և մարտ եղեալ կռուէին մինչև 'ի ժամ գիշերոյն, և ապա բաժանէին 'ի միմեանց։

Իսկ յաւուրն երկրորդի մարտ 'ի գիւրի յարգարեալ Պիւռռոս, ուր և գաղանք ինքնին խառնեացին ընդ Թշնամիսն, կանխեաց կալաւ զգժուարս վայրացն գնդաւ միով. և միջամուխ զբազմութիւն մեծ ըզսիգաւորաց և զաղեղնաւորացն ընդ գազանն արարեալ՝ սաստիկ զօրութեամբ վարէր ստիպէր զգոռն խիտ առ խիտ և գերեցիկ կարդաւ։ Իսկ անդ Հռոմայեցիք չունելով վայր Թաքստի և ապաստանարանս իբրու զառաջինն, խառնեցան 'ի ճակատ արձակ արձակ և ձիգն Թափեալ ընկրկեալ զհետևակն՝ մինչև խուժեալ գազանացն՝ ահագին մարտ եղեալ կռուէին սուսերօքն ընդդէմ գայլասոնացն, ոչինչ հոգացեալ զանձանցն՝ ուշ միայն եղեալ հարկանել և տապաստ արկանել ոգւով չափ։ Բայց յերկարել մարտին՝ ասեն՝ Թիկնագարձոյց լինել Հռոմայեցւոց 'ի կողմանէ անտի հրոտակին Պիւռռոսի, որ շտապ տագնապի 'ի վերայ հասուցանէր նոցա։ Իսկ որ յաւէտ իմն զնոսա 'ի փախուստ խուճապեաց, ուժգնակի բաղխեալ գազա-

նայն ամենեցայ. որ աղագաւ ոչինչ բաւականք նոքա զտեղի ունել քաջութեամբ՝ լաւ համարեցան առ ժամն տեղի տալ՝ իբրու 'ի բազմակոհակն ալեաց կամ յահապին գետնաշարժէն, քան տարապարտ կրել անդէն 'ի դժնդակացն։ Այլ ո՛չ 'ի բացեայ գոլով բանակետղն՝ ուր փախըստեայ անկանէին, ասէ Երոնիմոս՝ մեռեալս 'ի Հռոմայեցւոց յայնժամ ոգիս վեց հազար. իսկ 'ի Պիւռռոսեանց՝ ըստ ալքունի գիւանացն՝ երեքհազար և յիսուն և հինգ։

Բայց Դիոնիւսիոս գրէ, ոչ կրկին լինել մարտից առ Ակլոն քաղաքաւ, և ո՛չ ճշգրիտ լինել հարուածոյն Հռոմայեցւոց, այլ մարտ մի եղեալ նոցա մինչև 'ի մուտս արևուն, հազիւ ուրեմն ապա տեղի տային, տիգահար եղեալ Պիւռռոսի 'ի բազուկն և յաւարի առեալ ազխին Սաւնիացւոց. և առհասարակ անկեալքն՝ ընդ Հռոմայեցիս և ընդ Պիւռռոսեանն՝ էին աւելի քան զբիւր մի և հինգ հազար։

Ապա 'ի դադարել գոռին, պատմեն՝ ասել Պիւռռոսի ցայրն՝ որ խնդայր ընդ նմա. "Եթէ մեք՝ միւս ևս մարտ եղեալ յաղթեացուք, ասէ, Հռոմայեցւոցդ, բնաւ իսկ այնուհետև վճարեալ է վասն մեր"։ Քանզի նորա բազմագոյն մասամբ անկան զօրականք՝ զոր ընդ իւր ածեալ էր, և գոդ առհասարակ նորա բարեկամք և զօրավարք. և չէին ևս նորա այլք 'ի փոխանակել, առ այս՝ և զնիզակակիցսն սրտաթափս տեսա-

նէր. իսկ անդուստ Հռոմայեցւոցն իբրու յանսպառ աղքերէ բոլնեալ 'ի տանէն՝ հեշտ և փոյթ էր ընուլ զտեղին. և քան լքանել 'ի հարուածոյն՝ սաստիկ ևս առ ցասմանն կորովանալ և առ պատուասիրութեանն։

Մինչդեռ յայս տագնապ տարակուսի կայր Պիւռռոս, անդրէն միւսանգամ սնոտի յուսոյն խնդայր. քանզի և հրապոյրք այլ ընծայեցան նմա, միանգամայն և տաղտապիչք խորհրդոց նորա։ Քանզի եկեալ հասանէին առ նա արք աւագք 'ի Սիկիլիոյ տալ նմա 'ի ձեռս զԱկրագանտա և զՍիրակուսա և զԷոնատայիս. և աղաչէալ զնա՝ վանել 'ի վայրացն զԿարքեդոնացիս և 'ի բռնաւորաց յանդորը զկղզին հանել։ 'Ի նոյն միանգամայն և արք աւագք եկեալ ժամանէին առ նա ՅԵլլադայ ազգ առնել՝ զի անկաւ Պտղոմէոս Կերաւնոս 'ի մարտին ընդդէմ Գաղատացւոց. և 'ի դէպ ժամու արդէօք յանդիմանեացի նա Մակեդոնացւոցն՝ որոց Թագաւորի անշուշտ պէտք իցեն։ Եւ վասն այսորիկ մեծապէս Պիւռռոս յայնժամ գանգատէր բախտին, որ այնպէս հանդէսս կրկին այլ և այլ զմեծաց նահատակութեց 'ի միում ժամանակի 'ի նեղեալս խառնէր նմա. և զմտաւ ածեալ՝ իբրու որ անեղկեան վասն երկուցն ևս՝ վրիպել 'ի միոյն կամ 'ի միւսոյն, այնպէս օգուտ ժամս յուզէր ծփայր 'ի խորհրդեան իւրում։ Ալ ապա 'ի վերջէ՝ նահատակութեանց իւրոց վայր լայնասահման զՍիկիլի-

լիա՝ համարեալ՝ մեծաւորք Լիբիոյ, 'ի նոյն զմիտան շրջեաց. և անդէն զկինէաս անդր արձակէր, երթալ կանուխ խօսել՝ որպէս սովոր էր՝ ընդ քաղաքացն։ Իսկ ինքն գունդ մի 'ի նեբքս թողեալ առ Տարան-տինացիսն, որ գժկամակս բերեալ՝ խընդրէին նոքա կամ 'ի գլուխ զմարտն տանել ընդ նոսա՝ ոյր աղագաւ եկեալն էր, կամ յառաջին կարգին թողուլ զնոսա. նա պատասխանի արարեալ նոցա խիստ՝ լռել և մնալ դէպ ժամանակին, ինքն անկանէր յուղի ընդ ծով։

Հասեալ 'ի Սիկիլիա՝ յաջողէր նմա ըստ յուսոյն ակնկալութեան, և անձնատուր նմա քաղաքքն լինէին, և հակառակութիւն ինչ չէր նմա զառաջինն. այլ հասեալ նա անդր երիւք բիւրուք հետեւակաց, և երկու հազար և հինգ հարիւր հեծելազօրու, և երկերիւր նաւուք, հարկանէր վանէր ըզ-Փիւնիկեցիսն և քանդէր տապալէր զտէրութիւն նոցա։ Իսկ էր անդանօր Երիւկոս՝ անիսաբ և ամուր վայր, և բազումք էին 'ի նմա պահակք. ժողեցաւ Պիւռռոս սաստիկ գրոհիւ յարձակել ունել զպատուարան. և մինչդեռ կազմ էր զօրն 'ի շահատակութիւն անդր, ինքն զղէնսն ողջոյն զանձամբ արկեալ և յառաջ նահատակեալ, ուիստ դնէր Հերակլեայ՝ հանդէս կարգել մրցանաց և զոհ զոհել արութենն, եթէ երբէք շնորհեսցի նմա՝ առաջի հելլենաց բնակաւորացն Սիկիլիոյ այր երևել քաջամարտիկ՝ արժանի զարմին և բախ-

ոին. եւ նշան 'ի ձայն փողոյ, եւ վարա-
տեալ փարատեալ զբարբարոսան 'ի տա-
րափս նեռոյց, եւ զսանդուղսն ածեալ 'ի
պատուարսն՝ ինքն նահատակ խաղայր ե-
լանէր 'ի վեր. անդ 'ի բազմակոյտ ամբոխ
պաշարեալ՝ պաշտպանէր անձին, եւ վա-
նեալ յայսկոյս յայնկոյս 'ի վայր ընդ պա-
րիսպն հոսէր ամբոխ մեծ 'ի նոցանէն, եւ
շատ ևս 'ի սայր սուսերին հարկանէր սա-
տակէր, եւ դիպանէր Թանձրանայր դիա-
կոյտ անկեալոցն. այլ ինքն վտանգէր եւ ոչ
ինչ. նա՛ եւ այնչափ ահագին էր Թշնամեացն,
զի եւ 'ի տեսլենէն միայն զարհուրեալ պակ-
չէին. եւ այնպէս ապա Ճշգրտեաց Պիւռ-
ռոս՝ եթէ ուղղապէս ուրեմն եւ խմաստու-
Թեամբ գրեաց Հոմերոս, եթէ յառաքի-
նուԹիւնս միայն ԱրիուԹիւնն՝ է բազում
անգամ զի գերլեցիկ մոլուԹեամբ վարի եւ
յաշխոյժս հրաշանայ։ Ապա առեալ զքա-
ղաքն, զոհ զոհեաց դիցն մեծապէս պատ-
ուասուԹեամբ. եւ տեսարան ևս կարդէր
ազգի ազգի մրցանաց խաղուց։

ԱՅԼ Հելլենացիք անդ յոյժ նեղեալք
'ի բարբարոսացն Մեսսենայ՝ որոց անուն
կարդային Մամերտեանք, եւ 'ի հարկի ևս
կացուցեալ էին զՀելլենացիս, եւ բազումք
էին նոքա եւ քաջամարտիկք (ուստի եւ 'ի
Լատինաց բարբառ կոչէին Արեսեանք).
եւ ապա Պիւռռոս ձերբակալ զհարկա-
հանսն նոցա առնել եւ 'ի մահ վարէր. եւ
զբարբարոսան 'ի մարտին պարտեալ, հինգն
'ի վեր քանդէր շատ ինչ 'ի բերդից նո-

ցա։ Իսկ և Փիւնիկեցւոցն՝ որ 'ի հաշ-
տութիւն հակամիտեալք նաւս և դրամս
'ի նեղքս տային Պիւռռոսի հաստատել բա-
րեկամութիւն, ինքն 'ի մեծամեծսն մոա-
բերեալ տայր պատասխանի, հաճել զնո-
սա՝ 'ի թողուլ նոցա ողջոյն զՍիկիլիա, և
սահման Հելլենացւոց ունել զծով Լի-
բիոյ։ Եւ բարձրացեալ Պիւռռոս 'ի գե-
ղեցիկ բախտէն և 'ի զօրութենէն, իբն-
դայր յուսոյն՝ յորմէ և դրդեցաւն իսկ
յառաջագոյն դէտակն կալեալ 'ի Լիբիա.
և նաւս ունելով բազում անկազմ և ան-
պատրաստ՝ իբրև սկսաւ զօրաժողով լինել,
ոչինչ հեշտ և հեզաբար այնուհետև վա-
րեալ ընդ քաղաքսն, այլ ճոխաբար և
ցասմամբ բռնանայր և պատուհասէր, զոր
ոչն վարեաց երբէք յառաջն. նա՛ յոյժ
իսկ յանկուցեալ էր նա զմարդիկն դեղե-
ցիկ և անբրկեան քաղաքավարութեամբն
և յանդորրու։

Եւ այսպէս ապա ժողովրդասէրն՝ գտաւ
բռնաւոր, և ապառում եղեալ կեղտ ա-
նուն ժառանգէր անձին զանշնորհակալու-
առն և զանհաւատարիմ. սակայն նոքա 'ի
հարկէն բերեալք՝ տային նմա զինչ և կա-
մէր, Թէպէտ և դժկամակս։ Այլ 'ի միտս
կասկածոտս եղեալ նա վասն Թինոնիի և
Սոստրատոսի, ընդ իւր ածել կամէր զնոսա
և ոչ թողուլ 'ի քաղաքի անդ զարս զա-
ւագան զայնոսիկ զՍիրակուսայ. այն՝ որ
առաջին հաւանեցուցին զնա անցանել 'ի
Սիկիլիա, և անդ դարձեալ ետուն նմա

զքաղաքն և զօրավիգն եղեն նմա 'ի նահատակութիւնս բազումս։ Իսկ յորժամ Սոստրատոս զահի հարեալ մեկնեցաւ, ինքն մահու դատեր զթինոնին իբրու որ համախոհ եցէ նմա. և յայսմանէ ապա ոչ յուշիկ և տակաւ հիմն 'ի վեր շրջեցան իրք Պիւռռոսի, այլ անդէն ոխերիմն բերեալք ընդ նմա քաղաքք՝ կէսք ձեռն տային 'ի Փիւնիկեցիս անդր, և կէսք դարձեալ դաշնաւորք եղեն Մամերտեանցն։

Այն ինչ Պիւռռոս շուրջ զսկն յածեալ՝ առհասարակ տեսանէր ապստամբութիւնս և խլրտիւն և դաւադրութիւնս ահագին ընդդէմ անձինն, գիր հասանէր առ նա 'ի Սաւնիացւոց և 'ի Տարանտինացւոց, ազգ առնէր՝ զի հազիւ ուրեմն նոքա 'ի նեղքս 'ի քաղաքսն զդէմ ունէին մարտին՝ վանեալք 'ի դաւառէն, և ինդրէին զօրավիգն։ Եւ ապա այս նմա գեղեցիկ հանդերձեցաւ 'ի վերին երեսս՝ մի փախուստ զչուն համարել կամ յուսահատ կիրք 'ի նահատակութենէն. սակայն 'ի նեղքոյ՝ անձեռնհաս նա 'ի տիրանալ Սիկիլիոյ՝ որ նաւ իմն էր նա ալէտանջ մրրկեալ Ճողոպրեալ 'ի նմանէ անդրէն միւսանգամ ծովագնաց անկանէր Յիտալիա։ Եւ պատմեն՝ յուղղոջն յետս 'ի կղզի անդր հայեցեալ՝ ասել որոց մերձն կային. "Բա՜ի, զո՞ր ասպարէզ մեք ո՞ բարեկամք Թողուք Կարքեդոնացւոցն և Հռոմայեցւոց"։ Եւ քաջ՝ որպէս ասացն՝ ոչ յետ բազմաց ինչ արդիւնացան բանքն։

Ալ բարբարոսք համաշունչք ընդդէմ նորա, յուղի անկանել նորա՝ դէպ լինէր նմա կռուել ընդ Փիւնիկեցին 'ի նաւահանգստի անդ և շատ ևս կորուսանել 'ի նաւացն, և այնպէս ազնացելովքն անկանել Յիսալիա։ Ալ և անդանօր կանուխ Մամերտեանցն աճապարեալ՝ բազմութիւն ոչինչ պակաս քան զառաջն հաղարաց, ոչ ճակատեալք 'ի դիւրի՝ այլ դարանամուտք եղեալ 'ի վայրս դժուարինս, անդուստ զբռոյթ սաստիկ տուեալ 'ի վերայ՝ առհասարակ վարատեալ աղմկեցին զզօրն նորա. անդ անկեալ սատակէին երկուք 'ի գաղատացն, և շատք յոյժ դիտապատ անկանէին 'ի վերջապահ գնդէն. զի և ինքնին Պիւռռոս յիւրմէ ճակատէն անդր անցեալ՝ ձեռն տայր նոցա, գոռայր կռուէր ընդ մոլեկան գնդին. այլ անդ սուսերահար 'ի նոցանէն 'ի գլուխն խոցեալ և վայրիկ մի տեղի տուեալ 'ի գոռոյն, ապա սաստիկ ևս ոյժ սնդուութեան յորդեաց 'ի նոսա. որպէս զի և 'ի նոցանէն ոք այր՝ հարատի մարմնով և 'ի զէնս երևելի, հարուստ մի քան զնիզակակիցն յառաջ նահատակեալ, ձայն բարձեալ խրոխտս ասպարէզ Պիւռռոսի կարդայր՝ եթէ կենդանի լցէ՝ 'ի վեգ ընդ նմա։ Յայնժամ Պիւռռոս մրմռեալ գաղանացեալ՝ դարձեալ յետս ընդ թիկնապահացն յարիւն ապաժոյժ և 'ի տեսիլ դիմացն ահագին յոյժ, թափ ուղի ընդ մէջ զօրականին հատեալ՝ աճապարեալ ընդդէմ բարբարոսին շէշտ զվաղա-

կաւորն իջուցանէր 'ի կառափն, և այնպէս 'ի բազկին կորովութենէն և 'ի քաջամուխ երկաթոյն՝ յերկուս պողովատիկն ոչՔ ըզմարմինն կտրեալ, 'ի նոյն միանգամայն ասի և անտի երկոքին հատածքն յերկիր անկանէին։ Յայսմանէ յեռանահաջեցան բարբարոսք՝ հրաշացեալք և պակուցեալք 'ի Պիւռռոսէ, իբրու որ վեհագունիցն վիճակեալ բնութեան։

Ապա յանդորրու զուլին վճարեալ՝ գայր հասանէր 'ի Տարանտան քսան հազար հետեւակք և երեքհազար այրուձիով. և առեալ ևս անդ զքաջս 'ի Տարանտինացւոց, խաղայր գնայր ընդդէմ Հռոմայեցւոց՝ որ բանակ հարեալ նստէին յերկրին Սաւնիացւոց։ Եւ էին Սաւնիացւոցն իրք վատթարեալք յոյժ, և սրտաթափք 'ի բազում հարուածոցն՝ զոր հարան 'ի Հռոմայեցւոց. և զչարեալ նոքա սակաւ մի ընդ Պիւռռոս՝ զի էլ նաւեաց նա 'ի Սիկիլիա, ոչինչ բազումք խմբեցան ընդ նմա։

Յայնժամ յերկուս զզօրն ամենայն բաժանեալ Պիւռռոս, զմին առեալ արձակէր 'ի Լեւկանիա ընդդէմ միոյ 'ի հիւպատոսացն, խափանեալ զնա 'ի տալ թիկունս իշխանակցին. և ինքն զմիւսն առեալ խաղայր ընդդէմ միւսոյն՝ այն էր Մանիոս Կուրիոս, որ զտեղի առեալ առ Բենեբենտ քաղաքաւ յանիսաբ վայրի՝ մնայր օգնականութեանն 'ի Լեւկանիոյ. առ այս՝ զի և իրՔ 'ի հաւատմայիցն և 'ի զոհիցն՝ 'ի բաց զնա քեցէին 'ի կռուոյն, և նա անդ

գեղեցեալ նստէր անդործ։ Ապա աճապարեալ Պիւռռոս անկանել 'ի վերայ՝ մինչեւ հասեալ որոց 'ի Լեւկանիոյ, առեալ ընդ իւր այրընտիր 'ի զէն 'ի զարդ 'ի քաջաց և զքաջամարտիկսն 'ի գաղատացս, խաղայր գիշերի 'ի շտապ տագնապի 'ի վերայ բանակի Թշնամւոյն։ Եւ քանզի 'ի յամբոկ ջուրն՝ էր նմա ջրջան առնուլ ընդ երկայն ուղի անկոխ և անտառախիտ, ոչ բաւեցին նմա զամբարքն՝ և զօրականն այսր անդր վարատեալ օձտէր, և յամեալք՝ կարճատէր գիշերն. իսկ անդուստ Թշնամիք Ը լուսանալ աւուրն տեսեալ զնա 'ի կատարաց անտի բարձանցն 'ի վայր գրոհ տուեալ, խուճապեցան տագնապեցան։ 'Ի վերայ այսր՝ զոհք բարեհմայք պատահեալ յայնժամ Մանիոսի և 'ի ժամանակէն ևս շտապեալք 'ի կռիւն, եւ նա արտաքս և անկեալ 'ի վերայ յառաջամարտիկացն Պիւռռոսի և զնոսա 'ի փախուստ դարձուցեալ՝ արհաւիրս մեծամեծս զմնացեալսն արկանէր. անդ և ոչ սակաւք դիտապատսա անկանէին 'ի նոցանէ, և հասեալ կալան և 'ի գաղատաց անտի։

Յայսմանէ ապա քաջապէս խրախուսեալ Մանիոս, միջամուխ և 'ի գիւրի կռռուէր ընդ Պիւռռոսի. և այնպէս խառնեալ մարտին 'ի բացարձակ դաշտի, աստի հարկանէր խորտակէր Մանիոս զԹեւ բանակին Թշնամեաց, և անտի բուռն և սաստիկ վանեալ ընկրկէր 'ի գաղատացն մինչև 'ի բանակատեղն. ապա յառաջ կոչէր ստիպէր

'ի զէն և 'ի զարդ վառեալ զկորովն նահա-
տակն 'ի հանդարտեալ զօրականէն, որք
ստուար գնդաւ կային 'ի պահ զդուշութեամբ
զակշին. նոքա յառաջ եկեալ յամուր
վայրացն և 'ի վերայ անկեալ գազանացն,
տագնապեցան գազանքն և ընդ կրունկն
փախստեայք վազէին ընդ մէջ նիզակակ-
ցացն. յորմէ և խռով սաստիկ հարեալ 'ի
նոսա, տանէին հռոմայեցիք զյաղթու-
թիւնն. և այն եղև նոցա մեծապէս բար-
գաւաճեալ տէրութեանն։ Քանզի այնու-
հետև 'ի մարտից անտի և 'ի քաջութենէ
արութեանն մեծ ևս խրախուսեալք, և
համբաւ ևս առեալ նոցա իբրու զանյաղ-
թից ոմանց՝ իսկ և իսկ տիրացան Իտալիոյ,
յետ սակաւուց և Սիկիլիոյ։

Եւ այնպէս ապա անկանէր բեկանէր
Պիւռռոս 'ի յուսոյն իւրմէ, որով խնդայր
'ի բուռն զԻտալիա արկանել և զՍիկիլիա,
ծախեալ ամս վեց 'ի կռուին, և վատթա-
րեալ յիրս իւր։ Սակայն և անվկանդ ըզ-
քաջութիւն պահեալ զոգւոյն յաղէտս
հարուածոցն, և քաջիկ հմտութեամբ զի-
նուորականին և բազկացն կորովութեամբ
և սրտին արիութեամբ, որքայիցն որ առ
իւրովքն ժամանակաւք՝ զհամբաւի հարաւ
բնաւիցն վեհագոյն։ Բայց նա զոր ստա-
ցեալ ժառանգէր առաքինի նահատակու-
թեամբքն, զնոյն 'ի ձեռաց հանէր անոտի
յուսովքն. չպահէր՝ որ 'ի դէպ իսկ էր՝
զառձեռինն՝ առ ցանկութեան բացա-
կայիցն։ Ոյր աղագաւ և Անտիգոնոս՝

քուարկու առն 'ի տիպ Ճշգրտէր զնա. որ շատ ինչ և գեղեցիկս արկցէ քուէայս, այլ զարկեալն՝ ոչինչ գիտասցէ վարել։

Ապա չու արարեալ դարձ առնէր յԵպիրոս ութ հազար հետեւակօք և հինգ հարիւր հեծելովք. այլ 'ի դրամոց նուազեալ՝ մարտ խնդրէր՝ 'ի թոշակ զօրուն։ Խմբեալ ընդ նմա և 'ի Գաղատացւոց անտի՝ ասպատակէր 'ի Մակեդոնիա, ուր թագ կապէր Անտիգոնոս որդի Դեմետրի, իբրու ամբար ժողովել և աւար կուտել։ Իբրև յաջողեցաւ նմա հասանել ունել և քաղաքս բազումս, և զօրականք ևս երկու հազար զինուորեցան ընդ նմա, խրախոյս առեալ՝ խաղայր դիմէր 'ի վերայ Անտիգոնոսի և անկեալ 'ի վերայ նորա 'ի վայրս անձուկս՝ խռով հարկանէր 'ի զօրան։ Իսկ Գաղատացիք որ ընդ Անտիգոնեայ՝ 'ի վերջ բանակէին նորա Ճակատեալք՝ խուռն բազմութիւն քաջապէս զդէմ կային. այլ քանզի սաստիկ և ահագին խառնեցաւ գոռն՝ բազումք այն էին որ տապաստ անկան 'ի նոցանէ. և փղացն ևս ոստիկանք տագնապեալք՝ անձնատուր 'ի թշնամիսն լինէին հանդերձ գազանօքն։ Օրինակ զայս յաջողեալ Պիւռռոսի, քան 'ի հանճարոյն՝ առաւել ևս 'ի բախտէն, յարձակէր դիմէր և 'ի վերայ փաղանգին Մակեդոնացւոց. նոքա լի էին խռովութեամբ և ահիւ վասն հարուածոյն Գաղատացւոց. ուստի և զտեղի առեալք՝ ոչ կամէին միջամուխ 'ի մարտն լինել։ Իբրև զայն ետես Պիւռռոս, զաջ

իւր կարկառեալ ձգեալ, առ ինքն միան-
գամայն հրաւիրէր զգնդապետսն և զդա-
սապետսն. և յիւր կողմն յանգուցեալ
զՀեռակաւորն զայն, ապա Անտիգոնոս
ելեալ խոյս տայր 'ի վայրացն. սակայն և
քաղաքս Ծովափնեպոյս 'ի բուռն արկանէր:
Իսկ 'ի փառաց անտի կոստրածին Գաղա-
տացւոց յոյժ ինդացեալ Պիւռռոս, ա-
ռեալ զգէղեցիկն յաւարաց նոցա՝ կախէր
'ի ձօն 'ի տաճար Խոռնեանն Ա՛թենասայ,
արձանագրեալ զՈղբականն՝ այսպէս.

Զ՚ասպարս ըզգոռ Գաղատացւոց՝
Զօն Խոռնեանն Ա՛թենասայ՝
Մոլոսացին Պիւռռոս կախեաց,
Յորժամ ողջոյն զԱնտիգոնեան
Բանակն ե՛հար և խորտակեաց:
Բայց զարմանաց մեծաց պատճառք
Ընդ ինչ նախճիրք այս գեղեցիկ,
Զի ցանգ զարդիս՝ և վաղ ուրեմն
Էակիդեանք են գոռ մարտիկ:

Յետ մարտի պատերազմին միւսանգամ
գրաւեալ զքաղաքն և ընդ լծով զՆեգէա-
ցիսն արկեալ՝ անհամբոյրս գնայր ընդ նո-
սա, և 'ի Գաղատացւոց իւրոց գունդ մի
Թողոյր անդանօր: Բայց Գաղատացիք՝ ազգ
ընչաքաղց, միեցան փորել պեղել զՀի-
ըիմն Թագաւորացն՝ որ անդ, և զհարստու-
թիւնսն կապտեալ 'ի նոցանէ, թշնամանօք
ևս ցան և ցիր արկին զոսկերսն: Թուէր
նմն Պիւռռոսի հեզարար տանել իրացն,

կամ առ մեծի անպարապութեանն յայն-
ժամ, կամ զի առ ահին անպատուհաս
արձակէր զբարբարոսն. ոյր աղագաւ և
Մակեդոնացիք դառնապէս բամբասէին
զնա։ Այլ քանզի չև էին իրք Պիւռռոսի
հաստատուն յանդորր եղեալ, նա անդրէն
'ի նորոգ յոյս խնդացեալ և ոտնհար Ան-
տիգոնոսի եղեալ՝ լերբ և ժպիրհ կարդայր
զնա, զի ոչ զձորձ՝ այլ ծիրանի տակաւին
արկեալ է զանձամբ։

Զայնու ժամանակաւ գայր հասանէր
առ նա Կղէոմենիւմոս Սպարտացի. և հրա-
ւէր տուեալ նմա 'ի Լակեդեմոնիա, նա
մոգիւրագոյնս հաւանէր բանին։ Էր այս
Կղէոմենիւմոս յարքունի զարմէ, այլ բուռն
և սաստիկ և 'ի միապետութեան կիրս մե-
ծապէս հակամիտեալ՝ սիրեաց և մերձե-
ցաւ 'ի նա և ոչ ոք, և թագ կապէր յայն-
ժամ ընդ նորա Արեւս. և էր այն նմա
վաղնջուց խէթ սրտի ընդդէմ հայրենեացն։
Առ այս՝ և 'ի ծերութեանն կին գեղեցիկ
էած նա յարքունի զարմէ Քէլիդոնիդէ
անուն՝ դուստր Լէոտիքիդեայ. այլ սա
մոլեգին 'ի սէրն հարեալ Ակրոտատոսի
որդւոյ Արեւսի՝ քաջառոյգ պատանւոյ,
յոյժ դժոխրմբերելի և անփառունակ զա-
մուսնութիւնն յարդարէր զԿղէոմենիւմեայ՝
որ սիրէրն զնա. քանզի և առհասարակ
Սպարտացւոց ծանօթ էր ոտնհարութիւն
նորա 'ի կնոջէն։ Եւ այսպէս ապա յառաջ-
նին 'ի կիրսն 'ի վերայ բարդեալ և քաղա-
քայնոյն, վառեալ 'ի ցասմանէն և յանդը-

նարին անձկութենէն, առնոյր ածէր ըզ-
Պիւռռոս 'ի Սպարտիա քսան և հինգ հա-
զար հետեւակօք, երկու հազար այրուձիով,
և քսան և չորս դազանօք. զի և յայնչափ
պատրաստութենէն յայտնի էր ապա տե-
սանելեացն՝ եթէ ոչ Կղէոմենիւմեայ ինչ
նուաճել զՍպարտիա խնդրէր Պիւռռոս,
այլ իւրում անձին ողջոյն զՊեղոպոննի-
սոս։ Թէպէտ և ինքն 'ի բանան գողանայր
զխորհուրդ մոացն 'ի Սպարտացւոց անտի՝
որ հրեշտակս արձակեցին առ նա 'ի Մե-
գաղէպօլիս՝ յասել անդ առ նոսա, խա-
ղալ գիմել նմա անդր 'ի վրկութիւն քա-
ղաքացն՝ զոր անդ նուաճեալ ունի Անտի-
գոնոս. և ասէր, օ՛ն և օ՛ն՝ եթէ և յիւրոց
անտի կրսերագոյն որդւոցն, թէ խափան
չկայցէ, խնդրէ արձակել 'ի Սպարտիա 'ի
դասախարակութիւն լակոնացի, շուք ու-
նել քան զայլս 'ի Թագաւորաց։

Զայս այսպէս կեղծաւորեալ Պիւռռոս
և առ որս յուղղոջ պատահէին նմա, մի-
ջամուխ 'ի Լակոնիա՝ անդէն վաղվաղակի
աւար հարկանէր և կապուտ կողոպուտ
Թողոյր. անդ բոլոր հրեշտակացն կալեալ
Սպարտացւոց՝ զի մինչև ազգ արարեալ
մարտ պատերազմի գումարեաց 'ի նոսա,
ետ պատասխանի Պիւռռոս. "Վա՜յ, և մեք
գլխովին գիտեմք քաջ. զի և ոչ դուք ինք-
նին Սպարտացիքդ կանուխ ազգէք այլոց,
զոր գործեալոցն էք"։ Իսկ անդ յեղեալոցն
ոմն Մանդրիկիդաս անուն ասէր առ Պիւռ-
ռոս 'ի բարբառ լակոնացի. "Եթէ աս-

տուած ոմն իցես դու, ոչ տեսցուք մեք 'ի քէն չարիս, զի ոչինչ անիրաւեցաք. ապա եթէ մարդ իցես, իցէ արդեօք ոք զօրաւորագոյն ևս քան զքեզ"։

Ապա իջեալ Պիւռռոս 'ի Լակեդեմոնիա, և թախանձեալ 'ի Կղէոմենիւմեայ՝ անդէն փութապէս անկանել 'ի վերայ քաղաքին, զանգիտեալ Պիւռռոս՝ որպէս ասեն՝ թերևս 'ի դիշերային ժամուն զօրականք յաւարի զքաղաքն առցեն, յանձն չառնոյր՝ և զցերեկ ասէր անկանել 'ի վերայ քաղաքին. քանզի և քաղաքացիք ինքնին սակաւք էին և կազմեալ չէին յանակընկալ պաշարմանէն. առ այս՝ զի և Աբեւս արքայ չէ՛ անդ և 'ի Կրետէ երթեալ է 'ի թիկունս Գորտիւնացւոց։ Եւ ապա այս դեղերանք 'ի փրկութիւն լինէր քաղաքին, զի այնպէս առ սակաւութեանն և տկարութեանն արհամարհեցաւ նա. քանզի և կարծեալ Պիւռռոս եթէ և ոչ ոք 'ի կռիւ կաքաւեսցէ ընդ նմա, անդէն զտեղի կալաւ։ Իսկ 'ի նեռքս 'ի քաղաքին բարեկամք Կղէոմենիւմեայ և Իղոռք հանդերձեալ կազմէին զտուն նորա, իբրու եթէ առ նմա Պիւռռոս ընթրել հանդերձեալ իցէ։

Իսկ 'ի գալ դիշերոյն խորհուրդ հաստատեցին 'ի քաղաքին Սպարտացիք՝ նախ քան զամենայն զկանայսն առնուլ արձակել 'ի Կրետէ, այլ կանայքն ընդդէմ դարձան խորհրդոյն. և անդ Ամբիդամիա լինքնին առեալ զսուսերն չոքաւ 'ի ծերակոյտ

անդր, կայր և բոլոր բառնայր զարանց յա-
նուն ամենայն կանանց, զի կարծեն նոքա
կենդանի մնալ կանանց 'ի կորնչել Սպար-
տիոյ։ Ապա խորհուրդ առհասարակ հաս-
տատեցաւ յայնժամ, իրամ հատանել
զքաղաքաւ 'ի հանդիպոյ զուգահեռ բա-
նակի Թշնամւոյն. և ասի անտի հարըս-
տել 'ի նմա կառս մինչև 'ի կէս անուոցն,
զի այնպէս Թաղեալք և պնդեալք քար-
ընդոտն եղիցին գազանացն։ Իբրև ձեռն 'ի
գործ առնէին, անդր խռնեցան և կանայք
և կուսանք. կէսք՝ հանդրիձեալք զձորձս և
զվոտաւակս, և կէսք՝ համակ վոտաւակօք
այնպէս գործակից վաստակակից լինէին
արանց ծերուներաց. և Թախանձ արկեալ՝
որոց մարտ մղել հանդերձեալ էին՝ զի
հանդիցեն, ինքեանք զչափ առեալ իրա-
մոյն՝ ինքեանց ձեռօքն աշխատեցան զեր-
բորդ մասն նորա. և էր իրամն լայն կան-
գուն վեց, և խոր՝ չորս, և երկայն՝ լծավար
ութ, որպէս ասէ Փիլոզարքոս. իսկ ըստ
Երոնիմեայ՝ սակաւ մի պակաս։

Իբրև օրն լուսանայր և Թշնամիք շար-
ժէին խաղային, անդ կանայք և կուսանք
Սպարտացւոց զզէնսն 'ի ձեռս տուեալ պա-
տանեացն և նոցա յանձն զիրամն արա-
բեալ, իրախոյս կարդային քաջութեամբ
վանել զյարձակեալսն և պահ իրամոյն
ունել, և ասէին. Քաղցր է յաղթութիւն
ակն յանդիման հայրենեացն, և փառք են
մեռանել 'ի գիրկս մարց և 'ի գիրկս ամուս-
նաց, և տապաստ քաջութեամբ անկանել

իբրև արժանիք Սպարտիոյ։ Իսկ Քէլիդով-
նիդէ անչանօր մենացեալ 'ի վայր մի՝
կազմ 'ի պատրաստի զիսեղդանն ունէր, զի
մի 'ի ձեռս անկցի Կղէոմենիւմեայ յառ-
նուլ քաղաքին։

Անդուստ ապա Պիւռռոս սուիպէր յա-
ռաջ խաղայր 'ի Ճակատէն հանդերձ հե-
տևակազօրուն ընդդէմ բազմախուռն աս-
պարաց Սպարտացւոց, դէմ եդեալ 'ի
իրամ անդր՝ զոր և ոչ անցանել կարող
էր. և ոչ առ ափամբն գտանէին ինչ մար-
միկք գետին հաստատուն 'ի կռուան,
քանզի խարխարեալ յոյժ էր հողն։ Իսկ
Պտղոմէոս որդի Պիւռռոսի առեալ ընդ
իւր երկու հազարս 'ի Գաղատացւոց և այլ
ևս այրընտիր զՔանանացւոց, և այսր անդր
յածեալ առ իրամովն՝ յուզէր գտանել
հուն անցից ընդ կառան. որ քաջապէս
հարստեալք խիտ առ խիտ և կուռ առ իրա-
մովն, ոչ Թշնամեացն միայն քարընդոտն
էին՝ այլ և Լակեդեմոնացւոցն ինքնին
դժուարին էր պաշտպանել նոցա։ Ուստի
և Գաղատացւոցն ձեռն արկեալ կորզել 'ի
հողոյն զանիւսն և զկառան՝ Թաւալել ձգել
'ի գետ անդր, անդուստ դէտակն կալեալ
վտանգին պատանին Ակրոտատոս՝ ընԹա-
նայր վազէր և ընդ մէջ անցեալ քաղաքին
երեքհարիւր զօրականաք, խաղայր գնայր
'ի նեղքս փակել պաշարել զՊտղոմէոս. և
մուտէր մերձենայր առ նա ընդ վայրս իմն
խորխոլեալս և ընդ դարափոսս, զի և ոչ
տեսաւ զառաջինն՝ բայց յանկանել իւրում

'ի վերայ վերջոտնեալոց զօրականին. և այն-
պէս խուճապեցոյց զնոսա՝ դառնալ մարտ
դնել կռուել ընդ նմա. անդ ընդհարեալ
բախէր այր զընկէր յայն աղմուկ շփոթից,
և անկեալ հոսեալ 'ի խրամ անդր ընդ
մէջ խիտ առ խիտ կառացն, մինչև հաղիւ
ուրեմն 'ի մեծ հարուած վանեալք ընկերը-
կէին։ Իսկ անդուստ ծերք և կանանց ամ-
բոխ կային 'ի զննին և տեսանէին զԱկրո-
տատեայ նահատակութիւնն. մինչև միւ-
սանգամ եկեալ նա այսրէն՝ անցեալ ընդ
մէջ քաղաքին դառնայր յիւր կայսն՝ յա-
ղիւն և յապաժոյժ, կայտառ և պերճ 'ի
յաղթութէն. թուէր իմն ամենայն Լակո-
նուհեացն և՛ հոյակապ և գեղեցիկ քան
զառաջինն, և երանի ևս տային Քէլի-
դոնիդեայ վասն նորա. առ այս՝ և 'ի
ծերունեաց անտի ոմանք զհետ ընթա-
ցեալ նորա՝ աղաղակէին. "Ե՛րթ դու
ճիվ Ակրոտատէ, Ե՛րթ մուտ առ Քէլիդով-
նիդէ. միայն եթէ զաւակս քաջս Սպար-
տիոյ արասցես"։

Այլ ապա սատիկ և գոռ մարտի եղե-
լոյ 'ի գնդէ անտի Պիւռռոսի, շատք 'ի պա-
հուն գտան երևելիք քաջապէս կռուեալք.
ընդ որս և Փիլիպպոս յետ երկար նահա-
տակութեանն և հարուածոց շատից ա-
խոյեանիցն՝ որ թեւակոխէին զնովաւ, իբրև
նուաղեալ այնուհետև տեսանէր զանձն 'ի
բազում վիրացն, այլում ումեք զիւր կարգն
տուեալ՝ ինքն եկեալ անկանէր 'ի մէջ նի-
զակակցացն, զի մի թշնամիք առցեն ըզ-

դիակն նորա։ Բայց գիշերոյն 'ի վերայ հաստեալ և դուլ մարմին տուեալ, տեսանէր 'ի քուն Պիւռռոս տեսիլ այսպիսի. Թուէր նմա՝ կայծականց շանթել 'ի Լակեդեմոնիա, և ոչնոյն այրել զնա, և ցնծութեամբ մեծապէս ընուլ զնա։ Զարթուցեալ 'ի քնոյն առ սասանիկ խնդին, վաղվաղակի հրաման տայր զօրապետացն կազմ զզօրն ունել. և զտեսիլն պատմէր առաջի բարեկամացն, իբրու որ անկասկած այնուհետև կալցէ զքաղաքն։

Անդ առհասարակ հաճեալք հաւանէին. միայն Լիւսիմաքոս ոչ լաւ համարեցաւ զտեսիլն և զանդիտէր՝ զի վայրք շանթեալք հրացան բարկութեամբ իբրու անմատոյց նուիրականս իմն համարեալք, սակայն և աստուածակողմանն՝ ասէր՝ թերևս նախազգեցիկ Պիւռռոսի լինել, մի մոռանել նմա 'ի քաղաք անդր։ Այլ Պիւռռոս ընդդէմ կրկնեալ, եթէ այդ բանդագուշանք դրդիչունք են խաժամուժ ամբոխին, և են իսկ այդոքիկ աղօտահայեացք ոմանք. իսկ առ ժամդ վայելուչ այն է՝ զէն 'ի ձեռս առնուլ և իւրաքանչիւր ասել ցանձն. Գ.Էղէոիկ հմայ։ էն՝ մարդ դնել կռռել 'ի վերայ Պիռռոսի. Զայս ասաց և յարեաւ, և անդէն 'ի ծագել աւուրն առեալ խաղացուցանէր զզօրն։

Այլ անդուստ Լակեդեմոնացիք ոգեւոր չափ մարտ եղեալ կռուէին՝ խրախուսեալ քան զկար անձանց. էին էին մօտ անդ և կանայք՝ որք նետս և փքինս

առեալ մատուցանէին նոցա, և կերակուր և ըմբելի պատրաստէին կարօտելոցն, և 'ի գիրկս իւրեանց առեալ ժողովէին զվերաւորսն։ Իսկ Մակեդոնացիք վաստակաբեկ յոգնեալք ընուլ զիրամն՝ արկեալ 'ի նա խաւն 'ի խուռն նիւթ բազում, ընդ որովք և ծածկեալ թաղէցան զէնք և դիակունք անկելոցն. ասի գուն սաստիկ եղեալ Սպարտացւոց խափանել զնոսա, և անդուստ Պիւռռոս մեծապէս զօրութեամբ սպացեալ վազէր զիրամոնն. թափ հարեալ մտրակէր զերիվարն հանդէպ քաղաքին։ Անդ էր լսել զմեծ գոչիւն զզօրականին, և զՃչիւն և զվայիւն զկանանուցն՝ յայսկոյս յայնկոյս խուճապեալ վազեալ, մինչդեռ անցեալ իսկ էր Պիւռռոս, և վանէր ընդոտնէր առհասարակ զախոյեանսն. սակայն 'ի պահուն խոցեալ երիվարին ընդ պորտոնն 'ի կրետացի վիքնէ, առ անհնարին ցաւոյն մոլեգնեալ անկանէր տապաստ՝ և 'ի վայր զՊիւռռոս ինքնին սասանեցուցանէր ընդ սահունս և ընդ զառ 'ի վայրս։ Շուրջ զնովաւ բարեկամացն խուճապեալ, անդուստ և Սպարտացիք 'ի վերայ խուժեալ նետընկէցք՝ զնա և առհասարակ զամենեսեան յետս ընկրկէին։

Յայնժամ Պիւռռոս 'ի կողմանց կողմանց դուլ առնէր մարտին. կարծեաց՝ վայր մի տեղի տալ Սպարտացւոցն առ բազմութեանն անկելոց դիականցն իւրեանց. և զի և առհասարակ գոգցես վիրաւորք էին։ Այլ գեղեցիկ բախտ քաղաքին այ-

նորիկ, (եթէ շատ իսկ զփորձ առեալ ըզ-
քաջութեան որերոյն այնորիկ, և եթէ
դարձեալ զզօրութիւնն զմեծ 'ի նեղքս բե-
րեալ յամբաւ տարակուսին), մինչդեռ
Սպարտացիք բնաւ իսկ յուսակտուրք,
անդր ածեալ հասուցանէր 'ի Կորնթոսէ
զԱմինիաս Փոկէացի զԱնտիգոնեայ զօրա-
վարն հանդերձ եկօք զօրականին. այն ինչ
նոցա 'ի քաղաքն մտեալ, անդր հասեալ
ժամանէր 'ի Կրետեայ և Արեւս արքայ
երկու հազար զօրականօք։ Անդէն ապա և
կանանց ամբոխ փարատեալ գնային իւ-
րաքանչիւր 'ի տունս. ոչ այլ 'ի դէպ հա-
մարեցան միջամուխ 'ի կռիւն լինել. և 'ի
բաց ևս արձակեալ զծերունեացն խումբ՝
որ 'ի ժամուն զէն առեալ էին, կարդե-
ցան կացին 'ի ճակատ՝ որ եկեալ հասեալն
էին անդր։

Իսկ Պիւռռոս 'ի գալուստ օգնական
գնդին՝ մեծ ևս քաջալերեցաւ և պատուա-
սիրէր հասանել ունել զքաղաքն. այլ յա-
ռաջադէմ չելեալ 'ի նահատակութեանն
և հարուածս ևս տարեալ, տեղի ետ. և
գնացեալ քանդէր աւերէր զգաւառն, և
խորհէր ձմերել անդէն։ Սակայն և ան-
խուսափելի է մարդոյ օրահաս նորա։
Քանզի յայնժամ՝ ալմուկ շփոթից հա-
րեալ ՅԱրգոս՝ ընդ Արիստէաս և ընդ Ա-
րիստիպպոս. և կարծեալ իմն՝ եթէ Արիս-
տիպպոս միտեալ ՅԱնտիգոնոս՝ զօրավիգն
կալցի, աճապարեալ Արիստէաս կոչէր ըզ
Պիւռռոս ՅԱրգոս։ Իսկ Պիւռռոս ցանգ

նորանոր 'ի յուսոյ 'ի յոյս մոաբերեալ, և 'ի գեղեցիկ նահատակութեանց թեւակոխեալ յայլ, խնդրէր յաջողութեամբքն զձախողական բուժել. ուստի և ոչ 'ի պարտութենէն և ոչ դարձեալ 'ի յաղթութենէն՝ երբէք դուլ անձին կամ այլոցն ազար. և ժողովեալ անդէն զբանակն չուառնէր խաղայր յԱրգոս։

Բայց Արեւս դարան բազում գործեալ նմա և հասեալ կալեալ զգժուարս վայրացն յուղղոջ անդ, սուր 'ի վերայ եդեալ կոտորէր 'ի Գաղատացւոց և 'ի Մողոսացւոցն 'ի վերջապահ զօրուն։ Արդ էր իսկ նախապատում եղեալ Պիւռռոսի յրղձից անտի 'ի զոհան անգլուխ լերդից, եթէ զմի ոք 'ի կարևոր ազգականացն կորուսցէ Պիւռռոս. այլ յայն աղմուկ մոռացօնք նմա եղեալ գուշակութիւնն, հրաման տայր որդւոյ իւրում Պտղոմեայ դիմել նիզակակցօքն 'ի Թիկունս հարուածելոցն. և ինքն 'ի շտապ տագնապի Ռեպէր զբանակն յանդորր հանել յանձուկ վայրացն։ Բայց մոլեգին մարտի եղելոյ առ Պտղոմեաւ, իբրև 'ի Սպարտացւոց անտի քաջք և կորովիք խառնեցան անդ ընդ զօրավարութեամբ Եվալկոսին, այր ոմն անդուստ յաղթաբազուկ և արագոտն Որիսոս անուն՝ այր 'ի Կրետեայ Ապտերացի, արագավազ քերեալ առ երի պատանւոյն Պտղոմեայ՝ որ գոռայր և կռուէր քաջաբար, հար զնա 'ի կոզն և անդէն յերկիր տապալէր։ Իբրև նա այնպէս գիտապատ անկանէր, որք

ընդ նմայն էին՝ 'ի փախուստ դառնային. և Սպարտացիք յաղթական զհետ մտեալ վանէին, մինչև միջամուխ ևս 'ի կռիւն լինել՝ որոշեալք 'ի սպառազէն վերջոանեալ հետևակէն։

Այն ինչ Պիւռռոս զմահ լուեալ զորդ-ւոյն և կարի յոյժ 'ի խոր խոցեալ, ա-ռեալ 'ի վերայ նոցա խաղացուցանէր զայ-րուձին Մոլոսացւոց, և ինքն առաջին նա-հատակեալ վարեաց զերիվարն։ Էր նա ոչ՝ յապաժոյժ արեանց թաթաւեալ Սպար-տացւոցն՝ զոր հարկանէր սատակէր. թէ-պէտ և միշտ ահագին անկռուելի 'ի զէնսն, այլ յայնժամ սասոիկ ևս հզօր և գոռ անհնարին՝ որպիսի ոչ ուրեք երբէք յա-ռաջինսն։ Ապա մորակ 'ի կուշտ երիվարին ընդդէմ Եվալկոսին, վայրիկ մի ևս քերեալ սորա առ նովաւ՝ հարկանէր վաղակաւ-ռաւն զվոկ երասանացն. այլ էհար նա զերասանն և 'ի բաց կորէր։ Յայն շտապ տագնապի Պիւռռոս շէշտ զգեղարդն 'ի նա արձակեալ և թափ յայնկոյս անցու-ցեալ զտէգն, 'ի նոյն 'ի թափ հարուածոյն վազեալ 'ի վայր յերիվարէն, այնպէս հե-տի առանց կազմածոյ առհասարակ զըն-տիր ընտիր զՍպարտացւոցն դիւթաւալ կացուցանէր՝ որ մարտ եդեալ կռուէին 'ի վերայ Եվալկոսին։ Եւ այսպէս ապա զո-ռավարացն պատուասիրութիւն պատճառք լինէր Սպարտիոյ անհնարին տուգանացն, մինչ մարտ պատերազմին նորա վճարեալ իսկ էր։ Ապա Պիւռռոս՝ իբրու որ զոհ

յաղեալ 'ի ձօն որդւոյն և յուղարկաւորութիւն շքեղ կարգեալ նմա, և շատ ինչ ևս գիւրեալ 'ի սաստիկ ցաւոյն՝ թափեալ զցասումն 'ի թշնամիս անդր, այնպէս զառաջնիկայ ուղին հատեալ խաղայր ՅԱրդոս։

Լուր առեալ՝ զի Անտիգոնոս զտեղի կալեալ նստի 'ի կատարս բարձանց 'ի վերոյ գաշտին, բանակ հարեալ նստաւ մօտ 'ի Նաւպլիա։ Ապա յաւուրն երկրորդի փաթոզ մի առեալ արձակէր առ Անտիգոնոս. կոչէր զնա այր մարդախոշոշ, և ասպարէզ ևս կարդայր նմա 'ի գիւրի 'ի մարտ պատերազմի՝ վճարել վասն արքայութեանն։ Պատասխանի տայր Անտիգոնոս, եթէ 'ի զօրավարութեան իւրում՝ քան զինուցն՝ առաւել դէպ ժամանակին ինքն պատկառկայ. և եթէ ինքնին Պիւռռոս ո՛չ ևս հանդարտե յաւերժանալ 'ի կեանս, էն իսկ նորա բաց առաջի ճանապարհք շատք առ 'ի մահ։

Այլ 'ի ժամանակին յայնմիկ դեսպանք հասանէին առ նոսա ՅԱրդոսէ, աղերս արկեալք՝ զի մեկնեալ նոցա իւրաքանչիւր 'ի վայրացն՝ ազատ թողցեն զքաղաքն. և շա՛տ ևս էր երկոցուն նոցա բարեկամ հասարակաց ունել զՅԱրդոս։ Հաւանէր Անտիգոնոս, և տայր ևս Արդոսացւոց 'ի պատանդի զորդին։ Իսկ Պիւռռոս թէպէտև խոստանայր ևս 'ի բաց գնալ, այլ գրաւական ո՛չ տուեալ՝ գոսաւ կասկածելի։ Յետ այսորիկ և ինքնին Պիւռռոս հմայս իմն մեծ

յակն արկանէր. Քանզի գլուխք եղանցն յազէլոց 'ի բաց կտրեալք, 'ի դուրս զլեզուան արձակեալ՝ շուրջ լեզուին զարիւն իւրեանց։ Առ այս և 'ի քաղաքին Արգոսացւոց քրմանոյշն Լիւկեանն Ապողոնի յայսկոյս յայնկոյս վազս առնոյր, ձիչ բարձեալ՝ եթէ 'ի բազմակոյտ դիականց և յապաժոյժ արեանց տեսանէ ողջ զքաղաքն. և արծուի մի ևս խոյացեալ 'ի կռիւ մարտի, և 'ի նոյն անդրէն անհետացեալ։

Ապա 'ի խոր գիշերի մօտ 'ի պատուարս պարսպացն տարեալ Պիւռռոս զզօրն, և զդուրան Դիամպէրէս անուն՝ բաց գտեալ յԱրիստէոսէ, առեալ զիւր Գաղատացիան 'ի նեբքս մուծանէր, և անչշունչ հասեալ ունէր զհրապարակն։ Այլ քանզի յանցս գաղանացն չէր ինչ բաւական դուռնն, և պէտք էին 'ի վերուստ զբուրգսն 'ի վայր առնուլ և կրկին անդրէն հաստատել 'ի մթանն և 'ի դրնդիւն թնդման, այնչափ իմն թարթափեցան 'ի գործն՝ մինչև ազդ Արգոսացւոցն եղեալ, դիմեալ վազեցին 'ի վայրն՝ որ անուանեալ կոչի Ապիդէ, և յայլ ևս անխաբ վայրս, և անդէն փութապէս առաքեալ կոչեցին զԱնտիգոնոս։ Նա խաղաց եկն և զտեղի կալեալ կայր արտաքոյ քաղաքին. դէտակն ունէր դէպ ժամանակին տանել զյաղթութիւնն. ապա առեալ արձակէր 'ի նեբքս զիւր որդին և զօրավարս ստուար գնդաւ 'ի թիկունս քաղաքին։ Անդ գայր մտանէր 'ի նեբքս և Արեւս, առեալ ընդ իւր հազար

մի 'ի Կրետացւոց, և զյոյժ թեթևընթացս 'ի Սպարտացւոց։ Ապա միանգամայն նոքա անկեալ 'ի վերայ Գաղատացւոցն՝ խռովս հարկանէին 'ի նոսա։

Իսկ անդ Պիւռռոս միջամուխ եղեալ մեծ 'ի Կիւլարաբէ և ձայն իրախուսի բարձեալ և գոչիւն մեծ, իբրև 'ի Գաղատացւոց անտի արձագանգս իմն կրկնէր ձայնից ոչ արիագոյնս և քաջս, այլ խուճապելոց ոմանց և տագնապելոց, անդր 'ի նոցա կոյս ճեպէր սաստիկ շտապաւ հարեալ վանեալ յառաջոյ իւրմէ զերիվարսն, որ գժուարընթացք և գայթ 'ի գայթն խաղային ընդ ագուդայսն լուալեաց՝ որովք լցեալ իսկ էր քաղաքն։ Եւ ապա անդ յաղջամղջեան գիշերամարտին ոչ արդիւնք գործոց յայտնի ինչ էր, և ոչ ձայն հրամանին. և զօրականն յայսկոյս յայնկոյս թափառ վարատեալ գնայր՝ քակեալ այր յընկերէ ընդ անձուկ պողոտայսն. անդ և ոչ զօրավարաց քաջութիւն բաւական ինչ էր զզինուորականն 'ի նեբքս բերել վարժս յանձնոյլ խաւարին և 'ի խառնաձայն խառնաղանջ աղաղակին և 'ի գժուարից վայրացն. այլ առհասարակ ամենեքեան դէտ ակն կալեալք աւուրն՝ կային անդ անգործք։

Իբրև այգն լուսանայր, յակն արկեալ Պիւռռոս՝ զի ողջ Ասպիդէ շողէր 'ի փայլիւն զինուց թշնամեացն, զահի հարաւ. և սաստիկ ևս դարձեալ սրտաթափ լինէր՝ այն ինչ զակն դարձուցեալ 'ի ձօնս անդ

բաղումս 'ի հրապարակին՝ տեսանէր գայլ մի պղնձի և ցուլ մի՝ իբրու որ ընդ միմեանս գայլոյն և ցլուն 'ի կռիւ կաքաւեալք. յայն տեսիլ յուշ ևս ածէր Պիւռռոս ըզվաղնջուց զայն պատգամ նախասպատում առ նա եղեալ, եթէ՝ Օրհաս մահուն նմա առ դուրս կայ՝ յորժամ գայլ տեսանիցէ նա ընդ ցլու 'ի վեդ եկեալ։ Իսկ պատմեն Արգոսացիք՝ երկուց այն կենդանեաց անդ կանգնեալ 'ի յիշատակ վաղնջուց դիպուածոյն։ Քանզի ասեն՝ եթէ Դանայոս զառաջին նուագն միջամուխ յերկիր նոցա եղեալ, Ճանապարհորդեալ յԱրգոս առ Պիւրամեաւ Թիւրեայ, գայլ մի տեսանէ կռուեալ ընդ ցլու. և անձին 'ի դէպ յարմարեալ Դանայոս զգայլն (իբրև որ օտարածին ինքն գոլով, յարձակեալ գայ 'ի վերայ գաւառացի որերոյն՝ իբրև գայլ,) անդ զտեղի կալաւ Դանայոս 'ի զնին կռուոյն. և յաղթական եղեալ գայլոյն, ինքն յաղօթս կացեալ առ Ապողոն Լիւկեան և ձեռնամուխ 'ի գործն եղեալ՝ յաղթէր 'ի կռուին, վանեալ զԴեղանոր՝ որ յայնժամ թագաւորէր Արգոսացւոց։ Արդ անդանօր ձօնք անդրեաց կենդանեացն՝ բան զայս ունին։

Ապա յայն տեսիլ սրտաթափ սրտառուչ եղեալ Պիւռռոս, և զի և ոչինչ ըստ յուսոյ ակնկալութեանն յաջողեցաւ, խորհեցաւ տեղի տալ մեկնել. սակայն յանձկութենէ դրացն զանգիտեալ՝ առեալ հրեշտակ արձակէր առ որդին իւր Եղենոս՝

զոր անդ արտաքոյ քաղաքին Թողեալ էր ստուար գնդաւ. հրաման տայր քանդել աւերել զպարիսպն, և առնուլ ժողովել զելեալսն արտաքս՝ վանեալս 'ի Թշնամեաց։ Բայց 'ի խուճապ տագնապին և յամբոխ շփոթիցն քաջիկ զբանն չիմացեալ հրեշտակին և ոչ ճշգրիտ զպատգամն տարեալ, մեծապէս վրիպակ եղեալ 'ի տեղեկոչն՝ առեալ ընդ իւր պատանին Եղենոս և զմնացեալսն 'ի գաղանաց և զկորովիսն 'ի զօրականէն՝ դէմ եդեալ խաղայր 'ի նեղքս 'ի քաղաքն 'ի Թիկունս հօրն։ Դէպ լինէր 'ի նմին պահու և Պիւռռոսի տեղի տալ 'ի միջոց քաղաքին, և անդ յարձակ քաղաքամիջի վերջոտնել և 'ի նոյն դարձեալ մարտ եդեալ կռուել և վանել զԹշնամիսն. այլ ապա 'ի հրապարակէն վարեալ մղեալ յանձուկ պողոտայն որ 'ի դուռն հանէր, ընդառաջ նմա ելանէին՝ որ յայնմ կողմանէ դիմեալ գային 'ի Թիկունս նմա։ Նա ձայն բարձեալ գոչէր առ նոսա ընդ կրունկն դառնալ. այլ նոքա չիմանային. և զի և սաստիկ ևս խրախուսեալք էին 'ի մարտն. առ այս՝ զի և 'ի Թիկանց կուսէն նոքա մղեն առեալ տագնապէին՝ յորոց խուռն 'ի նեղքս խուժէին։

Անդ և 'ի փղաց անտի յոյժ ահագինն տապաստ անկեալ ընդ մէջ դրացն գոռայր ահեղ և պոռոտէր, և քարընդոտն դարձելոցն լինէր։ Դարձեալ և այլ ոմն 'ի գաղանացն որ 'ի նեղքս անդ մոռեալն էին՝ Նիկոն անուն, գուն մեծ գործեալ առ

նուլ յինքն զիւր փղատանն տապատտ ան-
կեալ 'ի բազում հարուածոց վերայն, և
վազեալ ընդդէմ խուճապելոյ զօրականին՝
խառով սասակ հարկանէր առհասարակ 'ի
բարեկամս և 'ի թշնամիսն, հարեալ և բա-
խեալ միանգամայն՝ որ ընդ միմեանս ան-
կանէին. մինչև հուսկ ուրեմն գտեալ գա-
զանին զդիակն, առեալ ամբարձեալ 'ի
պատիճն և եդեալ 'ի վերայ երկուց ժա-
նեացն, այնպէս դառնայր յետս մրմռեալ
լի բարկութեամբ. վանեալ առաթուր կո-
խէր՝ որոց միանգամ պատահէր։ Եւ անդ
ապա այնպէս կուռ և խիտ նեղեալ նոքա,
ոչ ոք 'ի պահուն առանձինն գործել ինչ
բաւական էր. այլ այն խուժանն իբրու որ
անշուշտ մարմին մի բոլոր միասնական լցէ,
այնպէս ոլջոյն մերթ աստ մերթ անդ միա-
ձոյլ տարուբեր լինէր։ Եւ մարտք անդ
դուզնաքեայք էին ընդ թշնամիսն՝ որ յա-
ռաջոյ անդ պնդեալք և 'ի թիկանց անտի
նեղեալք. և զեան մեծապէս էին ինքեանք
ինքեանց. քանզի սուր անդ ուրուք մեր-
կացեալ կամ գեղարդն խոնարհեցուցեալ,
հնար չէր միւսանգամ ամբառնալ և կամ
ամփոփել, այլ խոցեալք վերաւորէին ընդ
հարեալքն 'ի նոսա, և այնպէս այր զարամբ՝
հարեալ սատակէին 'ի միմեանց։

Յայնմ մեծի տագնապի ամբաւ տարա-
կուսանաց խուճապեալ Պիւռռոս, 'ի վայր
'ի սաղաւարտէն զպսակն առեալ արքունի,
տայր միւսմ ումեք 'ի բարեկամացն. և ինքն
ապաստան յիւր նժոյգն՝ խոյացաւ 'ի խռան

թշնամեացն՝ որ վանէին զնա. անդ գե-
ղարդահար 'ի պատեան զրահիցն խոցեալ՝
ոչ մեծ ինչ և մահացու, դարձաւ ընդդէմ
խոցողին. և էր նա Արդոսացի այր ոչ յա-
ւագաց ոք, որդի կնոջ աղքատի և պառա-
ւոյ: Այս պառաւ յայնժամ 'ի զնին կա-
ցեալ կռուոյն՝ որպէս և այլք ևս 'ի կա-
նանց 'ի բարձանց յարկին, տեսեալ զոր-
դին 'ի վէգ ընդ Պիւռռոսի, զահի հարեալ
'ի վտանգէ զաւակին՝ առեալ կղմինտր մի
երկոքումբք ձեռօքն արձակէր ընդդէմ
Պիւռռոսի: Անկեալ բռնութեամբ կըղ-
մինտր 'ի վերայ գլխոյն ընդ սաղաւարտն,
ջաղխեալ մանրէր զանրական 'ի խարխխ
անդր պարանոցին. յորմէ և անդէն նորա
մառախուղ զաչօքն արկանէր, և 'ի ձեռացն
թողանային երասանակք. և ինքն մօտ 'ի շի-
րիմ անդր Լիկիւմնիոսի տապաստ յերկիր
անկանէր անծանօթ 'ի խուժանէն: Այլ
անդ Զոսկիւռռոս ոմն զենուորեալ առ
Անտիգոնոսի, և երկուք և երեք այլք ըն-
թացեալք 'ի վայրն, ծանուցեալք զնա՝ ա-
ռեալ ձգէին 'ի գաւիթ մի՝ այն ինչ նորա
ոգին դառնայր 'ի նա: Անդանօր Զոսկիւ-
ռռոս զսուրն մերկացեալ զլիւրիկեցի՝ 'ի
բաց զգլուխն հատանել, զաչն 'ի պահուն
բացեալ Պիւռռոս և այնպէս իմն ահագին
տիգօք աչաց խաղաց 'ի Զոսկիւռռոս, զի և
սաստիկ զարհուրեալ՝ զդողանի ձեռքն
հարկանէին. այլ գուն եդեալ 'ի գլուխ
զգործն հանել՝ այնպէս լի արհաւրօք և
խռովութեամբ հարկանէր զսուրն ոչ շեշ-

տակի, այլ ընդ մէջ բերանոյն և ծնօտին. մինչև հազիւ ուրեմն վաստակեալ 'ի բաց կորէր զգլուխն։

Մինչ այս մինչ այն՝ շշուկ հարեալ բանին, վազէր ինքնին և Աղկիւոնեաս որդի Անտիգոնոսի. ինդրէր զգլուխն՝ իբրև ճանաչէլ զնա. առեալ յինքն՝ անդէն մորակեալ զերիվարն 'ի հայրն կոյս, և դոռեալ զնա բազմեալ ընդ բարեկամացն՝ անդ առաջի ընկենոյր զգլուխն։ Ա՛յն ինչ Անտիգոնոս յակն արկեալ ծանեաւ զնա, յարուցեալ 'ի բաց վարէր զորդին 'ի հարուածս գաւազանի, և նզովեալ և խուժադուժ կարդայր զնա. և ինքն զքղամիդն զաչքն ածեալ յարտասուս հատաւ. յուշ իւր ածէր զԱնտիգոնոս զհաւ իւր և զԴեմետր զհայր իւր. պատկերք ընտանիք յարափոխ բաղդին։ Ապա զգլուխն զարդու զարդարեալ ոսկեղն և զմարմինն Պիւռռոսի, այնպէս շքով տայր 'ի խարոյկ հանել։

Բայց յետ այնորիկ նոյն Աղկիւոնեաս պատահեալ Եղենոսի հիքացելոյն, որ քղամիդ դուզնաքեայ զանձամբ արկեալ էր, մարդասիրապէս ժողովեաց զնա և առեալ ածէր առ հայր իւր։ Զայն տեսեալ Անտիգոնոսի՝ ասէր. "Քա՛ջ ևս էն աւադիկ ո՞վ որդեակ՝ այդոքիկ, քան զառաջինսդ. նա՝ և ո՛չ զարդիս գործես դու հանբուն ուղիղ, ո՛չ բարձեալ քո 'ի դմանէ զհանդերձ զայդ, որ քան զնա՝ զմեզ ինքեանս անփառունակ յարդարէ՝ որ յաղթող եմք։ Ապա ինքն հիւրասիրաբու-

թեամբ ժողովեալ զԵղենոս, և շքեղ կազմեալ և յարդարեալ զնա, այնպէս առեալ արձակէր զնա յԵպիռոս. և տիրացեալ այնուհետև ողջոյն բանակին և զօրուն Պիւռռոսի, հեզաբար և մարդասիրութեամբ գնայր ընդ բարեկամն նորա։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Սակայն յետոյ ուրեմն ոչ ևս կրկնին բանք վասն այսորիկ. Թերևս մոռացօնք ե՞ղեալ Պլուտարքեայ 'ի հելլեալ զառանցիկ զբանսն։

2. Վասնզի Սկիպիոնի առ 'ի Պլուտարքեայ՝ 'ի համարի է որոց չենն այսօր 'ի միջի։

3. Καυσία. Տեսակ մի Արտախուրակի՝ լայնալուսանցք 'ի պահպանութիւն յարևու։

4. Հոմերոս յԵղիականն. Հագնեալդ. Բ։

ԳԱՅԻՈՍ ՄԱՐԻՈՍ

Օ ԳԱՅԻՈՍԻ Մարիոսի զերրորդն ոչ ունիմք ասել զանունն. որպէս և ոչ ըզ-կուինտոսի Սերտորիոսի, որ հասեալ կա-լաւ զԻբերիա. և ոչ դարձեալ զԼեվիոսի Մոմիոսի՝ որ առ զԿորնթոս: Քանզի Աքայիկոսդ՝ նմա գործոյ նաՀատակութեամ մականուն հանդերձեցաւ. ըստ որում և Ավրիկանոս՝ Սկիպիոնի. և Մակեդոնի-կոս՝ Մետեղեայ: Յորմէ և Պոսիդոնիոս համարի յաւէտ ինն յաղթահարել զայնոսիկ, որ զերրորդ անունն՝ Հռովմայեցւոց սեպհական և տիրագոյն կարծեն անուն, որպէս՝ Կամիլլոս, և Մարկեղղոս, և Կատոն. իբրև զի անանուն ուրեմն հանդիպեսցին նոքա՝ որ զերկուս առաջինսն միայն ունիցին: Այլ ոչ՝ի միտ առնու Պոսիդոնիոս, զի այդուիկ դա առհասարակ զկա-

նայս անանուն առադրէ. քանզի ուրուք'ի կանանց չիք առաջին անուն, զոր տիրա-դոյնս Հռոմայեցւոց համարի Պոսիդոնիոս. և յերկուց անտի այլոց զմին կարծէ հա-սարակ առ 'ի զարմէն, իբրու Պոմպէոսք, Մանլիոսք, Կուռնեղիոսք, (որպէս եթէ ոք ասէր և Հերակղիտէսք և Պեղոպիդէսք.) իսկ զմիւսն՝ յարանուանութիւն՝ կամ 'ի բուսոյ բարուցն կամ 'ի գործոց արդեանցն կամ 'ի կերպարանէ և 'ի կրից մարմնոյն, իբրու՝ Մակրինոս, Տորկուատոս, և Սիւղ-զաս. և առ Հելլենս՝ Մնեմոնն, և Գրիւ-պոս և Կալլինիկոս: Սակայն և յայսոսիկ՝ փաստոս և պայքարս 'ի նեղքս բերեն սովո-րոյթք այլ և այլք:

Ալեզդիտակի երեսացն Մարիոսի՝ մեր իսկ տեսեալ է պատկեր մի նորա 'ի քարէ կանգնեալ 'ի Ռաբենա գաղատիոյ. Ճրչ-գրիտ մեզ 'ի դէմս բերեալ զանուէր և զվայրենի բարս նորա՝ զոր ասեն: Քանզի անդստին 'ի բնութենէն կորովի և մարտիկ վիճակեալ, և դաստիարակութիւն առեալ զզինուորականին՝ քան զքաղաքականին, իբրև իշխանացաւ՝ վայրագ գտաւ և ապա-ռուամ: Եւ պատմեն՝ ոչ վարժեալ նմա 'ի հելլենականն, և ոչ հելլենացի խօսել 'ի կարևորսն. ծիծաղելի համարէր ուսանել զդպրութիւնն՝ որոց վարժապետք 'ի ծա-ռայութեան կայցեն այլոց. և թէ՝ յետ երկրորդ յաղթանակին իւրոյ՝ կարգեալ նա տեսարանաց հանդէս հելլենայիս 'ի նաւակատիս աստուծոյ, մտեալ 'ի թատ-

րոն, հաղիւ ուրեմն բազմեալ՝ անդէն յա-
րուցեալ մեկնէր 'ի վայրացն։

Եւ արդ զոր օրինակ Պղատոն ստէպ բնա-
ւորեցաւ ասել առ Քսենոկրատէս իմաս-
տասէր, որ և նա կարի խստամբեր վիճա-
կեալ էր բարոյից, եթէ Զ՚ԱՀ ԼՈՀԵՈ ՇՆՈՐ-
հաց, ՞Ի ԷՐՈՆԵԼԻԵ ՔՍԷՆՈԿՐԱՏԷՍ, այսպէս
եթէ և զՄարիոս ուրուք հրահանգեալ էր՝
զոհ չոհել Մուսայիցն և Շնորհացն Հելլէնացւոց, արդեօք չէր նորա ծիր այնչափ
անգեղեայ՝ շուրջ կարգեալ իւրոց շքեղ
մրցանացն՝ զինուորական և քաղաքական.
յորժամ նա այնպէս 'ի ցասմանէ բարկութեանն և 'ի դժպատեհ իշխանասիրութէն
և յանյագ աւելաստացութենէն վարեալ
նաւակոծեցաւ 'ի ծերութեանն, անհամբոյրս և անագորոյնս քաղաքավարեալ. որ
և մերձ ընդ մերձ ցուցեալ լեցի 'ի գործոց
անոի առն։

Սա այս Մարիոս ծնաւ յանաւագ և
յաղքատ ծնողաց, որ և զաւուրն պարէն
պատրաստէին վաստակօք ձեռացն. նոյն
անուն էր և հօրն, իսկ մօրն՝ Փուլկինիա.
չետես զքաղաքն և չեկաց ևս 'ի նմա, բայց
անագան ուրեմն. բնակեալ զառաջին ժամանակն 'ի Կիրրէատոմն աւանին Արպինեայ. ուր կեանս վարէր Թէպէտև գոռհիկ և վայրենի՝ առ քաղաքին պերճ և ողորկ քաղաքավարութեամբն, սակայն և
պարկեշտ և վաղնջուց կենաց Հռոմայեցւոցն հանգուանատիպ։

Զինուորեալ առաջին ընդդէմ Կելտի-

բերացւոց՝ 'ի պաշարել Սկիպիոնին Ափրի-
կանոսի զՆումանտիա, ինքնին զօրավարին
յայտնի լինէր քաջութիւն Մարիոսի՝ ա-
մենայն երիտասարդացն վերհագոյն. և գե-
ղեցիկ ևս յարմարէր նա զիւր անձն 'ի նո-
րասահման տարազ կենացն՝ զոր ետ Սկի-
պիոն զօրականին, որ 'ի գրգանս եղծեալքն
էին։ Եւ ասեն ևս՝ 'ի վեգ ընդ միում 'ի
թշնամեացն դիտապատ արկանել նմա
զախոյեանն յանդիման աչաց զօրավարին,
և Սկիպիոնի բազում պատուով յինքն
առնուլ զնա։ Եւ էր երբեմն յընթրիս ընդ
նմա 'ի զրուցել վասն զօրավարացն, հար-
ցեալ Սկիպիոնն յումեմնէ 'ի բազմականին,
(կամ զի անշուշտ տարակուսեալ վասն
բանին, կամ զի հարցուածոնն ինչ մի ա-
խորժ կամէր առնել Սկիպիոնի), զո՞ ոք
յետ նորա ժողովուրդ Հռովմայ կալցէ
իւր զօրավար իբրև զնա, Սկիպիոնն հեզիկ
հարեալ ձեռամբն զուս Մարիոսի՝ որ 'ի
վերոյ բազմեալ էր, ասէ. Թէրնա զսա։
Այնչափ իմն վեհ երևէր մին անդամն 'ի
պատանի տիոցն, և միւսն անդուստ 'ի վե-
րուստ խելամուտ լինէր բարգաւաճութեանն
պատանւոյն։ Եւ պատմեն՝ եթէ Մարիոս
յաւէտ իմն 'ի բանից ասոի քաջալերեալ
իբրև յաստուածապատումն գուշակութէ,
և 'ի յոյս մեծ մտաբերեալ՝ այնուհետև՝
ձեռնամուխ լինէր յիրս քաղաքին. և ձգէր
յանձն զբարձ ժողովրդապետութեանն զօ-
րավիգն սատարութեամբ Կեկիլիոսի Մե-
տեղեայ, յորոյ 'ի տան ինքնին ծառայու-

թիւն հարկանէր նա անդատին 'ի բնէ ժամանակաց հօրն։

Արդ՝ 'ի ժողովրդապետութեան իւրում Մարիոս օրէնս մի գրեալ վասն քուարկութեանն, որ զիշխանութիւն աւագանւոյն նուազէր իմն 'ի դատաստանի, ընդդէմ դարձաւ նորա Կոտտաս հիւպատոս և զծերակոյտն հաւանեցուցանէր յեղծումն օրինացն գրելոց, և կոչ ևս Մարիոսի առաքել յատեան անդր։ Իբրև վճիռ եղեւն, եմուտ Մարիոս 'ի ծերակոյտն՝ ոչ խռովեալ ինչ և ոչ նկուն, իբրու պատանի այն ինչ ձեռնամուխ յիրս քաղաքին՝ մինչև նահատակութիւն 'ի նեղքս բերեալ։ Նա՝ իբրև պերճ և ճոխ անդէն կանուխ 'ի հանդերձելոց իւրոց նահատակութեացն, կայր և սպառնալիս 'ի վերայ կապէր Կոտտասայ, 'ի բանտ զնա արկանել եթէ ըզվճիռն ոչ լուծցէ։ Իբրև Կոտտաս դարձեալ առ Մետեղղոս և զկարծիսն հարցեալ, և Մետեղղոս յարուցեալ հաւանէր ընդ նա, յայնժամ Մարիոս վարոցաւոր մի 'ի նեղքս կոչեալ՝ տայր զՄետեղղոս ածել 'ի բանտ։ Բողոք բարձեալ Մետեղղոս առ այլս 'ի ժողովրդապետացն և զօրավիգն չգտեալ, յայնժամ և ծերակոյտն խափանէր զվճիռն։ Ապա Մարիոս յանձն իւր զուարճացեալ՝ դառնայր և հաստատէր զօրէնսն. իբրու այր՝ որ ոչ յերկիւղէն սարսեցի և ոչ յամբոխոյն շնկնեցի, հզօր և ահաբեկ ծերակուտին 'ի պայքարս ժողովրդեան։ Սակայն և վաղվաղակի յայլ

ինչ դիպուածոյ շրջեցան զնմանէ կարծելք։ Քանզի և օրէնս ինն յուզեալ յայնժամ յաղագս բաշխեցոյ ցորենոյ 'ի քաղաքացիսն, նա ինքն հզօրագոյնս 'ի դիմի հարեալ և յաղթեալ, զնոյն համբաւ կալաւ առ ա-ւագանւոյն՝ զոր ինչ և առ ռամկին. յայտ արարեալ՝ եթէ և ոչ միւսմ կողմանն թիկ-նածու ոչ է ընդդէմ օգտի քաղաքին։

Իսկ յետ ժողովրդապետական բարձին հետամուտ լինէր Մարիոս ամբարտաւ-տութեանն վերհագուելին. քանզի կրկին կարգ է ամբարտաւետաց, մին 'ի թիւրոտն աթոռակաց անտի առնու զանուն՝ յոր բազմեալ դատեն. և միւսն՝ խոնարհագոյն, և անուանեն զնա ռամկական։ Յընտրել անդ զառաջինն զփառաւոր կարգին, ան-դէն և վասն երկրորդին արկանեն քուեայս։ Իբրև Մարիոս մերժեալ յառաջնոյն՝ հե-տամուտ լինէր երկրորդին, այլ դատեալ խրոխտ՝ և յայնմանէն վրէպ գտաւ։ Եւ այսպէս ապա կրկին մերժեցաւ նա 'ի միւսմ աւուր, զոր կրեաց և ոչ ոք երբէք. սակայն և ոչինչ անկաւ բեկաւ 'ի խրոխտ ոգւոյն։

Իբրև յետ սակաւուց թեկն ածեալ նա և զզօրավարութեան, վայրիկ մի ևս և յայն-մանէն մերժէր. և անուանեցաւ նա վերջինն յամենեսին 'ի նոսա, սակայն և ամբաստա-նեցաւ իբրև կաշառատու։ Եւ 'ի նոյն ա-ռաւել կասկածելի գործեաց զնա մի ոմն 'ի ծառայից Կասիոսի Սաբակոմնեայ, զոր տեսին 'ի նեղքս 'ի վանդակապատին

խառն ընդ քուարկու աւագացն. քանզի այս Սաբակոն էր 'ի կարևոր մտերմաց ան-տի Մարիոսի։ Ապա Սաբակոն յանդիման եղեալ դատաւորացն՝ ասէր, եթէ ծարա-ւեալ ինքն առ տապոյն՝ ջուր ցուրտ խըն-դրեաց. և մտեալ ծառայն բաժակ մատոյց նմա, և արբեալ՝ անդէն եկ նա արտաքս։ Այլ զՍաբակոն 'ի բաց ապա 'ի ծերակու-ռէն հանին համարակալք՝ որ զկնի. և ա-նարգեցաւ 'ի դէպ արդեօք, կամ յաղագս սուտ վկայութեանն կամ յաղագս ան-ժուժկալութեանն։ Բայց ընդդէմ Մա-րիոսի յառաջ կոչեցաւ 'ի վկայ և Գայիոս Երենիոս. սակայն ասէր Երենիոս՝ չէ՞ օրէն վկայութիւն տալ ընդդէմ պաշտպա-նաւորացն. և յօրինացն երբէք 'ի նոյն ոչ ստիպին Պատրոնք (զայս անուն տային Հռոմայեցիք պաշտպանացն). և Մարիոսի նախնիք և ինքնին Մարիոս՝ ցանգ պաշտ-պանաւորք կացին զարմին Երենեանց։ Իբրև հաւանեցան դատաւորք, անդուստ Մարիոս ընդդէմ դարձաւ Երենիոսի և ասէր, եթէ միանգամ ինքն աւագացեալ՝ ազատ այնուհետև լինէր 'ի պաշտպանա-ւորն դոլոյ։ Սակայն ոչ արդարանայր. զի ոչ ամենայն աւագութիւն յայնմանէն ա-զատ կացուցանէ զաւագացեալն և զնո-ցայն զարմ. այլ աւագութիւնն միայն՝ ո-րում զթիւրոտն աթոռակ տան օրէնք։ Արդ թէպէտև յառաջին անդ աւուրսն ձախողակի գնային իբք Մարիոսի յատե-նին, զի էին իսկ նորա դատաւորք անա-

չառք. սակայն 'ի վերջնումն յաջողէր նմա յանակնկալս, և զուգահաւասարք եղանէին քուեայք։

Բայց 'ի զօրավարութեան բարձին չափով գովանի ընծայեցաւ Մարիոս. և զկնի այնորիկ վիճակեալ նա վերին Իբերիոյ, ասեն՝ եթէ մաքրեաց յաւազակաց զգաւառն, որ դէռ ևս բարս վայրենիս և գազանամիտս 'ի նեղքս բերէր. զի և այնպէս գեղեցիկ գործ զաւազակութիւնն համարէին Իբերացիք։ Ապա դարձ արարեալ Մարիոս և միջամուխ յիրս քաղաքին եղեալ, թէպէտև անբաժ յընչաւէտութէ և 'ի ճարտարաբանութենէ՝ որով ճոխք ժամանակին յինքեանս յանկուցանէին ըզ ժողովուրդն. 'ի վերայ այսր՝ և շուք եդեալ քաղաքացիքն նորա պերճ և խիզախ բարոյին և անդրդուելի ոգւոյն և ժողովրդական քաղաքավարութեանն, դէպ եղև զի 'ի շուք պատուոյն ժառանգեաց նա ինչս և ճոխացաւ, զի և ամուսնութիւն շքեղ տարաւ նա՝ փեսայացեալ ընդ Յուլիայ 'ի հոյակապ զարմէն Կեսարեանց, որ եղբօրորդի եկաց Կեսար. այն՝ որ ապա բարձրացաւ 'ի վեր քան զամենայն հռովմայեցիս, և մեծապէս թեւարկէր զՄարիոսիւ սակս ազգակցութեանն. որպէս արձանագրեալ կայ 'ի վարս Կեսարուն։

Իսկ համբերատար ժուժկալութեանն Մարիոսի հաւատոյ ցոյցք են 'ի վերաբուժական դարմանսն։ Քանզի նորա երկոքին սրունք ոտիցն մեծամեծս այտուցեալք, և

նա դժկամակս ընդ տգէղութիւնն բերեալ՝ խնդրեաց դարման տանել 'ի ձեռն բժշկաց. և ինքնին առեալ զմի 'ի սրունիցն այնպէս անկապ կարկառէր բժշկին. ոչ խլրտէր ինչ և ոչ յոգւոց հանէր, այլ անդրդուէլի 'ի դէմն և լուռ մնջիկ բերէր զանհնարին զցաւն 'ի հաւկոսուրսն։ Իսկ իբրև և միւսումն դարման կամէր տալ բժիշկն՝ ոչ ևս կարկառէր, այլ ասէ. "Տե՛ս անեմ իսկ զապաքինելդ՝ ոչինչ արժանի ցաւոցդ"։

Յետ այսորիկ Կեկիլիոս Մեռեղոս հիւպատոս 'ի զօրավար կարգեալ մարտին ընդդէմ Յուգուրթայ, առեալ ածէր ընդ իւր 'ի Լիբիա երեսփոխան զՄարիոս։ Ընդ Մարիոս նիւթ բազում գտեալ մեծամեծ նահատակութեանց, ոչինչ հոգացաւ ըստ այլոցն օրինակի առանձին նահատակութեամբքն բարգաւաճ զՄեռեղոս գործել. իբրու որ ոչ 'ի Մեռեղոսէ երեսփոխան կարգեալ ելեալ, այլ 'ի բաղդէն գլխովին, որ ածտարաւ զնա 'ի ժամուն 'ի լայնարձակ տեսարան գեղեցիկ մրցանացն. ուստի և ձիգն զամենայն թափեաց և զիւր արութիւն քաջութեանն 'ի ներքս բերէր 'ի կռուին, և 'ի դէպս դիժուարինս՝ նա ոչ 'ի մեծաց ինչ նահանջէր առ ահին, և ոչ զփոքրումբքն անտես առնէր. յառաջագոյն քան զհաւասարս իւր քաջացեալ 'ի խորհուրդ և 'ի հանճար, առ այս և ընդ սոսկական զօրականին ել և եկն առնելով 'ի սակաւապէտ և 'ի ժուժ-

կալ կեանսն, զամենեցուն զսէրն յինքն յանկուցանէր։ Քանզի արդեօք և առն առն քաջալերութիւն մեծապէս է 'ի վաստակսն ունել իւր կամակար վաստակակից. քանզի և այնպէս Թուի իմն նուազել քրտանց վաստակոցն. նա՝ և յոյժ բերկրանք այն են Հռովմայեցի զօրականին՝ տեսանել զիւրեանց զօրավարն՝ զնոյն հաց զհասարակացն ուտել յանդիման և հանդէպ 'ի դուշնաքեայ խշոի և ինքնին ձեռն տալ յաշխատութիւնսն՝ խրամ հատանել կամ պատնէշ վիակել. զի և ոչ այնչափ ինչ աքանչացեալ են Հռոմայեցւոց զօրավարք՝ շուք և արծաթ 'ի ներքս բերելով զօրականին, որչափ որք բաժանորդք նոցայն վտանգացն լինիցին և քրտանց. և սիրեն նոքա առաւել զվաստակակից զօրավարսն, քան զորս անվաստակ Թողցեն ըզնոսա։ Այսմ ամենայնի պատկառ կացեալ Մարիոս և յինքն զզօրականսն յանգուցեալ, անդէն զԼիբիա և զՀռոմ ընդոր նա 'ի հուչակ համբաւոյն. և զօրականն ինքնին առեալ գրէր առ որս 'ի տանն էին, ոչ վՃարեալ մարտին 'ի Լիբիա՝ մինչև հիւպատոս կարգեալ Մարիոսի։

Յայսմանէ 'ի խոր խոցեալ Մետեղեայ, առաւել ևս 'ի Թաղծութիւն պաշարեաց զնա դէպքն Տուրպիղեայ։ Սա այս Տուրպիղիոս կապանք հայրենի հիւրընկալութեան սերտեալ էր ընդ Մետեղղոսի. և էր նա յայնժամ առ նմա զօրադլուխ կարգեալ Ճարտարաց գործոյն, և 'ի պահ ըզ-

գուշութեան կայր Բագանայ քաղաքին մեծի։ Սա վստահ 'ի քաղաքացիսն եղեալ, իբրու որ ոչ երբէք անիրաւեցաւ առ նոսա և ոչ հարստահարեաց ինչ զնոսա, նա՛ և ամենայն մարդասիրութեամբ վարեցաւ ընդ նոսա, յանկարծակի յեղակարծումն 'ի ձեռս անկանէր թշնամեաց. քանզի քաղաքացիքն 'ի նեղքս առեալ ժողովեցին զՅուգուրթաս. սակայն անիրաւեցան և ոչինչ առ Տուրպիղիոս. նա՝ բարեխօսեալ ևս վասն նորա, ոչք 'ի բաց արձակեցին զայրն։ Իբրև մատնտու ամբաստանեցաւ Տուրպիղիոս, և Մարիոս մի 'ի խորհրդակացացն՝ ոչ ինքն միայն խաւիս գնացեալ՝ այլ և շատ զոք գրգռեաց ընդդէմ Տուրպիղիոսի, յայնժամ Մետեղղոս յակամայս ստիպէր 'ի մահ դատապարտել զհայրենի հիւրն։ Իսկ յետ սակաւուց խայտառակեալ սուտ ամբաստանութիւնն, անդ առհասարակ 'ի խոր խոցեցան 'ի միասին ընդ Մետեղղեայ, որ ոչն՝ կարէր հանդարտել անհնարին վշտին. իսկ անդուստ Մարիոս խնդամիտ անձին գրաւականեալ ըզգործն՝ անպատկառաբար շուրջ եկեալ ասէր. Իւր ինքնին այս չար և անդուլ արձակեալ 'ի վերայ Մետեղեայ հիւրասպանի։

Ապա յայնմանէ յայտնապէս 'ի թշնամութիւն բերեալք, և պատմեն ասել երբեմն Մետեղեայ առ Մարիոս իբրու 'ի թշնամանս. "Արդ ուրեմն դու ո՞վ քաջդ ասա թողեալ զմեզ՝ խորհուրդ խորհիս նաւել 'ի տուն, և անդր հիւպատեան բար-

ձին զհետ կրթել։ Եւ զի՞նչ ապա. ո՞չ շատ
ի՛ցէ քեզ կալ ապա հիւպատոս 'ի միասին
ընդ որդւոյս ընդ այսմիկ "։ Եւ էր այս Մե-
տեղեայ որդին դեռևս պատանեակ յոյժ։
Բայց Մարիոս կարևոր վառեալ էր 'ի չու-
անդր, և Մետեղղոս յերկարաձգէր. ապա
'ի վերջէ արձակէր զնա՝ մինչդեռ աւուրք
երկոտասան մնային այնուհետև յընտրու-
թիւն հիւպատոսացն։ Նա զաւուրս երկու
և զգիշեր մի հատեալ զերկայնութիւն ծո-
վափնեայ Ճանապարհին ընդ բանակն և
ընդ Խուխկէ, անդ զոհ զոհէր մինչև նա-
ւեալ. և պատմեն ասել անդ գուշակին
առ նա. Քաջին՝ եկս գեղեցիկս և մեծա-
մեծս 'ի վեր քան զամենայն ակնկալու-
թիւն 'ի ներքս բերել Մարիոսի։ Յորմէ
մեծ ևս քաջալերեալ՝ անկանէր յուղի. և
անցեալ յաջողակ հողմով ընդ ծովն զա-
ւուրս չորս, եկեալ յանդիման լինէր անձ-
կացեալ ժողովրդեանն. ապա 'ի ժողովրդ-
դապետաց անուն մի ոմն ածեալ զնա 'ի
հրապարակ անդր, նա շատ ինչ ամբաստա-
նեալ զՄետեղեայ՝ խնդրէր անձին զհիւ-
պատոսութեան բարձն. խոստումն կուէր
կամ 'ի մահ զՅուգուրթաս վարել կամ
կենդանւոյն ձերբակալ առնել։

Յայնժամ կարդեալ նա հիւպատոս
հասարակ հաւանութեամբ, զօրաժողով
լինէր ընդդէմ օրինաց սովորութեանն խրմ
բել ամբոխ բազում 'ի ծառայից և 'ի մու-
րիկ որերոյ. ուր զի ոչինչ այնպիսի խմբէին
առաջին զօրավարք, այլ Լբրու զայն ամե-

նայն արդոյ և պատուական՝ տային և զէնս պատուական որերոյն. զմտաւ ածեալ է. թէ այր այր 'ի զօրականէն զդոյսն իւր տացէ առհաւատչեայ լաւութեան անձինն։ Այլ ոչ այս տիրադոյնս նախատ արար զՄարիոս, այլ նորա խրոխտ և լրբենի բարբառ, որով յաւակնագոյնս և յայրատագոյնս թշնամանէր զաւագս քաղաքին, և ձայն բարձեալ ասէր՝ եթէ է՛ իսկ իւրն հիւպատոսութեան բարձ՝ նմա կապուտ կողոպուտ գրգանաց ազատորերոյն և ընչաւէտ մարդկանն. և թէ՝ նա զանձին իւրոյ զսպիս և զվերսն յանդիմանէ խուժանին, և ոչ զշիրիմս ինչ զմեռելոց և զօտարին զպատկերս։ Եւ ապա ստէպ բան ճառեալ յաղագս զօրավարացն՝ որք հիդացան 'ի Լիբիա. և զԲեսսիաս և զԱլբինոս՝ արս կոչեալ տոհմիկս, այլ 'ի կռիւ անբաւականս ոմանս, որոց և առ անհմտութեանն ոչ յաջողեցան իրք, հարցանէր առ որս մերձն կային, եթէ արդեօք և նախնիք նոցա խնդրէին ունել զաւակս հանգուանատիպս ինքեան. իբրև նոքա ոչ 'ի զարմին քաջութենէ, այլ 'ի գեղեցիկ նահատակութեանցն և յառաքինութենէն գտան փառաւորք։ Զայս ասէր Մարիոս ոչ 'ի նանիր և ոչ յաւակնագոյնս, և ոչ տարապարտ հպարտացեալ 'ի վերայ աւագանւոյն, այլ զի խուժան ռամկին խնդացեալն 'ի նշաւակութեան ծերակուտին և 'ի մեծաբանս անոտեաց՝ յորոց և բնաւորեցաւ նա ցանգ չափել զարիութիւն ոգւոյն, խեռացուցանէր ինք-

նին զՄարիոս և դրդէր մի խորշել յերե-
սաց աւագանւոյն, զի այնպէս ընդունելի
խուժանին լինիցի։

Ապա իբրև անց գնաց նա 'ի Լիբիա,
ոչինչ հանդուրժեալ կրիցն Մետեղլոս և
'ի խոր ևս խոցեալ, զի 'ի վճար մարտին՝
յորժամ ճնայր միայն զՅուգորթաս ձեր-
բակալ առնել, եկն եհաս Մարիոս՝ ան-
շնորհակալու բերմամբ առ ինքն յաւագու-
թիւն ամբարձեալ կապտել առնուլ 'ի
նմանէն զպսակն և զյաղթանակն. ապա
չհանդուրժեալ լինել ընդ նմա՝ տեղի ետ
'ի վայրացն, և երեսփոխան նորա Հռու-
տիղիոս առեալ 'ի ձեռս տայր Մարիոսի
զբանակ զօրուն։ Սակայն 'ի վախճան նա-
հատակութեանցն հարաւ և ինքնին Մա-
րիոս պատուհաս կրեալ 'ի խեթացեալ Քա-
ջէն. քանզի Սիւղլաս յինքն տարաւ ըզ-
փառան, ըստ որում ինքն խնդրեաց զՄե-
տեղեայն։ Իսկ թէ զիարդ, սղագունիւք
անցցուք. քանզի և ոճով արձանագրեալ
կայ 'ի վարն Սիւղլայի։

Բոկքոս արքայ բարբարոսաց վերնագա-
ւառին՝ աներ Յուգորթասայ՝ ոչ մեծ ինչ
զօրավիգն լինէր նմա 'ի մարտին. դժուա-
րեալ ընդ անհաւատարմութիւն նորա, և
զանգիտեալ ևս 'ի զօրութենէն։ Իսկ իբ-
րև հիքացեալ Յուգորթաս գնայր փախըս-
տեայ թափառական, յոյս առեալ 'ի վեր-
ջինն՝ եկն ապաւինեցաւ առ աներ. նա
ժողովեալ զնա իբրև աղաչաւոր, քան 'ի
մարդասիրութենէն՝ առաւել ևս յամ-

թոյն, ունէր առ իւր. ցուցանէր՝ միջնորդ նմա առ Մարիոս լինել. և գրէր ևս աղաչօրէն առ Մարիոս՝ երբէք ո՛չ տալ զնա 'ի ձեռս. այլ ապա գաղտաբար նենգ լարեալ Յուգորթասայ, առաքեաց կոչեաց զԼեվկիոս Սիւլլաս դանձաւոր Մարիոսի՝ որ 'ի մարտին սպաս բազում հարեալ էր Բոկքոսի։ Իբրև Սիւլլաս համբուն վստահ 'ի Բոկքոս եղեալ, չոքաւ եալ 'ի վեր. սարբ-ջանայր իմն բարբարոսն 'ի խորհրդոցն. զի և աւուրս հարուստ այնպէս գեղևէր 'ի միտսն, արդեօք զՅուգորթան մատնել, ե-թէ զՍիւլլաս 'ի գիպահոլ ունել։

Բայց 'ի վերջէ գաւաճանեալ՝ տայր կենդանւոյն զՅուգորթաս 'ի ձեռս Սիւլ-լայի։ Եւ ապա այս լինէր առաջին պատ-ճառք աննուէր անհաշտելի հերձուածոյն Սիւլլայի և Մարիոսի, որ վայրիկ մի ևս հիմն 'ի վեր զՀռոմ տապալէր. քանզի բա-զումք՝ որ նախանձու բերէին առ Մարիոս՝ ողջոյն զնահատակութիւնն տային Սիւլ-լայի 'ի ձերբակալութեանն Յուգորթա-սայ. և ինքնին Սիւլլաս տանէր կնիք՝ քան-զակաւ տպաւորեալ 'ի նմա զՅուգորթաս նմա 'ի ձեռս տուեալ 'ի Բոկքոսէ. և ցոր-չափ եկեաց՝ վարէր զայն կնիք, սաստիկ իմն գրգռեալ զՄարիոս՝ զամբարտաւան այր և զժանտ, որում և գժոխըմբեր էր հաւասարորդս իւրոցն ունել փառաց. զոր և չար ևս զայրացուցանէին թշնամիք՝ Մե-տեղեայ զառաջին ընծայեալ մրցանն ըզ-մարտին, և Սիւլլայի՝ զպսակ գործոյն. զի

'ի բաց զխուժանն սարսռուցեն յառ նա մեծապէս շքոյն և 'ի հակամիտութենէն։

Սակայն և ընդ հուպ մախանք և ատելութիւնք և ամբաստանութիւնք ընդդէմ Մարիոսի վարատեալ փարատէին յահագին վտանգէ անտի Խոալիոյ՝ յուղեալ յարևմտից կուսէ, իբրև անդ քաղաքին պէտք լինէին մեծի զօրավարի և քաջի ղեկավարի՝ յանդորր հանել 'ի զայրացեալ մրրկէն. յորում և ո՛չ ոք 'ի տոհմիկ և յընչէղ զարմից ո՛չ ժառեցաւ թեկն զհիւպատոսութեանն ածել. ուստի և 'ի ժամուն հիւպատոս ընտրեալ կարգեցաւ Մարիոս՝ մինչդեռ 'ի բացեայ կայր։ Քանզի այն ինչ լուր հասեալ ձերբակալութեանն Յուգուրթասայ, անդէն շուինդն ահեղ հարկանէր յաղագս ահագին ասպատակին Տեւտոնեանց և Կիմբրացւոց. զառաջինն իբրև սուտ համբաւեցաւ լուր ամբոխի զօրականին նոցա և բանակին նոցա. այլ ապա յայտնի եղև նուազ քան զՃշմարտութիւնն լինել։ Քանզի մարտիկք 'ի նոսա և 'ի զէն 'ի զարդ վառեալք՝ էին բիւրք երեսուն. և ասէին՝ եթէ բազմագոյնք ևս են բանակք ազգայոց և կանանց աղխաղխեալք 'ի չուանդր, 'ի խնդիր երեալք գեռնոյ բաւական 'ի կերակուր ամբաւ խուժանին, և քաղաքաց ևս 'ի բնակութիւն նոցա. որպէս և լուեալ իսկ էր նոցա նախ քան զնոսա ըզչուն Կեղտաց, որ զքաջաբեր կողմն հասեալ կալան զԽոալիոյ՝ 'ի բաց հանեալ 'ի ձեռաց Տիւրրենացւոց։

Աբդ քանզի խուժանին այնմիկ ընդ այլ ժողովուրդս հաղորդութիւն չէր, և զի՝ և 'ի սահմանաց բացարձակ գաւառի հորդան էառուն նոքա, ոչինչ գիտէին՝ զինչ մարդիկ իցեն դոքա. և թէ՝ ո՛ւստ ուստէք շարժեալ նոքա այնպէս էկին իջին՝ իբրև ամբ և մէգ 'ի վերայ Գաղատիոյ և Խոալիոյ. սակայն և 'ի գէպ յոյժ կասկածէին լինել նոցա 'ի սերնդոց անտի Գերմանացւոց բնակաւորաց Ովկիանուն հիւսի, առ 'ի յաղթանդամ հասակէ անտի նոցա և 'ի կապուտակ աչացն և 'ի կոչելոյ անտի Գերմանացւոց զաւազական յանուն Կիմբրացւոց։ Այլ կէսք ասեն՝ եթէ սահման Կեղտաց լայնածաւալ և բացաձիգ՝ յՈվկիանու և յԱրջային կլիմայից անտի թեւակոխեալ յարևելս կոյս առ Մէոտեաւ, գայ յօդի ընդ Պոնտոսեանն Սկիւթիա. և ասեն՝ եթէ անդուստ 'ի միասին խառնեցան այն ժողովուրդք. և թէ՝ ո՛չ միահամուռ նոքա միանգամայն շարժին 'ի կայից իւրեանց և այնպէս հրոսակ սփռեն անդուլ, այլ ամ ըստ ամէ նոքա յառաջադէմ խաղան միշտ 'ի ժամանակ գարնայնոյ. և գնան ծաւալին այնպէս բազում ժամանակօք մարտիւ պատերազմի 'ի վերայ ցամաքի. ուստի թէպէտև առանձին նոցա անուանք իցեն տարբերեալք, հասարակ անուամբ կոչին նոքա 'ի բանակին իւրեանց Կեղտսկիւթացիք։ Իսկ և կէսք ասեն՝ եթէ գուշնաքեայ մասն ամբոխին նոցա էր 'ի Կիմմերացւոց անտի՝ քաջ իսկ 'ի նախնումն ծանօթք հելլենաց-

ւոց. որք 'ի շփոթից անտի Սկիւթացւոցն՝ 'ի Մէոտիդեայ անցին յԱսիա՝ ածեալք անդր 'ի Լիդդամիոսէ. այլ բազմագոյնք 'ի նոցանէ և քաջամարտիկքն բնակէին 'ի վերջին սահմանս մերձ Ովկիանուն, ուր ասեն՝ զերկիրն մառախլապատ և անտառամոլ, և ծմակ անարև առ Թաւուլթեան և խիտ առ խիտ մայրեացն՝ որ երկայնեալ ձգին մինչև յԵրկիւնուէն. և երկրին այնմիկ գոլ ընդ երկնիւք, ուր և ամբառնալ բևեռացն անդ 'ի հակելոյ անտի զուգահեռականացն՝ վայրիկ մի տարբերեալ ելցէ 'ի գագաթահայեացն կիտէ բնակչացն նորա, և տիւ զուգահաւասար գիշերոյն համառօտեալ և երկայնեալ՝ հասարակէ անդ զժամանակն. յորմէ և նիւթ 'ի նեբքս բերաւ Հոմերոսին կերգեաց վասն Մեռելապատում Ուրուականացն։

Արդ 'ի նոցուն վայրացն ասեն հորդան տալ բարբարոսացն յԻտալիա, որք յառաջն Կիմմերացիք՝ և յայնժամ վայրապար այնպէս կոչէին Կիմբրացիք։ Այլ զայսոսիկ 'ի կարծ ասեն, քան 'ի հաւաստի պատմութենէ։ Իսկ 'ի պատմագրաց բազումք զԹիւ համարոյ նոցա առաւել ասեն քան զհամբաւն։ Եւ էին նոքա յաբուլթեան քաջուլթեան անվանելիք ոմանք, և յոյժ յաջողաձեռունք 'ի կռուէլ. խոյացեալք յարձակէին սաստիկ թափով և բուռն՝ հանգուցատիպ հրոյ, և հանդարտէր և ոչ ոք առաջի նոցա. այլ վանեալք առհասարակ 'ի հանդիպոյ՝ ձգէին տանէին

իբրև կապուտ կողոպուտ։ Արդ բազում բանակք մեծամեծք Հռոմայեցւոց և զօրավարքք 1 հարուած անարգաբար առեալ 'ի նոցանէ, որք միանգամ կարդեցան կացին պահ ունել Անդրալպեանցն Գալատիոյ, առաւել ևս վառեցան խուժադուժքն յայնժամ չու առնել խաղալ 'ի Հռոմ։ Քանզի վանեալք զհակառակամարտսն առհասարակ և տիրացեալք բազում աւարաց, հաստատեցին ոչ դարձել դադարել՝ մինչև հիմն 'ի վեր քանդեալ զՀռոմ և յաւարի առեալ ողջոյն զԻտալիա։

Լուր աղէտիցն 'ի կողմանց կողմանց հասեալ առ Հռոմայեցիսն, հրաւէր կարդային Մարիոսի 'ի զօրավարութիւն. և կարդեցաւ նա հիւպատոս այս երկրորդ անգամ. այլ արդելուին օրէնք մի՛ կարդել հիւպատոս զբացականն և զարդէն կարդեալն, մինչև 'ի վերայ անցեալ պարապոյ ժամանակի. սակայն ոչինչ լուան ժողովուրդք, զի ոչ այս առաջին նուազ տեղի ետուն օրէնք՝ կարեաց քաղաքին. նա՛ զի և առաջակայն դէպք ոչինչ պակաս վայելուչ էր՝ քան յորժամ Սկիպիոն ինքնին կարդեցաւ հիւպատոս ընդդէմ օրինացն 2, ոչ առ ահի կորստեան քաղաքին՝ այլ առ հիմնայատակ զԿարքեդոն առնելոյ։

Ապա չու 'ի Լիբիոյ արարեալ Մարիոսի հանդերձ բանակաւն 'ի կաղանդսն Յունվարի՝ զոր տարեգլուխ կատարեն Հռոմայեցիք, առնոյր զհիւպատոսութիւնն և ածէր յաղթանակի հանդէս. ցուցեալ

ակն յայտնի Հռոմայեցւոց զանհաւատա-
լին նոցա բան՝ զՅուդորթաս գերեալ,
առ որոյ կենդանութեամբն ակն ոք երբէք
չունէր նկուն զխուժադուժան առնել.
այնչափ ինն այս Յուդորթաս բազմայեղա-
նակ ըստ բաղդիցն գունակ գունակ փոփո-
խէր, և ընդ լրբենի յանդգնութեանն ու-
նելով և խորամանկութիւն մեծ. այլ յայն-
ժամ քարշեալ ձգեալ նա 'ի յաղթանա-
կին հանդէս, ասեն՝ եթէ ցնորեալ անկա-
նէր նա 'ի մտաց: Իսկ յետ յաղթանակին
ածեալ նա 'ի բանտ, կէսք բռնի 'ի թի-
կանցն կորզէին զպատմուճանն, և կէսք
խուճապեալք 'ի կորզել զգինդն նորա
զոսկի՝ 'ի միասին կորզէին և զբլթակ ուն-
կանն. և այնպէս մերկ և հիքացեալ 'ի վե-
րապ մի առեալ խարդաւանէին զնա. նա
անդ լի արհաւրօք և բերանաբաց սարսեալ
ասէր. "Բաբէ Հերակլէս, զինարդ ցուրտ
է բաղանիդ ձեր": Անդանօր նա զաւուրս
վեց կռուեալ ընդ սովուն, և ցյետին շունչն
զհետ կրթեալ կենաց, հուսկ ապա այն-
պէս լուծանէր զպատուհաս զամբարշտու-
թեանցն:

Եւ պատմեն՝ 'ի յաղթանակին յայնմիկ
ածել լտերաց ոսկւոյ՝ երեք հազար և եօթն.
և ձոյլ արծաթոյ՝ հինգ հազար եօթն հա-
րիւր և եօթանասուն և հինգ. և դրամա-
կըշռոց արծաթոյ՝ եօթն և տասն հազար և
քսան և ութ: Իսկ յետ հանդիսին՝ խմբեր
Մարիոս զծերակոյսն 'ի Կապետոլիոն. և
ինքն կամ ոչինչ ուշ եդեալ կամ թէ

խրոխտագոյնս 'ի դէմս բերեալ զգէղեցիկ զիւր բախան, այնպէս 'ի նոյն պատմուճան յաղթանակին մտանէր անդր. այլ անդէն իրազգած եղեալ խոժոռութեան ծերակուտին՝ յարուցեալ ելանէր արտաքս և դառնայր անդրէն՝ վերարկու առեալ զանձամբ։

Յետ այնորիկ չու 'ի մարտ արարեալ, կրթէր յուղղոյ զզօրականն 'ի վաստակս աշխատութեանց. և յազգ ազգ արշաւանաց և յերկարութիւնս ճանապարհաց. հրաման տայր առն առն զիւր աղխն բառնալ տանել, և ինքեան ձեռաքն զկերակրիկն պատրաստել. և յայնմանէ ապա որք աշխատասիրաբար և անշղունջ կատարէին կամակար զամենայն հրամայեալսն, անուն կարգային նոցա՝ Ջորի Մարիոսեան։ Սակայն կէսք համարին՝ այլ պատճառս լինել անուանակոչութեանն, և ասեն՝ եթէ 'ի պաշարմանն Նումանտիոյ կամեցեալ Սկիպիոնի տեսանել զննել ոչ զզէնսն միայն զզօրականին և զերիվարսն՝ այլ և զջորուոցն և զկառացն զկազմութիւն զառն առն, անդ Մարիոս ածէր զառաջեաւ զերիվար իւր զքաջաբոյծ և ջորի մի քաջառոյդ և ընտելութեամբն և կորովութեամբն յոյժ երևելի. զորս տեսեալ Սկիպիոնի և մեծապէս սիրեալ և ստէպ ապա յիշատակ արարեալ զնոցա, դէպ եղև յետ այնորիկ՝ զի որք հեգնել ինչ և դուռել միանգամայն ինդրէին զայր անխոնջ և համբերատար, անուն կարդալ նմա՝ Ջորի Մարիոսեան։

Բայց թուի 'ի ժամանակին յայնմիկ գեղեցիկս յաջողել Մարիոսի. քանզի խուժադուժքն իբրու յորձանադարձ իւրեանց թափոյն արարեալ և յորդեալ ծաւալեալ՝ նախ զԻբերիա ողողել, յայն պարապ ժամանակին առեալ Մարիոս կրթէր կորովացուցանէր զմարմինս զօրականին, և զոգիսն պնդէր հաստատէր լի՛ քաջալերութեամբ. և որ մեծ ևս՝ ընտելացուցանէր զնոսա 'ի ճաշակ իւրոց բարոյից։ Քանզի նորա ահագնայեաց տիպ, և անամոք խըստամբերութիւն 'ի պատուհասել՝ յառաջն դժոխըմբերելի զօրականին, իբրև ապա սովորեցան հլուք և հնազանդք նմա, վայելուչ երևէր նոցա և կենաւրինթ. և նորա խրոխտ ոգին և վայրենի և խաղտախուզտ բարբառ ձայնին և ժահադիմութիւն կերպարանին, իբրև տակաւ ընտելացաւ նոցա առ 'ի կենակցութենէն, ահընկէցք այնուհետև թուեցան ոչ նոցա՝ այլ թշնամեացն։

Իսկ զոր առաւել քան զամենայնն սիրեաց զօրականն, զուղղութիւն նորա 'ի դատաստանի. որ հաւատիս՝ դէպս ինն պատմեն այսպիսի։ Էր անդ զինուորեալ 'ի զօրապետութեան Գայիոս Լուսիոս եղբօրորդի նորա, ոչ անբարի վիճակեալ բարոյից, սակայն և ցանկասէր գեղեցիկ պատանեաց։ Սա 'ի սէրն հարեալ պատանւոյ ուրուսն անուն Տրեբոնիոս՝ որ 'ի դասու զօրականին իւրոյ, սակայն նեղէր զնա՝ այլ դամադիւտ չլինէր։ Ապա 'ի դիշերի միում առաքեալ առ նա պաշտօնեայ մի կոչել

զնա, յարուցեալ Տրեբոնիանոս չոքաւ. (քանզի և 'ի կոչ զօրապետին անսասանել արժան չէր.) իբրև եմուտ 'ի վրան անդր, պատրաստեցաւ Լուսիոս բռնաբարել զնա. և նա ձգեալ զսուրն անդէն սպանանէր զԼուսիոս. և չէր յայնժամ Մարիոս 'ի բանակին: Իբրև դարձաւ, յառեան կոչէր Մարիոս զՏրեբոնիանոս. անդ իբրև բազումք ամբաստան կային և պաշտպան չէր ոք ուրեք, ինքնին Տրեբոնիանոս յառաջ անցեալ պարզերեաւ՝ պատմէր ոճով զամենայնն, և հաւաստիս ևս ածէր հանդերձ վկայիւք, զի բազում անգամ ընդդէմ դարձաւ հրապուրիչն Լուսեայ. և թէպէտ մեծամեծք էին պարգևքն՝ նա երեսս չարար տալ 'ի պղծութիւն զմարմինն: Հիացեալ կայր Մարիոս ընդ ազնուական խորհուրդ պատանւոյն, և յանձն իւր զուարճացեալ՝ հրաման տայր ածել անդէն զպսակն զմեծամեծ նահատակութեանցն ըստ հայրենի կարգին. և ինքնին ձեռաքն պսակէր զՏրեբոնիանոս իբրև մրցանաւոր քաջ 'ի ժամանակին՝ յորում այնպիսեաց պէտք էին գեղեցիկ օրինակաց:

Լուր բանին հասեալ 'ի Հռոմ, ոչ սակաւ ինչ զօրավիգն լինէր երրորդի հիւպատոսութեանն Մարիոսի. առ այս՝ զի և սպասեալք հրոսակին բարբարոսաց 'ի մուտս գալնայնոյ, չառնոյր յանձն զօրականն կռուել ընդ այլով զօրավարաւ: Սակայն և վրէպ դատն նոքա, զի անց և այն ժամանակ հիւպատոսութեանն Մարիոսի:

Ապա նորոգ ընտրութեանն առ դուրս հասեալ, և իշխանակից նորա 'ի կենաց զբաւեալ, թողեալ Մարիոս ընդ իւր 'ի բանակին զՄանիոս Ակիւլլիոս, դարձաւ 'ի Հռոմ. ուր և յայնժամ շատից աւագաց թեկն ածեալ զհիւպատոսութեան, Լուկիոս Սատորնինոս ժողովրդապետ՝ առաւել ևս յանկուցիչ խուժանին կացեալ հրապարակախօս լինէր վասն Մարիոսի՝ որ մտերիմ էր նորա, և թախանձ արկանէր վասն նորա հիւպատոսութեանն։ Անդաւնօր Մարիոս դժկամակս ցուցեալ զանձն ընդ իշխանութիւնն, Սատորնինոս մատնտու հայրենեաց կարդայր զնա՝ զի 'ի մեծապէս վտանգին նորա հրաժեշտ տայր 'ի զօրավարութենէն։ Ալ յայնժամ 'ի կեղծաւորութեանն յայտնի էր տեսանելեացն՝ Սատորնեայ համախոհութիւնն ընդ Մարիոսի, սակայն և խելամուտ եղեալ՝ զի 'ի ժամուն պէտք էին քաջութեանն և բախտին Մարիոսի, տային նմա զչորրորդ հիւպատոսութիւնն և իշխանակից նմա զԿատղոս Լուտատիոս՝ զայր պատուական ազատորերոյն և խուժանին ոչ ինչ անհաճոյ։

Արդ լուր առեալ Մարիոս զմօտելոյ բարբարոսացն, չու արար անցանէր զԱպենանն 'ի շտապ տագնապի. և զտեղի կալեալ առ Հռոդանոս գետովն, անդ ամրութիւն ածէր բանակին, և ամբարեալ կուտէր սաստիկ պաշար. զի մի երբէք ստիպեսցի առ նուազութեանն մարտ դնել

կռուել 'ի տարաժամու։ Այլ քանզի ա-
ծել պաշարոյն ընդ ծով զառաջինն էր-
կայնաձիգ վճարէր շրջանաւ և ծանրագնի,
նա հեշտին և արագ գործեաց։ Քանզի
բերանք Հռոդանոսին նիւթ բազում ա-
ռեալ 'ի ծփանաց ծովուն և անդանօր ա-
ւազն խառնեալ ընդ մեծամօր ճախին 'ի
հեղեղաց ալեացն, տաժանակիր և անձուկ
ևս էր նեղուցն վասն ցորենաբեր նաւացն.
ապա Մարիոս պարապեալ զօրականին
հրաման տայր հատանել խրամ մեծ և խոր՝
ասպնջական մեծ ևս նաւաց. և յայն խրամ
խաղացուցեալ ջուր առատ 'ի գետոյն, բե-
ման նոր բանայր 'ի ծովեզերին՝ քաջադիպա-
դոյն և հեշտընթաց 'ի ծով անդր։ Եւ կար-
դան զնրաամն ցայսօր յանուն Մարիոսի։

Այլ խուժադուժքն յերկուս բաժա-
նեալ բանակս, էր Կիմբրացւոցն 'ի վերին
կողմանէն ընդ երկիր Նովբիկացւոց խա-
ղալ ընդդէմ Կատղոսի, և բռնացան նոքա
անցանել յայնմ կողմանէ. իսկ Տեւտոնք
և Ամբրոնէացիք խաղային ընդդէմ Մարիո-
սի ընդ Լիգուրացիս՝ քերեալք առ ծովա-
փամբն։ Կիմբրացիք յամեալք դանդաղե-
ցան 'ի չուն. այլ Տեւտոնք և Ամբրոնա-
ցիք փոյթ և արագ անցեալ հատեալ զմիջ-
նագաւառն՝ յորդեալք ծաւալեցան բազ-
մութիւն անհուն խօլաց, անգեղեալք և
խոժոռադէմք, ահեղք և սոսկալիք, և 'ի
խորդիւն ձայնիցն և 'ի խռնտիւն խառնա-
ղանջին իւրեանց՝ ոչինչ ամենևին հանգու-
նատիպք այլոց մարդկանն։ Հասին կալան

վայր լայնասահման երկրի, և բանակ հաբեալ՝ առպարէզ Մարիոսի կարդային 'ի կռիւ. նա փոյթ ինչ չարարեալ ձայնատու խօլացն՝ 'ի զակշին ամփոփեալ ունէր զզօրականն. և կշռամբանս դառնապէս ածէր 'ի վերայ խիզախ մարդկանն, և որ կարի խրախուսեալք գրոհ 'ի խուժադուժան ժողէին տալ և 'ի կռիւ խառնել, և կարդայր զնոսա հայրենեաց մատնիչս. զի և չէր իսկ ժամանակն պատուասիրելոյ 'ի յաղթանակս և յախոյեանս, այլ հնարիմաց իմաստութեամբ փարատել վանել զահագին ամպրոպ և զահեղ փայլատակունսն զմարտին և յանդորր զԽոալիա հանել։

Զայս բանս ասէր առանձին զօրապետացն, և որ 'ի նոցուն սակի. իսկ առ սոսկականն 'ի զօրականէն, հրաման տուեալ զի մի ըստ միոջէ 'ի շերտափակէ անտի նոքա դէտակն կալեալ հայեսցին 'ի խուժադուժան. և այնպէս ընտելացուցանէր զնոսա բերել զժահադիմութիւն կերպարանաց նոցա, և ժուժալ գժոխալուր և խռպոտ ձայնին նոցա, և գիտել գիտել զտարազ զինու զարդու և շարժմանց նոցա. զի և ոչք յառաջն ահաբեկք և վայրենիք՝ տակաւ տակաւ առ 'ի յաճախ տեսութեանէն փոքրոգիք գտան յերևակութեան նոցա։ Քանզի և հաստատեալ իսկ էր, զի նորութիւնն ինքնին շատ ինչ ատութեամբ զարհուրանս բարդէ յերկիւղալին. իսկ ընտելութիւնն նուազէ զարհաւիրան և զսարսափելեացն գլխովին։

Եւ արդեօք տեսութիւն հանապազորեայ յայնժամ ո՛չ զահ զերկիւղին միայն կարձէր 'ի նոցանէն, այլ ևս ձայնն գլխովն խժդժիցն բոհմանց մեծամեծս կոտորելոց և գոռոզ պանծանայն 'ի մեծ սրտմտութիւն բարկութեան բրդէր զնոսա, և վառէր բորբոքէր առհասարակ զոգիս նոցա, մինչդեռ անդանօր բարբարոսքն ո՛չ յաղարտ միայն վարեալ աւար հարկանէին շուրջանակի, այլ և լրբենի ժպրհութեամբ յառաջ վարեալք մօտ մինչև 'ի շերտափակ անդր նոցա քերեալք բաղխէին. զի և զօրականք Հռոմայեցւոց սաստիկ սրտնեալք, և այսպիսի ի՞մն գանգատանաց հատանէին ձայնք յունկն Մարիոսի. "Անարի վատութիւն զո՞ր երբէք 'ի մեզ ակնարկեաց Մարիոս, որ աղագաւ 'ի կռուոյն խափանէ զմեզ, արգելեալ ասա զմեզ իբրու ըզկանայս ոմանս 'ի նեղքոյ դռնափակաց և 'ի պահ դռնապանաց. Օ՞ն առեալ, որ միտս և խորհուրդ բարձեալ բերեմք զաղատորերոյ, գնասցուք առնա հարցանել՝ թերևս այլուամ զօրականի նա սպասեալ մնայ գալստեան՝ մարտ դնել կռուել 'ի վերայ աղատութեան. իսկ զմեզ արդեօք ցանգ իբրև աշխատութեանց գործաւորս կալցէ դա, յորժամ նմա խրամն հատանել պէտք իցեն և կաւ և տիղմ պեղել հանել կամ զգետս առնուլ շրջել. իբրև գորին աղաղաւ արդեօք կրթեաց դա զմեզ յայնչափ վաստակս. և դարձ արասցէ դա ցուցանել հայրենեացն զգոյն նահատակութիս զիւ-

րոյ հիւպատոսութեանն։ Կամ թէ էր-
կուցեալ թերևս խիթայ գա յարկածիցն
Կարբոնիեայ և Կեպիոնիեայ՝ որ նկուն 'ի
թշնամեացն եղեն. սակայն էին իսկ գոքա
յոյժ խոնարհագոյն քան զՄարիոս 'ի
փառս և 'ի քաջութեան, և բանակ ա-
ծէին՝ յոյժ խոնարհագոյն քան զգորայն։
Բայց լաւ ևս ևս ևս արդեօք կրել փոքու ինչ
զկիրս արկածիցս նոցա և ինչ մի 'ի նեղքս
բերել, քան 'ի զնին ասա միայն նստել ա-
ղէտից նիզակակցացն մերոց "։ Յանձն իւր
զուարճացեալ բերկրէր Մարիոս 'ի լուր
գանգատանացն, և կայր և ամոքէր զզօրա-
կանն՝ գեղեցրանս տալ կռուոյն ոչ առ
յերկուանացն 'ի նոսա. այլ զի 'ի պատ-
գամաց ինչ խնդրէ գէպ ժամանակ որսալ
և զդիպան վայր զհաւաստի յաղթութեն։

Քանզի Մարիոս մեծապէս յարգանօք
տայր տանել շալակաւ ամենայն ուրեք
ուր և երթայր, կին մի Սիւրացի Մարթա
անուն՝ կարծեալ իղձ և գուշակ. և ըստ
նորա կամին կատարէր նա զզոհսն։ Սա այս
կին զառաջինն հեղեալ մերժեցաւ 'ի
Սինկլիտոսէն, քանզի խնդրէր միջամուխ
խօսել ընդ նմա զայսպիսեաց իրաց և նա-
խապատում զհանդերձելոցն լինել։ Ա՛յլ
ապա հաւաստիս 'ի նեղքս բերեալ զիւրոյ
քաջութեանն առ կանայս՝ առ որս մուտ
գտեալ էր, և յաւէտ իմն առ կին Մարիո-
սի, յորժամ նստեալ առ ոտս մենամարտ-
կացն նախագուշակ եղև՝ ո՞ ոք 'ի նոցանէն
յաղթական ելցէ. ապա առեալ նա զիղձն

արձակէր առ այրն. և էր այնուհետև նա սքանչացեալ, և բազում՝ այն էր՝ զի գնայր նա բարձեալ շալակաւ, և ածեալ բերէին զնա 'ի զոհս՝ պատմուճան արկեալ ծիրանի՝ կրկին ճարմանդեալ, և 'ի ձեռին նորա գեղարդն՝ բոլորեալ վարսակալօք և պսակօք։ Այլ Թատերականդ այդ ցոյցք՝ բազմաց պատճառք լինէր տարակուսի, արդեօք ո՞ղջ հաւատով զայդ կին յերևան ածեալ Մարիոսի, եթէ 'ի կեղծ արդեօք և համախոհ ընդ կնոջն։

Իսկ պատմութիւնն արձանագրեալ Ալեքսանդրէ Միւնդիոսէ յաղագս անգեղացն՝ սքանչելի է։ Քանզի երկուք 'ի հաւուց այսի ցանգ երևէին շուրջ զբանակաւն՝ մինչև եղեալ յաղթութեանն՝ և զհետ երթային. և քաջ իսկ ծանուցեալ էին թռչունքդ 'ի մանեկաց անտի պլնձոյ՝ զոր արկին զօրականք ընդ փոքոս նոցա՝ կալեալ զնոսա և արձակեալ անդրէն. ուստի և այն անդեղք ընդելացեալք զօրականին, թռուցեալք գայլն՝ իբրև ողջոյն տալ նոցա. և զօրականին յակն զնոսա արկեալք 'ի ջուն իւրեանց, յոյժ ցնծային իբրու որ անչուշտ 'ի հաւահմայսն յայն նահատակութեն 'ի գլուխ տարցեն։ Զետ այնորիկ և նշանք 'ի վեր երևեալ բազումք, և ո՛չ մի 'ի նոցանէն հաւաստիս ինչ բերէր. բայց Յանմերիոյ և 'ի Տուդերտեայ քաղաքացն Խալեացւոց լուր հասանէր՝ զի դիշերի երևեցան յերկինս գեղարդունք բոցատէգք, և վահանք զառաջինն այսր անդր մեկինք ձօ-

ձեալք և շարժեալք, ապա ընդ միմեանս հասեալք բախեալք զոխով բերելով զմարտիկ զօրականին, 'ի վերջէ ուրեմն կողմն մի տիրացեալ և միւսն տեղի տուեալ՝ 'ի վայր հոսեցան յարևմուտս կոյս։

Այլ և յաւուրսն յայնոսիկ և Բատաբակէս քուրմն մեծի Մօրն՝ եկեալ հասանէր 'ի Պեսինունտեայ լուր բերեալ՝ ասել նմա գիցուհւոյն յԱրքունեաց անտի դարբիրային, եթէ յաղթութիւն և զօրութիւն մեծ 'ի մարտին 'ի կողմն կայ Հռոմայեցւոց։ Նմա հաւատս տուեալ Սինկղիտոսին, և վճիռ ևս տայր՝ կանգնել տաճար գիցուհւոյն 'ի շնորհս յաղթութեանն. ապա անցեալ գայր Բատաբակէս առ ժողովուրդն ազգ զիրացն առնել. այլ Աւլոս Պոմպէոս ժողովրդապետ արգելոյր զնա և խաբուսիկ ևս կարդայր զնա և զզուեալ ևս 'ի բեմէն մերժեաց զնա. և ապա այս մեծապէս հաւատոխ առթեաց քրմին։ Քանզի անդէն Աւլոս մեկնեալ յատենէն 'ի տուն իւր՝ անկանէր տապացեալ սաստիկ ջերմամբ, և յետ աւուրց եօթանց մեռանէր. յայնապէս ցուցեալ պատուհասին և հռչակ հարեալ առհասարակ։

Արդ մինչդեռ անդէն գարեալ դադարեալ կայր Մարիոս, յանդգնեցան Տեւտոնք միջամուխք 'ի նեղ արկանել զղակիչն և հարկանել. սակայն 'ի տեղատարափ հարեալք 'ի նետից 'ի պատնչէն և կէսք ևս դիտապատս անկեալք, խորհուրդ հաստատեցին անցանել յառաջ տիրանալ Աւ-

պեանց աներկիւղք յանձնապատանք. ժողովեցին զվրանն, խաղային գնային առ երի բանակին Հռոմայեցւոց. և յայտնի իսկ յայնժամ երևէր բազմութիւն ամբաւ խուժանին նոցա յերկայնել ձգել չուոյն նոցա. քանզի ասեն՝ եթէ զաւուրս վեց այնպէս աղխաղխեալ անցանէին նոքա առ պատնշաւն Մարիոսի. և մօտ քերեալք՝ ձաղէին և հարցանէին ևս Հռոմայեցւոց եթէ ինչ մի ունիցին նոքա առաքել առ կանայս իւրեանց, առ որս երթեալ ժամանեացեն նոքա մերձ ընդ մերձ։ Իբրև յառաջ անցեալ խաղացին բարբարոսք, ապա և Մարիոս ժողովեալ զբանակն՝ զհետ խաղայր նոցա. և զտեղի կալեալ նստէր ցանգ մօտ առ երի նոցա, հարեալ զբանակն քաջամուր շուրջանակի 'ի վայրս անխաբս՝ օթագայել յանդորրու։ Եւ այնպէս հառեալք անցեալք՝ եկեալ հասանէին 'ի վրտական, որոց անուն կարդային Սեքստիլեանք, ուստի ոչինչ բացաձիգ կային Ապեանք։

Բայց Մարիոս անդանօր պատրաստէր կազմէր յարդարել մարտ՝ բանակ հարեալ 'ի վայր մի ամուր, բայց սակաւաջուր. խնդրէր՝ որպէս ասեն՝ և յայնմանէն դարձեալ դրդռել զզօրականն։ Եւ արդեօք շատք անդանօր դժկամակեալք և գանգատեալք զջրոյ 'ի ծարաւին, նա մատնանիշ նոցա զաղբիւրն արարեալ՝ որ բղխէր մօտ 'ի շերտափակ անդր բարբարոսացն, ասէր անդուստ զնուրեանց ըմբեալին գնել

գնոց արեան. ուստի և նոքա կրկնէին. "Ա՛ռ իմ՝ ուրեմն քո ո՛չ փոյթ ընդ փոյթ խաղացուցանել զմեզ ընդդէմ դոցա, ցորչափ մեր դալար է արիւնն": Նա հանդարտ և հեզ եւ պատասխանի. "Նախ քաջամուր գործել մեզ արժան է զմեր բանակն": Ապա զօրականք Թէպէտ և սրտմտեալք՝ խելամուտ եղեալ հնազանդէին նմա: Բայց խուժան բեռնակրաց բանակին՝ քանզի չգոյր ջուր ո՛չ նոցա և ո՛չ գրաստուցն, իջին նոքա ամբոխիւ 'ի գետ անդր՝ կէսք սակրաւորք, կէսք տապարաւորք, և կէսք դարձեալ սուսերաւորք և տիգաւորք, հանդերձ սափորովք՝ առնուլ ջուր Թէպէտ և կռուել հասանիցէ:

Անդանօր զառաջինն ընդ նոսա խառնեցան 'ի կռիւ գունդ մի սակաւաձեռն բարբարոսացն, յորոց և շատք եղեալք 'ի բազանեացն նստեալք ճաշէին և կէսք դեռ ևս 'ի ներքս անդ էին. քանզի և վայրն ինքնին անդ խոխոջեալ բղխէ աղբիւր ջերմկացուստի և Հռոմայեցիք ահ արկանէին նոցա, մինչդեռ նոքա անդէն խնդացեալ կային 'ի սփոփութիւնան, հիացեալք ընդ գրգալից վայրն: Այլ 'ի ձայնէ աղաղակին նոցա բազումք ընթացեալք գիմեալք 'ի վայրն, գժուարին ուրեմն էր այնուհետև սանձել Մարիոսի զզօրականն՝ որ 'ի վտանգի զաշխատաւորսն տեսանէին զբանակին. առ այս՝ զի և գունդ մի քաջամարտիկ խժդժիցն՝ յորոց յառաջն առ Մալլիոսիւ և առ Կեպիոնիանաւ նկուն գտան Հռոմայե-

ցեք, յարուցեալք յայնժամ 'ի զէն ընթացան։ Եւ անուն կարդային քաջամարտկացն այնոցիկ Ամբրոնք. և նոքա միայն աւելի էին քան զբիւրս երիս։ Թէպէտ և կերակրով յոլովացեալք և մարմնով ծանրադանդաղք, սակայն և 'ի նոյն յոյժ զուարթացեալք 'ի գինւոյ, մեծապէս խրախուսեցին գոռոզք և խրոխտք. և դիմեալք խաղային ոչ անկարգս և խուճապ, և ոչ աղաղակ բառնային անսպասաւորս, այլ բաղխս և զարկս տուեալ զինուցն չափով և թուով, և համագունդ միաբան քայլս առեալ զուգահեռս, այնպէս գալով գային՝ ստէպ զիւրեանցն բարբառելով զանունն, Ամբրոն։ Ամբրոն։. Կամ զի այսպէս այր զընկեր կարդալով՝ խրախոյս յորդէին, կամ զի այնպէս կանուխ ահ թշնամեացն արկանիցեն՝ ծանօթս տուեալ զանձանց։

Բայց նահատակք ընդդէմ նոցա յԽտալացւոց գնդէն խաղացին Լիգիւացիք. որոց և լուեալ զձայն աղաղակի բարբարոսացն և զանունն, արձագանդ զնոյն անուն կրկնէին և նոքա զԱմբրոնացն՝ զիւրեանց իսկ զհայրենին. (քանզի և Լիգիւացւոց հասարակ ըստ ազգին զայս կարդան անուն)։ Եւ այնպէս ապա աստի և անտի զնոյն անուն ստէպ կրկնեալ և երեքկնեալ՝ մինչև խառնեալք 'ի կռիւն. զնոյն ձայն և երկոցունց գնդացն հնչէին զօրապետք՝ և անդ այր զարամբ բարձրացուցեալ զձայնն, յայն աղաղակ ապա ջեռեալք բորբոքեալք այնպէս սաստիկ ևս զայրացան 'ի յոգիս իւրեանց։

Բայց Ամբրոնք 'ի հոսանաց անտի գետոյն բաժանեալք երկիրեղկեցան. քանզի մինչև 'ի կարգ դասաւորեալք նոցա յայնկոյս նորա, շտապաւ 'ի վերայ նահատակացն անկեալ Լիգիւացիք, խառնեցան 'ի մարտս։ Անդուստ և Հռոմայեցիք 'ի Թիկունս Լիգիւացւոց՝ դիմեցին 'ի վերուստ մեծաւ բռնութեամբ, որպէս զի և տագնապեցան նոքա յայնժամ Թիկնադարձոյց լինել. և շատք ևս անդ տապաստ անկանէին՝ յափն գետոյն հարեալ այր ընդ ընկեր 'ի մեծի խուժանին և ընդոյր գետն յարիւն ապաժոյժ և դիակամբք անկելոցն։ Իսկ որք անցեալն էին ընդ գետն, սրտաթափք 'ի Հռոմայեցւոց՝ կէսք դիտապաստք կէսք վանեալք ապաւինեցան մինչև 'ի բանակ անդր Իւրեանց և 'ի կառն։ Բայց անդ 'ի դուրս յարձակեալ նոցա կանայք և ընդդէմ դարձեալք 'ի սուր և 'ի տապար, ձի՛չ բարձեալ կատաղի՝ զայրագին լի՛ բարկութեամբ, առհասարակ յետս ընթադրեալք զփախստեայսն և զհետամուտսն, զկէսս Իբրև մատնտուս և զկէսս Իբրև թշնամիս, խառնամուխք 'ի մարտիկսն՝ զվահանս կորզեալք մերկ ձեռօք զՀռոմայեցւոցն և զսուսերսն յափշտակեալք, դիմագրաւք յամենայն 'ի վերս և 'ի սատակումն անձանց՝ անպարտելի արութեամբ նահատակեցան մինչև ցվախճան։ Եւ այսպէս ապա՝ զմարտն խառնեալ ասէն յայնժամ առ դետոնն ըստ դիպաց՝ քան 'ի հրամանէ զօրավարին։

Ապա Հռոմայեցիք հարուածս ածեալ մեծամեծս 'ի վերայ Ամբրոնացն և ընկերս կեալ՝ զի և գիշերոյն 'ի վերայ հասանէր պահն, նոքա ոչ երգս յաղթականս 'ի բերան առին ըստ օրինի կարգին 'ի վերայ մեծի յաջողութեանն, և ոչ 'ի գինեբբուս լինչ մանին ընդ վրանս, կամ ուրախացան լինչ յընթրիս հիւրամեծարս. և որ հեշտալին ևս արանց՝ որ գեղեցիկ յաջողութեամբ մարտ եղեալ կռուեալ էին՝ քուն քաղցր չառին նոքա. այլ ողջոյն զգիշերն այնպէս յահ և յերկիւղ և 'ի վարանս կացին։ Քանզի և էր իսկ նոցա բանակ շուրջ պարիսպեալ ոչ 'ի խրամոց և ոչ պատնշաւ. և անդուստ ևս բիւրաւորք բազումք բանակեալ կային 'ի բարբարոսաց անկռուելիք. ընդ որս համախումբ և փախստականք եղեալ Ամբրոնաց անտի, ողբ իմն զամենայն գիշերն լսելի լինէր խժդժիցն՝ ոչինչ նման օրինակ 'ի կոծ և յաշխարան մարդկանն, այլ կաղկանձիւն և ոռնիւն և կրճիւն գազանաց՝ մղձկեալ 'ի խէթս սպառնալեաց. և ապա յամբաւ խուժանէն յայնմանէ խառնաձայնն՝ շուրջ զբերինս հնչեցուցանէր և զխոխոմս գետոյն, և հասեալ ըզդաշտն առհասարակ ընդոր ահագին գոչմամբ. յորմէ և Հռոմայեցիք պակուցեալք՝ ինքնին և Մարիոս զահի հարկանէր. ակնկալեալ ժամ 'ի ժամէ ճնային գիշերամարտին՝ լի արհաւրօք և խռովութեամբ։ Սակայն ոչ 'ի գիշերին և ոչ դարձեալ յաւուրն երկրորդի յարձակեցան բարբա-

րոպքն, այլ անդէն զտեղի կալեալք կաղ-
մէին պատրաստէին, և 'ի գունդս գունդս
բաշխէին գեղեցիկ կարգաւ։ Եւ քանզի
անդանօր 'ի վերոյ բարբարոսացն լերինք
փապարուտք ամբարձեալ կային և լի՛ խա-
ւարին ափափայիւք 'ի հովանաւոր 'ի Թաւ
մայրեաց անտի, անդր Մարիոս առեալ
արձակէր զԿղաւդիոս Մարկեղղոս երեք
հազար հետեւակօք, հրաման տուեալ դա-
ղանամուտ լինել. և ապա 'ի Թիկանց կու-
սէն անկանել 'ի վերայ բարբարոսացն 'ի
ժամ կռուոյն։

Ապա կանուխ կերակուր և հանգիստ
տուեալ զօրականին, 'ի ծագել աւուրն
ածեալ զնոսա արտաքոյ պատնշին՝ կար-
գէր Ճակատեցուցանէր, և յառաջոյ ար-
ձակէր զայրուձին 'ի դաշտին։ Իսկ Ցեւ-
տոնք յայն տեսիլ չհանդուրժեալք մնալ
Հռոմայեցւոցն ի՛ջանելոյ 'ի մարտ 'ի դիւ-
րի, 'ի շտապ տագնապի մոլեգին 'ի զէն 'ի
զարդ վառեալք՝ խաղային գնային 'ի վե-
րայ նոցա անկանել 'ի բլրին։ Յայնժամ
Մարիոս ընդ ամենայն կողմն առաքեալ
զզօրապետսն, հրաման տայր քաջութեամբ
կալ զտեղի առնուլ, և անդուստ տեղին-
կէց 'ի Թշնամին լինել 'ի մօտել նոցա. և
ապա զվաղակաւորն 'ի գործ առեալ՝ 'ի
վայր կոյս բուռն և սաստիկ զյարձակեալսն
ընկրկել. քանզի անդանօր զառ 'ի վայրն
ոտնառ և 'ի նեղքոյ կալով Թշնամեացն՝ ոչ
ինչ ուժեացեն ասէ նոցայն հարուածք. և
ո՛չ դարձեալ ապարատիկ նոցա կուռ ինչ

գործեսցէ՝ ցանգ յերերի դեղևեալ նոցա յանհարթութենէ վայրացն։ Զայս ինչ Մարիոս ազգ առնէր զօրականին, և ինքն յառաջ նահատակէր. քանզի և ոչինչ պակաս քան զամենեսեան կիրթ էր մարմնոյն, և արութեամբ քաջութեամբ բոլորիցն վերհագոյն։

Իբրև այնպէս զդէմ կացեալ Հռոմայեցւոցն՝ ընկրկէին զբարբարոսան'ի վերէլսն անդր, նոքա առաթուր հարեալք և նհանջեալք՝ տակաւ վերջոտնէին անդրէն 'ի դիւրն. Իբրև անդ առաջինքն կարգէին կազմէին, անդուստ 'ի թիկանց կուսէն ձայն խառնագոչ բարձրանայր խժդժիցն, յորոց վերայ անկեալ իսկ էր Մարկեղլոս 'ի ձայն պատերազմին 'ի լերանց անտի ուր 'ի դարանի կայր. հորդան 'ի վայր կոյս գերոյթ սաստիկ տուեալ զօրականին՝ ձայն տուեալ խրախուսէր, և հարկանէր սատակէր զվերջն նոցա. նոքա 'ի զօրավիգն ստիպեալ ղյառաջապահսն իւրեանց, այնպէս յեղակարծումն յաղէտս ամբաւ տարակուսանաց արկանէին առհասարակ զբանակն. և ապա ոչ հարուստ մի հանդարտեցին զտեղի ունել՝ այնպէս յառաջոյ և 'ի վերջոյ առեալ հարուածս. այլ քակտեալ բաժանեցան 'ի մեծամուր պատրաստութենէն, և 'ի փախուստ խուճապեցան. որոց զհետ Հռոմայեցւոցն մտեալ՝ սուր 'ի վերայ ոգիս աւելի քան տասն բիւր պակաս առնէին 'ի նոցանէ՝ ընդ գերի և ընդ մեռեալ։

Ապա տիրացեալ առհասարակ վրանաց նոցա և կառաց և ողջոյն կարասւոյն բարբարոսաց, վճիռ եառուն տալ Մարիոսի որչափ ինչ յանկածէ անտի գողունի չէր. թէպէտ և 'ի շքեղ պարգևաց անտի ոչինչ համարեցան տալ տրիտուր գեղեցիկ զօրավարութեան նորա 'ի մեծ տագնապ տարակուսին այնորիկ: Իսկ կէսք այլազգաց ոչնին զկարծիսն յաղագս պարգևին որ յանկածէն, և համարոյ անկեալոցն: Բայց ասեն՝ եթէ Մասսալիացիք 'ի բաղմակոյտ ոսկերաց անկեալոցն զայդիս իւրեանց ցանգեցին շուրջանակի. և թէ՝ 'ի գիսականցն նեխեալոց և 'ի տեղոյ անձրևացն ձմերայնոյ անդանօր, յոյժ յուռթացաւ երկիրն և 'ի իւոր ևս տարրացաւ նեխն և ապաժոյժն. զի և ապա դարնայնի աքանչելի ինն առատացոյց զպտուղն. և քաջ զբան զԱրքիլոքոսին արդարացոյց, որ ասաց. եթէ "'Ի պատճառէ աստի յայսմանէ յոյժ պարարտանան անդաստանք": Ա՛ռ այս և պատմեն՝ եթէ յետ մեծամեծ մարտից պատերազմաց բաղում այն է՝ զի իջանէն տեղատարափք անձրևաց. կամ զի 'ի Քաջաց ոմն այնպէս ողողեալ սրբէ լուանայ զերկիրն 'ի ջուր սուրբ և գիւցատեղաց. կամ զի յարեանց վտակէն և 'ի նեխութենէն գիճին և թանձր 'ի վեր ամբարձեալ շոգի՝ խտացուցանէ զօդոգ յեղյեղուկ և 'ի բաղում ինչ գիւրափոփոխ 'ի դուզնաքեայ պատճառէ:

Իսկ յետ վճարելոյ մարտին, 'ի զինուց

անտի և յաւարէ բարբարոսացն հատընաւոր զէնընտիր արարեալ Մարիոս զդէղապիայլն և զանարատն 'ի հանդէս շքեղ յաղթանակին, զայլն ամենայն առեալ կուտէր շէղջ 'ի խարոյկ մեծ՝ զոհ կատարել հոյակապ։ Շուրջ կացեալ զօրուն 'ի զէն 'ի զարդ վառեալ և պսակօք բոլորեալ, և ինքն ըստ օրինի կարգին գօտեւորեալ և զպատմուճանն արկեալ. այն ինչ ջահ առեալ և յերկինս 'ի վեր ամբարձեալ երկոքումբք ձեռօքն՝ կամէր մատուցանել 'ի նեբքոյ խարուկին, յայնմ պահու արք աւագք բարեկամք անդուստ մորակ 'ի կուշտ երիվարին գային հատանէին առ նա. ուստի և առհասարակ 'ի լուութիւն դարձեալք յակՃիուս կացին։ Իբրև մոտ եղեն՝ ելեալք յերիվարէն, կալեալք զաջոյն Մարիոսի՝ աւետիս տային նմա զՀինգերորդ հիւպատոսութեանն, և նամականի ևս վասն բանին մատուցին նմա։ Անդանօր ցնծութիւն մեծ յաւելեալ 'ի հանդէս յաղթութեանն, առհասարակ զօրականք խնդացեալք ծափս և կայթս հարկանէին 'ի շաչիւն շառաչիւն զինուցն, և զօրապետք միւսանգամ 'ի բոլորս սարդենեաց առեալ պսակէին զՄարիոս. և ապա ինքն մատուցեալ կրակ 'ի խարոյկ անգր՝ այնպէս կատարէր զզոհն։

Այլ որ անապակ և սուրբ երբէք չտայ մեզ վայելել 'ի խնդութեան, և զկանանցածնաց զկեանսն խաղ առնէ խառնութեամբ չարեաց և բարեաց, կամ Բախտն գլխովին ելցէ կամ թէ 'ի Քաջաց խեթա-

ցելոց ոմն, կամ թէ ինքնին հարկաւոր
բնութիւն իրացդ, ոչ յետ բաղմաց ինչ ա-
ւուրց՝ ածեալ բերէր առ Մարիոս համ-
բաւ՝ որչափ ինչ միանգամ դէպք պատա-
հեցան Կատղոսի իշխանակցին. այնպէս
միւսանգամ իբրև 'ի պարզի 'ի խաղաղաւէտ
անդորրութեան նոր խմն յուզեցաւ ամ-
պրոպ մրրկածին և ահաբեկ հռովմայ։
Քանզի Կատղոս՝ որ ընդդէմ Կիմբրացւոց
բանակեալ կայր 'ի պահ զդուշութեան
լերանցն Ալպեանց, զի մի թերևս 'ի կող-
մանս կողմանս բաշխ տուեալ զօրականին՝
նուազեալ 'ի զօրութենէն գտանիցի, էջ 'ի
վայր յԽոալիա և բանակ հարեալ 'ի վայր
մի 'ի հանդիպոյ Անտիսոփն գետոյն՝ շուր-
ջանակի ամրացուցանէր պատնէշք արգե-
լուլ զանցսն. և կամուրջ մի ևս կապէր 'ի
զօրավիգն յայնկոյս կացելոցն, եթէ երբէք
բարբարոսք անցեալք ընդ անձուկ կիրճսն
նեղեսցեն անդ զպահանորդսն։

Բայց բարբարոսքն յանչափս գոռոզա-
ցեալք և խրոխտք, զի և 'ի ցոյցս քաջու-
թեան ոգւոցն՝ քան թէ հարկաւորեալք
ինչ, մերկամարմինք կացին ժուժացին 'ի
ձիւնաբերսն. և ընթացեալք այնպէս ընդ
պաղս սառամանեացն և ընդ ձիւնախա-
ղաղսն՝ եկին հասին 'ի կատարս լերանցն.
և ապա 'ի բարձանց անտի ընդ երաստանոք
զվահանսն առեալ զլայնչիս՝ այնպէս սա-
հեալք խաղացին ելին 'ի վայր ընդ գահա-
վէժ ժայռսն և ընդ վախս ամբաւս և սե-
պացեալս։ Իբրև բոլորեցան բանակեցան

մօտ և զննեցին զիսորս գետոյն, ձեռն արկեալ 'ի ընուլ զնա, հարեալ կորէին անդանօր իբրև հսկայք Տիտանեանք 'ի բլրոց անտի շուրջանակի, ձգէին վարէին 'ի գետ անդր առհասարակ տունկս արմատաքի խլեալս և ժայռից հատորս և հողաբլուրս, որովք և զհոսանս անձկացուցեալ զգետոյն, առեալ արձակէին բռնութեամբ ամբարտակս անարիս ընդդէմ հաստարանաց կամրջին. որ և 'ի թափ վարեալք գետոյն ուժգնակի բաղխմամբ սարսէին զկամուրջն։ Յայն տեսիլ ահագին պակուցեալ զօրականին Հռոմայեցւոց, բազումք այն էին՝ որ 'ի մեծ բանակէն վերջոտնեալք տեղի տային։

Անդ ապա Կատղոս արդարև զքաջ և զլաւ զօրավարի բերեալ զնմանութիւն, քան զանձին շուք՝ զքաղաքացւոցն նախապատիւ առնէր. քանզի ոչինչ բաւական 'ի ժամուն հաւանեցուցանել զզօրականն կալ յակաստանի՝ որ և գնային իսկ 'ի բաց լի անհնարին արհաւրօք, հրաման տայր առնուլ բառնալ զԱրծուին. և ինքն կացեալ 'ի գլուխս չուոյն՝ խաղայր յառաջոյ նոցա. խնդրէր զանարգանան զայն անձին ողջոյն գրաւականել և ոչ հայրենեացն. զի կարծեացին նոքա ոչ իբրև փախստեայք ոմանք, այլ հեռընթացք զօրավարին։ Իսկ բարբարոսքն 'ի վերայ յարձակեալք ամրին՝ որ յայնկոյս Անտիոքին և կալեալ զնա, և հիացեալ զարմացեալք ընդ քաջութիւն ամրականացն Հռոմայեցւոց՝ արք հզօրք և

կորովեք, ոչք մարտ մղեալք և 'ի կշիռ զո-
գիսն եդեալք մեծապէս արուեստիւ՝ ար-
ժանի քաջք իւրեանց ցուցան հայրե-
նեացն, արձակէին զնոսա յաղատութիւն
փառաւք պայմանս կռեալ և երդումն եր-
դուեալ 'ի Ցուլն պղնձի 3. և ապա այն
Ցուլ յաւարի առեալ յետ մարտին նոցա,
առեն՝ եթէ ածաւ 'ի տուն Կատղոսի՝ իբրև
անկած հոյակապ նորայն յաղթութեանն։
Յետ այնորիկ յորդեալ ծաւալեալ բար-
բարոսացն ընդ դաւառն Թափուր 'ի պա-
հակաց՝ աւար հարկանէին։

Զայնու ժամանակաւ կոչեցեալ Մա-
րիոս 'ի Հռոմ քաղաք, մինչդեռ առհասա-
րակ ակն ունէին յաղթանակին նորա, և
ինքնին ծերակոյտն մուտքիւրադոյն վճիռ
տուեալ էր, հրաժարեցաւ Մարիոս. կամ
զի հաւասարորդ շքոյն խնդրէր առնել զզ-
րականն որ ըստ նմա նահատակեցան, կամ զի
խնդրէր 'ի ժամուն աներկեան զժողովուրդն
գործել, թողեալ իբրու յաւանդ 'ի բախտ
քաղաքին զփառս առաջին իւրոց նահա-
տակութեանցն, առ 'ի շքեղ ևս յարդա-
րել 'ի ձեռն հանդերձելոցն։ Ապա խօսս
ժամուն քաջադէպս զրուցեալ, յարեաւ
գնայր առ Կատղոս և քաջալեր 'ի նեղքս
մատուցանէր նմա, և առաքէր կոչէր զզ-
րականն իւր 'ի Գաղատիոյ. նոքաք հան-
դերձ չու առնէր անցանէր Մարիոս ընդ
Իրիդանոս գետ հանել վանել զբարբա-
րոսն արտաքս քան զԻտալիա։ Այլ նոքա
ինալ ասէին Տեւտոնեանցն և զարմանալ

եւ ընդ այնչափ յամենն նոցա, եւ այնպէս դանդաղէին 'ի մարտն. կամ զի անշուշտ անտեղեակք էին հարուածոյն նոցա, կամ զի այնպէս ցոյցս տային ոչ հաւատալ բանին. քանզի եւ սաստիկ պատուհասէին՝ որք միանգամ համբաւ չար բերէին զնոցանէ։

Ապա առեալ դեսպանս արձակեցին առ Մարիոս, խնդրէին 'ի նմանէ գեոլն եւ քաղաք բաւական վասն անձանց եւ վասն եղբարց իւրեանց։ Իսկ հարցեալք նոքա 'ի Մարիոսէ, ո՞յք ոմանք իցեն եղբարքն, եւ պատասխանի տուեալ՝ եթէ Տեւտոնք, առ հասարակ 'ի ծաղր հատանէին. եւ Մարիոս հեգնեալ ասէր. "Աղէ դուք վայր մի 'ի բաց Թողէք զեղբարսդ զայդ. քանզի ունին իսկ դոքա եւ կալցեն եւ յաւիտեանս ժամանակաց գեոլն, զոր առին նոքա 'ի մէնջ"։ Հեգնութեանն 'ի վերայ կացեալ դեսպանացն՝ սկսան թշնամանել զնա, եւ սպառնացան եւ վաղվաղակի զպատուհասն լուծանել 'ի ձեռն Կիմբրացւոց, ապա եւ Տեւտոնեանցն 'ի ժամանել նոցա։ Կրկնեաց Մարիոս եւ ասէ. "Ա՛յլ դոքա ժամանեցին արդեօք. իսկ ձեզ ինքնին ոչ գոյ մեկնիլ ասել՝ մինչեւ գիրկ ընդ խառն եղեալ ձեր ընդ եղբարսդ"։ Զայս ասաց, եւ հրաման տայր ածել զառաջեաւ զթագաւորն ըզՏեւտոնեանց շղթայակապս, զոր ձերբակալ իսկ արարեալ էին Սիկուանացիք 'ի վերայ Ալպեանց 'ի փախչել նոցա։

Իսկ Կիմբրացիք զայս բանս լուեալք 'ի դեսպանացն, անդէն փութանակի խա-

զային 'ի վերայ Մարիոսի. նա յանդգնեալ կայր և իւրում բանակին միայն խնամ ա-ծէր։ Եւ ասէն՝ եթէ 'ի մարտին յայնմիկ առաջին Մարիոս հնարագիւտ եղև 'ի փո-փոխութեան աշտէիցն։ Քանզի տիգաբուն փայտին ագուցեալ յերկաթն՝ պնդեալ կայր 'ի սեպս երկուս երկաթի. իսկ Մա-րիոս յայնժամ թողեալ զմին որպէս և էրն, միւսոյն փոխանակ կարդէր սեպ 'ի դիւրախորտակելի փայտէ. հնարաւոր ի-մաստութեամբ՝ զի 'ի հարստեալ աշտէին յասպար թշնամւոյն՝ մի՛ շեշտակի այնպէս կացցէ մնասցէ, այլ փայտեայ խորտակեալ սեպին՝ թեքեսցի յերկաթն կոյս. և նիզա-կաբուն զհետ գայցէ առ 'ի քարշ կառեալ այնպէս 'ի սլաքն թեքեալ։

Արդ յայնժամ Բիովրիկս արքայ Կիմ-բրացւոց շուրջ առեալ սակաւս յիւրոց անտի, մօտ գայր յերիվար աշտանակեալ 'ի բանակ անդր թշնամւոյն. ձայն տայր Մարիոսի, օր և տեղի սահմանել 'ի կռիւ մարտի, վճարել սահմանել ընդ նոսա վասն ժառանգութեան գաւառին։ Եւ պատասխանի Մարիոս, չէ՛ օրէն Հռոմայեցւոց զթշնամին խորհրդականս առ 'ի մարտ առնուլ. սակայն և այնպէս հաճեսցէ նա զԿիմբրացիս։ Ապա ժամանակեցին մարտ դնել կռուել յաւուրն երրորդի, և տեղի մարտին՝ եռուն զդաշտն մօտ 'ի Բերկելլաս. վայր դիպան այրուձիոյն Հռոմայեցւոց, և Կիմբրացւոցն դարձեալ՝ ձգել երկայնել անդ զհրոսակ ամբաւ խուժանին։

Անդանօր ըստ ժամանակելոյն էկին հասին՝ կարգեցան Ճակատեցան հանդէպ միմեանց։ Էին Կատղոսի զօրականք բիւրք երկու և երեքհարիւր, և Մարիոսի բիւրք երեք և երկու հազար. որ բաշխեալք և կարգեալք միանգամայն 'ի թևն աջոյ և 'ի ձախոյ՝ 'ի մէջ առեալ փակեցին զԿատղոս. ըստ որում գրեաց ինքնին Սիւլղաս՝ որ կռուեցաւ 'ի մարտին։ Եւ ասեն՝ եթէ ակն ունէր Մարիոս խաղալ անկանել 'ի ծայրէցն և 'ի թևոցն 'ի վերայ փաղանգաց թշնամւոյն, և այնպէս ողջոյն զյաղթութիւնն իւրումն գրաւականեալ զօրականին, անբաժ 'ի մրցանացն զԿատղոս կացուցանել և 'ի մարան չխառնել. 'ի միջոցի Ճակատուն ծոց իմն պարուրելով, զոր է տեսանել 'ի զոր կարգեալ երկայնաձակատ. այնպէս կարգեաց Մարիոս զզօրն։ Եւ պատմեն եւ՝ եթէ և ինքնին Կատղոս ապա զնոյն պատճառս 'ի ներքս բերեր 'ի չքմեղս անձինն. և ամբաստան կայր զՄարիոսէ՝ զի այնպէս դրժանօք գնաց յայնժամ։ Իսկ անդուստ հետեւակազօր Կիմբրացւոց էլանէր գայր յիւրոց պատնշաց տակաւ և հանդարտ, և կարգեալ Ճակատէր 'ի գունդ ստուար քառակուսի. և մէն մի 'ի կողմանցն ձգէր երկայնէր ասպարէզս երեսուն։ Բայց այրուձին հնդեռասան հազարաց՝ յառաջ վարեալ խաղայր շքեղ և հոյակապ։ Եւ էին նոցա սաղաւարտք 'ի տիպ կերպարանեալք ահագին և նորանշան դրօշելոց գազանաց ամեհեաց բերա-

նաբացեալք. և վառեալք 'ի զարդս վերջս ամբարձաձիգ ցցունից՝ երևէին յաղթք առաւել և երկայնադէզք։ Եւ էին նոցա զբահից պատեանք փայլուն յերկաթոյ, և վահանք նոցա շողշողուն սպիտակք. տանէին առհասարակ նետս երկթևեանս. և 'ի խառնել մարտին՝ վաղակաւոր 'ի գործ առնուին մեծ և յաղթ։ Եւ խաղային գնային յայնժամ ոչ 'ի հանդիպոյ Ճակատուն Հռոմայեցւոց, այլ յաջն կոյս թևակոխեալ՝ այնպէս տակաւ տակաւ առնուլ զնոսա 'ի նեղքս իւրեանց փակել և հետևակազօրուն՝ որ կայր 'ի ձախմէ։

Քանզի իսկ խելամուտ դաւանացն զօրապետքն եղեալ Հռոմայեցւոց, այլ ոչինչ ժամանեալ սանձել զզօրականն, այն ինչ 'ի նոցանէն մի ոմն աղաղակ բարձեալ եթէ 'ի փախուստ թշնամիքն խուճապեն, անդ միահամուռ թափ տուեալ զհետ պնդեցան նոցա. բայց անդուստ հետևակազօրք ամբաւ խուժանին բարբարոսաց արձակ արձակ հորդան տային իբրև ալիք բազմակոհակք ահագին ծովու։ Յայնժամ Մարիոս ձեռս 'ի վեր ամբարձեալ յերկինս, ուխտս դնէր դիցն զհարիւրեզեանն. անդ և Կատղոս ուխտ ուխտէր 'ի վեր զձեռան առեալ նուիրել սրբել զԲաղդ զաւուրն։ Եւ ասեն՝ Մարիոսի յայնժամ զոհ զոհեալ և զախոնդիս սպանդիցն զննեալ, անդէն աղաղակեալ բարձր եթէ՝ Իմ է յաղթութիւնն։

Այլ 'ի խաղալ անդ երկոցուն բանակացն, պատմէ ինքնին Սիւլլաս պատահ-

եալ իր մի զվրէժխնդրութեան գիցն ընդ-
դէմ Մարիոսի։ Քանզի ահագին ամբ և
մեգ փոշւոյն անդանօր մրրկեալ յուզեալ,
պատէր ծածկէր զլերն. և Մարիոս ինքնին՝
որ յառաջագէմ խաղացեալ իսկ էր ան-
հնարին Թափով՝ի վերայ բարբարոսացն՝ ոչ
յաջողէցաւ հասանել ունել զնոսա, այլ
անդրագոյն ևս յառաջ անցեալ առ երի
փաղանգին նոցա, այնպէս հարուստ ժա-
մանակ յածէր Թափառէր՝ի դաշտին վրի-
պեալ՝ի նոցանէ։ Իսկ բարբարոսք ըստ գի-
պաց պատահեալք Կատղոսի խառնեցան՝ի
մարտ ընդ զօրականին նորա, յորս էր և
Սիւլլաս՝ որպէս ասէ իսկ ինքն. և անդ
մարտակից Հռոմայեցւոցն՝ ասէ՝ գտանէր
և տապն և արեգակն շէշտ Ճառագայթար-
ձակ՝ի դէմս հարեալ Կիմբրացւոց։ Զի
Թէպէտ և սառամանեաց համբերատարք
քաջք էին խուժադուժքն՝ որպէս պատ-
մեցաք՝ իբրու որ բնականունդք հովանա-
ւոր և ցրտին վայրաց, ոչինչ կարէին հան-
գարտել տապոյն. առհասարակ սաստկա-
պէս ընդ քիրան հարեալք՝ նոցա Թասէին
ոգիք, այնպէս ասպարածածուկ զերեսս
գոլծեալք առ՝ի շողից արևուն. քանզի և
էր իսկ մարան յետ արևադարձին ամարայ-
նոյ. որպէս և զյիշատակն տօնեն Հռո-
մայեցիք յառաջ քան զաւուրս երիս նորոյ
ամսոյն՝ զոր արդ Աւգուստոսի, և յայնժամ
կարդային Սէքսդիլեայ ամիս։ Այլ ամբ
փոշւոյն՝ի զօրավիգն Կատղոսի զօրականին՝
միգապատ ծածկեալ զամբաւութիւն խու-

ժանին, ոչինչ սրտաբեկ եղեն նոքա. քան-
զի և 'ի բացուստ ոչինչ զնեալ զբազմու-
թիւնն՝ դիմեալք 'ի կռիւն ընդ ախոյեանն՝
այնպէս խառնեցան մինչև զարհուրեալք
նոցա յահագին տեսութենէն։ Իսկ և նո-
ցա մարմինք այնպէս իմն կորովացեալ էին
և փապարեալք 'ի վաստակս քրտանց, զի
և յանհնարին տապոյն՝ թէպէտ և յոյժ
յոգնեալք՝ ոչ ոք 'ի Հռոմայեցւոց անտի
քրտնահար թօշնէր կամ յոգւոց թասէր.
ըստ որում և ասեն՝ գրեալ ինքնին Կատ-
ղոսի 'ի գովութիւն առեալ զզօրականն։

Բայց անդանօր բաղումք այն էին 'ի
բարբարոսացն և 'ի քաջամարտիկացն որ տա-
պաստ անկանէին, հարեալ և բաղխեալ
այր ընդ ընկեր. քանզի յառաջամարտիկք
նոցա աղխաղխեալ էին երկայն փոկովք՝
ածեալք զգօտեաւ, զի մի՛ քակտեալ բա-
ժանեսցի կարգ դասաւորութեան նոցա։
Իսկ զփախստեայն վանեալ Հռոմայեց-
ւոցն մինչև 'ի պատնէշս նոցա, անդանօր
տեսիլ տեսանէին ողորմ և յոյժ աշխարե-
լի։ Քանզի 'ի վերայ բազմախուռն կառացն
կացեալ խումբ կանանուցն նոցա համա-
կեալք 'ի Թուխ՝ հարեալ սպանանէին զս-
պաւինեալսն անդր. կէսք զարս, կէսք
զեղբարս, և կէսք դարձեալ՝ զհարս. և հեղ-
ձամղձուկ ինքեանց իսկ ձեռօք զտղայսն
արարեալք՝ ձգէին ընդ անուօքն առաթուր
ոտից գրաստուցն. և ապա անձին ևս առ-
նէին 'ի պահուն։

Եւ պատմեն՝ եթէ մի ոմն 'ի կանանց

անտի կախեալ մնաց զծայրից առէղին՝ հանդերձ երկու որդւովքն արկեալ նոցա խեղդան 'ի կոճս ոտից իւրոց աստի և անտի. և թէ՝ մարդիկն առ պակասութեան անդ ծառոցն, կէսք յեղջիւրս եզանց, և կէսք 'ի սրունս նոցա խեղդ պարանոցացն ածեալ, և մորակաւ մոլեգինս ընդոստուցեալք զնոսա, այնպէս 'ի քարշ առաթուր հարեալք 'ի նոցանէ սատակէին։ Ա՛յլ թէպէտ և նոքա այնպէս մահ անձանցնիւթեցին, համայն և այնպէս ոգիս աւէլի քան զբիւրս վեց կենդանւոյն ձերբակալ արարին 'ի նոցանէ. և ասեն եւ՝ եթէ կրկին նոյնչափ դիտապաստ անկան 'ի նոցանէ։ Բայց ըզդրամոց մթերսն նոցա յաւարի առին յայնժամ զօրականք Մարիոսի. այլ անկածք պատերազմին և դրօշքն և փողքն՝ պատմեն՝ եթէ ածեալ կուտեցան 'ի բանակն Կատղոսի. որ և ապա հաւաստիք մեծապէս եղեն յաղթութեանն նորա։

Իսկ իբրև վէդ և պայքար յուզեցաւ 'ի զօրականին (ըստ որում և 'ի դէպ իսկ պատահել), կարգեցան դատաւորք իրաւախոհք կագին՝ դեսպանք Պարմիացւոց՝ որ անդ գտան. զորս և ածեալ զօրականացն Կատղոսի 'ի մէջ դիականցն՝ ցուցանէին նոցա զնոցեալսն յիւրեանց իսկ աչտէից, յորս և յայտնի իսկ երևէին 'ի նիզակաբունսն տառք դրոշմաւորք անուանն Կատղոսի։ Յայսր ամենայնի վերայ՝ ողջոյն նահատակութիւնն ընծայեցաւ Մարիոսի 'ի պատճառս առաջին յաղթութեանն. և զի

և զաւագութիւն հիւպատոսութեան ինքն ունէր։ Եւ մասնաւոր իմն ժողովուրդք ա-նուն կարդային նմա՝ երրորդ հիմնադիր Հռովմայ, իբրու այն որ ապրեցոյց զնա 'ի վտանգէն՝ ոչինչ նուազ քան զԿէղտացն երբեմն։ Ապա այր այր ուրախացեալք տո-նախմբութեամբ առհասարակ 'ի տունս 'ի միասին ընդ որդւոց և ընդ կանանց, զե-ր-բեխայրիս ընթրեացն և զնուէր բաժակաց նուիրէին միանգամայն և դիցն և Մարիո-սի, և արժանի երկուց ևս յաղթանակաց համարէին զնա։ Բայց նա ոչ յաղթանա-կեաց միայնակ, այլ 'ի միասին ընդ Կատ-ղոսի. խնդրեաց պարկեշտանալ 'ի մեծա-մեծ նահատակութիւնսն. առ այս՝ զի և զանգիտէր 'ի զօրականէն նորա, որ պըն-դէին թոյլ ջտալ յաղթանակին, եթէ և ինքնին Կատղոս բաժանորդ ոչ էր։

Արդ էր յայնժամ Մարիոսի 'ի ձեռս հիւպատոսութիւն հինգերորդ. ապա և զվեցերորդին թեկն ածէր նա յոյժ տարփ-մամբ, որչափ ինչ ոչ ոք հետամուտ երբէք վասն առաջնոյն. յինքն զհուժանն յան-կուցանէր սպասարկութեամբ, ոչ դժպա-տեհ միայն աւագամեծար բարձին, այլ և ընդդէմ իւրոց բարոյիցն՝ ցուցեալ զանձն հեշտ և ժողովրդական, որ չէրն երբէք այնպիսումն վիճակեալ բուսոյ բարուցն։ Այլ որպէս ասեն՝ էր նա առ 'ի կրից փա-ռասիրութեան՝ յոյժ փոքրոգի 'ի քաղաքա-կանն և 'ի շփոթս խուժանին. և յանպար-հուրելի ոգւոյն և յանդրդուելի հաստա-

տուԹենէն որ 'ի մարտս պատերազմաց, գլխովին էր նա անբաժ յատեանս ժողովոց, ուր և զանձին ինչ լուեալ կամ գովեստ կամ պարսաւ, այլ յայլմէ լինէր։ Եւ պատմեն իսկ զայս, եԹէ պարգևեալ նորա զքաղաքացեաց կարգ՝ հազար մարդկան Կամերինացւոց, որ մեծապէս քաջուԹեամբ նահատակեցան 'ի մարտին. իսկ զի հակառակ էր գործն սովորուԹեան օրինացն, ասէր Մարիոս առ մեղադիրսն՝ եԹէ 'ի շառաչիւն զինուցն ինքն ոչինչ լսէ օրինացն, սակայն առաւել զահի հարեալ է 'ի շառաչիւն աղաղակի ժողովոցն։ 'Ի մարտին էր նորա աւագուԹիւն և զօրուԹիւն առ 'ի հարկէն. իսկ ապա 'ի քաղաքականին վրէպ գտեալ նա 'ի նախաԹոռ բարձէն՝ գնայր ապաւինէր 'ի սէր մտերմուԹեան խուժանին, և առ 'ի լինել մեծ՝ զանց առնէր լինել քաջալաւ։ Ուստի և առհասարակ աւագորեարն դժկամակս բերէին առ նա. յորս և յաւէտ իմն զանգիտեալ նա 'ի Մետեղղոսէ՝ որում և յոյժ անշնորհակալու գտեալ էր, և գիտէր իսկ քաջ զՄետեղղոս անդատին 'ի բնուԹենէն և յանկեղծաւոր առաքինուԹենէն ոսերիմ մարդելուզաց խուժանին, մենքենայէր առն տարագրուԹիւն 'ի քաղաքէն։ Ոյր աղագաւ և սերտիւ մտերմացեալ ընդ Գլաւկեայ և ընդ Սատորնինոսի, արք ժըպիրհք և յանդգունք և յանկուցիչք աղքատաց և խազմարարաց խուժանին, զիւր օրէնսն Մարիոս 'ի նոցա ձեռն գրեալ 'ի

նեբքս մատուցանէր. և ածեալ ևս զզօրականն՝ խառնէր և զնոսա յատեանս. և այնպէս ապա զիւր կողմն յօրացոյց քան զՄեռեղղոսին և կամագիւտ լինէր։

Ա՛յլ Հռուֆիղնոս այր Ճշմարտասէր և լաւ, սակայն և մանաւոր՝ ոխերիմ Մարիոսի պատմէ, եթէ վեցերորդին եհաս Մարիոս հիւպատոսութեանն՝ բազում արծաթով կաշառեալ զչեղսն. և թէ՝ գնոց արծաթոյ նա ետ և 'ի բաց զՄեռեղղոս մերժել, և հիւպատոս ընդ իւր կարգել զՎաղերիոս Փլակկոս. այն՝ որ պաշտօնեայ առաւել գտաւ նմա՝ քան իշխանակից։ Իսկ անդ 'ի նախնումն ումեք ամենևին չետուն 'ի ձեռս ժողովուրդք զայնչափ նուագ զհիւպատոսութիւնն, բայց Կորվինեայ Վաղերիոսի. սակայն և նորա ընդ առաջին հիւպատոսութիւնն և ընդ վերջինն՝ ասեն՝ անցանել 'ի վերայ ամաց քառասուն և հնգից. իսկ Մարիոս յետ առաջնոյն անց միահետ և ընդ հինգ ևս այլ՝ վարեալ անդուլ 'ի գեղեցիկ բախտէն։

Բայց 'ի վերջնումն յոյժ ատելի գտաւ Մարիոս՝ կուսակից և գործակից Սատորնինոսի գոլով 'ի քարուկանս նորա. յորոց և մին սպանութիւնն էր Ոնիոսի՝ զոր ինքնին խողխողեաց Սատորնինոս, հետամուտ ընդ իւր ունելով զնա 'ի ժողովրդապետութիւնն։ Ապա կարգեալ Սատորնինոս ժողովրդապետ, գրեաց զօրէնս վասն բաշխի գետնոց. յաւելեալ 'ի նոյն՝ և երդումն կռել ծերակուտին հաստատուն

անգիմադարձ կալ յամենայն սահմանադրութիւն ժողովրդեանն վասն բանին այնորիկ։ Իսկ Մարիոս յատենի խորհրդոյն կեղծաւորեալ զդէմ ունել մասին այնմիկ օրինացն՝ ասէր ոչ հաւանելընդ երդումն, և ոչ իմաստնոյ ումեք դարձեալ ձեռն տալ հաւանութեան 'ի բանին յայնմիկ. զի թէ չար չէն օրէնքն և վնասակար, անարգութիւն է ծերակուտին երդմամբ չափ կապել 'ի նոյն հարկաւորեալ, և ոչ ինքնին կամակար սրտիւ ընդունել զայն։ Զայս բանս ասէր Մարիոս ոչ յանկեղծաւորինչ մտաց, այլ 'ի հաղթ անզերծանելի շաղել զՄետեղղոս։ Քանզի զստեղն առաքինութիւն վարկուցեալ և ուշիմութիւն, փոյթ չէր նմա վասն բանին զոր ասաց 'ի ծերակուտին. և ճանաչելով չափ զՄետեղղոս այր անդրդուելի, որ ըստ Պինդարեան բանին դիտէր իսկ զՃշմարտութիւնն՝ Սկիզբն մեծի առաքինութեան. խնդրէր հնարէր 'ի հրաժեշտն նորա յերդմանէն՝ անհաշտ թշնամութեամբ ձգել զնա ընդ խուժանին, որ և եղև իսկ։

Քանզի յասել անդ Մետեղղոսի՝ եթէ ինքն երդնու ոչ, արձակեցաւ ատեանն. իսկ յետ սակաւ աւուրց միւսանգամ խրմբեալ Սատորնինոս զՍինեկղիտոսն՝ ստիպել յերդումն, անդր ջոքաւ և Մարիոս. իբրև ամենեքեան 'ի լռութիւն դարձան յերևել նորա և յակնիռս առ նա կային, ասէր Մարիոս՝ հրաժեշտ գլխովին տալ յառաջին բանէն՝ զոր անքննաբար մտածութիւ

ասաց, զի և չէ իսկ ինքն այնչափ իմն խրատապարանոց՝ 'ի կարևորսն յամառել պընդել յոր միանգամ ասաց՝ մինչև քաջիկ տեղեկացեալ. այլ թէ՝ երդնու ինքն և հնազանդէ օրինացն՝ եթէ արդարև իցեն օրէնք։ Եւ յաւել նա զայս խորագիտութիւն, քօղ իմն արկանելով ըբուութեանն։ Իսկ յայնժամ ժողովուրդք ցնծացեալք ընդ երդումն նորա՝ ծափս հարկանէին նմա. բայց աւագանին 'ի խոր թաղծութի պաշարեալք՝ խոտէին զգեղեղուկ միտսն Մարիոսի. և ապա անդ այր այր կարդաւ տային երդումն առ ահի խուժանին՝ մինչև 'ի Մետեղղոս։ Այլ նա՝ թէպէտ և բարեկամք նորա յողոք պաղատանաց անկեալ տալ զերդումն և ապրել յանագորոյն ըստանալեացն Սատորնինոսի, ոչինչ անկաւ բեկաւ 'ի հաստատուն խորհրդոյն. ոչ կռեաց զերդումնն. խնդրեաց կրել բերել զամենայն կտոանս, քան ինչ մի գործել 'ի յոռեաց. եւ արտաքս յատենէն և ասէր առ որս զնուրևն կային, եթէ՝ չար գործել յինչ և իցէ օրինակ՝ միշտ վատթարութիւն է. իսկ բարի՝ զերծ 'ի վտանգաց, հասարակ գործ է և ռամկին. այլ բարի առնել՝ թէպէտ և վտանգ առ դուրս կայցէ, գործ է առանձին քաջի առն և արդարոյ։

Ապա Սատորնինոս վճիռ 'ի նեղքս բերէր՝ տալ հիւպատոսաց վտարանգութիւն Մետեղղոսի, արգելուլ խափանել նմա զհուր, զջուր, և զյարկ. բայց անգանօր

խառնաղանջ ռամկին պատրաստեալ ևս էր մահ ածել առնն. իսկ արք լաւք և քաջք կարի 'ի խոր խոցեալք և ըղձակաթք 'ի նա, դիմեցին առ նա. նա ոչ հանդարտեալ յիւր պատճառս աղմուկ յուզել 'ի ժողովրդեան՝ ինքնին մեկնեալ տեղի տայր 'ի քաղաքէն, բան մի խմաստասիրեալ յոյժ հանձարեղ։ Քանզի ասէր այսպէս. "Կամ իրքդ այդ 'ի լաւագոյնս շրջեսցին և ժողովուրդք սորջասցին, և ես ինքնին դարձայց այսրէն հրաւիրեալ. կամ կացցեն մնասցեն նոյնպէս, և լաւ ևս իցէ լինել բացական"։

Այլ թէ քանի՞ մարդասիրութեամբ և 'ի քանիսն շուք ժողովեցաւ Մեսեղլոս յիւրում վտարանդութեանն, և զիարդ իմաստասիրութեամբ անցոյց նա զաւուրսն 'ի Ռոդոս, ոճով մեք արձանագրեսցուք 'ի վարս Նորա 4։ Իսկ յայնժամ Մարիոս 'ի շնորհս Սատորնինոսի կեղծաւորեալ լռէր յամենայն եղեռն Նորա և 'ի լրբութիւնն. և անքննաբար դժոխրմբերելի կրիցն սատար եղեալ ոչ իմանայր, եթէ կրթեալ իսկ էր Սատորնինոսի 'ի բռնաւորութիւն անդր 'ի սպառսպուռ սատակումն քաղաքին։ Այլ նա աւագանուոյն պատկառ կացեալ՝ միանգամայն և ժողովրդեանն, գործ մի գործեաց կարի անփառունակ և խրատանկեալ։ Քանզի եկեալ առ նա գիշերի արք աւագք և հոյակապք դրդեալ զնա ընդդէմ Սատորնինոսի, 'ի նմին պահու 'ի տուն իւր առընկալաւ և զՍատոր-

նինոս՝ մուծեալ զնա ընդ այլ դուռն զան-
խուլ 'ի նոցանէն։ Ապա պատճառեալ ա-
ռաջի երկոցուն կողմանցն զորովայնալոյծ
զկիրս մարմնոյն, անցանէր սենեակ 'ի սե-
նեկէ մերթ առ Սատորնինոս և մերթ առ
սուագորեարն, գրգռէր զերկոցուն կողմն
ընդդէմ միմեանց։ Իսկ յետ այնորիկ յու-
զեալ ծերակուտին և ասպետացն դաշնա-
ւորաց ընդ միմեանս, և բողոք յոյժ կա-
լեալ ընդդէմ նորա, ստիպեցաւ և Մա-
րիոս խմբել զօրականս 'ի հրապարակի անդ.
և վանէր հալածէր զՍատուրնինոս և զար-
բանեակս նորա. նոքա դիմեալ ապաւինե-
ցան 'ի Կապետոլիոն. և նա անդ զնոսա
տանջէր ծարաւով հատեալ զամենայն
ջրմուղսն նորա։ Ապա ոչ ևս հանդուր-
ժեալ կոչեցին զՄարիոս և 'ի նա անձնա-
տուր լինէին 'ի հաւատ դիմոսական։ Նա
զամենայն հնարս հնարեցաւ ապրեցուցա-
նել զնոսա՝ այլ 'ի զուր. քանզի անդէն 'ի
հրապարակ իջեալք՝ 'ի մահ վարեցան։

Իսկ յետ այնորիկ դժկամակս բերեալ
ընդ նա ազատանուոյն և ռամկին միանգա-
մայն, ոչինչ ժոռեցաւ նա՝ որպէս կարծէրն՝
թեկն ածել զհամարակալութեան բար-
ձին. քանզի ընդ այն աւուրս 'ի վերայ
կայր ընտրութիւնն. այլ թոյլ էտ ընտրու-
թեան խոնարհագունիցն քան զինքն, զան-
գիտեալ՝ եթէ մերժեսցի. թէպէտ և ինքն
գեղեցիկ 'ի վերայ ածեալ բարուր՝ ոչ կա-
մել լինել համարակալ, զի մի թշնամի ընդ-
դէմ կքրեսցի բաղմաց ոմանց՝ ճշգրտա-

գոյնս քննութեամբ 'ի վերայ կացեալ կե-
նաց և վարուց նոցա։

Ապա խորհուրդ 'ի նեղքս բերեալ 'ի
ժողովս՝ դարձուցանել 'ի վտարանդութիւն
զՄեռեղղոս, անդ Մարիոս բանիւք և ար-
դեամբք հզօրագոյնս ընդդէմ դառնայր.
այլ ամենայն ջանիցն 'ի դերևս ելեալ՝
հուսկ ապա լռէր։ Իսկ իբրև մոռադիւրա-
գոյնս և ժողովուրդք հաւանեցան, ոչ
հանդարտեաց նա տեսանել զդարձն Մե-
տեղղեայ. ել և նաւեաց 'ի Կապադովկիա
կոյս և 'ի Գալատիա, իբրու 'ի վերին ե-
րեսս զոհ կատարել Ոսկեմօր դիցն ըստ ուխ-
տին. այլ 'ի նեղքոյ յայլ ինչ պատճառաց
ուղևորեցաւ նա զանխուլ 'ի ժողովրդոց։
Քանզի նորա բոյս բարուց ոչինչ 'ի ճահ
պատահեալ խաղաղութեան՝ և ոչ կիրթ
'ի քաղաքականն դոլով, իբրու որ 'ի մար-
սից և 'ի խազմից բարդաւաճ լեալ էր. առ
այս և զմոտաւ ածեալ էթէ տակաւ 'ի պա-
տապութեան փառք աւագութեանն նորա
նուազեսցի, հնարէր խռովս հարկանել
նորս. և ակն ունէր՝ զի թէ 'ի թագաւորաց
դրդեսցէ զոք, յաւէտ իմն զՄիհրդատ՝
զհակամիտեալն թերևս 'ի մարտ, զնա կար-
գեսցեն 'ի զօրավար ընդդէմ ախոյենին.
որով և նորաստանչ յաղթանակաք միւսան-
գամ լցցէ նա զքաղաքն, և զտուն իւր յա-
ւարացն Պոնտոսի և գանձուցն արքունի։
Ուստի թէպէտ և շքով ժողովեաց զնա
Միհրդատ, նա բնաւ իսկ ամենևին տեղի
չէտ նմա. այլ պարզաբար ասէր. "Կամ

գոնն գործեա դու ոմ ազգայ՝ բարգաւաճ քան զՀռոմայեցիսն լինել. կամ թէ հնազանդեաց դու մինչիկ հրամանին նոցա"։ Յապուշ հարաւ Միհրդատ 'ի լուր բանին. զի թէպէտ և բազում անգամ զՀռոմայեցւոցն լուեալ էր զհամբաւն, այլ յայնժամ առաջին զայս լսէր աղատաբերան բարբառ զնոցա։

Ապա դարձ 'ի Հռոմ արարեալ Մարիոսի՝ շինեաց իւր ապարանս մերձ հրապարակին. կամ զի ոչ կամէր (որպէս ասէր իսկ ինքն) վաստակաբեկ առնել ըզպաշտպանաւորս իւր և զսպասարկուսն յերկայն պողոտայէ գալ առ նա. կամ զի ակն ունէր զմերձաւորութիւն վայրացն պատճառս ունել բազմամբոխ մարդկանն առ դուրս իւր, զոր չէր իսկ տեսանել. քանզի նուազեալ էր նա քան զայլսն 'ի գեղեցիկ քաղաքավարութեանն և 'ի քաղաքականին. ուստի և զանց զնովաւ առնէին 'ի ժամանակի խաղաղութեան, իբրու որ անօթ միայն պատերազմական ի՝ցէ։ Այլ Մարիոսի ոչ այնչափ ինչ ցաւէր յայլոց անտի նկուն լինել, որչափ 'ի Սիւլլայէ։ Նա մեծապէս վիշտ էր նմա. որ և բարգաւաճ լեալ իսկ էր 'ի խեթէ անտի աւագանւոյն ընդ Մարիոսի, և որում շատ օժանդակեցին աւագութեանն 'ի քաղաքին՝ կագք և գժտութիւք նորա ընդ նմա։

Իսկ յետ այնորիկ իբրև Բոկքոս Նումադացի նիզակակից եղեալ Հռոմայեցւոց՝ նուիրեաց 'ի Կապետոլիոն զյաղթանակին

նահատակութիւնն, առ նոքաք տպաւորեաց և զՅուգուրթաս ինքնին՝ իբրու 'ի ձեռս տալով զնա Սիւղղայի. և էր այս ամենայն տպաւորեալ յարձանս ոսկի. յայնժամ Մարիոս առ արտմտութեան ցասմանն և 'ի փառասիրութենէն այլ յայլմէ եղեալ՝ իբրու յինքն յափշտակել Սիւղղայի զմրցանս իւր, գուն գործէր քանդել տապալել բռնի զձօնսն զայն. անգուստ և Սիւղղաս նախանձ ընդդէմ ճգնէր յոտին պահել զայնոսիկ։ Եւ ապա հերձուած ամբոխից մեծաց յուզէր անդանօր անշուշտ, թէ ոչ մարտ պատերազմի նիզակակցացն յեղակարծումն գրգռեալ՝ սանձէր զկիրսն։

Քանզի ազգք Իտալիոյ յայնժամ քաջամարտիկ և բազմաժողով միահամուռ դրդեցան ընդդէմ Հռովմայ, և վայրիկ մի ևս վեր 'ի վայր առնէին զամենայնն. զի և էին իսկ նոքա ժողովուրդք հզօրք ոչ 'ի զէնս միայն և 'ի կորովութեան, այլ էին էին նոցա և զօրավարք քաջք և հմուտք՝ ճակատ ընդդէմ Հռոմայեցւոցն յարդարել։ Այս մարտ պատերազմի բազմադիմակ ըստ բազմադէմ արկածիցն՝ որչափ փառաւոր յարդարեաց զՍիւղղաս, այնչափ ինն և նուազեալ զՄարիոս. որ վեհերոտ դտաւ և դանդաղ, կամ զի նորա առ 'ի ծերութենէն շինչեալ էին աշխոյժք, քանզի զվաթանամենիւք և զհնգաքք անցեալ իսկ էր. կամ զի որպէս ասէր իսկ ինքն՝ խօթացեալ 'ի ջիղսն և անբաւական մարմնով, վասն համբաւոյն միայն յայնժամ զղին-

ուորութիւնն յանձն առեալ էր։ Հա-
մայն և այնպէս՝ յաղթական Եղանէր նա 'ի
մեծի պատերազմին, և ոգիս վեց հազար 'ի
Թշնամեացն 'ի սուր մաշէր, և երբէք նկուն
չդառաւ. այլ ցանգ 'ի պատնէշն 'ի ներքս
զտեղի կալեալ՝ ոչ շարժեցաւ, որչափ ինչ
միանգամ այպնակատակ զնա արարեալ
Թշնամեացն ձայն տային նմա։

Եւ պատմեն՝ եթէ յասել առ նա Պոպ-
ղիոսի Սիլոնէի առն աւագի և զօրաւորի 'ի
Թշնամիսն. "Եթէ ես դու ինքնին ոմ
Մարիէ զօրավար մեծ, աղէ դու էջ 'ի
կռիւ մարտի". Եւ պատասխանի Մա-
րիոս. "Նա՝ թէ ես դու ինքնին զօրավար
մեծ, աղէ դու սոխպեա՛ զիս 'ի կռիւ մար-
տի յակամայս իմ"։ Եւ յայլում պահու,
այն ինչ ժամ բարեպատեհ նահատակու-
թեան ետուն Թշնամիք, և անդուստ հռո-
մայեցիք ոչինչ ժտեցան 'ի նոսա, և երկո-
քին կողմանքն տեղի տուեալ դարձան ընդ
կրունկն, խմբեալ նա յեկեղեցի զզօրա-
կանն ասէր. "Տարակուսեալ եմ, զոյն՝
անարիս առաւել կոչեցիս, զԹշնամիսն՝ ե-
թէ զձեզ ինքեանս։ Քանզի ոչ նոքա հայել
համարձակեցան 'ի Թիկունս ձեր, և ոչ
դուք ինքնին 'ի ծոծրակ դոցա"։ Եւ ա-
պա հուսկ յետոյ հրաժեշտ տայր նա 'ի
զօրավարութենէն, քանզի և վատեալ յոյժ
տեսանէր զանձն։

Իսկ իբրև իբք Խոսրացւոցն տեղի տային,
բաղումք 'ի քաղաքին հետամուտք լինէին
'ի զօրավարութիւն ընդդէմ Միհրդատայ՝

'ի ձեռն հռետորաց խուժանին։ Այլ անդ Սուլպիկիոս Ժողովրդապետ այր յանդուգն առաւել, 'ի մէջ անդր վարեալ զՄարիոս յանակնկալս՝ 'ի զօրավար մարտին հրատարակէր զնա իբրև փոխանակ հիւպատոսի։ Յայնժամ երկփեղկեցան ժողովուրդք. մի կողմն ունէր զՄարիոսին և միւսն զՍիւղղային. և ասէին ևս առ Մարիոս յառնել գնալ 'ի Ջերմուկն Բայեայ, անդ դարման մարմնոյն տանել վատելոյ՝ որպէս ասէր իսկ ինքն՝ առ 'ի ծերութենէն և 'ի հարբուղխոյն։ Քանզի էր իսկ անդանօր Մարիոսի առ Միսինեաւ դաստակերտ հոյակապ և գրգռելոց. ուր և կարի գրգռեալ կէայր նա դժպատեհ անձինն, որ յայնչափ մարտս նահատակեցաւ, և որում այնչափ զինուորութիւնք յանձն եղեն։ Եւ պատմեն՝ եթէ զայն դաստակերտ գընեաց Կոռնելիա եօթանասուն և հինգ հազար դրամակշռոց. և յետ ոչ բազմաց՝ Լեւկիոս Լեւկուղղոս գնէր զայն հինգ հարիւր հազարաց և երկերիւրոց։ Այնչափ ինն յանկարծակի տիրացաւ շռայլութիւնն, և այնչափ արգոյք գտան գրգանք փափկութեանն։

Բայց յայնժամ Մարիոս յոյժ պատուասիրեալ՝ իբրու այն ինչ պատանի, կրթէր յաշխատութիւն զծերացեալ տիսն և զվատեալ անդամն. զօրհանապազ յարուցեալ ելանէր 'ի բանակ անդր և հրահանգէր ընդ պատանեաց իբրև փորձ և թեթևընթաց 'ի զինաշարժան և 'ի ձիա-

վարան. Թէպէտ և 'ի տիան յայն չէր նա Թեթև և հիւծ, այլ Թանձրամարմին և դանդաղ։ Յայտնիկ պարտապետ նորա, շատից բերկրանս 'ի նեղքս բերէր՝ ի ջանել կալ 'ի զնին պատուասիրութեան մրցանացն Մարիոսի. սակայն լաւորերոյն ցաւէր սանձակոտոր կիրք փառասիրութեանն. զի յաղքատէն նա՝ ընչաւէտ եղեալ, և 'ի փոքուէն՝ մեծ յոյժ, համ երբէք չդներ յաջողութեանն. և ո՛չ շատացեալ երանուչն յանդորրու վայելել յառաջիկայսն, իբրև չքաւոր յամենայնէն՝ յետ յաղթանակացն և բազմադիմակ շքոյն, այնպէս ծանրացեալ աւուրքք ձգէր անդր մինչև 'ի Կապադովկիա և Յեւքսինեանն Պոնտոս՝ մարտ գնել կռուել ընդ Ալքեղայոսի և ընդ Նէոպտողոմեայ նախարարացն Միհրդատայ. իսկ և բարուրն՝ զոր 'ի չքմեղս անձինն կարկատէր՝ 'ի զուր էր. քանզի ասէր անձամբ զորդեակն իւր մարել 'ի զինուորականին ընդ իւրով ձեռամբ։

Եւ ապա յիրաց ատոի յայնժամ շրջինդն ահագին հարկանէր 'ի քաղաքին, այն՝ որ 'ի վաղնջուց իսկ խօթ էր և 'ի ներքոյ խաղաւարտ եռացեալ շարաւոյ տագնապէր զնա. քանզի գործի մահահոտ քաղաքին առնոյր Մարիոս զժպիրհ յանդգնութիւնն զՍուլպիկեայ, որ նախանձաւոր Սատորնինոսի յամենայն իսկ իրս՝ խոտէր զնա իբրև անարի յիրս քաղաքին։ Ապա ինքն Սուլպիկիոս անդանդաղ շուրջ զիւրև խմբեալ վեցհարիւր յասպետաց իբրև թիկ-

նապահս, և անուն կարդացեալ նոցա՝ Դե-
բասինկլիտոսս, մինչդեռ ժողովեալ կային
հիւպատոսք՝ 'ի վերայ անկեալ զինուք,
անդ 'ի բուռն բերեալ սպանանէր զորդին
միոյ 'ի հիւպատոսացն՝ որ զահի հարեալ
փախչէր 'ի հրապարակէն. իսկ և Սիւլլաս
'ի վանեալ իւրում 'ի նոցանէ՝ անցեալ առ
դրամբն Մարիոսի Ճողոպրեալ անկանէր 'ի
ներքս՝ արտաքոյ ակնկալութեանն, և հե-
տամուտքն յառաջ անցեալ գնային. և
ասեն՝ եթէ ինքնին 'ի Մարիոսէ ածեալ
նա արտաքս ընդ այլ դուռն՝ այնպէս մաղա-
պուր գնայր 'ի բանակն: Բայց ինքն Սիւլ-
լաս յիւր Յիշատակարանն ոչ ասէ ինք-
նին ապաստան առ Մարիոս եղեալ. այլ
թէ անդր ածաւ նա 'ի խորհուրդ վասն ի-
րացն՝ զորոց Սուլպիկիոս խնդրէր բռնի
վՃիռ հատանել նմա՝ շուրջ զնա 'ի սու-
սերամերկիցն պատեալ և ածեալ առ Մա-
րիոս. և ապա 'ի հրապարակ եկանէր նա,
և որպէս խնդրէինն նոքա՝ լուծանէր զչա-
բաթումն:

Իբրև այս կատարեցաւ, Սուլպիկիոս
տիրացեալ ամենայնին՝ ընտրեալ կարգէր
զՄարիոս 'ի զօրավար. նա պատրաստեալ
յարշաւանն՝ առաքէր երկուս 'ի հազա-
րապետաց առ Սիւլլաս, տալ նոցա 'ի
ձեռս զզօրն: Այլ Սիւլլաս յանկուցեալ
զզօրն երից բիւրուց զայրուձիոյ և ոչինչ
պակաս քան զՀինգ հազար հեռուակաց,
առեալ խաղացուցանէր զնոսա ընդդէմ
քաղաքին. և զօրականն 'ի վերայ դիմեալ

հաղարապետացն Մարիոսի՝ անդէն գէշ արկանէին զնոսա. անդուստ և Մարիոս 'ի Հռոմ շատ զոք 'ի բարեկամացն Սիւղլայի 'ի մահ վարէր. և տայր քարոզ կարդալ զաղատութեան ծառայիցն՝ որ խմբեսցին ընդ նմա. այլ ասէն՝ երից միայն 'ի նոցանէ խմբել ընդ նմա։ Ապա վայր մի զդէմ կալեալ և անդէն տեղի տուեալ Սիւղլայի, որ հասեալ մտանէր 'ի քաղաք անդր, 'ի փախուստ խուճապեցաւ Մարիոս. իսկ ոչք զնովաւն էին՝ իբրև էլ նա 'ի քաղաքէն, ցանեալք ցրուեցան. իսկ ինքն 'ի գալ գիշերոյն՝ գնացեալ ապաստան լինէր յամարանոց մի իւր 'ի Սողոմենիոն. և անտի արձակէր զորդի իւր 'ի կալուածս Մուկիոսի աներոյն իւրոյ ոչինչ բացական 'ի վայրաց անտի՝ ժողովել պատրաստել պաշար։ Սակայն Մարիոս ելեալ յայնժամ յՈստիա, և անդ պատրաստեալ նաւ մի 'ի բարեկամէն՝ անուն Ղումերիոս, եմուտ 'ի նա ոչ ապաստեալ որդւոյն, առեալ ընդ իւր զԳրանիոս զուրջուն՝ անկանէր յուղի։

Իսկ որդին Մարիոսի հասեալ 'ի կալուածսն Մուկիոսի, առեալ կազմէր իրս ինչ բառնալ տանել. իբրև այդ եղև՝ ոչինչ անծանօթ 'ի Թշնամեացն եղեալ, յորոց և ոմանք հեծեալք՝ կասկած առեալք յայն կողմն խաղային. անդ այրն վերակացու անդաստանացն տեսեալ 'ի բացուստ զդալուստ նոցա, առեալ զպատանին Մարիոս գալէր 'ի սայլն բակլայից, և լծեալ զեզինսն՝ այնպէս յառաջ վարէր հանդէպ

այրուձիոյն, ածեալ ընդ այն զսայլն 'ի քաղաքն կոյս։ Երթեալ պատանին 'ի տուն կնոջն՝ առնոյր անտի զամենայն զպէտսն, և գիշերի իջեալ 'ի ծով և ամբարձեալ 'ի նաւ մի որ դէմ եդեալ էր 'ի Լիբիա, անցանէր անդր։

Իսկ ծերն Մարիոս յաջողակ հողմով քերեալ առ ափամբն Իտալիոյ, և զանգիտեալ 'ի Գեմինիոսէ՝ այր աւագ 'ի Տերրակինա և իւր որսերիմ, ազգ առնէր նաւատեացն բացագոյնս գնալ 'ի վայրացն և յաջողէր. այլ յայնժամ փոխեալ հողմոյն 'ի մրրիկ մեծ, և ամբարձեալ ամենի ալեացն, զի և ոչ լաստափայտն յամենայն կողմանց ալէկոծ՝ հանդուրժէր բռնութեանն. առ այս՝ տեսեալ նաւատեացն և զՄարիոս ինքնին վատթարեալ 'ի կիրս նոցկանացն, և արկանէր նա խիխաւրաս բազում 'ի ծփանաց անտի ծովուն, ձիգն թափեալ հաղիւ ուրեմն հասեալ կալան զծովափունսն մօտ 'ի Կիրկէոն։ Բայց անդուլ սատակացեալ մրրկին, և կերակուր ևս պակասեալ նոցա, էլին 'ի ցամաքն և թափառեալ գընային զրահեռք. իբրու որք 'ի տագնապ մեծ պաշարեալք՝ ցանգ ինդրեսցեն խոյս տալ յառաջիկայեցն իբրև 'ի վշտամբերեց, և ակնկառոյցք լինիցին 'ի յոյս անեղեւութիւն։ Որսերիմ նոցա ցամաքն, որսերիմ և ծովն ինքնին գլխովին, ահագին էր նոցա ընդ առաջել մարդկանն, ահագին ևս էր վրիպելն 'ի նոցանէ՝ զի պակասեալ էին կարեւորք կենացն։ Ապա 'ի կարճատել

աւուրն հանդիպէին նոցա անդէորդք, ո-
րոց և ոչ մի ինչ էր տալ կարօտելոցն. բայց
ծանուցեալ նոցա զՄարիոս, ասէին նմա
խուճապել խոյս տալ 'ի վայրացն. իբրև
վայրիկ մի յառաջ անդանօր տեսեալ իսկ
էր նոցա գունդ ստուար այրուձիոյ՝ դի-
մեալք 'ի խնդիր նորա։

Ապա յայն գերարտօսրալից կիրս սաս-
տիկս վարակեալ Մարիոս՝ իբրև առաւել
ևս դառնայր տեսանէր զընկերսն սովալլուկ
նուազեալ, խոտորեցաւ յուղղոյն. և ան-
կեալ 'ի մայրի մի խոր և թաւ, անդանօր
մեծապէս տառապանօք անցուցանէր զդի-
շերն։ Իսկ յաւուրն երկրորդի առ 'ի հար-
կէն մինչև նուաղեալ իսպառ՝ շրջէր գնայր
առ ափամբն. քաջալերէր 'ի նեղքս մատու-
ցանէր և ընկերացն, աղաչէր մի իսպառ 'ի
կորուստ համարել զանձինս, մինչև 'ի դե-
րև ելեալ վերջին ակնկալութեանն, որում
դեռ ևս ինքն սպասեալ մնայ 'ի վաղնջուց
ինչ գուշակութեանցն։ Քանզի մինչդեռ
տակաւին պատանի կայր ինքն 'ի գեղջն,
էր երբեմն զի առեալ ժողովեաց նա 'ի
հանդերձ իւր բոյն մի արծուոյ անկեալ 'ի
բարձանց՝ յորում կային եօթն ձագք ար-
ծուեաց. և զայն ծնողացն տեսեալ և հիա-
ցեալ՝ հարցանէին յըղձից վասն բանին.
նոքա ետուն պատասխանի՝ եթէ զաւակին
նոցա հասանէ ականաւոր յոյժ լինել յա-
մենայն մարդիկ, և հաստատութեամբ սահ-
մանեալ է դմա եօթն անգամ ամբառնալ
'ի վերհագոյն բարձ աւագութեան։

Արդ էն՝ որք ճշմարտութեամբ ասէն զայն պատահեալ Մարիոսի. իսկ և կէսք ասդէն՝ 'ի պահուն յայնմիկ և յայլուամ ևս փախստեանն պատմեալ նորա զայս, և ընկերացն հաւատացեալ՝ արձանագրել իբրև ճշմարիտ. թէպէտ և բնաւ իսկ առանցիկ բանք, քանզի և երբէք ձուա չածէ արծուի աւելի քան զերկու. և ասէն ևս ստել Մուսէոսի յասել անդ իւրում զարծուոյ. եթէ "Երիս ածէ, և զերկուս բանայ, և զմին բուծանէ": Այլ զի՛արդ և բանն ելցէ, սակայն անշուշտ՝ Մարիոսի 'ի փախստեանն և 'ի վերջինն ստէպ ասացեալ է, եթէ և եօթնեերորդին հասանէ նմա վիճակել հիւպատոսութեանն:

Արդ քան ասպարիսոք 'ի բացեայ գոլով նոցա 'ի Մինտուրնայ քաղաքէ Իտալիոյ, անդուստ 'ի հանդիպոյ տեսին գունդ ստուար այրուձիոյ գիմեալ 'ի նոսա. և 'ի նմին պահու դարձեալ՝ և նաւս երկու բեռնաբարձս, որ քերեալ անցանէին առ ափամբն: Յայնժամ նոքա արագոտինք յոյժ և տագնապաւ վազս առեալք ընթանային 'ի ծովն կոյս, և ընկեցեալ զինքեանս 'ի ծով 'ի լիւղ անկեալ գնային 'ի նաւան: Գրանիոս հասեալ կալեալ զմի 'ի նաւացն, անցանէր 'ի կղզին 'ի հանդիպոյ՝ որ անուանեալ կոչէր Ենարիա. իսկ Մարիոս ծանրամարմին և դժուարաշարժ յերկուց ոմանց 'ի ծառայիցն տաժանմամբ 'ի վեր 'ի ծովէն առեալ՝ ելանէր 'ի նաւն, մինչդեռ անդ այրուձին ժամանեալ իսկ էր. հրա-

ման տային յափանց անտի նաւապետացն ունել զցամաք, կամ թէ զՄարիոս ինքնին ընկենուլ արտաքս, և նաւել 'ի դէմ ե- դեալ տեղին։

Անդանօր Մարիոս արտասուօք յողոք անկեալ պաղատէր առ տէարս նաւուն. նոքա թէպէտ և շտապեալք տարակուսէին, և շատ ևս փոփոխեալք 'ի խորհուրդս, 'ի վերջէ ուրեմն պատասխանի ետուն զօրականին՝ ոչ տալ զնա 'ի ձեռս։ Իբրև նոքա 'ի սրտմտութիւն բարկութեան բրդեալք մեկնեցան 'ի վայրացն. դարձեալ միւսանգամ զառածեալք նաւապետացն՝ 'ի ցամաք կոյս անդր դարձուցանէին զնաւն, և առ բերանովք գետոյն Լիրեայ, որ անդանօր ձգեալ տարածի 'ի Ճահիճս լայնածաւալս՝ արկեալ խարխս, յորդորէին զՄարիոս ելանել արտաքս 'ի նաւէն և առնուլ կերակուր 'ի ծովափունսն՝ կազդուրել զվատեալ մարմինն. մինչև 'ի սովորակի ժամուն յարիցեն հողմք՝ 'ի նուազել ծովայնոյն, յորժամ և յաղտերաց անտի սղոխք օդոյն շնչեսցեն բաւական Ճանապարհին նոցա։ Հաւատաց Մարիոս և անսայր յորդորակին. և [illegible]քին իսկ նաւապետքն հանեալ զնա արտաքս՝ նստուցանէին 'ի ցամաքի 'ի վերայ խոտոյ, և Մարիոսի երբէք 'ի միտն չանկանէր՝ որ ինչ հանգերձեալն էր. իսկ նոքա փութապէս ամբարձեալք 'ի նաւն և ձգեալ զխարխսին՝ խաղային 'ի խորս. ոչինչ արժան համարեցան տալ զՄարիոս 'ի թշնամիս անդր, և

ոչ դարձեալ աներկեան՝ ապրեցուցանել զնա 'ի պահուն։

Եւ այնպէս նա առհասարակ լքեալ ամայի, անդ անկեալ մնաց հարուստ ժամն 'ի ծովափունն անմռունչ ամենեքին։ Ապա 'ի վերջինն ոգւով ջալի խրախոյս տուեալ անձին, այնպէս յուղի անկեալ վշտահար յոյժ՝ հէգ և չուառական անձն գնայր ընդ վայրն ուր և ոչ ճանապարհ ինչ երևէր. և անցեալ հատեալ ճահիճս խորս և խրամն ջրապարպատս և մեծամօրս՝ գտանէ ապա հիւղ մի զծերունւոյ առն՝ որ անդ աշխատէր առ լճին. անկեալ առ ոտս նորա Մարիոս՝ պաղատէր ապրեցուցանել զայր մի՝ որ 'ի մօտալուտ վտանգէն ճողոպրեալ, ունէր ապա դարձ փոխարինի մեծապէս հատուցանել նմա արտաքոյ ակնկալութեն։ Ընդանօր ծերունին կամ զի արդէն ճանաչէր զՄարիոս, կամ զի 'ի պերճ կերպարանէն իբրև այր աւագ համարեալ զնա, զարմացեալ տայր պատասխանի. զի եթէ հանգստեան ինչ պէտք ի ցեն նմա, հիւղ իւր աւադիկ դուշնաքեայ բաւական արդեօք ի՞ցէ նմա. ապա եթէ երերեալ փախչի յերեսաց թշնամեաց, էիսկ նորա առնուլ թաքուցանել զնա 'ի վայր մի զանխուլ և անքոյթ։ Յայնժամ աղաչեալ զնա Մարիոս առնել ըստ բանին ըստ այնմիկ, առեալ զնա ծերունին ածէ 'ի ճահիճ անդր, և տուեալ նմա կծկիլ 'ի խորխորատ մի մօտ գետոյն, արկանէր 'ի վերայ պուրակս պուրակս եղեգանց և փրի-

սայս և կրկուսս, զի փոքրոգիք այնպէս և յանկանեալն մի ինչ ինասեացեն նմա։

Իբրև ժամք ոչ բազում 'ի վերայ անցանէին, Թնդիւն և տրոփիւն և աղաղակ լսէր նա 'ի տաղտուարէ անտի. քանզի Գէ մենիոս արձակեալ շատ որեար 'ի Տերրակինոյ 'ի խնդիր նորա, յորոց և կէսք յառաջեալք ըստ դիպաց մինչև 'ի վայր անդր, կային և արհաւիրս ծերոյն արկանէին ձայն բարձեալ, եթէ Թշնամի զոք զՀռոմայեցւոց առեալ նա Թաքուցեալ ի՞ցէ։ Իբրև զայն լուաւ, զահի հարեալ Մարիոս՝ 'ի վեր 'ի խորխորատէն վազեալ և մերկացեալ ընկենոյր զինքն 'ի լիճ անդր սկսխառն և մոլուտ։

Ալ ծածկեցաւ և ոչինչ 'ի խնդրակացն. անդէն տեսին զնա և այնպէս մերկ տղմաշաղախ հանին ձգեցին զնա արտաքս և ածեալ 'ի Մինտուրնա՝ ետուն 'ի ձեռս իշխանացն։ Քանզի և էր իսկ քարոզ դատակնքոյն կարդացեալ յամենայն 'ի քաղաքս ընդդէմ Մարիոսի առհասարակ՝ հալածել զնա և սպանանել ում ումեք 'ի ձեռս անկցի նա։ Սակայն և իշխանացն հաճոյ Թուեցաւ խորհել ինչ վասն բանին. առին ետուն զՄարիոս 'ի դիպահոլ 'ի տուն Փաննիայ։ Եւ կարծէր ինն՝ կնոջն ոչ ինչ յայնժամ մատդասիրել առ Մարիոս առ խէթ ինչ իւր վանչջուց ընդդէմ նորա։ Քանզի այս Փաննիա հարսնացեալ Տիննիոսի, և ապա բաժանեալ յառնէն խնդրէր զօժիտն իւր բազմահարուստ. այլ

Տիննիոս ամբաստանեալ զնա իբրև շուն յառեան Մարիոսի՝ որ հիւպատոս կայր զվեցերորդ նուագն, և 'ի քննութեանն նշաւակեալ՝ կեանս ցոփ յառաջագոյն վարել Փաննիայ, և զայն Տիննիոսի գիտելով չափ ածել զնա 'ի կին և շատ ևս ժամանակ կեցեալ ընդ նմա, անդանօր Մարիոս զերկոցուն միանգամայն խոտեալ զկեանսն՝ դատակնիք 'ի վերայ ածէր առն դարձուցանել զօժիան, իսկ կնոջն՝ տուգանել պղնձիս չորս 'ի պատուհաս վատահամբաւութեանն։

Յայսր ամենայնի վերայ Փաննիա յայնժամ ոչինչ վարեցաւ առ Մարիոս՝ իբրև կին թշնամանեալ. այլ ընդ մարդակօք իւրովք տեսեալ զնա, և անյիշաչար եղեալ զամենայն խնամս կալաւ առ նա ըստ բաւականի ձեռինն, և քաջալերէր ևս մատուցանէր նմա. և Մարիոս մեծապէս գովէր զմարդասիրութիւնն, և ասէր ևս յոյժ քաջալերեալ զանձն 'ի տեսանել անդ իւրում նշան բարեգուշակ՝ այսպիսի։ Քանզի 'ի հասանել իւրում հանդէպ տանն Փաննիայ և 'ի բանալ դրացն, էշ մի անդուստ 'ի դուրս վազէր ըմպել 'ի մօտահոս աղբերէն. և ակնկառոյց 'ի Մարիոս եղեալ հանդարտ և զուարթագին, այնպէս նախ զկայ առեալ հանդէպ երեսացն, ապա ձայն յստակ արձակեալ՝ քերեալ առ նովաւ կայթս դոփեաց խայտալով. յորմէ և Մարիոս 'ի միտս եկեալ ասէր՝ ինքնին Քաջին փրկութիւն ազդել նմա քան 'ի ցամաքէ՝

առաւէլ ևս 'ի ծովէ. քանզի և այն գրատ ոչինչ միտ եդեալ կերակրոյն՝ որ 'ի ցամաքէն, դիմեալ վազեաց 'ի ջուր։ Իբրև զայս բանս խօսեցաւ ընդ Փաննիայ, աղաչէր զնա փակել զդուռն տանն, և ինքն անդէն միայնակ հանդարտեալ նստէր։

Իսկ անդուստ իշխանք և ատենակալք Մինտուրնացւոց 'ի խորհրդեան հաստատեցին անդանդաղ բառնալ 'ի կենաց զՄարիոս. այլ 'ի քաղաքայնոցն յանձն առնոյր և ոչ ոք կատարել զբանն. իսկ միոմն 'ի հեծելազօրուն այր Գաղատացի կամ թէ Կիմբրացի ազգաւ (քանզի և զերկոսին ասեն պատմագիրք), առեալ զվաղակաւորն՝ մտանէ ուր կայր Մարիոս։ Այլ ոչ ոչ աղօտաձաձանչ ծագեալ 'ի յարկին՝ ուր անկեալ կայր Մարիոս, անդ 'ի մթանն՝ ասեն՝ կայծակունս ինն հատանեալ յաչացն Մարիոսի, և ձայն մեծ 'ի մթանէն բարբառեալ առ զօրականն. "Դո՛ւ ինքնին, այր դու, ժոխս սպանանել զԳայիոս Մարիոս". Ընդ ձայնին 'ի փախուստ բարբարոսին խուճապեալ՝ 'ի դուրս վազեալ 'ի յարկէն, արկեալ 'ի բաց զվաղակաւորն՝ էլ ըստ դուրս տանն. զայս միայն գոչէր. Զէ՞ էս Բաւական սպանանել զԳայիոս Մարիոս։

Իսկ յայնժամ առհասարակ պակուցեալք, ապա և յախտակցութիւն շարժեալք՝ սորջանայինն ևս վասն դատակնքոյն տուէլոյ. ինքեանք զինքեանս դատափետ առնէին, զի յետ խորհրդոյն բան մի հաստատեցին լի՛ անիրաւութեամբ և աննուէր

ընդդէմ առն՝ որ զԽտալիա վրկեաց. ո-
րում և ձեռն չտալ՝ արդեօք դժպատեհ
լրք լցեն և անադորոյն կիրք. և ասէին.
" Գնասցէ ապա դա երերեալ Թափառա-
կան, 'ի սահման այլ վճարել զօրհան.
իսկ մեր աւագիկ յաղերս անկեալ դիցն՝
մի պատուհաս ածել մեզ, զի այնպէս մերկ
և կարօտեալ 'ի բաց 'ի քաղաքէս վարեմք
զՄարիոս " :

Զայս ինչ ասացին և խուռն դիմեալք
առ նա և շուրջ պատեալք, առեալ հա-
նէին զնա արտաքս 'ի տանէն՝ ածել 'ի ծով
անդր : Եւ անդ առհասարակ մոագիւրա-
գոյնս ոմն զայս, և ոմն զայն ինչ 'ի նեղքս
մատուցանէին նմա. այր զարամբ ելեալ
փուԹացուցանէին, սակայն և գեգերեալ
դանդաղէր գործն : Քանզի անտառ յա-
ւերժահարսինն՝ որում Մարիկա անուն
կարդային, որում շուք ձօնեն նոքա և պահ
մեծապէս ունին՝ զի մտեալ ինչ 'ի նեղքս
յանտառն՝ մի ևս դարձցի այսրէն, քար-
ընդոտն էր ճանապարհին՝ որ ուղիղ հանէր
'ի ծովային կոյս. ուստի և յերԹալն՝ էր նո-
ցա շրջանս երկայն առնուլ ընդ այլ ճանա-
պարհ, և 'ի վարանս մտանէին. մինչև 'ի
ծերունեաց անտի ոմն հինաւուրց ձայն
բարձեալ, Թէ ոչ անկոխ և ոչ անանց ինչ
է ճանապարհն՝ յորժամ զՄարիոս ընդ
այն ապրեցուցանել պարտ լցէ. զայս ա-
սաց, և անդէն ինքն առաջին առեալ 'ի
կարաւոյն տանել 'ի նաւն, անցեալ գնայր
ընդ նուիրական վայրն : Եւ այնպէս մտա-

դիւր վաղվաղակի զամենայնն 'ի նեղքս բե-
բեալ առ Մարիոս, և նաւ մի ևս անդանօր
տուեալ նմա Պեղէոսի ուրումն, ինքն ա-
պա Մարիոս յետ այնորիկ տայր նկալեալ 'ի
պնակի Ճշգրիտ տպաւորեալ զայս ամենայն
արկած զանձինն. և կախէր զայն 'ի ձօն 'ի
մեհենի անդ վայրացն՝ ուստի մեկնեցաւ
նա յայնժամ յաջողակ գտեալ զհողմն։
Անդուստ ածաւ նա ըստ գեղեցիկ բախ-
ային 'ի կղզին Ենարիա, ուր և գտեալ ըզ-
Գրանիոս և զայլս 'ի բարեկամացն, նա-
ւեաց անտի 'ի Լիբիա կոյս. այլ ջուր պա-
կասեալ նոցա՝ ստիպեցան ունել զՍիկիլիա
առ ափամբքն Երիւկինեայ։

Էր անդ պատահեալ 'ի պահպանութի
վայրացն այր Հռոմայեցի գանձաւոր, և
վայրիկ մի ևս ձերբակալ առնէր նա զՄա-
րիոս ելեալ 'ի ծովափն. և սպան ևս նա
անդ արս իբրև վեշտասան եղեալս 'ի խնդիր
ջրոյ. այլ Մարիոս մազապուր մեկնեալ 'ի
վայրացն, և անցեալ զհուն զայն ծովուն և
հասեալ 'ի կղզին Մինինդա, անդանօր լուր
էառ զի որդի նորա ապրեալ հանդերձ կե-
թեգոսիւ գիմեալ են առ Յամպասս արք-
քայ Նումադացւոց խնդրել օգնութիւն։
Զայն լուեալ Մարիոս և վայր մի ոգի ա-
ռեալ, խնդրեաց 'ի կղզւոյ անտի անցանել
'ի Կարքեդոն։ Եւ զօրավարէր յայնժամ
'ի Լիբիա Սեքստիղիոս այր Հռոմայեցի,
որում ոչ բարի և ոչ չար ինչ գործեալ
չէր Մարիոսի. ակն կալեալ ինայր առ 'ի
նմանէ օգնականութեանն 'ի վիշտ վտան-

գին։ Այլ անգէն յիջանել նորա ընդ սա-
կաւուց 'ի ծովեզրն, ընդ առաջ նորա ե-
լեալ 'ի պաշտօնէից անտի ոմն, ասէր այս-
պէս. "Զէ՛ քեզ թոյլ 'ի Սեքստիլիոսէ
ովՄարիէ, իջանել 'ի Լիբիա. ապա թէ
ոչ՝ 'ի գործ նա զդատակնիք վարեսցէ ըզ-
Սինկլիտոսին, գտեալ զքեզ իբրև թշնա-
մի Հռոմայեցւոց"։ Լուեալ զայս Մարիոս,
հեղձամղձուկ 'ի ցաւոցն և 'ի սաստիկ թաղ-
ծութենէն, այնպէս կարկեալ հարուստ
մի անմռունչ կայր՝ տիգոք աչաց ահագինս
ակնարկեալ 'ի պաշտօնեայ անդր։ Ապա
հարցեալ պաշտօնէին՝ զի՞նչ պատասխանի
տանել զօրավարին, հուսկ ապա Մարիոս
խոր յոգւոց հանեալ, ասէր. "Պատմեա-
ցես դու ուրեմն դմա, եթէ տեսեր զԳայիոս
Մարիոս վտարանդի թափառական նըս-
տեալ 'ի վերայ աւերակացն Կարքեդոնի"։
Գէղեցիկս յօրինակ 'ի նեղքս բերելով նմա
բանիւն զարկած զքաղաքին զայնորիկ և
զիւրոյ անձինն աղէտս։

Իսկ անդանօր Յամպսաս արքայ Նումա-
դացւոց՝ յայսկոյս յայնկոյս տարաբերեալ
'ի խորհուրդս, թէպէտ և 'ի շուք պատուոյ
ունէր զպատանին Մարիոս, այլ 'ի խնդրել
նորա երբէք մեկնիլ 'ի նմանէ, ցանգ պատ-
ճառեալ արքայն արդելոյր զնա. և ապա
յայտնի էր տեսանելեացն՝ զի չէր ինչ գե-
ղեցիկ այս գեղերանք նորա. բայց ինչ մի
յայնժամ 'ի սովորականացն պատահէր
պատանւոյն 'ի փրկութիւն անձին նորա։
Քանզի գեղանի գոլով պատանին Մարիոս

և պերճ, անդ մի ոմն 'ի հարճից արքային սրտառուչ ախտակցեր ընդ դժպատեհ արկած բաղդին նորա. և ապա այն կարեկից կիրք սկիզբն լինէր սիրոյն և յորդիչ։ Զառաջինն մերժէր նա զկինն. այլ ապա զայլ հնարս փախստեան չգտեալ, և զի և յամենայնի կինն պարկեշտագոյնս գնայր քան զտարփայեալս ոմանս, գործի 'ի ձեռն առեալ զմոերմութիւն նորա և զզօրավիգն՝ փախուցեալ զերծանէր անտի հանդերձ բարեկամաքն խրովք, և եկեալ հասանէր ուր կայր Մարիոս։ Անդանօր իբրև նոքա գիրկ ընդ խառն եղեն, և ճանապարհ ապրարեալ առ ծովուն՝ տեսանէին կարիճս կռուեալս ընդ միմեանս, զայն տեսիլ չար համարեցաւ Մարիոս. ուստի և փութապէս եղեալք 'ի նաւակ մի ձկնորսաց՝ որ անդ, անկան յուղի 'ի Կերկինա կղզի ոչ ինչ բացական 'ի ցամաքէն. իսկ անդէն 'ի խաղալ նոցա 'ի խորն՝ տեսանէին հեծելազօրս վաղընթացս արձակեալ յարքայէն 'ի վայր անդր՝ ուստի մեկնեցանն. և զայն տագնապ վտանգին ոչինչ պակաս քան զայլն ամենայն համարեցաւ Մարիոս։

Բայց 'ի Հռոմ լուր հասանէր մարտի պատերազմին Սիւլլայի ընդ զօրավարսն Միհրդատայ 'ի Բիովսիա. սակայն 'ի Հռոմ 'ի կապ ընդ միմեանս եղեալ հիւպատոսացն զինուք չափ՝ յաղթական 'ի կռուին լինէր Հոկտաւիոս, և վանէր հալածէր զԿիննա՝ որ բռնաւորութեամբ ճոխանայր յիշխանութեանն, և փոխան հիւպատոս կացու-

ցանէր զԿոռնելիոս Մերուլաս։ Այլ կին-
նաս զօրաժողով եղեալ յամբոխ մեծ 'ի
կողմանց կողմանց Իտալիոյ, մարտ պատե-
րազմի յարդարէր ընդդէմ երկուց հիւպա-
տոսացն։

Իբրև այս ամենայն ազդ լինէր Մարիո-
սի, լաւ համարեցաւ անդէն յառնել նա-
ւել ճեպով. և առեալ ընդ իւր 'ի Լիբիոյ
յասպետացն Մաւրիտանացւոց, և յԻտա-
լացւոց անտի ևս՝ որ հասեալ էին առ նա,
յուղի անկաւ՝ ընդ ամենայն ոչինչ աւելի
քան զհազար։ Եկեալ հասեալ 'ի Տեղա-
մուէն Տիւրրենեայ, ետ քարոզ կարդալ ա-
զատութեան ծառայիցն. և անդ 'ի ծով
անդր խուռնընթաց զնովաւ եղեալ՝ ձգեալք
'ի համբաւոյ առն երկրագործ մշակք և հո-
վիւք՝ որ ազատքն իսկ էին, և 'ի նոցանէն
առոյգք նահատակեալք 'ի զինուորութիւն,
այնպէս 'ի սակաւ աւուրս խմբեաց նա բազ-
մութիւն մեծ. զի և նաւս քառասուն եղեալ
նա մարդկամբք։ Ապա Մարիոս գիտելով
չափ զՀոկտաւիոս այր լաւ և առաքինի և
արդարակորով յիշխանութեն. և զի՝ կին-
նաս ինքնին կասկածելի է առ Սիւղլաս, և
հակառակորդ՝ որ յայնժամ կարդաց վար-
չութեան քաղաքին, հաստատեաց 'ի միտս
գնալ և ընդ Կիննասայ խմբիլ իւրովք զօ-
րականօքն։ Առաքեաց առ նա և խոստումն
կուտէր ընդ նմա, հնազանդ իբրև հիւպատո-
սի կալ նմա յամենայն հրամանս նորա։

Իսկ Կիննաս մոռադիւրագոյնս ընկալեալ
զնա, և փոխանակ հիւպատոսի ևս կար-

գեալ զնա, և զգաւազանն և զայլ ևս նը-
շանակս զաւագութեանն յղեալ առ նա,
հրաժեշտ տայր Մարիոս 'ի մեծաշուք զար-
գուցն՝ իբրու դժպատեհ առաջիկայ բաղ-
դին նորա. այլ հանդերձ մի անարդ ան-
պաճոյճ արկեալ զանձամբ, այնպէս եր-
կայնագէս և խուռացեալ զհերսն ունելով
յօրէ անտի փախստեան իւրոյ, յամրա-
քայլ յուշիկ զոտն յոտանէ փոխէր՝ իբ-
րու այն որ զեօթանասնամենիւք անցեալ
ուրեմն էր. ինդրէր զայնօրինակ 'ի գուք
խանդաղատանաց զտեսանելիսն շարժել:
Բայց հիքութիւն անձինն խառն 'ի տնկա-
կից վայրագութենէն, քան 'ի գուք՝ առա-
ւել ևս յարհաւիրս արկանէր. և երիթա-
ցեալ կերպարան առնն յայնժամ ոչինչ
սրտառուչ սրտաբեկ երևեցուցանէր զո-
գին նորա, նա՛ և ևս վայրագացեալ 'ի ձա-
խողակ արկածիցն:

Ապա առեալ ժողովեալ զնա Կիննաս
և խօսեցեալ ընդ զօրականին, պատրաստե-
ցաւ նա վաղվաղակի բան 'ի գործ առնել.
և անդէն մեծապէս փոփոխէին իրք: Քան-
զի նախ առաջին արդեալ նա իւրովք նա-
ւուք զանցս պաշարոցն. և աւար հարեալ
զվաճառականն՝ տիրացաւ 'ի վերայ ամ-
բարոցն: Ապա յառաջ վարեալ նաւուք
հասանէր ունէր զքաղաքսն ծովամերձս.
և նենգաւ կալեալ և զՈստիա՝ յաւարի
առնոյր զինչս նորա և մարդիկ բազում 'ի
մահ վարէր. և կամուրջ մի ևս կապեալ 'ի
վերայ գետոյն, բնաւ իսկ խցեալ կուրա-

ցուցանէր զՃանապարհ պաշարոյ ամբարոցն 'ի ծովէն առ Թշնամիս անդր։ Ապա անտի չու տուեալ բանակին խաղայր գնայր ընդ-դէմ քաղաքին, և հասեալ կալաւ զլեառն՝ զոր անուանեալ կարդան Եանուկլոս։ Այլ անդուստ Հոկտաւիոս այնչափ ինն վեսատակար իրացն գտեալ՝ ոչ յանհմտութենէն միայն, այլ զի և ցանգ Ճշգրտագոյնս կամէր պնդել յարդարութի անդր օրինացն, զանց զպիտանեօքն և զօգտակարօքն արարեալ, որպէս զի և բաղմաց յայնժամ թախանձ արկեալ յաղատութիւն կարդալ զսպասաւորացն խումբ, ետ պատասխանի՝ երբէք զծառայս չառնել բաժանորդ հայրենի քաղաքին՝ յորմէ 'ի բաց զՄարիոս մերժէ 'ի հաստատութիւն օրինացն։

Իսկ իբրև Մետեղղոս որդի Մետեղղեայ որ զօրավար կացեալ էր 'ի Լիբիա և վտարանդի լեալ էր 'ի Մարիոսէ, եկն եհաս յայնժամ 'ի Հռոմ քաղաք. և երևէր ևս նա քան զՀոկտաւիոս յաջողեալ 'ի զօրավարութե, լքեալ զօրականին այնուհետև զՀոկտաւիոս՝ անցանէին առ նա. աղաչէին առնուլ զանձամբ զիշխանութենն և ապրեցուցանել զքաղաքն. զի և գոյր նոցա՝ քաջապէս մարտ դնել կռուել և զյաղթութենն տանել, եթէ զօրավար նոցա 'ի գլուխ կացցէ վարժ և արիական։ Իսկ Մետեղղոս ընդվայր զբանն հարեալ՝ պատուիրէր ևս նոցա դառնալ առ իւրեանց հիւպատոս. այլ նոքա յարուցեալ չոքան և 'ի կողմն անցին

թշնամեաց. ապա և Մեսեղղոս յայնժամ
ելեալ խոյս տայր 'ի քաղաքէն՝ իբրու որ
վճարեալ էր այնուհետև վասն նորա։
Բայց զՀոկտաւիոս ունէին անդէն 'ի Հռոմ
քաղդեայք և դիւթք ոմանք և Սիբիլլեանք՝
որ ածեալ հաւանեցուցանէին զնա յաջո-
ղել գործոց նորա։ Քանզի թէպէտ և էր
իսկ Հոկտաւիոս 'ի մէջ ամենայն Հռո-
մայեցւոց քաջուշիմ խորհրդով և առա-
քինի յայլն ամենայն, և մեծաշուք ևս գի-
տէր յարդարել զհիւպատեան ղբարձն, ոչ
ինչ միտ եդեալ մարդելուզացն շողոմու-
թեանց, և միշտ վաղնջուց կարդացն պատ-
կառ կայր և հայրենատուր օրինացն՝ իբ-
րու անյեղլի սահմանաց, սակայն և 'ի
գործս ժամուն մեծապէս տկարութիւն
յանձին բերեալ, շատ ևս ժամանակ ծա-
խէր ընդ շաղաւաշուրթն որերոյն և ընդ
ըղձիցն և ընդ գուշակացն, քան ընդ քա-
ղաքագէտ արանցն և ընդ մարտիկ։

Արդ զայս Հոկտաւիոս՝ մինչև Մարիո-
սի մտեալ 'ի քաղաքն՝ 'ի վայր 'ի բեմէն
քարշեալ ձգեալ անդէն խողխողէին, որք
յառաջագոյն անդր առաքեալք էին 'ի
Մարիոսէ. և ասեն՝ գտանել յետ մահուն
'ի ծոցին նորա գրապանակ քաղդէացի։
Եւ այսպէս ապա նոյն բան՝ երկբանութի-
ղ նեղքս բերէր. քանզի գուշակութեանցն
պատկառ կալ՝ յերկուց անտի զօրավարացն
մեծաց՝ զՄարիոս հաստատեաց, և զՀոկ-
տաւիոս կորոյս։

Իբրև այս եղև, 'ի խորհուրդ խմբեալ

Սինկղիտոսին՝ առաքէր դէսպանս առ Կին-
նաս և առ Մարիոս. աղաչէին դալ մուա-
նել նոցա 'ի քաղաքն, և խնայել 'ի քա-
ղաքացիսն։ Յայնժամ Կիննաս 'ի լուր մա-
տուցեալ դէսպանացն՝ բազմեալ իբրև հիւ-
պատոս 'ի Թիւրոան աթոռակին, տայր
պատասխանի մեծապէս մարդասիրութիւն։
Իսկ Մարիոս առ երի աթոռոյն անմռունչ
կայր. սակայն և յանհամբոյր կերպարա-
նէն անժպիտ դիմացն և 'ի խեթ հայե-
ցուածոյն երևէր՝ իբրու խակ և խակ յապա-
ժոյժ արեանց շաղել շաղախել զքաղաքն։
Ապա յարուցեալք դէմ եդեալ գնային
'ի քաղաքն կոյս. Կիննաս մտանէր պարառ-
եալ յիւրոց Թիկնապահացն. այլ Մա-
րիոս զտեղի կալեալ առ դուրսն, վտարան-
դի ասէր զանձն հեգնելով և ցասմամբ, և
յօրինացն արգելեալ մտանել 'ի հայրե-
նիսն. որում եթէ պէտք ինչ իւր իցեն
նմա 'ի ժամուն, պարտ և արժան իցէ
արդեօք՝ ասէր՝ երկրորդ վճռով զառա-
ջինն ջնջել որով և տարագրեցաւն. իբրու
որ ճշգրիտ աւանդապահն գոլով օրինացն՝
այնպէս մոցէ 'ի քաղաքն ազատ։ Ոյր ա-
ղագաւ և զժողովուրդն առեալ խմբէր 'ի
հրապարակ անդր. այլ մինչև երից կամ
չորից ցեղիցն զքուէայսն արկեալ, 'ի բաց
զպատրուակն մերկացեալ և զերաւաբա-
նութիւն վտարանդութեանն, խաղաց յա-
ռաջ՝ շուրջ Թիկնապահս ունելով այրին-
տիր 'ի ծառայիցն խմբելոց՝ որոց և անուն
կարդայր Բարդեանս։ Անդ նոքա զվաղա-

կաւորն 'ի գործ առեալ սուր 'ի վերայ՝ կոտորէին բազում որեար 'ի ձայն հրամանին Մարիոսի, և բազում դարձեալ յակնարկի առնէին. մինչև և զԱնքարիոս աւագ 'ի Սինկղիտոսէն և զօրավար՝ ընդ առաջ եկեալ Մարիոսի, զի ոչ կարդաց զնա, խողխողէին առ ոտս նորա. և ապա այս անբարբառ լռութիւն նորա և ոչ տալ ողջոյն՝ որոց մատչէիին, էր նոցա նշան 'ի մահ վարելոյ անդէն 'ի փողոցին. որպէս զի և բարեկամքն ինքնին գլխովին յայնժամ 'ի մեծ արհաւիրս մատչէին համբուրիւ ողջունել զնա։

Եւ ապա յամբաւ կոտորածէն յագեցաւ Կիննաս, այլ ոչ և Մարիոս. նա օր քան զօր ծարաւէր և ևս աննուէր 'ի սրտմտութեան իւրում. 'ի մահ վարէր առհասարակ զորոց և գուշնաքեայ ունէր կասկած։ Անդանօր ամենայն ճանապարհք և քաղաքք լի էին հետամուտ խնդրակոք փախստեայ մարդկանն և զօղելոցն. և յայն աղէտսն յայտ յանդիման երևէր՝ եթէ 'ի դէպս ճախողակս հաստատուն չեն հիւրընկալութեանն հաւատք և բարեկամութեն. իբրև նուազունք յոյժ գտան յայնժամ՝ որ չեղեն մատնտու ապաւինելոցն իւրեանց։ Ոյր աղագաւ և սքանչելի յոյժ գտան 'ի ժամուն ծառայք Կորնուտոսին. որ 'ի տան զիւրեանց տէրն թաքուցեալ՝ իսկ արտաքոյ խեղդ 'ի պարանոցի հանեալ 'ի կախաղան զմի ոք յամբաւից անտի խողխողելոցն, և մատանի ոսկի 'ի մատն եդեալ նորա,

ցուցանէին զնա այնպէս թիկնապահացն Մարիոսի. և ապա գեղեցիկ զարդու պա-ճուճեալ զդիակն՝ իբրու սեպհական զիւ-րեանց տեառն՝ այնպէս առեալ թաղէին զնա. և իմացաւ և ո՛չ ոք զբանն. և Կոր-նուտոս այնպէս 'ի ձեռն ծառայիցն ապ-րեալ՝ չոքաւ ապա 'ի Գաղատիա։

Ա՛նդ և ինքն Մարկոս Անտոնիոս հռե-տորն բարւոյ դիպեալ բարեկամի, այլ 'ի չար բախտէն ձախողակի վիճակեցաւ ե-լից։ Քանզի առ որում փախուցեալ կայր, այր գոլով ռամիկ և աղքատ՝ խնդրեաց ըստ բաւականի ձեռինն մեծապէս հիւրընկա-լութիւն 'ի ներքս բերել աւագամեծար Հռոմայեցւոյն՝ զոր ժողովեաց. առաքէր զմանուկ իւր առ պանդոկապետն որ մերձ կայր, առնուլ գինի։ Իսկ մանուկն առա-ւել ինն խուզիւ ճաշակս առեալ զգինւոյն զոր ետ պանդոկապետն և խնդրեալ զա-ռաւել անոյշն, հարցանէր այրն՝ հլիմ չառ-նուլ զնորն և զհասարակն (որպէս սովորն էր), և զաղնիւն խնդրէ և զծանրագինն։ Մանուկն անկեղծաւոր ետ պատասխանի, և անպատրուակ իբրև ծանօթի առն և ըն-տանւոյ ասէր, ինչոյս տալ տեառն իւրոյ Մարկոսի Անտոնիոսի՝ որ զօղեալ կայ առ նմա։ Իսկ պանդոկապետն այր ամբարիշտ և չար, անդէն 'ի մեկնել մանկանն՝ ճե-պով առ Մարիոս ընթացեալ՝ մինչդեռ նա յընթրիս բազմեալ կայր, 'ի ներքս մտեալ ասէր՝ անշուշտ զԱնտոնիոս 'ի ձեռս տալ նմա։ Եւ ասեն, 'ի լուր բանին՝ ձայնիւ մե-

ծաւ Մարիոսի առ խնդին ծափ զծափի հարկանել, և վայրիկ մի ևս յարուցեալ յընթրեացն ինքնին երթալ ուր կայր Անտոնիոս. այլ արդելեալ 'ի բարեկամացն՝ արձակէր զԱննիոս և զօրականս ընդ նմա, պատուէր տուեալ վաղվաղակի բերել առ ինքն զգլուխն Անտոնիոսի։

Հասեալ նոցա 'ի տունն՝ անդ 'ի կողմն դրանն ոտնակառէր Աննիոս, և զօրականք 'ի վեր ընդ սանդուղսն ելեալք 'ի սենեակն Անտոնիոսի և տեսեալ զնա՝ այր ընկերի իւրում սադրէր սպանանել զնա, զի և ոք 'ի նոցանէն յանձն չառնոյր զբանն. այնչափ ինն էին նազաբանութիւնքն և շնորհք Անտոնիոսի՝ իբրև արդարև Յուշկապարկի. զի և 'ի բանալ բերանոյն և աղերսել զնոսա մի յոգի հարկանել զնա, ժտեցաւ և ո՛չ ոք ոչ հպիլ միայն 'ի նա՝ այլ և ո՛չ յերեսս հայիլ նորա. այլ այնպէս ակնկորեալք առհասարակ նոքա՝ յարտասուս հատանէին։ Իսկ իբրև այնպէս յերկարէին իրքն, ինքնին Աննիոս ելեալ 'ի վեր՝ տեսանէ զԱնտոնիոս յատենաբանել, և զզօրականն անդ կացեալ պակուցեալս և ամոքս 'ի լուր բանիցն. յիշոցս նոցա տուեալ՝ ինքնին յառաջ վարեալ կտրէր 'ի բաց զգլուխն Անտոնիոսի։

Իսկ և Կատղոս Լուտատիոս՝ այն որ ընդ Մարիոսի հիւպատոս կացեալ էր և ընդ նմա 'ի վերայ Կիմբրացւոց յաղթանակեալ էր, իրազգած եղեալ՝ եթէ աղաչաւորացն վասն փրկութեան նորա ոչինչ այլ պա-

տասխանի առնէր Մարիոս, բայց զայն՝ ե-
թէ "Մեռանել անշուշտ պարտի", ա-
ռեալ փակեաց զինքն 'ի փոքրիկ յարկ, և
վառեալ ածուխս շատ՝ անդէն հեղձամըղ-
ձուկ լինէր։ Իսկ զդիակունս զսպանելոցն
գէշ արկեալ անդլուխ 'ի փողոցս քաղա-
քին և առաթուր կոխեալ, քան 'ի կարեկ-
ցութիւն շարժել տեսանելեացն՝ առաւել
ևս լի՛ արհաւրոք էին առհասարակ զդողա-
նի հարեալք վասն անձանց իւրեանց։ Իսկ
որ մեծապէս 'ի ցասումն վառեաց զժողո-
վուրդն, անպատկառ պագշոտել Բար-
դեանցն այնոցիկ. որ 'ի տունս միեալք
խողխողեալ զտանուտեարս, տառապեցու-
ցանէին զորդիսն և լլկէին զտանտիկնայսն,
և լրբենիք և ապերասանք յափշտակէին և
յարիւն շաղախէին. մինչև Կիննաս և Սեր-
տովրիոս միաբանեալք՝ անկեալ 'ի վերայ
նոցա 'ի բանակին գիշերի մինչդեռ 'ի քուն
կային, առհասարակ զամենեսեան ընդ
սուր հանէին։

Զայսու ժամանակաւ՝ իբրու որ հողմն
փոփոխեալ ահագին մրրկին՝ 'ի կողմանց
կողմանց լուրք հասին, զի Սիւլլաս զՄի-
հրդատեանն վճարեալ մարտ և 'ի բուռն
անդրէն զդաւառսն արկեալ՝ ստուար զօրու
դիմեալ դայ 'ի Հռոմ քաղաք։ Յայսմանէ
ապա վայր մի դուլ լինէր անպատում չա-
րեացն, ժամ 'ի ժամէ դէտակն կալեալք
մարտի պատերազմի։ Ապա Մարիոս կար-
գեալ հիւպատոս Եօթներորդ անգամ, և
եկեալ 'ի հրապարակ անդր 'ի կաղանդան

Յունվարի 'ի սկիզբն տարւոյն, 'ի նմին իսկ աւուր տայր գահավէժ խարդաւանել զՍեքստոս Լուկինոս։ Այլ Կիննասայ և Սերտովրիոսի և ողջոյն քաղաքին Թուէցան այն իրք նշանակ մեծ աղէտիցն՝ որ առ դուրս հասեալ իցեն նորա։

Բայց Մարիոս վատեալ պարտասեալ յայնժամ յաշխատութեանցն, և իբրու որ յալէտանջ հոգոցն ոգեսպառ և նկուն, ո՛չ ևս քաջալերէր յանձն իւր. զմտաւ ածեալ զմարտ պատերազմին որ առաջոյ, և զմօտալուտ զմրցանան, և զվիշտ վտանգին, զմեծ զարհաւիրան՝ որոց և ինքնին ճշդրիտ 'ի վերայ կացեալ էր, զդողանի հարեալ երկնչէր։ Եւ զայն ևս յուշ ածէր, զի ո՛չ ընդ Հոկտաւիոսի 'ի կռիւ մատուցեալ է կամ ընդ Մերուլասայ՝ զօրավարաց խուժանի անկարգ հրոսակին, այլ որ դիմեալ գայ՝ էր ինքնին Սիւլղաս. յորմէ այն ինչ վտարանդի փախեաւ 'ի հայրենեացն, և որ զՄիհրդատն գլխովին յայնժամ վանեալ՝ յԵփեսինեանն Պոնտոս ամփոփեաց։ 'Ի խորհուրդս յայս ծփեալ յուզեալ և յի շատակ ևս բերեալ զբազմաժամանակեայ աղէտիցն, և զվտարանդութեանն, և զփա խըստեանն, և զվտանգացն, յորժամ այսր անդր երերեալ հալածեցաւ ընդ ծով և ընդ ցամաք, 'ի մեծ տագնապ տարակուսի անկանէր այրն. այլ և յարհաւրաց անտի գեշերայնոյն և յանրջական երազոցն խուլականաց Թուէր ինն նմա զօրհանապազ ազգել ուրուն, եթէ՝ Քանզի առէ-ծուն

և բացական ելոյ՝ ահաբեկ են ոբջ։ Այլ քան-
զի նա 'ի վերջ քան զամենայն երկուցեալ
զանգիտեր 'ի տքնութենէն, բնաւ իսկ անկ-
ղեսացաւ յայնժամ 'ի գիներբուս՝ դժպա-
տեհ իւրում հասակին. խնդրէր օրինակ
զայն՝ քուն անձին մեքենայել և յոգե-
տանջ խորհրդոցն զերծանել։

Ապա 'ի վերջէ հասեալ անդր 'ի ծովէ
հրեշտակ մի և համբաւ բերեալ զբանա-
կին մտելոյ, անդրէն միւսանգամ զահի
զդողանի հարկաներ Մարիոս. և ապա
կէս մի յարհաւրաց հանգերձելոցն, կէս
մի խոնջ և նկուն յառաջիկայ աղէտիցն՝
այնչափ իմն վաստարեցաւ, զի և 'ի դուշ-
նաքեայ թափոյ անկաներ նա 'ի խօթութի
կշտացաւոցն, ըստ որում գրէ ինքնին Պո-
սիդոնիոս իմաստասէր. այն որ ասէ՝ 'ի
տուն Մարիոսի մտեալ խօսել ընդ նմա
մինչդեռ նա խօթ անկեալ կայր՝ յաղագս
որոց ինքն դեսպանութեամբ եկեալ էր։
Այլ Գայիոս ոմն Պիսոնէ այր պատմաբան
պատմէ մեզ, եթէ Մարիոս ձեմ առեալ
յետ ընթրեաց ընդ բարեկամացն՝ զբանիւք
անկաներ յաղագս նահատակութեանցն
իւրոց և արկածիցն անդուստ 'ի վերուստ
առեալ զբանն. և յետ ոճով պատմելոյն
զամենայնն գիմակ գիմակ զբարեացն և
զչարեացն, յաւելոյր ասել. Զէ առն հան-
ճարեղի՝ բաղդին այլ ևս հաւատալ զանձն։
Ապա համբուրիւ գրկեալ զորս ընդ իւրն
էին, և ընկողմանեալ 'ի մահճին՝ յետ
եօթն աւուրց մեռանէր։

Եւ ասեն՝ եթէ բուռն պատուասիրութիւն նորա նշաւակեալ առակէր 'ի խոթութեանն՝ անկեալ 'ի խելացնորութիւն ահագին. որով և զինքն գլխովին կարծեալ զօրավար 'ի Միհրդատեան մարտին, այնպէս իբրու որ 'ի կռուին ինքնին նահատակեալ՝ որպէս սովորն էր, զաղդ աղդ շարժման զմարմնոյն յանձին բերէր, գոչիւն արձակեալ բարձր և ստէպ աղաղակ բարձեալ զկարախուսի և զանվեհեր յաղթութեանն. այնչափ իմն սաստիկ և բուռն ցանկութիւն նահատակութեանցն այնոցիկ հեղձամղձուկ առնէր զնա, վառեալ 'ի նախանձաւոր ըղձից զօրավարութեանն: Ուստի և կէցեալ ամն եօթանասուն, և առաջին 'ի մարդիկ՝ ինքն կացեալ 'ի հիւպատոսութեան բարձին եօթն անգամ, և իւր տուն շինեալ և հարստութիւն ամբաւ կուտեալ՝ բազմաց ազգայից բաւական, 'ի վերայ այր և ողբայր և դանգատեր բախտին, իբրու որ մեռանել այնպէս աղքատ, և մինչև 'ի գլուխ տարեալ զկղձս փափաքանացն:

Այլազգագոյնս 'ի նեղքս եբեր օրինակ Պղատոն 'ի մերձենալ մահուն. շնորհս ուներ իւրումն Քաջին և գեղեցիկ Բախտին. մի՝ զի մարդ ծնաւ. և միւս ևս՝ զի Յոյն ծնաւ և ոչ բարբարոս, և ոչ անբան բնութեամբ ծնաւ նա պաճար. առ այսոսիկ՝ զի և ժամանակակից ծնաւ ինքն Սոկրատայ:

Եւ Ճշդրտեն ևս՝ եթէ և Անտիպատրոս Տարսոնացի մերձ եղեալ 'ի մահ, յուշ իւր

ածեալ զամենայն բարեբաստութիւնն, ոչ մոռանայր և զյաջողակ զիւր նաւարկութիւն 'ի տանէ ՅԱԹԷՆԱ. իբրու շնորհս մեծ վարկուցեալ զենաւ իսկ յաջողութեան զգեղեցիկ բաղդին՝ ցանգ անմոռաց կալեալ 'ի դանձարանի ուշոյն, քան զոր չէք մարդոյ անդրժելի ևս ամբարանոց 'ի պահեստ բարեացն՝ յորս վայելեաց. բայց որք անյուշքն իցեն և անհանճարք, այնպիսիք ընդ ժամանակին 'ի մոռացօնս և զամենայն բարիս իւրեանց դարձուցանեն. ուստի և ոչինչ յուշի կալեալք, իբրև միշտ անբաժք 'ի բարեաց և լի՛ յուսովք, ակնկառոյցք դառնան 'ի հանդերձեալն և զառաջիկայէն չէ՛ ինչ նոցա փոյթ. և Թէպէտ և առաջինդ խաւիանեաց 'ի բախտէն, և վերջինդ անդրժելի կայցէ, 'ի վերայ այսր՝ զառաջիկայ զբախտն նոքա յանձանց 'ի բաց վարել բնաւորեցան՝ իբրու օտարոտի լիմն, և յերազացեալք անրջաբանեն զանյայտիցն հանդերձելոց. և կարի՛ յիրաւունս պատահէ դոցա, քանզի զհետ կըրթեալք կուտել յարտաքնոցն բարեաց՝ մինչև բազմոց նոցա և հաստատութիւն գործեալ 'ի ձեռն իմաստութեան բանից և հրահանգաց, երբէք նոքա զանյագութեն զոգւոյն ընուլ ոչ ունին։

Արդ մեռաւ Մարիոս յեօթն և տասներորդի աւուր եօթներորդի հիւպատոսութեանն. և անդէն ցնծութիւն մեծ և քաջալերութիւն զգեցաւ Հռոմ, իբրու որ զերծ զինքն կարծեաց յաննուէր բռնա-

ւորութենէն. սակայն յետ աւուրց սա-
կաւուց զբռնաւոր ծերն դարձաւ հայեցաւ
փոխեալ և երիտասարդացեալ աշխոյժ.
այնչափ իմն չարաշուք և անագորոյն էին
կիրք որդւոյ նորա պատանւոյն Մարիոսի,
որ 'ի մահ վարեաց լաւ և քաջ և ականա-
ւոր մարդիկ։ Սա այս՝ արիական ցուցեալ
զանձն և դիմագրաւ նահատակ ընդդէմ
թշնամեաց, զառաջինն անուն կարդային
նմա՝ Որդի Արեսի. այլ ապա վաղվաղա-
կի յարդեանց անտի իւրոց զհակառակն 'ի
նեղքս բերեալ, անուն կոչեցին նմա՝ Որդի
Աստղկան։ Ապա 'ի վերջէ պատեալ պա-
շարեալ սորա 'ի Պրենեստա 'ի Սիւլլայէ,
յետ բազում անավաստակ հնարից փրկու-
թեան անձինն՝ յառնուլ անդ քաղաքին
անճողոպրելի գտեալ, անձին առնէր 5։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Ըստ որում Կասսիոս Լոնգինոս, և Ափրեղիոս, և Սկաւրոս, և Կեբիոն, և Գնէոս Մանլիոս։

2. Քանզի կարգեցաւ նա Հիւպատոս, մինչդեռ չէր և ոչ երեսնից ամաց. և ըստ օրինացն՝ պարտէր լինել ամաց քառասուն և երկուց։

3. Փափաքելի էր տալ Պլուտարքեայ ծանօթս մեզ յաղագս պղնձի ցլաւն այնորիկ՝ նուիրական առ բարբարոսսն։ Սակայն և ուրեք երբէք չգտանի ինչ պատմութիւն վասն նորա։

4. Ցանկալի էր ունել 'ի ձեռին և ըզվարսն Մեսեղեայ զաւագ առն՝ արձանագրեալ 'ի Ճարսար և 'ի քաջահրահանգ գրչէն Պլուտարքոսի։ Սակայն և այս Վալք մի է 'ի կորուսելոցն Պլուտարքեայ։

5. Մի է 'ի Զուգակշռութեանցն կորուսելոց Պլուտարքեայ՝ և Պիւռռոսինն և Գայիոսի Մարիոսի։ Եւ զուգակշռութիւն սոցա գտեալ յայլ թարգմանութիւնս, է Տասիէի մատենագրի Գաղղիացւոյ։

ՊԼՈՒՏԱՐՔԵԱՆ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ԼԻՍԱՆԴՐԵԱՆ

ԵՒ

ՍԻՒՂՂԱՅԻ

ԼԻՍԱՆԴՐՈՍ

Լ.ԿԱՆԹԻԱՑԻՈՑ գանձուն 'ի Դեղ-
փիս՝ վերտառութիւն է այսպիսի. Բրա-
սիդաս Ի ԱՆԻԹՈՅԻ ՅԱՌԵՆԱՑՈՅ: Վասն
որոյ և զոր անդ 'ի նեղքս 'ի յարկին առ
դուրսն կանգնեալ կայ՝ զքարեղէն ան-
դրին, բազումք Բրասիդեայ կարծեն լի-
նել. սակայն Լիւսանդրեայ է. քանզի և
ճշգրիտ 'ի դէմն բերէ զտիպ նորա զերկայ-
նագէս հերացն՝ ըստ վաղնջուց սովորու-
թեանն, և զգեղեցիկ նորա զերկայն մո-
րուացն: Քանզի ոչ (որպէս ոմանք ասեն)
եթէ յորժամ Արգոսացիք յետ մեծի հա-
րուածոյն 'ի սուգ համակեալ՝ գերծին
զհերս. իսկ անդուստ ներշնակաբար Սպար-
տացիք ցնծացեալք 'ի գեղեցիկ նահատա-
կութիւնն՝ երկայնեալ ձգեցին գէս:
Եւ ոչ դարձեալ՝ յորժամ Բակքիադա-
ցիք փախուցեալք 'ի Կորնթոսէ 'ի Լակե-

գեմոն, հիքացեալք և անգեղեայք այն-
պէս 'ի գերծուլ գլխոց նոցա, պատուա-
սիրեցին յայնժամ Լակեդեմոնացիք գի-
սաւոր լինել։ Ալ է սա մի 'ի կարգաց
անտի Լիւկուրգեայ. զորմէ պատմեն՝ ա-
սել, եթէ գէպք քաջավայելուչ ևս յար-
գարեն զգեղանիսն, և ահաւորագոյն՝ զան-
գեղեայսն։

Եւ պատմեն՝ եթէ Արիստոկղիտոս հայր
Լիւսանդրեայ չէր յարքունի տանէ, սա-
կայն զարմ ունէր զԵրակղիդեանց։ Եւ
սնաւ Լիւսանդրոս յաղքատութեան. և
էր նա առաւել քան զամենեսեան աւան-
դապահ հայրենատուր կարգաց և քաջ և
կորովի. և 'ի վերոյ էր նա ամենայն բերկ-
բանաց, բայց յորոց 'ի գեղեցիկ նահատա-
կութեանցն ելցեն բերկրանք և պատուոյ
շուք. քանզի 'ի Սպարտիա չէ՛ ամօթ պա-
տանեացն այն բերկրանք։ Քանզի և կամին
իսկ նոքա մանկանց իւրեանց անգստին յա-
ւաջին տիոցն ունել կիրս զփառաց, զի
ցաւեսցի նոցա պարսաւ և անարգանք, և
խնդասցեն 'ի գովութիւնս և 'ի վեր վա-
զեսցեն քան զանձինս. իսկ որ յայսոսիկ
անզգայացեալ է, առ անարգս ունին նո-
քա զայնպիսին՝ իբրու որ յոյլ ելցէ յա-
ռաքինութիւն անդր և պղերգ։

Ապա անդուլ այն պատուասիրութիւն
Լիւսանդրեայ վերհագոյն այլոց լինել, էր
անգստին 'ի Լակոնացի դաստիարակութէ
անտի նորա. յորում և ո՛չ ստգտանելի
արդեօք ելցէ բոյս բարուց նորա։ Սակայն

թուի թէ առաւել ինն քան զՍպարտա-
կանն բոյս բարուց՝ էր նա սպասարկու ա-
ռանց աւագաց և նկուն 'ի պերճանալ նո-
ցա՝ 'ի շահ օգտի անձինն. յորում և հաս-
տատեն իսկ ոմանք մասն ոչ գուշնաքեայ՝
ճշգրիտ առաքինութեան զքաղաքականին։
Իսկ Արիստոտէլ՝ ուր զաւագս 'ի մարդկա-
նէ մելամաղձոտս ցուցանէ 'ի բոյս բարուցն,
որպէս զՍոկրատէս և զՊղատոն և զՀերա-
կլէս, պատմէ եթէ և ինքնին Լիւսանդրոս՝
թէպէտ և ոչ անդէն՝ սակայն բարգաւա-
ճեալ 'ի տիսն, անկաւ 'ի մելամաղձս։ Իսկ
որ 'ի վերս քան զամենայն հրաշացոյց զնա,
զի քաջաբար տարեալ աղքատութեանն և
երբէք յընչից չպարտեալ և կամ կաշա-
ռեալ՝ հարստութեամբ և հարստասիրու-
թեամբ եղից զհայրենիսն. սակայն և չէտ
հիանալ ընդ ընչեղութիւնն՝ մթերս ամ-
բաւ զոսկւոյ և զարծաթոյ կուտեալ 'ի նա
յետ Ատտիկեան մարտին, և անձին չպա-
հեալ և ոչ դրամակշիռ մի։ Առ այս՝ և
Դիոնեսիոս բռնաւոր առաքեալ առ դըս-
տերս նորա պատմուճանս սիկիլիացիս մե-
ծագնի, չէառ յանձն. ասէր զանգիտել՝
գուցէ 'ի պատմուճանաց անտի անգե-
ղեայք առաւել երևեսցին դստերքն։ Սա-
կայն և յետ սակաւուց ինքն դէսպան գը-
նացեալ յիւրմէ քաղաքէն առ բռնա-
ւորն, և առաքեալ նորա առ Լիւսանդրոս
պատմուճանս կրկին՝ ընտրել զհաճոյն և
տանել առ դուստրն, ետ պատասխանի.
Արդեօք լաւ ևս ընտրեսցէ դուստրն. և ա-

ռեալ զերկոսին ևս միանգամայն՝ մեկնեցաւ 'ի նմանէ։

Իսկ յայնժամ Պեղոպոննիսեան մարտին յերկարաձգեալ, մինչդեռ կարծէր ինն այնպէս՝ յետ հարուածոյն Աթենացւոց 'ի Սիկիլիա՝ անդէն տարամերժեալ նոցա 'ի ծովէն վայրիկ մի ևս խսպառ նկուն լինել, դարձ յայնժամ Աղկիբիադէս ապարեալ յաքսորանացն և 'ի գլուխ կացեալ յաջողեցաւ և զօրացոյց զԱթենացիսն ճակատ ընդդէմ Լակեդեմոնացւոցն յարդարել 'ի նաւամարտի։ Զահի հարեալ նոցա և միւսանգամ դրդեալ 'ի կռիւ՝ որում քաջի զօրավարի պէտք էին և սաստիկ ևս հանդերձանաց, առեալ արձակեցին զԼիւսանդրոս 'ի զօրավարութիւն ծովուն։ Հասեալ նորա յԵփեսոս՝ թէպէտ և բարեկամ իւր գտանէր զքաղաքն և կուսակից Լակեդեմոնացւոցն, սակայն և ողորմ պատահեալ վիճակի. և վայրիկ մի ևս 'ի բարբարոսութիւն կրթեալ ըստ պարսիկ բարոյից՝ կենցաղակից ընդ ազգին գոլով ընդ այնմիկ. քանզի և շուրջանակի սահմանակից է Լիւդիոյ. և բազում անգամ ևս նստոց էր Եփեսոս զօրավարաց արքային՝ ժամանակս բազումս գեղերեալ 'ի նմա։ Բայց Լիւսանդրոս բանակ հարեալ անգանոր, ետ հրաման անդր գալ 'ի կողմանց կողմանց վաճառաշահ նաւուց. և նաւակայս ևս հաստատեալ 'ի նմա վասն եռաթիւոցն, առնոյր ժողովէր 'ի նաւահանգիստս նորա զվաճառականսն և յորդեաց

ելից զհրապարակ նորա ձեռակերտ ճար-
տարութեամբք, և զտունս և զարուեստս
ամենայն 'ի շահ օգտից. զի և յայնց ժա-
մանակաց հետէ այն քաղաք 'ի ձեռն Լիւ-
սանդրեայ հանդերձեցաւ 'ի նոյն մեծու-
թիւն հրաշակերտութեան՝ յորում այսօր
տեսանեմք զնա:

Ապա լուր առեալ՝ եթէ Կիւրոս որդի
արքայի եկեալ է 'ի Սարդի, ջղքաւ առ նա
և ամբաստան լինէր զՏիսափերնեայ. զի
հրաման առեալ օգնել Լակեդեմոնացւոց
և վանել զԱթենացիսն 'ի ծովէ, յուլա-
ցաւ 'ի գործն և դանդաղանօք գնաց ընդ
Աղկիբիադեայ. և զեան ևս ած 'ի վերայ
նաւահանդիսին՝ պաշար դոյզն պատրաստե-
լով նմա: Էր իսկ Կիւրոս ինքնին հեշտա-
լուր յամբաստանութիւնս Տիսափերնեայ,
զի այր չար էր նա, և դժկամակս բերէր
ընդ նմա Կիւրոս: Արդ 'ի պատճառաց աս-
ոի և յիւրոց հրապուրիչն յինքն զոգի պա-
տանւոյն յանկուցեալ Լիւսանդրոս և 'ի
սպասարկու քաղաքավարութենէն, և ևս
քաջալերէր զնա 'ի մարտն: Իսկ 'ի մեկնել
'ի նմանէ, կոչէր զնա Կիւրոս 'ի սեղան
իւր, և աղաչէր մի զանց առնել զսիրոյն,
այլ ազատօրէն խնդրել զոր կամի, և հա-
ւատարմացուցանէր առնուլ. ետ պատաս-
խանի Լիւսանդրոս. "Եւ քանզի մտեր-
մութիւն զայդ 'ի դէմս բերես ո՞վ Կիւրոս,
աղաչեմ զի նաքարակիտ մի յաւելցես 'ի
ռոճիկ նաւաստեացն. զի կալցեն դոքա
նաքարակիտս չորս փոխանակ երից": Խըն-

գացեալ Կիւրոս 'ի պատուասիրութիւն առն, տայր նմա բիւր մի Դարեհից. յորոց նա բաշխեալ նաւաստեաց նաքարակիտ մի աւելի, վայրիկ մի ևս այնուիկ թափուր կացուցանէր նա զնաւս թշնամեաց. քանզի բազումք 'ի խուժանէ նաւացն եղեալ դը-նային՝ առ որս աւելի տային զվարձն. և որք անդէն մնային մեծապէս դժգոհեալք և խռովայոյզք՝ զօրհանապազ վիշտս 'ի վերայ ածէին զօրավարացն: Թէպէտ և այս-պէս ցանեաց ցրուեաց զթշնամին և ինքս հասոյց նոցա, ոչինչ համարձակեցաւ 'ի վէգ գալ առ ահին Աղկիբիադեայ. զի ձեռներէց հզօր էր նա և քաջ, և նաւք բազումք ևս էին նորա. և ցայնվայր յամե-նայն 'ի մարտս անպարտելի եկաց նա 'ի ծովու և 'ի ցամաքի:

Իսկ իբրև Աղկիբիադէս 'ի Սամոսէ ան-ցեալ 'ի Փոկէա և զբանակին հոգ 'ի ձեռս տայր Անտիոքեայ զեկավարին, սա ոտըն-հար եղեալ Լիւսանդրեայ, և նահատա-կեալ եռաթիւովք երկու մինչև 'ի նաւա-հանգիստ անդր Եփեսացւոց, անցանէր լրբութեամբ՝ 'ի քրքիջ և յաղաղակ քե-րեալ առ նաւուքն որ անդ խարսխեալ կային: Սրտմտեալ Լիւսանդրեայ՝ յառաջ վարեալ նախ սակաւս յիւրոց նաւացն ըզ-հետ սնդեցաւ նորա. իբրև Անտիոքոս օգ-նութիւն յիւրոցն գտանէր, խաղացոյց և ինքն այլ ևս նաւս ընդդէմ նորա. և 'ի կռիւ եղեալք՝ յաղթական լինէր Լիւսան-դրոս, և հասեալ կալեալ եռաթիս հնգե-

տասան՝ նշան յաղթութեան կանգնէր 'ի ժամանակին։

Իբրև այս եղև, զչարեալ ժողովուրդք Աթենացւոց՝ առնուին զզօրավարութիւնն Աղկիբիադեայ. և նա արհամարհ պտեալ առ զօրականին որ 'ի Սամոս և թշնամանեալ, խոյս տուեալ նաւէր 'ի Քերրոնիսոն։ Արդ այս կուիւ թէպէտ և ոչինչ մեծ, սակայն զհամբաւի հարաւ առ 'ի բախտէն վասն Աղկիբիադեայ։ Իսկ Լիւսանդրոս 'ի քաղաքաց քաղաքաց կոչեալ յԵփեսոս՝ որ միանգամ 'ի ռամկին արք արիականք և խորհրդականք և հանճարեղք, սերմանէր 'ի նոսա 'ի ծածուկ զսկզբունս զտասանպետութեանն և զնորութեանցն՝ զոր ապա ինքն հաստատեաց, յորդորեալ զնոսա խմբել ընկերութիւնս իմն և խորհել 'ի ձեռնարկս դործոց. Իբրու եթէ նկուն զԱթենացիսն արարեալ՝ ազատք այնուհետև լինիցին նոքա 'ի հպատակելոյ ռամկին և տիրասցին հայրենեաց։ և ամենայն բանից նորա այր այր անդ հաւատս ընծայէր յարդեանց անտի նորա։ Քանզի առեալ 'ի վեր բարձրացուցանէր զբարեկամն և ըզհիւրսն և բաշխէր նոցա պատիւս և բարձս և զօրավարութիւնս. և ինքնին դարձեալ ընդ նոսա յանցաւոր և զանձն 'ի նեղքս խառնէր 'ի խակութիւնն՝ որ 'ի բարդաւաճութիւն նոցա. և այնպէս առհասարակ յանկուցեալք սիրէին զնա և զօրավիգն էին, ակն կալեալ մեծամեծս 'ի դլուխս տանել ընդ ձեռամբ նորա։

Ոյր աղադաւ և անդատին իսկ դժգրմ-
նեաալ էին նոքա ընդ գալուստ Կալլիկրա-
տիդեայ փոխանակ Լիւսանդրոսին 'ի զ-
բաւարութիւն ծովուն. և ոչ դարձեալ՝
յորժամ և զիորձ առին զառնն իբրև ըզ-
լաւագունի և զարդարոյ առաւել քան
զամենայն մարդ, սիրեցին ինչ նոքա զա-
ռաջնորդութիւն նորա զպարզ և զԴո-
րեան և զանկեղծ. սակայն և հիացեալ
սքանչանային ընդ առաքինութիւն առն,
իբրու ընդ գեղ արձանի դրոշմելոյ 'ի տիպ
գիւցազին. իսկ ըղձակաթք էին մտերմու-
թեան սիրոյն Լիւսանդրեայ առ բարե-
կամն, և խնդրէին զշահ օգտին ընդ ձե-
ռամբ նորա. որպէս զի և 'ի մտանել նորա
'ի նաւ՝ սրտաբեկ սրտառուչ յարտասուս
ցնդեցան. բայց և ինքն գուն գործէր ևս
քան զևս 'ի բաց 'ի Կալլիկրատիդեայ սար-
տուցանել զնոսա. առ այս՝ և 'ի դրամոց
անտի Կիւրոսին վասն նաւատեացն՝ ան-
դրէն զմնացորդն դարձուցանէր 'ի Սարդի.
և ասէր՝ զի թէ Կալլիկրատիդեայ հաճոյ
լիցէ՝ անդր առաքեսցէ 'ի խնդրել, և ինքնին
հնարեսցի շահել զշրջականն։

Իսկ յուղի անկանել անդ իւրում վը-
կայութիւն դնէր առաջի Կալլիկրատի-
դեայ, բանակ մի աւադիկ 'ի նորա ձեռս
աւանդել՝ որ տիրացեալ իսկ է ծովուն։
Իսկ Կալլիկրատիդէս ընդ վայր հարեալ
զկրոխտապանծ զբանն, էտ պատասխա-
նի. "Եւ առ ի՞նչ դու ոչ թողեալ զՍա-
մոս 'ի ձախակողմն, և շուրջ նաւեալ 'ի

Մլղետոս, անդանօր յիմ ձեռս աւանդէս զեռաթիսդ. քանզի չէք մեր արդեօք էր. կիւղ 'ի թշնամեացն որ անդ 'ի Սամոս՝ 'ի քերել մեր առ նոքօք, եթէ արդարև ծովուն տիրացեալ իցեմք"։ Առ այս պատասխանի տուեալ Լիւսանդրոս, եթէ զօրավարութիւն նաւացն ոչ ևս է յիւր ձեռս՝ այլ 'ի Նորայն, ասաց և նաւեաց 'ի Պեղոպոննիսոս. և եթող անդ զԿալլիկրատիդէս 'ի մեծ յանձկութիւն և 'ի վարանս. զի և չէր իսկ Նորա դրամ բերեալ 'ի տանէ, և ոչ դարձեալ հանդարտէր 'ի քաղաքաց անտի պահանջել դրամս, քանզի վըշտահարս և անկածս տեսանէր զնոսա։

Ապա յանհնարս մտեալ՝ երթեալ դեգերէր և նա առ դրունս և թախանձ արկանէր զօրավարաց արքային Լիւսանդրոս, սակայն և չէր ինչ նա անդատին 'ի բնութենէն յաջողեալ 'ի նոյն. իբրու որ պարզ վիճակեալ բարոյից և լի՛ աղնուական և աւագամեծար խորհրդովք, և հաստատեալ ևս էր՝ եթէ Հելլենացւոց հարուածք առ 'ի Հելլենացւոց՝ արդեօք վայելուչ ևս իցեն քան զսպասարկու կիրս ողոքանաց 'ի դրունս խժդժիցն. որ թէպէտ և ընչիւք յօրացեալք, չունին նոքա ինչ մի 'ի բարեաց։ Այլ սակայն և նեղեալ 'ի չքաւորութենէն չոքաւ 'ի Լիւդիա. անդէն դէմ եդեալ 'ի տուն Կիւրոսի, ասէր առ դռնապանն ազդ առնել արքային, զի Կալլիկրատիդէս զօրավար նաւացն Հելլենաց եկեալ է խօսել ընդ նմա։ Եւ պա-

տասխանի մի ոմն 'ի նոցանէ, եթէ "Ամ չէք՝ ով հիւրդ՝ այժմ պարապումն Կիւրոսի. քանզի 'ի գինեերբուս կայ": Իսկ Կալլիկրադիտէս պարզ մտօք ասէր այսպէս. "Ամ չէք ինաս 'ի բանիդ. կացից ես ասա տպառեալ նմա մինչև արբցէ": 'Ի բանից անտի թուեալ իմն նա այր շինական և անհրահանգ, յընչաց զնա քերեցին բարբարոսքն. և նա տեղի տուեալ մեկնեցաւ:

Ապա երկրորդ անգամ գնացեալ անդր, և ոչ յայնժամ մուծեալ 'ի նեղքս, ցասուցեալ դարձաւ Յեփեսոս և նզովս բազում արձակէր ընդդէմ առաջնոցն, որք նկունք 'ի նախատինս բարբարոսացն՝ ոտնհարս և բարձրայօնս ուսուցին զնոսա ընչաւէտութեամբն. և երդումն կուէր՝ որոց մերձն կային, զի առաջին 'ի հատանել իւրում 'ի Սպարտիա՝ զամենայն հնարս հնարեսցի հաշտեցուցանել ընդ միմեանս զՀելլենացիս, և ահագինս ընդդէմ բարբարոսացն յարդարել զնոսա. զի դադարեսցին նոքա խնդրել զօգնութիւն նոցա ընդդէմ իւրեանց իսկ անձանց: Ամ Կալլիկրադիտէս՝ որ միտս այսպէս յանձին բերէր արդարև արժանի Լակեդեմոնիոյ, և որ յարդարութեան մասին և 'ի մեծանձնութեան և 'ի քաջութեան մրցէր ընդ հոյակապիցն և ընդ աւագացն Հելլենացւոց, յետ սակաւուց 'ի պարտութիւն մատնեալ 'ի Նաւամարտին Յարգիննուսաս, անդ անկանէր մեռեալ:

Իսկ յետ այնորիկ երբեմն 'ի վատթարն

նկրտէին իբք, դէսպանս արձակեալ նիզա-
կակիցք 'ի Սպարտիա խնդրէին զօրավար
զԼիւսանդրոս, և վկայութիւն դնէին ընդ
նորա ձեռամբն արիագոյնս և մտադիւրա-
գոյնս նահատակել. զնոյն և Կիւրոս առա-
քեաց և խնդրէր։ Ասէ քանզի յօրինացն
արդեալեալ էր՝ զիշխանութիւն զայն մի
տալ երկիցս նմին առն, և կամեցեալ ևս
Սպարտացւոցն հաճել զնիզակակիցսն, զա-
նուն զօրավարի տային յայնժամ Արակո-
սի ումեմն, և արձակեցին անդր և զԼիւ-
սանդրոս 'ի վերին երեսս իբրև փոխանակ
զօրավարի, այլ 'ի ներքոյ լի և պատարուն
զամենայն իշխանութիւն եւոուն նմա։ Ոյր
և գալստեանն 'ի վաղնջուց իսկ անձկա-
ցեալ էին բազումք 'ի քաղաքական որե-
ցոյն և յաւագացն, ակնկալեալ 'ի նորա
ձեռն զօրաւոր ևս տապալել զտէրութիւն
ռամկին. այլ որոց միանգամ սիրելի էր
հրամանատարութիւն առաջնորդաց պարզ
և անկեղծաւոր և մեծանձնեայ, նոցուն
Լիւսանդրոս առԿալլիկրատիտեաւ թուէր
նենգամիտ այր և խաբուսիկ. որ և շատ
ինչ 'ի մարտին մղցանս՝ գունեալ գաւով 'ի
դլուխս տանէր, և զերաւացին՝ 'ի պատճառս
օգտին մեծացուցանէր. քանզի 'ի պիտա-
նին և եթ ակնկառոյց էր՝ իբրև 'ի գեղե-
ցիկն և 'ի լաւն, և հաստատեալ ևս էր՝ ե-
թէ ճշմարտութիւնն ըստ բնութեան ոչ
ինչ լաւագոյն քան զստութիւնն ի՞նչ. այլ
զյարդ զերկաքանչիւրոցն առեալ սահմա-
նէր առ 'ի մեծաշահ օգտից նոցա. և որք

միանգամ զդաւադիր մարան դժպատեհս ասէին զարմին Հերակլեայ, նա ծիծաղեալ ասէր. «Քանզի ուր առիւծենին չհասանէ, անդ պարտ է զաղուէսենին կարել»։

Եւ պատմեն՝ եթէ և 'ի Միլետոս օրինակ զայն վարեցաւ. քանզի իբրև 'ի կարծեացն զառածեալ բարեկամք նորա և հիւրք՝ որոց միանգամ ինքն խոստացեալ իսկ էր զօրավիդն լինել 'ի նուաճութիւն ռամկին և 'ի վանել զթշնամին, եկեալ նոքա հաշտեցան ընդ նոսա, նա ինքն 'ի վերին երեսս՝ հաճ և հաւան բանին ցուցանէր զանձն և զօրավիդն հաշտութեանն, այլ 'ի ծածուկ անդոմնէր զնոսա և թշնամանէր և դրդէր ևս յառնել ընդդէմ ռամկին. այլ ապա լուր առեալ ամբոխից շփոթից՝ ինքնին վաղվաղակի մտեալ 'ի քաղաք անդր՝ խիստ և ապառում կշտամբէր զնորակրօն նորասէր մարդիկն, և սաստիկ ևս սպառնայր պատուհաս. և զհակառակ կողմին քաջալերէր կալ յանդորրու և մի ինչ զանդիտել 'ի մերձ կալ նորա։

Զայս օրինակ կեղծաւորեալ պատրուակ 'ի վերայ ածէր. քանզի կամէր եթէ կուսակիցք ռամկին և ճոխքն 'ի նոսա մի փախիցեն, այլ 'ի քաղաքին մնացեալք 'ի մահ վարեսցին, որպէս և եղև իսկ. քանզի անդ առհասարակ խողխողեցան՝ որ միանգամ հաւատս ընծայեցին նմա։ Ա՛ռ այս և Անդրոկղիդէս աւանդէ մեզ զբան մի զԼիւսանդրեայ. յորմէ և քաջայայտ իսկ՝ զի հեշտին զեղծանէր նա երդմամբքն. քան-

զի խրատէր (որպէս ասէն) զմանկունս 'ի վէ-
գախաղսն խաբէլ, և յերդմունս՝ զմարդիկ-
նմանեալ 'ի բանին՝ Պողիւկրատեայ Սամո-
սացւոյ, սակայն յոյժ դժպատեհս՝ ինքն զո-
բաւար՝ զնմանութիւն բերէր զբռնաւորին։
Առ այս՝ և ոչ Լակոնացւոյ առն է գնալ
այնպէս ընդ աստուածոցն՝ որպէս ընդ
թշնամեացն, նա առաւէլ ևս թշնամանօք.
քանզի մարդ որ միջնորդաւ երդմանն խա-
բէ և պատրէ, յայտ առնէ եթէ երկնչի
ուրեմն 'ի թշնամւոյն, իսկ յաստուծոյ
ոչ, այլ և արհամարհէ ևս։

Արդ Կիւրոս առ ինքն զԼիւսանդրոս
կոչեալ 'ի Սարդի, շատ ինչ տայր նմա և
շատ ևս խոստանայր. և երիտասարդական
աշխուժիւք մտերմութիւն 'ի նեղքս բերէր
նմա. և վստահ ևս առնէր՝ 'ի զլանալ նմա
հօրն՝ ինքն յիւրմէ տանէն մատուցանել
նմա. և ասէր ևս՝ եթէ 'ի նուազել ամե-
նայնին, տալ ձուլել գլխովին և զիւր գահն
զոսկւոյ և զարծաթոյ՝ յորում բազմեալ
իրաւաբանէր։ Իսկ 'ի մեկնել Կիւրոսի գը-
նալ առ հայրն 'ի Մարս, իշխանութիւն
տայր Լիւսանդրեայ հանել հարկս 'ի քա-
ղաքաց, և բնաւ իսկ 'ի նա զտէրութիւն
իւր ապաստան առնէր. ապա ողջագու-
րեալ զնա՝ աղաչէր մի 'ի նաւամարտ մխիլ
ընդ Աթենացւոց մինչև 'ի դարձ նորա. և
ասէր՝ դարձ առնել անդրէն բազում նա-
ւուք 'ի Փիւնիկոյ և 'ի Կիլիկիոյ, և անկա-
նէր յուղի։

Իսկ Լիւսանդրոս ոչինչ ձեռնհաս 'ի

նաւամարտն զուգաթիւ գումարտակօքն, դարձեալ և ոչ անգործ կամեցեալ նստել այնչափ նաւուքն՝ յառաջ վարեալ տիրէր 'ի վերայ ինչ Կղզեաց. յաւարի առնոյր զԵգինա և զԱղամինէ. ապա ելջեալ յԱտ-տիկէ և անդ ողջունեալ զԱգիս (քանզի էին էջ սա առ նա 'ի Տեկեղեայ յանդիման ցուցանել բանակի ցամաքին՝ որ անդ մերձ կայր՝ զծովականն. իբրու որ 'ի վերայ ծովուն տիրացեալ ելցէ առաւել քան ըզ-խորհուրդ կամացն). ապա խուճապեալ ընդ կղզիս տեղի տայր յԱսիա յԱթենացւոցն՝ որ հետամուտն էին նորա. և անպա-հապան ամայի զՀելլեսպոնտոս գտեալ, խաղաց գիմեաց 'ի վերայ Լամպսակեցւոց. կռուէր 'ի ծովէն, միանգամայն և տայր թովրակեայ անդուստ վանել հարկանել զպատուարս պարսպացն 'ի ցամաքէն. և բռնութեամբ կալեալ զքաղաքն, տայր զնա յաւար զօրականին:

Իակ Աթենացւոց նաւատորմիղ հարիւր և ութսուն եռաթիւոց այն ինչ հասեալ յեղէուն Քերսոնէսեան, լուր առեալ զառմանն Լամպսակեայ՝ անցեալ վաղվա-ղակի 'ի Սեստոս և ժողովեալ պաշար, քե-րեալ առ ափամբ խաղային մինչև յԵգոս գետ 'ի հանդիպոյ Թշնամեացն՝ որ դեռևս նաւակայեալ ճնային առ Լամպսակեաւ: Եւ անդ բաղում էին զօրավարք Աթե-նացւոց. էր 'ի նոսա և Փիլոկղէս, այն որ երբեմն հաւանեցոյց զժողովուրդն տալ վճիռ կտրել զաջ բութն զգերեալն պա-

տերազմի, զի մի ևս յաջողեսցին նոքա 'ի տէգընկէցս, և միայն Թիավարեսցեն։ Արդ յայնժամ առհասարակ 'ի հանգիստ փոխեցան նոքա, ակնկալեալք նաւամարտին յաւուրն երկրորդի։ Այլ Լիւսանդրոս այլազգադոյնս խորհեալ, եւ հրաման նաւաստեացն և զեկավարացն կազմ և անշըշունչ կալ մնալ յեռաթիսն հրամանին նորա, իբրու որք անշուշտ վաղ քաջ ընդ առաւօտն խառնեալ 'ի մարտ. զնոյն պատուէր հրամանի տայր և ցամաքին զօրաց լուռ արձանանալ՝ կալ 'ի կարգին առ ծովափամբն։

Ապա ընդ արևածայրսն յառաջ զամենայն զնաւսն վարեալ Աթենացիք արձակ Ճակատու՝ և ասպարէզ 'ի կռիւ կարգացեալ, անդուստ Լիւսանդրոս Թէպէտ և զառաջակողմանսն նաւաց դարձուցեալ իսկ էր ընդդէմ նոցա և կազմուԹի տուեալ նաւացն անդատին 'ի գիշերոյն, սակայն և ոչինչ խաղայր յառաջ. նա և մակոյկս ևս առեալ արձակէր առ յառաջապահեստսն՝ հրաման տայր անշարժ 'ի կարգին մնալ և մի ինչ գիմադրաւիլ։ Ապա ընդ երեկս աւուրն վերջոտնեալ Աթենացւոց, ոչինչ և այնպէս զզօրականն արձակէր Լիւսանդրոս 'ի նաւացն. մինչև երկու և երեք 'ի նաւակացն առաքելոց 'ի լրտես Թշնամեացն՝ դարձեալ այսրէն զրոյց բերեալ հաւաստի եԹէ 'ի ծովեզրն իջին Թշնամիք։ Իսկ յաւուրն երկրորդի և երրորդի և 'ի չորրորդի դարձեալ՝ նոյն իրք այնպէս պատահէին.

մինչև կարի իմն խրախուսեալ Աթենացւոց՝ արհամարհել զԹշնամեաքն, իբրու որք առ ահին այնպէս տեղի տուեալ խուռն և ամփոփ զմիմեանսք կայցեն։

Բայց յայնժամ Աղկիբիադէս՝ որ ընդ զօրականին իւրում կայր 'ի Քերրոնիսոն, եկն ձիաւորեալ 'ի բանակ անդր և մեղադիր լինէր զօրավարացն Աթենացւոց, զի չարեաւ նոքա և վտանգաւ այնպէս բանակ հարեալ կան յափունս դժուարամատոյցս և բացօթեայս. և զի՝ և մեծապէս վնասակ գործեցին նոքա 'ի բացեայ գնալով 'ի Սեստեայ, ուստի էր ընուլ նոցա զպէտս իւրեանց. և ասէր ևս՝ ճեպով 'ի նաւահանգիստ անդր և 'ի Սեստոս քերել նոցա, և 'ի բացեայ կալ 'ի Թշնամեացն՝ որ պատրաստեալ կան անկանել 'ի վերայ նոցա զօրավարեալ 'ի միապետ զօրավարէ, և որ Ճշդրտագոյնս դոքա զամենայնն 'ի գլուխ տարցեն անվրէպ 'ի տալ նշանի։ Սակայն ոչ լուան նոքա բանիցն նորա. և անդ Տիւդևս Թշնամանօք ևս առնէր պատասխանի, եթէ արդ այլք ոմանք զօրավարեն բանակին, և ոչ Աղկիբիադէս։ Ապա խիթացեալ Աղկիբիադէս ընդ մատնութիւն ինչ առ 'ի նոցանէ, մեկնեցաւ 'ի բաց։

Իսկ յաւուրն հինգերորդի յառաջ խաղացեալ Աթենացւոց և անդրէն վերջոտնեալք ըստ ովորութեանն, և անփոյթք ամենևին արհամարհեալ զԼակեդեմոնացւովքն, անդ Լիսանդրոս արձակէր զհետ նոցա զնաւսկան՝ պատուէր տուեալ նա-

սապետացն արագ արագ դառնալ յետս՝ լրտեսեալ զէջս Ա-թենացւոց 'ի ցամաք անդր, և 'ի հասարակ ուղւոյն ամբառնալ նշան յառաջակոչմանէն վահան պղնձի՝ զի յառաջ ինքն զնաւատորմիղն վարեսցէ. ետ զպատուէրն, և ինքն ընթացեալ նաւաւն յայսկոյս յայնկոյս ձեռքէր զղեկավարսն և զնաւապետ իշխանսն, կազմ ունել զամենայնն 'ի գեղեցիկ կարգին, և 'ի տալ նշանին՝ կամակարուութեամբ յարձակել ընդդէմ թշնամեացն։ Իբրև 'ի նաւակաց անտի ամբարձաւ վահանն, Լիւսանդրոս յաւագ նաւէն նշան տուեալ 'ի ձայն փողոյ, յառաջ ամենայն նաւքն խաղային. միանգամայն և անդուստ 'ի ցամաքէն զօրականք յարձակեցան 'ի ծովափն 'ի հրրուանդան անդր։ Իսկ անդանօր անջրպետ երկուց ցամաքացն է հնդեատասան ասպարիսաց. և անդէն փոյթ ընդ փոյթ 'ի ժիրաժիր քաջութեան թիավարացն հատեալ անցանէին զվայրն։ Բայց Կոնոնէն զօրավար Ա-թենացւոց առաջին յափանց անտի տեսեալ զյարձակումն նաւաց՝ խուճապեցաւ. ձայն բարձեալ աղաղակէր առ իւրսն ամբառնալ յեռաթիսն. և մեծապէս տագնապեալ այրն 'ի մօտալուտ չարեացն, ըզկէսս գոչէր կարդայր, և զկէսս ողոքէր, և զկէսս դարձեալ բուռն և սաստիկ ստիպէր եկանել 'ի նաւսն, սակայն և անուավաստակ. քանզի առհասարակ նոքա այսր անդր ցանեալ ցրուեալք 'ի ցամաքին՝ իբրու ոչք ակն ինչ չունէին հրոսակին այնմիկ, սփռե-

ցան գեղերել ընդ հրապարակս, և թափառել ընդ գաւառն, և հանդչել 'ի վերանս, և պատրաստել ճաշս. և բնաւ իսկ յանհմտութենէ անսի զօրավարացն ոչ պատրաստեցան նոքա՝ որ յառաջոյ։

Եւ այնպէս 'ի վերայ անկեալ նոցա Լակեդեմոնացւոցն ձայնիւ մեծաւ և սաստիկ թափով, անդանօր Կոնոնն մազապուր ճողոպրեր հանդերձ ութ նաւուք փախչոտեայ 'ի Կիպրոս առ Եւագորաս։ Իսկ Պեղոպոննիսացիք 'ի վերայ անկեալ այլոց նաւաց, հասեալ կալան զամայիսն, և հարեալ ջաղխէին՝ յորս միանգամ ամբառնալ ճգնէին Աթենացիք. և գիտապաստ առ նաւուքն անկանէին զօրականք՝ որք անզէնք և անկարգ ամբոխիւ գիմեցին յօգնութիւն նոցա. իսկ փախստեայքն ընդ ցամաք տապաստ անկան 'ի թշնամեացն՝ որ ելին 'ի ծովեզրն։ Ապա Լիւսանդրոս 'ի գերութիւն վարեալ ոգիս երիս հազար հանդերձ զօրավարօքն, կալաւ միանգամայն զամենայն զնաւսն՝ բայց 'ի նաւէն առնուն Պարալոս և բայց յորոց փախեան ընդ Կոնոնի։ Եւ յաւարի զբանակն հարեալ և զհետ իւր աղխաղխեալ զնաւսն՝ այնպէս դարձ առնէ 'ի Լամպսակոն 'ի ձայն սընդի և յերգս յաղթական նուագաց. և այնպէս հեշտին 'ի գլուխս տարեալ նահատակութիւն մեծ, և 'ի մի ժամ ժողովեալ զերկայնադոյն ժամանակն և զբազմադիմակ և 'ի վեր քան զմիտս լի արկածիւք յառաջինն, և ապա յետ բիւրուց փոփոխու-

թեանց մարտկացն և մարտիցն և յետ ան-
կանելոյ զօրավարաց բազմաց՝ որչափ ինչ
ոչ անկան յառաջին 'ի մարտան Ելլադայ,
ապա 'ի գլուխ ելանէր 'ի գեղեցիկ հրմտու-
թենէ միոյ առն. ոյր աղագաւ և կէսք աս-
տուածեան իմն կարծեցին զերացն պատա-
հումն։ Էին էին և ոչք ասէին՝ 'ի խաղալ
անդ Լիւսանդրեայ 'ի նաւահանգստէն,
Դիոսկուրեայցն յայնժամ փայլատակեալ
երևեալ իւրեանց աստեղքն աստի և անտի
նաւուն նորա առ ղեկօքն։ Եւ կէսք դար-
ձեալ՝ որ ասեն եթէ և վէմն ինքնին վայր
անկեալ յայնժամ՝ նշանակ լեալ ելցէ հա-
ղորդածոյն այնմիկ։ Քանզի վայրանկեալ
հոսեցաւ յայնժամ (որպէս բազմաց կար-
ծիք եղեն) յերկնից անտի վէմ ահագին
'ի յԵգոս գետ. զոր և ցայսօր ցուցանեն
Քերրոնիսացիք, զոր և պատուէն նոքա։

Բայց պատմեն՝ նախապատում լինել
Անաքսագորասայ, եթէ 'ի մարմնոց անտի
առկայացելոց յերկինս՝ հատոր մի 'ի վայր
հոսել հանդերձեալ ելցէ 'ի ցնցմանէ ի-
մեմնէ կամ 'ի ծփանաց. քանզի և ասէր
իսկ Անաքսագորաս՝ եթէ յաստեղաց անտի
և ոչ մին չէ այժմ 'ի կայանին՝ յորում
յառաջագոյն հաստեցաւ. և թէ՝ հաստե-
ցան նոքա 'ի քարեղէն նիւթոյ և 'ի թանձր.
և զի՝ փայլատակեն նոքա 'ի ցոլացմանէ
անտի և 'ի բեկմանէ եթերին. և զի՝ բռնա-
բար նոքա ձգեալ արգելան անդ 'ի բար-
ձունս յուժգին թափոյ պտուտիցն. ըստ
որում և 'ի սկզբան անդ արգելան նոքա

վայրանկանեալ, յորժամ նիւթք ցրտինք և ծանունք զատան 'ի բոլորէն։ Այլ հաւանական ևս քան զայդ ի՞նչ արդեօք կարծելն ոմանց, եթէ աստեղքդ պարայածեալք՝ չեն ինչ հետք և քերածք եթերական հրոյն, որ յօդագ այն ինչ վառեալ և շիջանիցի. և ոչ դարձեալ բորբոքումն ինչ օդոցդ՝ որ առ զերման նիւթոցդ ցայտեսցէ և սլասցի 'ի վերին գաւառն. այլ են նոքա հոսումն և անկումն երկնաւոր մարմնոցն, որք իբրև 'ի մեղկելոյ ուժոյ պտուտիցն՝ 'ի ցնցմանէ իմեմնէ 'ի վայր հոսեն ոչ միշտ 'ի շէն երկիր, այլ բաղում անգամ արտաքոյ նորա 'ի լայնածաւալ ծովդ. ուստի և անծանօթ մնան մեզ։ Բայց Անաքսագորայ վկայէ և Դամակոս, որ յիւրում մատենին յաղագս Բարեպաշտութեան՝ պատմէ, եթէ մինչև վայրանկեալ վիմին այնորիկ՝ երևէր յերկինս անդուլ զաւուրս եօթանասուն և հինգ հրեղէն մարմին ահագին՝ իբրու ամբ բոցատիպ՝ ոչինչ եռեղակալ, այլ այր անդր գնայուն յեալ և էջս իմն ընդհատ բուռն շարժմանց. զի և մասունք հրատիպք նիւթոյն որ 'ի ծփանաց անտի և յանկարգ դարձագարձից հերձատէր, 'ի կողմանս կողմանս յածեալք թափառէին փայլատակեալք՝ իբրև գահավիժեալ աստեղքդ։ Իսկ իբրև այն մարմին 'ի վայր հոսէր, և 'ի տեղի տալ երկիւղի սքանչելեացն՝ յայն վայր դիմեցին գաւառացիքն, ոչ ինչ անդ գտանէին հուր, և ոչ հետս ինչ զմեծի բոցոյն այնո-

րիկ, այլ տեսին անդանօր վայրանկեալ վէմ ահագին, սակայն և ոչինչ ամենևին համեմատեալ մեծութեան հրատիպ պարունակին։

Այլ անշուշտ Դամակոսին աստանօր բարեմոյն և ներողամիտ ունկնդրաց պէտք իցեն։ Ապա եթէ ճշմարիտ իցէ պատմութիւնդ, իբրև սուտք ապա նշաւակեսցին նոքա՝ որ հաստատեն եթէ 'ի բարձանց ինչ լերանց կորղեալ վէմդ այդ՝ 'ի բռնութենէ հողմոց և մրրկաց նախ 'ի վեր առեալ փոթորկեալ յօդսդ, և ապա թողացեալ թափոյն՝ վայրանկեալ հոսէր. զի այդպէս՝ օ՞ն և օն ուրեմն երևեալն յայնժամ զաւուրս բազումս չիցէ հուր ճշմարիտ. և 'ի շինչնեալ և յանհետանալն՝ ոչինչ յուզեալ իցեն օդքդ, և բուռն հողմով և մրրկաւ աստ 'ի խոնարհ ձգեալ զվէմդ։ Սակայն և զնոութիւն բանիդ՝ այլուամ մատենագրութեան թողլի է։

Իսկ իբրև դատակնիք մահու երից հազարաց գերեալոյն Աթենացւոց գայր 'ի ժողովոյն, Լիւսանդրոս կոչեալ զառաջեաւ զՓիլոկղէս զօրավար Աթենացւոց, հարցանէր՝ յի՞նչ պատուհաս դատապարտելնմա անձամբ զանձն՝ զի խորհուրդ ետ նա իւրոց քաղաքացեացն զնոյն դատակնիք ընդդէմ այլոցն Հելլենացւոց. իսկ Փիլոկղէս ոչինչ սրտաբեկ յառաջիկայ կիրան, ետ պատասխանի. Մի՛ ամբաստան լինել զբանցն՝ որոց չի՛ք դատաւոր 'ի միջի. այլ թէ գոլով նա յաղթական՝ կատարեսցէ զոր

միանգամ կրեալ հանդերձեալ էր՝ 'ի յաղ-
թիլ իւրում։ Ապաց, և լուացեալ և ար-
կեալ զանձամբ քղամիդ շքեղ, այնպէս
գնայր յառաջոյ իւրոց Աթենացւոցն 'ի
տեղի պատուհասին, որպէս պատմէ Թէո-
փրաստոս։

Յետ այնորիկ նաւեալ Լիւսանդրոս 'ի
քաղաքս, հրաման տայր որոց միանգամ
պատահէր յԱթենացւոց անսի, տեղի
տալ և գնալ յԱթէնս. իբրու ոչ ներել՝
արտաքոյ գտեալ զնոսա։ Այսպէս առհա-
սարակ վարէր 'ի քաղաք անդր. խնդրէր
սովալլուկ տառապանս արագ արագ ածել
'ի վերայ քաղաքին. զի մի յամբարան յու-
սացեալք՝ հանդարտեսցեն պաշարմանն, և
մինչև անձնատուրք լեալ՝ աշխատուԹիւն
հասուցեն։ Ապա զռամկապետուԹիւն 'ի
միջոյ բարձեալ և զայլ ևս վարչուԹիւնս
զքաղաքաց, Թողոյր յամենայն 'ի քա-
ղաքն քաղաքապետ մի Լակեդեմոնացի և
և տասն ևս իշխանս այրընտիր յընկերու-
Թեանցն՝ զոր 'ի նոսա հաստատեալ էր. և
զայս գործեալ նորա 'ի Թշնամեացն քա-
ղաքս և 'ի դաշնաւորացն, տակաւ յառաջ
վարէր՝ իբրև տիրանալ ողջոյն Եղլադայ։
Քանզի ոչ ըստ կամաց աւագորերոյն և ճո-
խիցն կարգէր նա զիշխանսն, այլ ըստ կամի
նոցուն ընկերուԹեանցն և հիւրոցն իւրոց,
ապաստան 'ի նոսա առնելով զհոգս իրացն
և իշխանուԹիւն նոցա տալով բարձից և
պատուհասից։ Ապա և ինքն խառն 'ի սպա-
նուԹիւնս բազում և գործակից 'ի վանել

զԹշնամիս բարեկամացն, տայր Հելլենացւոց ճաշակս ճաշակել զդժոխի խշխանութեանն Լակեդեմոնացւոց։ Եւ Թուի թէ Թէոպոմպոս Կատակերգակ անհանձարաբար նմանեցուցանէ զԼակեդեմոնացիս վանատուր կանանցն, զի յետ ճաշակս տալոյ Հելլենացւոց զհամեղաճաշակ ըմպելոյն զաղատութեանն, ապա քացախս մատուցանէին յարբումն։ Քանզի ներհակաբար նոքա անդէն 'ի սկզբանն ետուն ճաշակել զդառնն. զի և ո՛չ զկրան ապատան առնէր Լիւսանդրոս յիշխանութիւն ժողովրդոցն, այլ 'ի ձեռս սակաւուց ժպիրհարանց և խազմարարաց տայր զքաղաքն։ Եւ ո՛չ շատ ինչ ժամանակ ծախեալ յայսոսիկ, և կանուխ տուեալ 'ի Լակեդեմոնիա լուր զչուոյն Իւրոյ հանդերձ երկերիւր նաւուք, ապա մատ յԱտտիկէ դայր միանայր ընդ արքայիցն Ագիսայ և Պաւսանիայ, Իբրու խակ և խակ հասանել ունել զքաղաքն։

Բայց քաջութեամբ զդէմ կալեալ Աթենացւոցն, անդրէն միւսանգամ անցանէր նաւուքն յԱսիա, և տապալէր նոյնպէս առհասարակ յամենայն քաղաքսն զազգ ազգ վարչութեանց քաղաքաց. և հաստատէր զտանպետութիւնն՝ 'ի մահ վարեալ և վտարանդի արարեալ զբազումս։ Եւ 'ի բաց հանեալ զամենայն բնակիչսն Սամոսի, ապայր զքաղաքն 'ի ձեռս վտարանդեալոցն. և հանեալ զԼեստոս 'ի ձեռաց Աթենացւոց, չԹողոյր և անդ զբնա-

կանուանդ բնակիչն, այլ իւրոց ղեկավարացն և հրամանատարացն տայր զքաղաքն և զբաշխս գետնոյն։ Եւ ապա այս առաջին գործ նորա, որում զդէմ դարձան Լակեդեմոնացիք և դարձուցին զՍեստայիս 'ի գաւառն իւրեանց։ Բայց որ 'ի Նահատակուլթեանց անտի Լիւսանդրեայ հաճոյական գտան առհասարակ Հելլենացւոց, զի անդրէն միւսանգամ յետ յամայր ժամանակաց էտ նա Եգինացւոցն ունել զքաղաքն իւրեանց. և Մեղիացւոց և Սկիոնացւոց հաստատել միւսանգամ 'ի կայս իւրեանց, վանեալ անտի զԱթենացիսն և ստիպեալ զնոսա դարձուցանել առ տեարս զքաղաքն։

Ապա լուր առեալ Լիւսանդրոս՝ զի Աթենացիք 'ի տառապանս սովու պաշարեալ կան, ճեպով նաւեալ 'ի Պիրէոս՝ 'ի նեղ արկանէր զքաղաքն անճնատուր լինել պայմանօք գաշանց ըստ իւրոց կամացն։ Եւ եթէ Լակեդեմոնացւոց լսեմք, նոքա ասեն՝ գրել Լիւսանդրեայ առ Պարէոս այսչափ ինչ. "Առաւ աթէնք". և Պարեստացն պատասխանի գրել առ նա, եթէ "Շատ է առնուլն"։ Սակայն հիւսուածոյ է բանն՝ առ 'ի դեղեցիկ պատրուակ ածել իրացն։ Բայց ճշդիւր սահման Պարեստացն էր այսպիսի։ "Այս է վճիռ սահմանին իշխանացն Լակեդեմոնացւոց։ Հիմն 'ի վեր քանդեսցես զՊիրէոս և զերկայնաձիգ ըզպատուարսն։ Արտաքս ելցես յայլ ամենայն քաղաքաց, և զտեղի կալցես 'ի սեպ-

հական գաւառի։ Զայս արարեալ՝ կալցես խաղաղութիւն, տացես զպիտոյն, և թոյլ տացես գարձի փախստէիցն։ Իսկ յաղագս բազմութեան նաւացն, կալցես զբռամբ որչափ արժան իցէ"։ Եւ հաւանեցան Աթենացիք ընդ արձանագրութիւն սահմանին խորհրդոյն Թերամենեայ որդւոյն Անկոնեայ։ Եւ ասեն՝ եթէ հարցեալ յայնժամ Լիւսանդրոս 'ի հռետորէ ումեմնէ պատանւոյ՝ անուն Կղէոմենէս, զի՞ դիւ խել Լիւսանդրեայ առնել և ասել իրս իմն հակառակ Թեմիստոկղեայ՝ թոյլ տուեալ Լակեդեմոնացւոց տապալել զպատուարան, զոր կանգնեաց նա ընդդէմ նոցա. եւ պատասխանի Լիւսանդրոս. "Այլ ես ինքնին ո՞վ պատանի դու, ոչ ընդդէմ ինչ գործեմ Թեմիստոկղեայ. զի զայդ պատուարագ կանգնեաց նա 'ի փերկութիւն քաղաքացեացն, և մեք դարձեալ 'ի փրկութիւն նոցա տապալեմք զդա։ Ապա եթէ պատուարքդ ինքնին յերկանկութիւն իցեն քաղաքաց, էր արդեօք անպարիսպն Սպարտիոյ հէգ և թշուառական լինել քան զամենայն քաղաք"։

Ապա Լիւսանդրոս զբռամբ կալեալ զամենայն գնաւն՝ բայց յերկոտասանից, և տիրացեալ պարսպացն Աթենացւոց 'ի վեշտասանեորդի աւուր Մունիքիոն ամսոյն (յորում աւուր նոքա յաւաջն վանեցին զբարբարոսս 'ի նաւամարտին Սաղամինոյ), անդէն խորհուրդ հաստատէր փոխել շրջել և անդ զքաղաքին կարգ։ Այլ մեծա-

պէս դժգմնեալ Ա.թենացւոց ընդ բանն և զդէմ դարձեալ, առաքեաց նա առ ժողովուրդն և ասէր, եթէ դրժեալ քաղաքին պայմանաց դաշնին՝ կանգուն աւադիկ գեռևս կան պատուարքդ, թէպէտ և ժամանակեալ աւուրքդ անցեալ իցեն. որ աղագաւ և ինքն յատենի ժողովոյ այլ խորհուրդ հաստատեցէ վասն նոցա, զի լուծին նոքա զդաշնն: Եւ ասեն ոմանք՝ եթէ յատեան ժողովոյ նիզակակցացն յայնժամ խորհուրդ կալան՝ առհասարակ զԱ.թենացիսն գերի վարել պատերազմի. և ասեն ևս՝ եթէ յայնժամ և Թեբայեցին Երիանթոս Թելադիր եղև հիմնայատակ զքաղաքն քանդել և զդաւառն ամայի կարգել յարօտս խաշին: Սակայն ապա դուսմարեալ զօրավարացն յակուսքս կոչնոց, և անդանօր Փոկէացի ոմն այր երդեալ զքերթածսն զԵլեկտրայ զԵւրիպիդէսին՝ զդաստերգուԹեանն, որոյ սկիզբն.

Ագամեմնոնին ոմ օրիորդդ
Եղեկտրէ,
Հասեալ դամ 'ի քո գեղջուկն
'ի գաւիթ.

Անդ առհասարակ խանդաղատեալք՝ դրժպատեհ յոյժ համարեցան հիմն 'ի վեր ըզհամբաւատենչն զայն առնել քաղաք և զմայր հոյակապ որերոյն:

Բայց Լիւսանդրոս՝ յորոց 'ի կամս ապաստան եղեն Ա.թենացիք, ածեալ 'ի քաղաքէն վարձակս բազումս արնգահարս, և ընդ նոսա խմբեալ և զորս 'ի բանակին,

'ի ձայն նուագարանաց քանդէր յատակէր զպարիսպն և 'ի հուր դատէր զերուսաղէմն. և անդուստ նիզակակիցք բոլորիւք պատկեալք ոչն կատարէին ցնծութեան՝ զօրն զայն սկիզբն վարկուցեալ իւրեանց ազատութեանն։ Ապա փութով փոխէր եղծանէր և զկարգ քաղաքին. և հատատէր կարգէր վարիչս երեսուն 'ի քաղաքին, և տասն՝ 'ի Պիրէոս, և գունդ մի զօրականի 'ի դղեկին, և ամրապահ իշխան տայր զԿալլիպոս զայր Սպարտացի։ Սա այս Կալլիպոս ամբարձեալ երբեմն զդաւազան իւր հարկանել զԱւտոլիւկոս գօտէկռիւ, (որ աղագաւ քերթեաց Քսենոփոն զՀացկերոյթն), կալեալ ըմբիշն զոլորքացն նորա և 'ի վեր ամբարձեալ զգետնէր զնա. որ աղագաւ ոչինչ ցասնոյր Լիւսանդրոս, նա և կշտամբեաց զԿալլիպոս, և ասէր. Ո՛Հ ԳԻ ՓԷ ԿՈՒԼԻՊԻՈՍ, ԶԻ 'Ի ՎԵՐՈՅ ԱՂԱՓԱՑ ԻՇԽԷ։ Բայց յետ սակաւուց երեսունքն 'ի մահ գատեցին զԱւտոլիւկոս՝ շնորհս արարեալ Կալլիպոսի։

Զայսոսիկ 'ի գլուխ տարեալ Լիւսանդրոս, ելեալ ապա նաւէր 'ի Թրակիա. և ողջոյն զյաւելուած դրամոցն և միանգամայն զամենայն զպարգևսն և զպասկան՝ զոր տարաւ, (և արդեօք շատ ինչ էին, զի և բազումք ընծայաբերք լինէին նմա իբրու աւագամեծար առն և իշխանին Եղլադայ), առեալ զամենայնն յղէր 'ի Լակեդեմոնիա 'ի ձեռն Գիլիպպոսի՝ որ զօրավար եկաց 'ի Սիկիլիա։ Սա այս Գիլիպպոս՝ որպէս ա-

սեն՝ խոռեաց 'ի ներքուստ զկարան քրձոցն, և 'ի միոյ միոյ հանեալ արտաքս շատ ինչ արծաթ, կարեաց միւսանգամ. ոչ գիտացեալ զի 'ի մէն մի քրձոյն կայր և տոմսակ համարոյ արծաթոյն։ Հասեալ 'ի Սպարտիա, գաղեաց՝ զոր խորեացն՝ 'ի ներքոյ կղմնտրաց յարկին, և առեալ զքուրձսն յանձն առնէր Պարետացն և ցուցանէր նա զկնիքն։ Իսկ բացեալ նոցա զքուրձսն և 'ի հաշիւ զարծաթն բերեալ, և զչափն զուգակշիռ չգտեալ տոմսակին, վարանեցան Պարետք։ Անդանօր մի ումն 'ի ծառայիցն Գիլիպպոսի 'ի վեր հանէր, առեղծուած իմն խօսեալ՝ այսպէս, եթէ 'Ի ՆԵՐՔՈՅ ԿԷՐԱՄԻԿՈՍԻՆ ԿԱՆ ԱՐՔԷՕՓ ԲՈՍՓ ԲԱՂՈՄՓ։ Քանզի առ այնու ժամանակաւքն՝ որպէս երևի՝ գահեկանք շատք հատեալ էին՝ պատկեր ունելով զբուոյ 'ի շնորհս Աթենացւոց 1։

Ապա զգործ զայս գործեալ Գիլիպպոս անարգ և անփառունակ՝ յետ առաջնոց իւրոց գեղեցիկ նահատակութեանցն, ինքնին նա վտարանդի գնայր 'ի Լակեդեմոնիոյ։ Այլ քաջուշիմքն Սպարտացւոց՝ և 'ի դիպուածոյ աստի յայտանէ ոչ խուն ինչ խիթացեալ 'ի հրապուրիչ արծաթոյն, (որ և զլաւորեարն գիտաց այնպէս վանել), խոտեալ անգոնէին զԼիւսանդրոս և բոզք ևս ունէին առաջի Պարետացն, եթէ յետս դարձուցանել արժան է ոգեոյն զարծաթն զայն և զոսկին՝ իբրու որ ժանտախտ ճարակիչ և մահահոտ ի՝ցէ բանն։ Արդ Պարետք յատենի 'ի մէջ բերեալ զայս

խորհուրդ, անդ Սկիրաբիդաս՝ որպէս Թէոպոմպոս ասէ, կամ Թէ Փլոդիտէս՝ որպէս Եփորոս, առ աջի առնէր զսահմանն՝ եթէ չէ պարտ դահեկան զոսկւոյ և զարծաթոյ ընդունել 'ի քաղաքն, այլ վարել զվաղընջուցն և զհայրենատուրն։ Եւ էր այս դահեկան երկաթի հրաշէկ մխեալ 'ի քացախ, և ոչինչ պիտանի 'ի ձեռակերտս կռանագործ, այլ 'ի մխելոյ անտի գուլ և բութ ամենևին։ Առ այս՝ էր այն և ծանրակշիռ և դժուարաբառնալի, և բազմակոյտ նորա՝ յոյժ դիւրագնի։ Եւ Թերևս հասարակ այնպիսի ինչ էին և ամենայն դահեկանք վաղնջուց, վարելով փոխան այնոցիկ զոբելիկս իմն երկաթի՝ ուրեք և պղնձի. ուստի և ցայսօր սովորութիւն է կոչել Յ-ԲԷԼ-զմանր դահեկանն՝ որ բազում յոյժ գտանին. կոչել և Դիդրաքմայ՝ զոբելս վեց, քանզի այնչափ Թուով ըմբռնեալ գրաւէ բուռն մարդոյ 2։

Բայց Լիւսանդրեայ բարեկամք ընդդէմ դարձեալ սահմանին, և գուն գործեալ ոգւով չափ ունել զդրամն զայն 'ի քաղաքին, ետուն սահմանել՝ վարել զայն դրամն 'ի հասարակաց պէտսն ևեթ. և որ միանգամ ըմբռնեսցի ունել առանձինն յայնպիսեաց անտի, մահու դատապարտեսցի։ Որպէս եթէ Լիւկուրգոս ինքնին զանգիտեալ ելեալ 'ի դրամոց այտի և ոչ մանաւանդ յարծաթասիրութենէն. և այն զի ընչաքաղցութիւնդ ոչ այնչափ նուազէր արգելլով զառանձնակի ստացումն դոցա,

որչափ խայծեալ յորդէր 'ի ստանալոյ քա-
ղաքին զնոսա. քանզի այնպէս և ևս առա-
ւելոյր յարդ և ցանկութիւն դոցա առ 'ի
շահից անտի։ Քանզի և մարթ չէր առան-
ձինն իբրև անպիտան համարեալ զայն ինչ՝
զոր յարդեալ տեսանէին 'ի հասարակացն.
և առն իւրաքանչիւր 'ի շահ անձին անփոյթ
առնեալ զայն ինչ՝ որում քաղաքն շուք դնէր
և խնդրէր և սիրէր։ Եւ քաջ իսկ 'ի հա-
սարակաց կարդաց հեշտին ևս արագ սպրդ-
դին սովորոյթք յառանձնաւորսն, քան
եթէ յանցաւորութիւնք առանձնաւո-
րացն՝ յոռութեամբք ժանտացուցեն զհա-
սարակացն. քանզի հեշտին ևս է մասանցն
ժանտանալ 'ի բոլորէն՝ որ սխտակրեալ
լցէ. իսկ խակութիւնք մասանցն առ բո-
լորն՝ ունին իւրեանց քարընդոտն զբարե-
տոհմութիւն զայլոց մասանցն՝ որ շատ ինչ
արգելեալ սանձեացեն զնոսա։ Եւ թէ-
պէտ և յայնժամ 'ի տունս տունս քաղա-
քայնոցն հաստատեալ կարգեցին Պարէտք
'ի պահապան զահ երկիւղին և զօրէնսն, զի
մի մոցեն անդր դահեկանքդ այդ, սակայն
և ոչինչ յաջողեցան նոքա զոգիս նոցա ան-
վանելի պահեալ յընչից՝ անդրժելիս ու-
նել 'ի կրից նոցա. նա՝ ևս վառեցին առհա-
սարակ զսէր և զնախանձ զընչաւէտութեն՝
իբրու որ մեծ յոյժ լցէ և քաջավայելուչ։
Ալ յաղագս այսորիկ և յայլում մատե-
նագրութեան մեր ստգտեալ է զԼակեդե-
մոնացիս։

Բայց ապա յանկածէ անտի թշնամեացն

արար Լիւսանդրոս և կանգնեաց 'ի տաճարին Դեղփեայ պատկեր մի իւր պղնձի, և միոյ միոյ 'ի նաւապետացն. առ այս՝ և աստեղս կրկին զոսկւոյ՝ Դիոսկուրեանցն, որք ապա անհետացան յառաջ քան ըզԼեւքտրեան մարտն. և 'ի գանձու անդ Բրասիդեայ և Ականթիացւոց կայր Եռաթի մի ճարտարեալ յոսկւոյ և 'ի փղոսկրէ՝ երկկանգուն երկայնութեամբ, զոր Կիւրոս ինքնին առաքեաց առ Լիւսանդրոս առ 'ի յաղթանակ։ Այլ Աղեքսանդրիդէս Դեղփացի պատմէ՝ անդանօր յաւանդ եդեալ Լիւսանդրեայ և քանքար մի արծաթոյ և ճնաոս յիսուն և երկու, դարձեալ և սատերս մետասան. այլ դորա բանք 'ի մասինդ չէն միաբան ընդ այլոցն, որ միաբան հաստատէն զաղքատութիւն զառնն։

Իսկ յայնժամ ճոխ և հարուստ Լիւսանդրոս առաւել քան զամենայն Հելլենացիս՝ որ յառաջ քան զինքն, թուէր իմն պերճաբար 'ի վեր վազել քան զկար անձինն. քանզի նախ՝ (որպէս Դուրիս պատմէ) Հելլենացւոց քաղաքք կանգնեցին նմա սեղանս իբրև աստուծոյ և յաղէին նմա զոհս. և նմա առաջին առին զերգս նուագաց, յորոց և միոյն զսկիզբն յիշատակէն այսպիսի.

"Զհոյակապն զԵլլադայ զՁօրավարն՝
Որ 'ի լայնասահմանն Սպարտիոյ,
Երգեսցուք.
Բաղէ Պէյան նուագաց"։

Առ այս և վՃիռ եռուն Սամոսացիք, զի
ասնք՝ որոց նոքա անուն կարդային Հե-
ռեանք, յորջորջեալ կոչեսցին Լիսան-
դրեանք։ Իսկ ինքն Լիսանդրոս ցանգ ու-
նէր առ իւր զՔերիղոս քերթող, զի քեր-
թուԹեամբն նա շուք յաւելցէ իւրոց նա-
հատակուԹեանցն։ Բայց յայնժամ Ան-
տիղոքոս տողս սակաւ քերԹեալ 'ի գովու-
Թիւն նորա, այնչափ ինն ցնծացաւ Լիս-
սանդրոս՝ զի լցեալ արծաԹով զարտա-
խուրակ իւր պարգևեաց նմա։ Իսկ Անտի-
մաքոս Կողոփոնեացի և Նիկերատոս ոմն
Հերակլէացի՝ այր զարամբ եղեալ 'ի քեր-
Թածս նեբբողից նորա, Նիկերատոսին տայր
Լիսանդրոս զպսակն. ընդ որ մեծապէս
սրտնեալ Անտիմաքոս՝ խանգարեալ աղար-
տէր զքերԹածն իւր։ Այր աղագաւ Պղա-
տոն 'ի ժամանակին յայնմիկ դեռևս պա-
տանի, և հիացեալ էր ընդ քաջուԹիւն
քերԹողականին Անտիմաքեայ, տեսեալ
զարտնուԹիւն նորա և զվիշտն՝ մխիԹար 'ի
ներքս մատուցանէր նմա և ասէր, եԹէ՝
ՏգիտուԹիւն որոց ոչն հասկանան, աղէտք
զուգահաւասար են կուրաց՝ որ ոչն տեսա-
նեն։ Իսկ քնարահարն Արիստոն զվեց
նուագ տարեալ յաղԹանակ 'ի մրցանս
ՊիւԹեան խաղուցն, 'ի շնԹել Լիսան-
դրեայ՝ խոստումն կռէր նմա, զի 'ի միւ-
սանգամ ևս յաղԹուԹեանն հռչակ հար-
ցէ զանձնէն՝ եԹէ Լիսանդրեայ յորե-
ղոյն ելցէ, կամ ԹէՃառայ իսկ նորա։

Բայց զպատուասիրուԹիւն զայս Լիս-

սանդրեայ դժկամակս բերէին միայն արք աւագք և բարձակիցք. սակայն ընդ պատուասիրութեանն սպրդէր ապա 'ի բարոյն 'ի սպասարկուաց անտի նորա՝ և ամբարտաւանութիւն և գոռոզ պերճութիւն. մինչև 'ի պատուել և 'ի պատուհասել դարձեալ՝ էր նա 'ի գեղեցիկ չափաւորութենէն անբաժ։ Իսկ մրցանակք բարեկամացն նորա և մտերմաց էին տէրութիւնք ինքնակալք 'ի վերայ քաղաքաց և իշխանութիւնք բռնաւորք. իսկ սրտմտութեան բարկութեան նորա յագուրդ՝ էր մահ գլխովին ատելեաց նորա, որք և անձողոպրելիք էին 'ի ձեռաց նորա։

Բայց յետ այսորիկ զանգիտեալ Լիսանդրոս՝ եթէ զերծանիցին 'ի ձեռաց գԼիսարոքք Միղեսացւոցն, և կամեցեալ ևս արտաքս հանել զզօղեալսն, երդուաւն կռէր ոչինչ վնասել նոցա. իբրև հաւատս ընծայեցին և յերևան եկին, առեալ մատնէր զնոսա 'ի ձեռս աւադպետականացն 'ի խողխողումն. և էին նոքա առհասարակ ոչինչ պակաս քան զութ հարիւր։ Ապա և 'ի քաղաքս մահունք ամբաւք ժողովրդականացն սադրեցան առ 'ի նմանէ, կըրթեալ 'ի նոյն ոչ յիւրոց միայն առանձինն պատճառաց, այլ հաճէր զբարեկամսն ամենայն ուրեք, և գործակից էր 'ի ընուլ զթշնամութիւնս և զընչաքաղցութիւնս նոցա. ուստի և հռչակեցաւ յոյժ Եւոկղէս Լակեդեմոնացի յասել անդ իւրում, եթէ "Ոչինչ հանդուրժեացէ Եղլադա բե-

րեալ Լիւսանդրոսս երկուս»։ Զնոյն խմաստ պատմէ Թէոփիրաստոս՝ ասելով Աղբիստրատեայ և վասն Աղկիբիադէայ. այլ որ դժուխրմբերն էր յԱղկիբիադէս՝ էր նորա ժպիրութիւն և գրգանքն և յամառութիւնն մեծ. իսկ Լիւսանդրեայ խստամբերութի բարոյիցն ահագին յարդարէր և անհամբոյր զսէրութիւն նորա։

Արդ Լակեդեմոնացիք այլոց ոմանց խելթին և բողոքման երեսս ինչ չարարեալ, իբրև անդուստ և փարնաբազ զրկեալ 'ի Լիւսանդրեայ՝ յասպատակել գաւառին նորա, առաքեաց 'ի Սպարտիա արս ամբաստանս զնմանէ, որոմնեալ Պարեսացն տային ձերբակալ առնել զմի 'ի բարեկամաց անսի նորա՝ անուն Թովրակէս՝ որ և ընդ նմա զօրավար կացեալ էր. և զի սա առանձինն իւր ստացեալ ունէր արծաթ, դատակնիք մահու ածին 'ի վերայ նորա. ապա և առ Լիւսանդրոս առեալ յղեցին Սկիւտաղաս մի՝ հրաման տուեալ յառնել գալ առ նոսա։ Իսկ Սկիւտաղասդ այսպիսի ինչ է։ Յորժամ Պարէոք հրամանատար զոք նաւաց կամ զօրավար բանակի արձակել հանդերձեալ իցեն, կազմեն պատրաստեն գլանս երկուս 'ի փայտէ զուգահաւասար յերկայնութեան և 'ի թանձրութեան՝ հաւասարաչափք ճշդրտեալ ամենևին ընդ միմեանս. ապա զմին 'ի նոցանէ պահեն առ իւրեանս, և զմիւսն տան առն՝ զոր արձակեն. և գլանացն անուն կարդան նոքա Սկիտաղաս։ Արդ 'ի կամել Պարեսացն

գաղտնիս ինչ մեծ ազգ առնել, պատրաստեն մատեան իբրու երկայն փոկ և նեղ, և պատատեն զայն զգլանաւն՝ որ առ նոսա՝ կուռ ամենեին. և համբուն ամրածածուկ բոլորեն 'ի նա զմատեանն: Իբրև զայս առնեն, առեալ գրեն զոր կամին 'ի մատեան անդր՝ պատատեալ 'ի գլանին. ապա կատարեալ զգիրն բառնան 'ի բաց զմատեանն և առաքեն առանց գլանին ըզգիրն առ զօրավար անդր: Իսկ նա ընկալեալ զգիրն՝ ոչինչ բաւական է ՃՀգրիտ 'ի վերայ կալ գրելոցն, քանզի անկիցք միմեանց են տառքն և այսր անդր ցանեալ կան. ուստի և զգլանն զայն՝ որ առ իւր՝ 'ի բուռն կալեալ, շուրջ զնովաւ պատէ զհատած մատեանին՝ կարգ 'ի կարգ գործելով զպարոյրն ըստ յառաջագոյն կազմուածն՝ մինչև երկրորդ տառիցն զհետ գալ առաջնոցն. և այնպէս շրջանաւ յածեալ զաչան՝ միահետ շարի գրուածոյն համօրէն 'ի վերայ կայ: Այլ և զմատեանն գրեալ՝ կոչեն նոքա Սկիւտաղաս յանուն գլանին. ըստ որում և չափեալն իր բնաւորեցաւ կրել զանուն չափողին:

Այդ Սկիւտաղաս այսպիսի հասեալ առ Լիւսանդրոս 'ի Հելլեսպոնտոս՝ ուր էր նա յայնժամ, 'ի մեծ տագնապ պաշարեցաւ այրն. և յոյժ երկուցեալ յամբաստանութեանցն Փարնաբազայ, հնարս հնարեցաւ երեսել խօսել ընդ նմա և 'ի հաշտ ածել զնա: Խօսէր և աղաչէր զնա այլ նամակ տալ առ իշխանն Սպարտիոյ վասն նորա.

վկայութիւն դնել՝ իբրու հարստահարու-
թիւն և ոչ մի կրեալ առ 'ի նմանէ և բո-
ղոք և ոչ մի ունել վասն նորա. ոչինչ միտ
եդեալ Լիւսանդրոս 'ի պահուն, եթէ՝
(որպէս սովորութիւն է ասել) Կրետա-
նայր ինքն ընդ Կրետացւոյն Փարնաբազայ:
Քանզի խոստացեալ նմա Փարնաբազ առ-
նել զինդիրն, յանդիման առաջի նորա
գրեաց նամակ որպէս և ինդրէրն. այլ
կազմ և պատրաստ ունելով նա այլ նա-
մակ տարօրինակ՝ զոր 'ի ծածուկ գրեալ իսկ
էր, 'ի հարկանել անդ կնքոյն՝ հնարիմաց
գաղտնութեամբ 'ի նեղքս սպրդեցոյց զայն,
զի և չէին ամենևին տարբերեալք նամակա-
նին. և առեալ զայն տայր գաղտնի 'ի ձեռս
Լիւսանդրեայ: Որոյ գնացեալ 'ի Լակե-
դեմոն, և ըստ սովորութեանն երկիրեալ
յատեանն, տայր Պարետացն զնամականին
Փարնաբազայ. կարծէր արդարանալ շատ
ինչ 'ի յանցանաց անտի ամբաստանու-
թեանն. քանզի էր Փարնաբազ յոյժ սի-
րելի Լակեդեմոնացւոց, իբրու որ յամե-
նայն զօրավարս արքային 'ի մարտին յայն-
միկ յոյժ հակամիտեցաւ առ նոսա: Իսկ
Պարէտք ընթերցեալ զնամականին, ցու-
ցանէին Լիւսանդրեայ. նա 'ի միտս եկեալ
յայնժամ եթէ ոչ Ոդիւսեւս միայն իցէ
խաբուսիկ, ամբոխեցաւ խռովեցաւ յոյժ
'ի յոգին, և զայրագին մեկնեցաւ 'ի վայ-
րացն: Ապա յետ սակաւ աւուրց միւսան-
գամ յանդիման եղեալ Պարետացն, ասէր.
երկիրեալ պարտ է նմա 'ի տաճար անդր Ամ-

մոնիսի, և անդ դիցն կատարեալ զզոհան՝ զոր ուխտեաց նմա նախ քան զմարտ պատերազմին։

Արդ կէսք ասեն՝ եթէ Ճշմարիտ իսկ յորժամ էր նա 'ի Թրակիա 'ի պաշարումն քաղաքին Ափիւդեցւոց՝ յերազի երևեցաւ նմա Ամմոնն. և թէ՝ ապա 'ի տեղի տալ պաշարմանն՝ իբրու դիցն ինքնին հրամայեալ նմա՝ թելադիր լինէր քաղաքացեացն զոհ զոհել Ամմոնի, և ինքն առ 'ի հաշտ առնել զնա ճեպով անցցէ 'ի Լիբիա. այլ բազումք այն էին՝ որ բարուր համարեցան զբան դիցն, երկուցեալ նորա 'ի Պարետացանոի և դժկամակս բերեալ լծաբարձ անդէն կալ մնալ 'ի տան. և քանզի հպատակ կալ ոչինչ հանդարտէր այլոցն հրամանաց, խնդրեաց մանաւանդ շուրջ թափառական գնալ. իբրու երիվար՝ որ 'ի լայնարձակ դաշտէ արօտին և 'ի մարգացն յախտոռ իւր դարձցի և ընդ սովորական քիրտն վաստակոցն միւսանգամ մոցէ. քանզի և զպատճառան գլխովին զնորա զուղևորութեանն՝ զոր աւանդէ Եփորոս, մերձ ընդ մերձ դիցուք առընթեր։

Ապա մեծապէս աշխատութեամբ և հազիւ ուրեմն առեալ հրման զուղղոյն 'ի Պարետացն, մտեալ 'ի նաւ՝ անկաւ յուղի։ Իբրև նա մեկնեցաւ, 'ի խորհուրդ եկեալ ընդ միմեանս ազգայիցն, զի ինքնին Լիւսանդրոս յընկերութեանց անտի իւրոց՝ զոր կարգեաց եդ՝ զբռամբ կալեալ զքաղաքն, տիրացեալ ևս է նա ճոխաբար

իշխանութեամբ ողջոյն Եղլադայ, կազմեցան պատրաստեցան անդրէն միւսանգամ զՀոգս իրացն 'ի ձեռս տալ ժողովրդականացն և վանել զբարեկամն նորա։ Ալ 'ի բանին յայնմիկ աղմուկ յուզեալ շփոթից և խռովեալ, և Ալթենացւոցն 'ի փիւզեայ 'ի վերայ անկեալ երեսնիցն և նկուն արարեալ, անդէն 'ի շտապ տագնապի դարձ արարեալ Լիւսանդրոս, ածէր հաւանեցուցանէր զԼակեդեմոնացիսն ձեռն տալ օգնականութեան աւագպետական կողմանն և պատուհաս 'ի վերայ ածել ռամկին. ապա և քանքարս հարիւր առեալ արձակէին առ երեսունսն՝ զդէմ ունել մարտին, և զԼիւսանդրոս ինքնին 'ի զօրավար։

Բայց արքայք նախանձու բերեալք ընդ նմա, և խիթային ևս՝ անդրէն զԱթէնսն զբռամբ ունել նմա, հաստատեցին՝ միոյ ումեք 'ի նոցանէն երանել 'ի Ճակատ։ Ապա երանէր արտաքս Պաւսանիաս, 'ի վերին երեսս իբրու 'ի կողմն բռնաւորաց ընդդէմ ռամկին, այլ 'ի նեղբոյ լուծանել զմարտն. զի մի թերևս 'ի բարեկամացն ձեռս միւսանգամ ախրասցի Լիւսանդրոս 'ի վերայ Ալթենացւոցն։ Անդ Պաւսանիաս հնարաւոր խմաստութեամբն հեշտեաւ կամագիւտ լինէր. և ընդ միմեանս հաշտ արարեալ զԱթենացիսն և զկագն համոզեալ, 'ի դէրևս զպատուասիրութիւնն հանէր զԼիւսանդրեայ։

Ալ ապա յետ սակաւուց աղմուկ

այլ յուզեալ յԱթենացիսն, մեղ գնէին
Պաւսանեայ, իբրու որ 'ի սանձէ աւագ-
պետութեանն զերծեալ զռամիկն՝ միա-
սանգամ եւ նմա խեռիլ և սուահակել.
իսկ անդուստ Լիւսանդրոս համբաւ ժա-
ռանգէր անձին զաւագ առն, զի 'ի քաղա-
քականութեան իւրում անյեղլի էր 'ի
գործն, ոչ առ 'ի զայլս հաճել և ոչ դար-
ձեալ 'ի ցոյցս ինչ, այլ յօգուտ Սպար-
տիոյ։ Առ այս՝ էր Լիւսանդրոս և հզօր և
կորովի 'ի խօսս, և սաստիկ և ահաւոր առ
դիմադարձան։ Քանզի էր Երբեմն՝ 'ի վեդ
եկեալ Արգոսացւոցն վասն սահմանաց և
քաջացեալ նոքա 'ի նեղքս բերել յիւրեանց
կողմն փաստս բանականս առաւել քան
զԼակեդեմոնացւոցն, ցուցեալ նա նոցա
զսուսերն՝ ասէր. "Որ զայդ ունի՝ քաջա-
պէս նա 'ի պայքար մտցէ վասն սահմանաց
երկրին"։ Առ այս՝ և Երբեմն յատենի ու-
րեք խօսեալ առ նա Մեգարացի ոմն այր
կարի ազատօրէն, ասէր Լիւսանդրոս.
"Քոց բանից ո՞վ հիւրդ, պէտք են քա-
ղաքի"։ Իսկ յորժամ և Բիոտացիք դեռ
ևս վարանեալք՝ յո՞ր կոյս դառնալ. հար-
ցանէր Լիւսանդրոս, եթէ՝ Ընդ Երկիր
նոցա անցանել նմա պարտ լցէ կանգո՞ն,
եթէ թեքեալ նիզակօք։ Եւ յորժամ
ընդվզեալ Կորնթացիք, մերձեցաւ նա 'ի
պարիսպս նոցա՝ և անդ Լակեդեմոնացիք
զանդիտէին 'ի յարձակել, տեսեալ նորա
յայնժամ նապաստակ մի վազել զկրա-
մոնն, ասէր. "Ո՞չ ամօթ լցէ երկնչել ձեզ

'ի Թէնամեաց անտի, յորոց 'ի պարիսպան առ վատուԹեան նոցա գադարեն նա-
պատակք "։

Իսկ յետ այնորիկ մեռեալ արքային Ագիսայ, Թողոյր զԷղբայր մի իւր Ագեսի-
ղայոս անուն. և որդի մի կարծեալ՝ անուն Լէոտիւքիդէս։ Արդ Լիւսանդրոս սիրող Ագեսիղեայ՝ դրդեաց զնա իշխել արքայու-
Թեանն իբրև հարազատ զարմն Հերա-
կլեայ. իսկ անդ Լէոտիւքիդէս համբա-
ւեալ ինն էր որդի գող Աղկիբիադեայ, այն՝ որ 'ի վտարանդեալ իւրում եկեալ 'ի Սպարտիա, գաղտաբար եմուտ առ Տիմէա կին Ագիսայ։ Իսկ Ագիս՝ որպէս ասեն՝ ատուգեալ 'ի ժամանակէն՝ զի ոչ 'ի նմա-
նէն էր յղուԹիւնն, զանց առնէր զԼէոտիւ-
քիդեաւ. և յայտնի իսկ զամենայն աւուրս կենաց իւրոց իբրև անհարազատ ծանեաւ զնա։ Այլ 'ի հիւանդանալ Ագիսայ և յա-
ծել յերէան. և մերձ եղեալ 'ի մեռանել, 'ի Թախանձելոյ անտի պատանեկին և բա-
րեկամացն, յայտ առնէր զնա առաջի բազ-
մաց Լակեդեմոնացւոց իբրև իւր որդի. և աղաչեալ ևս զորս շուրջն կային՝ վկայել զնոյն առաջի Լակեդեմոնացւոց, ինքն ան-
դէն մեռանէր։

Արդ նոքա Թէպէտ և զնոյն վկայեալ 'ի կողմն Լէոտիւքիդեայ, 'ի վերայ այսր՝ զօ-
րանայր Ագեսիղայոս՝ քանզի էր իսկ նա այր հոյակապ և ականաւոր. առ այս՝ զի և Լիւսանդրոս գործակից էր նորա. սակայն ինաասակար էր նմա ԴիոպիԹէս այր հըռ-

չակաւոր հարցուկ, որ գուշակութիւն պատգամի այսպիսի 'ի նեբքս եբեր 'ի կաղութիւն անդր Ագեսիղայոսի.

Ո՞վ դու Սպարտիա՝ թէպէտ մեծապանծ՝
արթուն կաց համբուն,
Մի՛ ըզքեզ ողջոյն՝ հարեալ ջախեսցէ
կաղ Արքայութիւն։
Զի յամայր ամոք անձկութիւնք անկարծք
ըզքև պատեսցեն,
Եւ ըզքեզ մարտից մարդախանձ ալիք
յուզեալ ծըփեսցեն։

Արդ անդ բազումք հակամիտեալ յայս պատգամ և 'ի կողմն եղեալ Լէոտիւքիդեայ, ասէր Լիւսանդրոս՝ եթէ ոչինչ ուղղապէս և ճշգրիտ Դիոսկիթէս 'ի վերայ կացեալ է գուշակութեանն. քանզի դիցն չէ՛ ինչ ընդ հակառակս՝ առն կաղի թագ կապել 'ի վերայ Լակեդեմոնացւոց. այլ թէ՝ կաղ յայնժամ լինիցի արքայութիւնն, յորժամ խառն ընդ Հերակղեանց թագ կապեսցեն անհարազատք և խառնածինք։ 'Ի բանից ասոյ Լիւսանդրեայ, դարձեալ և 'ի մեծ աւագութենէ առն և 'ի զօրութենէն՝ հաճեալ հաւանէին Լակեդեմոնացիք, և թագ կապեաց Ագեսիղայոս։

Ապա անդէն վաղվաղակի սադրէր նմա Լիւսանդրոս խաղալ դիմել մարտ պատերազմի յարդարել յԱսիա, յոյս առաջի եդեալ նմա վանել զՊարսս և 'ի մեծ բարձրութիւն հասանել. առ այս՝ և գրէր առ

բարեկամն Ասիացիս՝ Խնդրել զԱգեսի-
զայոս 'ի Լակեդեմոնացւոց 'ի զօրավար
ընդդէմ բարբարոսացն։ Նոքա լուեալ դես-
պանս արձակէին 'ի Լակեդեմոնիա՝ աղա-
չել վասն բանին այնորիկ, զոր և ինքնին
Ագեսիզայոս 'ի ձեռս բերեալ գործակցու-
թեամբն Լիսանդրեայ, թուի թէ ոչ պա-
կաս ընծայեաց շուք նմա՝ քան զարքայու-
թիւնն ինքնին գլխովին։ Սակայն որ միան-
գամ փառասէրն դիպեցան բուռոյ բա-
ռուց, թէպէտ և անպիտանք չլցեն նոքա
յառաջնորդութիւն անդր, ունին նոքա ոչ
դուշնաքեայ խոչ և խուռթ 'ի գեղեցիկ նա-
հատակութիւնան, այն է՝ խէթ նախան-
ձուն նոցա առ զուգափառ բարձակիցս.
համարեալ իբրև հակառակորդս ոմանս
յառաքինութեան զայնոսիկ՝ զորս նիղա-
կակիցս մանաւանդ առնուլ մարթ էր նո-
ցա 'ի զօրավիգն առաքինութեան։

Արդ Ագեսիզայոս կարգեաց եդ զԼիս-
սանդրոս աւագ 'ի մէջ երեսուն խորհրդա-
կանացն, իբրու զնա առաւել քան զամե-
նայն բարեկամն ունելով իւր աջակից։
Իբրև հասին եկին նոքա յԱսիա, որ անդ
մարդիկն՝ մոերմութիւն և ոչ մի ունելով
ընդ Ագեսիզեայ, դուն ուրեք կենակից
կենցաղակից եղեալք ընդ նմա, իսկ ան-
դուստ մոերիմք Լիսանդրեայ իբրու որ
ժամանակս ձիգս յառաջագոյն բնակակից
լեալ էր նոցա, ստէպ դեգերեալք առ
դուրս նորա՝ ընդ նմա շրջէին. բարեկամք
սպաս հարեալ նմա, և կեղակարծք՝ զան-

գիտեալք 'ի նմանէ. 'ի դէպ եկեալ ՃՐՇ-
գրիտ՝ որ ինչ միանգամ բնաւորեցաւ յՈՂ-
բերդութիւնս տեսարանաց առ դերա-
սանսն, յորս է զի՝ որ զդեսպանին կամ
զսպասաւորի զդէմսն բերէ, արդոյ առա-
ւել երևի և բարձերէց, իսկ որ զդաւազանն
ինքնին կրէ զարքունի և զպսակն, նա մե-
նացեալ անբարբառ կայ. սակէս և յայն-
ժամ առ Լիւսանդրեայ խորհրդականի էր
համբուն շուք արքայութեանն. իսկ Ագե-
սիլեայ անուն լոկ արքայի մնացեալ՝ մերկ
և թափուր յամենայն տերութենէ: Արդ
արժան էր արդեաք համ դնել դժպհի
փառասիրութեանն Լիւսանդրեայ և առ-
նուլ ածել զնա յերկրորդ բարձ աւագու-
թեանն. սակայն և Ագեսիլայոսի դժպա-
տեհ էր գլխովին ոտնհար խոտել վասն
փառացն զայր այնպիսի աւագ՝ բարեգործ
և բարեկամ: Քանզի առաջին՝ պատճառս
և ոչ մի և ժամ տայր նմա Ագեսիլայոս
գեղեցիկ նահատակութեանց. և ոչ դար-
ձեալ ոստիկանութիւն յիրս ինչ. իսկ երկ-
րորդ անգամ՝ որոց միանգամ Լիւսան-
դրոս զօրավիգն էր, նա այնպիսեացն պար-
գևէր և ոչինչ. ունայն յեռս արձակեալ
և ոչ զռամկացն անգամ և զսինլբքորացն
տուեալ նոցա. և այնպէս տակաւ նուա-
զեալ վատէր տերութիւնն Լիւսանդրեայ:

Ապա տեսեալ Լիւսանդրոս զբնաւ իսկ
վատթարել զկրաց իւրոց, և զի՝ և խնամա-
կալութիւն իւր 'ի վերայ բարեկամացն
ինեասակար էր նոցա, տեղի տայր այնու-

հետև և աղաչէր ևս զնոսա՝ մի ևս յայց ելեալ շուք գնել նմա, այլ գնալ կենակից կենցաղակից արքային լինել, և որոց միանգամ բաւականք էին յայնժամ զօրավիգն կալ պատուադրաց իւրեանց։ Զայս լուեալ բազումք՝ թէպէտ և ոչ ևս նեղէին զնա 'ի գործս իւրեանց, սակայն և ոչինչ դադարեցան 'ի սովորական սպասուցն 'ի ներքս բերել նմա. նա՛ և առաւել ևս շրջեալք ընդ նմա 'ի ճեմս և յասպարէզս ըմբշաց, 'ի խոր առաւել խոցէին զԱգեսիղայոս՝ որ խանտայր զփառս նորա. որպէս զի և բազմաց 'ի սոսկական զօրականէն 'ի ձեռս տուեալ Ագեսիղայոս զառաջնորդութիւն մեծամեծ իրաց և զոնտեսութիւնս քաղաքաց, Լիւսանդրեայ տայր 'ի ձեռս զգործս մնաբաշխութեան. ուստի և իբրև ոսնկար Յոնիացւոցն լինելով՝ ասէր. "Գնասցեն արդ նոքա, և իմում մնաբաշխին սպասս հարցեն"։

Ապա բարեղք թուեցաւ յայնժամ Լիւսանդրեայ գնալ երևել և խօսել ընդ Ագեսիղայոսի։ Եւ եղեն նոցա բանք ընդ միմեանս սուղ և լակոնացի։ Ասէ Լիւսանդրոս. "Անշուշտ գու ո՞վ Ագեսիղայէ՝ գիտես իսկ քաջ նուաստացուցանել զբարեկամդ"։ Եւ պատասխանի Ագեսիղայոս. "Եւ կարի՛ իսկ քաջ, 'ի խնդրել նոցա մեծանալ քան զիս. իսկ որք միանգամ՝ զիմ տէրութիւն խնդրեն բարգաւաճ առնել, բաժանորդք այնմիկ իրաւապէս լինիցին"։ Կրկնեաց Լիւսանդրոս.

«Այլ թերևս պատմեցաւ քեզ՝ ո՛վ Ագեսիղայէ՝ աւելի ինչ քան զոր իմ գործեալ ի՛ցէ. ուստի և աղաչեմ զքեզ՝ և վասն օտարաց մարդկանն որ 'ի մեզ ակնկառոյցք են, բարձ մի տացես ինձ 'ի զօրավարու-թեանդ. ուրանօր կարծեացես՝ դժպհի քեզ նուազ լինել ինձ, իսկ պիտանի առաւել»: Իսկ յետ զրուցացս առաքեցաւ Լիւսանդրոս 'ի Հելլեսպոնտոս իբրև փոխանակ զօրավարի. ուրանօր թէպէտ և պրոմոեալ ընդդէմ Ագեսիղայոսի՝ համբէն 'ի գլուխս տանէր զամենայնն ըստ կարգի պաշտամանն. և անդ Միթրիդատէս պարսիկ այր քաջ՝ որոյ և էին իսկ զօրականք ընդ ձեռամբ՝ 'ի գժտութիւն բերեալ ընդ Փարնաբազայ, ետ նմա վտանջել Լիւսանդրոս, և առեալ ածէր զնա առ Ագեսիղայոս: Ապա գործ և ո՛չ մի այլ 'ի ձեռս տուեալ նմա 'ի մարտին յայնմիկ, յետ սակաւուց ելեալ նաւէր 'ի Սպարտիա անշուք. ցասուցեալ ընդդէմ Ագեսիղայոսի և ոխերիմ ատելութեամբ յոյժ ընդդէմ քաղաքին, հաստատեալ 'ի միտս յայնժամ անդանդաղ բան 'ի գործ առնել՝ որչափ ինչ միանգամ նա 'ի վաղընջուց իսկ էր մտաբերեալ փոխել շրջել զկրան՝ օրինակ զայս: 'Ի սերնդոց անտի Հերակլեայ՝ որ խառնեցան ընդ Դորվրեանց և դարձան ապա 'ի Պեղոպոննիսոս, զարմն յոգնաթիւ և ականաւոր երևելի էր յայնժամ 'ի Լակեդեմոնիա. սակայն և ո՛չ հասարակ ամենեքեան բաժանորդք էին ար-

քայութեանն, այլ թագ կապէին յերկուց անտի միայն տոհմից, որոց անուն կարդային Եւրիտոնինիք և Ագիսունիք. իսկ այլք յաշնուականութենէ զարմին ոչ ինչ առաւելեալք էին 'ի քաղաքին քան զայլս 'ի քաղաքայնոց. զի առհասարակ առն առն շուք պատուոյ 'ի նեղքս մատչէր յառաքինութեանց իւրաքանչիւր։

Արդ և Լիւսանդրոս ինքնին 'ի սերնդոց անտի գոլով, իբրև զհամբաւի հարաւնա 'ի նահատակութեանց անտի իւրոց, և ելեն ևս նմա բարեկամք բազումք և զօրացաւ յօրացաւ, ոչինչ հանդարտէր՝ եթէ քաղաքին՝ զոր ինքնին նա բարգաւաճ կացոյց՝ այլք ոմանք տիրացեալ կայցեն ոչինչ լաւագոյնք քան զինքն. կայր յուզէր 'ի միտս իւր յերկուց անտի տոհմիցն առնուլ տանել զտէրութիւնն, և հասարակ ամենայն Հերակղեանց առնել. կամ թէ ըստ կիսոց՝ ոչ Հերակղեանց միայն, այլ և առհասարակ Սպարտացւոց. որպէս զի մի Հերակլեայ զարմին շնորհեսցի բարձն, այլ և որոց իբրու զՀերակլէսն արժանիք գտանիցին առաքինութեամբն, որ և զնա ինքնին առեալ բարձրացոյց 'ի պատիւս աստուածականս։

Ակն ունէր Լիւսանդրոս՝ զայս օրինակ 'ի պայքար զարքայութիւնն հանեալ, և ոչ զմի ոք նախամեծար քան զինքն ունել 'ի Սպարտացւոց անտի։ Ապա զառաջինն հընարս հնարեցաւ և գուն գործեալ ինքնին ածել հաւանեցուցանել զքաղաքացիսն, և

ուսոյց ևս նոցա 'ի բերան ճառ մի զԿղէով-
նեայ Աղիկառնացւոց վասն բանիս այսո-
րիկ։ Այլ ապա 'ի միտս եկեալ՝ եթէ մեծի
և նորասքանչ փոփոխութեան իրացն պէտք
իցեն արդեօք արձակ արձակ և անվանելի
ձեռին, յերևան հանեալ՝ ըստ որում յող-
բերգակ Տեսարանն բնաւորեցաւ՝ Մեն-
քենայ մի յանդիման քաղաքացեացն, հնա-
բիմաց խորհրդով քերթեաց պատգամն իմն
և գուշակութիւնս. իբրու եթէ ոչինչ յա-
ջողեսցի օգտել ինչ 'ի ճարտարախօսութէ
անտի Կղէոմենեայ, մինչև նորակրօնաւոր
արհաւրօք ոմամբք յաստուածակոյս կող-
մանէն ահաբեկ զնոսա արարեալ և ամո-
քեալ՝ հեշտալուր ապա ասացելոցն առ 'ի
նմանէ լինիցին։ Արդ պատմէ մեզ Եփո-
րոս, եթէ փորձ փորձեալ նա կաշառել
զՊիւթիա, ապա զառածանել հրապուրել
և զԴովզոնիդաս 'ի ձեռն փերեկլեայ, և
ոչինչ յաջողեալ անցանել գնայ ինքն 'ի
տաճար անդր Ամմոնի՝ անդանօր 'ի բանի
առնել զհարցուկան զայնոսիկ՝ մթերս ոսկ-
ւոյ 'ի նեղքս մատուցանելով նոցա. իսկ
նոքա սրտմտեալք ընդ բանն՝ արձակեն արս
'ի Լակեդեմոնիա ամբաստանս զԼիսան-
դրեայ. իսկ նորա արձակեալ յամբաստա-
նութեանցն՝ ասէին յայնժամ հրեշտակքն
Լիբիոյ 'ի մեկնել իւրեանց. "Այլ մեք
դատաստան լաւ ևս դատեսցուք ո՞վ Սպար-
տացիք՝ 'ի գալ ձեր 'ի Լիբիա բնակել ընդ
մեզ". քանզի և գոյր իսկ վաղնջուց գու-
շակութիւն՝ անցանել անդր Լակեդեմո-

նացուց 'ի բնակութիւն։ Այլ ողջոյն զնիւ-
թեալ և զխորամանկեալ զհնարս նորա, որ
չէր ինչ արդեօք 'ի սկզբանց անսի յառաջ
շարժեալ 'ի գուշնաքեայ և 'ի հասարակ,
այլ մանաւանդ իբրև Առաջարկութիւն իմն
զՈւսումնականին՝ յեցեալ 'ի հիմունս բա-
զումս և մեծամեծս՝ 'ի ձեռն գժուարա-
կընձիռն առմանց թեակոխէր յԵզբակա-
ցութիւն անդր, զայդ մեք ոճով ասասին
արձանագրեսցուք՝ առն ուրումն զհետ էր-
թեալ պատմաբանի և խմաստասիրի։

Կին ոմն էր 'ի Պոնտոս՝ զհամբաւի հա-
րեալ իբրև որ յղացեալ յԱպողոնէն ելեալ։
Բազումք (որպէս և արժան և իրաւ էր)
ոչինչ հաւատային. իսկ կէսք՝ ընծայեցին
հաւատս. զի և 'ի ծնանել անդ մանկանն՝
բազում մարդիկ և 'ի հոյակապից ևս ինա-
մով պատկառ կացին աննդեան և դաս-
տիարակութեան նորա. և անուն նմա 'ի
պատճառէ իմեմեէ՝ եդաւ Սիղենոս։ Արդ
զսկիզբն զայս առեալ Լիւսանդրոս, ապա
և զայլն ամենայն առ 'ի յինքեանէ նիւթէր
մենքենայէր. էին էին նորա գործակիցք
յայս առանցիկ ոչ սակաւք և յականաւո-
րաց, ոլք և անշուշտ իբրև ճշմարիտ կար-
ծեցուցանէին զճառս ծննդեան մանկանն։
Առ այս և հռչակ հարկանէին նոքա ընդ
Սպարտիա և այլ բան եկեալ 'ի Դեղփիոյ,
իբրու եթէ 'ի պահեստի կայցեն անդանօր
'ի քրմաց պատգամք յոյժ վաղնջուց 'ի
մատեանս գաղտնածածուկս՝ անհուպք և
անմատոյցք. բայց թէ՝ յետ յամայր ժա-

մանակաց գնացեալ անդր ումն այր Ապող-
նածին և հաւատաւոր Ճշգրիտ 'ի Ներքս բե-
րեալ զծննդեանն իւրոյ առաջի ոստիկա-
նաց մատենիցն, առցէ անտի զտախտակս
զպատգամացն զայնոցիկ։

Զայս օրինակ հանդերձեալ կազմեալ
իրացն, պարտ էր այնուհետև Սիղենոսի՝
իբրև Ապողոնի զաւակ երթալ խնդրել
զպատգամն. և անդանօր քահանայիցն
դաշնաւորաց բանին՝ քննութիւն Ճշգրտիւ
գործել և հարցումն առնել նմա և զնել
Ճշգիւ զճառս ծննդեանն նորա. և ապա
հաւանեալք՝ 'ի Ներքս նմա զՄատեանն
մատուցանել իբրև որդւոյն Ապողոնի, որ
և առեալ յայնժամ վերծանեացէ նա ա-
ռաջի բազմաց գուշակութիւնս 'ի նմա, և
յաւէտ իմն՝ որ ալագաւ նիւթեցաւ այն
ամենայն՝ զբանս արքայութեանն Սպար-
տիոյ. և գլուխ բանին՝ ասասցէ, եթէ լա-
ւագոյն ևս և քաջ՝ զիւրեանց արքայս ընտ-
րեալ կարգեացեն Սպարտացիք 'ի քաջաց
քաղաքացեաց։

Արդ յարբունս հասեալ Սիղենոսի և
եկեալ հասեալ ընուլ և ինքն զգործ պաշ-
տամանն իւրոյ, 'ի գերեւս ելանէր Լիսան-
դրոս, և տեսարանն յամբոկ գործոյն չժա-
մանէր. քանզի 'ի գերասանիցն անտի ումն և
'ի գործակցաց վատասրտեալ՝ իբրև ձեռն
'ի գործ պարտ էր առնել, զանգիտեաց և
խոյս ետ 'ի վայրացն։ Այլ սակայն առ
կենդանութեամբն Լիսանդրեայ ո՛չ նշա-
ւակեցաւ նենգն, այլ յետ մահուն. և

մեռաւ նա՝ մինչև Ագեսիղեայ դարձ արա-
րեալ յԱսիոյ՝ 'ի մարտի պատերազմին
Բիովտեան կամ Թէ մանաւանդ ինքն պա-
տաղեցուցեալ 'ի նոյն զԵլլադա. քանզի և
այլազգագոյնս պատմեն զբանն. և կէսք մեղ-
դնեն վասն այնր Լիւսանդրեայ, և կէսք՝
Թեբայեցւոց. իսկ և կէսք այլք՝ հասարակ
գործեն զմեղն. կշտամբեալ զԹեբայե-
ցիսն՝ զի ցիր և ցան կացուցին յԱլիդէ
զզոհսն. և զի՝ 'ի կաշառաբեկ լինել Ան-
դրոկղիդեայ և Ամփիլեթեայ յաղքայէն Պար-
սից՝ դիմեալ անկան 'ի վերայ Փոկէացւոց
և յաւարի առին զգաւառ նոցա, զի զՀե-
լենականն գրգռեացեն մարտ 'ի վերայ Ա-
կեդեմոնացւոց։

Իսկ յաղագս Լիւսանդրոսին, ասեն՝
Եթէ ցասեաւ նա զի Թեբայեցիք միայն
յայնժամ պահանջէին զտաճարորդն յան-
կածէ պատերազմին. ուր անդ առհասա-
րակ այլք 'ի նիզակակցացն լուիկ հանդար-
տեալ կային. և զի՝ բողոք կալան նոքա
վասն դրամոցն՝ զոր առաքեաց նա 'ի Սպար-
տիա. և առաւել քան զամենայն՝ զի ա-
ռաջին նոքա ձեռն էտուն յաղատութիւն
անդր Աթենացւոց ընդդէմ բռնաւորացն
Երեանից՝ զոր կարգեաց էգ Լիւսանդրոս.
յորոց և 'ի շնորհս հաստահարուստ ևս
գործեալ զնոսա՝ վաճառ էտուն Լակեդե-
մոնացիք, զի առհասարակ փախստեայք
յԱթենայ ձերբակալք ածցին միւսան-
գամ անդր 'ի կողմանց կողմանց, և դիմա-
դարձք ածէլեացն՝ իբրև թշնամիք համա-

բեացին. սակայն անգուստ և Թեբայեցիք ընդ հակառակս եռուն վՃիռ, արդարև վայելուչ և հանգունատիպ նահատակութեացն Հերակլեայ և Դիոնիսեայ, հրամանն տուեալ՝ զի ամենայն տուն և ամենայն քաղաք Բիովոտիոյ բաց կացցէ առաջի ամենայն Աթենացւոցն ապաւինելոց 'ի նոսա. և որ ձեռն չտացէ փախստէին 'ի նեղութեան նորա՝ քանքար մի տուժեսցի. և եթէ այր ոք այր զէնս բարձեալ ընդդէմ բռնաւորացն Աթենայ՝ անցցէ ընդ Բիովտիա, անդ այր այր Թեբայեցի կեղծաւորեսցի ոչ տեսանել ինչ և ոչ լսել ինչ: Եւ ոչ վՃիռ լոկ եռուն նոքա զմարդասիրութեանցս և որ արդարև արժանիք Ելլադայ, այլ և արդիւնացուցին. յորժամ անդ Թրասիբուլոս և Նիզակակիցք նորա խաղացեալք հասանել ունել զՓիւղա, չու արարին 'ի Թեբայէ՝ գործակիցք նոցա Թեբայեցիք լինելով՝ տուեալ նոցա զէնս և դրամս և ձեռնտու եղեալ գաղտաբար նահատակութեան գործոյն:

Արդ այսոքիկ էին պատՃառք ցասմանն Ալիսանդրեայ ընդդէմ Թեբայեցւոց. այն՝ որ անգամին 'ի բուսոյ բարուցն անամոքելի 'ի սրտմտութեան իւրում, ապա և 'ի մեքամաղձէ ծերութենն առաւել ևս ժանտացեալ, դրդեաց վառեաց զՊարէտսն արձակել ընդդէմ նոցա գունդ զօրականին, և ինքն զօրավար չու առնէր խաղայր 'ի վերայ: Բայց և Պաւսանիաս արքայ առաքեցաւ անդր հանդերձ զօրու, յարձակել 'ի

Բիովախա մեծապէս շրջանաւ ընդ Կիլիթ-
րոշնէ. իսկ Լիւսանդրոս ստուար գնդաւ
խաղայր անցեալ ընդ Փոկէացիս. և առ-
նոյր նա յայնժամ զքաղաքն Ոլքոմենաց-
ւոց՝ ինքնին անձնատուր առ նա. և յար-
ձակեալ 'ի Լեբադիա՝ քանդէր աւերէր
զնա։ Ապա տայր նամականի առ Պաւսա-
նիաս՝ գալ 'ի Պղատէոյ միանալ ընդ իւր
յԱղիարդիոն, ուր ինքնին նա 'ի ծագէալ
աւուրն եկեալ հասցէ յանդիման պարըս-
պաց նորա. այլ Թղթաբերն հրեշտակին 'ի
ձեռս անկեալ լրտեսացն Թշնամեաց, ա-
ծաւ նամականին առ Թեբայեցիս, որք և
ապաստան զքաղաքն արարեալ 'ի ձեռս
Աթենացւոց նիզակակցացն, ինքեանք
յուղի անկեալ յառաջին պահ գիշերոյն՝
վայր մի կանուխ քան զԼիւսանդրոս ժա-
մանեցին յԱղիարդիոն, և կէսք 'ի նոցանէն
գնացեալ մտանէին 'ի քաղաք անդր։ Իսկ
Լիւսանդրոս զառաջինն հաստատեաց մը-
նալ Պաւսանեայ՝ զտեղն կալեալ իւրով
գնդաւն 'ի վերայ բլրոյ, այլ ապա յառա-
ջեալ աւուրն ոչ ևս հանդարտեաց. առեալ
զգէնսն և խրախոյս նիզակակցացն բար-
ձեալ, խաղայր ձիգ փաղանգաւն 'ի պա-
տուար անդր։ Իսկ որ միանգամ արտաքոյ
ճնացեալն էին Թեբայեցիք, 'ի ձախոյ զքա-
ղաքն ունելով խաղային գնային անկանել
'ի վերջ Թշնամեացն առ ալբերբն՝ որում
անուն կարգան Կիսուսա 3, յորում և
առատպէլեն՝ դայեկացն Դիոնիսեայ լուս-
նալ զտղայն 'ի ծննդեանն, գինեգոյն գո-

լով ՀՐոյն և ականակիտ և քաղցր յար-
բումն։ Եւ անդ վայր մի 'ի բացեայ բու-
սանին Շէրք և Թիւրակք կրեռացեալք, զոր
Աղեարուացեալք իբրև հաւասարս 'ի նեբքս բե-
բեն անդանօր բնակութեանն Ռադամանթեայ, և ցուցանեն ևս զգերեզմանն՝ զոր
նոքա կարդան Ալէա. և է ևս անդանօր
մօտ և շիրիմ Աղկմենեայ. քանզի 'ի նմին
վայրի՝ որպէս ասեն՝ Թաղեցաւ նա, հարա-
նացեալ ընդ Ռադամանթեայ յետ մա-
հուն Ամֆիտրիւոնիեայ։

Իսկ և Թեբայեցիք որ կանուխ մտին 'ի
քաղաք անդր, կազմ և վառեալք 'ի միա-
սին ընդ քաղաքացեացն՝ զտեղի առեալ
կային. իբրև զմօտել Լիւսանդրեայ յակն
արկին 'ի պարիսպ անդր հանդերձ առաջին
նահատակօքն, յանկարծակի յեղակար-
ծումն զգրունսն բացեալ և մոլեգին 'ի վե-
րայ անկեալ՝ անդէն դիւաթաւալ կացու-
ցանէին միանգամայն և զԼիւսանդրոս և
զՀարցուկն՝ որ ընդ նմա, և զայլ ևս նուա-
զունս Թուով. քանզի բազմութիւն նոցա
'ի խուճապ տագնապի զոտս արձակեալ
փախստեայք գնային 'ի փաղանգ անդր.
այլ Թեբայեցիք ոչինչ վատացեալք՝ զհետ
մտեալ քաջաբար վանէին առհասարակ 'ի
վերայ բլրոյն, տապաստս արկեալ 'ի նոցա-
նէ ոգիս հազար։ Անդ անկանէին և 'ի Թե-
բայեցւոց արք երեքհարիւր, նահատա-
կեալք յանդուգն մարտ գնեալ կռուեալ 'ի
դժուարս և յամուրս վայրաց. և էին սոքա
գո՛գ սոգտեալք ոմանք 'ի կուսակցութիւն

անդր Սպարտացւոց. որք աղաղաւ և ջանիւ զձախողակ կարծիսն քերել յանձանց՝ այն-պէս միեցան 'ի կշիռ զոդիս եղեալք, մինչև հուսկ ուրեմն անկան դիտապատառ։

Լուր առ Պաւսանիաս հասեալ ձախողակ մարտին՝ 'ի խաղալ անդ նորա 'ի Պղատէոյ 'ի Թեսպիա, անդէն կարգ տուեալ խաղայր դիմէր 'ի վերայ Աղիսարդիոնի. ուր և եկեալ հասանէր Տրասիբուղոս 'ի Թեբայէ՝ ածեալ ընդ իւր զԱԹենացիսն։ Անդանօր կամեցեալ Պաւսանիաս դուլ առնել մարտին և առնուլ զդիակունսն, որք հին աւուրց Սպարտացւոց դժկամակեալք զայրանային՝ և մատուցեալ ինքնին առ արքայն վկայութիւն գնէին չառնուլ յինքեանս զԼիւսանդրոս 'ի դուլ մարտին, այլ մարտ գնել կռուել առ դիակամբն. եթէ յաղթականք ելցեն՝ շքով այնպէս գերեզմանի տացեն զնա. ապ եթէ յաղթեսցին, շուք յաւելցի նոցա՝ դիտապատառ այնպէս անկեալ ընդ իւրեանց զօրավարին։ Թէպէտ և զայս բանս խօսեցան անդ ծերքն, սեսեալ Պաւսանիաս՝ զի դժնդակ էր մարտիւ վանել զԹեբայեցիսն այն ինչ յաղթականս, և զԼիւսանդրեայ դիակն մօտ պարապին անկեալ՝ դժուարին ուրեմն էր անդուլ մարտիւն 'ի ձեռս բերել՝ թէպէտ և յաղթականք իւրքն իցեն, առեալ արձակեաց Քարոզ, և դադար տուեալ մարտին վերջոանեցոյց զզօրն։ Անցեալք ապա ըստ սահմանս Բիովտիոյ, իբրև միեցան յերկիր բարեկամացն և նիզակակցացն

Պանոպացւոց, անդ թաղեցին զԼիւսանդրոս. ուր և այժմ տեսանի շիրիմ նորա առ Ճանապարհաւն՝ որ հանէ 'ի Դեղիեայ 'ի Քերոնիա։

Իսկ մինչդեռ անդէն բանակեալ կայր զօրն, պատմեն՝ եթէ այր փոկէացի 'ի պատմել իւրում ընկերին որ չէր ընդ նոսա՝ ըզմարան, ասէր եթէ թշնամիք անկան 'ի վերայ նոցա՝ յորժամ Լիւսանդրոս վաղեալ անցեալ էր ընդ Ոպլիտէ. զարմացեալ ընկերին, անդ ոմն Սպարտացի բարեկամ Լիւսանդրեայ՝ հարցանէր զի՞նչ Ոպլիտէդ լցէ. զի անծանօթ էր նմա անունն. ետ պատասխանի, "Ոպլիտէ կայ 'ի նմին վայրի, ուր 'ի թշնամեացն տապաստ անկան մերն նահատակք. քանզի Ոպլիտէ կոչեն զվտակն՝ որ մերձ կայ քաղաքին"։ Զայս լուեալ Սպարտացւոյն՝ հարաւ յարտասուս, և ասէր՝ անշուշտ ուրեմն անխուսափելի է մարդոյ օրահաս մահուն. քանզի և էր խակ վասն Լիւսանդրեայ պատգամ այսպիսի.

"Քեզ ասեմ, զգոյշ կաց 'ի գերահնչակն Ոպլիտեայ,
Եւ 'ի հողածին Վիշապէն՝ որ քեզն դարանի"։

Իսկ կէսք ասեն՝ եթէ Ոպլիտէ ոչ գնայ մերձ Աղիարդեայ, այլ է նա ուղիս 'ի Կորոնիա որ խառնեալ 'ի գետն Փլիարիոն, 'ի միասին անցանէ առ երի քաղաքին այնմիկ. և որ Ոպլիա երբեմն կոչէր, և այժմ Խոմանատոս։ Իսկ Լիւսանդրեայ սպանողն

էր այր Աղիարգացի Նէոքորոս անուն, դրուագ ունելով 'ի վահանին զվիշապ, և զայն թուի՝ ակնարկի առնել պատգամին։ Եւ պատմեն ևս՝ եթէ և Թեբայեցւոց ինքնին՝ վայր մի յեռոյ քան զՊեղոպոնենի սեան մարտն՝ տուաւ պատգամ յԻսմենիոն վասն Դեղեան պատերազմին և վասն Աղիարգեան կռուոյն՝ զոր կռուեցան երեսուն ամաք յետոյ. և էր պատգամն օրինակ զայս.

"Զգոյշ լեր 'ի սահմանէ գայլոյն,
Դու որ դարանեալ կաս 'ի ցանգս.
Եւ յՈրկաղեան բլրոյն, զոր աղուէս
երբէք ոչ թողու"։

Սահման կոչեաց զշրջակայ վայրն Դեղիոնի, ուր սահմանակից Աստիկոյ է Բիոտիա. և Որկաղեան բլուր, զայն վայր՝ զոր այժմ անուանեալ կոչեն Ալոպեկոս այն է՝ Աղուէս, և կայ նա յԱղիարգոն կոյս՝ որ հայի յԵլիկոնա։

Զայս օրինակ ապա 'ի մահ վարեալ Լիւսանդրոս, այնչափ ինն 'ի խոր խոցեցան զառաջինն Լակեդեմոնացիք, զի և մահու դատակնիք 'ի վերայ ածին Պաւսանիաս արքային. այլ նա յանգիման չելեալ առեին՝ յարեաւ փախեաւ 'ի Տեգիա. և անդ ողբաւոր Աթենասայ անցուցանէր ըզկեանս իւր 'ի տաճարին նորա։ Բայց աղքատութիւն Լիւսանդրեայ յերևան եկեալ յետ մահուն նորա, շքեղ ևս գործեաց զառաքինութիւն նորա. այն՝ որ մինչև բազում արծաթոյ ընդ ձեռամբ կալեալ,

և այնչափ զօրութիւն և բազմաց քաղաքաց իշխանութիւն և տէրութիւն մեծ, ոչինչ խնդրեաց օգտածարաւ լինել և ընչաւէ-տութեամբ զտուն իւր փառաւոր առնել՝ ըստ որում արձանագրեաց Թէոպոմպոս. որում հաւատս առաւել է ընծայել 'ի գովել նորա, քան 'ի պարսաւել. քանզի սիրելի յոյժ է առնն՝ պարսաւն քան զգո-վութիւն։

Իսկ յետ այնորիկ՝ որպէս պատմէ մեզ Եփորոս՝ հակառակութիւն յուզեալ 'ի Լակեդեմոնիա ընդ Նիզակակցացն, պէտք եղեն երթալ արտաքս հանել Գիրս իմն, զոր առ իւր ունէր Լիւսանդրոս։ Գնայր ապա Ագեսիղայոս 'ի տուն նորա և գտեալ անդ զմատեանն՝ յորում արձանագրեալ կայր ճառն յաղագս Քաղաքականութեան, յայտ արարեալ եթէ Յեվրիտունեաց և ՅԱգիսունեաց 'ի բաց զարքայութիւնն առ-նուլ պարտ է և հասարակ զթագն դոր-ծել լաւ և քաջ որերոյն, յայնժամ Ագե-սիղայոս վազեր ընթանայր ցուցանել զայն ճառն յանդիման քաղաքացեացն և ճշգրիտ նոցա իմացուցանել զԼիւսանդրոս, զի՞նչ քաղաքացի 'ի ծածուկ կացեալ ելեալ նորա։ Բայց Լակրատիդաս յայնժամ այր զգօն և ուշիմ՝ որ և նախաթոռ Պարեսայն 'ի ժամուն, արդել և ասէր. քան զԼիւսան-դրոս հանել 'ի հողոյ՝ արժան է մանաւանդ զայն ճառ՝ հողոյ տալ ընդ նմա. զի և է իսկ այն ճառ յոյժ համոզակեր հնարիմաց և չարարուեստ նիւթեալ։ Արդ թէպէտ և

բանն 'ի վեր եկ, բազում շուք պատուոյ եառուն Լիւսանդրեայ 'ի մահուն Նորա. և որք միանգամ զգաստերս Նորա 'ի հարանութիւն խնդրեալն էին, և ապա յետ մահուն զաղքատութիւնն ծանուցեալ զԼիւսանդրեայ՝ հրաժեշտ եառուն, պատուհաս կրեցին. իբրու որք յառաջն ընչաւէտ կարծեալ զայրն՝ ապատարկուք եղեն, ապա յաղքատութէն արդար և լաւ գիտացեալ զայրն՝ ուծացան 'ի նմանէ։ Քանզի և էր իսկ 'ի Սպարտիա պատուհաս 'ի վերայ ամուրեաց և անագան ամուսնացելոց և չարեաւ ամուսնացելոց. և վերջնոցս պատուհասին առաւել ևս 'ի ներքոյ կային, որք միանգամ ընդ լաւաց և ընտանեաց՝ գնացեալ խնամութիւն ածէին ընդ ընչեղսն։

Արդ որչափ ինչ 'ի ձեռս՝ պատմեցաք մեք աւագիկ վասն Լիւսանդրեայ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. ԿԷՐԱՄԻՈՆ ասելով ծառային՝ որ է տեղի մի ՅԱԹԷՆԱ, կամէր նշանակել զԿԸՂԷ մինարն, զոր Հելլէնք կոչեն՝ Κεραμεὶς։

2. Քանզի յն. Δράσσω կամ Δράττω. է ըմբռնել, ունել։

3. Մօտ ՅԱՂԻԱՐԳԻՈՆ՝ աղբիւր մի ասէ և Պաւսանիաս, անուն Թիլլիսսա. և Սորաբոն՝ Թիլլիոսա։ Բայց Կիսսուսա՝ միայն սեպհական Պլուտարքեայ է։

ՍԻՍՂԼԱ

ԼԵՒԿԻՈՍ Կուռնելիոս Սիսղլաս էր ըստ զարմին 'ի պատրկաց անտի, իբրու 'ի քաջազարմից ոմանց։ Իսկ 'ի նախնեաց անտի նորա ասեն զՀռուփինոս կացեալ հիւպատոս, այլ սմա քան 'ի շքոյ փառացն՝ առաւել սկանաւոր լինել յանփառունակ անարգութենէն։ Քանզի ըմբռնեցաւ՝ ունել անձին արծաթոյ հատելոյ լոտերս առաւել քան զտասն, որ արգելեալ իսկ էր յօրինացն. ոյր աղագաւ և 'ի ծերակուտէն 'ի բաց անկաւ։ Եւ առ 'ի նմանէն սերեալքն միշտ հիքաբար կեցին. և Սիսղլաս ինքնին սնաւ 'ի հայրենի ժառանգութեանն ոչինչ հարուստ։

Մինչդեռ տակաւին պատանեակ՝ բնակէր 'ի տուն օտարի վարձ տուեալ դուշնաքեայ, որպէս և յերեսս ապա հարկանէին նմա 'ի բարգաւաճել նորա առաւել քան

զարժանն. քանզի փքացեալ իմն նորա և մեծասանծ եղեալ յետ արշաւանին 'ի Լիբիա; պատմեն ասել առ նա ուրուսն պարկեշտի առն և լաւի. "Եւ զինարդ ինչ գու երբէք այր լաւ, որ ոչինչ հօր քո թողեալ քեզ, այդչափ ինչ քո ժառանգեալ է աւադիկ": Քանզի թէպէտ և քաղաքավարութիւն կենաց չէր 'ի միջի յայնժամ Հշգրիտ և անխառն, այլ 'ի վատթարն նկրտեալ էին և գրգանաց շռայլութեան զհետ կրթեալ էին, 'ի վերայ այսր և հաւասարապէս խոտեալ էին և ընչից վատնողք և որք աղքատութեան իւրեանց նախնեացն պատկառ ոչ կային: Իսկ իբրև զօրացաւ, նա և հաստահարուստ եղեալ բազում մարդիկ 'ի մահ վարէր, ոմն յաղտոտագրելոց անտի՝ զորմէ կարծէին թաքուցանել զմի ոք 'ի վտարանդեացն, և հանդերձեալ էին դահավէժ ընդ պարեխս առնել զնա, յերեսս հարկանէր և նա Սիսղայի՝ իբրու ընդ նմա շատ ժամանակ բնակակից լեալ 'ի նմին յարկի՝ ուր տային վարձ, ինքն երկուս հազարս դրամոց վասն վերին դատիկոնին, և Սիսղղաս երիս հազարս վասն նեբքնոյն. զի և երկոցուն նոցա կեանք հազար դրամօք չափ միայն տարբերեալ էին, որ արժեն երկերիւր և յիսուն դրամակշիռս ատոիկեցիս: Արդ զայսոսիկ պատմեն յաղագս առաջին բաղդին Սիսղայի:

Իսկ դիտակ երեսաց նորա և կերպարան մարմնոյն քաջ իսկ տեսանի աւադիկ 'ի

դրոշեալս անդրեաց նորա։ Էին նորա աչք 'ի գոյն կապուտակ՝ խոժոռ և խէթ, և առաջել ևս ահագնահայեաց 'ի գունոյ անտի երեսացն՝ յորմէ բոցանայր շառագնութիւն անհամբոյր պիսակացեալ խայտ 'ի սպիտակէ. ուստի և ասէն զնորա անունն մակդիր լինել գունոյն, և 'ի խեղկատակաց ոմն ՅԱԹԷՆս ծանակեալ վասն այնորիկ զնա՝ յասել իւրում. " Թուլթ սեաւ է Սիսղղաս ալերաթաթաւ "։ Եւ ապա ոչ ինչ անձահ ի ցէ արդեօք 'ի նշանաց աստի խմանալ զբոյս բարուց զառնն. զոր և ասէն անդատին 'ի բնութենէն այնչափ ինն հակամիտեալ 'ի խեղկատակութիւն, զի գոլով պատանի՝ մինչև փառս ինչ անձին ժառանգեալ, էր միշտ կենակից միմոսաց և ծաղրածուաց, և զամենայն անժուժկալութիւն անկղիտանայր ընդ նոսա. և ապա իբրև 'ի ծայրն եհաս աւագութեէ, հանապազոր առեալ ընդ իւր 'ի թատերաց անտի որեար լկտի և լիրբ, կայր ընդ նոսա 'ի գիներբուս. և անդ այր զարամբ եւանէին ասել հեգնութիւնս զաղիրս և խեղկատակութիւնս. գործ նա գործեալ դժպատեհ ալեացն, և անարժան աւագութեան բարձին, անփոյթ արարեալ շատ ինչ 'ի կարևորացն գործոց։ Քանզի 'ի բազմականի անդ մարթ չէր խօսել ընդ Սիսղղայի վասն կարևորացն. և թէպէտ և զայլ ժամանակն այր խրոխտ էր նա և աննուէր և առ 'ի գար հայէր, զրջէր նա անդէն յայր այլ 'ի միսել իւրում 'ի բաժակս և 'ի բազմականս ընդ

որերոյն ընդ այնմիկ, և հեզ և հանդարտ և բաղձալի զինքն 'ի նեբքս ընծայէր հանապազ ընդ միմոսաց արանց և ընդ գուսանացն և ընդ կաքաւչաց. ոչք և առ հասարակ տիրացեալ նմա և յամենայնի հակամիտեալ գտանէին զնա: Եւ ապա պտուղ չար 'ի ցոփութենէ ասոի բնաւորեցան արդէօք այնչափ տուփանք նորա և հեշտախտութիւն նորա, որ և ոչ յալեւոյթ գարձեալ՝ ժուժկալութիւն յանձին եբեր: Հարեալ 'ի սէր՝ մինչդէռ պատանին էր՝ Թատերականի ուրումն անուն Մետրոբիոս, սիրեաց զնա զամենայն աւուրս կենաց իւրոց. իսկ և 'ի սիրոզաց անտի նորա՝ դէպ եղև զի 'ի սիրել նորա կին մի բոզ ընչաւէտ Նիկոպոլէ անուն, այնչափ և զինքն ընծայեցոյց նմա Սիւղղաս՝ մտանելոյն առ նա և 'ի ձեռն հրապուրիցն և 'ի շնորհաշուք առոյգութենէ տիոցն, զի և 'ի մեռանել կնոջն՝ զնա Թողոյր ժառանգ ամենայն գոյից իւրոց. ժառանգ Թողոյր զնա և մօրուն՝ որ ըղձակաթ գտաւ առ նա իբրև առ իւր հարազատ, ուստի և շատ ինչ մեծացաւ նա:

Կարգեալ դանձաւոր՝ նաւէաց 'ի Լիբիա ընդ Մարիոսի որ հիւպատոս եկաց առաջին անգամ՝ 'ի մարտ պատերազմի ընդդէմ Յուգուրթեայ: Հասեալ 'ի բանակ անդր՝ արդոյ գտաւ եթէ յայլ ինչ պատճառս, և եթէ զի 'ի դէպ ժամու իմաստնացաւ բարեկամ առնել զԲոկքոս արքայ Նումադացւոց. քանզի մարդասիրապէս ժողովեալ զհրեշտակս նորա փախստեայս 'ի ձե-

ռաց աւաղակացն Նոմագացւոց, առեալ արձակեաց զնոսա հարուստ պարգևօք և պահապան գնդաւ։ Արդ Բոկքոս'ի վաղնջուց իսկ ատեայր և զանգիտէր ևս 'ի Յուդուրթեայ անէրոյն. ուստի և յայնժամ՝ յապաւինել առ նա Յուդուրթեայ յետ պարտուութեանն՝ նենդ լարեալ նմա, կոչէր առ ինքն զՍիւղղաս. կամէր մանաւանդ 'ի Սիւղղայէ՝ քան յիւրմէ ձերբակալ լինել անէրոյն և մատնիլ 'ի ձեռս թշնամեաց։ Իսկ Սիւղղաս 'ի վեր զբանն հանեալ առ Մարիոս, առեալ ընդ իւր գունդ սակաւաձեռն՝ չոքաւ դիմագրաւ 'ի մեծ վտանգ. վասահ 'ի խուժադուժն եղեալ՝ որ և առ կարևոր ազգականն ուխտադրուժ էր. ետ զանձն 'ի նորա ձեռս, զի զայլ ոք կալցէ։ Իսկ անդ Բոկքոս զերկոսին կալեալ ընդ ձեռամբ, ուխտադրուժ կամ առ մին լինել կամ առ միւսն՝ շատ ինչ ծփեալ 'ի կրկին տարակոյս, ապա հաստատեաց 'ի գլուխ տանել զառաջին նիւթեալն, և առեալ տայր 'ի ձեռս Սիւղղայի զՅուդուրթաս։

Արդ որ յաղթանակեաց 'ի վերայ նորա՝ էր ինքնին Մարիոս. սակայն շուք փառացն՝ զոր 'ի մախանացն առ Մարիոս ընծայեցին Սիւղղայի իբրու նորա յանգ հանեալ գեղեցիկ զնահատակութիւնն, տանջէր 'ի ներքոյ զՄարիոս։ Քանզի Սիւղղաս՝ որ անդրսոին մեծապանծ և ժպիրհ վիճակեալ բարոյից, և որ այն ինչ յանաւագ կենացն արգոյ գտանէր առաջի քաղաքայնոցն, այն-

չափ ինն պատուասիրեալ հպարտացաւ, զի և 'ի մատանին իւր քանդակեալ ձշդրտէր զգործն, և զնոյն մատանի հանապազօր տա-նէր։ Եւ էր 'ի նմա տպաւորեալ ինքնին Բոկքոս՝ իբրու 'ի ձեռս տալ Սիսղղայի զՅուգուրթաս, և Սիսղղայի առնուլ զնա։

Արդ այս բանք 'ի սրանութիւն դրդէին զՄարիոս. սակայն և այնպէս՝ իբրու ոչ ինչ դեռ ևս այնչափ նախանձելի լեալ Սիսղ-ղայի՝ վարէր զնա 'ի պէտս զինուորութեանն. և յերկրորդում հիւպատոսութեան իւ-րում կարգեաց ևս զնա երեսփոխան. և յերրորդումն դարձեալ՝ 'ի հազարապետ. և 'ի նորա ձեռն գործ բազում գեղեցիկ 'ի գլուխս տանէր մեծապէս շահու։ Քան-զի եղեալ երեսփոխան, ձերբակալ արար նա զԿոպիլլոս զօրավար Տեքտոսագացւոց. և եղեալ հազարապետ՝ ամոքեաց զՄարսա-ցիս ժողովուրդ մեծ և յոգնաթիւ՝ բարե-կամ և նիզակակից լինել Հռոմայեցւոց։ Բայց յետ այնորիկ իրազգած եղեալ՝ զի գժուարաբառնալի է ինքն Մարիոսին, որ և ոչինչ մտադիւրագոյնս պատճառս 'ի նեղքս ընծայէր նմա գեղեցիկ նահատա-կութեանց, նա խոչ և խութ ևս արկանէր բարգաւաճելոյն նորա, ողջոյն անձնասուր լինէր 'ի Կատղոս Հոմիչեան Մարիոսի՝ այր լաւ, թէպէտ և սակաւ մի յոյլ 'ի մարտս։ Արդ 'ի նա ապաստան արարեալ Կատղոս գործս մեծամեծս և կարևորս, յոյժ զհամ բաւի հարեալ զօրացաւ Սիսղղաս. և 'ի կռուին կոտորեաց նա զբազումս 'ի բար-

բարոսայ յԱԼԿԵԱՆՍ։ Ապա պաշար ամ-
բարոյն պակասեալ, յանձն իւր առնոյր
Սիւղղաս զՀոգ իրացն և կուտեայ նա կե-
ցակուր ամբաւ, զի և 'ի յաւէլուածոյն 'ի
նեղբս մատուցին Կատղեանք զօրացն Մա-
րիոսի. ոյր աղագաւ՝ որպէս ասէ Սիւղ-
ղաս՝ առաւել ևս սրտնէր Մարիոս։

Արդ սոցուն խէթ 'ի գուշնաքէից աս-
տի դրդեալ և յանտիական սկզբանց, և վա-
րեալ դրդռեալ ապա յապաժոյժ արեանց
քաղաքին, և յամբոխս անհաշտելիս, 'ի
տերութիւն իմն բռնաւոր, և 'ի վեր 'ի վայր
գործել զամենայն, քաջ իսկ 'ի դէմս եբեր
զհանճար զիմաստութեանն Եւրիպիդեայ
և զճշդիւն ծանօթութիւն նորա զբարեացն՝
որ դան 'ի վերայ քաղաքաց. 'ի խրատել
անդ նորա 'ի բաց փախչել 'ի փառասիրու-
թենէ՝ իբրև 'ի ժանտաժուան Ոգւոյ և 'ի
մահահամբոյր առ հասարակ՝ որոց միան-
գամ մերձ ունիցին զնա։ Այլ Սիւղղաս կար-
ծեալ՝ եթէ շուք զինուորութեանն շատ
ի՛ցէ զբռամբ և զքաղաքականն ձգել, անդէն
մեկնեալ 'ի բանակէն և պարապեալ ուշով
'ի պաշտամունս ժողովրդեանն, զհետ
կրթէր զօրավարութեան քաղաքին, այլ
վրիպեցաւ։ Եւ ապա նա զպատճառն 'ի
ժողովուրդ անդր հանեալ, ասէր՝ եթէ դի-
տելով չափ նորա զմեծապէս զիւր բարեկա-
մութիւն ընդ Բոկքոսի, և ակն ունելով
զի եթէ մինչև զօրավարեալ՝ զամբարտա-
տութիւնն զանձամբ առնուցու, որսորդու-
թիւնս արդեօք պայծառս զբարակաց 'ի

հանդէս առցէ և գազանամարտութիւնս զգազանացն Լիբիոյ, այնորիկ աղագաւ զայլս ընտրեցին յայն աւագութիւն՝ զի զնա սովորեսցեն լինել ամբարտաւան։ Այլ թուի յառաջակայիցն քաջիկ խելամուտ լինել Սիսղայի, զի ոչ զբուն խոստովանեցաւ՝ յոյր սակս վրիպեցաւ յայնժամ. քանզի յետ տարւոյն կալաւ նա զզօրավարութիւնն՝ յինքն զժողովուրդն յանկուցանելով կէս մի սպասարկութեամբն, և կէս մի արծաթո

նատուցանէր թագաւոր զԱրիոբարզան։ Բայց 'ի դէգերել նորա առ Եփրատաւ, գայր խօսել ընդ նմա Որոբազոս Պարթև՝ հրեշտակ Արշակայ արքային. թէպէտ և երբէք յառաջ ժամանակաւ բան ինչ չէր երկուց ազգաց ընդ միմեանս. և այս դարձեալ 'ի բախտ մեծ Սիւղղայի, առ որ առաջին 'ի Հռոմայեցւոց էկին հասին Պարթևք՝ դաշնաւոր լինել և նիզակակիցք։ Եւ պատմեն՝ հրամայեալ յայնժամ Սիւղղայի ա-թոռս երիս, մի Արիոբարզանայ, և մի Որոբազեայ, և մի վասն իւր. այնպէս ունկն դնէր Պարթևին՝ բազմեալ ինքն ընդ մէջ երկոցուն։ Այր ազգաւ ասպա և Պարթևաց արքայն 'ի մահ մատնէր զՈրոբազոս՝ զի հանդուրժեաց բանին։ Բայց և զՍիւղղաս գլխովին կէաք 'ի գովութիւն առնուին, զի այնպէս կերպարան պերճ՝ յանձին եբեր արհամարհոտ բարբարոսացն. իսկ կէաք իբրև խրոխտ առաւել և փառամոլ եպերեցին զնա։ Եւ պատմեն՝ եթէ անդ Քաղկիդացի ոմն այր 'ի գնդէն Որոբազեայ՝ ակնկառոյց 'ի Սիւղղաս և մատդիր շարժմանց ոգւոյն և մարմնոյն, և դիտակի պատկերին զննիչ ոչ 'ի վերին երեսս՝ այլ ըստ կանոնաց արուեստին, և 'ի վերայ կացեալ բուսոյ բարուցն, ասաց. Հարկ ուրեմն է առնդ այդմիկ լինել մեծ յոյժ. և զարմանայր ևս՝ զի չև նորա լեալ է առաջին 'ի մարդիկ։

Ապա դարձ արարեալ Սիւղղայի, ամբաստան զնմանէ կայր Կենաովրինոս՝ զի կուտեաց նա ընդդէմ օրինացն՝ մթերս

ընչից 'ի բարեկամ և 'ի դաշնաւոր արքայէ. սակայն երեսս չարարեալ յատենի՝ լռեցուցին զամբաստանութիւնն։ Բայց անդուստ կագն ընդ նա և ընդ Մարիոս անդրէն միւսանգամ բորբոքէր՝ շնչեալ առ 'ի պատուասիրութենէն Բոկքոսի. Քանզի սա 'ի հաճոյս ժողովրդեանն Հռովմայ և Սիսղղայի առեալ նուիրեաց պատկերս 'ի Կապետոլիոն յաղթանակաբերս. և առ երի նոցա եդ և պատկեր ոսկւոյ 'ի տալ իւր Սիսղղայի 'ի ձեռս զՅուգուրթաս։ Յաստեաւ Մարիոս և չհանդուրժեալ և գոտեալինդ ևս եղև 'ի միջոյ զդրոշեալսն զայն բառնալ. իսկ անդուստ և կուսակիցք զկողմն զօրացուցեալ զՍիսղղայի, փոքր միւս ևս 'ի 'ի հերձուածոյ անտի 'ի հուր առ հասարակ դատեր քաղաքն. այլ սանձէր զաղմուկն մարտ պատերազմի նիզակակցացն. անդատին 'ի վաղ ժամանակաց ծխեալ, և յայնժամ սաստիկս բորբոքեալ՝ բոցանայր ընդդէմ քաղաքին։ Ապա յայս մարտ պատերազմի 'ի մեծ և 'ի բազմագիմակ, և աղէտից ամբաւից և ահագին արկածից վտանգաբեր Հռովմայ, ոչինչ գործ քաջութեան 'ի նեղքս բերեալ Մարիոս, յայս արար զի առաքինութեանց մարտից պէտք են միանգամայն և կորովութեան անգամոցն և ուժոյն։ Իսկ յայնժամ Սիսղղաս բազում նահատակութիւնս ցուցեալ մեծամեծս, զհամբաւի հարկանէր իբրև զօրավար մեծ առ քաղաքացիսն, և զօրավար մեծ ևս առ բարեկամսն, և զօրավար յոյժ բարեբաս-

տիկ առ Թշնամին։ Սակայն ոչ նոյն դէպք Տիմոթեայ որդւոյն Կոնոմլի պատահեցին և Սիսղղայի. քանզի Տիմոթեայ Թշնամիքն բնաւ իսկ զգեղեցիկ նահատակութիւնս նորա ընծայեալ բախտին, առեալ նկարեցին զնա 'ի պնակի 'ի քուն, և առ նմա զբախան՝ որ ցանցապատ ուռկանէր զքաղաքս. զայրացեալ նորա և 'ի խոր խոցեալ՝ իբրու որ ողջոյն 'ի փառաց մրցանացն կապտեացեն զնա բանիւն, դարձ նորա երբեմն արարեալ 'ի զինուորութենէն՝ յորում մեծապէս առաքինացաւ, ասէր այսպէս առ ժողովուրդն. " Ձի՛ք արդեաք՝ ա՛ռք աթենացիք՝ բաժին բախտին 'ի նահատակութեանդ ,, ։

Ալ վասն Տիմոթեայ՝ որ այսպէս պանծայր՝ ասեն վրէժխնդիր լինել նմա դիցուհւոյն, զի և գործ մի փառաւոր ոչինչ այնուհետև 'ի ներքս բերէր Տիմոթէոս. և նորա ճախողակս գնացեալ իրք և 'ի Թշնամութիւն ևս բերեալ ընդ ժողովրդեան, հուսկ ուրեմն տարադիր եղանէր 'ի քաղաքէն։ Իսկ Սիսղղաս ինքնին ոչ միայն խընդայր լսել զօժանդակել իւր առ 'ի բախտէն, այլ և 'ի շուք մրցանացն և առ 'ի զիւր զօրավիգն հաւատարիմ գործել յաստուածակոյս կողմանէն, ինքնին զայնոսիկ բախտին ընծայէր. կամ առ 'ի պարծանս, կամ Թէ անշուշտ այնպէս կրթեալ յաստուածակողմն անդր։ Քանզի և 'ի Յիշատակագիրս իւր ինքնին արձանագրէ, Եթէ 'ի գործոց անտի իւրոց ոչ ուշով գործեալքն, այլ որք յեղակարծս, գեղեցիկս ևս յաջողեցան նմա։

Առ այս դարձեալ՝ յասել նորա ծնեալ զանձն՝ քան վասն մարմոյ՝ առաւել ևս վասն բախտին, քաջայայտ բախտին ընծայէ՝ քան եթէ առաքինութեանն. և համբուն՝ թուի թէ զհետ Փաջին այնորիկ ողջոյն իսկ կրթեալ էր Սիսղղաս. զի և աստուածեան գոգցես երանութիւն համարեցաւ նա զհամակամութիւն իւր ընդ Մեսեղեայ հանդիսապատիւ առն և աներոյն. քանզի յորմէ խիթայր բազում հակառակամարտ հանդիսից, եգիտ զնա իւր իշխանակից հեզ և հեշտալուր։ Դարձեալ առ այս՝ յիւր Յիշատակագիրսն նուիրեալ Լուկուղղեայ, իրատէ զնա՝ մի՛ ինչ այլ հաստատուն կարծել՝ քան զդիշերայնոյն զառ նա անընջալուր պատգամն զՓաջին։ Եւ պատմէ՝ եթէ յառաքել անդ իւրում բանակաւ 'ի մարտ ընդդէմ դաշնաւորացն, վերապ ահագին պատառեալ բացաւ յերկրին մերձ Լաւերնայ, և հուր մեծ յորդեալ ելանէր, և բոցոյն նշոյլք հատանէին յերկինս, և անդ խղճք և գուշակք զայս ասային. եթէ 'ի քաջաց ոմն այր և 'ի դիտակ պատկերին շքեղ՝ տիրացեալ համոզեսցէ զաղմուկ քաղաքին. և զայն այր՝ զանձն գլխովին ասէր Սիսղղաս. զի և ըստ դիտակին՝ յոյժ գեղազարդ էր 'ի վարսից ոսկեթել հերացն. և ըստ քաջութեանն դարձեալ՝ անվեհեր 'ի քաջաց ասէր զանձն յետ այնչափ գեղեցիկ նահատակութեանցն։ Այս էին նորա խորհուրդք առ աստուածութիւն անդր։

Իսկ յայլ ինչ բարոյն բազմադիմակ էր նա և տարօրինակ. շատ ինչ յափշտակէր ունէր, և շատ ևս տայր ընծայէր. շուք դնէր գժպատեհս, դարձեալ և ոտնհար լինէր. սպաս հարկանէր՝ որոց միանգամ լինքն պէտս ունէր. և տմարդի վայրենանոյր՝ առ որս կարօտեալ ինչ էին նմա. զի և գժուարին էր համօրէն 'ի վերայ կալ բնութեան առն, խիզախ արդեօք և հպարտ, եթէ մարդելոյզ իցէ և շնթող։ Քանզի և յանհաւասարութենէ անտի նորա 'ի պատուհասել, է զի դատակնիք գժնդակ 'ի վերայ ածելով դուշնաքեայ յանցանաց, և է դարձեալ մեծաց քարոզականաց հեղաբար տարեալ, է զի հեշտաբար ամոքեալ յանբերելի յանցաւորութիւնան, և է դարձեալ խուն և փոքրոգի խակութեանց պատուհաս տուեալ մահու և ընչից գրաւելոյ. յայսպիսեաց աստի գուշակեսցէ ոք թերևս եթէ նա անդստին 'ի բնութենէն գոլով ցասկոտ և անհամբոյր, կամակար սանձէր զանուէր զկիրսն ըստ դէպ ժամանմանակին։ Որպէս և 'ի նիզակակցաց մարտին՝ յորժամ նորա զօրականք բրօք և բրոնաքարօք սպանին զայր երևելի զիւր երեսփոխան և զօրավար կացեալ՝ Ալբինոս անուն, զանց արար և պատուհաս չածէր մեծի յանցանացն. այլ կերպարան պերճ յանձին բերեալ ասէր այսպէս, եթէ նորին աղագաւ արդեօք յօժարամիտք ևս լինիցին նորա զօրականք 'ի մարտ և խնամոտք առաւել 'ի նահատակութիւնս և 'ի մեր-

ցանս՝ քերել յանձանց քաջութեամբ իւրեանց զկեղտն զայն։

Եւ ոչ դարձեալ երեսս ինչ առնէր իւրոց ամբաստանացն, այլ զմոսաւ ածեալ նկուն առնէլ տապալէլ զՄարիոս, և տեսեալ ևս զվճարել մարտին ընդդէմ Նիղակակցացն, և զհետ կրթեալ զօրավարութեան ընդդէմ Միհրդատայ, սպաս և շուք հարկանէր իւրում զօրականին. և ապա անցեալ 'ի քաղաք անդր՝ ամաց յինանց կարգեցաւ հիւպատոս 'ի միասին ընդ Կուինտոսի Պոմպէոսի. առ այս՝ և հարսանիս հոյակապ տարաւ նա՝ կին ածեալ զԿեկիլիա դուստր Մետեղլոսի քահանայապետին. որ աղագաւ ցուցս շատ նուագաց յերգ առին խառնիճաղանչն ընդդէմ նորա, և բազումք ևս յաւագաց Եպերէին զՀարսանիսն զայն, անարժան կնոջն՝ որպէս ասէ Տիտոս (Լիվիոս)՝ համարեալ զայրն, զոր հիւպատեան իսկ բարձին համարէին արժանի։ Այլ նա ոչ զսա միայն յայնժամ ած 'ի կին, այլ առաջին 'ի պատանեկութեանն ած զԻլիա, յորմէ ծնաւ նմա դստրիկ մի. և երկրորդ՝ զԵլիա, և երրորդ՝ զԿիլիա, զոր և արձակեաց յիւրմէն իբրու որ ամուլ իցէ, սակայն շուք եդեալ նմա և շատ գովեալ զնա և ընծայս ևս 'ի ձեռս տուեալ նմա. և յետ սակաւ աւուրց ամուսնացեալ ընդ Մետելեայ, թուեցաւ իմն՝ եթէ մեղ ամլութեան կարկատեալ զԿիլիայ՝ արձակեաց զի կին ածցէ զՄետելիա։ Բայց զՄետելիա 'ի շուք մեծապէս

պատուոյ կալաւ հանապազ Սիւղղաս, զի և ժողովուրդք Հռովմայ 'ի խնդրել դարձուցանել զվտարանդիսն 'ի հերձուածոյն Մարիոսի՝ որում ընդդէմ դարձաւ Սիւղղաս, աղաչաւորք մատեան 'ի բարեխօսութիւն Մետելէայ։ Եւ թուի թէ և ընդ Ամենացիս խստիւ գնաց Սիւղղաս յառնուլ քաղաքին. զի 'ի պարսպաց անտի այպանեալ նոցա զՄետելիա՝ թշնամանս արձակէցին 'ի նա։ Այլ վասն այսոցիկ զկնի ուրեմն։

Իակ յայնժամ Սիւղղաս դուշնաքեայ զհիւպատոսութիւնն համարեալ առ հանդերձելովքն՝ որոց տարփայր, վաւէր մեծաւ ցանկութեամբ 'ի մարտն Միհրդատեան. այլ էր նմա նախանձաւոր և խոչ ընդ ոսն Մարիոս. այն՝ որ 'ի խօլական և 'ի սանձակոտոր կրից փառացն և պատուոյն, կիրք անծերանալիք, թէպէտ և այր ծանրագանգուղ մարմնով և առ ծերութեանն այն ինչ հրաժեշտ 'ի զօրավարութենէ տուեալ այլոց արշաւանաց, 'ի վերայ այսր և յայնժամ կրթէր տարփմամբ 'ի մարտս տարաշխարհս և յայնկոյս ծովուն։ Ապա Սիւղղաս 'ի գործ ինչ իւր յայնժամ մեկնեալ 'ի բանակն, նա առ անին նիւթէր մենքենայէր զմահահոտ հերձուածն՝ վտանգաբեր Հռովմայ որչափ ինչ ոչ փնտռեցին զնա ամենայն մարդք պատերազմաց. զոր և կանուխ անդ 'ի Քաջաց ոմն՝ նշանաք ազգեաց։ Քանզի հուր հարեալ ինքնին 'ի տիգաբուն 'ի կրելիս դրօշակաց, հազիւ ուրեմն շինջանէր։ Առ այս՝ և ագռաւք երեք

ածեալ յառաջ զձագս իւրեանց՝ գիշա-
տէին, և զմնացորդն տանէին 'ի բոյն անդր։
Դարձեալ և մկունք կրծեալ զոսկին նուի-
րական 'ի մեհենին, և աւելածուքն ըմբը-
նեալ 'ի ծուղակի զքածն, և անդանօր ցկնեալ
նա հինգ, եկեր զերիսն։ Այլ նշան բնա-
ւից վեհագոյն, զի յանամպրոպ օդոցն 'ի
պարզ և 'ի յստակ՝ ձայն փողոյ հնչեաց
ուժգնակի և եղերաձայն, զի և առ հա-
սարակ պակուցեալք զդողանի հարան ընդ
սաստկութիւնն։

Իսկ անդուստ Տիւրրենացւոց վիպասանքն
ազգ առնէին՝ 'ի հրեշից անտի ակնարկեալ
փոփոխութեան մարդկան յազգ այլ, և
տիեզերաց նորոգութեան. և ասէին՝ զայն
ազգս յաշխարհի ութ թուով, աննմանք
միմեանց կենօք և բարոյիւք. և միում միում
'ի նոցանէն թիւ ժամանակաց սահմանեալ
յաստուածուստ, որ կատարեսցի 'ի շրջան
մեծի տարւոյն. և 'ի սպառուած միոյն և 'ի
սկիզբն միւսոյն, նշան պանչելի շարժի յեր-
կրէ կամ յերկնից, ուստի և այսոցիկ հոգա-
ծուքն և խելամուտքն յայտնի տեսանեն
ծնանել մարդկան՝ այլօրինակք և այլա-
բարոյք. որոց և նուազ կամ առաւել խնա-
մածուք են դեք՝ քան առաջնոցն. քանզի
'ի փոփոխել ազգացս այսոցիկ, նա և այլ
իրք՝ ըստ նոցա բանին՝ մեծապէս նորոգին.
և գուշակաց արուեստն 'ի միում անդ յազ-
գի շուք առաւել տարցի, օժանդակեալ
'ի նախաքարոզ բանից՝ 'ի տալ անդդից կա-
նուխ նշանս յստակահայեաց զհանդերձե-

լոցն. իսկ 'ի միւսումն՝ հիւսացեալ գոցի, գուշակութիւնս առնելով բազում անգամ վայրապար, և նշանս ունելով ուսկէտս և աղօտահայեաց գործիս ճշմարտութեան զհանդերձելոցն։ Արդ օրինակ զայս Տիւրրենացւոց. քաջ վիպասանքդ կցկցէին և քան զայլս գերազանցեալքն 'ի գիտութեան։ Իսկ մինչդեռ ծերակոյտն խոհուրդ հարցեալ վասն այսոցիկ յլղձից և 'ի գուշակաց, և դեգերեալ կային 'ի տաճարին Ենիւոնեայ, անդուստ ճնճղուկ մի 'ի նեղքս թռուցեալ առաջի ամենեցուն՝ բարձեալ 'ի կտուցն ճպուռն՝ արկանէր 'ի վայր զկէս նորա, և զաւելին առեալ՝ թռանէր անդրէն։ Ապա յայսմանէ գուշակեցին հրաշագէտքն աղմուկ շփոթից և հերձուած մեծ ընդ ընչեղս և ընդ քաղաքական ամբոխս և ընդ շինական. քանզի վերջինքդ ձայնարձակք են իբրև ճպուռն, և առաջինքդ՝ մենացեալք են յագարակս։

Արդ՝ յայնժամ Մարիոս յինքն ձգեալ յանկուցանէր զՍուլպիկիոս, այր եղեռնաւոր յոյժ. զի և ինդրեսցի երբէք ո՛չ՝ քան զո՞ ոք 'ի մարդկանէ նա ապիրատ ևս իցէ. այլ թէ յիմ իմիք նա յապիրատութեան վեհագոյն անձին իւր իցէ։ Այնչափ իմն առհասարակ մթերեալ կային յայրն ա-նագորոյն կիրք, և յանդգնութիւն ժպիրհ, և ագահութիւն ընչաքաղց. և անքննաբար խորհրդով և յայրատագոյնս անկղեսանայր յամենայն վատթարութիւն և յամենայն անզգամութիւն. և աշխարհաւ 'ի

վաճառ հանեալ զքաղաքացի կարդ ղՀռոմ-
մայ առաջի աղատագրելոց և վարձուորաց
տանց, թուէր հաշուէր զդինս վաճառուն
'ի տրապիզ մի եդեալ 'ի հրապարակի։
Էին նորա թիկնապահք երեքհազար, և
հանապազ պարառեալ ունէր բազմութիւն
զպատանեաց ասպետաց, որոց և անուն
կարդայր՝ Դերասինկղիտոսս. և օրէնս հաս-
տատեալ՝ բնաւ ուրուք 'ի ծերակուտէն ոչ
պարտել առաւել քան զդրամակշիռս եր-
կու հազար, ինքն ասա յետ մահուանն ե-
թող պարաս երից հարիւրոց բիւրուց։ Սա
այս այր դրդեալ և հրապուրեալ 'ի Մա-
րիոսէ ընդդէմ խուժանին, և 'ի բուռն կա-
լեալ զամենայնն բռնութեամբ և 'ի սուր,
արձանագրեաց օրէնս բազում անբարիս.
ընդ որս և զզօրավարութեանն Մարիոսի 'ի
մարտն Միհրդատեան. այր աղագաւ վճիռ
զչաբաթանալոյն տուեալ հիւպատոսացն,
ինքն իւրոյ հրոսակին հորդան տուեալ ընդ-
դէմ նոցա, մինչդեռ անդ եկեղեցացեալ
կային առ տաճարին Դիոսկուրեանցն՝ սպան
զբազումս. ընդ որս զպատանեակ որդի
Պոմպէոսի հիւպատոսին 'ի հրապարակի։

Այլ Պոմպէոս խոյս տուեալ փախեաւ.
իսկ Սիւղլաս վանեալ մինչև 'ի Նեբքս 'ի
տունն Մարիոսի, սոխպեցաւ եկանել ար-
տաքս և լուծանել զշաբաթումն։ Ուստի
և Սուլպիկիոս 'ի բաց 'ի հիւպատոսութենէն
առնէր զՊոմպէոս, այլ ոչ և զՍիւղլաս. և
միայն զզօրավարութիւն մարտին Միհրդա-
տայ առեալ 'ի նմանէ՝ դարձուցանէր 'ի

Մարիոս. ապա անդէն արձակէր և հազա-
րապետս զօրականին 'ի Նոցա՝ տալ 'ի նոցա
ձեռս զզօրն և յանձն առնել Մարիոսի։
Սակայն քան զնոսա աճապարեալ Սիւղ-
ղաս 'ի բանակ անդր, զօրականք 'ի լուր բա-
նին քարկոծ զհազարապետան արարեալ,
անդուստ և Մարիոս 'ի քաղաքին 'ի մահ
վարէր զբարեկամն Սիւղղայի և զինչս նո-
ցա. և ապա անդ էր տեսանել՝ զի կէսք
ամայի զկարգն լքեալք՝ 'ի բանակացն չու
առնէին 'ի քաղաքն, և կէսք դարձեալ 'ի
քաղաքէն՝ 'ի բանակսն. և Սինկղիտոսն
ինքնին յիշխանութենէն կապտեալ՝ դէտ
ակն ունէր հրամանացն առ 'ի Մարիոսէ
և 'ի Սուլպիկեայ։

Ապա լուր առեալ զի դիմեալ խաղայ
Սիւղղաս ընդդէմ քաղաքին, առեալ ար-
ձակեաց առ նա երկուս ոմանս 'ի զօրա-
վարաց զԲրուտոս և զՍերվիլիոս արգելուլ
զչուն նորա. իբրև նոքա յաւակնագոյնս
իմն սկսան խօսել ընդ Սիւղղայի, առատա-
նային զօրականք 'ի սիրտս իւրեանց սպանա-
նել զնոսա, սակայն առեալ և ջաղխեալ
զգաւազանս նոցա և զծիրանի պատմու-
ճանսն 'ի բաց 'ի թիկանցն կորզեալ, և շատ
ինչ թշնամանս մեծամեծս 'ի վերայ ա-
ծեալ, այնպէս արձակէին յետս։ Եւ նո-
քա այնպէս խայտառակ կապտեալ 'ի նշա-
նակաց զօրավարութեանն, անդ մեծապէս
արտաթափ առնէին զտեսանելիսն. և քաջ
իսկ անդարմանելի էր այնուհետև հեր-
ձուածն և անվանելի։ Մարիոս հետամուտ

ողջոյն 'ի պատրաստութիւն մարտին, ան-
դուստ և Սիսղաս խաղայր գայր 'ի Նոլայէ
ողջ վեց լեգէոնախումբ զօրու՝ հանդերձ ի-
խանակցաւն։ Եւ Թէպէտ և զօրականն
վառեալ դէպ ուղիղ խաղալ 'ի քաղաք
անդր, վարանէր Սիսղաս զանգիտեալ 'ի
մօտալուտ վտանգէն։

Ապա զոհ զոհեալ, անդանօր հարցուն
Պոսսումիոս բարեգուշակ հմայից 'ի վերայ
կացեալ՝ զերկոսին ցձեռան կարկառեալ առ
Սիսղաս ստիպէր զնա, կապել զինքն և 'ի
դիպահոլ ունել մինչև 'ի վճար մարտին.
յանձն առնոյր պատուհաս վերջին՝ Թէ ոչ
վաղվաղակի բարեաւ վճարեսցի ամենայնն։
Առ այս դարձեալ և պատմեն՝ և նմին իսկ
Սիսղայի յանուրջս երևեալ դիցուհւոյն՝ ո-
րում շուք դնեն Հռոմայեցիք. այլ զնորա
պաշտօնն 'ի Կապադովկացւոց անտի ուսան
նոքա, Եթէ Լուսին իցէ այդ, Եթէ Ա-
նաս, կամ Թէ Ենիւոն։ և Թուէր՝ 'ի վե-
րայ կացեալ նորա դիցուհւոյն տալ նմա 'ի
ձեռս շանթ, և մի մի զանուն կարդացեալ
զԹշնամեացն, հրաման տալ շանթահար 'ի
նոսա լինել. և Թուէր այնպէս շանթահար
տապաստ անկանել նոցա, և ապա անբերեալ
լինել։ Ոյր աղաղաւ և քաջալերս առեալ
Սիսղաս յերևմանէն, և պատմեալ զայն
յառաւօտուն իշխանակցին, ելեալ խաղայր
բանակաւն 'ի Հռոմ։

Հասեալ մօտ 'ի Պիկենա ընդ առաջ եղեն
նմա դեսպանք, աղաչէին մի այնպէս ձե-
պով և կշեռ յարձակել 'ի քաղաք անդր.

քանզի և Սինկղէտոան ինքնին պատրաստ է շնորհել նմա զարդարն և զվայելուչն։ Նա եցոյց հաւանել նոցա և խոստացաւ ևս անդէն բանակ հարկանել, և հրաման տայր զօրագլխացն ըստ սովորութեանն չափել զվայր բանակհարութեանցն. մինչև աներկմիտ հաւատով դարձան յեռս դեսպանքն։ Իբրև նոքա մեկնեցան, անդէն և ինքն գունդ հատանէր 'ի ձեռն Լեւկիոսի Բասիլեայ և Գայիոսի Մոմմիոսի, և նոքաք հասեալ տիրէր 'ի վերայ միոյ 'ի դրացն և պարապացն շուրջանակի զԵսկիւլինեան բլրոնն. և ինքն խաղայր զկնի տագնապաւ։ Ապա Բասիլիոս հորդան տուեալ իւրովքն 'ի մէջ քաղաքին յառաջագէմ ունել դրաւել, անդ խուժանն յոգնաթիւ անդէն ընդդէմ նորա 'ի բարձանց անտի հոսեալ ալիւսս կղմնորացն և վերդս, սանձէին զՀրոմն և ընկրկէին 'ի պարիսպ անդր։

Յայն շտապ տագնապի 'ի վերայ հասեալ և Սիւղղաս և զգործն զայն տեսեալ, ձայն բարձեալ գոչէր հրձիգ 'ի տունն լինել. և առեալ ջահ ինքն առաջի ընթանայր ամենեցուն, և հրաման տայր աղեղնաւորացն վաքինս արտաշէկս աղեղնաւորել 'ի վերայ տանեացն. այնպէս լիմն բերեալ 'ի կիրս անիսորհուրդս, և մոլեգինս սրտմտեալ 'ի ժամուն, զի և բաց 'ի թշնամեաց տեսանէր և ոչինչ. և անիսրաբար և անկարեկիր անձամբ միանգամայն 'ի բարեկամն, 'ի մերձաւորս, յընտանիսն, յայս կոյս յայն կոյս վազէր և հուր հարկանէր, ոչինչ որո-

չէր զանմեղս 'ի պարտաւորաց։ Իսկ յայն-
ժամ Մարիոս վանեալ ընկրկեալ մինչև 'ի
մեհեան անդր Երկրի, քարոզ կարդաց զա-
զատութեան ծառայիցն՝ որ միանգամ մարտ
եդեալ կռուեցին. այլ 'ի վերջէ նեղեալ
'ի թշնամեացն՝ խոյս տուեալ ելանէր 'ի
քաղաքէն։

Իբրև այս այսպէս կատարեցաւ, խըմ-
բեալ յետ այնորիկ Սիւղլաս զծերակոյսն,
տայր դատակնիք ածել մահու 'ի վերայ Մա-
րիոսի և սակաւուց ոմանց, ընդ որս և
Սուլպիկեայ ժողովրդապետի. որում մատն
և դուշակ լինէր յայնժամ ոմն 'ի ծառայից-
տալ ետ Սիւղլաս ազատութիւն ծառային,
այլ գահավէժ ընդ պարեխս առնէր զնա։
Ապա սակ բազում արծաթոյ հրատարա-
կէր 'ի սպանութիւն Մարիոսի. այլ ոչ մարդա-
սիրապէս լինչ և ոչ դարձեալ քաղաքական
հանճարով գնաց Սիւղլաս 'ի բանին ընդ-
դէմ՝ առն. այն՝ յոյր ձեռս վայրիկ մի յա-
ռաջ անկեալ 'ի տուն նորա ապաւինեցաւ
և արձակեցաւ խաղաղութեամբ. որ թէ երբէք
զնա արձակեալ յայնժամ չէր Մարիոսի, և
տուեալ ևս էր Սուլպիկեայ սպանանել զնա,
ինքն յառաջագէմ կացեալ էր յամենայնին.
սակայն այնպէս նեռոդամիտ գտեալ առնա,
չետես ապա զդարձ փոխարինին՝ յետ սա-
կաւ աւուրց 'ի նոյն ըմբռնեալ վտանգ։ Եւ
յայնմանէ Սիւղլաս 'ի խոր խոցեաց զծե-
րակոյսն 'ի ծածուկ. սակայն յայտնի խու-
ժան ամբոխին 'ի դէմս երբեր նմա զատե-
լութիւն և զվրէժխնդրութիւն. յորժամ

անդանօր Նոնիոս քեռորդին Սիւղղայի և Սէրվիոս՝ որ 'ի Թիկունս զնա ունելով թեկն ածին զաւագութեան բարձից, մերժեալ խոռեցան 'ի ժողովրդոց. և ընտրեցան ընդ նոցա մարդիկն՝ որոց շուք պատուոյն գժոխ-ըմբերելի թուէր Սիւղղայի։

Այլ ինքն Սիւղղաս կեղծաւորեցաւ խնդալ, զի այնպէս յիւր ձեռն ազատ էն ժողովուրդք առնել զհաճոյս. առ այս՝ և յամոքել զատելութիւն խուժանին առ նա՝ ընտրեալ կարդէր 'ի հիւպատոս զԼեվիոս Կիննաս 'ի հակառակ հերձուածոյն. տուեալ նմա նախ վկայութիւն դնել նզովիւք չափ և երդմամբ՝ զի բարեկամ և նիզակակից կից կայցէ իրաց իւրոց։ Ապա ելեալ Կիննաս 'ի Կապետոլիոն, կալեալ քար 'ի ձեռին երդնոյր և նզովս ևս կարդայր անձին, զի եթէ նա չկայցէ միշտ հաստատուն բարեկամութեամբ ընդ Սիւղղայի, տարադէմ ձգեսցի նա 'ի քաղաքէն՝ զոր օրինակ ձգէ նա զքարն 'ի ձեռաց. ասաց և արկ 'ի գետին զքարն՝ առաջի ոչ սակաւուց մարդկան։ Այն ինչ զհիւպատոսութիւնն 'ի բուռն արկեալ, պատրաստեցաւ շարժել շրջել զկարգ իրացն՝ և ամբաստանութիւն ևս կազմեաց յառենի ընդդէմ Սիւղղայի, և տայր Վիրգինիոսի ժողովրդապետի ամբաստան կալ զնմանէ։

Բայց Սիւղղաս ողջոյն հրաժարական տուեալ նմա և առեռնակալացն, էլ և յուղի անկաւ ընդդէմ Մինրդատայ։ Եւ պատմեն՝ եթէ յաւուրսն յորս զհանդէս նա-

ւացն խաղաղացուցանէր Սիսղղաս յԻտալիոյ, նշանք ևս բազումք առուսածային երևեցան Միհրդատայ՝ որ գեգերեալ կայր յայնժամ 'ի Պերգամոն։ Քանզի և Յաղթութիւնն պսակաբեր 'ի Պերգամացւոց ելեալ 'ի բարձանց գործեաք ոմանքք 'ի պսակել զՄիհրդատ, հասեալ մօտ 'ի գլուխն՝ անդ խորասկէր, և պսակն ինքնին անկեալ 'ի գետին 'ի մէջ թատերն ողջոյն ջախջախէր։ Եւ ապա այս դէպ արհաւիրս 'ի ժողովուրդն արկանէր և սրտաբեկ զՄիհրդատ առնէր. թէպէտ և 'ի ժամուն յառաջագէմ յոյժ էին իրք առն արտաքոյ ակնկալութեան նորա։ Քանզի զԱսիա 'ի ձեռաց հանեալ Հռոմայեցւոց, և զԲիւթինիա և զԿապադովկիա յաշքայից նոցա, ինքն գադարեալ նստէր 'ի Պերգամոն. մթերս ընչից և տերութիւնս և բռնաւորութիւնս բաշխէր բարեկամացն։ Եւ անդ յորդւոցն նորա՝ մին թագ կապեալ զվաղնջուցն՝ նստէր յանդորրու 'ի Պոնտոս և 'ի Բոսփորոն, մինչև յանապատ անդր Մէոտիդեայ։

Եւ միւս ոմն դարձեալ՝ այն էր Արիարաթէս՝ զօրու ծանու ընդ բռամբ արկանէր զԹրակիա և զՄակեդոնիա. անդուստ և զօրավարք նորա ստուար գնդաւ հասեալ նուաճէին և զայլ ևս դաւառս. և էր 'ի նեղքս 'ի նոսա աւագ Աղքեղայոս ինքնին՝ որ նաւուք հասեալ տիրացեալ էր ողջոյն ծովուն, և ընդ լծով ծառայութեան կացուցեալ զԿիւկլադեան կղզին, և որչափ ինչ 'ի նեղքս 'ի Մալէա, մինչև և զԵւպէա ինքնին գլխո-

վին. և խաղացեալ ՅԱԹԵՆայ՝ որ նատոցն էր պատերազմին, ապստամբեցուցանէր 'ի Հռոմայեցւոց զամենայն ժողովուրդս Ելլադայ մինչև 'ի Թեսաղիա. սակայն և խոչ ընդ ոտն դառանէր նա առ Քերոնիեաւ։ Քանզի անդ նմա ընդառաջ ելանէր Բրեատիոս Սուրբաս երեսփոխան Սենատոսի զօրավարի Մակեդոնիոյ և այր երևելի քաջութեամբ և իմաստութեամբ։ Սա այս Բրեատիոս ամենայն զօրութեամբ զդէմ կալեալ Աբքեղայոսի, այն՝ որ իբրև հեղեղ յորդեալ սաստիկ՝ այնպէս խաղայր հորդան տայր ընդ մէջ Բիսոնտիոյ. և յերիս կռիւս 'ի պարտութիւն մատնեալ զնա առ Քերոնիեաւ, վանեաց ընկրկեաց զնա միւսանգամ 'ի ծով անդր։

Այլ հրաման առ նա հասեալ 'ի ձեռն Լուկիոսի Լուկուղղոսի տեղի տալ Սիսղղայի՝ որ առ դուրս կայր, և 'ի նա ապատան զմարտն առնել ըստ սահմանի վճռոյն, անդէն փութապէս լքեալ նա զԲիսոնտիա, դառնայր յետս առ Սենատոս. Թէպէտ և ամենայնն՝ որ առ նովաւ՝ գեղեցիկս յաջողեալ էր 'ի վեր քան զայոյս ակնկալութեանն. և Ելլադա ինքնին մտադիւրագոյնս հակամիտեալ էր 'ի փոփոխութիւն անդր վասն քաջութեան և լաւութեան առն։ Այս ինչ աւադիկ նահատակութիւնք՝ գործոցն Բրեատիոսի։

Իսկ յայնժամ առ Սիսղղաս գային հասանէին դեսպանութիւնք հրաւիրակք նմա առ հասարակ 'ի քաղաքաց, բայց ՅԱԹԵ-

նայ՝ որ 'ի հարկի հնազանդութեան կայր յայնժամ Արիստոտելի բռնաւորի։ Ուստի և արագ արագ խաղաց նա ընդդէմ նորա ողջոյն բանտկաւն, և պատեալ և զՊիրէոս՝ պաշարումն ածէր նմա. զամենայն հնարս հնարէր և զամենայն մարտ յարդարէր առնուլ զնա. և եթէ նորա անդանօր դէգերեալ էր ո՛չ բազում ժամանակ՝ անշուշտ 'ի բուռն զքաղաքն՝ որ 'ի վերոյ՝ արկանէր անվտանգ. քանզի և յոգիս ապատան կայր քաղաքն սովեալ 'ի կարիւորացն։ Սակայն նա շտապեցաւ դառնալ 'ի Հռոմ՝ խնդացեալ 'ի նորութեանց քաղաքին. փութայր արագէր դիմադրաւ 'ի վտանգս բազումս և 'ի բազմագէմ մրցմունս և 'ի ծախս մեծամեծս՝ վճար տալ մարտի պատերազմին. յորում՝ թո՛ղ զայլ հանդերձանսն՝ 'ի գործս վաստակոց մենքենայիցն միայն աշխատէր հանապազօր զոյգ ջորեաց բիւր մի։ Իսկ պակասեալ նմա նիւթ փայտի, քանզի շատք 'ի գործոցն ջախեալք խորտակէին 'ի ծանրութենէ, և շատք ևս հրդեհակէզ անդուլ 'ի թշնամեացն լինէին՝ ապա Սիսղաս ձեռն արկանէր և 'ի նուիրական մայրին. և հատ նա կարեաց զԱկադեմիա՝ վայր անտառախիտ առաւել քան զամենայն բուրաստանս, և զԼիւկիոն։

Եւ քանզի դրամոց բազմաց պէտք էին նմա 'ի գործն, ձեռն արկանէր և 'ի նուիրական անմատոյց գանձն Ելլադայ, ածեալ բերեալ յԵպիտաւրոսէ և յՈղիմպիոյ կարասի դեղեցիկ յոյժ և պատուա-

կան՝ որ անդ 'ի ձօն կախեալ կային դիցն։
Գրեաց և 'ի Դեղփիս առ Ամփիկտիոնա-
ցիս, եթէ՝ լաւ ևս է որ անդ դանձուցն Ա-
պողոնի տանել առ ինքն. զի կամ յան-
դորրու առաւել պահեսցին առ նմա, կամ
թէ ողջ դարձուսցէ անդրէն զկշիռն, եթէ
վարեսցէ ինչ 'ի պէտս։ Եւ առեալ արձա-
կէր անդր զԿափի փոկէացի զմի 'ի բարե-
կամացն՝ հրաման տուեալ յանձն առնել
զամենայնն կշռով։ Գնալ գնաց Կափի 'ի
Դեղփիս, սակայն և ոչինչ ժառեցաւ մերձե-
նալ 'ի նուիրականն. և անդ յանդիման
Ամփիկտիոնացն կայր նա և լայր դառնա-
պէս, զի ըմբռնեցաւ 'ի հարկն յայն։ Յայն-
ժամ և յասել անդ ոմանց առ նա, եթէ
և քնարի հարկանել լսելի եղև նոցա յար-
քունեաց դաբիրային, նա՝ կամ զի հա-
ւաստի հաւատս ընծայեալ բանին, կամ զի
սպասարկու դիցն և երկիւղած զՍիւղղաս
ինքնին գործեսցէ, առեալ գրեաց առ նա
զբանն։ Իսկ Սիւղղաս յընչաց քերեալ զնա,
պատասխանի առնէր զարմացեալ՝ զի Կափի
ինքնին խելամուտ չէ զի երդ նուագաց ոչ
ցասուցելոյ ուրուք է, այլ բերկրեցելոյ.
և պատուիրէր նմա համարձակ առնուլ
զդանձն, իբրու եթէ հաճեալ դիցն՝ ինքնին
նոցա տալ նմա 'ի ձեռս։

Եւ այնպէս ապա զայլն ամենայն առ-
եալ յղէին առ Սիւղղաս՝ զանխուլ 'ի ժո-
ղովրդենէ Հելլենացւոց, բայց 'ի տակա-
ռէն արծաթի՝ որ դեռ ևս կայր անդ 'ի
պարգևաց անտի Թագաւորացն. զոր և ոչ

ջորեացն կարացեալ ողջ ձգել տանել, զի մեծ էր յոյժ և ծանր, առեալ խորտակէին զնա Ամփիկախոնքն։ Եւ յայնժամ զհամբաւի հարեալ բանին, յուշ անդ անձանց բերէին Հելլենացիք մերթ զՓիլամինիոս և զՄանիոս Ակիւլիոս, և մերթ զՊաւղոս Եմիլիոս. յորոց վերջինդ վանեալ յԵլլադայ զԱնտիոքոս, և առաջինքդ 'ի պարտութիւն զարքայն մատնեալ զՄակեդոնացւոց, ոչ անձնապահ միայն 'ի տաճարացն լինէին Հելլենաց, այլ և ընծայաբերք ևս լինէին նոցա և շատ ինչ շուք յաւելուին 'ի նոսա։ Եւ յայնժամ արքդ այդոքիկ իբրև զօրավարք ըստ օրինացն 'ի դլուխս կացեալ զօրականին՝ պարկեշտ և հրամանակատար անմռունչ իւրեանց զօրավարացն, առ այս՝ և արքայականին նոքա վիճակեալ ոգւոյ. սակայն և այնպէս անպաճոյճք 'ի ծախս և ժուժկալք՝ ծախս միայն առնէին չափաւորս և պարկեշտս, քան զահն առ 'ի թշնամեաց՝ անարդագոյն ևս համարեալ զընթեալ զօրականին։

Իսկ զօրավարք այնր ժամուն ամբարձեալք յաւագութիւն զօրութեամբ և բռնութեամբ, և քան ընդդէմ թշնամեացն՝ առաւել ընդդէմ միմեանց պէտս ունելով զինուց, ստիպեցան 'ի զօրավարութեան իւրեանց վայրիայել զխուժանն. ուստի և 'ի գրդանս զօրականին ծախեցին, գնոց գնեալ զվաստակս նոցա. և այնպէս ողջոյն զիւրեանց հայրենիսն գործեցին վարձկան, և զանձինս՝ ծառայս արանց չարաց,

առ 'ի տիրանալ 'ի վերայ լաւացն։ Եւ այդոքիկ տարագիր վանեցին զՄարիոս, և անդրէն միւսանգամ առեալ զնա խաղացուցին ընդդէմ Սիւղղայի. այդոքիկ զկինն նաս սպանող եղին Հոկտաւիոսի, և զՓիմբրիաս՝ Փլակկոսի։ Եւ ապա այս անկարգութիւնք յաւէտ իմն սկիզբն կալան առ 'ի Սիւղղայէ. այն՝ որ առ 'ի կաշառաբեկ յինքն յանկուցանել զօտարին զօրականն, առատաձեռնէր յիւրան և շռայլէր. որպէս զի և այնպէս հրապուրեալ զայլսն 'ի կիրս մատնասուս, և զիւրան դարձեալ վատթարեալ անժուժկալութեամբ, պէտք այնուհետև եղեն նմա մթերից դրամոց՝ մանաւանդ 'ի պաշարմանն յայնմիկ։

Քանզի և վառեալ իսկ էր նա 'ի բուռն 'ի սանձակոտոր կրից ունել ըմբռնել զԱթէնս. կամ զի 'ի պատուասիրութենէ իմեմնէ դրդեալ կռուել մրցել՝ մարտ ըստուերարարտ ընդդէմ վաղնջուց փառացն քաղաքին, կամ զի 'ի սրտմտութենէ բրդեալ էր առ 'ի հեգնութենց անտի և 'ի խեղկատակութենց՝ մերթ ընդ մերթ 'ի պարապաց այպանօք և յայրատագոյնս արձակեալ ընդդէմ նորա և ընդդէմ Մեսեղեայ՝ Արիստոտելէ բռնաւորէն. մարդ՝ որ ոգին նորա մթերք ամենայն անառակութեան և անագորոյն կրից, և լրումն ախտից և ապականութեանց՝ չար ևս քան զՄիհրդատայ, որ 'ի նմա սպրդեալ իսկ էին։ Եւ քաղաք՝ այն որ յամբաւից մարտից և 'ի բազում տէրութեանց բռնաւորաց և յայնչափ շփո-

թիւց ամբոխից՝ անդ 'ի նախնումն Ճոլը-
պրեալ յանդորը ելանէր, իսկ յայնժամ
'ի մարդոյ այսի իբրու 'ի մահահամբոյրն
խօթուլթենէ՝ յոգւոց պարզել ապաստան
եղև. և ուր յայնժամ 'ի քաղաքին հազար
դրամակշռոյ վաճառէր գրիւ ցորենոյն, և
մարդիկն անգանօր խոտ ճարակէին զՊար-
թենեանն՝ բուսեալ շուրջ զդղեկաւն, և
մորթ կրծէին զկօշկացն և զսակոցն՝ եռա-
ցուցեալ 'ի ջուր, ինքն հանապազօր ան-
գուլ պարապէր 'ի գինեբերուս և 'ի զբօ-
սանս, ոսնհար թշնամեաց լինելով և ունչս
զնոքօք առնելով։

Առ այս և յանցանել յայնժամ նուի-
րական կանթեղն գիցուհւոյն 'ի պակասել
իւղոյն, ոչինչ փոյթ եղև նմա։ Դարձեալ
և առ մեծ քրմանոյշն, որ կէս չափ ցորե-
նոյ խնդրեաց 'ի նմանէ, նա կէս չափ պղպե-
ղի առաքեաց առ նա։ Դարձեալ՝ և նեռ-
ընկէց լինելով այնպէս յառաջոյ իւրմէ
վարէր փարատէր զծերակոյսն և զքահա-
նայս՝ որ մատեան առ նա ողբաւոր 'ի
գութ խանդաղատանաց վասն քաղաքին՝
հաշտութիւն խօսել ընդ Սիսղղայի։ Իսկ
ապա անագան ուրեմն մտաբերեալ՝ առեալ
առաքէր զերկուս և զերիս ոմանս 'ի խրախ-
ճանակից զովոլացն՝ խնդրել հաշտութեի։
Բայց արքն այնոքիկ իբրև գնացեալ խըն-
դրէին և ոչ մի յօգտակարացն, և կացեալ
մեծամեծս կոտորէին՝ պանծացեալք ընդ
Թէսէոս և ընդ Եւմոլպոս, և ընդ գործս
նահատակութեան ընդդէմ Մարաց, էտ

յայնժամ պատասխանի Սիւղղաս և ասէ. «Գնացէք 'ի բաց ո՞վ երանելիք դուք, տա-
րեալ ընդ ձեզ և զբանդ զայդոսիկ. չէմ
ես ասա առաքեալ ՅԱԹԷՆՍ 'ի Հռոմայեցւոց ուսումնասէր վարժիւք, այլ առ 'ի
նկուն զապստամբս առնել»:

Եւ ասեն՝ եթէ յայնժամ լուեալ ո-
մանց խօսել ընդ միմեանս ծերունեաց ո-
մանց Աթենացւոց 'ի Կերամիկոն և դան-
գատել զբռնաւորէն, իբրև ո՛չ բարւոք պահ
զգուշութեան եղեալ պարսպին մօտ 'ի
վայրն Եպտաքալկոն, ընդ որ միայն հեշ-
տին լցէ թշնամեացն ելանել 'ի վեր, ան-
դէն յունկն Սիւղղայի հասանէին բանքն.
նա ոչինչ անհոգացեալ՝ ինքնին գայր գի-
շերի 'ի վայր անդր դիւրաւիկ. և մանր
զննեալ, պատրաստեցաւ յարձակել: Եւ
ապա ինքն Սիւղղաս պատմէ մեզ յիւր Ցի-
շատակարանն, եթէ առաջին նահատա-
կեալ էր 'ի պարիսպ անդր Մարկոս Տէյոս.
և նմա ընդդէմ դարձեալ մի ոմն 'ի թըշ-
նամեաց անտի, նա գազանացեալ զօրու-
թեամբ զվաղակաւորն իջուցեալ 'ի գլխա-
նոց առն, խորտակէր սուրն. սակայն և
այնպէս ոչինչ սեղի տուեալ՝ անդէն ան-
դրդուեալի կայր մնայր: Եւ այնպէս յայնմ
կողմանէ՝ ըստ բանի ծերունեացն՝ առնոյր
քաղաքն:

Ապա Սիւղղաս քանդեալ զպարիսպն և
հիմնայատակ արարեալ զվայրն՝ որ ընդ
դուռն Պիրէոնեան և ընդ Նուիրականն,
մտանէր 'ի քաղաքն 'ի հասարակ գիշերի,

արկեալ արհաւիրս մեծամեծս 'ի գոչիւն ձայնի բազմախուռն փողոց և եղջերաց, և 'ի շռինդն ահագին աղաղակի առհասարակ զոր բականին, և տայր արձակ արձակ աւար հարկանել և 'ի մահ վարել. և անդ սուսերամերկք վազէին ընթանային ողջոյն ընդ փողոցս քաղաքին։ Այլ զթիւ համարոյ սպանելոցն ճշգրիտ ոչ գիտացաք. սակայն և այսօր 'ի վայրաց անտի՝ յոր վայր ընթանայր գնայր յայնժամ ճապաղիք արեանցն՝ է մեզ գուշակել զբազմակոյտ անկելոցն։ Քանզի բաց 'ի խողխողելոց անտի 'ի կողմանս կողմանս քաղաքին, ապաժոյժ սպանելոցն անդէն 'ի հրապարակին հեղեղեալ ողողեաց առհասարակ զԿերամիկոն վայրն 'ի ներքս Դիպիւղեայ. և պատմեն ևս բազումք՝ եթէ ըստ գրունսն յորդեալ ողողեաց և զբուրաստանսն։

Արդ թէպէտ և այնպէս բազումք յոյժ էին սպանեալքն, ոչինչ պակաս էին և որք անդ զիւրովին երթային առ ցաւս սրտից վասն հայրենեացն սպառ սպուռ աւերածոյն. և ապա այս բնաւ խակ սրտառուչ սրտաբեկ առնէր և զլաւ որեարն. զի և ոչինչ ակնկալեալ մնային առ 'ի Սիւղղայէ մարդասիրութեան և չափու։ Սակայն անդ կէս մի 'ի պաղատանացն Միգեայ և Կալլիփոնտեայ՝ որ վտարանդեալք լեալ էին յԱթենայ և յայնժամ ողբաւորք առ ոտս անկան Սիւղղայի, և կէս մի 'ի բարեխօսել առհասարակ խորհրդականացն նիզակակցաց, յագեալ նա 'ի վրիժուցն և 'ի ներքող

ևս առեալ զՀինան Աթենացւոց՝ ասէր՝ 'ի շնորհս սակաւուցն՝ ներումն տալ բազմաց, և 'ի պատճառս մեռելոց՝ դուռթ ածել կենդանեաց։ Իսկ 'ի նոյն Յիշատակարանն իւր պատմէ իսկ ինքն, առնուլ նմա զԱթէնս 'ի կաղանդան Մարտի, որ օր անկանի յամսադլուխն Անթեստերիոնէ ամսոյն, յորում աւուր և բազում ինչ կատարէին Աթենացիք 'ի յիշատակ ինքեանն և ամսյուԹեանցն 'ի տեղատարափ անձրևաց, զի և կարծեն իսկ՝ յայն աւուրսն մեծի այն ջրհեղեղին պատահել։

Իսկ յայնժամ յառնուլ քաղաքին փախուցեալ բռնաւորին ապաւինեցաւ 'ի դղեակն, և պատեալ պաշարէր նա 'ի Կուրիոնէ, որում յանձն եղեալ էր գործն։ Անգանիր հարուստ մի ընդդէմ կացեալ նորա, ապա ստիպեալ 'ի ծարաւոյն, անձնատուր 'ի Թշնամին լինէր. յայնժամ և յեղակարծումն աստուածեան երևէր նշան. քանզի 'ի նմին իսկ աւուր և 'ի ժամու՝ յորում ձերբակալ գերի վարեցաւ բռնաւորն, անդէն արագ արագ 'ի պարզ և 'ի յստակ օդագ գումարեալ ամպոց՝ տեղատարափ տեղայր անձրևաց, զի և առհասարակ ջրապարպատ զդղեակն ողողեաց։ Ապա յետ սակաւուց հասանէր ունէր Սիսղղաս և զՊիրէոն, և շատ ինչ 'ի նմա 'ի հուր դատէր. ընդ որս և զՓիլոմելին զինարան՝ գործ հրաշակերտ։

'Ի ժամանակին յայնմիկ Տափսիղղէս զօրավար Միհրդատայ ելեալ 'ի Թրակիոյ և

'ի Մակեդոնիոյ տասն բիւր հետեւակօք, և բիւր մի այրուձիով, և ինքնասուն գերանդաձէն քառաձիովք, կոչէր առ ինքն զԱրքեղայոս, որ դեռ ևս խարսխեալ զնաւսն կայր առ Մունիքեաւ. ոչ տեղի տայր 'ի ծովէն, և ոչ դարձեալ ժտէր ինչ 'ի վէգ ընդ Հռոմայեցւոց դալ. այլ ժամավաճառ դեգերէր՝ խնդրէր հատանել 'ի նոցանէ զկերակուրն: Որոմ խելամուտ Սիւղղաս եղեալ լաւ ևս քան զնա, չու տուեալ բանակին՝ գնայր յամուլ վայրաց անտի, որ և ոչ 'ի խաղաղութեան ժամանակի բաւական չէին վայրքն 'ի դարման զօրուն, և եկեալ անցանէր 'ի Բիւոտիա: Թուէր իմն այնպէս բաղմաց՝ ձախողակի խորհել Սիւղղայի, լքեալ զԱտտիկէ՝ վայր անկոս և դժպհի այրուձիոյն, և միջամուխ 'ի գիւրս և 'ի դաշտավայրս եղեալ Բիւոտիոյ, գիտելով չափ զբարբարոսացն ոյժ զամենայն 'ի կառան և յայրուձի. այլ՝ որպէս ասացի՝ 'ի սովոյն փախուցեալ և 'ի կարօտութէն՝ գիմագրաւէր մանաւանդ 'ի վտանգ մարտին: Առ այս և զանգիտէր խիթայր նա վասն Որտեսիոսին՝ այր քաջափորձ 'ի զինուորութեան և նահատակ. որում դարանեալ մնային բարբարոսք յանձուկն անդր՝ 'ի բերել ածել նորա առ Սիւղղաս զօր 'ի Թեսաղիոյ: Ապա վասն այսոցիկ պատճառաց բանակ 'ի Բիւոտիա հարկանէր Սիւղղաս:

Այլ յայնժամ Կափի՝ մերն հայրենակից՝ վրէպ 'ի յուսոյն զբարբարոսան կացու-

ցեալ, ածէր բերէր զՈրտեսիոս ընդ այլ Ճանապարհ 'ի կողմանէ անտի Պարնասեայ մինչև մերձ 'ի Տիտորա. այս Տիտորա չէր յայնժամ քաղաք մեծ՝ որպէս այսօր, այլ աւան մի 'ի վերայ անմատոյց ժայռի, յոր 'ի նախնումն փոկէացիք վանեալք 'ի Քսերքբսեայ՝ անկեալք ապրեցան։ Ընդ բանակ հարեալ Որտեսիոս, զցերեկ վանեալ ընկրկեալ զթշնամին, և զցայդ իջեալ ընդ դժուարս վայրաց 'ի Պատրոնիդէ՝ էկն է հաս առ Սիւղլաս, որ ընդ առաջ գայր բանակաւն։ Ապա խմբեալք 'ի միասին, հասին կալան զբլուրն որ ամբարձեալ կայ 'ի միջոցի Եղատիքեան դաշտացն. բլուր արգաւանդ և շուրջ անտառախիտ, և ջուր առ ոտամբն՝ որում անուն կարդան Փիլոբետոն. և Սիւղլաս ինքնին մեծապէս գովէ զերկրին պատուականութիւն և զդիրան։

Ընդանօր բանակ հարեալ նոցա, յերևան այնուհետև էլանէր բարբարոսացն սակաւութիւն դնդին Հռոմայեցւոց, իբրև էր նոցա այրուձի հազար և հինգհարիւր, և հետևակազօր պակաս քան զհնգետասան հազար. ուստի և բուռն ածէին շարժէին զԱրքեղայոս զօրագլուխքն՝ ձեռնամուխ 'ի մարտն լինել։ Ապա 'ի կարգի ըզզօրն ամենայն ձգեալ երկայնեալ՝ լցին նոքա առհասարակ զդաշտն այրուձիով և կառօք և վահանօք և ասպարօք. անդ և ոչ օդք ինքնին հանդուրժեալ բերէին զձայն խառնագոչ աղաղակին և զշռինդն ամբաւ խուժանին 'ի խուռն դիմել հրոսակին և

կարգել 'ի ճակատ մարտին։ Ար այս՝ և նոցա փառաք լի՛ կազմած պատրաստու-թեանն շքեղ և բազմահանդերձ՝ մեծապէս արհաւիրս արկանէր. քանզի 'ի նշուլից զինուց գեղեցիկ վառելոցն յոսկի և յարծաթ, և 'ի գունեան դիմակ դիմակ նարօտից մեդացի հանդերձիցն և սկիւթացի, նա և 'ի փայլուն պղնձեաց և յերկաթոյ՝ 'ի շարժել շողալ առհասարակ զօրականին, իբրև 'ի փայլակնացայտ նշուլից ահագին բոցք հատանէին. որպէս զի և Հռոմայեցիք սրտաբեկ փակեալք 'ի ղակշին, և Սիւղլաս ինքնին քաջալեր բանիւքն ոչինչ ամենևին բաւական զերկիւղն բառնալ, և կամ 'ի կռիւն երբէք խրախուսել՝ յորմէ տեղի տուեալ խուսէին արհաւրօք լի՛, ապա և ինքն զտեղի առեալ դադարէր. թէպէտ և դժոխրմբերս՝ սակայն կայր և տեսանէր և լսէր զճոխաբար պարծանս և զտնհար ձաղել ծանակել զգնդին բարբարոսաց. բայց և շահ մեծապէս եղև նմա դադարել անդէն։ Քանզի յետ այնորիկ արհամարհեալ զնովաւ բարբարոսացն, քակեալ 'ի կարգէ դասաւորութեանն, (իբրու որ և ոչ զայլ ժամանակն՝ այնչափ ինչ հլուք բնաւորեցան նոքա բազմութեան իւրեանց զօրապետացն), և նուազունք 'ի նոցանէն մնացեալք 'ի բանակին, բազումք այն էին որ հետամուտ 'ի կողոպուտ և յամբարս պաշարոց՝ տարադէմ 'ի բանակէն և աւուրց բազմաց ճանապարհ՝ վարատեալ գնացին։

Եւ ասէն՝ եթէ քանդեցին նոքա յայնժամ զքաղաքն Պանոպէացւոց, և յաւարի առնուին զԼեբադէացւոցն, և կապուտ կողոպուտ թողին նոքա զմեհեան գուշակութեանցն, թէպէտ և 'ի զօրագլխացն չէր հրաման։ Ոչինչ հանգուրժէր բերէր Սիսղղաս, և 'ի խոր ևս խոցեցաւ այնպէս ակն յանդիման զաւերած տեսեալ զքաղաքացն. որ աղագաւ և երբէք դուլ և դադար չտայր զօրականին. ստիպէր տագնապէր 'ի գործ սաստիկ աշխատութեամբ՝ առնուլ դարձուցանել զԿեփիսոս գետն 'ի վազից իւրոց, խրամն հատանել, և փոսս խորել, և զոգիս քաղէր զզօրականին. ինքն ոստիկան 'ի վերայ կացեալ՝ պատուհաս աննեբելի 'ի վերայ ածէր յուլացելոցն. որպէս զի 'ի քրտնատաժան գործոյն տաղտկացեալք՝ յօժարեսցին 'ի կռիւն, որ և եղև իսկ։

Քանզի յաւուրն երրորդի՝ անցեալ Սիսղղաս տեսանել զգործն, բողոք բարձեալ զօրականին աղաչէին առնուլ խաղացուցանել զնոսա ընդդէմ թշնամեացն. ասէ Սիսղղաս, թախանձելդ ո՛չ յօժարելոցն է 'ի կռիւ, այլ յուլացելոցն յաշխատութենէն. և մատնանիշ արարեալ նոցա զվայրն՝ որ 'ի նախնումն դղեակ Պարապոտամացւոց, քաջալերէր զնոսա. զի թէ արդարև յօժարեալք առ 'ի մարտն իցեն, առեալք զէնս՝ խաղասցեն անդր 'ի վերս։ Իսկ աւերակ յայնժամ գոլով քաղաքին, էր անդ վայրն ամայացեալ բլուր իբրև զքարակոյտ դերբկաց, զատուցեալ

յԵոիղեան լեռնէն անջրպետութեամբ Ասսոս գետոյն, որ գնացեալ առ ոտորոտուն և խառնեալ ընդ Կեփիսեայ, և անդ սրընթաց եղեալ՝ ամուր և անխաբ զբլուրն գործէ 'ի բանակեաղ։ Ուստի և տեսեալ Սիսղլաս՝ զի զբրականք թշնամիք պղնձասպարք փութային խաղային անդր, ինքն աճապարեաց կալաւ զվայրն թեթևընթաց զբրականաւն։ Այլ անդուստ վանեալ ընկրկեալ Ալքեզայոս, իբրև դէմ եդեալ խաղայր 'ի Քերոնէնիա՝ անդ Քերոնէնացիք զինուորեալք առ Սիսղլայի մատուցեալ աղաչէին, մի 'ի ձեռս թողուլ թշնամւոյն զքաղաքն իւրեանց։ Իսկ Սիսղլաս ձեռով առեալ զԳաբինիոս զբրավար արձակէր անդր հանդերձ Լէգէոնիւն, և թոյլ ետայր Քերոնէնացւոցն խաղալ 'ի նոյն. սոքա թէպէտ և կամեցան՝ ոչ կարացին ժամանել Գաբինիոսի. այնչափ ինն քաջացաւ այրն և քան զինդրելն աճապարեաց տալ փրկութիւն։ Այլ Յոբաս ասէ, ոչ Գաբինիոս էր, այլ Երիկիոս. որ զինչ և իցէ՝ մերն քաղաք յայնժամ փրկեալ ապրեցաւ 'ի մեռալուտ 'ի մեծ վտանգէն։

Բայց յայնժամ 'ի Լէբադիայ և 'ի Տրոփոնէիոսէ գայլն հասանէին առ Հռոմայեցիս լուրք բարիք և գուշակութիւնք յաղթութեան. ոյց աղագաւ բազում ինչ պատմեն գաւառացիք։ Այլ որչափ ինչ ինքնին Սիսղլաս արձանագրէ 'ի տասներորդումն իւրոց Յիշատակարանաց, Կուինտոս Տիտոս այր երևելի 'ի վաճառականս

Ելլադայ՝ էկն առ նա յետ յաղթութեան քերուբինեան կռուոյն, և աղդ նմա առնէր զՏրոփոնինեայ գուշակութիւնն, իբրու որ յետ սակաւուց հասանէ նմա այլ յարդարել մարտ և տանել զյաղթութիւնն 'ի նմին վայրի։ Եւ զկնի սորա ապա և յիւրմէ զօրականէն՝ Սալվինիոս անուն՝ գայր պատմել նմա 'ի դիմաց ասստուծոյն՝ եթէ զի՞նչ ելք ելցեն իրացն յԻտալիա։ Եւ երկաքանչիւր նոքա միաբան զնոյն ասէին վասն դիւցական ձայնին, իբրու տեսանել նոցա գեղ և զմեծութիւն հանգունատիպ Ոլիմպեանն Արամազդայն։

Ապա Սիւղղաս անցեալ ընդ Ասոս և յառաջ խաղացեալ մինչև յԵտիւղիոն, բանակ հարկանէր մօտ Ադբեղայոսի. որ ամրացեալ կայր ընդ մէջ Ետիղիոնեայ և Ակոնտեայ՝ մօտ 'ի վայրն որ անուանեալ կոչի Ասի. և զբանակեալ նորա ցայսօր յանուանէն կարդան Ադբեղայոս։ Իսկ Սիւղղաս օր մի նստեալ անդէն, կարդէ զՄուրենաս և ընդ նմա Լէգէոնն մի և երկուս ևս 'ի գնդաց նեղել զԹշնամիսն՝ որ 'ի շփոթս էին. և ինքն 'ի զոհել գնայր յափունան Կեփիսեայ. և կատարեալ զզոհն՝ խաղայր գնայր 'ի Քերուբինիա առնուլ անտի զզօրականն և զննել դիտել զվայրն Թուրիոն անուն, զոր հասեալ կալեալ էին Թշնամիք։

Իսկ է Թուրիոն կատար դժուարակոխ՝ և ամբարձեալ ազատ սոճիաձև լեառն. վասն որոյ և Հելլենացիքս անուն կարդամք

նմա՝ Օրթոփաղոս, այն է՝ Ուղղաբերձ. իսկ առ ոտամբն գնայ ջուր Մորիոնի, և է անդանօր մեհեան Թուրիոնեանն Ապողոնի։ Եւ անուն զայս կալան դիքն առ 'ի Թուրեայ 'ի մօրէն Քերոնէի. զորմէ պատմեն՝ ածել գաղթական մի բնակաւոր 'ի Քերոնիա։ Իսկ կէսք ասեն՝ եթէ կոչն տուեալ 'ի Պիւթեայ առաջնորդ Կադմոսի՝ երևեցաւ նմա 'ի նմին վայրի, յորմէ և տեղին կոչեցաւ այնպէս. քանզի Փիւնիկեցիք թովը ասեն զկոչն։

Մերձ 'ի Քերոնիա եղեալ Սիւղղաս, անդ հաղարապետ գնդի քաղաքին գայր ընդ առաջ նմա հանդերձ գնդաւն վառելով, բերեալ նմա պսակ սարդենի։ Մինչդեռ զպսակն առեալ Սիւղղայի՝ մեծապէս մարդասիրութեամբ ժողովեր զզօրականն և խրախոյս կարդայր 'ի կռիւն, առաջի նորա եկեալ երկուք ոմանք Քերոնիացւոց՝ Ոմոլիքոս և Անաքսիդամոս, խոստուանին կռէին՝ գունդ սակաւաձեռն առեալ 'ի նմանէ խաղալ գնալ վանել 'ի Թուրիոնէ՝ որ անդ զթշնամին. քանզի և էր իսկ անդ ուղի գողուղի 'ի բարբարոսացն, որ 'ի Պետրովքեայ անցեալ առ երի Մուսիոնի՝ ածէ 'ի Թուրիոն 'ի վերայ նոցա. և անդուստ հեշտեաւ նոքա անկեալ 'ի վերայ թշնամւոյն՝ քարաձիգ լինիցին 'ի բարձանց կամթէ 'ի վայր ընկրկեսցեն զնոսա 'ի դաշտանդը։ Յայնժամ և Գաբինիոս վկայութիւն տուեալ քաջութեան և հաւատարմութեան արանցն երկոցուն, հրաման տայր Սիւղ-

ղաս պատրաստել 'ի գործն, և ինքն ան-
դէն կարգէր կազմէր զփաղանդն և առեալ
զայրուձին բաշխէր տայր 'ի Թեան երկոսին.
յինքն առնոյր զաջոյ Թեն, և զձախոյն ընդ-
ծայէր Մուրենեայ։

Իսկ Գաղղոս և Որտեսիոս երեսփոխանք
նորա վերջապահ կային հանդերձ կազմ
գնդօք, զտեղի առեալք 'ի վերայ բարձանց
զգուշութեամբ՝ մի 'ի նեղբս փակիլ 'ի
թշնամեաց անտի։ Քանզի և էր իսկ տեսա-
նել զպատրաստութիւն թշնամեացն զբս-
տուար այրուձիոյ և զթեթեւազէն հետեւա-
կացն՝ թեւ իմն կազմել քաջամուր և շոյտ,
դառնալ և երկայն շրջանաւ պատել փա-
կել զՀռոմայեցիսն։ Իսկ յայնմ պահու
Քերոմնացիք երկոքին առեալք 'ի Սիւղ-
ղայէ զՇերիկիոս 'ի զօրագլուխ, գաղտաբար
զանխուլ պարայածեալք մինչև 'ի վերոյ
կատարին թուրիոնի, անդանօր տեսան նո-
քա 'ի բարձունսն. յորմէ աղմուկ շփոթից
'ի բարբարոսան հարեալ, 'ի փախուստ խու-
ճապէին, և շատք ևս 'ի միմեանց սատա-
կէին. քանզի ոչ կացեալք յակաստանի,
և ընդ զառ 'ի թափն խուճապեալք՝ գայլն
անկանէին 'ի վերայ իւրեանց նիզակացն.
և այր ընդ ընկեր հարեալք և բախեալք՝
գահավէժ ընդ պարեխս առնէին, մինչդեռ
անդուստ 'ի վերոյ թշնամին վանէր ընկեր-
կէր և հարկանէր խոցէր զմերկան. որպէս
զի և երեք հազարք անդանօր 'ի թուրիոն
տապաստ անկան։

Իսկ 'ի փախստէիցն կէսք 'ի սուր մաշե-

ցան Մուրենեայ, որ յայնժամ կարդեալ խաղայր ընդդէմ նոցա. և կէսք վանեալք 'ի բանակ անդր իւրեանց և անկեալք այն-պէս խառնիխուռն հրոսիւ 'ի մէջ փաղան-գին, արհաւրօք և խռովութեամբք մեծա-պէս լցին զնա. և շատ ևս ժամավաճառ ա-ղարեալ անդանօր զզօրագլուխսն, զեան մեծապէս լինէր. քանզի յայնժամ շուա-պաւ Սիսղլաս յառաջ վարեալ 'ի խուճա-պել նոցա, և սրավարեալ ընդ անջրպետ ճակատուցն, ոչինչ կարացին բարբարոսքն 'ի գործ զգերանդաղէն կառն վարելբրո-նութեամբ. (քանզի այն կառք յերկայնա-սահման վազից բնաւորեցան թափ և ոյժ առնուլ սաստկութեամբ). ապա եթէ 'ի կարճոյ ելցէ ասպարէսն՝ անազդոյք են և վատեալք, իբրու նեռք ոստուցեալք յան-կորով աղեղանց, զոր և յայնժամ կրեցին բարբարոսք. քանզի առաջին նոցա կառք անբաժ 'ի թափոյ առեալ շարժումն և նկուն բաղխեալ, անդ ծափս կայթից և քրքիջ ծաղու բարձեալ հռոմայեցիք և 'ի բաց ընկրկեալ զնոսա, այնպէս իբրու ե-թէ կառընթացից ոմանց կրկիսաց 'ի զնին կացեալ ելցեն՝ ձայն տային և այլոց կառաց։

Ապա յետ այնորիկ յերկոցուն ևս կող-մանց 'ի կռիւ խառնեալ հետևակազօրք, յայնժամ բարբարոսք յառաջ ձգէին զեր-կայն գայիսոնսն, գուն գործեալ կուռ ասպարափակ զիւրեանց փաղանգն պահել 'ի կարգի. իսկ հռոմայեցիք 'ի բաց զգե-զարդունսն ձգեալ և զսուսերսն մերկա-

ցեալ, նոքաք վանեալ զդէմ դառնային գայիսոնացն՝ արագ արագ խառնել ըզմարտն զայրագին լի՛ բարկութեամբ. քանզի և կարգեալ դասաւորեալ նոքա յակն արկին 'ի ճակատուն բարբարոսաց հնդեւասան հազարս 'ի ծառայից՝ զոր 'ի Հռոմայեցւոց անտի 'ի զինուորութիւն յանդուցին զօրավարք արքային՝ ազատութիւն քարոզեալ նոցա, և 'ի մէջ սպառազէն վառելոցն յապահովեալ զնոսա։ Եւ պատմեն՝ եթէ անդանօր մի ոմն 'ի հարիւրապետացն Հռոմայեցւոց հեգնեալ զնոսա ասէր, եթէ "'Ի կռոնոսեան տօնն՝ միայն տեսեալ է իմ ազատութեան հաղորդս զծառայս"։ Եւ քանզի խումբ ծառայիցն 'ի խորս անդ խիտ առ խիտ ամրածածուկ կայր, ոչինչ այնպէս նհանջեալ ընկրկեցան 'ի տոուարագունդ հետեւակէ թշնամեացն. և զի՝ և հակառակ բուսոյ բարուց իւրեանց մեծապէս խրախուսեալք կային յակաստանի. սակայն և անդուստ արդնընկէցք և պարսաւորք Հռոմայեցւոց 'ի վերջապահ գնդէն՝ անդուլ և կուռ արձակմամբք խռով հարեալ 'ի նոսա, ստիպէին դառնալ ընդ կրունկն։

Իսկ յայնժամ և Արքեղայոս շրջան աջոյ թևին տուեալ 'ի նեղքս զթշնամիսն փակել, անդ Որտեսիոս առ Ճեպ տագնապին խաղայր իւրովք գնդօքն պատել պաշարել զնա 'ի կողմանէն. այլ անդէն Արքեղայոս այրուձի երկու հազար հատեալ յիւրմէն ընդդէմ Որտեսեայ, նա զանգի-

տեալ՝ վերջոտնէր տեղի տայր 'ի կողմն լե-
ռին, տակաւ որոշեալ յիւրմէ բանակէն և
'ի վտանգ ևս անկեալ պաշարման։ Լուր
առ Սիւղղաս հասեալ, առեալ անդէն զզո-
բականն զաջոյ թևին՝ որ չև էր 'ի կռիւ
խառնեալ՝ խաղայր ձեռպէր ձեռն տալ Որ-
տեսիոսին։ Բայց Արքեղայոս քաջ իսկ
յելանել յամբառնալ փոշւոյն իրազգած
եղեալ, թողեալ անդէն զՈրտեսիոս՝ խա-
ղայր դիմէր 'ի վայր անդր ուստի Սիւղղաս
մեկնեալն էր. ակն ունէր հասանել ունել
զաջոյ թևն զայն առանց զօրավարի։ 'Ինմին
պահու և Տաքսիղղէս իւրովք պղնձասպա-
ռօք անկանէր 'ի վերայ Մուրենեայ. որ-
պէս զի և յերկոցուն ևս կողմանց ձայն ա-
ղաղակին բարձրացեալ և լերանցն անդրէն
կրկնեալ, յայնմ մեծի տագնապի կայր
վարանէր Սիւղղաս՝ ո՞ւմ 'ի նոցանէն ձեռն
տալ օգնականութեան։ Ապա հաստա-
տեալ դառնալ յիւր կարգն, արձակէր
զՈրտեսիոս 'ի թիկունս Մուրենեայ չո-
րիւք գնդօք, և ինքն զկնի փողեալ զհին-
գերորդն՝ փութայր յաջոյ թև անդր, որ
ինքնին միայնակ մարտ հաւասարամարտ ե-
գեալ կռուէր ընդ Արքեղայոսի. ապա
յերևեալ Սիւղղայի յաղթական եղեալ և
'ի փախուստ զթշնամին ձեպեալ՝ զհետ
մտեալ վանէին մինչև 'ի գետ անդր և 'ի
լեառն Ակոնտիոն։

Բայց Սիւղղաս ոչինչ անհոգացեալ և
զվիշտ վտանգին Մուրենեայ, խաղայր դի-
մէր տալ նմա ձեռն. և իբրև զնա ևս գտա-

նէր յաղթական, այնուհետև հետամուտ յայնմ կողմանէ փախստէիցն լինէր 'ի միաս սին ընդ նմա։ Անդանօր տապաստ անկանէին 'ի դաշտին բազումք 'ի բարբարոսացն, և բազմագոյնք ևս դարձեալ 'ի սուր մաշեցան 'ի խուճապել նոցա 'ի զակիշ անդր. զի և յայնչափ բիւրաւորաց մարդկանն ոգիք միայն բիւր մի ապրեցան անկեալ 'ի Քաղկիդէ։ Իսկ 'ի կողմանէ Հռոմայեցւոց՝ պատմէ Սիւղղաս՝ պակասել միայն չորեքտասան զինուորաց. և 'ի նոցանէ դարձեալ երկուցն գալ հասանել ընդ երեկս։ Ոյր աղագաւ և նա զիւր ախոյեանսն առեալ նուիրեաց Արեսի և Յաղթութեանն և Աստղկանն. զի այնպէս գեղեցիկ 'ի գլուխս տարաւ զմարտն՝ օժանդակեալ միանգամայն 'ի բախտէն և 'ի հանճարոյն և 'ի քաջութենէն։

Ապա առեալ ախոյեան մի կանգնէր վասն յաղթութեան դաշտային մարտին, ուր զառաջինն տեղի տուեալ վերջոտնէր Աբքեղայոս մինչև 'ի վտակն Մոլեայ. և միւս ևս 'ի կատարի անդ Թուրիոնի, ուր պատեալ պաշարեցան բարբարոսք. և յախոյենին յայնմիկ հելլենացի գրովք նշանակեալ կան իբրև քաջարիք՝ Ոմողիքոս և Անաքսիդամոս։ Եւ կատարէր 'ի Թեբէ հանդէս նուագաց յաղթութեանն՝ մօտ յաղբիւր Էդիպեան շինեալ հանդիսարան. և էին դատաւորք նուագայն հելլենացիք հրաւիրեալք յայլոց քաղաքաց. քանզի թշնամութիւն անհաշտ էր նորա ընդ Թե-

բայեցւոց, յորոց և 'ի բաց եհան նա զկէս երկրին նոցա, և նուիրեաց Պիւթեայ և Ողիւմպեայ. հրաման առեալ՝ զի 'ի պողոց երկրին տացի գիցն երկուց արծաթն զոր եհան նա։

Յետ այսորիկ լուր առեալ Սիւղղաս՝ զի Փլակկոս 'ի հակառակ հերձուածոյն կարգեալ Հիւպատոս, խաղայր անցանէր ըստուար բանակաւ ընդ Յոնիա. 'ի վերին երեսս իբրև ընդդէմ Մինրդատայ, այլ 'ի ներքոյ՝ ընդդէմ իւր։ Զոր արար խաղաց գնաց և ինքն 'ի Թեսաղիա՝ իբրու ընդ առաջ նորա։ Հասեալ մերձ 'ի Մելիտէա քաղաք, 'ի կողմանց կողմանց դուժկանք հասանէին, բօթ զայս բերէին՝ եթէ ըզվայրան զոր եթող գնաց՝ յաւարի էառ այլ բանակ արքային ոչինչ պակաս քան զառաջինն։ Քանզի Դորիւղայոս եկեալ հասեալ 'ի Քաղկիդէ բազմութեամբ նաւաց յոյժ, ածեալ բերեալ բանակ ութ բիւրուց արանց քաջամարտկաց և այլընտիր զօրուն Մինրդատայ, յանկարծակի հորդան տայր 'ի Բիւզանդիա և ընդ իւրև ըզգաւառն նուաճէր. խնդրէր միւսանգամ 'ի կռիւ մարտի գրգռել զՍիւղղաս, ոչինչ անսացեալ Ադրեղայոսի՝ որ խնդրէր խաղաղանել զմարտն. և առեալ հուչակ հարկանէր վասն առաջին մարտին՝ իբրու 'ի մատնութենէ իմեքէ անշուշտ այնչափ բիւրաւորաց մարդկանն 'ի մահ վարել։ Այլ Սիւղղաս վաղվաղակի դարձեալ յետս, քաջ իսկ խելամուտ առնէր զնա՝ եթէ այր

զգօն է Ալքեղայոս, և 'ի փորձոյ անտի իւր մէ համարէն 'ի վերայ եկաց զօրութեանն Հռոմայեցւոց։ Ասաց և խելամտեցոյց, որպէս զի և ինքնին Դորիւղայոս 'ի վեդ դուշնաքեայ եկեալ ընդ Սիւղղայի մօտ 'ի Տիլֆոսիոն, ապա ինքն առաջին խորհուրդ տայր մի վաղվաղակի մարտիւ վճարել, այլ ժամավաճառ եղեալ այնպէս տակաւ և տուգանօք սպառել վատնել զթշնամին։

Սակայն և զԱլքեղայոս ինքնին յայնժամ խրախուսեալ քաջալերէր վայրն մերձակայ Ոլքոմենեայ՝ յորում բանակեալ էին. զի էր իսկ ինքնին վայրն յոյժ գիսան 'ի կռիւ մարտի բաղմութեամբ այրուձիոյն։ Քանզի և քան զամենայն դաշտագետինս Բիւվոիոյ գեղեցիկ առաւել և ընդարձակատարը բնաւորեցաւ վայրն՝ որ 'ի քաղաքէ անտի Ոլքոմենացւոց երկայնեալ ձգի ողջ հարթհաւասար և անմայրի մինչև 'ի ճահիճն, յորս հոսեալ խառնի Մելաս գետ՝ որ բղխէ ընթանայ առ քաղաքաւն շատաջուր, զի և միայն 'ի գետս առհասարակ Եղլադայ նաւագնաց է նա անդատին յականէն։ Բայց ապա ամէն յորդէ յարևադարձն ամարայնոյ իբրև զնեղոս, և տունկս յառաջ բերէ հանգունատիպս Նեղոսին. այլ անպտուղք են սորայն և վոխոք։ Զեն սորա ընթացքն բացամիգք, այլ շատ ինչ վաղվաղակի գնայ անհետանայ 'ի ճահիճն անհշոյլս և կնիւնաբերս. և մասն մի ևս ոչ շատ՝ հոսէ խառնի ընդ Կեփիսեայ, մօտ 'ի վայրն՝ ուր ա-

ռատապէս ճահիճն բերէ եղեգնափողս արնգաց։

Արդ բանակք երկոքին հարեալք մօտ միմեանց, զտեղն առեալ կայր յանդորրու Արքեղայոս. այլ Սիսղլաս տայր փոսս և խրամս հատանել աստ և անդ, զի վրէպ իւիք զայրուձին կացուցցէ 'ի հարթայատակ դաշտացս անտի, և վարեալ վանեսցէ 'ի ճահիճն։ Ձհանդուրժեալ բարբարոսացն՝ իբրև թոյլ 'ի զօրագլխացն լինէր նոցա, արձակ արձակ բուռն զօրութեամբ դիմեալք՝ ոչ զկրամահատն միայն վարատեալ փարատէին, այլ և խռով սասսիկ հարեալ 'ի փախուստ դարձուցին ըզբազումն 'ի զօրականէն՝ որ անդ կարգեալ կազմեալ կային։ Իսկ Սիսղլաս 'ի վայր յերիվարէն վազեալ, և բուռն զդրոշակէն հարեալ՝ 'ի խռան փախստէիցն ինքն խաղայր դիմէր 'ի թշնամիս անդր. ձայն բարձեալ գոչէր. "Ինձ ո՞վ չռումայեցիք գեղեցիկ է աստէն տապաստ անկանել. այլ դուք՝ եթէ երբէք հարցցեն ցձեզ ո՞ւր զձերն լքէք ինքնակալ, յիշեցէք ասել՝ ՅՈՐքոմենոն"։

Ասաց, և յետս փախստեայքն դարձան. և 'ի թիկունս ևս հասեալ նոցա գունդք երկու յաջոյ թևոյն, խաղայր յառաջ հանդերձ նոքօք, և ընդ կրունկն զթշնամիսն դարձուցանէր։ Ապա վայր մի զիւրան ժողովեալ՝ և ճաշ տուեալ, անդրէն միւսանգամ ձեռն արկանէր 'ի խրամն պատել փակել զբարբարոսն. կրկին և

նոքա խաղացին ընդդէմ գէղեցիկ կարգաւ-
քան զառաջինն։ Անդ Դիոգինէս որդի
կնոջ Արքեղայոսի քաջապէս արուեստիւ
նահատակեալ 'ի թեն աջոյ, տապաստ ան-
կանէր։ Իսկ աղեղնաւորք՝ 'ի տագնապել
Հռոմայեցւոց՝ ոչ բաւելով թիկնադար-
ձոյց լինել, կուռ անդուլ նեաս և վիքինս
'ի ձեռաց արձակեալք՝ այնպէս իբրու սու-
սերօք ոմանքք հարկանէին զՀռոմայեցիսն.
և ապա ուրեմն փակեալք 'ի ղակիշ անդր
իւրեանց, 'ի խոր խոցեալ ցաւագին զգի-
շերն անցուցանէին առ 'ի բազմութենէ
վիրաւորացն և անկելոցն։

Բայց 'ի գալ աւուրն անդրէն միւսան-
գամ առեալ Սիւղղաս խաղացուցանէր
զիւրան 'ի պատնէշ անդր նոցա կատարել
զկռիւն։ Անդանօր բազումք 'ի նոցանէն
արտաքս վազեալք իբրու 'ի կռիւ մարտի,
խառնեցաւ նա ընդ նոսա և անդէն 'ի փա-
խուստ դարձուցանէր. և ապա 'ի նոցա
տագնապ երկիւղին ոչ ոք այնուհետև քա-
ջալերեալ անդէն զտեղի առնուլ, ինքն
հասանէր տիրանայր 'ի վերայ բանակին նո-
ցա. և այնպէս ընոյր զեղոյր նա զՃահիճն
յապաժոյժ արեանց և զլիճն դիակամբք
անկելոցն. որպէս և մինչև ցայսօր ժամա-
նակի՝ յորմէ հետէ ամք երկերիւր են մար-
տին այնորիկ՝ գտանին անդանօր թաղեալք
'ի սիկս տղմոյն աղեղունք բազումք բարբա-
ռոսացն և սաղաւարտք և սուսերք և պա-
տենաբեկք երկաթիք։ Արդ որ ինչ դէպք
և նահատակութիւնք առ Քերոնէաւ և

Ոքքոմենեաւ, ասէն օրինակ զայս պատա-
հեալ յայնժամ։

Իսկ անդ 'ի Հռոմ անիրաւութեամբ և
բռնութեամբ հարստահարեալք 'ի Կին-
նայէ և 'ի Կարբոնէ արք աւագք 'ի քա-
ղաքին, բազումք 'ի նոցանէն խոյս տուեալք
'ի բռնաւորութենէն, իբրու յանդորր նա-
ւահանգիստ եկեալ ապաւինեցան 'ի բա-
նակն Սիսղղայի. ուստի և 'ի սուղ ժամա-
նակի խուսմբ իմն սինկղիտոսին խմբեցաւ
առ նմա։ Այլ և ինքնին Մեռելլա մաղա-
պուր Ճողոպրեալ գաղտ հանդերձ որդ-
ովքն գայր հասանէր առ նա, գոյժ բե-
րեալ զի ապարանք նորա և դաստակերտք
հուրբ գատեցան 'ի Թշնամեացն, և աղա-
չէր աղերսէր 'ի Թիկունս հասանել մնա-
ցեալոցն 'ի տան։ Վարանեցաւ Սիսղղաս.
ոչ զվչտատես հայրենիսն հանդուրժէր ան-
փոյթ առնել, և ոչ դարձեալ զայնպիսի
մեծ նահատակութիւն զՄիհրդատեանն
անվճար թողուլ և տեղի տալ։ Մինչդեռ
յայն վարանն ծփայր, գայր հասանէր առ
նա վաճառական ոմն այր Դեղիացի Ար-
քեղայոս անուն, ասել նմա խորհուրդս
գաղտնիս 'ի գիմաց անտի Արքեղայոսի զօ-
բավարի արքային՝ յուսով բարեաց։ Յոյժ
խնդաց Սիսղղաս, զի և ինքնին փութացաւ
կենակից խօսակից ընդ զօրավարին լինել.
և եկեալ գնայր առ ափամբ ծովուն 'ի Դե-
ղիոն, ուրանօր կայ մեհեան Ապողոնի։

Ապա սկիզբն արարեալ խօսել Արքե-
ղայոս՝ թելադիր լինէր Սիսղղայի թողուլ

զԱֆիա և զՊոնտոս և Նաւէլ գնալ 'ի մարտ պատերազմին Հռովմայ. և 'ի Նէրքս ընծայէր նմա 'ի գիմաց արքային մԹերս ընչից և նաւս եռաԹիռց և զօրական որչափ և կամեցի։ Իսկ Սիւղղաս յորդոր և հրապոյր խառնէր նմա՝ մի ինչ այլ երեսս Միհրդատայ առնել, այլ ինքնին փոխանակ նորա Թագ կապեալ, դաշն ընդ Հռոմայեցիս կռել, և տալ նոցա զնաւսն։ Իբրև յայն հրապոյր քստմնէր խորշէր Արքեղայոս ընդ մեծ մատնուԹիւնն, կրկնեաց Սիւղղաս և ասէ. "Դու ո՞վ Արքեղայէ, Կապադովկացի գոլով և ծառայ (կամ Թէ բարեկամ՝ եԹէ այնպէս կամք իցեն) խուժադուժ արքայի, ոչինչ հանդուրժես գործ մի գործել անբարի և դժպատեհ՝ բազմաց շահուց քեզ օգտաբեր. և ժամ՞ս ևս զմատնուԹենէ խօսել ընդիս ընդ զօրավարի Հռոմայեցւոց և Սիւղղասայ ինքնին գլխովին։ Իբրու ո՞չ այն Արքեղայոսն իցես դու, որ փախուցեալ ապրեցար 'ի Փերովնեայ սակաւ արամբք՝ 'ի քոց երկոտասան բիւրուց անտի. և որ զաւուրս երկուս ղօղեալ Թաքեար 'ի Նէրքս 'ի Ճահիճսն Որքոմենացւոց. և որ զարդիս անապատ կարգեցեր զԲիսոտիա 'ի բազմակոյտ դիականցն անկելոց"։

'Ի բանից աստի 'ի խոնարհուԹիւն փոխեալ Արքեղայոս, կայր ողբէր զՍիւղղաս դալալ 'ի մարտէն և 'ի հաշտուԹիւն գալ ընդ Միհրդատայ։ Հաւանեցաւ Սիւղղաս, և պայմանք դաշնին հաստատեցան օրինակ

զայս։ Թողուլ Միհրդատայ զԱսիա և զԸ-
Պափղագոնիա, և զի տացէ 'ի ձեռս Նիկո-
մեդէայ զՊիթիւնիա, և Արիոբարզանին՝
զԿապադովկիա. և տալ Հռոմայեցւոց
քանքարս երկու հազար, և պատրաստել
նոցա նաւս եօթանասուն պղնձավառս՝ ա-
մենայն կազմածովքն։ Բայց և Սիղզայի
յանդգնելոյ կացուցանել Միհրդատայ ոչ-
ջոյն զարքայութիւն նորա, և վճռաւ զնա
նիզակակից առնել Հռովմայեցւոց։

Զայս եղեալ պայման, դառնայր Սիւ-
զաս և խաղայր ընդ Թեոտալիա և ընդ Մա-
կեդոնիա 'ի կողմն Հելլեսպոնտոսի, ա-
ծեալ ընդ իւր զԱրքեղայոս՝ որում և մե-
ծապէս դնէր շուք։ Այլ Արքեղայոս ան-
կեալ 'ի խօթութիւն գժուարին մերձ 'ի
Լարիսէ, անդ զտեղի առեալ Սիւզաս՝
խնամով դարման տանէր նմա, իբրու ար-
դարև որ 'ի զօրավարաց անտի իւրոց լցէ
այրն և 'ի համահարզից։ Բայց այս բանք
ստուերածս լին ածէին Քերոնէան նա-
հատակութեան նորա, իբրու որ ոչինչ ա-
նարատութեամբ անդանօր նահատակեալ
լցէ. մանաւանդ զի 'ի դարձուցանել Սիւ-
զայի առ Միհրդատ զամենայն զբարեկամս
նորա զգերեալսն, տայր դեղամահ կորու-
սանել միայն զբռնաւորն Արիստոնն զգըժ-
տեալն ընդ Արքեղայոսի. առ այս՝ զի և
լծաւոր գեռնոյ յայնժամ բիւր մի յԵ-
պեայ տայր Կապադովկացւոյն այնմիկ,
և բարեկամ և նիզակակից Հռոմայեցւոց
հռչակեաց զնա։ Այլ վասն բանիս այ-

սորիկ՝ ինքնին Սիւղլաս յիւր իսկ Յիշատակագիրն առնէ պատասխանի։

Բայց 'ի դեղերել նորա անդ գային հասանէին առ նա դեսպանք 'ի Միհրդատայ, հրեշտակութիւն բերեալ՝ եթէ բնաւ իսկ զպայմանս դաշինն յանձն առեալ արքայի, խնդրէ՝ մի 'ի բաց 'ի նմանէն հանել զՊափղագոնիա. զնոյն և յաղագս Նաւացն չէ՛ ինչ հաւան. սրտմտեցաւ Սիւղլաս և ասէ. "Զի՞նչ իցեն բանքդ։ Պնդեալ ուրեմն է Միհրդատ ունել զՊափղագոնիա և զլեռնայ զնաւսն։ Միհրդատ այն՝ զոր ետն կարծէի երկիրպագանել ինձ, զի թողի նմա զաջոյ ձեռն նորա, որով 'ի Հռոմայեցւոց բիւրաւորս 'ի մահ վարեաց դա։ Բայց արագ ձայն այլ արձակեսցէ դա, յանցանել իմում յԱսիա։ Արդ կացեալ նորա այժմ 'ի Պերգամոն, յարդարեսցէ ըստ կամի զմարտն՝ զոր ոչն ետես"։ Զահի հարեալ դեսպանացն, կային անմուունչ. այլ Արքեղայոս յողոք անկեալ Սիւղլայի՝ ամոքէր զսրտմտութիւն բարկութեանն կալեալ զաջոյն և յարտասուս ցնդեալ։ Ապա ածէր հաւանեցուցանէր թոյլ նմա տալ ինքնին երթալ առ Միհրդատ և հաստատել զհաշտութիւնն ըստ պայմանին. յոր թէ երբէք չաջողեսցի, անձին արասցէ։

Յայնժամ Սիւղլաս արձակեալ զԱրքեղայոս, ինքն հորդան տայր 'ի Մեդիկէ. և անդ յաւարի առեալ և քանդեալ բազում ինչ, դառնայր 'ի Մակեդոնիա. և մերձ 'ի Փիլիպպէ՝ անդ գտանէր զԱրքե-

ղայոս, և իմանայր զյաջողել զնրացն. և զի՝ և Միհրդատ ինքնին խնդրէ անհրաժեշտ խօսել ընդ նմա։ Իսկ պատճառք բանին էր Փիմբրիաս, այն որ սպանեալ զՓլակկոս հիւ-պատոս որ 'ի հակառակ հերձուածոյն, և հարուածս 'ի վերայ ածեալ զօրավարացն Միհրդատայ, դիմեալ խաղայր ընդդէմ նորա. յորմէ զահի հարեալ Միհրդատ հաստատեցաւ 'ի միտս բարեկամութիւն ընդ Սիսղղայի հաստել։ Ապա եկեալ նոքա 'ի միասին 'ի Դարդանոն 'ի գաւառին Տրովադայ, էին ընդ Միհրդատայ ցուկանաւք երկերիւր, և բանակ զօրու ցամաքին երկուց բիւրուց հետևակաց և վեց հազար այրուձիոյ, և բազմութիւն յոյժ գերանդազէն կառաց. իսկ ընդ Սիսղղայի էին միայն գունդք ջրոք, և այրուձի երկերիւր։

Անդ ընդառաջ նորա եղեալ Միհրդատ և կարկառեալ առ նա զաջն, հարցանէր Սիսղղաս՝ եթէ արդեօք ըստ պայմանաց դաշնին Արքեղայոսի կամք իցեն նմա վճռոր տալ մարտին. իբրև լուաւ կայր արքայն, յաւել Սիսղղաս. "Այլ կարօտելոցն ինքնին պարտ է առաջին խօսել, իսկ յաղթականացն շատ է գլխովին լռելն"։ Ապա Միհրդատ առեալ 'ի խօսել 'ի ջրքմեղս անձինն, կէս մի զդիան պատճառէր 'ի մարտին յայնմիկ, և կէս մի զՀռոմայեցիսն սոդատանէր։ Կրկնեաց յայնժամ Սիսղղաս. "Իմ իսկ 'ի վաղնջուց լուեալ է յայլոցն բերանոյ, և զարդիս ես ինքն ճշգրիտ տեսանեմ, զի ես իսկ դու Միհրդատդ

ՀարտարախՏ հզօր, որում և 'ի գործս ապիրատս և յանիրաւս ոչ պակասէն գե-
ղապաՀոյՀք բանից »։ Եւ 'ի դէմս բերեալ նմա զգործս չարութեան նորա և քաջ իսկ յաղթահարեալ զնա, հարցանէր միւսանգամ՝ կայցէ՞ նա 'ի պայմանս դաշինն Արքեղայոսի. իբրև պատասխանի արար Այո՛, անդ Սիւղղաս մարդասիրապէս ողջոյն տայր նմա, և զձեռան զպարանոցաւն ածեալ՝ համբուրէր զնա։ Ապա անգանօր կոչեալ զարքայս կրկին զԱրիոբարզան և զՆիկոմիդէս՝ հաշտեցուցանէր զնոսա ընդ Միհրդատայ։ Յայնժամ Միհրդատ տուեալ նաւս եօթանասուն և աղեղնաւորս հինգհարիւր՝ ելեալ նաւէր 'ի Պոնտոս։

Բայց Սիւղղաս տեսեալ զզօրականն դժկամակս բերեալ ընդ հաշտութիւնն, (քանզի և դժոխըմբերելի յոյժ երևէր նոցա, զի որ 'ի Թագաւորս ոխերիմ Հռոմայեցւոց, յորոց և բիւրս հնգետասան 'ի մահ վարեաց նա յԱսիա 'ի միում աւուր, արձակեցաւ այնպէս խաղաղութեամբ, առեալ ընդ իւր մթերս ընչից և զաւարն Ասիոյ, զոր գողութեամբք և հարստահարութեամբք չարչարեաց ամս չորս). ապա Սիւղղաս 'ի չքմեղս իւր ցուցանէր զօրականին, եթէ ինքնին առանձին չէ՞ նա բաւական մարտ դնել կռուել ընդ Փիմբրիասայ և ընդ Միհրդատայ՝ 'ի դաշնաւորել նոցա ընդդէմ նորա։ Ասաց՝ և չու արար խաղայր ընդդէմ Փիմբրիասայ որ բանակեալ կայր 'ի Թիւատիր. և ինքն բանակ հարեալ մօտ

առ նա, փոս հատանէր շուրջ զբանակաւն։ Իսկ յայնժամ զօրականք Փիմբրիասայ ելեալք 'ի պատնշացն՝ ձորձ միայն արկեալ զանձամբ, գային յողջոյն և 'ի համբոյր զօրականին Սիւղղայի, և մոռադիւրադոյն ևս վաստակակից լինէին նոցա։ Անդուստ Փիմբրիաս տեսեալ զփոփոխեալ զիւրոյ զօրականին, զահի հարեալ 'ի Սիւղղայէ՝ իբրև յանհաշտ թշնամւոյ, անդ 'ի բանակին երթայր զիւրովն։

Յետ այսորիկ Սիւղղաս ածէր հասարակաց դատակնիք տուգանաց 'ի վերայ Ասիոյ՝ երկուց բիւրուց քանքարաց. իսկ և առանձինն յոյժ նեղեցան տունք սոսկականաց 'ի խեռուութենէ և 'ի հարստահարութենէ իւրոցն՝ որ եկեալ բնակէին 'ի նոսա։ Քանզի հրաման էր Սիւղղայի 'ի վերայ վանատրոցն՝ տալ օր ըստ օրէ դրամակշիռս վեշտասան զօրական հիւրոյն. տալ և կերակուր նմա և բարեկամացն հրաւիրելոցն առ 'ի նմանէ. իսկ միւսմ միւսմ 'ի գնդապետացն՝ օր ըստ օրէ դրամակշիռս յիսուն, և ագանելի մի առ տնին, և միւս ևս՝ յելանելն արտաքս։

Ապա ամբարձեալ հանդերձ ամենայն նաւուք յԵփեսեայ՝ յաւուրն երրորդի հասանէր 'ի Պիրէոն։ Անդանօր նա իւղագրելեալ, գրաւականէր անձին զԱտոնագարանն զԱպելլիկոնիսեայ Տէյոսի, յորում բազումք այն էին 'ի մատենից անոմ Արիստոտէլի և Թէոփրաստեայ՝ սակաւուց ոմանց միայն ծանօթք 'ի ժամանակին։ Եւ

պատմեն՝ եթէ զայն Մատենադարան տա-
րեալ նա 'ի Հռոմ, անդ Տիբրանիոն Գրա-
մատիկոս շատ լինչ հատընտիր քաղեաց 'ի
նմանէ. յորմէ ապա 'ի ձեռս բերեալ Ճո-
խագոյն զհաւասար մատենից Անդրոնի-
կոս Հռոդացի, 'ի լոյս ընծայեալ արձա-
նագրեաց զՊնական՝ որ յածին այժմ։ Այլ
արդեօք հինքն ճեմականաց երևին առան-
ձին արք շնորհաբանք և բանասէրք. բայց
ոչ զբուամբ արկին նոքա 'ի մատենից անտի
Արիստոտէլի և Թէոփրաստեայ, ոչ շատ
լինչ և ոչ դարձեալ Ճշգրիտս. քանզի 'ի
պատճառս ժառանգին Նեղեայ Սկեպսիով-
նի՝ որում զայն մատեանն Թողեալ էր
Թէոփրաստոս, 'ի ձեռս անկան նոքա անի-
մաստասէր մարդկանն և անուսից։ Այլ
մինչդեռ յԱթէնս դեգերեալ կայր Սիս-
ղաս, ցաւ թմբրութեան ծանրատաղ-
տուկ անկանէր յոտսն Սիսղղայի, զոր՝ Թռ-
թռվել ոտնառութեան՝ կոչէ Ստրաբոն։

Այր աղագաւ նաւեաց նա յԱդիպտոն
և անդ դարմանէր 'ի ջերմուկսն, պարա-
պեալ և զբօսեալ հանապազօր ընդ Դիո-
նիւսեան բանդագուշելոցն։ Եւ էր երբեմն
զգնալ նմա առ ծովափամբն, և անդ 'ի
ձկնորսաց ածել նմա ձկունս գեղեցիկս
յոյժ. զուարճացեալ Սիսղղաս 'ի պար-
գևն, հարցեալ և լուեալ եթէ յԱղէաց-
ւոց անտի են արքն, ասէ Սիսղղաս. "Եւ
լցէ՞ ոք դեռ ևս կենդանի յԱղէացւոց".
քանզի յետ Ողբոմենեան մարտին՝ զհետ
մտեալ նա քանդեաց քաղաքս երիս զԲիով

տիոյ, զԱնթեդոնա, զԼարիսսիա, և զԱ-
ղէա։ Ապա արքն զահի հարեալք կային
անշշունչ. մանր ժպտեցաւ Սիսղլաս, և
արձակէր զարան խաղաղութեամբ և խրն-
դութեամբ, իբրու որ յանդիման եղէն
նմա՝ աղաչաւորս ընդ իւրեանս ունելով
ոչինչ ուսպէտ և փոքրոգիս։ Եւ պատմեն՝
եթէ քաջալերեալ Աղէացիք, ժողովեցան
և բնակեցան անդրէն 'ի քաղաքին Իւրեանց։

Յետ այսորիկ ելեալ 'ի ծով ընդ Թես-
տաղիա և ընդ Մակեդոնիա, կազմէր պատ-
րաստէր Սիսղլաս հազար և երկերիւր նա-
ւուք անցանել 'ի Տիւրաքիեայ 'ի Պրեն-
դէսիոն։ Անդ մերձ կայ Ապողոնիա, և 'ի
հանդիպոյ նորա 'Նիւմիէոն՝ վայր նուիրա-
կան, որ 'ի դալարաղուարձ հովտացն և 'ի
մարգացն բոլոր անուսաւ աղբիւրս հրոյ՝
գնայուն և ծաւալական։ 'Ի նմին տեղւոջ
սահեն դասանել և ձերբակալ առնել յայն-
ժամ զմի 'ի Սատիւրայց 1 անուն, որ անդ 'ի
քուն կայր. Ճշդիւն յայն տիպ դիտակի և
'ի կերպարանին՝ զոր մեզ 'ի դէմս բերեն
անդրիագործք և կենդանագիր նկարիչք. և
ածեալ բերեալ զնա առ Սիսղլաս, հար-
ցեալ լինէր Սատիւրն 'ի ձեռն բազում
թարգմանաց՝ ո՞ ոք արդեօք ի՞նչ. նա հա-
զիւ բարբառ մի 'ի դուրս տուեալ ոչինչ
իմանալի, այլ խռպոտ և խաւիարաձայն,
մանաւանդ խառն 'ի խինջելոյ ձիոյ և 'ի
մայելոյ նոխազի՝ այնպէս ձայն մի արձա-
կեալ, սոսկացաւ Սիսղլաս և հրամայէր 'ի
բաց յերեսացն հանել զնա։

Իսկ հանդերձեալ անցանել ընդ ծով՝ խիթայը նա, եթէ 'ի ժամանել զօրակա-նին յԻտալիա՝ օձտեալք ցրուեսցին նոքա ընդ քաղաքս իւրեանց. այլ նոքա երդումն կռէին միշտ կալ ընդ նմա, առ այս՝ և ոչ ըստ կամս անձանց չարիս անցուցանել ընդ Իտալիս։ Ապա և տեսեալ զնա կարօտեալ դրամոյ, այր այր սակ արկեալ 'ի ներքս մատուցին նմա իւրաքանչիւր ըստ գոյին. այլ նա չէառ յանձն, և գովեալ զնոսա և քաջալերեալ ևս 'ի լաւութիւն անդր, անցանէր գնայր՝ որպէս ասէ իսկ ինքն՝ 'ի դիմի հարեալ հնդեւասան զօրապետաց թըշնամեաց, որ զօրավար կային չորեքհարիւր և յիսուն գնդաց. յայտնապէս ցուցեալ նմա գից նշանս երևելիս զգեղեցիկ ելից։ Քանզի զոհ զոհեալ նորա անդէն 'ի հասանել իւրում 'ի Տարանտոն, տեսաւ 'ի լերդին տպաւորութիւն պատկի սարդենեայ և փինջազարդ կրկին՝ կախեալ։ Եւ վայր մի յառաջ քան զանցան տեսանէին 'ի տուրընջեան պահու 'ի Կամպանիա մօտ 'ի լեառն Եփէոն նոխազք երկու յաղթք՝ խեթկեալ ոգորելընդ միմեանս և մրցեալ և զմիմեամբք ելանել համբուն ըստ օրինակի գօտեկռուացդ. այլ ցնորք գլխովին էր երութացեալն, որ տակաւ երթայր և ամբառնայր յերկրէ, սփռէր ցնդէր աստ անդ ընդ օդաւ՝ հանգոյն ստուերատիպ ուրուականաց, և անհետանայր յաչաց։

Ապա յետ սակաւուց 'ի նմին իսկ վայրի խաղացեալ հասեալ անդր պատանին Մա-

ըիոս և Նորբանոս հիւպատոս ստուար բա-
նակաւ ընդդէմ Սիւղղայի, նա կարգ և ոչ
մի տուէալ զօրականին կամ դասաւորու-
թեան բաշխ, առհասարակ կամակար նա-
հատակեալ նոցա՝ անդէն 'ի փախուստ
զԹշնամին դարձուցանէր. և 'ի նեղն ըզ-
Նորբանոս արկեալ՝ վանեալ փակէր զնա 'ի
քաղաքն Կապուա, տապաստ արկեալ ո-
գիս եօԹն հազար: Եւ ապա 'ի յաղԹու-
Թենէ ասոի յայսմանէ՝ ասէ իսկ ինքն՝ ոչ
ցրուեցաւ 'ի նմանէ ամբոխն ընդ քաղաքս.
այլ եկաց մնաց ընդ նմա, և ունչս ևս առ-
նէին զԹշնամեացն բազմուԹեամբ: Պատ-
մէ դարձեալ՝ եԹէ անդ 'ի Սիլվիոն յան-
դիման եկ նմա 'ի ծառայից ոմն Պոնտիոսի
մարգարէացեալ, և ասէր զանձնէն իբրու 'ի
դիմաց եկեալ Ենիւոնեաց ազգ առնել նմա,
զի Թէպէտ և յաղԹական ինքն եղցէ 'ի կը-
ռուին, սակայն Թէ չփուԹայ՝ 'ի հուր դա-
տեսցի Կապետոլիոն. որ և եղև իսկ յա-
ւուր յորում գուշակեաց այրն, և էր
այն յառաջ քան զմի Նոնոսիցն Կինտիլիո-
նի, որում անուն կարգան այժմ՝ Յուլիս:

Առ այս դարձեալ և Մարկոս Լեվկոլ-
ղոս մի 'ի զօրագլխացն Սիւղղայի Ճակա-
տեալ մօտ 'ի Փիդենտիա վեՀտասան գնդօք
ընդդէմ յիանից գնդաց Թշնամեացն, Թէ-
պէտ և անվեհեր 'ի զուարԹամիտ քաջու-
Թիւն զօրականին, այլ բազմագոյնք ան-
զէնք պատահեալ 'ի ժամուն, դանդաղէր
վարանեալ 'ի կռիւն: Մինչդեռ նա յայս
մտախորհ, անդուստ սիւգ հանդարտ շրն-

ջեալ 'ի մերձաւոր մարգարօտ դաշտէն, ածէր թափէր 'ի բանակ անդր Լեւկողղոսի՝ ծաղկանց բարդս բարդս, և ցանեալ ափռեալ ծաղկունք այսր անդր եկին դադարեցան 'ի վերայ ասպարաց և սաղաւարտաց, որպէս զի և իբրև պատկաւորք ոմանք յանդիման թշնամւոյն երևեցան առհասարակ զօրականք։ Յորմէ և մեծապէս խրախուսեալ նոքա և խառնեալք 'ի կռիւն՝ տարան յաղթութիւն, տապաստ արկեալ 'ի թշնամեաց ոգիս բիւր մի և ութ հազար, և հասեալ կալան զբանակն։ Սա այս Լեւկողղոս էր եղբայր միւսոյն Լեւկողղոսի, այն որ ապա եհար խորտակեաց զՄիհրդատ և զՏիգրան։

Բայց Սիւղղայի տեսեալ՝ զի դեռևս շուրջ զնովաւ պաշարեալ կան թշնամիք և սաստիկ ստուար բանակօք, տեսեալ և զիւր նուազութիւնն, խորամանկ խորհրդով հրավիրէր նա 'ի հաշտութիւն խաղաղութեան զՍկիպիոն՝ մի 'ի հիւպատոսաց անտի. ընկալեալ նորա զհրաւէրն, շատք ապա խրմբ բէին ատեանք խորհրդոյ և բանագնացք լինէին ընդ միմեանս. այլ Սիւղղայս պատճառս բազումս բաղբաղեալ և անչրպետ 'ի մէջ արկեալ՝ երկայնել ձգել զելս իրացն, ժամ տուեալ զօրականին իւրոյ՝ որ կիրթք ևս էին իբրու զիւրեանց զօրավարն 'ի դաւ և յամենայն հրապոյրս պղտորս, յինքն զզօրականն Սկիպիոնի յանգուցանէր 'ի խեղդս շրթանց և 'ի կաշառս։ Քանզի սպրդեալ մտեալ նոցա 'ի ղակիշ անդր

թշնամեացն և խառնեալ ընդ նոսա, ա-
րագ արագ յանգուցանէին զկէսս արծա-
թով և զկէսս խոստմամբք, և զկէսս դար-
ձեալ համոզակեր շաղաւաշուրթն բա-
նիւք։ Որպէս զի և մերձեալ ապա անդր
ինքնին Սիւղղաս քսան գնդօք, և իւրոյ զօրա-
կանին ողջունեալ՝ զՍկիպիոնինն, նոքա փո-
խադարձ ողջունիւ յարեան և միամտեցան
ընդ նոսա. իսկ Սկիպիոն միայնակ մնա-
ցեալ 'ի վրանին՝ ձերբակալ լինէր, այլ ա-
պա արձակէր յաղաստութիւն։ Եւ այն-
պէս ապա Սիւղղաս 'ի ձեռն քսանից գընդ-
գացն՝ իբրու ձեռնընդեալ և հրաւիրակ
թռչնօք ոմամբք խայծեալ և որսացեալ
գունդս քառասուն զթշնամեացն, ածեալ
բերէր առհասարակ յիւր բանակն։ Ուստի
և պատմեն ասել Կարբոնիի, եթէ 'ի կը-
ռուեալ իւրում ընդդէմ Աղուեսու և ընդ-
դէմ Առիւծու՝ դարանեալոցն որջացեալոցն
յոգին Սիւղղայի, անդ Աղուէսն առաւել
ևս չարչարէր զնա։

Այլ յետ այսորիկ մօտ 'ի Սիդնիոն
հասեալ Մարիոս ութսուն և հինգ գընդ-
գօք, ասպարէզ կարդայր Սիւղղայի. այն՝
որ յօժարամիտ ևս տենչայր զայն օր մարտ
գնեալ կռուել, իբրև և տեսիլ նմա երևու-
թացեալ իսկ էր 'ի գիշերին յայնմիկ յա-
նուրջն, այսպիսի ինչ։ Թուէր նմն նմա
տեսանել զծերն Մարիոս վաղնջուց մե-
ռեալ՝ խօսել ընդ պատանւոյն Մարիոսի
որդւոյն իւրոյ, և խրատել զնա անձնապահ
յոյժ լինել այգուն եղելոյ. իբրու որ այն

օր նմա մեծաց աղէտից գուժաբեր ելեալ։ Ուստի և Սիսղլաս պատրաստեալ յոյժ էր 'ի կռիւն, և առաքէր կոչէր զԴոլոբէլլա բացագոյնս բանակեալ՝ գալ միանալ ընդ նմա։ Իսկ Թշնամիք պահ արկեալ ուղղոյն և կրճիմն գործեալ, զօրականք Սիսղլայի զդէմ դարձեալ բանային ճանապարհ. և յայն գործ ապա այնչափ վաստակեցան նոքա՝ մինչև յոյժ պարտաւեալ նոցա. առ այս դարձեալ և տեղատարափ անձրևաց յայնժամ մեծապէս տագնապէր զնոսա։ Այր աղագաւ և գնդապետք առաջի եկեալ Սիսղլայի՝ աղաչէին դեգերել 'ի մարտն. ցուցանէին զզօրականն վատեալ յաշխատութեանէն և յորսայս անկեալ 'ի վերայ ասպարացն։ Իբրև յակամայս Սիսղլաս հաւանեցաւ բանին, հրաման տայր բանակ հարկանել. իբրև սկիզբն արարին շերտաւորս փակել և փոս հատանել 'ի հանդիպոյ բանակին, անդուստ Մարիոս խաղայր անկանէր 'ի վերայ խրոխտ և խիզախ՝ յերիվար աշտանակեալ՝ 'ի գլուխ զօրականին, իբրու միանգամայն հասանել որսալ զնոսա յաղմկին նոցա, և հեշտին վանել վարատել զնոսա։ Բայց անդ Քաջն 'ի գլուխ զանրջաբանութիւնն հանեալ կատարէր Սիսղլայի։ Քանզի 'ի արտմտութիւն բարկութեան վառեալ զօրականին, թողեալ զգործ աշխատութեն, և 'ի վերայ դարաւանդաց խրամոցն զաշտէան հարստեալ, և ձգեալ սուսերս՝ ձայն տուեալք խրախուսեցին. յարձակեցան հարան 'ի գիմի, և

սաստիկ խառնեցան 'ի գոռն. որոց և ոչ շատ ինչ զդէմ կալեալ թշնամեացն՝ 'ի փախուստ դառնային, հարուածս առեալ մեծամեծս: Իսկ Մարիոս խուճապեալ 'ի Պրենէստոն, անդ զդուրսն գտանէր փակեալ. բայց 'ի բարձանց անտի պարան մի խաղացուցեալ՝ առեալ ածէր նա զմիջոցն, և այնպէս քարշեցաւ 'ի վեր ընդ պարիսպսն: Ալ կէսք ասեն՝ ընդ որս և Փէնէստէլլաս՝ եթէ Մարիոս և ոչ զգաց ինչ մարտին այնորիկ. այլ քանզի խոնջեալ յոյժ էր 'ի տքնութեանցն և յաշխատութեանցն, տուեալ զնշան մարտին՝ ինքն գնացեալ գետնախչտի ընկողմանէր ընդ հովանեաւ միով, և 'ի քուն թանձրութեան մտեալ՝ հաղիւ ուրեմն սթափէր ապա յետ հարուածոյն, մինչդեռ անդ 'ի փախուստ ևս վարատէին իւրն զօրականք: Իսկ յայնժամ՝ ասէ իսկ ինքն Սիւղղաս՝ զօրականս քսան և երիս միայն անկեալ յիւրոցն. իսկ 'ի թշնամեացն՝ քսան հազար, և գերի՝ ութ հազար.

Ոչինչ պակաս քաջութեամբ վճարեցան կրկ և 'ի ձեռս զօրավարացն իւրոց Պոմպէի և Կրասսոսի և Մետեղոսի և Սերվիլիոսի. քանզի և սոքա զեան և ոչ մի տարեալ կամ թէ դուշնաքեայ ինչ, հարին խորտակեցին բանակս յաղթս զթշնամեաց. որպէս զի և Կարբոնն ինքնին՝ մեծապէս թիկնածու հակառակ կողմանն՝ փախստեայ գիշերադնաց 'ի բանակէն նաւեալ անցանէր 'ի Լիբիա:

Ա՛յլ 'ի վերջին մարտի պատերազմի ըզ-
Սանիդացին Տեղեսինոս, այն՝ որ իբրև
գօտեմարտ դադարեալ 'ի հանգստի՝ 'ի
վեգ դայր ընդ պարտասելոյ ումեմն, գոգ-
ցեա զգեանեալ տապալէր զնա Սիւղլաս
առ գուրսն Հռովմայ։ Սա այս Տեղեսինոս
խմբեալ բազմաձեռն գունդ զօրականի ընդ
Լամպոնիոսի Լեվանոսի, խաղայր հապ-
ճեպ 'ի Գրենէստոն յանդորր հանել ըզ-
Մարիոս՝ որ անդ պաշարեալ կայր. բայց
լուր առեալ զյարձակմանն Սիւղլայի և
զՊոմպէի 'ի վերայ իւր յառաջոյ և 'ի Թի-
կանց, և յերկոցունց կողմանց միանգա-
մայն 'ի նեղքս փակեալ, անդ քաջամար-
տիկ այրն և քաջահմուտ 'ի մեծամեծ մար-
տիցն՝ զոր մղեաց, յարուցեալ գիշերի չու
առնէր ամենայն բանակաւն 'ի Հռոմ կոյս.
և անդ վայրիկ մի ևս՝ անպահապան գտեալ
զքաղաքն՝ հորդան տայր 'ի նեղքս։ Անդա-
նօր զտեղի առեալ տան ասպարիսաւ հե-
ռի 'ի Կոլլինեան դրացն՝ օթագայէր հան-
դէպ քաղաքին յանձնապատան մեծա-
պէս խնդացեալ յուսովն՝ զի այնպէս հնա-
րիմաց խորհրդով խաղ արար զկրկին զօրա-
վարան։ Իսկ 'ի ծագել աւուրն, այրուձի
ընդդէմ յարձակեալ նորա 'ի պատանեաց
անտի Հռովմայ 'ի հոյակապ որերոյն, նա
զբաղում 'ի նոցանէն գիտապատ արկա-
նէր՝ ընդ որս և զԿղաւդիոս զԱպպիոս պա-
տանի տոհմիկ և կորովի։ Ուստի և 'ի պա-
հուն՝ մինչ այս մինչ այն իբրև շռինդն ա-
հագին հարեալ 'ի քաղաքին, գուժայր

ճչայր կանանին, և այսր անդր վարատեալ վազէր առհասարակ խուժան ամբոխին՝ իբրու որ բռնութեամբ առեալ իսկ ի ցէ քաղաքին, անդուստ առաջին յակն արկանէին զԲալբոս մորակ 'ի կուշտ վեց հարիւր այրուձիով հասեալ 'ի կողմանէն Սիւղղայի. անդանօր վայր մի զկայ առեալ Բալբոս՝ մինչև 'ի քրտանէն զովանալ երիվարացն, անդէն ապա կազմէր պատրաստէր անկանել 'ի վերայ թշնամեացն։ Յայնմ պահու 'ի վերայ հասանէր և ինքնին Սիւղղաս. հապճեպ տագնապաւ ճաշ տուեալ առաջնոցն, առեալ կարգէր 'ի ճակատ մարտի։ Անդ աղերս առաջի արկեալ նորա Դոլոբելլաս և Տուրկուատոս վայր մի հանգարտել, և մի յոգնեալ զօրականին ճեպ տալ 'ի վտանգ վերջին, իբրու որ ոչ ընդ Կարբոնիի և ընդ Մարիոսի մարտ դնել կռուել հանդերձեալ ի ցէ, այլ ընդ Սաւնիացւոց և ընդ Լեվանացւոց՝ ազգ ոսերիմ հռովմայ և գոռ մարտիկ, 'ի բաց մերժեաց՝ հրաման տայր Սիւղղաս նշան փողել հրոսակին և գոռոյթ տալ, թէպէտ և օրն կարճատեալ մօտ 'ի ժամ տասներորդ։

Հապա անդանօր բուռն և սաստիկ մարտին եղելոյ՝ որպիսի ոչ երբէք, յաղթական փառաք մեծաւ ելանէր Կրասոս 'ի թևն աջոյ. այլ ձախոյն հարեալ վատթարեալ անդէն Սիւղղաս 'ի ձի աշտանակեալ ճերմակ՝ փորատող գոռութեան և օգապարիկ, շահատակեալ դիմէր 'ի թիկունս օգնականութեան. յորմէ երկուք ոմանք

'ի թշնամեացն ծանուցեալ զնա՝ ճՕՃեալ կշիռ զնիզական արձակէին։ Նա ոչինչ միտ եդեալ, որ առ նմա ասպատեան իրաղգած վտանգին՝ մորակեալ զերիվարն և յառաջադէմ վազս տուեալ՝ անցուցանէր զթափ նիզակացն, մինչև մօտ յադի երիվարին քերեալ տիգին՝ գնայր և վարսէր 'ի գետին։ Եւ ասեն՝ ունել Սիսղղայի առ իւր դրօշեալ փոքրիկ զԱպողոնի յոսկւոյ՝ առեալ 'ի Դեղիեայ, և ցանգ տանել 'ի ծոցի յամենայն 'ի մարտս. իսկ յայնժամ 'ի մեծի տագնապին համբոյրս ևս տալ դրօշելոյն, և ասել այսպէս. "Ո՞վ Պիւթեանդ Ապողոն, որ 'ի մարտս բազմագէմ՝ հոյակապ և մեծ զերջանիկն զՍիսղղաս Կուռնելիոսն գործեցեր, ածեալ բերցէս դու զնա առ դուրս իւրոց հայրենեացն՝ անդ ամայի լքանել զնա և անփառունակ 'ի կորուստ մատնել զնա հանդերձ քաղաքացւովքն"։ Զայս օրինակ նա յայնժամ՝ որպէս ասեն՝ ապապարեալ զանձն 'ի գիսն յայն՝ գնայր շուրջ վազէր 'ի մէջ զօրականին. կիսոցն աղերս արկանէր, և կիսոցն սպառնալիս 'ի վերայ կապէր, և զկէս դարձեալ անդէն առկայացուցանէր, զի մի 'ի փախուստ մտաբերեացեն։ Սակայն 'ի վերջէ հարեալ խորտակեալ ձախոյ թևոյն, և ինքն դարձեալ խառն ընդ փախստականսն դիմեալ ապաւինէր 'ի զակիշ անդր, զբազումս կորուսեալ յիւրոց բարեկամացն և յականաւոր մարդկանէն։ Ոչինչ նուազունք անդանօր և յորոց ըստ քաղաքն ելեալ էին 'ի զնին կըռ-

ուոյն, անկանէին առաթուր. զի և վասն քաղաքին յայնժամ վճարեալ իսկ էր, և դէպ լինէր յայնժամ և զպաշարումն ևս բառնալ 'ի Մարիոսէ. քանզի և շատք 'ի վախստէիցն վարատեալք հասեալք մինչև անդր՝ թեւադիր լինէին Ովելլեայ Լուկրետիոսի՝ որ 'ի վերայ կայր պաշարմանն, չու առնել վաղվաղակի. իբրու եթէ վասն Սիւղղայի վճարեալ իցէ, և քաղաքն դըշխովին թշնամւոյն 'ի բուռն անկեալ իցէ։

Բայց յայնժամ 'ի խոր գիշերին գայլին հասանէին 'ի բանակ անդր Սիւղղայի հրեշտակք 'ի Կրասոսէ. խնդրէին կերակուր վասն Կրասոսի և զօրականին. քանզի 'ի պարտուութիւն նոքա զթշնամին մատնեալ՝ հետամուտ վանեցին զնոսա մինչև յԱնտեմնա, և անդանօր բանակեալ նստին։ Զայն լուեալ Սիւղղայ, և զի և 'ի թշնամեացն բազմագոյնք տապաստ անկան, յառաւօտուն պահու եղեալ երթայր ինքնին յԱնտեմնա։ Անդանօր առ նա պատգամաւորք հասանէին և յերից հազարաց թշնամեաց՝ խնդրեալ արձակուրդ։ Նա խոստումն կռեաց նոցա յանդորր հանել զնոսա, եթէ ելեալ 'ի վերայ հասուցեալ այլոց թշնամեացն՝ այնպէս առ նա յարուցեալ եկեսցեն։ Նոքա հաւաստս ընծայեալ նմա, անկանէին ապա 'ի վերայ այլոց, և անդ բազումք սատակեցան 'ի միմեանց։ Ապա Սիւղղայ խմբեալ առհասարակ զնոսա, և զայլն ևս որք միանգամ կենդանիք մնացեալ էին՝ թուով վեց հա-

զար, և 'ի կրկէս ամիսուէաալ զնոսա, ինքն խմբէր զծերակոյան 'ի մեհեան անդր Ենիւոնի: Իսկ 'ի պահուն յորում հրապարակախօս լինէր նա, անդուստ մարդիկն՝ որոց յանձն եղեալ էր՝ սուր 'ի վերայ եդեալ կոտորէին զվեց հազարսն: Անդ ապա ահագին շուինդն յուզեալ վայից և գուժից և աղաղակի այնչափ մարդկանն խողխողելոյ յանձուկ 'ի վայրին, ահաբեկ սրբոտաթափ լինէր սինկղիտոսն. այլ ինքն Սիւղղաս անվրդով և 'ի կերպարան դիմացն անդրդուելի, ասէր ուշ ունել նոցա իւրոց բանիցն. մի ինչ խռովել հոգալ՝ որ ինչ արտաքոյ կատարի, զի 'ի նորայն հրամանաց իրատին անզգամք 'ի մարդկանէ: Յայնժամ ապա և 'ի կարի թանձրամտաց ոք հռոմայեցւոց և 'ի խօթասրտացն հաւասի 'ի վերայ կայր, զի զլուծ բռնաւորութեանն ոչ եթէ սասանեցուցին ինչ յանձանց, այլ միայն փոխեցին:

Արդ՝ Մարիոս անդատին 'ի սկզբանէն խիստ և անհամբոյր, ոչինչ փոխեցաւ ապա 'ի բարգաւաճել իւրում յաւագութեան և 'ի զօրութեան, նա՛ և ևս ժանտացաւ յաննուէր բարոյն: Իսկ Սիւղղաս՝ որ չափաւոր իմն և քաղաքական բնաւորեցաւ դէմն յանձին բերել յառաջին բախտին, և առաջնորդ կարծեցուցանէր իմն զանձն թիկնածու աւագանւոյն և ժողովրդասէր, առ այս դարձեալ՝ և 'ի մանկական տիոցն բարեմոյն կացեալ և ծաղրասէր, և կարեկիր անձն և գորովական, և յարտասուս

հեշտին. իսկ ապա ահագինս փոփոխեալ՝ տայր ապա իրաւացի ստգիւտ 'ի վերայ ա-ծել աւագութեանց բարձից, իբրու որք ժանտացուցանել բնաւորեցան զառաջին բարետոհմութիւն ոգւոցն, և խելայեղս գործել և փքուռոյցս և անագորոյնս: Իսկ թէ այս շարժումն ինչ իցէ և փոփոխութիւն բնութեանն արդեօք առ 'ի բախտէն յառաջ եկեալ, կամ թէ մանաւանդ տրն-կակից զանխուլ չարութեանն առակումն 'ի մեծի աւագութեանն, այլում մատե-նագրութեան թողլի է 'ի սահմանել:

Իսկ յետ այսորիկ Սիսղլաս զհետ կըր-թեալ 'ի կոտորած մարդկանն, և գիակամբք լցեալ զքաղաքն՝ անթիւ և անսահման. քանզի անդ և բազումք՝ որք չունէին ինչ բան ընդ Սիսղլայի, 'ի մահ վարէին 'ի շնորհս իւրոցն առ թշնամութեան ինչ. և յայն-ժամ անդուստ պատանի ոմն Գայիոս Մե-տեղլոս անուն համարձակեալ հարցանէր զՍիսղլաս 'ի Սինկղիտոսին. Իսկ ո՞ր սահ-մանն աղէտիցն իցէ. ցո՞ր վայր յառաջ ևս խաղասցէ, և ե՞րբ արդեօք ակն կալցեն դուլ իրացն լինել. "Քանզի մեք ինքնին՝ ասէր պատանին՝ ո՛չ բարեիսօս եմք ինչ վասն որոց քո 'ի մտի եդեալ է 'ի կորուսանել, այլ աներկմիտս միայն գործել՝ զորս քո սահ-մանեալ է 'ի կեցուցանել": Առ այս պա-տասխանի տայր Սիսղլաս, եթէ և ո՛չ ինք-նին գիտէ տակաւին՝ զորս ապրեցուցանելն հանդերձեալ իցէ: Կրկնեաց Մետեղլոս. "Գո՞նեա ուրեմն յայտնեացես մեզ զորս

պատուհասել հանդերձեալ իցես "։ Տայր պատասխանի Սիսղաս՝ առնել զբանն։ Այլ կէսք ասեն՝ եթէ զվերջինդ ոչ Մեսեղրոս խնդրեաց, այլ Ափիդիոս ոմն 'ի մարդելուզաց անտի Սիսղայի։

Արդ անդէն վաղվաղակի Սիսղաս առեալ տարագիր գրէր ուղթսուն այր 'ի քաղաքացեաց անտի, առանց խորհրդոյ աւագանուոյն։ Առհասարակ յայնժամ սրրտնեալք, նա օր մի հանդարտեալ՝ վտարանդի գրէր և այլ ևս երկերիւր և քսան. ապա և յերրորդում նուագին՝ նոյնչափ։ Եւ հրապարակախօս եղեալ ասէր՝ վտարանդի գրել առհասարակ զամենեսեան՝ զորս յուշ էած. և որք յայնժամ մոռացօնք են նմա՝ գրեսցէ յորժամ յիշեսցէ։ Առ այս՝ և որ միանգամ ժողովեալ ապրեցուսցէ 'ի տարագրելոց անտի, դատակնիք մահու վասն մարդասիրութեանն ած 'ի վերայ մարդոյն. չեթող 'ի բաց ոչ զեղբայր, ոչ զորդի, ոչ զծնողս։ Իսկ որ սպանցէ 'ի նոցանէ, վարձ սահմանեաց մարդոյն երկուց քանքարաց, թէպէտ և 'ի ծառայից ոք սպանցէ զտէրն կամ յորդւոց ոք զհայրն։ Իսկ որ առաւել քան զամենայն անիրաւութեամբ լի, զի և զորդիս տարագրելոցն և զթոռունսն վտանուն քարոզեաց, և զամենեցուն զգոյն յարքունիսն գրաւեաց։

Առ այսոքիւք և ոչ Հռոմայ միայն քաղաքացիք տարագիր գրեցան, այլ և յամենայն իսկ քաղաքացն Իտալիոյ։ Զեկաց գնց մեհեան՝ անշաղախ յարենէ, չեկայ

երդ նուիրական՝ վանատուր հիւրոցն, չէ-
զև տուն հայրենի՝ ապաւէն փրկութեան.
անկան դիտապատ՝ ընդ ապաժոյժ եկին
առհասարակ արք 'ի ծոցս կանանց, և որ-
դիք 'ի դիրկս մարց։ Իսկ որ յամբաւ կոտո-
ղածին տապատ անկան յատելութեանն
սակս և 'ի թշնամութեանն, նուազունք էին
առ որովք միանգամ 'ի սպանդ վարեցան
'ի պատճառս արարոց իւրեանց. զի և մար-
գախոշոշքն ինքնին տային վկայութիւն,
եթէ " Մահ մարդոյդ այդմիկ առթեաց
իւրն գեղեցիկ դաստակերտ. և սմա դը-
րախան պարտիզին նորա, և միւսոյդ դար-
ձեալ՝ իւրն ջերմուկք ջրոցն "։ Իսկ յայն-
ժամ և Կուինտոս Աւրելիոս աւագ՝ որ
ձեռնամուխ ինչ էր 'ի գործ և անբաժ
զինքն կարծէր 'ի կրից անտի. բայց զի սխ-
տակից կարեկից էր վշտատեսիցն, երթեալ
երբեմն 'ի հրապարակ անդր և կացեալ վեր-
ծանէր 'ի պնակին զհամար տարագրելոցն.
և զինքն ևս տեսեալ 'ի համարին, վայեաց
այրն, " Եղո՛ւկ եմ ես, և զիս ինքնին իմ
կալուած որ ՅԱլբանոն՝ հալածէ աւա-
դիկ "։ Ապա վայր մի յառաջ քայլեալ 'ի
փողոցին, անդ խողխողեալ 'ի հետամուխցն՝
անկանէր տապատ։ 'Ի նմին պահու և Մա-
րիոս ինքնին 'ի ձեռս անկեալ՝ երթայր
զնուրովն։

Յետ այնորիկ Սիսղղաս գնացեալ 'ի Պրե-
նէստոն, զառաջինն 'ի քնին առեալ պա-
տուհաս 'ի վերայ ածէր քաղաքացւոցն.
այլ ապա՝ երբու անպարապացեալ 'ի քնն-

նել, խմբեալ 'ի մի վայր անխտրաբար՝ հրա-
ման տայր առհասարակ ընդ սուր հանել,
և էին նոքա բիւր մի և երկու հազար. մի-
այն ապրեցուցանէր զայրն՝ առ որում հիւր
ընկալեալն էր. իսկ այն այր՝ աղնուական
մտածութեամբ լի կայր և ասէր, շնորհս
ինչ զանձին փրկութեան երբէք նա ոչ ու-
նել առն՝ որ սատակիչ հայրենեացն լցէ.
զայս ասաց՝ և խառնեցաւ և ինքն մահակից
լինել եղբարցն։

Իսկ որ առաւել քան զամենայն գժպա-
տեհ և օտար, դէպքն Լեվկիոսի Կատիլի-
նեայ։ Սա այս այր՝ մինչև յայտնեալ յայն-
ժամ ելից իրացն՝ սպանեալ զիւր եղբայրն,
դիմեաց ապա առ Սիսղղաս աղաչէր վտա-
ռանդի գրել զսպանեալն՝ իբրու եթէ կենդ-
դանի դեռ ևս լցէ. և գրեցաւ այնպէս։
Ոյր աղագաւ և Կատիլինա՝ հաճել զՍիսղ-
ղաս՝ չդքաւ և սպանանէր զՄարկոս զոմն
Մարիոս 'ի հակառակ հերձուածոյն, և ըզ-
գլուխն առեալ բերէր առ Սիսղղաս՝ որ
բազմեալ կայր 'ի հրապարակին. և գնա-
ցեալ 'ի մերձաւոր մկրտարանն Ապողոնի՝
անդ լուանայր զձեռսն։

Բայց Սիսղղաս մահունս գործեալ զայ-
սոսիկ, առ այսոքիւք և վիշտս այլ մեծա-
պէս հասուցանէր մարդկանն։ Քանզի և
իշխանապետ անձամբ զանձն համբաւեաց.
աւագութիւն խափանեալ յամաց հարիւր
և քսանից, զոր և անդրէն նորոգեաց։ Եւ
վճռաւ տուաւ նմա անպատուհաս արձա-
կուրդ՝ որչափ ինչ միանգամ գործեաց յա-

ռաջագոյն. իսկ և որ յառաջոյ՝ իշխանու-
թիւն տուաւ նմա ծայրալիր, սպանանել,
յաղքունիս գրաւել, գեռին բաշխել, շի-
նել և քանդել, և բառնալ և պարգևել
տէրութիւնս, որում և կամք ելցեն նմա։
Իսկ 'ի պարգևել իւրում զդրաւեալ գոյն,
այնպէս ինն յաւակնագոյնս գնայր և ՃՈ-
խաբար իշխանութեամբ բազմեալ յիւրում
բեմին, զի և քան զզրկանսն՝ առաւել ևս
գԺոխրմբերելիք էին ձիրք պարգևաց նորա.
պարգևեալ կանանց գեղանեաց, և քնա-
բահարաց նուագածուաց, և միմոսից խեղ-
կատակաց, և չարաց ազատագրելոց՝ զստա-
ցուածս կալուածոց ժողովրդեանն և ըզ-
հարկս քաղաքաց։ Եւ կիսոց դարձեալ տայր
ածել կին՝ յակամայս հարսանցն. իսկ և
յինքն կամեցեալ յանգուցանել զմեծն
Պոմպէոս, տայր նմա արձակել 'ի բաց զկին
իւր. և ինքն ընծայէր նմա զԵմիլիա ըզ-
գուստր Մետեղեայ կնոջ իւրոյ և զՍկաւ-
րոսին, 'ի բաց հանեալ զնա 'ի յղութեան
նորա 'ի Մագնոսէ Գլաբրիոնեայ՝ որում
հարսնացեալն իսկ էր. այլ Եմիլիա մեռա-
նէր 'ի ծնունդսն առ Պոմպէոսի։

Իսկ յայնժամ թեկն զհիւպատոսու-
թեան ածեալ Լուկրետիոս Ոփելլաս, այն
որ պաշարեալ պահեաց զՄարիոս, արդել
նմա Սիսղաս։ Այլ ապա իբրև թիկունս 'ի
խուժանէն գտեալ Լուկրետիոս՝ չոքաւ ան-
ձամբ 'ի հրապարակ անդր 'ի ձեռս բերել
զինդիրն, անդուստ Սիսղաս զմի 'ի հարիւ-
րապետացն արձակեալ՝ տայր սպանանել

զնա, ինքն բազմեալ յիւրում բեմին 'ի տա-
ճարին Դիոսկուրեանց, և 'ի գիտարանէն
'ի զնին եղելոցն կացեալ։ Ապա ձերբակալ
զՀարիւրապետն արարեալ և ածեալ զա-
ռաջեաւ բեմին նորա, նա լռեցուցեալ
զաղմուկն, ասէր՝ ինքնին հրաման տուեալ
բանին, և պատուիրէր Թողուլ 'ի բաց զՀա-
րիւրապետն։

Ա՛յլ էր նորա յաղթանակին հանդէս
շքեղգլխովին 'ի բազմակատար աւարաց ան-
տի աքքունեաց և 'ի նոր և 'ի հնաղ։ Բայց
զարդ մեծապէս և հանդիսարան գեղեցիկ
'ի նմա՝ էին խումբք արանց վտարանդե-
լոցն։ Քանզի 'ի հոյակապից անտի և 'ի ճո-
խից քաղաքին նորա զՀետ գնային պակա-
ւորք, կարդային զՍիւղղաս իւրեանց փրկիչ
և հայր, իբրու որք 'ի ձեռն նորա միւսան-
գամ ածան 'ի հայրենիսն և անդրէն ժա-
ռանգեցին իւրաքանչիւր զկանայս իւրեանց
և զմանկունս։

Իսկ յետ այնորիկ խմբեալ եկեղեցի մեծ,
և ինքնին անդանօր զՀամար տուեալ զիւ-
րոց նահատակութեանցն, ոչինչ պակաս
ճշգրտիւ և խնամով 'ի Թիւ արկանէր զա-
մենայն զգեղեցիկ բախտին բերմունսն, 'ի
նոյն և զամենայն զքաջութիւն զիւրոց մըր-
ցանացն. և 'ի վերջէ հրաման տայր Բարէ-
բաշոպ զինքն վերաձայնել, զի և զայն յայտ
առնէ անուանդ՝ Ֆէլիքս։ Իսկ 'ի գրել իւ-
րում ինչ առ Հելլենացիս և 'ի պատաս-
խանի առնել, ինքնին իւր անուն կարդայ
Էքսֆրօպէդօս, իբրու՝ Ասողկասէր։ Առ այս

և յախոյեանս՝ զոր ունիմք այժմ առ մեզ, այսպէս արձանագրեալ կայ. Լ՚ՈՒԻՈՍ ԿՈՆԷԼԻՈՍ ՍԻՍՂՈՍ Է՚ՖՐԻԹԻՈՍ։ Դարձեալ առ այս՝ և երկուորեակս ծնեալ նմա Մեսելիա՝ արու և էգ, արուին անուն դնէր՝ Փաւստոս. և իգին՝ Փաւստա. քանզի զբաբերբաղդն և զզուարթն կոչէն Հռոմայեցիք՝ ՓՈՒՍՏՈՍ։ Եւ այնչափ առաւել վստահ էր նա 'ի գեղեցիկ բախտն իւր, քան 'ի նահատակութիւնս մրցանացն, որպէս զի և յետ այնչափ մարդիկ 'ի մահ վարելոյ, և նորութիւնս այնչափ և մեծամեծս 'ի քաղաքին հաստելոյ, ոչինչ զանդիտեաց 'ի բաց զնշխանապետութիւնն դնել, և ողջոյն 'ի կամս ժողովրդեանն ապաստան զընտրութիւնն առնել զհիւպատոսացն՝ յորում և վիճակեցաւ իսկ ոչ ինքն. և գնայր շրջէր նա այնուհետև 'ի հրապարակին Իբրև զմի 'ի սոսկականաց. և անվեհեր զանձն առաջի ընծայէր՝ որ ոք միանգամ սրտնեալ ընդ նմա՝ հաւաքր ինչ զնրաց 'ի նմանէ պահանջէր։

Ապրդ յայնժամ ընդ հակառակս խորհրդոյն իւրոյ ընտրեալ 'ի հիւպատոս Մարկոս Լեպիդոս՝ այր ժպիրհ և իւր ոխերիմ, ոչ զի Լեպիդոս ինքնին արժանի ինչ էր բարձին, այլ զի ժողովուրդն զմիտս կամեցաւ հաճել զՊոմպէին, որ յոյժ ջանայր վասն Լեպիդեայ. տեսեալ ապա Սիսղղաս զՊոմպէոս յանձն զուարճացեալ ընդ յաղթութիւնն, կոչեալ զնա առ ինքն՝ ասէր. "Բաբէ քանիսն գեղեցիկ է՝ ով պատանի

դու, այդ քո քաղաքական հնարիմացու-
թիւն 'ի տալ քում անուանել հիւպատոս
զԼեպիդոս նախ քան զԿատղոս. զոյժ
խօթամիտն այր, նախ քան զայրն լաւ քան
զամենեսեան։ Յամ է քեզ արդ մի տալ
քուն աչաց, զի հզօր առաւել ընդդէմ քո
զքոյին գործեցեր հակառակորդ"։ Եւ ար-
դեօք մարգարէացաւ Սիսղղաս. քանզի ան-
դէն արագ արագ խեռ և ստահակ ևս սո-
վորեալ Լեպիդոս, 'ի վեգ կաքաւէր ընդ-
դէմ Պոմպէի։

Իսկ յետ այնորիկ զոտասանորդն յամե-
նայն գոյից իւրոց նուիրեալ Սիսղղաս հե-
ռակալի, կազմէր պատրաստէր ժողովրդեան
խնճոյս մեծահացս. և հանդերձանք պատ-
րաստութեանն այնչափ ինն առատացեալ
քան զպէտսն, զի և զօր ամենայն շատ ինչ
սպաս՝ առեալ ամային 'ի գետ անդր. և
նստեալ ընպէին գինի հին ամաց քառաս-
նից և առաւել։ Իսկ յայն խրախուն ա-
ւուրց բաղմաց՝ մեռանէր Մետելլա 'ի խօ-
թութենէ. և քանզի քահանայք արդէլին
Սիսղղայի գնալ առնա, և արդելուին դար-
ձեալ պղծել զտուն իւր 'ի սդահանդերձ
աշխարս, նա գրեալ զապահարզանին և
յղեալ առ նա, ետ հրաման բառնալ տա-
նել զնա յայլ տուն, մինչդեռ տակաւին
կենդանի էր, օրինապահ եղեալ յայնմ ըստ
անապաշտութեանն. սակայն և օրինազանց
լինէր յիւր իսկ օրէնսն որ յաղագս չա-
փաւորութեան ծախուց յուղարկաւորու-
թեանն, ծախս արարեալ 'ի նմա անչափա-

ւորս։ Զնոյն և օրինազանց լինէր նա և յիւ-
րում իսկ սահմանին՝ որ յաղագս բազմա-
ծախս ընթրեացն. քանզի խնդրէր ամոքել
դիւրել անձկութեանց սրտին 'ի գիներ-
բուաց անտի և 'ի խնճոյից՝ դրգանօք լի և
խեղկատակութեամբք։

Ապա յետ ամսոց սակաւուց հանդէր-
ձեցաւ և թատր մենամարտից. իսկ 'ի ժա-
մանակին չև գոլով ուրոյն զատուցեալ տե-
ղիք, այլ 'ի տեսարանին խառն 'ի խուռն
կային 'ի միասին արք և կանայք. ըստ գի-
պաց անդանօր մօտ Սիսղղայի նստէր 'ի կա-
նանց ոմն չքնաղագեղ և քաջազարմ։ Սա
էր դուստր Մեսսալեայ քոյր Որոտեփոսի
հռետորի՝ Վալերիա անուն, այն ինչ յայն-
ժամ արձակեալ յառնէն։ Սա լուիկ մինչիկ
անդանօր մօտեալ առ Սիսղղաս 'ի թիկանց
կուսէն և մխեալ ձեռն և կորզեալ մազ մի
'ի պատմուճանէն նորա, անդրէն դառ-
նայր նստէր 'ի տեղի իւր։ Հայեցեալ 'ի նա
Սիսղղաս և զարմացեալ, ասէ կինն. "Մի՛
ինչ քեզ ինքնակա՛լ դու, ծանր թուէցի
բանդ. խնդրեմ և ես ինքնին հաւասա-
ւորդ վայր մի լինել գեղեցիկ բախտիդ"։
Ո՛չ առանց բերկրութեան լսէր Սիսղղաս
զբանն. և քա՛ջ իսկ անդէն մերկանայր
մարմնջել նորա. քանզի առաքեաց վաղվա-
ղակի հարցանել զնորա զանունն և զազգն
և զկեանսն. և յետ այնորիկ ապա աչակա-
քաւ լինէին նոքա առ միմեանս, և ստէպ
այր ընդ ընկեր հայէր 'ի դէմսն, և մերթ
ընդ մերթ ժպիտք ծնանէին 'ի նոսա. իսկ

'ի վերջէ և պայմանս և դաշն կռէին զհարսանեաց։ Եւ ապա Թերևս 'ի բանին յայնմիկ անբամբաս կայցէ կինն, սակայն Սիւղղաս Թէպէտ և կին ածեալ պարկեշտ և առհմիկ, այլ ո՛չ դրդեցաւ նա 'ի նոյն՝ 'ի պարկեշտ և 'ի գեղեցիկ պատճառաց. քանզի վեսասեալ անկաւ ԹակարԹեցաւ իբրև պատանեակ յարատ հայեցուածոյ անոմի և 'ի պչրանացն, և յորոց զաղիրք և լկտի բնաւորեցան հրապոյրք կրից։ Այլ Թէպէտ և կալաւ նա զնա 'ի տուն իւր, սակայն և այնպէս յաւերժանայր նա ընդ կանանց միմոսից և ընդ քնարահարաց, և ընդ խեղկատակաց մարդկան, ընկողմանեալ 'ի վերայ անկողնոց 'ի տուէ և քամեալ ընդ նոսա զանապակն։ Քանզի և սոքա էին յայնժամ մեծապէս զօրացեալք առ նմա, Ռովկիոս կատակերգակ, և Սովքիքս միմոսապետ, և Մետրոբիոս՝ ձևացեալ վարձակ, զոր և՝ Թէպէտև անցեալ զառոյգուԹեամբ՝ ցանգ սիրել վկայէր Սիւղղաս։

Յորմէ ապա և խօԹուԹիւն անկանէր 'ի Սիւղղաս զառաջինն 'ի գոյզն պատճառաց շարժեալ, ընդ բազում ժամանակ զանխուլ 'ի նմանէ՝ գոյացեալ յսխոնդիս նորա խաղաւարտ. յորմէ տրորեալ մարմինն՝ եռայր առհասարակ յորդունս իմն ոչլոց անհնարին. մինչ զի Թէպէտ և զցայգ և զցերեկ քԹուէր ոչլոյն, անբաղդատ յորդուԹեամբ քան զքԹուեալսն եռային անդրէն. որ աղագաւ և հանդերձքն առհասարակ և բաղանիք և կոնք և կերակուրք նո-

բա անգամ՝ լի էին զազրութիւնքն. այն-
չափ լեմն անհաստ տողան որդանցն Եղանէր
եռայր։ Ուստի և բազում անգամ նա յա-
ւուրն մտեալ 'ի ջուր լուանալ և մաքրել
զմարմինն, օգտէր և ոչինչ. քանզի արագ
արագ անդրէն տրորել մարմնոցն նորա՝ յա-
մենայն դարմանոց ապստամբ էր, և յոքնա-
խուռն եռալ զեռալ զազրոտեացն՝ արտա-
քոյ էր ամենայն մաքրութեան նորա։ Եւ
պատմեն՝ եթէ յորդնեռաց ախտէ աստի
յայտանէ մեռաւ առ նախնեաքն Ակաստոս
Պելեան. և առ վերջնովքս՝ Աղկմանէս տա-
զատաց, և Փերեկիւդէս աստուածաբան.
և Կալլիստենէս Ողինատացի՝ արգելեալ 'ի
պահեստի. առ այսոքիւք և Մուկիոս օ-
րէնագէտ։ Եւ եթէ յիշատակել կամք ի-
ցեն՝ և զորս ոչ գործեալ ինչ բարի, սա-
կայն և այնպէս հռչակելիք գտան, ասեն՝
եթէ և այն փախատեայն՝ Եւնոս անուն՝
որ գրգռեաց 'ի Սիկիլիա զմարտն ծառայ-
ից, ձերբակալ ածեալ 'ի Հռոմ՝ մեռաւ
յախտէ յայտանէ։

Արդ Սիսղղաս ոչ նախազգած միայն է-
ղև մահուն, այլ և գոգ գրեաց ևս զայն։
Քանզի երկու աւուրքք յառաջ քան ըզ-
մահն՝ կատարեաց զարձանագրութիւն ըզ-
քսանեքորդ երկրորդ զիւրոյ Յիշատակա-
րանացն. ուր և ասէ՝ նախապատուում նմա
եղեալ Քաղդէայցն՝ յետ երջանիկ կենացն
մեռանել նմա 'ի լրումն գեղեցիկ բազդից
իւրոց։ Պատմէ և զայս՝ եթէ և որդին նո-
րա՝ այն որ վայր մի յառաջ քան զՄետել-

լա մեռեալ էր՝ երևեալ նմա յանուրջն 'ի հանդերձ անպատճոյճ՝ աղաչէր զնա 'ի բաց այնուհետև կալ 'ի հոգոց, և ընդ իւր յառնել գնալ առ մայր իւր Մետելլա, անդանօր ընդ նմա անդբօա կալ յանդորրու։

Սակայն և այնպէս չեկաց նա յետս 'ի հասարակաց գործոցն. քանզի և տասն աւուրբ նախ քան զմահն՝ համոզեալ լռեցոյց զաղմուկ ամբոխին զԴիկարքացւոց՝ ուր էր նա յայնժամ, և օրէնս ևս արձանագրեաց նոցա վարել նովաւ։ Առ այս՝ և աւուրբ յառաջ քան զմահն՝ լուր առեալ զի Գրանիոս յաւագաց անտի ոչ հասուցանէր հասարակաց զպարտսն և կայր գեղգերէր մինչև մեռցի նա, առաքեալ Սիւղղաս կոչեաց զայրն և մուծեալ զնա 'ի սենեակ իւր՝ հրաման տայր ծառայից իւրոց շուրջ պատել և հեղձամահ կորուսանել զնա։ Եւ անդանօր մինչդեռ 'ի հրամայել իւրում Սիւղղաս սաստկութեամբ անհնարին ձայն բառնայր և թափ ուժգին տայր մարմնոյն, պատառեալ պայթէր նորա խաղաւարտ պալարոյն, և ժայթքեաց ինքն աբիւն շատ։ Ապա խոպառ նուաղեալ՝ այնպէս 'ի վերջէ անկանէր մեռեալ՝ 'ի տառապանս իմն անհնարինս անցուցեալ զդիշերն. թողեալ մանկունս երկուս մանրիկս առ 'ի Մետելլեայ։ Իսկ Վաղերիա յետ մահուն նորա ծնեալ դուստր մի, կոչէր զնա Պոստումա. քանզի և յայս անուն կոչեն Հռոմայեցիք զծնեալսն յետ մահու հարցն։

Բայց յայնժամ բազումք գիմեալ չո-
քան առ Լեոնիդոս, և խորհուրդ հաստա-
տէին ընդ նմա արդելուլ խափանել գիա-
կան զյուզարկաւորութիւնն ըստ օրինացն։
Ալ Պոմպէոս՝ թէպէտ և ունել ունէր նա
բոլոր բառնալ զՍիսղղայէ (իբրու որ յա-
մենայն իսկ 'ի բարեկամանն՝ նմա միայնոյ մո-
ռացօնք եղեն 'ի կտակին նորա), համայն
և այնպէս՝ զկէսս յինքն որսացեալ ողբա-
ւոր բանիւք, և զկէսս՝ սպառնալեօք, ա-
ռեալ ածէր զդիակն 'ի Հռոմ, և յանդոր-
րու զհանդէս թաղմանն կացուցեալ, և շուք
ևս յայնժամ ընծայէր նմա։ Եւ ասեն՝ կա-
նանց յայնժամ այնչափ առատ բերել նմա
'ի խնկենեաց, զի և բայց յորոց ածան անդր
երկերիւր և քսան սակառի, դարձեալ և
դրօշեալ յաղթ քանդակեցաւ 'ի տիպ ճրշ-
դրտեալ Սիսղղայի, և միւս ևս այլ՝ 'ի տիպ
դաւաղանակրին, երկոքին միանգամայն 'ի
պատուական Լիբանոսէ և 'ի Կինամոնէ։
Իսկ օր հանդիսի թաղմանն ողջ ամպապատ
հանդիպեալ և ժամ 'ի ժամէ անձրևաց
յերկնից ակն կալեալ, հաղիւ ուրեմն յին-
ներորդ ժամուն բառնային զդիակն. և 'ի
վերայ եդեալ խարուկին՝ հոլմն ուժգին
շնչեալ 'ի նեբքս՝ մեծ բորբոքեաց բոց, մին-
չև այրեցաւ ողջոյն մարմինն. իսկ աճիւնա-
ցեալ դոգյեա խարուկին և անցեալ կրակն,
յեա այնորիկ ապա տեղատարափ տեղայր
անձրևաց և տևեաց մինչև ցայգ. ուստի և
թուէր այնպէս՝ դեղեցիկ բաղդին նորա 'ի
միասին յաւերժանալ ընդ մարմնոյն նորա։

Եւ կայ Նորա շիրիմ յԱրեսեան դաշտի. և ասեն՝ եթէ ինքնին զիւր վերոսառութիւնն եթող Սիսղաս անդ արձանագրեալ. և զբլուխ բանին՝ այսպիսի ինչ է. «Ո՛չ 'ի բարեկամաց ոք յաղթեաց նմա 'ի բարեգործելն, և ո՛չ 'ի թշնամեաց ոք՝ 'ի չարագործելն»։

ԶՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ԼԻՍԱՆԴՐԵԱՅ ԵՒ ՍԻՍՂՂԱՅԻ

ԼՍԻ արդ՝ անցեալ մեր և ընդ արձանագրութիւն վարուց սորա, եկեսցուք այժմ 'ի զուգակշռութիւնն։ Եւ քանզի յանձանց իւրեանց սկիզբն բարգաւաճութեան առին նոքա լինել մեծք և աւագք, այս հասարակ է երկոցուն նոցա։

Բայց առանձին այս է Լիւսանդրեայ, զի ըստ կամաց քաղաքայնոցն և ըստ քաջախոհութեան նոցա էառ նա զանձամբ զիշխանութիւնն. և հարստահարեաց նա և ոչ զոք ընդդէմ կամաց նոցա, և ոչ բռնացաւ ինչ նա ընդդէմ օրինաց։ Այլ սակայն Եւ յաղմուկս հերյուածոց՝ պապէ անյին որոյ Ա՛այր էղեռնաւոր։ Ըստ որում և 'ի Հռոմ յայնժամ մերթ սա և մերթ նա ամբառնայր 'ի տէրութիւն։ Զէ՞ ինչ ապա զարմանալ, եթէ յայնժամ և Սիւղղաս ինքնին

տիրացաւ, յորժամ Գլաւկոսք և Սատուրնինոսք տարագիր վտարէին զՄեռեղոսս 'ի քաղաքէն. յորժամ յատեանս ժողովոց 'ի սպանդ վարէին որդիք հիւպատոսաց, և յորժամ վարձկան եղեն զօրականք, և ոսկւոյ և արծաթոյ սակս՝ զէն առնուին. և յորժամ դարձեալ 'ի սուր և 'ի հուր սահմանեալ կարդէին օրէնք, և բռնութիւն 'ի վերայ կայր դիմադարձիցն։ Արդ մեղ ջրդնեմ առն՝ որ յայն սահման իրացն քաջացաւ վեհ լինել. այլ զայն ասեմ՝ եթէ լաւութեան և աւագութեան մարդոյն նշանակ չէ բարձերեց կալ յայնպիսումն ապականեալ քաղաքի։

Ուր յայնժամ Լիւսանդրոս 'ի շահատակութիւնս մեծամեծս արձակեալ 'ի Սպարտիոյ՝ ոյր մեծ էր 'ի ժամուն վարչութիւնն գեղեցիկ օրինօքն և ծայրալիր խմաստութեամբն, համարեցաւ նա անշուշտ լաւ քան զլաւսն և առաջին քան զառաջինսն։ Ուստի և մին անդ ասէպ 'ի ձեռս յանձնեալ քաղաքայնոցն զիշխանութիւնն, ըստէպ միւսանգամ առնոյր զանձամբ. քանզի և կայր մնայր 'ի նմա անդրժելի շուք առաքինութեանն՝ որով և ցանգ աւագանայր։ Իսկ միւսն՝ միանգամ զօրավար ընտրեալ բանակին, եկաց մնաց 'ի զինուորութեանն ամս սասն անդուլ. առնելով անձամբ զանձն մերթ հիւպատոս, և մերթ փոխանակ հիւպատոսի, և մերթ իշխանապետ, և կացեալ միշտ բռնաւոր։

Եւ արդեօք և Լիւսանդրոս ինքնին՝ որ

պէս ասացաք՝ գուն գործեաց փոփոխել զկարգ քաղաքին իւրոյ, սակայն հեզաբար և օրինացն պատկառ կալով առաւել քան զԱիւղաս. բանս ամոք 'ի վար արկեալ և ոչ զէնս, և ոչ դարձեալ տապալեալ քանդեալ զամենայնն միանգամայն՝ իբրև զնա. այլ ինդրէր մանաւանդ լաւագունին ընծայել կարգի զընտրութիւն Թագաւորացն։ Եւ Թուէր իմն արդեօք գործն ըստ բնութեանն իրաւացի, քաջընտիր առն 'ի քաջն՝ Թագ կապել քաղաքին՝ որ ոչ յազնուականութենէն, այլ յառաքինութենէ անտի իւրմէ տիրացեալ էր 'ի վերայ Ելլադայ։ Քանզի զորօրինակ որսորդ ինդրէ ոչ զբարակինն, այլ զբարակն ինքնին, և ասպականին ինդրէ ձի, և ոչ զձիոյն, (զի զիարդ այս՝ եԹէ ջորի յանկարծ ծնանիցի 'ի ձիոյն), այսպէս և քաղաքագէտ քաջ մեծապէս սխալեսցէ, եԹէ յընտրութեան Թագաւորի ոչ ինդրեսցէ ո՞ այն ոք իցէ, այլ Թէ յորմէ՞ զարմէ իցէ։ Նա՛ և ինքնին Սպարտացիք 'ի բաց զտէրութիւնն հանին յոմանց յարքայից անտի իւրեանց, իբրու այն որ ոչ արքայավայել ունէին կեանս, այլ գժպհիք էին և անպիտանք. իբրև անփառունակ է մոլութիւնն՝ Թէպէտ և զքաջազարմութիւնն մերձ ունիցի. և փառաւոր է առաքինութիւնն՝ ոչ 'ի պայծառութենէ զարմին, այլ ինքնին գլխովին։

Բայց հարստահարութիւնս՝ յերկոցուն նոցա մին գործեաց 'ի շնորհս բարեկամացն, և միւսն՝ ընդդէմ բարեկամացն։

Քանզի անշուշտ Լիւսանդրոս շատ ինչ յանցեաւ 'ի շնորհս մեռելմացն և բարեկամացն, և հարուածս բազումս 'ի վերայ ած 'ի բարգաւաճել զնոսա, և 'ի բռնաւորութիւն առնուլ տանել զնոսա։ Իսկ Սիւղոս 'ի մախանացն գրգեալ՝ Թեակոխեաց 'ի բաց 'ի Պոմպէոսէն հանել և 'ի Դոլոբելլայ զզօրավարութիւնն՝ զոր ինքնին տուեալ էր նոցա. 'ի նմանէ զբանակի ցամաքին, և 'ի սմանէ՝ զծովուն։ Եւ հրաման ևս տայր ակնյանդիման իւր խողխողել զԼուկրեթիոս Ոփեղլաս, որ յետ բազում և մեծամեծ արդասեացն զհիւպատոսութեան զհետ կրթէր. արհաւիրս և սարսափ արկանելով առհասարակ յամենեսեան, զի և զկարևոր բարեկամն 'ի մահ մատնէր։

Իսկ գրգասիրութիւն երկոցուն նոցա և ընչաքաղցութիւն, զմիոյն մեզ 'ի դէմս բերէ զոգին արքենի, և զմիւսոյն՝ բռնաւորական։ Քանզի մին 'ի մեծի բարձին և յաւագութեանն ոչինչ արդեաք յանժուժկալութիւն հատաւ և 'ի մեղկութիւն անտիական. այլ անձնապահ լինէր առաւել քան զամենայն մարդ 'ի սովորականն առաջէն. եթէ Ա՝ գնին Ա՝ իւ՝ ծ՝ ան՝, Ա՝ 'ի Բ՝ ոյ Աղ՝ ա՝ ա՝ ան՝։ Այնպէս լիեն պարկեշտ միշտ և հրահանգ և արդարև լակոնացի՝ զանձն 'ի նեղքս ընծայէր 'ի քաղաքավարութեան իւրում։ Իսկ միւսն երբէք ոչ սանձեաց զցանկութիւնն. ոչ իբրև պատանի յաղքատութեան իւրում, և ոչ իբրև հին աւուրց՝ 'ի ծերութեանն. այլ յար

ձանապրել անդ իւրում օրէնս քաղաքայ-
նոցն վասն ամուսնութեանց և ժուժկա-
լութեան, ինքն՝ ըստ որում Սալուստիոսն
ասէ՝ պարապէր 'ի տուփանս և 'ի շնութիս։

Յորմէ և կապուեաց կեղևեաց նա զքա-
ղաքն 'ի դրամոց, և մուրիկ գործեաց զնա-
զի և պէտք եղեն նմա արծաթոյ վաճառել
քաղաքաց նիզակակցացն և բարեկամացն՝
զաղատութիւնն և զինքնուրոյն օրէնսն.
թէպէտ և զօր ամենայն յաղքունիս գրա-
ւէր և 'ի վաճառ հանէր զտունս բազմահա-
րուստս և զմեծամեծս. իսկ զոր ինքն վատ-
նէր ծախէր իւրոց շնթողացն, անսահման
էր։ Քանզի և զոր արդեօք գեղեցիկ կարգ
և անտեսութիւն համարիցիս ունել երբէք
առն՝ յընկերշակութիւնս գինեբրուաց նո-
րա և 'ի տալ բաշխել շնորհս և պարգևս սի-
րելեաց իւրոց, առն՝ որ էր երբեմն զի 'ի
հրապարակի յամբոխին՝ որ շուրջ էին զնո-
վաւ՝ 'ի վաճառ հանեալ մթերս ինչ գոյ-
ից, հրաման տայր 'ի ձայն մունետկի տալ
զայն միում ումեք 'ի բարեկամացն ում-
պէտ գնոյ. իսկ անդուստ այլ ոմն աճե-
ցուցեալ զդինն, և մունետկին քարոզեալ
զաճուռնն, անդանօր Սիւղլաս դժգոհեալ
ասէր. "Դժնդակ են ինձ կիրքդ՝ ո՞ բարե-
կամք քաղաքացիք. և բուռն է ինձ՝ եթէ
չիցէ ինձ թոյլ յիմ աւարան առնել՝ զոր
կամիմ"։

Իսկ Ալեսանդրոս առեալ արձակէր քա-
ղաքացեացն ընդ այլ ինչ իրաց և զպար-
գևսն զիւր առանձին։ Զոր և գովեմ իսկ

ոչ զգործն. իբրու որ Թերևս տուգանս ա-
ռաւել ած սա Սպարտիոյ՝ ինչս 'ի նեբքս
մուծանելով, քան զտոյժս կապտուԹեանն
Հռովմայ առ 'ի Սիւղղայէ։ Սակայն և հա-
ւասատիս 'ի նեբքս բերեմ զանշահասէր բա-
բոյից զառնն։

Հանդերձ այսոքիւք՝ և դէպք մասնա-
ւորք դիպան հայրենեաց նոցա 'ի միոյն և
'ի միւսմէն։ Քանզի Սիւղղաս ինքնին ան-
ժուժկալ և շռայլ, 'ի ժուժկալուԹիւն
կրԹեաց զիւր քաղաքացիսն։ Իսկ Ալիւսան-
դրոս զիւր քաղաքն առեալ էլից ախտիւք՝
յորոց անբաժ էր նա։ Ուստի և երկոքին
նոքա ծանր յանցեան. մին՝ 'ի յոռանալ
իւրում առաւել քան զիւր օրէնսն. միւսն՝
'ի յոռացուցանել իւրում զիւր քաղաքա-
ցիսն՝ առաւել քան զինքն. վարժելով
զՍպարտիս կարօտեալ իրացն՝ որոց անկարօտ
սովորեալ էր։ Այսոքիկ ահա յաղագս
քաղաքականին։

Իսկ յաղագս մարտից պատերազմաց, և
զինուորուԹեանց, և նահատակուԹեանց
մրցանաց, և յաՃախուԹեան ախոյենից,
և մեծուԹեան վտանգաց, անզուգակշիռ
կայ Սիւղղաս։ Քանզի ԹէպէտԹ և Ալիւսան-
դրոս ինքնին յաղԹուԹիւնս կրկին տարաւ
'ի կրկին նաւամարտս. յաւելցուք մեք և
զԱԹենայ առումն, ԹէպէտԹ և ոչ մեծ ինչ,
սակայն և փառս մեծապէս յաւել նմա։
Այլ որչափ ինչ նորա գործք 'ի Բիսոտիա
և յԱղիարտոնն, ԹէպէտԹ և ձախողակս դը-
նացին նորա իրք՝ Թերևս 'ի ձախողակ ինչ

բաղդէ, սակայն և հաւանեալս եմ՝ զի այն դէպք պատահեցան նմա 'ի վերին խորհրդոյն, զի չեկաց մնաց մեծի բանակի արքային՝ որ վայրկեանս մի ևս դայր ժամանէր 'ի Պղատիոյ. այլ տարաժամու առ զայրոյթ սրտին և պատուասիրութեանն դրդեցաւ ընդդէմ պատուարացն, ուստի 'ի դուրս յեղակարծումն յարձակեալք արք սինլբքորք և անարիք, այնպէս վայրապար դիտապատ արկին զնա. առ 'ի մահ առեալ զվերան, ոչ արդարև իբրու զԿղեոմբրոդոսն 'ի Լեւքտրա՝ ընդդէմ դարձեալ բռնութեան թշնամեացն. և ոչ իբրու զԿիւրոս, և ոչ իբրև զԵպամինոնդաս՝ առկայացուցեալ զվերջոանեալ զիւրոցն և յանդորրու զյաղթութիւնն կացուցեալ. որ և առհասարակ ըզմահ մեռան զզօրավարաց և զարքայից. այլ Լիւսանդրոս՝ իբրու եթէ զինուոր դուզնաքեայ ոք իցէ և կարապետ զօրու՝ դիմագրաւեալ 'ի մահ անխորհուրդս և անփառունակ, քաջ իսկ իրաւացոյց զՀինսն Սպարտացւոց. զի մեծապէս հանձարով անձնապահ լինէին նոքա մարտ դնել կռուել ընդդէմ պարսպաց. ուրանօր և առն աւագի և յոյժ քաջի դէպ լինի վայրապար վերս առնուլ և անկանել ոչ 'ի սոսկական միայն զօրականէ, այլ և 'ի տղայոյ, այլ և 'ի կնոջէ. ըստ որում և Աքիլլեայ՝ պատմեն՝ մեռանել 'ի ձեռաց Պարիսեայ առ դուրսն։

Բայց թէ քանիսն Սիւլլաս տարաւ յաղթութիւնս 'ի ճակատամարտս, և բիւրաւորս քանի՞ տապաստ արկ 'ի թշնամեաց,

ոչինչ հեշտին ընդ թիւ տրկցէ զք։ Երկիցս նա հասեալ կալաւ և զՀռոմ ինքնին, և տիրացաւ 'ի վերայ Պիրէոնին Աթենացւոց՝ ոչ սով արկանելով իբրու Լիւանդրոս, այլ 'ի բազում մարտս և 'ի մեծամեծս վանեալ զԱրքեղայոս 'ի ցամաքէ, և վտարեալ 'ի ծով անդր։ Ա՛ռ այսոքիւք՝ և մեծապէս էր քաջութեն զօրավարացն թշնամեաց. քանզի և առ ումպէտս և վայրապար ինչ գրեմ ես մարտ դնել նաւամարտ ընդդէմ Անտիոքեայ զեկավարին Աղկիբիադեայ, և կաշառեալ որսալ զՓիլոկղէս զՀռետոր խուժանին Աթենայ, Այր անաւգ՝ որ ոչ զԼէգրն ունէր որէալ. զորս և ոչ Մինրդաս արժանի համարեցաւ 'ի կշիռ ձգել միում ումեք 'ի ձիագարման ծառայիցն. և ոչ ինքնին Մարիոս միում ումեք յիւրոց վարոցաւորացն։ Իսկ յաւագաց անտի նախաթոռից, 'ի հիւպատոսացն, 'ի զօրավարացն, 'ի ժողովրդապետացն, որ մարտ եղեալ կռուեցան ընդ Սիւղղայի, ո՞ զք ապաքէն՝ 'ի բաց զայլսն թողեալ՝ ահագին 'ի Հռոմայեցիս առաւել քան զՄարիոս, կամ ո՞ զք 'ի թագաւորս հաստատարուստ առաւել քան զՄինրդաս, կամ ո՞ զք քաջամարտիկ յԻտալացիս՝ առաւել քան զԼամպոնիոս և զՏեղեսինոս։ Սակայն և այնպէս վանեալ հալածեաց Սիւղղաս զառաջինն, և նկուն արար զերկրորդն, և 'ի մահ վարեաց զվերջինսն։

Ա՛յլ որ ըստ իս յոյժ գերազանցեալ է քան զասացեալսդ, զի Լիւանդրոս զամե-

նայնն գէղեցիկ 'ի գլուխ տարաւ Իւրոցն նի-
զակակցութեամբ։ Իսկ Սիւղղաս փախըս-
տեայ և նկուն 'ի հակառակ հերձուածոյն,
յորժամ և նորա կինն փախստեայ անկա-
նէր և տունն քանդեալ տապալէր, և բա-
րեկամքն 'ի սպանդ վարէին, ինքն մարտ 'ի
Բիովտիա յարդարեալ ընդդէմ բիւրաւո-
րաց ամբաւից, և 'ի կշիռ զանձն վասն հայ-
րենեաց եղեալ, յաղթեաց և ախոյեանս
կանգնեաց։

Բայց և առ Միհրդատ ինքնին, որ զանձն
դաշնաւոր 'ի նեբքս մատուցանէր, և զօրս
ընդդէմ թշնամեացն նմա առաջի ընծայ-
էր, նա ոչինչ համբոյր և ամոք երևեցաւ
առ նա. այլ և ո՛չ խօսել անգամ կամեցաւ
ընդ նմա, և ո՛չ զաչն անգամ կարկառել
առ նա, մինչև լուեալ առ 'ի նմանէ՝ 'ի
բաց զԱխիա թողուլ, և զնաւան տալ, և
վերջոտնեալ յարքայութեանցն Բիթիւնիոյ
և Կապադովկիոյ։ Որպէս զի և ոչինչ նա-
հատակութիւն ևս գէղեցիկ քան զայն և
մեծ ևս մոտածութեանց տիպար, թուի թէ,
նահատակեցաւ երբէք Սիւղղաս. քանզի
նախամեծար զհասարակացն՝ Իւրուն կար-
գելով սեպհական օգտին, և զոր օրինակ
քաջք և հարուստք 'ի բարակաց բնաւորե-
ցան գործել, ո՛չ թողլով զնսածեալն և ըզ-
կալեալն, մինչև՛ ախոյենին խսպառ պար-
տութիւն խոստովանեալ, ապա յետ այ-
նորիկ եղեալ գնայր զվրէժ խնդրել Իւրոց
առանձին տուգանացն։

Իսկ 'ի վերջէ՝ և օրինակն ինքնին գլխո-

վին՝ զոր վարեաց նա ընդ Աթենայ, գե-
զեցիկ գործէ կշիռ բարոյից նորա. քանզի
կալեալ Սիւզոսս զքաղաքն՝ 'ի կռուէ քա-
ղաքին ընդ նմա 'ի վերայ իշխանութեան և
տերութեանն Միհրդատայ, սակայն և այն-
պէս արձակեաց զնա յազատութիւն, և
թոյլ տայր նմա վարել սեպհական օրինաքն։
Այլ Լիւսանդրոս տեսեալ զնա հիքացեալ
յայնչափ տերութենէն, ոչինչ գորովեցաւ
առ նա. նա և կապտեալ զնա յընկերհաշ-
տութէն, նկուն առնէր զնա ընդ ձեռամբ
անագորոյն բռնաւորաց և անիրաւաց։

Ժամ է այսուհետև մոսխորհ լինել,
արդեաք 'ի Ճշմարտութենէն շնո՞ւ ինչ վրի-
պեսցուք յասել անդ մերում, եթէ Սիւղ-
սոս գեղեցիկ նահատակութիւնս բազմա-
գոյն 'ի նեղս եբեր. իսկ Լիւսանդրոս յան-
ցաւորութիւնս նուազ գործեաց. և 'ի տալ
ընծայել զառաջին բարձն սմա՝ զժուժկա-
լութեան և զզգաստութեան, և նմա՝ զջ-
բաւարութեանն և զարութեան։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Յն. Σάτυρος։ Թողեալ զառանցիկան քերթողաց՝ յայս անուն կոչին խառնակերպարան և մարդաձև գազանք, ըստ օրում առաւելագոյն յազգս կապկաց. որպէս Եգիպտոս, և որ 'ի սակի նորա. զորս և այլ և այլ կոչեն ժողովուրդք իւրաքանչիւր. և Ռամիկն մեր՝ Գիշերվան Ամիրայ են. և Գիրք մեր՝ Շահապ վայրաց, և Շնկնձիթ, և Ալրաղեզ, և Վարդապայն Քաղ, և Հանգ, և Պայն, և Պարիկ, և Յուշկապարիկ, և Համբարու. են։

ՊԼՈՒՏԱՐԿԵԱՑ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ԿԻՄՈՎՆԻ

ԵՒ

ԼՈՒԿՈՒՂՂՈՍԻ

ԿԻՄՈՎՆ

ՊԵՐԻՊՈԼՏԱՍ գուշակն ածեալ 'ի Թեսալիոյ 'ի Բիովտիա զՈՓԵԼՏԱՍ արքայ և զԺողովուրդս նորա, զարմն ականաւոր Թոլոյր անդ ընդ ժամանակս հարուստս։ Ոչք և բազմագոյն մասամբ բնակեցան 'ի Փերոմենիա, առաջին քաղաք՝ զոր հասեալ կալան նոքա վանեալ անտի զբարբարոսն։ Արդ բազումք 'ի զարմէ անտի՝ անդատին 'ի բնուԹենէ քաջամարտիկ հանդիպեալք և արիականք, տապաստ անկան յարշաւանս անդ Մարաց և 'ի Դաղատացւոց մարտս՝ դիմագրաւք ոչինչ խնայեալք յանձինս։ Եւ մնաց միայն մանուկ մի որք Դամոնն անուն, և մակաձայնէին զնա Պերիպոլտաս։ Եւ էր այս Դամոնն գեղով մարմնոյն և ոգւոյն հանճարով յոյժ գերազանցեալ քան զորս առ իւրովք ժամանակօքն պատանիք, Թէպէտ և անհրահանգ 'ի բարս

և անհամբոյր։ Ա՛յն ինչ ըստ տղայութեան տիսն եղեալ Դամոնէն, 'ի սէր Նորա հարաւ 'ի Հռոմայեցւոց անտի ոմն զօրավար գընդին՝ որ ձմերէր 'ի Քերոնէսիա. այլ ոչինչ գամագիւտ եղեալ 'ի նա ամոթ բանիւք և 'ի ձիրս ընծայից, խիթայր Դամոնէն 'ի բըռնութենէ. քանզի և հէք և տառապեալ էր յայնժամ մերն հայրենիք, և արհամարհ ևս առ փոքրկութեանն և աղքատութեանն։ Ապա 'ի բռնութենէ անտի զանգիտեալ Դամոնէն և սրտմտեալ ևս ընդ հրապոյրսն, հաղբա նիւթէր մենքենայէր նմա, դաշնաւորս յինքն յանկուցեալ ընդդէմ Նորա 'ի հասակակցաց անտի իւրոց՝ ոչ բաղումս, զի զանխուլ կացցէ բանն։

Ա՛ՐԴ վեշտասան առհասարակ գոլով նոքա, ջոքան և 'ի գիշերի առեալ ձանձախարիթ մրճոտեցին զերեսս, և արբեալ անապակ, յառաւօտուն պահու անկան 'ի վերայ Հռոմայեցւոց 'ի հրապարակ անդր 'ի զոհել զօրավարին. և սպանեալ զնա և ոչ սակաւս 'ի Նորայոցն, խաղացին եղին արտաքս 'ի քաղաքէն։ Ապա աղմուկ շփոթից յուզեալ անդանօր՝ խմբեցան 'ի խորհուրդ Քերոնէսացիք, և դատակնիք մահու ածէին 'ի վերայ Նոցա, 'ի չքմեղս կացուցեալ առ ահին Հռոմայեցւոց։ Իսկ ընդ երեկս աւուրն մինչդեռ 'ի միասին ընթրէին իշխանք ըստ սովորութեանն, մտեալ Դամոնէն հանգերձ իւրովքն յապարանսն, սուր 'ի վերայ Նոցա եղեալ, անդրէն միւսանգամ գնայր փախչէր 'ի քաղաքէն։

Դէպ եղև յայն աւուրսն Լեւկիոսի Լուկուղլոսի անցանել ընդ այն բանակաւն՝ յարշաւանս ուրեք արձակեալ. և անդէն զկայ առեալ և հաւաստի քննութիւն 'ի վերայ ածեալ եղելոց սպանութեանցն, ոչ անյանց միայն գտանէր զքաղաքն, այլ հարստահարեալ ևս. ուստի առեալ իւր և զորս անդ էին զօրականք, յուղի անկանէր: Իսկ յայնժամ Դամոնն աւազակեալ ասպատակաւ յաղարտ վարէր զգաւառն շուրջանակի. և առ դուրս ևս հասեալ քաղաքին՝ անդ քաղաքացիքն հնարիմաց խորամանկեալ հրեշտակութեամբք և վրձռուք յինքեանս յանկուցանէին զնա: Իբրև եկն եմուտ 'ի քաղաք անդր, ըմբշամարտ կարգեալ կացուցին զնա. և ապա յօծանել նորա 'ի քրտնարանին, 'ի վերայ հասեալ սպանանէին զնա: Բայց երևոյթս ուրուականաց տեսեալ անդ հարուստ ժամանակ, և ձայն կոծոյ լսելի եղեալ (որչափ ինչ պատմեն մերն հարք), առեալ խցանէին զդուրս քրտնարանին. և մինչև ցայսօր ժամանակի մերձակայ բնակիչք տեղւոյն թուին իմն տեսանել անդանօր խօլականս, և ձայնս լսել արհաւրաց: Իսկ սերեալքն 'ի նմին զարմէ (քանզի և բազումք են տակաւին, մանաւանդ 'ի Սոիրի Փովկէայ՝ որ սովորութիւն կալան զԷրոզացւոց), անուանեալ կոչեցան Աւջլիմնի, այս է՝ Ձանձախարթեալք. քանզի Դամոնն 'ի գնալ իւրում 'ի սպանանել, մրեցաւ 'ի ձանձախարիթ՝ զոր Աւջլա կոչեն:

Իսկ յետ այնորիկ Ողբոմենացիք 'ի գրժ-
ութիւն եկեալ ընդ Փերոնիացւոց սահ-
մանակցաց իւրեանց, կաշառեցին արծա-
թոյ դատախազ մի Հռոմայեցի. որ և ամ-
բաստան կացեալ ողջոյն զքաղաքէն Իբրու
զմիոյ ուրուք մարդոյ՝ այնպէս քարշէր զնա
'ի դատաստան վասն սպանութեանցն Դա-
մոնիի։ Եւ էր դատ ամբաստանութեանն
առաջի զօրավարին Մակեդոնիոյ, քանզի
չև ևս զօրավարս յԵղլադա առաքէին Հռո-
մայեցիք. իսկ որ անդ ջատագովք մոին
քաղաքին, վկայութիւն 'ի նեղքս բերէին
զԼուկուղղոսին։ Ոյր աղագաւ ինքնին զօ-
րավարն գրեալ առ Լուկուղղոս, վկայեր
նա ճշմարտութեանն. և այսպէս քաղաքն
'ի վերջինն վտանգեալ՝ արձակեցաւ յա-
զատութիւն. յոյր սակս և Փերոնիացիք
ազատացեալք՝ պատկեր 'ի քարէ կանգնէին
Լուկուղղոսի 'ի հրապարակի անդ մօտ առ
Դիոնեսիոս։ Բայց մեք հաւանեալ եմք,
եթէ որ յայնժամ երախտագիտութիւնն
առ Լուկուղղոս՝ ձգեալ տարածեսցի և 'ի
մեզ ինքեանս որ կեսմքս աւագիկ՝ թէպէտ
և զկնի 'ի դարս բազումս։

Վասն որոյ և հաստատեալ մեր՝ եթէ
քան զկենդանագիր դիմաց և կերպարանի
մարմնոյն նորա, ճշգրիտ ևս ևս և գեղե-
ցիկ յոյժ տիպ պատկերի բուսոյ բարուց
նորա և քաղաքավարութեանն, մեք ինք-
նին յարձանագրել առ զզուգակշիռ զայս
վարսն, բուռն հարցուք պատմել զնահա-
տակութիւնս գործոց զաւագ առնն, և ճշ-

մարտութեամբ 'ի Նեղոս ընծայել. քանզի և յիշատակ նորա շատ լոյէ 'ի դարձ փոխարինին։ Եւ արդեօք և ոչ նա ինքնին 'ի պատճառս անկեղծաւոր վկայութեան իւրոյ, կամեսցի ինչ 'ի դարձ փոխարինի կեղծ պատմութիւն և սնոտիապատուաստ՝ զվարուց իւրոց։ Քանզի զոր օրինակ մեք ինքնին խնդրեմք՝ զի նկարիչք կենդանագիրք գեղանեացն և հոյակապիցն՝ բիծ փոքրիկ դժպատեհ գտեալ 'ի նոսա, մի՛ ողջոյն զանց արասցեն, և մի՛ դարձեալ ողջ ճշգրտիւ 'ի դէմս բերցեն, (քանզի վերջինդ տգեղութիւն ածէ, և առաջինդ՝ աննմանութիւն դիմաց), սա՛պէս և գժուարին գոլով, նա՛ և յանհնարիցն թերևս, զայր ոք այր 'ի Նեղոս բերել բնաւ իսկ ամբիծ 'ի վարս և անատգիւտ, արժան է 'ի գեղեցիկ նահատակութիւնս նորա զճշմարտութիւնն ճշգրիտ 'ի Նեղոս տալ՝ իբրու ողջ նմանութիւն առնն. իսկ զյանցանան կամ զբիծան, յորս կամ 'ի կրից ինչ դրդեալ կամ թէ 'ի քաղաքականութէ իմեքէ հարկեալ՝ 'ի գործս իւր գթեալ լոյէ, քան մոլութիւնս տընկակիցս՝ առաւել խակութիւնս առաքինութեան համարեալ զայդոսիկ. չէ արժան այնպէս մանր և ճշգութեամբ համբաւել 'ի պատմութեանն. այլ պատկառ դէտակն 'ի մարդկայնոցս կալեալ բնութիւն, որ ոչն երբէք բնաւորեցաւ գործել ծայրալեր բարի, կամ վարս ընծայել անբամբաս յառաքինութիւն անդր։

Ապա մոսխորհ եղեալ, ընդ Կիմոնին

'ի կշիռ ձգէլ լաւ համարեցայ զԼուկուղղոն։ Քանզի և երկոքին նոքա քաջամարտիկք կացին, և ընդդէմ բարբարոսաց աականաւորք գտան. հեզք և հանդարտք յառաջնորդութեան քաղաքին, և 'ի վեր քան զամենայն՝ հայրենեաց իւրեանց դիւրեցին յընտանի ամբոխից, և երկոքին դարձեալ ախոյեանս կանգնեցին և յաղթութիւնս տարան համբաւատենչս. զի և չէկաց ոք առ Հելլենացիս յառաջադէմ քան զԿիմոնն, և ոչ առ Հռոմայեցիս ոք յառաջադէմ քան զԼուկուղղոս. և ոչ մարտիւ պատերազմի այնչափ բացագոյնս յառաջ խաղացեալ, եթէ 'ի բաց զՀերակլէս առցես և զԴիոնեսիոս. առ այսոքիւք և զՊերսէոս՝ որչափ ինչ նահատակեցաւ նա ընդդէմ Եթովպացւոց և Մարաց և Հայոց. դարձեալ և զՅասոնն. եթէ արդեօք յայնչափ վաղնջուց ժամանակաց ինչ մի արժանահաւատ մինչև աստ առ մեզ հասեալ իցէ վասն նահատակութեանց նորա։ Բայց և որ հասարակ կայ Կիմոնի և Լուկուղղեայ, զի և երկոքին նոքա յամբոխ զինուորութեանց իւրեանց չհասին. հարուլ հարին զթշնամիս և խորտակեցին, այլ և ոչ մին 'ի նոցանէ սպառասպուռ հարուած 'ի վերայ ածէր։ Եւ առաւել քան զամենայն՝ հաւասարութիւն գեղեցիկ տեսցէ ոք 'ի նոսա 'ի հիւրամեծար և 'ի պայծառ ասպնջականութեանն և 'ի մարդասէրութեանն. առ այս՝ և 'ի հոյակապ և յերկարաձգեալ ընթրիսն։ Իսկ և նմանութիւնս ինչ ինչ զնոցա

թողցուք այժմ ասել, որոց և ոչ դժուա-
րին ելցէ խելամուտ ապա լինել 'ի պատ-
մութենէ անոի նոցա։

Կիմոնի հայր եկաց Միլտիադէս, և մայր
Եգեսիպիւլէ՝ Թրակացի ազգաւ դուստր
արքային Ողորոսի. ըստ որում քերթածքն
պատմեն Ալքեղայոսի և Մելանթեայ՝ որ-
ձանագրեալք 'ի շուք Կիմոնի։ Ուստի և
Թուկիդիդէս պատմաբան 'ի զարմէն Կի-
մոնի՝ հայր ունէր Ողորոս՝ անուն համա-
նուն նախնւոյն այնորիկ, և ժառանգէր 'ի
Թրակիա զբովս ոսկւոյ. և ասեն՝ եթէ ըս-
պանաւ նա 'ի Սկապտէ յանտառին, և է
այն շէն փոքրիկ Թրակիոյ. այլ շիրիմ նո-
րա՝ քանզի նշխարք նորա տարան յԱտտի-
կէ՝ կայ 'ի գերեզմանս անդ Կիմոնեանց՝
մօտ առ Եղպինիկեայն քեռն Կիմոնի։ Բայց
Թուկիդիդէս էր յԱլիմուսեան ժողովը-
դոց, և Միլտիադէս՝ 'ի Լակիադեան։ Արդ
Միլտիադէս դատակնիք առեալ տուգա-
նաց յիսուն քանքարաց, և ձերբակալ է-
ղեալ 'ի հատուցանել, անդէն 'ի բանդին
մեռանէր։ Իսկ Կիմոնն յայնժամ կարի պա-
տանեակ որք մնացեալ հանգերձ քերբն՝
օրիորդ տակաւին և անայր, զառաջին ժա-
մանակն վատանուն համբաւէր 'ի քաղա-
քին. և շատ բամբասէին զնա իբրև ցոփ և
գինեմոլ, իբրու համաբարոյ միւսուն Կի-
մոնի հաւուն իւրոյ. զոր և վասն խօթա-
մտութենեանն ասեն մականունեալ Քո�՝մոս,
այն է՝ Ապուշ։

Իսկ Ստեսիմբրոտոս Թասոսացի ծնեալ

առ ժամանակաքն Կիմոնի, ասէ՝ եթէ ոչ յերաժշտականին վարժեցաւ նա, և ոչ յայլ ինչ մարզս ազատականս՝ որովք վարէին յայնժամ Հելլենացիք. և թէ՝ անբաժ գլխովին էր նա յատուկեան ուշիմութենէն և 'ի շնորհացն. սակայն և քաղաքավարութիւն յանձին բարձեալ բերէր կարի ազնուական և անկեղծաւոր, և բոյս բարուց լակոնացի առաւել. "Պարզ, անպաճոյճ. այլ մեծամեծ նահատակութեաց ասպնջական". իբրու արդարև զՀերակլէսն զԵվրիպիդեայ. քանզի և զայսոսիկ է մեզ ուսանել վասն առնն յարձանագրութեանց անտի Ստեսիմբրոդեայ։

Մինչդեռ տակաւին պատանի էր, բամբասեցաւ՝ իբրու մոռանել առ քոյրն. և արդեօք ասեն զԷլպինիկէ ոչ լինել 'ի պարկեշտից ոք, այլ մեղանչել և ընդ Պողիդնովտոսի նկարչի։ Ուստի և ասեն եթէ 'ի նկարել սորա զՏրովադուհիս 'ի սրահին՝ զոր յայնժամ անուանէին Պէսիանակտիոն, և այժմ՝ Պեկիղէ, ճշգրտեալ ելցէ զդէմն Լաւոդիկեայ 'ի տիպ Եվրիպիդեայ։ Բայց Պողիգնովտոս չէր 'ի վարձկանաց անտի աբուէստաւորաց. և ոչ դարձեալ արծաթոյ աշխատէր նա 'ի նկարսն սրահին, այլ ձրի՝ պատուասիրեալ վասն քաղաքին, որպէս գրեն պատմաբանք և Մելանթիոս ինքնին Քերթողն, որ ասէ այսպէս. "Նա իւրովք զարդարեաց ծախուք զաստուածոցն տաճարս և զԿերոպեանն հրապարակ 'ի կենդանագրութիսնահատակութեցքաջացն"։

Իսկ և կէսք ասեն՝ եթէ ոչ դաղտագողի
ինչ էր Եղբինիկեայ մտանել առ Կիմոնն,
այլ յայտնի իբրև ամուսին բնակակից լի-
նել նմա. զի չեգիտ Եղբինիկէ առ աղքա-
տութեանն փեսայ 'ի ճահ աղնուականու-
թեանն. և թէ՝ յետ այնորիկ սիրեալ զնա
Կալլիաս ընչաւէտ այր Աթենացի, և առ
փեսայանալ նմա՝ մոռացուր յանձն առեալ
հատուցանել քաղաքին զդատակնիք տու-
գանայ հօրն նորա, հաճեցաւ Եղբինիկէ և
Կիմոնն առեալ տայր զնա Կալլիասայ։ Սա-
կայն և այնպէս՝ թուի թէ իգասէր յոյժ
եկաց Կիմոնն. քանզի և Մելանթիոս քեր-
թող խաղ արարեալ վասն այսորիկ յողբն
իւր, յիշատակ առնէ Աստերեայ ուրուն
Սաղամինուհւոյ, դարձեալ և Մնեստրեայ
ուրուն, իբրու տարփացելոց առ 'ի Կի-
մոնէ։ Բայց և քաջայայտ կայ, զի վասն
Խոդիկեայ դստերն Եւրիպտողեմոսի Մե-
գակղեան՝ իւրումն օրինաւոր ընկերին, 'ի
կիրս անհնարինս ըմբռնեցաւ Կիմոնն և կարի
'ի խոր խոցեցաւ 'ի մահուն նորա. որպէս
ըստ մասնեայ է մեզ խելամուտ լինել յող-
բոց անտի՝ որ քերթեցան 'ի Վիլիթարու-
թիւն նորա. որոց ողբոցն Պանեթիոս խմաս-
տասէր՝ քերթող ասէ զԱրքեղայոս բնա-
խօս, 'ի դէպ իսկ դուշակելով զնա 'ի ժա-
մակէ անտի կենաց նորա։

Այլ սակայն և յամենայն իսկ 'ի բարն
իւր պանչելն եկաց Կիմոնն և վեհ. իբրև
ոչ ինչ խոնարհագոյն երևեցաւ նա 'ի քա-
ջութեան քան զՄիլտիադէս, և 'ի հան-

ճարն՝ քան զԹեմիստոկղէս. և անշուշտ ա-
ռանց ամենայն հակառակութեան՝ վեհա-
գոյն քան զերկոսին գտաւ յարդարու-
թեան։ Դարձեալ՝ և ոչ խուն մի խոնար-
հագոյն քան զնոսա յառաքինութեան գո-
լով զինուորականին, ոքանչելապէս բարձ-
րագոյն քան զնոսա եկաց 'ի քաղաքակա-
նին՝ Թէպէտ և յանտիական տիսն և ան-
փորձ պատերազմաց։ Ոյր աղագաւ և 'ի
հրոսակին Մարաց՝ իբրև անդ Թեմիստոկ-
ղէս Թելադիր լինէր Ժողովրդեան Թողուլ
զքանել զքաղաքն և զերկիր իւրեանց, և 'ի
նաւաց վերայ զէն առնուլ 'ի Սաղամինա և
մարտ ծովամարտ գնել կռուել, այն ինչ
առհասարակ յապուշ հարեալ կային ընդ
այնչափ ձեռներէց խորհուրդն, անդանօր
Կիմոնն առաջին անցեալ զուարթամիտ ընդ
Կերամիկոն, և 'ի վեր ընդ գղեակն նահա-
տակեալ հանդերձ ընկերօքն, 'ի բուռն կա-
լեալ սանձ մի զերիվարի՝ զայն 'ի բարձունս
կախէր 'ի ձօն դիցուհւոյն. իբրու եթէ քա-
ղաքին այնուհետև այրուձիոյ պէտք ինչ ոչ
իցեն, այլ նաւամարտ զօրականին։ Անդ
զսանձն կախեալ, և յասպարաց անտի որ
զմեհենիւն՝ ասպար մի առեալ և աղերս
դիցուհւոյն արկեալ՝ այնպէս ինչանէր 'ի
ծոմն. ապա և ոչ սակաւք ոմանք յայն-
ժամ նահատակեցան զկնի նորա։

Եւ էր Կիմոնն՝ որպէս Յոմն ասէ քեր-
թողն՝ գիմաք ոչինչ անգեղեայ, այլ յաղթ
անձամբ, և 'ի վարսս գլխոյն գանգրահեր
և թաւ։ Ապա և քաջութիւն մեծապէս

ցուցեալ 'ի մարտին յայնմիկ, սէր և համբաւ ժառանգեաց 'ի քաղաքին, և շատք եկեալ զնովաւ՝ խրախոյս տային խորհել և գործել նահատակութիւնս զՄարաթոնայն։ Ուստի և միջամուխ եղեալ նա յիրս քաղաքին՝ մտադիւրագոյնս ընկալեալ զնա ժողովուրդք՝ որ յափրացեալք իսկ էին 'ի Թէմիստոկղէայ, առեալ բարձրացուցին զԿիմոնն յաւագութիւնս բարձից. զի և ինքն քաջավայելուչ և սիրելի էր ամբոխին առ քաղցրութեանն իւրոյ և առ պարզութեն։ Բայց և Արիստիդէս Լիւսիմաքեան ոչ սակաւ ինչ գործակից լինէր բարգաւաճելոյն նորա. զի բոյս դեղեցիկ ակնարկեալ 'ի բարս նորա՝ լաւ համարեցաւ 'ի վէգ զնա հանել ընդդէմ խորագիտութեանն և ձեռներէցութեանն Թէմիստոկղէայ։

Իսկ իբրև 'ի փախուստ դարձան Մարք 'ի սահմանացն Եղլադայ, արձակէին զԿիմոնն զօրավար բանակին ծովու. զի չև էին Աթենացիք տիրացեալ 'ի վերայ այլոց Յունաց, այլ դեռ ևս ընդ հնազանդութեամբ կային Պաւսանեայ և Լակեդեմոնացւոց։ Յորում և միշտ պանչելիս ընծայեցոյց նա զիւրն քաղաքացիս յամենայն զինուորութիւնս՝ 'ի դեղեցիկ հանդերձանսն և 'ի վայելուչ կարգն, և 'ի մեծապէս մտադիւրութիւն ոգւոյ, զի և երևելիք յոյժ գտան նոքա քան զամենեսեան։

Իսկ յորժամ Պաւսանիաս բանագնաց լինէր ընդ բարբարոսն մատն լինել Եղլադայ, և առեալ գրէր վասն այնորիկ գիր

առ Թագաւորն, և յայրատագոյնս գնայր ընդ Նիզակակիցսն, և յիշխանութեան իւրում և 'ի ծանծաղամիտ ամբարտաւանութեանն հարատաւոր հարութիւնս գործէր բազումս, անգուսա Կիմոնն հեզաբար առ ինքն ժողովեալ զվերատաւեսն և մարդասիրեալ առ նոսա, տակաւ և մեղմով սիրանայր 'ի վերայ Եղլեազայ. ոչ զենուք՝ այլ բանիւք բերանոյն և քաջալաւութեամբ բարոյիցն։ Քանզի բազումք այն էին 'ի Նիզակակցացն՝ որ չհանդուրժեալ խստութեանն և դոռոզութեանն Պաւսանեայ, գային յաւելուին առ Կիմոնն և առ Արիստիդէս. որք և 'ի յանկուցանել յինքեանս ամբոխ՝ առաքէին միանգամայն և առ Պարէտան, բողոք զՊաւսանիայ բառնալ և յեռս կոչել, իբրու որ անարդու գլխովին Սպարտիոյ ելցէ և Եղլեազայ խռովիչ։

Եւ ասեն՝ եթէ Պաւսանիաս յամոթալի տուփանաց գրգեալ՝ առաքէր առնուլ կոյս մի 'ի Բիւզանդիոյ՝ անուն Կլէոնիկէ դուստր հոյակապ ծնողաց. նոքա թոյլ ետուն աղջկանն՝ ստիպեալք 'ի հարկէն և յերկիւղէն. և տղաչէր աղջիկն՝ մինչև մտեալ 'ի սենեակ անգր՝ անցուցանել զձրագն. ապա 'ի մթանն մերձեցեալ ինչիկ 'ի մահիճն՝ ուր 'ի քուն կայր Պաւսանիաս, ըստ դիպաց հարեալ ընդ շինչեալ լապտերն՝ Թաւալեաց զնա. յորմէ 'ի ձայնէն շրտուցեալ Պաւսանիաս, և մերկեալ զդաշոյնն որ մերձ իւր, շարժէր տայր հարուածս իբրու եթէ 'ի թշնամեաց ոք ընդդէմ կայցէ նմա, և հա

բեալ խոցէր զկոյն. իսկ 'ի խոցուածոյն անկեալ մեռեալ աղջկանն, ոչինչ ապա յետ այնորիկ գուլ և հանգիստ տայր Պաւսանիայ. այլ սառեալ 'ի գիշերի 'ի քուն երևութացեալ նմա խօլական ուրուատիպ, և 'ի սրտմտութիւն բրդեալ՝ ասէր առ նա տող մի գիւցազնական այսպիսի,

Գնալով գնասցես դու առ ատեանն
արդարութեան :
Զա՛ր մեծապէս է թշնամանք
որդւոց մարդկան :

Յայսմանէ ապա ո՛չ ևս հանդուրժեալ նիզակակցացն խաղայլին գնային ընդ Կիմոնի դալ պաշարել զնա : Այլ Պաւսանիա նիստ փութացաւ զերծաւ 'ի Բիւզանդիոյ՝ և խառնեալ յուզեալ՝ որպէս պատմեն՝ 'ի խօլականէ անտի, գնացեալ ապաւինեցաւ յԵրակլէա 'ի մեհեան մեռելահմայիցն. և անդ զոգին կարդացեալ զՆէկոնիկեայ, սաղատէր ողոքէր 'ի բաց զոխութիւն բարկութեանն դնել : Նա երևեալ նմա ասէր, մերձ ընդ մերձ ազատանալ նմա յամենայն աղէտիցն 'ի հասանելն 'ի Սպարտիա. և ակնարկէր անշուշտ՝ որպէս հաւանեալս եմ՝ զանդանոր զմահն նորա : Զայսոսիկ պատմեն մեզ բազումք :

Բայց Կիմոնն ընդ իւրով ձեռամբ կարգեալ զնիզակակիցսն զօրավարեալ նաւէր 'ի Թրակիա, լուր առեալ եթէ արք աւադք Պարսիկք մերձաւորք արքային կալեալ զԷոն քաղաք առ Սարիւմոն գետոնն, վիշտ շուրջանակի հասուցանէին Հելլենացւոցն :

Ապա առաջին զայն Պարսիկն 'ի պարտու-
թիւն մատնեալ և ընկրկեալ փակեալ զնո-
սա 'ի պարիսպն, երկրորդ խաղայր վանէր
զթրակացիսն՝ զբնակաւորս վերնագաւա-
ռին Սորիւմոնի՝ ուստի կերակուր գայր 'ի
քաղաքն. և պահ զգուշութեան սաստիկ
եղեալ ողջոյն գաւառին, այնչափ իմն յո-
գիս ապաստան արար զպաշարեալսն, զի և
Բուտէս զօրավար արքային բնաւ իսկ յու-
սակտուր՝ հուր հարեալ զքաղաքէն, միան-
գամայն և զբարեկամսն և զգոյսն և զանձն
ևս այրեաց 'ի նմա: Եւ այսպէս ապա ա-
ռեալ Կիմոնիսի զքաղաքն՝ աւար ո՛չ շատ
ժողովէր, քանզի և շատ ինչ հրակիզեալ
կայր 'ի միասին ընդ բարբարոսացն. սակայն
'ի բնակութիւն տայր Աթենացւոց զայն
գաւառ արդաւանդ և գեղեցիկ: Ոյր ա-
ղագաւ և Աթենացւոց ժողովուրդք Հեր-
մէսս երիս կանգնէին նմա, Կոթողս 'ի քա-
րէ. յորս յառաջնումն արձանագրեալ
կայր այսպէս.

Քաջանձինք և արտեայք էին,
Որք մանկանցն Մարայ՝ առ Սորիւմոն գե-
ստոին,
Է՛ր երբեմն՝ զի յԻոն
Սով ածին մեծ, և գոռ Արէս.
Եւ առաջին յանհնարս նեղեցին զնոսա:
Իսկ յերկրորդումն.
Զօրավարացն մրցանակ՝ Աթենացիք
Զայս ետուն բարերարութեան
Եւ մեծաց նահատակութեանց նոցա:

Զի և ոք զկնի յեկեղոցն
Տեսեալ զայս, 'ի նախանձ վառեսցի
Վասն հասարակաց իրացն գոռ յարդարել։
Իսկ յերրորդումն.
Է՛ր երբեմն 'ի քաղաքէ ասսի
Ընդ Աորէոսեանց 'ի Նուվրականն
'Ի դաշտ Տրոյեան խաղալ Մենէսթեայ։
Եւ նա՝ որպէս անդ Հոմերոս ասաց՝
Աւաւել քան զԴանայեցիս պատենազէնս՝
Զոքաւ զօրավար գերապանծ
'Ի կարգել գեղեցիկ զմարտն։
Այսպէս ուրեմն ոչինչ դժպատեհս
Կոչեսցին Աթենացիք
Զօրավարք մարտից և քաջարութեանց։

Թէպէտ և ոչ 'ի միում յարձանագրութեանց անտի անուն ոչ գոյ Կիմոնի, մարդիկ ժամանակին շուք ծայրալիր համարեցան զայն նմա. զի ոչ Թեմիստոկղէս, և ոչ դարձեալ Միլտիադէս երբէք կալան յայնպիսեաց անտի։ Դա՝ և վերջինդ իսընդրեալ երբեմն պսակ 'ի ձիթենւոյ, անդ Սովքարէս Դեկեղէոս յարուցեալ 'ի մէջ ատենին՝ ընդդէմ դառնայր նմա բանիւք՝ ոչ առ 'ի ճահ, սակայն և հեշտալուր յայնժամ ամբոխին. քանզի ասէր այսպէս. "Յորժամ դու ինքնին առանձին ոմ Միլտիադէս՝ մարտ եդեալ վանեացես զբարբարոսս, յայնժամ խնդրեացես առանձին ըզպատիւդ"։ Եւ առ՞ինչ ապա զԿիմոնի մրցանն այնչափ սիրեցին Աթենացիք. Թերևս զի առ այլովք զօրավարօքն մարտ

եղեալ կռուեցան միայն 'ի պաշտպանել անձանց. իսկ առ Կիմոնիւ՝ ինասեցին ևս թշնամեոյն, հորդան տուեալ և կռուեալ յերկրին Նոցա, և մասն ևս հասեալ կա- լան՝ գաղթականս արձակելով յԻոն և յԱմփիպոլիս։

Առ այսոքիւք՝ գաղթականս եռուն նո- քա և 'ի Սկիւրոս, զոր կալեալ իսկ էր Կի- մոնի՝ օրինակ զայս. 'Ի Կղզի յայս բնա- կեալ էին Դոլոպացիք, արք անփորձք մշա- կութեան գետնոյ, և ըստ վաղնջուց իւ- րեանց սովորութեանն՝ ասպատակք ծո- վու. և ապա յայնչափ եղեռն անկղիտա- ցեալք՝ զի և ոչ 'ի հիւրսն անգամ խնայ- էին նոքա՝ որ անդր նաւարկեալք շահավա- ճառ լինէին ընդ նոսա։ Նաև 'ի վաճառա- կանաց անտի թեսաղացւոց՝ որ հասեալ էին 'ի Կոեսին, կողոպտեալ սոցա և 'ի կապանս ևս արկեալ, իբրև զերծան նոքա 'ի կապանացն, դարձան եկին և 'ի ձեռն Ամփիկտիւոնեայցն դատակնիք ածէին 'ի վերայ քաղաքին փոխարինել զտուգանսն։ Ալ քաղաքացեացն ոչ կամեցեալ այն- պէս առհասարակ տուգանել, այլ էին պարտ յափշտակողացն միայն լինել հա- տուցանել զկշիռն. ապա զահի հարեալ ինասակարացն՝ առեալ վաղվաղակի գրէին առ Կիմոնն՝ գալ իւրովք նաւուք ունել զքաղաքն անձնատուր 'ի նա։ Օրինակ զայս ապա տիրացեալ Կիմոնի 'ի վերայ կղզւոյն, հալածէր անտի զԴոլոպացիս, և յանդորր հաներ զԵգեանն։

Ապա լուր առեալ Կիմոնի, զի նախ-
նին այն Թէսէոս որդի Եգէոսի, 'ի Սկիւ-
րոս փախուցեալ յԱթենայ՝ անդանօր
նենգաւ սպանաւ 'ի Լիւկոմիդէս արքայէ
առ ահին, զուն գործէր ոգւով չափ դը-
տանել զգերեզման նորա. քանզի էր իսկ
Աթենացւոց պատգամ հրամանատու՝ առ-
նուլ զԹէսէոսին նշխարսն փոխադրել 'ի
հայրենիսն, և շուք գեղեցիկ տալ նմա իբ-
րև գիւցազին։ Սակայն զանխուլ մնացեալ
վայր թաղմանն, զի և Սկիւրոսացիք ոչ կա-
մէին 'ի վեր հանել, և ոչ հետախոյզ ևս լինել
թոյլ տային։ Իսկ յայնժամ 'ի բազում ջա-
նիցն Կիմոնի հուսկ ուրեմն գտեալ գերեզ-
մանին, առեալ նա զոսկերսն դնէր յեռա-
թին իւր, և մեծապէս զարդու փոխադրէր
'ի հայրենիսն յետ ամաց իբրև չորեքհա-
րիւրոց 2։ Ոյր աղագաւ և յոյժ ըղձակաթ
եղեն առ նա ժողովուրդք, և 'ի յիշատակ
նորա յայնժամ և այն պայքար Ողբերգակ
քերթողացն յոյժ զհամբաւի հարաւ։ Քան-
զի յայնժամ 'ի հանդէս հանեալ Սոփոկ-
ղէս պատանի զառաջին զիւր Ողբերգու-
թիւնն, և վէգք և պայքարք պատահեալ
'ի հանդիսականն, Ափեպիոնէս իշխա-
նապետ չեհան վիճակաւ դատաւորս մրցա-
նացն այնոցիկ, այլ 'ի մտանել անդ Կիմով-
նի ընդ նիզակակից զօրագլխացն 'ի թատրն,
և ձօնեալ դից զնուէրսն ըստ օրինացն, չթո-
ղոյր նոցա մեկնիլ 'ի բաց իշխանապետն,
այլ երդմնեցուցեալ զնոսա հարկաւորէր
ինքնին նոցա բազմել դատաւոր վասն ի-

բացն. և էին նոքա թուով տասն՝ այր մի 'ի ցեղից իւրաքանչիւր։ Ապա այն մրցանք և յաւագութենէ անտի դատաւորացն հանդերձեցաւ մեծապէս, և այր զարամբ եղանէին։ Յորում և դյաղթութիւնն տարեալ Սոփոկղէս, ասեն՝ եթէ Եսքիւղոս ոչ բերելով 'ի խոր խոցեցաւ. և չհանդուրժեալ կալ մնալ հարուստ ժամանակ ՅԱԹԷՆՍ՝ լի ցասմամբ անցեալ գնայր 'ի Սիկիլիա, ուր և մեռեալ թաղեցաւ մօտ 'ի Գեղաս։

Եւ պատմէ մեզ Յունն, եթէ պատանեակ տակաւին ինքն ջոքաւ 'ի Քիոյ ՅԱԹԷՆՍ, և ընթրեաց անդ ընդ Կիմոնի առ Լաումեդոնտեայ. և յետ ճաշակաց նուիրացն աղաչեցին զԿիմոնն նուագ առնուլ։ Իսկ նորա նուագեալ քաղցր, սկսան որ մերձն կային գովել զնա իբրև յաջողակ առաւել քան զԹեմիստոկղէս, այն որ ասէր զինքն ոչ յերգ նուագաց վարժեալ և ոչ 'ի կիթաւ, սակայն քաղաք մի՝ գիտէ գործել մեծ և ընչաւէտ։ Իսկ յետ այնորիկ՝ որպէս և 'ի դէպ իսկ՝ 'ի ճաշական բան 'ի բանէ զլոյց լինէր և վասն նահատակութեանցն Կիմոնի, և 'ի յիշատակ բերեալ զմեծամեծս նորա, ինքն հնարիմացութիւն ինչ զիւր՝ զոր գործեաց երբեմն՝ ճառ արկեալ պատմէր բազմականին, զոր և յամենայն 'ի գործս իւր համարէր առաւել գեղեցիկ, և էր բանն այսպիսի։ Քանզի 'ի մարտի երբեմն բազում բարբարոսս գերի վարեալ նիզակակցացն 'ի Սեստեայ և 'ի

Բիւզանդիոյ, և 'ի նա ապաստան զբաշխն արարեալ զգերեալսն, իբրև ինքն 'ի մի կողմն առեալ դնէր մերկ զգերին, և 'ի միւսումն՝ ողջոյն զզարդս պաճուճանաց մարմնոց նոցա, մեղ դնէին նոքա անհաւասար բաշխին. այլ նա ասէր նոցա առնուլ զմի 'ի բաժնէն զոր կամեսցին, իբրու անշուշտ Աթենացիք շատասցին միւսումն։

Անդանօր խորհուրդ տայր Նիզակակցացն Երոփիտոս Սամոսացի առնուլ մանաւանդ զինչս Պարսկացն, քան զՊարսիկսն. և առնուին նոքա զզարդս գերեալսն, և Աթենացւոցն թողուին մերկ զգերին։ Ապա Կիմոնն մեկնէր 'ի վայրացն՝ կարծեալ ինքն իբրև բաժանարար ծանծաղամիտ, այն ինչ նիզակակիցքն բարձեալ տանէին աւարս զապարանջանաց ոսկւոյ և զմանեկաց և զողմանեկաց և զպարսիկ պատմուճանաց և զծիրանեաց. իսկ Աթենացւոցն վիճակեցան միայն մարմինք մերկք և 'ի գործ անպիտանք։ Բայց ապա յետ սակաւուց բարեկամք և մերձաւորք գերեալսն գային հասանէին 'ի Փռիւգիոյ և 'ի Լիւդիոյ, և անդ առհասարակ զամենեսեան փրկանաւորեցին այնչափ մեթերից արծաթոյ՝ զի և ընդ ամիս չորս զպաշար նաւացն հանդերձեաց Կիմոնն յարծաթոյ անտի, և շատ ևս յոսկւոյն յաւելաւ քաղաքին։

Իսկ բաղմահարուստ յոյժ եղեալ Կիմոնի, ողջոյն զհասան՝ զոր կուտեաց փառօք 'ի յաղթութեանն, առեալ մեծ ևս փառօք ծախէր 'ի շահ օգտի քա-

ղաքացեացն. քանզի քակեաց եբարձ ըզ-
ցանգս զագարակաց իւրոց, զի կարօտեալ
մարդիկն և եկք և օտարք գնացեալ առցեն
ազատ 'ի պաղոյն. և հանապազօր յիւրում-
ոան կազմէր սեղան՝ թէպէտ և անպա-
ճոյճ, այլ շատից բաւական. անդ գնայր
և ամենայն աղքատ և գտանէր կերակուր
անաշխատ. և պարապէր ինքն միայն յկրս
քաղաքին։ Բայց որպէս Արիստոտէլ ինք-
նին ասէ՝ այս սեղան ոչ միշտ և հանապա-
զօր հանդերձէր առհասարակ Աթենա-
ցւոցն, այլ որոց միայն յիւրմէ ժողովրդենէ
'ի Լակիատեանց անտի խնդրէին վայելել
'ի նոյն։

Բայց խումբ պատանեաց յիւրոց ընտա-
նեացն զՀետգնային նորա հանապազ հան-
դերձաւորեալք գեղեցիկ. և թէ ըստ դի-
պաց պատահէր Կիմոնի ծեր 'ի քաղաքէն
'ի հանդերձ աղքատին, տայր նա միում
ումեք 'ի նոցանէն փոխանակել ծերոյն ըզ-
հանդերձան. և էր գործն կարի լաւ և գե-
ղեցիկ։ Առ այս և բարձեալ տանէին ընդ
իւրեանս այն պատանիք մթերս դրամոց, և
'ի հրապարակին մատուցեալք առ լաւան և
առ պարկեշտան յաղքատաց՝ զանխուլ և
մինչիկ ընուին զձեռս նոցա։ Զայսոցիկ թուի
իմն և Կրատինոսի կատակերգակի յիշա-
տակ առնել յԱքիլղքոսն իւր՝ 'ի տողս
յայսոսիկ. "Այլ և ես ինքնին Մետրո-
բիոս նօտար, ընդ առնն աստուածայնոյն
և մեծի վանատրի և աւագի լաւագունին
քան զամենայն Հելլենացիս՝ ընդ Կիմոնի՝

ցանկայի անցուցանել զծերութիւն պա-
ղարտութեանն, խրախամիտ ընդ ամենայն
յաւիտեանս։ Բայց նա հինաւուրց կան-
խեաց յօրահասն,,։ Իսկ Գորգիաս Լէոն-
տացի ասէ, ստանայր Կիմոնն ինչս առ 'ի
վարել, և վարէր՝ առ 'ի ստանալ շուք։
Այլ և Կրիտիաս մի յերեսնից անտի բըռ-
նաւորացն, ցանկայ յիւր Ողբն "Զսկո-
պատացւոցն ունել հարստութիւնսն զամ-
բաւ, և սիրտ մեծանձն ունել զԿիմոնի, և
զյաղթանական զԱգեսիղայոսի Լակեդե-
մոնացւոյ,,։

Եւ արդեօք և Լիքաս ինքնին այր Սպար-
տացի ոչ յայլ ինչ պատճառս այնչափ ըզ-
համբաւի հարաւ առ Հելլենացիս, բայց
զի 'ի մերկամարմին յըմբշաց մարտսն հիւ-
ընկալեր զեկս և զօտարս։ Այլ Կիմոնին
առատաձեռնութիւն դերազանցեալ յոյժ
գտաւ քան զմարդասէր հիւրընկալութիւն
զնախնեացն Աթենացւոց։ Քանզի ոյր ա-
ղագաւ իրաւամբք այդ քաղաք բարձրա-
պարանոց խնդայ, զի նոքա ցուցին Հելլե-
նացւոց զսերմանսն 'ի կերակուր, առ այս՝
և ուսուցին դտանել աղբիւրս ջրոյ և վա-
ռել կրակ՝ կարօտեալ մարդկանն, իսկ Կի-
մոնն զիւր տուն՝ Պրիտանիոն 3 գործեալ
հասարակ ամենայն քաղաքայնոցն, և տը-
ւեալ ևս իշխանութիւն եկաց և պանդխտաց
առնուլ վայելել 'ի պտղոց անտի, և որչափ
ինչ միանգամ լաւ և բարի ըստ եղանակաց
տարւոյն պտղաբերեալ յիւր կալուածսն,
միւսանգամ յերևան ածէր օրինակ նմն ըզ-

վիպասանեալն զայն սեղանակցութիւն ըղ-
կռոնոսին դարուցն։

Արդ՝ որք միանգամ բամբասէին զնա,
իբրու մարդասիրութեամբդ այդուիկ յինքն
զժողովուրդն յանգուցանել, նշաւակեալ
լինէին յայլ ինչ քաղաքավարութենէ ան-
տի առն, զի թիկնածու էր նա աւագա-
նոյն և 'ի լակոնականն հակամիտեալ կարգ.
և զի՝ և 'ի միասին ընդ Արիստիդեայ ընդ-
դէմ դառնայր Թեմիստոկղեայ՝ յորժամ
նա 'ի վեր առնոյր ամբառնայր զռամկին
պետութիւնն. և մեծապէս 'ի վէգ դայր
ընդ Եփիալտեայ, յորժամ նա 'ի շնորհս
ռամկին խնդրէր զաւագութիւնն տապա-
լել զԱրիսպագին։ Առ այսոքիւք՝ թէպէտ
և առհասարակ զամենեսին՝ բաց յԱրիս-
տիդեայ և յԵփիալտեայ՝ տեսանէր նա ձո-
խացեալս 'ի հասարակաց հասկն, ինքն
ցանգ անկաշառ էկաց մնաց 'ի քաղաքին,
և ձիրս չառնոյր ընծայից. այլ զամենայնն
ասէր և գործէր ձրի և անարատ։ Եւ պատ-
մեն՝ եթէ 'ի բարբարոսաց անտի ոմն այր
Հռիսակէս անուն վտարանչեալ յարքայէն
Պարսից, չոքաւ յԱթէնս բազմահարուստ
ընչիւք. և անդանօր հալածեալ 'ի զբպարտ-
չաց՝ դիմեալ ապաւինէր առ Կիմոնն. և
առ սեամն գաւթին առաջի ընծայէր ա-
մանս երկու լցեալս, մին՝ Դարեհեան ար-
ծաթով և միւսն ոսկւով. զոր տեսեալ
Կիմոնի և 'ի ժպիտ հատեալ, հարցանէր
զայրն՝ զի՞նչ կամեցի լինել Կիմոնի,
վարձկա՞ն եթէ բարեկամ. իբրև ասաց՝ է-

թէ բարեկամ, կրկնեաց Կիմոնն և ասէ. «Տարցես դու ապա ընդ քեզ զքոյին դըրամդ և կալցես առ քեզ. և եաթո բարեկամ՝ յորժամ պիտոյն եղիցի՝ վայելեցիս 'ի դոսա»։

Զայնու ժամանակաւ նիզակակից ժողովուրդք՝ թէպէտ և տալ տային Աթենացւոց դրամս ըստ պայմանեալ հարկին, այլ ոչ էաւ կամէին տալ որեար և ոչ նաւս հանդերձեալս՝ ըստ պայմանին. և յանձն չառեալ այնուհետև զվաստակ զինուորութեան, ցանկային յանդորրու մշակութեան պարապել անդոց, իբրու որոց մարտից պէտք չէին այնուհետև՝ 'ի վերջոտնել բարբարոսացն և 'ի խաղաղել իրացն. իսկ յայնժամ այլք 'ի զօրավարացն Աթենացւոց ստիպէին զնոսա և վասն այնոցիկ, և պատուհաս էաւ 'ի վերայ կապէին անսաստիցն՝ դժոխըմբերել զիշխանութիւնն գործեալ։ Բայց Կիմոնն ընդ հակառակս ոչ ինչ բռնացաւ յիշխանութեանն 'ի վերայ նոցա, և այնպէս առեալ 'ի նոցանէն ըզդրամսն և զնաւս թափուրս՝ զի զէն առնուլ չառնուին յանձն, թոյլ տայր նոցա կալ առ տնին այնպէս պարապորդք, և 'ի քաջաց մարտիկաց՝ մշակս լինել հողագործս և արս վաճառականս, ոչինչ յաջողեալք այնուհետև 'ի պատերազմ առ գրգանաց փափկութեանն։ Իսկ անդուստ նա զիւր Աթենացիսն առեալ ամբարձեալ 'ի նաւս հետ զհետէ և մարզեալ 'ի զինուորութեան, արագ արագ թոշակօքն և դրամովքն զնո-

սա տեարս 'ի վերայ կացուցանէր Թոշա-
կատուաց իւրեանց։ Քանզի հանապազօր
նոքա կացեալք 'ի նաւան և դեգերեալք 'ի
զէնս և կերակրեալք 'ի հարկաց նիզակակ-
ցացն, մեծարոյք և արդոյք գտան առաջի
նոցա. և ապա տակաւ՝ որ նիզակակիցքն
էին՝ դարձան և եղեն նոցա հարկատուք և
ծառայք։

Ա՛ռ այսոքիւք՝ և ո՛չ ոք առաւել քան
զԿիմոնն 'ի խոնարհութիւն կրթեաց և սան-
ձեաց զհպարտութիւն զմեծի արքային։
Քանզի վանեալ զնա յԵլլադայ՝ չէտ նմա
երբէք հանդարտել, այլ զհետ մտեալ նո-
րա իբրու ցանգ 'ի թիկանց, մինչև բար-
բարոսացն ոգի առեալ՝ աւար հարկանէր
և քանդէր տապալէր վայր բազում 'ի սահ-
մանաց նորա. և բազմաց ևս տայր վտարան-
ել և անձնատուր 'ի Յոյնսն լինել. զի և 'ի
Յոնիոյ մինչև 'ի Պամփիլիա՝ ողջ զԱսիա ա-
զատ կացուցանէր 'ի ներքուստ ձեռին Պար-
սից։ Եւ լուր առեալ զի զօրավարք ար-
քային զօրու ծանու և նաւաց բազմու-
թեամբ դադարեալ կան առ Պամփիլիեաւ,
ահ արկեալ նոցա՝ մի անցանել նաւել
ընդ ծովն որ 'ի մէջ Քէլիդոնեայց, չու-
առնէր խաղայր 'ի Գնիդեայ և 'ի Տրիո-
պեայ երկերիւր եռաթիովք, զոր շինեալ
իսկ էր Թեմիստոկղեայ՝ արագընթացք
յոյժ և արագադարձք. և զոր յայնժամ
Կիմոնն ընդարձակ ևս գործեալ՝ կամուրջ
մի յաւել 'ի տախտակամածն անդր. զի
առաւել ևս թուով զօրականք մարտ է-

դեալ կռուեսցին ընդ Թէնամին։ Ապա յառաջ խաղացեալ 'ի քաղաք անդր Փասելացւոց, որք Թէպէտև Հելլենացիք էին, ոչինչ յանձն առին ժողովել զնաւատորմիղ նորա և ոչ 'ի Թագաւորէն 'ի բաց սարտեան. եկաց ապա Կիմոնն և աւերէր զերկիր նոցա, և խաղաց գնալ հարկանել և զպարիսպս նոցա։ Բայց Քիացիք նիզակակից Կիմոնի՝ վաղնջուց բարեկամութիւն կալեալ ընդ Փասելացւոց, գուն գործէին հաշտ առնել զԿիմոնն. միանգամայն և տաւս գրեալս պարուրեալ զփքնովք աղեղնաձիգ 'ի պարիսպն լինէին, և Փասելացւոցն ազդ առնէին զսմենայնն։ Ապա 'ի վերջէ 'ի հաշտութիւն գային՝ դաշն եդեալ տալ քանքարս տասն, և զհետ խաղալ Կիմոնի և մարտ ևս դնել ընդ բարբարոսն։

Եւ պատմէ Եփորոս, եթէ Տիթրաւոտէս էր զօրավար նաւաց արքային, և Փերենդատէս զօրաց ցամաքին։ Իսկ Կալլիստենէս ասէ՝ եթէ Արիոմանդոս Գոմերիւացի էր սպարապետ մեծ առհասարակ բանակին, և առկայացեալ նաւուքն մերձ յԵրիւմեդոն, ոչինչ համարձակէր 'ի վեդ գալ ընդ Հելլենացւոց. այլ անդանօր սպասեալ մնայր նա նաւաց ևս ուԹանից Փիւնիկեցւոց՝ որ գային 'ի Կիւպրոսէ։ Բայց Կիմոնն զառաջս առեալ գալստեանն, խաղայր դիմէր ընդդէմ Թէնամեացն. կամէր բուռն և յակամայ ստիպել զնոսա 'ի նաւամարտն։ Նոքա խոյս տուեալ՝ վերջոյ-

նեալ գնային զառաջինն 'ի գեռ անդր. այլ ապա զՀեռամոեալ Ամենացւոցն տեսեալ՝ արձանացան ընդդէմ ըստ Փանոդեմեայ՝ վեց հարիւր նաւուք, և ըստ Եփորոսի՝ երեքհարիւր և յիսուն։ Այլ 'ի ծովամարտին յայնմիկ ոչինչ արժանի այնպիսի նաւահանգիստ նահատակեալք, դարձան արագ 'ի ցամաքն կոյս. որք վաղաժամանքն եղեն՝ 'ի դուրս վազեալք 'ի նաւացն՝ ապաւինեցան 'ի բանակ անդր ցամաքին՝ որ մերձ ճակատեալ կայր. իսկ որք ձերբակալքն եղեն՝ կոտորեցան հանդերձ նաւուքն։ Այլ թէ մեծ էր նաւահանդէսն՝ յայտ է. զի թէպէտ և բազումք 'ի նոցանէն՝ որպէս հաւանեալս եմ՝ ապրեցան, և բազումք ևս խորտակեցան, 'ի վերայ այսր՝ և նաւս երկերիւր 'ի վատթարեալոց անտի հասին կալան Ամենացիք։

Ապա բանակ ցամաքին ելեալ 'ի ծովափն, վտանգ անհնարին թուէր Կիմոնի՝ զվաստակաբեկ Հելլենացին առնուլ խաղացուցանել 'ի ցամաք ընդդէմ առոյգ խուժանի յոքնաթիւ բարբարոսացն։ Սակայն և քաջարիք նահատակեալ նոքա 'ի յաղթութենէն զոր տարան՝ կազմ և մոտդիւրագոյնս խառնել անդրէն 'ի կռիւ, խաղացոյց արտաքս զՀեռակաղօրն ջերայ ջերմ այն ինչ եղեալ 'ի նաւամարտէն. նոքա արագ արագ դիմեալ անկանէին 'ի վերայ Պարսից մեծաւ աղաղակաւ։ Այլ քաջապէս արուեստիւ ընդդէմ դարձեալ բարբարոսացն, սաստիկ և գոռ լինէր մարտ

պատերազմին, և անկանէին 'ի կողմանէ անսի Ամենացւոց աղք աւադք և հոյակապք և կորովք։ Բայց և այնպէս յերկարագոյնս 'ի գիմի հարեալք՝ 'ի վերջէ ուրեմն 'ի պարտութիւն մատնեցան. հայրան խորտակեցան, և մնացեալքն 'ի գերութիւն վարեցան, և առան խորանք նոցա ամենայն հարստութեամբ լի։

Եւ յայնժամ Կիմոնն իբրեւ ըմբիշ քաջ և անպարտելի՝ կրկին մարտից յաղթական 'ի միում աւուր, 'ի վեր վազեաց քան ըզփառս Սալամինայն 'ի ցամաքակռուին և քան զՊղատեայն 'ի նաւամարտին, և զայլ ևս 'ի նոսա յաւելոյր յաղթութիւն. քանզի լուր առեալ՝ զի նաւք ութսուն Փիւնիկեցւոց որ ոչ գտան 'ի մարտի անդ, եկեալ հասեալ կան յԻդրոս, 'ի շտապ տագնապի խաղայր անդր։ Իսկ զօրավարքն նաւացն ոչինչ գիտէին հաստատութեամբ յաղագս հարուածոյ մեծի բանակին, սակայն և 'ի վարանս կային։ Ուստի և մեծապէս զահի հարեալք յերևեալ Կիմոնի, արագ արագ զամենայն զնաւսն 'ի ձեռաց իւրեանց հանեալք՝ բազումք ևս 'ի նոցանէն տապաստ անկանէին։ Եւ այս նահատակութիւն այնպէս ինն 'ի խոնարհութեն կրթեաց զհպարտացեալ խորհուրդ աղքային, մինչև զգերահամբաւեալն զայն կուռել նմա դաշն խաղաղութեան, կալ միշտ բացագոյնս 'ի ծովն Եղլեադայ միջոցաւ ջաւի՝ զոր վազեցէ երիվար. առ այս՝ և երբէք չնաւել նմա յայս կոյս Կիւնեանց և Քէլիդոնեայց՝

երկայն և պղնձացռուկ նաւուք։ Բայց Կալ
լիստենէս ասէ՝ բարբարոս արքային ոչինչ
կռել պայման յայսպիսեաց ասոի. այլ
ապա արդեամբք գործել զայն առ ահի եր-
կիւղի հարուածոյն այնմիկ. և թէ՝ այնչափ
ինն ապա բացագոյնս եկաց նա յԵլլադայ,
զի և Պերիկղէս յետ այնորիկ յիսուն նա-
ւուքն, և Եվիաղտէս երեսնիւք միայն՝ յա-
ռաջ վարեալք յայնկոյս Քէլիդոնեայց,
ոչինչ պատահեցան նաւաց բարբարոսացն։
Այլ սակայն՝ 'ի սահմանս վճռոցն զոր հա-
ւաքեաց Ժողովեաց Կրատերոս՝ տեսանեմք
մեք հաստատութեամբ կռեալ յայնժամ
զպայմանսդ։ Եւ ասեն՝ կանգնեալ յայն-
ժամ Աթենացւոց՝ և բադին մի խաղաղու-
թեան, և շուք երևելի գնել Կալլիասայ՝
որ դեսպան ջղքաւ առ թագաւորն։

Ապա 'ի վաճառ հանեալ զաւար թըշ-
նամւոյն, 'ի դրամոց անուի ոչ միայն զայլ
ինչ ծախսն ընուին ժողովուրդք, այլ և բա-
զում ինչ յաւելեալ շինեցին նոքա և ըզ-
պատուար դղեկին 'ի կողմն հարաւոյ։ Եւ
ասեն դարձեալ՝ եթէ պատուարք այն եր-
կայնաձիգք՝ որոց անուն կարդային Սրուն,
թէպէտ և ողջ կանգնեցան յետ ժամանա-
կաց, սակայն զհիմն առաջին անդրդուելի
արկաւ Կիմոնն։ Իսկ յայնժամ գործա-
ւորք զվայրն գտեալ ճախճախուտս և
տամուկս, խիճ շատ արկեալ 'ի ճահիճսն
և վէմս անարիս, այնպէս հոծեալ պնդե-
ցին զվայրն և ողջոյն զծախսն տայր ինք-
նին Կիմոնն։ Առ այսոքիւք՝ և առաջին

զարդարեաց Կիմոնն զքաղաքն 'ի վայրս բերկրալից Ազատական անուանեալ մարզեցն, որք և յետ սակաւ միոյ յոյժ արդոյք գտան և սիրելիք. ծառս տնկեալ սոսեաց 'ի հրապարակին, և զԱկադեմիա գլխովին 'ի ծարաւուտ և յերկնաձգեալ կերպարանէն 'ի մայրիս փոխեալ դալարագեղ, վտակահոս, և հորդէր անդանօր ընթացս վազից կուռ արահետ, և Ճեմարանս հովանաւորս։

Իսկ յայնժամ 'ի Պարսից ոմանք ոչինչ յանձն առեալք տեղի տալ 'ի Քերրոնեսեայ, նա և 'ի Թիկունս իւրեանց կոչեալ՝ զթրակացիս վերնագաւառին, և արհամարհութեամբ ևս գնացեալ ընդ Կիմոնի՝ որ սակաւ եռաթիւոք եղեալ գայր յԱթենայ, նա 'ի վերայ անկեալ նոցա քառիւք միայն հասեալ ունէր նաև երեքտասան 'ի նոցանէ, և վանեալ զՊարսիկն և նուաճեալ զթրակացիսն, ողջոյն զՔերրոնեսոն հնազանդեցուցանէր Աթենայ։ Եւ ապա 'ի նաւամարտի պարտեալ և զթասոսացիս վտարանջեալս յԱթենացւոց, կալաւ նաև երեսուն և երիս, և վանեաց զքաղաքն նոցա. և ընդ բռամբ արկանէր Աթենացւոց զբովս ոսկւոյն՝ որ կան անդ յայնկոյս, և զգաւառն զտէրութեան Թասոսացւոց։ Բայց քանզի անտի հեշտին էր անցք 'ի Մակեդոնիա, և էր ևս նմա ժամ պատեհ երթալ հատանել անտի վայրս բաղումս, և ոչ յօժարեցաւ 'ի նոյն Կիմոնն, բամբասեցաւ իբրև կաշառաբեկ յԱղեքսանդրէ

որքայէ. և Թշնամիք նորա միաբան ամբաստան լինէին զնմանէ յառեն։ Այլ նա պատասխանի յանդիման դատաւորացն զայս ասէր, եթէ դաշն բարեկամութեան երբէք նա ոչ կռեաց ընդ Յունիացւոց և ընդ Թեսաղացւոց՝ տոգ և ժողովուրդ ընչաւէտ, որպէս գործեցին այլք 'ի շուք սպասարկութեան և ընծայից առ 'ի նոցանէ. սակայն ընդ Մակեդոնացւոցն՝ կարի իսկ քաջ. քանզի սիրեաց և նախանձաւոր ևս է սակաւապէտ չափաւորութեան որերոյն՝ զոր արդոյ ևս համարի քան զամենայն մեծութիւն. բայց և այնպէս պանծայ՝ զի բարգաւաճ արար զիւր քաղաքն յաւարաց անտի Թշնամեացն։

Իսկ Ստեսիմբրոդոս 'ի պատմութեանն յաղագս դատաստանին այնորիկ՝ ասէ յառնել Եւպինիկեայ երթալ առ դուրսն Պերիկղեայ ողղաւոր վասն Կիմոնի՝ իբրև որ առաւել ահաբեկ 'ի դատախազն և անվանելի էր ինքնին Պերիկղէս։ Այս անդ Պերիկղէս 'ի ժպիտ հատեալ ասէր առ Եւպինիկէ. "Պառաւեալ է քո՝ ո՞վ Եւպինիկէ՝ պառաւեալ, որպէս զի և ոչ յաջողել քեզ 'ի մեծամեծսն,,։ Համայն և այնպէս կարի հեզացաւ Պերիկղէս առ Կիմոնն 'ի դատաստանին, և միանգամ միայն յարեաւ ամբաստան զնմանէ վեր 'ի վերոյ բանիւք։ Եւ այնպէս ապա անդատապարտ եղանէր Կիմոնն։

Յետ այսորիկ դեգերեալ նորա ՅԱԹԷՆս և առաջնորդեալ քաղաքին, ցանգ

ստանձակոծէր զԽուժանն 'ի Ճոխանալ նո-
րա երբէք 'ի վերայ աւագանւոյն և յինքն
զիշխանութիւնն յանդուցանել. իսկ իբրև
անդրէն միւսանգամ եկ նաւեաց նա 'ի
կռիւ մարտի, յայնժամ ազատացեալ ռամ-
կին և վերը 'ի վայր զկարգ զառաջնորդու-
թեանն արարեալ, և զհայրենատուր սահ-
մանսն՝ որովք վարէին յառաջագոյն, 'ի
բաց հանէր յարիստարգէն առ Եփիաղ-
տեաւ միանգամայն զամենայն իշխանու-
թիւն դատաստանի՝ բայց 'ի սակաւուց ինչ,
և իշխան հրամանատար՝ ինքն եղեալ ամե-
նայն ատենից, 'ի ռամկապետութիւն համ-
բուն առեալ շրջէր զքաղաքն, մեծապէս
'ի ժամուն զօրացեալ Պերիկղեայ և շահու
օգտի խուժանին միայն պատկառ կացեալ։
Ոյր աղագաւ և Կիմոնի 'ի դառնալ իւ-
րում յոյժ ցաւեալ ընդ այնչափ ոտնհա-
րութիւն կարգի աւագանւոյն, իբրեւ գուն
դարձէր յառաջինն զնա դարձուցանել
կարգ և նորոգել զաւագպետութիւնն՝ որ
առ Փլիսթենեաւ, անդանօր բաղումք յա-
րուցեալ ընդդէմ նորա բողոք բարձեալ
դրդէին զխուժանն. անդրէն միւսանգամ
յիշատակ առնէին նոքա որ ինչ նորա գործք
ընդ քեռն՝ ըստ համբաւոյն պատմելոյ. և
յերեսս ևս հարկանէին զնորա առ Լակե-
դեմոնացիսն հակամիտութիւն. և առ այս՝
հուչակաւ զհամբաւի հարկանէին յայնժամ
Եպոզիդեայ տողքն վասն Կիմոնի, այս-
պիսի ինչ. "Ո՛չ չար ոք էր, այլ գինեմոլ
էր նա և մեղկ. էր զի և 'ի Լակեդեմոն

գնացեալ ննջէր, անդ միայնակ լքեալ զԵ-
պինիկէն ,, :

Արդ թէ այնպէս մեղկ գոլով և գինե-
ման, քաղաքս այնչափ հասեալ կալաւ
նա, և յաղթութիւնս այնչափ տարաւ. ե-
թէ յանկարծ զդաստ կացեալ էր և ժիր,
նահատակութիւնս քանիսն նահատակէր,
զի և ոչ 'ի նախնեաց ոք Հելլենացւոց և ոչ
'ի վերջնոց ոք յառաջագէմ քան զնա լի-
նել: Եւ արդեօք էր իսկ նա 'ի սկզբանէ
կարի հակամիտեալ առ Սպարտացիս, և
որդիք երկուորեակք եղեալ նմա, միումն
անուն կարդայր Լակեդեմոնիոս, և միւ-
սումն՝ Եղիոս. ծնեալք նմա 'ի կնոջէ ու-
մեմնէ Կլիտորիա անուն, որպէս պատմէ
Ստեսիմբրոդոս. ուստի և ստէպ Պերիկղէս
'ի դէմս հարկանէր նոցա զմայրենի զարմն:
Այլ Դիոդորոս Թարգման՝ ասէ՝ երկուց
այնոցիկ զաւակաց՝ դարձեալ և երրորդին
անուն Թէստաղոս՝ ծնեալ նմա յԻսոդի-
կեայ դստերէ Եւրիպտողէմոսի Մեգա-
ղացւոյ:

Սակայն և Լակեդեմոնացիք Թիկունս
տային բարգաւաճութեանն Կիմոնի, Թըշ-
նամութեամբ բերեալք ընդ Թեմիստոկ-
ղեայ, և զԿիմոնն տակաւին պատանի՝ խրն-
դրէին մանաւանդ յօրանալ և տիրանալ
յԱթէնս: Եւ էր բանն զառաջինն մեծա-
պէս հաճոյ Աթենացւոցն. զի և ոչ դուշ-
նաքեայ շահ օգտի էր նոցա 'ի բարեկամու-
թենէ անտի Սպարտացւոցն, և 'ի սկզբան
բարգաւաճ լինելոյն Իւրեանց և ձեռնա-

մուխ 'ի գործս նիզակակցացն, շուքն Կիմոնի և մտերմութիւնն ոչինչ գժպհի էր նոցա. զի և բազում ինչ յիրաց Հելլենացւոցն առաջնորդէր 'ի ձեռն նորա. և ինքն հեզաբար և հեշտ գնայր ընդ նիզակակիցսն, և գեղեցիկ մարդասիրութեամբ ընդ Լակեդեմոնացիսն: Բայց ապա իբրև յաղթ և հարուստ լինէին Ա֊թենացիք, նոքին դարձեալ ոչինչ հանդարտէին ընդ այնչափ հակամիտութիւն Կիմոնի 'ի Լակեդեմոնացիս անդր: Քանզի և ինքն ցանգ զԼակեդեմոնիա 'ի վեր առեալ առաջի Ա֊թենացւոցն, մանաւանդ 'ի կշտամբել իւրում զնոսա կամ 'ի յորդորել, որպէս պատմէ Ստեսիմբրոտոս, ասէր ստէպ. "Ա՛յլ ո՞չ այսպիսիք ոմանք են Լակեդեմոնացիք,,. որ ապագաւ 'ի նախանձ և 'ի թշնամութիւն դրդէր զնոսան:

Իսկ որ առաւել քան զամենայն ամբաստանութիւնս յաղթահարեաց զնա, այսպիսի ինչ էր. Յամին չորրորդի թագաւորութեանն Աբքիդամոսի որդւոյն Զեւքսիդամոսի 'ի Սպարտիա, գեռնաշարժ ահագին՝ որպիսի ո՛չ երբէք յառաջն՝ այնպէս սասանեալ դղրդեցոյց զաշխարհն նոցա, զի և գաւառն Լակեդեմոնացւոց խորխորեալ պատառեցաւ 'ի վիհս անդնդախորս, և զերծեալք հոսեցին պարեխք 'ի Տաւգետոսի լերանցն. իսկ քաղաքն հիմն 'ի վեր տապալեցաւ առ հասարակ և յատակեցան ամենայն տունք 'ի գեռնաշարժէն բայց 'ի հնգից: Եւ պատմեն՝ եթէ և

պատանիք և մանկունք յայնժամ 'ի դաւթի անդ սրահին պարապեալք յրմբշամարտս, վայրիկ մի յառաջ քան զդէռնաշարժն անցեալ վազեաց ընդ այն նապաստակ մի, զորոյ զհետ մանկունքն օծեալք վազեցին արտաքս հրճուանօք. իսկ անդանօր պատանիք՝ որ մնացին՝ ջախեալք առհասարակ դիտապատս անկանէին 'ի նեղքոյ ըմբշարանին։ Եւ դերեզման նոցա մինչև յայսօր ժամանակի անուանեալ կոչի Սիոմաղիաս 4։

Իսկ յայնժամ Աբիդամոս արքայ նախազգած վտանգին՝ որ յառաջոյ, և տեսեալ ևս զքաղաքացիսն հետամուտս ապրեցուցանել զպատուականսն 'ի գոյից, հրաման տայր փող հարկանել ազդարար հրոսակի թշնամեացն, զի արագ արագ առնա վառեալք խմբեացին ժողովուրդք։ Եւ ապա այս հնարիմացութիւն ապրեցոյց յայնժամ զՍպարտիա։ Քանզի Իղոտք դեդերեալք 'ի դաշտան՝ 'ի կողմանց կողմանց յայնժամ հորդան տային հասանել սատակել և զմնացեալսն 'ի Սպարտացւոց. այլ 'ի զէն 'ի զարդ վառեալ և 'ի կարգի յակն արկեալք զնոսա, վերջոտնեալ գնային 'ի մերձաւոր քաղաքսն. և ապա յայտնի մարտ ընդդէմ նոցա յարդարեալք՝ յանկուցանէին ոչինչ նուազունս և 'ի շրջակայ ժողովրդոց. առ այս՝ և Մեսսենացիք յայնժամ ինքնին մարտ եդեալ կռուէին ընդ Սպարտացւոց։

Իբրև այս եղև, առաքեցին Լակեդեմոնացիք զՊերիկլիդաս յԱթէնս խնդրել

օգնութիւն. որ աղագաւ և Արիստոփա-
նէս հեգնեալ զայրն ասէ. Նստեալ Պերիկ-
ղիդաս մերձ առ բագինն՝ ծիւրեալ դեղ-
նեալ, և որդան կարմիր զիւրեաւ արկեալ,
ինդրէր զօրական։ Արդ ընդդէմ դարձեալ
ինդրոյն Եփիաղտէս պնդէր չտալ ձեռն
օգնականութեան և 'ի վեր չամբառնալ
զքաղաքն նախանձաւոր Աթենայ. Նա՝ թո-
ղուլ լքանել զնա 'ի նուաճութեան իւ-
րում և 'ի խոնարհութիւն կրթել զամ-
բարտաւանութիւն նորա։ Իսկ անդուստ
Կիմոնն՝ որպէս Կրիտիաս ասէ՝ զԼակեդե-
մոնացւոցն շահ նախամեծար քան զբար-
գաւաճել զիւրոցն կարգեալ և զիսուժանն
ամոքեալ ներհակաբար Եփիաղտեայ, հա-
նէր 'ի ճակատ բազմութիւն հետևակաց 'ի
թիկունս օգնականութեան Սպարտացւոց։
Բայց Յոնն և զբանն գլխովին պատմէ
մեզ՝ որովք մեծապէս գրգեաց Կիմոնն զԱ-
թենացին, մի թոյլ տալ նուաճութեանն
Սպարտայոյ, զի մի թերևս կաղասցի Եղլա-
դա, և իւրեանց քաղաքն անբաժ 'ի հաւա-
սարակշռութենէն կացցէ։

Ապա յետ օգնութեանն Լակեդեմո-
նացւոց, խաղացուցեալ Կիմոնի զզօրն
ընդ Կորնթոս 'ի դարձին իւրում, բողոք
շատ բառնայր զնմանէ Լակքարտոս, զի
մինչև բանագնաց եղեալ ընդ Կորնթացիս՝
այնպէս խաղացոյց 'ի նեղքս զզօրն. զի և
ոչ ոք արդեօք առ գուրս ուրուք բաղխեալ՝
ոչ մտանէ մինչև թոյլ տանուտեառնն
տուեալ։ Զայն լուեալ Կիմոնի, ետ պա-

սասխանի. "Այլ դուք ինքնին ո՞վ Լակ-
քարտէ, չբախեալք առ դուրս Կղէոնա-
ցւոց և Մեգարացւոց, այլ խորտակեալ
զայն, այնպէս բռնացարուք դուք զինու
զարդու մտանել 'ի ներքս. կարծեցէք՝ ե-
թէ բռանց առաջի բաց լցեն ամենայն
դրունք,, : Եւ այնպէս 'ի դէպ ժամու քա-
ջացաւ նա պատասխանի առնել Լակքար-
տեայ, և անցեալ գնայր հանդերձ զօրա-
կանօքն :

Բայց Լակեդեմոնացիք և զայլ նուագ
'ի թիկունս զԱթենացիսն կոչեալ ընդդէմ
Մեսսենացւոց և Իղոտացն՝ որ էին յԻթո�,
խիթացին 'ի խիզախ և 'ի խրոխտ կերպա-
բանէն Աթենացւոց, և յայլոց նիզակակ-
ցացն որոշեալ զնոսա արձակէին յետս՝
իբրու խազմարարս ոմանս : Անդանօր նոքա
'ի սրտմտութիւն բարկութեան մեկնեալք
'ի բաց, դարձան 'ի թշնամութիւն ոխերիմ
ընդդէմ ամենայն կուսակցացն Լակեդե-
մոնացւոց. և ապա բարուր դուշնաքեայ
կարկատեալ, առեալ վտարանդի առնէին
զԿիմոնն խեցեկոյտ վճռով ընդ ամ տասն.
քանզի և այնչափ է ժամանակ վտարան-
դութեանն այնորիկ :

Զայնու ժամանակաւ դարձ արարեալ
Լակեդեմոնացւոց 'ի զինուորութենէ ան-
տի փրկութեանն Դեղփեայ 'ի ձեռաց Փո-
կեացւոց, և բանակ հարեալ 'ի Տանագրա,
'ի մարտ պատերազմի խաղացին Աթենա-
ցիք ընդդէմ նոցա. եկեալ հասանէր յայն-
ժամ անդր և Կիմոնն վառեալ, և խմբե-

ցաւ նա յիւր ցեղն Ինէական, մոադիւր յօժարութեամբ մարտ դնել կռուել ընդ իւրոց քաղաքացեացն ընդդէմ Լակեդեմոնացւոց։ Յայնժամ աւագանին հինգ հարիւրեանն իրազգած եղեալ և խիթացեալ ևս՝ որչափ ինչ ընդդէմ Կիմոնի բողոք բարձեալ ասէին թշնամիք նորա, իբրու որ եկեալ հասեալ ի՛ցէ անդր աղմուկ շփոթից յուզել 'ի փաղանգին, և առնուլ ածել զԼակեդեմոնացիսն 'ի քաղաքն, ազգ առնէին զօրավարացն մի ժողովել զայրն։ Ապա մեկնեալ անտի Կիմոնի՝ աղերս արկանէր նախ Եւթիպպոսի Անափլիւատեայ, երկրորդ՝ և ամենայն նիզակակցաց իւրոց՝ որ կարծեալ կուսակիցքն էին Լակեդեմոնացւոցն, մարտ քաջութեամբ դնել ընդդէմ թշնամեաց, և այնպէս զայն խէթ մոաց զքաղաքացեացն քերել յանձանց։

Յայնժամ զօրականք թուով հարիւր՝ որոց աղերս զայս արկանէր Կիմոնն, առեալ 'ի նմանէ ողջ զսպառազինութիւն նորա՝ և արձանացուցեալ զայն 'ի մէջ խմբին իւրեանց, և առ հասարակ յոյժ քաջապէս նահատակեալք 'ի մարտին՝ դէտապատ անկան միանգամայն 'ի դաշտին, ըղձակալթս իւրեանց թողեալ զԱթենացիսն, և խիղճ ևս սաստիկ հարեալ 'ի նոսա վասն անիրաւ խեթին։ Ուստի և նոքա ոչ ինչ յերկարաձգեցան 'ի սրտմտութեան իւրեանց ընդդէմ Կիմոնի. կէս մի յուշ զառաջին երախտիսն բերեալք՝ որպէս հա-

ւանեալս էր, և կէս մի գարձեալ՝ 'ի հար-
կէ ժամանակին դրդեալք։ Քանզի 'ի պար-
տութիւն մատնեցան նոքա 'ի մեծի պատե-
րազմին Տանագրայ. և սպասեալք ևս 'ի
գալ գարնայնոյն բանակի զօրաց Պեղոպո-
նիսացւոց, յետս 'ի վտարանդութենէն կո-
չէին զԿիմոնն. և դառնայր նա յայնժամ,
և զսահման վճռոյն գրէր ինքնին Պերիկ-
ղէս։ Այնպէս իմն քաղաքականք հանգի-
սէին՝ որ այնր ժամանակին վէգք և պայ-
քարք, և սրտմտութիւն բարկութեանն
չափաւոր և դիւրամոքելի 'ի շահ օգտի հա-
սարակաց. և փառասիրութիւնն ինքնին՝
բուռն և սաստիկ քան զամենայն զկիրս՝
տեղի տայր 'ի դիւր հայրենեացն։ Ապա
անդէն 'ի դառնալ իւրում ելոյծ Կիմոնն
զպատերազմն, և հաշտ ընդ միմեանս առ-
նէր զքաղաքսն։

Իսկ յետ այնորիկ 'ի խաղաղութեան
անդ տեսեալ նա զիւրսն՝ զի ցանգ խլըր-
տեալք՝ ինդրէին յօրանալ 'ի զէնս. և զի
մի թերևս այլոց Հելլենացւոց նոքա դժոխ-
ըմբերելիք լինիցին և յածեալք ընդ կղզիսն
կամ ընդ Պեղոպոննիսոս բազմութեամբ
նաւաց՝ մարտ գրգռեսցեն ընտանեաց և
անդուստ նիզակակիցք բոլոր զԱթենայ
կալցեն, առեալ նա կազմէր հանգերձէր
եռաթիս երկերիւր՝ չու առնել խաղալ
մարտ պատերազմի տալ յԵգիպտոս և 'ի
Կիպրոս. ինդրէր յօժարեցուցանել զԱ-
թենացիս 'ի կռիւ ընդ բարբարոս ազգաց,
շահավաճառ լինել արդարութեամբ, բե-

րել կուտել յԵլլադա զընչաւէտութիւն զտնկակից զիւրեանց Թշնամեացն։

Ապա կազմ տուեալ ամենայնին, և զ-
բականին առհասարակ խմբեալ առ նա-
ւուքն, երազ տեսանէր Կիմոնն. Թուէր
նմա քածի ուրուն զայրագին հաչելընդ-
դէմ նորա. և 'ի հաչեն՝ ձայն ևս յօդաւորը
զմարդոյ արձակել, եթէ "Ե՛կ ե՛կ, սիրելի
և ինձ լեցիս և իմոց կորեանց,,։ Թէպէտ և
գժուարիմաց յոյժ էր թարգմանութիւն
տեսլեանն, անդանօր Ասիւփիղոս Պոսի-
դոնիսատէս իղձ քաջափորձ և Կիմոնի
մտերիմ՝ մահու ազդարար զերազն թարգ-
մանէր այսպէս. քանզի Թշնամի է՝ ասէ՝
շունն՝ որ ընդդէմ հաչէ, և սիրելի թըշ-
նամւոյն լինել չեք՝ բայց մահուամբ. իսկ
խառնաձայնութիւնդ յայտնապէս զՄարն
նշանակէ Թշնամի. քանզի Մարաց բանակ
խառն է 'ի Հելլենաց և 'ի բարբարոսաց։
Զայս տեսեալ Կիմոնի երազ, և զոչ զ-
հեալ Դիոնիսեայ, և ըղձին զսպանդն յ-
շեալ, անդ բազմախուռն մրջմանց շարք
զեռեալ գնային առնուին յարեանէ անտի
թանձրացելոյ, և տակաւ բերեալ առ Կի-
մոնն՝ ընուին առ բոյթն ոտիցն 5, և ժամ
մի հարուստ խմանայր և ոչ ոք զբանն։

Ապա 'ի վերջէ Կիմոնն ուշ եղեալ բա-
նին, 'ի նոյն և նուիրագործն մատուցեալ
ցուցանէր նմա զլեարդն անգլուխ։ Սակայն
և այնպէս ոչ ժամանեալ նորա տեղի տալ
'ի զինուորութենէ անտի, անկանէր յու-
ղի. և առեալ արձակէր վաթսուն 'ի նա-

ւաց Իւրոց ՅԵգիպտոս, և ինքն նաւեալ հանդերձ մնացեալովքն, և 'ի նաւամարտի հարկանէր զնաւահանդէսն արքունի՝ որ 'ի Փիւնիկեցւոց անտի և 'ի Կիլիսեցւոց. և հասեալ տիրանայր առհասարակ 'ի վերայ քաղաքացն շուրջանակի, և հնարիմաց խորհրդով դէտակն ունէր և 'ի վերայ քաղաքացն Եգիպտոսի. ոչ դուզնաքեայ ինչ իրս յածէր 'ի միտսն, քան թէ սպառսպուռ զտէրութիւն զարքային Պարսից քանդել տապալել։ Մանաւանդ զի և լուեալ իսկ էր զմեծապէս փառսն և զզօրութիւն զԹեմիստոկղեայ առ բարբարոսն, և զի ընդ թագաւորին՝ և նմա ինքնին հասանէր յառնել խաղալ 'ի զօրավարութիւն 'ի մարտ պատերազմի ընդդէմ Հելլենացւոց։ Եւ ասեն՝ եթէ Թեմիստոկղէս յուսահատ եղեալ 'ի գեղեցիկ Եղից պատերազմին, իբրու ոչինչ ստնանել ոչ բաղդին Կիմոնի և ոչ քաջութեանն, մահ անձին առթեաց։

Ապա Կիմոն 'ի վեր զխորհուրդս իւր առեալ վասն մեծամեծ մարտից պատերազմաց, անդանօր 'ի Կիպրոս զտեղի կալեալ նաւուքն, առաքէր 'ի մեհեան անդր Ամմոնի՝ խորհուրդ 'ի պատգամախօսէն հարցանել վասն գաղտնեաց. զի և բնաւ իսկ իմացաւ և ոչ զք զպատճառս առաքմանն։ Այլ և ոչ ինքնին դիքն գուշակեաց ինչ առ պատգամաւորսն. այլ անդէն 'ի մտանել նոցա հրաման տայր մեկնիլ. և ասէր՝ եթէ առ իւր հանգուցեալ կայ կի-

մոնն։ Զայն լուեալ նոցա, ելջեալ վաղվաղակի 'ի ծոնն և հասեալ 'ի բանակ նաւացն Հելլենացւոց՝ որ քերէր յայնժամ առ Եգիպտոսիս, լուր առին զմահուն Կիմոնի. և զաւուրսն հաշուեալ 'ի բանից անտի պատգամախօսին առ նոսա, ծանեան՝ զի առակաւ ակնարկեաց զմահն նորա՝ իբրու ընդ աստուածոց հանդչել նմա։

Եւ մեռաւ Կիմոնն՝ որպէս բազմագոյնք ասեն 'ի մատենագրացն՝ խօթացեալ հիւանդութեամբ 'ի պաշարման անդ Կիտեայ. և որպէս կէսք ասեն՝ վէրս առեալ 'ի մարտին ընդդէմ բարբարոսաց։ Եւ պատուիրեաց նա 'ի մահուն իւրում, չու վաղ վաղակի առնել յԱթէնս՝ 'ի ծածուկ ըզմահն ունելով. և Ճշդրտիւ պահեցին ըզպատուէրն՝ զի և մինչև 'ի Թշնամեաց ոք կամ 'ի նիզակակցացն իրազեկ բանին եղեալ, յանդորր հասեալ իսկ էր նաւահանդէսն. առաջնորդեալ՝ որպէս ասէ Փանեդեմոս՝ իբրու 'ի նմին իսկ 'ի Կիմոնէ վախճանելոյ՝ զաւուրս երեսուն յետ մահուն իւրոյ։

Իսկ յետ մահուանն Կիմոնի՝ ո՛չ ոք 'ի զօրավարացն Հելլենացւոց նահատակութեն երևելի ո՛չ գործեաց ընդդէմ բարբարոսացն. այլ ձգեալք բերեալք 'ի հռետորաց ռամկին, և գժտեալք ընդ միմեանս, և խաղաղարար և ո՛չ մի ոք գտեալ նոցա, 'ի մարտ ևս գրգռեցան ընդ միմեանս. ոյժ ետուն կողման Թագաւորին, և մեծապէս յոյժ խանդարեցին զզօրութիւն Ելլադայ։

Եւ Թէպէտ և յետ հարուստ ժամանակի 6, խաղաց դիմեաց Ագեսիլայոս յԱսիա, և անդ մարտ ծովամարտ գուշնաքեայ յարդարէր ընդ զօրավարաց արքային, այլ մինչ չև երևելի ինչ գործեալ և մեծ, կոչեցաւ յԵլլադա 'ի պատճառս ինչ ամբոխից և հերձուածոց, Թողեալ անդ 'ի քաղաքս Նիզակակցացն և բարեկամաց հարկահանս զՊարսից: Յորոց և ոչ սուրհանդակ ոք ԹղԹաբեր 'ի նոցանէ առ Կիմոնիի զօրավարուԹեամբն՝ ոչ ժառեաց իջանել. և ոչ հեծեալ ոք 'ի Պարսից երևեցաւ, այլ բացական կայր 'ի ծովէն առապարիսաք չորեքհարիւր:

Բայց նշխարք Կիմոնիի ածեալ բերան յԱտտիկէ, և վկայեն շիրիմքն՝ որ մինչև ցայսօր ժամանակի կոչին՝ Կիմոնէան: Այլ սակայն և Կիտացիք ինքնին 'ի պատուի ունին գերեզման մի զԿիմոնիի. քանզի որպէս 'Նաւսիկրատէս ասէ հռետորն, 'ի սովել և յերաշտանալ երկրին նոցա՝ հրաման լինէր նոցա առ 'ի դիցն՝ մի զանց զԿիմոնիիս առնել, այլ շուք և պատիւ ձօնել նմա՝ իբրև առաւելագունի ումեք: Այսպիսի ոք եկաց զօրավար այս Հելլենացի:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Պլուտարքոս Քէրոնէացի զկնի բազմահոլով ժամանակաց գեղեցիկ դարձ շընորհապարտ սրտի՝ ընծայէ Լուկուղղեայ գեղեցիկ ևս արձանագրութեամբ վարուց առնն, իբրու որ փրկիչ էղև իւրոց հայրենեաց։

2. Վրիպակ սպրդեալ է յօրինակագրաց 'ի բնագրին. քանզի և Պլուտարքոս ինքնին քաջիկ գիտէր զժամանակ զայն՝ իբրև ամաց ութ հարիւրոց։

3. Ճաշատուն հասարակաց ՅԱԹԷՆԱ՝ վասն բարեգործաց քաղաքին։

4. Քանզի Σεισμός. 'ի Յն. նշանակէ գետնաշարժ, սասանութիւն։

5. Քանզի ըստ Ա.թենացւոցն սովորութեան, բոկ ոտիւք կայր Կիմոնն 'ի զոհին։

6. Այս է՝ յետ ամաց յիսուն և հնգից։

ԼՈՒԿՈՒՂՂՈՍ

ԼՈՒԿՈՒՂՂՈՍԻ հաւն էր 'ի հիւսպատոսական կարգէ, և մայրենի պապն նորա՝ էր Մեռեղղոս մականուանեալն Կոմոդիկոս. իսկ հայր նորա ամբաստանեցաւ 'ի գողութեան. և Կեկիլիա մայր նորա վատահամբաւեցաւ իբրու ոչինչ պարկեշտակրօն: Իսկ ինքն Լուկուղղոս՝ մինչ տակաւին պատանեակ էր, մինչեւ զաւագութեան ինչ թեկն ածեալ և յիրս քաղաքին միջամուխ եղեալ, առաջին 'ի գործ նահատակեցաւ դատախազ լինել զՍերվիլիոսէ հաւահմայէ իբրու որ փեսասակար ի-ցէ քաղաքին, այն՝ որ դատախազ կացեալ իսկ էր հօրն իւրոյ: Եւ ապա զայս գործ նորա՝ հոյակապ համարեցան Հռոմայեցիք. և զայն դատ նորա իբրև քաջութիւն նահատակութեան զհամբաւի հարկանէն նոքա: Քանզի և Թուէր իսկ նոցա ոչինչ

անփառունակ գործ՝ դատախազ անպատրուակ կալ. և սիրէին ևս տեսանել զիւրեանց պատանին հեռամուտս 'ի հալածել զինեասակարս, իբրու բարակք ոմանք քաջք՝ զդազանս: Բայց 'ի դատին երկոքին ևս կողմանք 'ի պայքարս եկեալ դժընդակս յոյժ, զի և կիսոց վերս առնուլ յայնժամ, և կիսոց ևս 'ի մահ տարածել, 'ի վերջէ ուրեմն արձակեալ լինէր Սերվիլիոս:

Իսկ էր Լուկուղղոս և երկաքանչիւր ևս լեզուաց քաջավարժ. մինչև և Սիղղայի ինքնին զՅիշատակագիրս զիւրոց նահատակութեանցն նուիրել Լուկուղղոսի, իբրու որ յաջողաձեռն էր լաւագունի ընծայել կարգի և ոճոյ զպատմութիւնն զայն: Քանզի և չէր իսկ նորա բանն ճշգրիտ և ճարտար առ 'ի պէտս հարկին միայն՝ իբրու զայլոց ոմանց, որ զատեանն "Իբրու դոն ահագին՝ բախեալ յուզեսցէ զծով մեծ", բայց ապա արտաքոյ ատենին՝ "Սին և չոր առ անուսումնութեն անշնչացեալ կայ". այլ անդատին 'ի պատանի տիոցն վարժեցաւ նա իբրև 'ի վայելուչ զարդ անձին՝ 'ի գեղեցիկ դպրութիւնն, զոր Ազատականս կոչեն: Իսկ 'ի ծերութեանն առեալ ըզմիտան հանդարտեալ 'ի բազում մարտից՝ պարապեցոյց յիմաստասիրականին վարժս, վառեալ յառաքինութիւն տեսականին, և սանձեալ 'ի ժամուն զիղձ փառաց և զպատուոյն՝ յետ գժտութեանն ընդ Պոմպէի: Առ այսոքիւք՝ և յաղագս բանաստ-

բուԹեան Նորա պատմեն և զայս, ԵԹԷ պատանեակ տակաւին գոլով Գիմոգրաւէր իբրև 'ի խաղոյ՝ յանդիման Որոեսիոսի իրաւաբանի և Սիսեննայ պատմաբանի, իբրև բաւական յարձանագրել զմարտ պատերազմին Մարսիկեան 'ի քերԹեալ կամ ԹԷ 'ի ձառ, 'ի լեզու հելլենացի կամ 'ի հռոմայեցի, զնարդ և վիճակ հանեալ՝ պատահեացին իրքն։ Եւ Թուի եղանել վիճակին՝ 'ի ձառ հելլենացի. քանզի և կայ իսկ այսօր հելլենացի պատմուԹիւն Մարսիկեան մարտին։

Իսկ յաղագս անծուկ սիրոյն Նորա առ Մարկոս եղբայր իւր՝ բազում հաւատիս 'ի դէմս բերեալ նա, յաւէտ լեմն առաջնոյն այնմիկ յիշատակ առնեն Հռոմայեցիք. զի երէց քան զեղբայրն գոլով ոչինչ կամեցաւ միայնակ աւագուԹիւն յանձն առնուլ, այլ եկաց մնաց մինչև յաՃեալ հասակին Նորա. որով և 'ի սէր իւր այնչափ յանկուցանէր զԺողովուրդն, զի և ամբարապետ՝ ԹԷպէտ և բացական՝ կարգեալ ընտրեցին զնա 'ի միասին ընդ եղբօրն։

Բայց մինչդեռ տակաւին պատանի էր, քաջուԹիւն մեծապէս և հանՃար եցոյց նա 'ի Մարսիկեան մարտին, և Սիւղլաս 'ի վեր քան զամենայն յանդրդուէլի հաստատուԹենէ անտի Նորա և 'ի հեզուԹենէն ածեալ ձգեցաւ գլխովին յինքն գրաւականել զնա. և ցանգ գործի 'ի ձեռն առ զնա 'ի մեծամեծս, ըստ որում և 'ի հատանէլն զդրամ. քանզի և 'ի Մեհրդա-

տեան մարմին դրամք բազմագոյն մասամբ հատան 'ի ձեռն Լուկուղղեայ 'ի Պեղոպոննիսոս, և յանուն նորա կոչեցան Լուկուղղեանք. և հարուստ ժամանակ 'ի մարտի անդ հանապազ առձեռն դտան 'ի պէտս զօրականին։ Եւ մինչդեռ ՅԱԹԷՆԱ էր Սիւղլաս, Թէպէտ և 'ի ցամաքի յաղթական Թշնամեաց, այլ 'ի ծովու խոնարհագոյն քան զնոսա՝ որ և զանցս կուրացուցին զպաշարող նորա, առեալ արձակէր զԼուկուղղոս յԵգիպտոս և 'ի Լիբիա՝ ածել նմա անտի նաւս։ Եւ էր յայնժամ խոր ձմերայնի. 'ի վերայ այսր յուղի անկանէր Լուկուղղոս երիւք նաւուք հեղլեենացի և նոյնչափ նաւակօք Հռոդացւոց, 'ի կշիռ զանձն եդեալ 'ի ծովն յահագին և 'ի գումարտակ մեծ նաւաց Թշնամեացն, որ տիրացեալ առհասարակ ծովուն՝ արձակ արձակ ասպատակ ստուէին։ Սակայն և հասեալ կալաւ նա հեշտին զԿրետէ, և անդանօր առհասարակ զբնակիչս կղզւոյն յինքն յանկուցանէր։

Անտի անց առ Կիւրենացիս, և 'ի հանապազօրեայ բռնաւորութեանց և 'ի մարտիցն դտեալ զնոսա 'ի շփոթս ամբոխից, կայր և հաստատեր զնոսա և գեղեցիկ սահմանաց ընծայէր զքաղաքն նոցա. 'ի յուշ նոցա ածեալ զպատասխանին զայն զՊղատոնի, որով անշուշտ նա իբրև մարդարէ դտաւ առ նոսա, յորժամ յաղաչէլ նոցա զնա գրել վասն նոցա օրէնս, և սահման վարչութեան չափաւոր և զգօն՝ տալ ժո-

ղովրդեանն, եւ պատասխանի. Դժնդակ յոյժ է օրինադիր լինել վասն Կիւրենացւոց, որ այնչափ ինն բարդաւաճեալ էին առ 'ի բախտէն: Քանզի և չիք ինչ յէից առաւել ապառում քան զմարդ բարեբաստիկ, և չիք դարձեալ առաւել ձեռնընդել քան զայր վատախտար: Ոյր աղաղաւ և Կիւրենացիք յայնժամ մեծապէս հեղուլթեամբ հպատակ կացին օրինացն Լուկուղղեայ:

Ապա անուն նաւեալ յԵգիպտոս, կորուսանէր բազում 'ի նաւաց իւրոց յասպատակուլթենէ անտի հինիցն. այլ ինքն ողջանդամ զերծեալ, հիւրընկալուլթիւն մեծապէս գտանէր յԱղէքսանդրիա, ընդառաջ նմա եկեալ ողջոյն հանդիսի նաւացն 'ի կարգ գեղեցիկ և հոյակապ զարդարեալ զարդու, իբրու արդարև ընդառաջ արքայի որ յարշաւանաց ուստէք դարձեալ լցէ: Եւ յայնժամ Պտղոմէոս կրտսեր բաց յայլոց գեղեցիկ հիւրամեծարուլթեանցն, 'ի նեղքս մատուցանէր նմա և տուն բնակուլթեան և սեղան յիւր սեպհական արքունիսն. որում և ոչ ոք երբէք վիճակեցաւ յառաջագոյն յեկաց անտի զօրավարացն. առ այսոքիւք՝ և ռոճիկ և թոշակ կարգէր նմա, ոչ որպէս այլոց, այլ քառապատիկ առաւելուլթեամբ: Իսկ Լուկուղղոս առեալ միայն 'ի կարևորացն, ընծայիցն երեսս ինչ չառնէր. թէպէտ և պարգևք 'ի նեղքս մատուցան նմա գնոց ուլթսուն քանքարաց: Եւ պատմեն՝ եթէ

զայն աւուրան ոչ 'ի Մեմֆիս եւ Լուկուլ-
ղոս, և ոչ 'ի տեսանել ջրաբաւ նա ինչ մի
'ի գերահռչակ անտի սքանչելեացն Եգիպ-
տոսի. և ասէր՝ եթէ գրգասէր և պարա-
պորդ մարդոյ է գործդ, և ոչ իւր. որ զզ-
րաւալար իւր զմեծ թողեալ ելցէ 'ի բացեայ
բանակեալ մօտ 'ի պատնէշս թշնամեաց:
Բայց Պոլոմէոս յայնժամ յանձն չառեալ
Նիզակակից Սիւլլայի լինել՝ զանգիտեալ 'ի
մարտից պատերազմաց, տայր Լուկուլ-
լեայ նաւս առաջնորդականս մինչև 'ի Կի-
պրոս. և յուղի անկանել նորա՝ գիրկս
նմա ածեալ մտերիմս և շքով, զմրուխտ
պատուական ոսկեկապիճ պարգևէր նմա.
զառաջինն յանձն չառնոյր Լուկուլլոս.
իսկ իբրև թագաւորն զքանդակ 'ի նմա
զնուրոյ պատկերին ցուցանէր նմա, ոչ ժոե-
ցաւ Լուկուլլոս տեղն տալ, զի մի 'ի կար-
ծիս ինչ թշնամութեան մեկնեալ 'ի նմա-
նէ՝ դարանք ինչ նմա գործեսցին 'ի ծովուն:

Բայց 'ի դարձի անդ իւրում ժողովեալ
Լուկուլլեայ նաւս բազումս յամենայն ծո-
վեզերեայ քաղաքացն, ընդ որս անցանէր՝
ահ արկեալ նիզակակցաց հինիցն, իբրև
եկն եհաս 'ի Կիպրոս, անդանօր լուր առ-
նոյր զի թշնամիք դարանամուտ նաւուք 'ի
հրուանդանն սպասեն նմա. նա անդէն 'ի
ծովեզր միանգամայն զամենայն զնաւան
.քարշեալ, գրէր տայր առ քաղաքս քա-
ղաքս վասն պաշարոց ձմերոցին, իբրու որ
անդանօր ձմերել նմա՝ մինչև 'ի գալ գար-
նայնոյն: Այլ ապա իբրև հողմն շնչեաց

նմա յաջողակ, յանկարծակի 'ի ծով խա-
ղացուցեալ զդումարտակ նաւացն՝ անկա-
նէր յուղի. զքերեկ նաւէր խոնարհագոյնս
և հանգրիձեալ առագաստիւք, և զցայգ
ամբառնայր և պարզէր. և այնպէս ողջան-
դամ եկեալ հասանէր 'ի Հռոդոս։ Անդա-
նօր և նաւս այլ տուեալ նմա 'ի բնակչաց
կղզւոյն, ածէր հաւանեցուցանէր զկովա-
ցիս և զկնիդացիս ոչ ևս կալ 'ի միամտու-
թեան ընդ արքային, և 'ի մարտ խմբել
ընդ Հռոմայեցւոց ընդդէմ Սամոսացւոց։
Եւ ապա 'ի Քիոյ վանէր հալածէր միայ-
նակ՝ որ անդ զպահապան գունդ զար-
քային, և յանդորր հանէր զկողոփոնիա-
ցիս, ձերբակալ արարեալ զԵպիգոնոս նո-
ցուն բռնաւոր։

Զայնու ժամանակաւ Միհրդատ 'ի բաց
լքեալ զՊերգամոն, տեղի էտ 'ի Պիտանէ-
ուր և 'ի նեղ արկեալ և պաշարեալ 'ի
Փիմբրիասայ ընդ ցամաքակողմն, դէտակն
կալեալ նա 'ի ծովակոյսն՝ առաքէր կո-
չէր առ ինքն 'ի կողմանց կողմանց և կու-
տէր խմբէր 'ի մի առհասարակ զնաւսն.
ոչինչ խշխէր 'ի վէգ գալ մարտիւ ընդ Փիմ-
բրիասայ քաջի առն և յաղթականի։ Իրա-
զեկ այնմ եղեալ Փիմբրիաս՝ որ նաւաց
զօրութեամբ խոնարհագոյն էր քան զնա,
հրեշտակս ձեռամբ տայր առ Լուկուղղոս,
աղաչէր գալ հասանել իւրովք նաւուքն,
և գործակից մարտակից՝ ձերբակալ զար-
քայն առնել զահաբեկն և զոխերիմն. և
մի զմրցանակ զայն զմեծաց մարտից և զբաղ-

մաց քրտանց 'ի ձեռաց հանել, յորժամ դէպ ժամանակն ինքնին տայ հեշտին որ-սալ զնա՝ 'ի հաղբս շաղեալ նորա. զոր և 'ի գլուխս տարեալ՝ ոչ ոք այնպէս գերա-գունին հանդիպեսցի փառաց՝ իբրու որ զփախուստ որսոյն արգելեալ՝ ըմբռնեսցէ զնա 'ի ճողոպրել նորա. ուստի և յերկո-ցուն կողմանց մին վանեալ զնա 'ի ցամա-քէն, և միւսն նեղեալ զնա 'ի ծովէն, եր-կոցուն նոցա ընծայեսցին փառք նահա-տակութեանն. առ որով և ոչինչ գրես-ցեն այնուհետև Հռոմայեցիք զՍիւղղայի նահատակութիւնն, որ զհամբաւի հարան յՈրքոմենոն և 'ի Քերոնիա։

Արդ պատգամաւորութիւն այս Փիմ-բրիասայ առ Լուկուղղոս ոչ դժպատեհ ինչ էր և ոչ դժուարին. քանզի և յայտնի՝ եթէ Լուկուղղոս ինքնին՝ որ չէր ինչ բա-ցական՝ հաւանեալ բանին և շուրջանակի անդր զնաւսն ածեալ՝ փակեալ էր զնաւա-հանգիստն, անշուշտ մարտին վճարեալ՝ և Հռոմայեցւոցն զերծեալ իսկ էր յամ-բաւ աղէտից։ Այլ կամ զի քան զամե-նայն շահ առանձին և զհասարակաց՝ նա-խամեծար ընտրեաց նա զհրամանակատար լինել Սիւղղայի՝ յորմէ պատուիրակ առա-քեալն էր. կամ զի յատելութիւն բերաւ նա ընդ Փիմբրիասայ ժանտին, որ վայրիկ մի յառաջ յինքն տարեալ զիշխանու-թիւնն՝ 'ի մահ վարեաց զայրն մեծ զզօրա-վար և զբարեկամ նորա. և կամ զի կամաց աստուածայնոյ ինչ Բախտն ներեալ յայն

ժամ Միհրդատայ և յայլ ժամանակ պա-
հեալ զոխերիմն զայն, յանձն չէառ 'ի
ժամուն Լուկուղղոս հաւանել բանից՝ն
Փիմբրիատայ. և այնպէս պարապ գտեալ
նաւագնաց Ճողապրէր Միհրդատ՝ ծաղր
առնելով զատուար բանական՝ն Փիմբրիա-
սայ։

Յետ այսորիկ Լուկուղղոս եհար խոր-
տակեաց զնաւս արքային նախ 'ի Լէքատոս՝
վայր Տրովադայ՝ ուր պատահեցին նոքա
միմեանց. ապա և 'ի Տենեդոս. ուրանօր
լուր առեալ՝ զի Նէոպտղոմէոս զտեղի ա-
ռեալ կայ մեծապէս կազմութեամբ, նա-
հատակեցաւ ինքն ընդդէմ նորա՝ ամբար-
ձեալ 'ի հնգաթի մի հռոդացի, որ ղեկա-
վար Դեմագորաս՝ այր բարեկամ Հռո-
մայեցւոց և քաջահմուտ նաւամարտի։
Անդուստ և Նէոպտղոմէոս դիմեալ ընդ-
դէմ Լուկուղղեայ ամենայն զօրութեամբ,
հրաման տայր ղեկավարին յառաջ վարել
ոգորել բախել զնաւ Լուկուղղեայ. ան-
դանօր զանգիտեալ Դեմագորաս 'ի թա-
փոյ յաղթահարուստ նաւուն արքունի և
'ի պղնձավառ քաջամուր ցուկէն, ոչ իշ-
խեաց բախել հարկանել ընդ առաջակող-
մանն, և զրջան արագապէս տուեալ նա-
ւուն իւրոյ՝ խնդրէր 'ի խելն առնուլ ըզ-
թափն։ Ապա ընդհարեալ նաւուն, 'ի
փոքրոգի բախմանէն ճեղաքեցաւ և ոչինչ,
քանզի հարան նորա կողմանք ջրասոյզք։
Յայնժամ և այլք 'ի նաւացն նորա յա-
ռաջ վարեալ, հրաման տայր Լուկուղղոս

դարձուցանել զառաջակողմն ընդդէմ թըշ-
նամեաց. և նահատակութիւնս յայնժամ
տարեալ մեծամեծս՝ 'ի փախուստ դար-
ձուցանէր զնոսա, և հարուստ միջոցաւ
զհետ մատեալ վանէր զնեղոպոդոմէոս։

Անտի խաղաց գնաց, և խմբեալ ընդ
Սիւղղայի յանցանել նորա 'ի Քէրրոնի-
սոն, յանդորր հանէր զանցս նորա և նը-
պաստ լինէր 'ի չու զօրականին։ Ապա դա-
շինք կռեալ խաղաղութեան, անցեալ նա-
ւէր Միհրդատ 'ի ծով Եւքսինեան, և
Սիւղղաս տուգանաց դատակնիք 'ի վերայ
ածէր Ասիոյ քանքարաց երկուց բիւրուց։
Եւ քանզի Լուկուղղէայ ինքնին յանձն
եղև հանել զհարկն զայն և դրամ ևս հա-
տանել, թուէր իմն քաղաքացն այնոցիկ՝
ոգի առնուլ յանհամբոյր խստութենէն
Սիւղղայի. զի յանձն եղև գործն այնպի-
սում առն՝ որ ոչ անզօշաքաղ և արդա-
րակորով միայն էր, այլ և հեշտ և բաղձա-
լի՝ որչափ ինչ մարթէր՝ 'ի դժոխըմբերելի
պաշտամանն։

Բայց յայնժամ վտարանչեալ 'ի նմա-
նէ Միտիւլենացւոց, ըղձայր նա բարւոյն
նոցա՝ դոյզն պատուհաս յանձն առնուլ
զյանցաւորութեան իւրեանց 'ի կուսակ-
ցութեանն ընդ Մարիոսի. այլ նոցա պըն-
դեալ 'ի չորութեանն, նա խաղաց ընդ-
դէմ. և մարտիւ պարտեալ զնոսա, առ
փակեաց զնոսա 'ի նեղքս 'ի պատուարան.
և շուրջ պաշարումն զնոքօք ածեալ, 'ի լոյս
տունջեան ակն յայտնի եղեալ չու առնէր

'ի վայրացն՝ դէպ ուղիղ նաւեալ յԵղէա. բայց ապա 'ի մուԹ գիշերոյն զանխուլ յեռս դարձեալ և դարանամուտ առ քաղաքաւն եղեալ, անդ անշշունչ դարանեալ նստէր։ Իսկ Միսիւլինացիք անկարգ ամբոխիւ յանդգնաբար 'ի դուրս ելեալ, կարծեալք զառ և զապուր ժողովել զբանակին Թշնամեաց՝ զոր լքին, նա յեղակարծումն 'ի վերայ անկեալ նոցա, սասաստիկ որեար ձերբակալ առնէր, և հարկանէր սատակէր ոգիս հինգ հարիւր՝ որ զդէմ դարձան. և գերի վարէր 'ի նոցանէ ոգիս վեց հազար և աւար բազում։

Բայց Լուկուղղոս 'ի կիրս անդ ամբաւ աղէտիցն Իտալիոյ առ 'ի Սիւղղայէ և 'ի Մարիոսէ՝ հալորդեցաւ և ոչինչ. քանզի պատաղեալ գոյր նա յայնժամ՝ յաստուածայնոյ խին գոգցես բախտէ՝ 'ի գործս նահատակութեանն Ակոյ։ Սակայն և ոչ խոնարհագոյն քան զայլսն 'ի բարեկամաց իւրոց յարգեաց զնա Սիւղղաս. նա և առ մոերմութեանն՝ նմա առեալ նուիրեաց՝ որպէս ասացաք՝ զիւր Յիշատակագիրսն. առ այս՝ և 'ի մեռանել իւրում՝ զնա ցուցանէր գայեակ խնամակալ իւրում զաւակին՝ յեռս տարեալ զՊոմպէոս. և Թուի Թէ այս եղեն առաջին պատճառք նախանձաւոր գժտութեան նոցա ընդ միմեանս. քանզի և երկոքին իսկ պատանիք առոյգք էին վառեալք 'ի սէր փառաց։

Իսկ վայր մի յետ մահուն Սիւղղայի եկաց նա հիւպատոս 'ի միասին ընդ Մար-

կոսի Կոստասայ 'ի Հարիւրորդի Եօթանասներորդի վեցերորդի Ողոմպիադին։ Եւ յայնժամ 'ի բազմաց ոմանց գրդռեալ միւսանգամ մարտ Միհրդատեան, ասէր Մարկոս զայն մարտ պատերազմին ոչ վճարեալ ինչ, քան եթէ ընդմիջեալ։ Ոյր աղագաւ և վիճակ հանեալ գաւառացն, իբրև Գաղատիա որ յայսկոյս Ալպեանց՝ վիճակէր Լուկուղղեայ, 'ի խո՛ր խոցեցաւ այրն՝ իբրու ոչինչ պատճառս ունել նմա 'ի գաւառին յայնմիկ զմեծաց մրցանաց. բայց և մեծապէս խէթ սրտի նորա էր մեծ համբաւ քաջութեանն Պոմպէի յԻբերիա. ուստի և 'ի վճարել անդանօր մարտին, նմին իսկ Պոմպէի քան այլոց ոմանց՝ ըստ հասարակաց ակնկալութեանն հասանէր կարգել 'ի զօրավարութիւն ընդդէմ Միհրդատայ։ Ուստի և յառաքել Պոմպէի 'ի խընդիր դրամոյ 'ի Հռոմ, և 'ի գրել՝ եթէ 'ի յաջողելն, լքեալ զԻբերիա և զՍերտորիոս՝ ածցէ զզօրն յԻտալիա, մտադիւրագոյնս ձեռնտու լինէր Լուկուղղոս առաքել նմա զդրամն, զի մի՝ նա պատճառեալ դարձ 'ի Հռոմ արասցէ 'ի հիւպատոսութեան իւրում. դիտելով քաջ զի այնչափ զօրու նա զամենայնն այնուհետև ըստ կամացն տարցի և բերցէ 'ի քաղաքին. ուր զի և ինքնին Կեթեգոս, այն որ բանիւք և արդեամբք յամենայնի ըստ քմաց վարեալ խուժանին, տիրացեալ լիմն էր յայնժամ 'ի վերայ քաղաքին, և թշնամութեամբ էր ընդ Լուկուղղոսի. քանզի ատեայր զվատ-

թարութեան կրօնս նորա, զլցեալն պաղ-
շոտութեամբ և խեռութեամբ և յամե-
նայն ազգ չարութեան. ուստի և մարտ
յայտնի յարդարեալ էր ընդդէմ նորա։
Բայց ընդ միւսոյ հռետորի խուժանին՝
այն էր Լեւկիոս Կովինտոս, որ ընդդէմ
դառնայր սահմանաց կարգացն Սիւղլայի և
գուն գործէր վերս 'ի վայր առնել զամե-
նայնն, բազում խորհուրդ 'ի նեղքս բե-
րեալ գեղեցիկ խրատուք առանձինն, և
շատ ևս յորդորեալ 'ի հրապարակի, շրջէր
զայրն 'ի խորհրդոցն և խոնարհ առնէր
զամբարտաւանութիւն նորա. ջան 'ի վե-
րայ եդեալ իբրև Ճշդիլիա քաղաքագէտ և
փրկաւէտ հնարիմացութեամբ գուն գոր-
ծէր աւագել զսկիպիոն զդժուարին զախտին
զայնորիկ։

Զայնու ժամանակաւ լուր հասեալ մա-
հուն Հոկտաւիոսի՝ որ կուսակալն էր Կի-
լիկիոյ, բազումք ցանկացեալք 'ի ձեռս բե-
րել զայն գաւառ, ապաս հարեալ պաշ-
տէին զԿեթեգոս, իբրու որ առ մեծի տէ-
րութեանն ձեռնհաս էր կամագիւտ զնոսն
դրեալսն կացուցանել։ Իսկ Լուկուղղոս
ոչ զի առ մեծ ինչ գրեալ զԿիլիկիա ա-
ռանձինն, այլ զմոտաւ ածեալ՝ զի եթէ
զկուսակալութիւնն առցէ ինքն զԿիլիկիոյ՝
որում մօտ է Կապադովկիա, ոչ զայլ քան
թէ զինքն՝ կարգեսցեն 'ի մարտն Միհրդա-
տեան, գուն գործեաց և ինքն ոգւով չափ
վասն անձինն. որպէս զի և ընդդէմ բու-
սոյ բարուցն գործ մի գործել ոչինչ գո-

վանի և վայելուչ, սակայն և պիտանի 'ի հասանելիս ինդրոյն։

Էր 'ի ժամանակին կին ոմն անուն Պրեկկիա՝ 'ի գեղ գիմացն և 'ի խեղդս շրթանց համբաւեալ 'ի քաղաքին, իսկ այլով մասամբ ոչինչ լաւագոյն քան զբոզ անպատկառ. սակայն գործի 'ի ձեռս առեալ նա զարս կենակիցս իւր 'ի շահ օգտի սիրելեացն, նիզակակից նոցայն լինել ջանից քաղաքականութեանն, բայց յայլոց շնորհացն համբաւեցաւ և իբրև կին ըղձակաթ սիրողացն, և յաջողաձեռն, և այսպէս ուրեմն զօրացաւ մեծապէս։ Եւ ապա այս կին յինքն յանկուցեալ զԿեթեգոս, մինչև և ոչ հանգուրժել նմա 'ի բացեայ 'ի կնոջէն կալ. և որ ինքն 'ի ծայրն արդէն հասեալ էր փառաց և քաղաքն ողջոյն կախեալ իսկ էր զնմանէ, յայնժամ 'ի կին անդր միայն գրաւեցաւ ողջոյն և տէրութիւն քաղաքին. զի և գործէր և ոչինչ 'ի քաղաքին առանց Կեթեգոսի, և գործէր ոչինչ Կեթեգոս առանց հրամանին Պրեկկիայ։

Ապա շնորհս առաջի կնոջն հնարիմացութեամբ գտեալ Լուկուղղոս ընծայաբերութեամբք և շողոմութեամբք, և յայնժամ էր և զկինն տեսանել խնամոտ 'ի զօրավիգն Լուկուղղեայ սպասարկուի, (վարձ մեծապէս կնոջն փքացելոյ և պերճացելոյ). ուստի և Կեթեգոս արագ արագ բարեբան և նպաստ Լուկուղղեայ հանգիստնայր 'ի բանն Կիլիկիոյ։ Զոր և 'ի ձեռս բերեալ Լուկուղղոս, այնուհետև ոչ օգ-

նականութեան ինչ Պրեկիայ պէտք էղեն նմա և ոչ Կեթեգոսին. այլ յայնժամ առհասարակ միաբան հաւանութեամբ 'ի ձեռս էառուն նմա զզօրավարութիւն մարտին Միհրդատայ, իբրու ոչ ումեք այլ քաջանալ յայնմ բայց 'ի նմանէ. զի յայնժամ Պոմպէոս տակաւին պարապէր ընդդէմ Սերտորիոսի. և Մեռեղլոս ինքնին առ ծերութեանն ոչ ևս յանձն առնոյր յայնպիսեաց անտի. և սոցա երկոցուն միայն էր 'ի ժամանակին՝ նախանձաւոր ընդ Լուկուղղեայ յառնել 'ի բանին յայնմիկ: Բայց և Կոտտաս ինչանակից նորա ինդրուածովք 'ի ծերակուտէն 'ի ձեռս բերէր արշաւել նաւահանգիստս 'ի պահպանութիւն Պրոպոնտեայ և 'ի պաշտպանութիւն Բիւթինիոյ:

Ապրդ Լուկուղղոս առեալ ընդ իւր Լէգէոն մի, չու արար անց յԱսիա. անդ ժողովէր առ ինքն և զայլ ևս 'ի զօրականէն՝ որ 'ի բազմաց հետէ անդ վատթարեալ յագահութեանն կրից և 'ի գրգանաց, և 'ի նոսա զօրականք որ անուանեալ կոչէին Փիմբրեանք, ոչինչ սովորեալք 'ի հնազանդութիւն զօրավարի՝ վայրենիք ոմանք էին և սանձակոտորք: Քանզի սոքա էին որ 'ի միասին ընդ Փիմբրիասայ սպանին զՓղակկոս հիւպատոս և զզօրավար իւրեանց. և ապա զՓիմբրիաս ինքնին մատնեցին 'ի ձեռս Սիւղղայի. և էին նոքա ժողովք արանց ստահակաց և անօրինաց. սակայն և էին մարտիկք և համբերատարք և քաջափորձք

'ի պատերազմի։ Յայսր ամենայնի վերայ գիտաց իսկ քաջ Լուկուղղոս արագ կոծել զվայրագութիւն նոցա, և կրթել հրահանգել և զայլսն. և ապա յայնժամ առաջին՝ որպէս ինձ թուի՝ զփորձ առին նոքա զՃշդրիտ իշխանի և զօրավարի՝ որք յառաջն սովորեալք էին 'ի շնթել և ըստ քմացն զինուորել։

Իսկ յայնժամ թշնամեացն իրք օրինակ զայս էին։ Միհրդատ՝ ըստ որում բնաւորեցան լինել շատք 'ի սոփեստից, յանձնապաստան գլխովին էր և փքուռոյց, յորժամ զառաջինն ամբարձաւ նա ընդդէմ Հռոմայեցւոց կացեալ 'ի գլուխս զօրու, որ 'ի վերին երեսս շքեղ և ճոխապանծ, այլ 'ի ներքոյ վատեալ։ Այլ ապա հարեալ անարգաբար և հրահանգեալ ևս, իբրև երկրորդ անգամ 'ի մարտն մխէր, խմբեաց զօրականս յայլ ինն հանդերձանս յաղթ և հարուստ։ Քանզի ոչ այլ խռնեաց յիւրում բանակին խուժան խառնաղանջ, և ոչ դարձեալ աղաղակ ձայնից սպառնալեաց այլալեզու խժդժից, և ոչ կահս կարասեաց և զէնս ոսկեկուռս և ականակապս՝ աւար բազմահարուստ իւրեանց յաղթականացն, և զօրութիւն և ոչ մի՝ ունողացն զնոսա։ Այլ սուսերս կազմեաց նա հանգունատիպ Հռոմայեցւոցն, և վահանս ամուրս. և խմբեաց այրուձի՝ քաջահրահանգ քան եթէ պճնազարդեալս. առ այսոքիւք՝ և հետևակազօր երկոտասան բիւրուց կարգելոց ճակատելոց ըստ փա-

զանգին Հռոմայեցւոց. և այրուձի դարձեալ՝ բիւր մի և վեց հազար, Թող զքառաձիս գերանդազէնս՝ Թուով հարիւր։ Հանդերձեաց և նաւս, և 'ի նոսա ոչ վրանք ոսկեզարդք, և ո՛չ բաղանիք վասն հարձից, և ոչ կանանոցք դրդալեցք. այլ առ հասարակ լցեալք 'ի զէնս և 'ի կոյտս նետից և վիքնաց և դահեկանաց։

Հասպա ջու արար խաղաց այնպէս 'ի ԲիւԹինիա, ուր և անդրէն ժողովէին զնա մոագիւրագոյնս ժողովուրդք՝ ո՛չ նոքա միայն, այլ և ողջոյն Ասիա. քանզի և տագնապեալ իսկ էին նոքա յառաջին աղէտսն՝ կիրս գԺոխրմբերելիս կրելով 'ի վաշխառուաց և 'ի մաքսաւորաց Հռոմայեցւոց. զորս և ապա ինքնին Լուկուղղոս վանեալ հալածեաց իբրու արդարև Արպիւեայս ոմանս հրէշից՝ որ յափշտակեալ կորզէին զկերակուրս նոցա. այլ 'ի ժամուն հնարէր նա 'ի չափու պահել զնոսա գեղեցիկ խրատու, և հանդարտէր ամոքէր զԺողովուրդսն մի ինչ մոաբերել յապստամբութիւնս, զի և չէր և ո՛չ մի ոք յայնժամ՝ զի այսպէս ասասցուք՝ կացեալ յանդորրու։

Իսկ յորժամ այսպէս գեգերէր Լուկուղղոս, անդուստ Կոտտաս զայն ժամ բարեպատեհ վասն իւր համարեալ՝ պատրաստէր 'ի մարտ պատերազմի ընդդէմ Միհրդատայ. և լուր առեալ 'ի բազմաց՝ եԹէ Լուկուղղոս ինքնին առ դուրս կայ՝ հասեալ զորու 'ի Փռիւգիա, նա այնպէս կարծեալ՝ ունել զյաղԹանակն 'ի բռին,

զի մի թերևս Լուկուղղոս բաժանորդ կաց-
ցէ, աճապարեաց 'ի կռիւն. այլ հարեալ
վանեալ միանգամայն 'ի ծովու և 'ի ցամա-
քի, կորոյս նաև վաթսուն հանգերձ նա-
ւաստեօքն, և չորս ևս հազարս հետևակաց.
և ապա վերջոտնեալ 'ի Քալկեդոն և պա-
շարումն առեալ՝ դէտ ակն կալեալ մնայր
Լուկուղղոսի և առ 'ի նմանէ օգնակա-
նութեանն։

Ապրդ էին էին՝ որ դրդէին յայնժամ
զԼուկուղղոս՝ անփոյթ զԿոստասաւ ան-
ցանել յառաջ, և զարքայութիւնն Միհր-
դատայ ամայի հեշտեաւ զբռամբ ունել.
և առաւել ևս՝ զօրականն՝ լի ցասմամբ ընդ-
դէմ Կոստասայ, ոչ միայն զի ճախողակի
զօրավարութեամբն պատճառք եկաց նա
աղէտից անձինն և զօրականին, այլ զի և
խոչ ընդ ոսն տեսանէին զնա. զի և էր իսկ
նոցա արդեօք անպատերազմ տանել զյաղ-
թութիւնն։ Բայց Լուկուղղոս հրապարա-
կախօս եղեալ ասէր, եթէ զմի ոք միայն
Հռոմայեցի այր՝ առաւել կամի ապրեցու-
ցանել 'ի ձեռաց թշնամեացն, քան եթէ
սրել ամենայն դոյլց նոցա։ Եւ լուեալ՝
զի Արքեղայոս այն որ յառաջն զօրավար
Միհրդատայ 'ի Բիթովնիա, և ապա վտա-
րանչեալ և զինուորեալ առ Հռոմայեցիս,
հաստատութեամբ սնդէր եթէ յերևեալ
Լուկուղղոսի 'ի Պոնտոս՝ անշուշտ սրրաս-
ցի ամենայնին, էտ նմա պատասխանի Լու-
կուղղոս և ասէ. Զէ ինչ ինքն անարի
վատասիրտ քան զորսորդս, զի յառաջըզ-

գաղանօքն անցեալ՝ գիմեացէ 'ի նկուղս նո-
ցա Թափուրս։ Զայս ասաց՝ և յառաջա-
գէմ խաղաց ընդդէմ Միհրդատայ երե-
սուն հազար հեռեակօք, և երկու հազար
և հինգ հարիւր այրուձիով։

Անդ զտեղի առեալ 'ի հանդիպոյ Թըշ-
նամւոյն, յապուշ հարեալ ընդ ամբաւու-
Թիւն խուժանին, խնդրէր ժամավաճառ
'ի վեգ գաշ. այլ իբրև անդուստ Մարիոս
առաքեալն 'ի Սերտորիոսէ յԻբերիոյ 'ի
Թիկունս Միհրդատայ, ընդ առաջ խաղա-
ցեալ ասպարէզ կարդայր, կարգեցաւ կաղ-
մեցաւ և ինքն իբրև 'ի կռիւ մարտի։ Այն
ինչ երկոքին կողմանքն գիմեալ խաղային
ընդդէմ միմեանց, անդանօր ոչ մեծ ինչ
փոփոխեալ օդոցն՝ յանկարծակի պատա-
ռեալ ցեղոյր 'ի վերուստ, և զանգուած ա-
հագին բոցատիպ հոսէր ընդ մէջ երկուց
բանակացն. և էր նա հանդունատիպ 'ի ձև
տակառի, և 'ի գոյն հրաշէկ արծաթոյ։ 'Ի
հրէշեից անտի զահի հարեալ երկոքին կող-
մանքն՝ վերջոտնեալք տեղի տային։ Եւ ա-
սէին՝ հրէշեցն այն երևեալ 'ի Փռիւգիա մօտ
'ի վայրն անուանեալ Ռորիւա։

Բայց յայնժամ Լուկուղղոս զմտաւ ա-
ծեալ՝ զի 'ի մարդկային հնարից ոչ ամբար
պաշարոյ և ոչ դարձեալ հարստութիւն
ամբաւ, բաւական ոչ է 'ի դարման այն-
չափ բիւրաւորաց խուժանին Միհրդատայ՝
եթէ հարուստ ժամանակ բանակ հարեալ
նստցին նոքա, հրաման տայր անդէն զա-
ռաջեաւ ածել զմի ոք 'ի գերեաց, և հարչ

ցանէր՝ քանիսն իցեն վրանակիցք հացակիցք նորա, և պաշար որչափ ինչ թողեալ իցէ նորա 'ի վրանին. Լուեալ զպատասխանին, և զնա անդէն կացուցեալ, տայր ածել և զերկրորդ այլ, և զերրորդ ևս, և առհասարակ զնոսա օրինակ զայն հարցանէր. ապա 'ի հաշիւ զկերակուրն բերեալ ընդ կերողացն, խելամուտ լինէր զի վասն երից և չորից աւուրց ևեթ բաւական էին պաշարքն. ուստի և առաւել հաստատեցաւ նա 'ի խորհուրդ ժամանակաճառ լինելոյն, և առեալ կուտեաց յիւրում բանակին ամբար բազում կերակրոյ, զի ինքն 'ի լիութեան անդ իւրում դէտակն ճշգրտիւ կալցէ 'ի թշնամիս անդր՝ որսալ դէպ ժամանակ զսովելոյ բանակին նոցա։

Իսկ անդուստ Մինրդատ հաստատեաց 'ի միտս դիմել անկանել 'ի վերայ Կիզիկեցւոց՝ որ հարեալ վատթարեցան 'ի մարտին Քաղկեդոնեան, կորուսեալ անդ ոգիս երեք հազար և նաւս տասն։ Այլ կամեցեալ զանխուլ 'ի Լուկուղղեայ գործել, ասիպաւ յետ ընթրեացն եղեալ խաղայր յաղջամղջեան դիշերի և յանձրևաբերս. և այնչափ ինն շտապեաց՝ զի 'ի ծագել առաւօտուն հասեալ հանդէպ քաղաքին, եհար զբանակ զօրուն 'ի լերինն Ադրաստիա։ Իրազգած այնմ եղեալ Լուկուղղոս, յարուցեալ զհետ պնդէր. և խնդացեալ զի ոչ պատահեցաւ թշնամւոյն, զի և ոչ 'ի կարգի ինչ էին զօրականքն, անդ զկայ առնոյր հանդերձ իւրովքն մօտ յաւանն՝

որ անուանեալ կոչի Թրակիա 'ի դիպան վայրի 'ի վերայ Ճանապարհացն՝ ուստի կերակուրք անցանէին 'ի բանակն Միհրդատայ։ Ուստի և խելամուտ ինքն եղեալ հանդերձելոցն, ոչ 'ի ծածուկ ինչ կալաւ 'ի զօրականէն. այլ բանակ հարեալ նոցա՝ խմբեաց 'ի մի վայր և Ճոխաբար ասէր նոցա՝ յետ սակաւ աւուրց 'ի ձեռս տալ նոցա անարիւն զյաղթութիւնն։

Իսկ Միհրդատ պաշարեալ զԿիւզիկեցիս ընդ կողմն ցամաքին տան դնդաւ, և ընդ ծովակողմն դարձեալ փակեալ նաւուք զնեղուցն՝ անջրպետ քաղաքին առ 'ի ցամաքէն, և այնպէս յերկոցուն ևս կողմանց պատէր պաշարէր զնա։ Բայց քաղաքացիքն թէպէտ և քաջալերութեամբ լի էին 'ի մեծի վտանգին, և հաստատեալ ևս էին յանձն առնուլ 'ի վերայ Հռոմայեցւոց զամենայն արկածսն, այլ ոչինչ գիտելով ուրանօր Լուկուղղոսն ի՞նչ, և ո՞չ լուր դարձեալ զնմանէ բաւական էին առնուլ, 'ի մեծ վարանս պաշարեալ կային։ Բայց բանակ նորա քաջ իսկ յանդիման կայր տեսութեան նոցա. այլ պատրեցան 'ի զօրականէն Միհրդատայ՝ որ մատնանիշ նոցա զՀռոմայեցիսն արարեալ՝ որ 'ի վերոյ կային նոցա, ասէին այսպէս. "Տեսանէք զդոսա. են դոքա աւադիկ զօրք Հայոց և Մարաց առաքեալք 'ի Տիգրանայ 'ի Թիկունս Միհրդատայ"։ Զարհուրեալ ի՞նչ էին Կիւզիկեցիք՝ զայն ահագին մարտ պատերազմին յակն արկեալ շուքջանակի. և զի և

խիթային ևս՝ եթէ և ոչ Լուկուղղոս ինքնին 'ի վայր անդր հասեալ՝ զօրեացէ ինչ թիկունս տալ նոցա.

Արդ որ նոցա առաջին գուշակ եղև գալատեանն Լուկուղղեայ, էր Դեմոնիկակս առաքեալ յԱրքեղայոսէ 'ի Ներքս 'ի քաղաքն։ Մինչդեռ տակաւին ոչ հաւատային նոքա և մխիթարութեան կեղծիս համարէին, հասեալ ժամանէր անդր և պատանեակ մի գերի վարեալ 'ի մարտին և ապա զերծեալ. հարցանէին ցնա՝ ուրանօր իցէ Լուկուղղոս. 'ի ծաղր հատաւ պատանեակն՝ կարծեալ եթէ խաղ առնեն. իբրև Ճշդիւտ և ստիպաւ խնդրէին ուսանել, ձգեալ զձեռն՝ ցուցանէր նոցա զպատանէշ բանակին Հռոմայեցւոց։ Եւ այնպէս ստուգեալ վասն իրացն, առհասարակ 'ի քաջալերութիւն դարձան։

Իսկ անդանօր 'ի լճին Դասկիւլիտիդեայ նաւարկէին ակառք բաւականք մեծութեամբ. զմեծն առաւել 'ի նոցանէն քարշեալ Լուկուղղոս 'ի ցամաք և 'ի սայլից վերայ բարձեալ զայն մինչև 'ի ծով անդր, և ամբարձեալ 'ի նմա զօրական ըստ բաւականին, նոքա անցեալք յառաջ 'ի գիշերային պահու զանխուլ 'ի Թշնամեաց եկին մտին 'ի քաղաք անդր. և Թուի Թէ և գիք ինքնին գլխովին խնդացեալք ընդ արիութիւն Կիւզիկեցւոցն, առաւել ևս քաջալեր մատուցանէին նոցա յայտնի զարմանազան նշանօք, ըստ որում և 'ի ձեռն սքանչելեացն՝ որ երևեցան 'ի պատրաստութեան անդ

փերեփատեանցն տունին։ Քանզի վարա-
նեալք էգտեալք երինջ սեաւ 'ի զոհ դի-
ցուհւոյն, առեալ հայս և 'ի նմանէ կերպա-
րանեալ երինջ՝ մատուցին առաջի բագնին։
Իսկ նուիրականն այն երինջ պարարակն առ
'ի զոհ՝ էր յարօտս Ճարակաց ընդ անդէոցն
Կիւզիկեցւոց յայնկոյս ջրոյն. և 'ի նմին իսկ
աւուր զատուցեալ 'ի ջոկոյն, ինքնին միայ-
նակ 'ի լիւղ անցանէր դայր 'ի քաղաք անդր,
և զինքն մատուցանէր 'ի զոհ։ Առ այս դար-
ձեալ՝ և ինքնին դիցուհին երևեալ յա-
նուրջս Արիստագորասայ ատենադպրի ժո-
ղովրդեան, ասէր այսպէս. "Ինքնին ես
ատանօր հասեալ կամ, ածեալ զԼիբէա-
ցի զոմն արնդահար ընդդէմ Պոնտացի փո-
ղարին. արդ՝ ասա դու քաղաքացւոցդ՝ լի-
նել արս զօրութեան"։

Հիացեալ սքանչացան Կիւզիկեցիք ընդ
բանն. այլ 'ի ծագել աւուրն ծփեալ
յուզեցաւ ծովն՝ 'ի շնչել մրրկայոյզ հող-
մոյն։ Եւ անդանօր մենքենայք արքային՝
գործ հրաշակերտ Թեսաղոսի Նիկոնի-
դեայ՝ մերձեալք 'ի պատուարս պարսպաց,
զառաջինն 'ի շարժել իւրեանց և 'ի շառա-
չիւն բախման նախապատում լինէին հան-
դերձելոյ աղէտիցն. իսկ ապա յանկարծ
հարաւ շնչեալ ուժգնակի և բուռն, յա-
կան թօթափել առհասարակ հարեալ
ջաղխեալ խորտակէր զամենայն մենքե-
նայսն, և դղորդեալ 'ի վայր հոսէր և զաշ-
տարակն փայտեայ բարձր հարիւր կանգուն։

Եւ պատմեն՝ եթէ բաղմաց յԵղիոն ե-

ընեցաւ յայնժամ յանուրջս Աթենաս ողջ քրոնակայլակ. և զմասն տեռինն ցուցանէր պատառեալ, և ասէր՝ այն ինչ դարձեալ յօգնականութենէ անտի Կիւզիկեցւոցն. և Եղիոնացիք ինքնին ցուցանէին սիւն մի, յորում և արձանագրութիւն 'ի յիշատակ իրացս այսոցիկ։ Այլ յայնժամ Միհրդատ՝ ցոր վայր խաբեալ յիւրոց անտի զօրավարացն՝ անտեղեակ էր սովու բանակին իւրոյ, շտապեալ նեղէր յանձն իւր՝ զի տակաւին ոչինչ վճարեաց 'ի վերայ քաղաքին. այլ ապա նոյնհետայն 'ի վերայ հասեալ վերջին վտանգի զօրականին՝ զի և ստիպեցան նոքա առ քաղցու ուտել զմիս մարդոյ, անկաւ բեկաւ ստամբակութիւն նորա և ամենայն ամբարտաւանութիւն. ուր անդուստ Լուկուղղոս մարտ եդեալ կռուէր ոչ կերպարանաւորս ինչ և ոչ մնապարծս, այլ շեշտ կշիռ վազեալ էր՝ ըստ առակին՝ 'ի վերայ որովայնին, և զամենայն ճիգն թափէր բառնալ կարճել 'ի նմանէ զամենայն կերակուր։ Ուստի և 'ի խաղալ յայնժամ Լուկուղղեայ երթալ պաշարել զդղեակ մի, զոյն ժամ բարեպատեհ գըտեալ Միհրդատ մեծաւ շտապաւ առեալ արձակէր 'ի Բիւթինիա գոգ ողջոյն զայրուձին հանդերձ գրաստուք, և 'ի հետևակաց դարձեալ զանպիտանսն։

Իրազգած Լուկուղղոս եղեալ՝ անդէն արագ դառնայր յետս գիշերայն 'ի բանակ իւր. և վաղքաջ ընդ առաւօտն, թէպէտ և մրրիկ օդոյն 'ի վերայ կայր, առեալ ընդ

իւր գունդս տասն և զայրուձին, զհետ
պնդէր Թշնամւոյն, դիմագրաւ 'ի տեղա-
տարափ ձիւնաբերին և 'ի վիշտս մեծա-
մեծս. զի և բազումք յիւրոց անտի ոչինչ
հանդուրժեալք ցրտոյն՝ վերջոտնեցան:
Իսկ նա յառաջ վարեալ հանդերձ ընկե-
րօքն, հասանէր ունէր զԹշնամին 'ի գետ
անդր Հոլենգակոս, անդ հարկանէր և 'ի
փախուստ դարձուցանէր զնոսա. մին չև
անդուստ յԱպողոնիոյ 'ի դուրս ելեալ և
կանայք անդամ, ժողովէին զառ և զա-
պուր և մերկէին կապտէին զդիակունս
բազմակոյտ անկեալսն: Հասեալ կալան և
երիվարս վեցհազար, և երամակ անթիւ
դրաստուց և մարդիկ հնգետասան հազար.
և զայն ամենայն աւար զհետ իւր վարեալ
Լուկուղղոս, անցանէր գայր առ երի բա-
նակի Թշնամեացն: Ապ իմ զարմացեալ է
ընդ Սալլուստիոս, զի ասէ՝ զայն առաջին
նուագ տեսեալ անդանօր Հռոմայեցւոց
ուղղոս. արդեօք կարծէ Սալլուստիոս՝ եթէ
յառաջն չիցէ նոցա տեսեալ զայնոսիկ՝ որ
'ի միասին ընդ Սկիպիոնի 'ի պարտութիւն
մատնեցին զԱնտիոքոս. և ոչ դարձեալ՝
վայր մի յառաջ նոքա՝ որք յՈրքոմենոն և
'ի Քերոնիա մարտ եղեալ կռուեցան
ընդդէմ Արքեղայոսի:

Ապա հաստատեաց 'ի միտս իւր Միհրը-
դատ արագ արագ այնուհետև 'ի փախուստ
դառնալ. և 'ի դեգերեցուցանել և 'ի ժա-
մավաճառ առնել զԼուկուղղոս 'ի Թիկանց՝
առեալ արձակէր զԱրիստոնիկոս ծովա-

պետ 'ի ծով Եղլադայ. այլ 'ի չուն անդ մատնութեամբ զբռամբ անկանէր նա Լուկուղղեայ՝ հանդերձ բիւր դահեկանաքն ոսկի՝ զոր բարձեալ տանէր Արիստոնիկոս 'ի կաշառել դունդս 'ի Հռոմայեցւոց։ Յետ այնորիկ փախստեայ ընդ ծով եղեալ Մի-հրդատ, զօրավարք նորա առեալ ածէին զբանակն ընդ ցամաք. յորոց վերայ անկեալ Լուկուղղոս մօտ 'ի գետն Գրանիկոս, բազումս յոյժ 'ի նոցանէ գերի վարէր, և ոգիս քսան հազար տապաստ արկանէր։ Եւ պատմեն՝ եթէ առհասարակ որ տապաստ անկան 'ի կռուին յայնմիկ, միանգամայն ընդ այր մարտիկ և ընդ որեար բանակին և այլ ևս խուժանին, գոգցեսցեն գտան ոգիք երեսուն բիւր։

Ապա Լուկուղղոս անցեալ 'ի Կիւզիկոն, անդ նախ զտեղի առնոյր 'ի իրախանալ քաղաքին և 'ի հիւրամեծար շուք նոցա առնա. յետ այնորիկ երթեալ 'ի Հելլեսպոնտոս, հանդերձէր կազմէր նաւահանդէս. և իջեալ 'ի Տրովադա՝ չոքաւ 'ի տաճար Աստղկանն, և անդ 'ի քուն մտեալ գիշերի ընդ վրանաւ, թուէր տեսանել ինքնին զդիցուհին կալ 'ի վերայ և ասել զայս ինչ. "Զի՞ քեզ 'ի քուն մտանել Առիւծ մեծանձն. Եղնորթք աւադիկ առ դուրսդ հասեալ կան"։ 'Ի վեր վազեալ 'ի քնոյն՝ կոչէր վաղվաղակի գիշերայն զբարեկամսն, և պատմէր զտեսիլն։ Յայն պահ եկեալ հասանէին պատգամաւորք Յեղլոսինէ, եթէ հնգաթիւք երեքտասան 'ի նաւաց որ-

քային երևեցան 'ի նաւահանգստին Ա-
քայեցւոց, նաւեալք դէպ ուղիղ 'ի Լէ-
մնոս։ Անդէն Լուկուղղոս յուղի անկեալ
խաղայր ընդդէմ նոցա. հասեալ ունէր և
հարկանէր սատակէր զզօրավար նոցա, այն
էր Խիզովրոս։ Զհետ մտեալ վանէր և
զայլն, որ յառաջադէմ նաւեալքն էին։
Նոքա հասեալ կալեալ զցամաքն և քար-
շեալ անդ զամենայն զնաւս Իւրեանց՝
մարտ եդեալ կռուէին 'ի վերայ տախտա-
կամածիցն և վերս 'ի վերայ դնէին զօրուն
Լուկուղղեայ. անդանօր նա 'ի վայրացն
ոչ պատեալ պաշարեալ նաւուք զԹշնամին
բաւէր, և ոչ դարձեալ Իւրովք ալէկոծ
նաւուքն բռնանալ լինէ 'ի վերայ նաւաց
նոցա՝ որ անդրդուելի հարատեալ կային 'ի
ցամաքին։

'Ի վերջէ ուրեմն 'ի հուն մի անցից կղզւոյն
Թէպէտ և դժուարին յոյժ՝ իջեալ Լուկուղ-
ղոս 'ի ցամաք, և Թափեալ զկորովիս զօրակա-
նին, պատէր փակէր զԹշնամիսն 'ի Թիկանց
կուսէն, և անդ՝ էր զոր սպանանէր, և էր զոր
շտապեալ նեղէր կտրել զպարանս նաւացն
և փախչել ընդ ցամաք. և զայն գործեալ՝
երԹեալ նաւացն խառնէին բախէին ընդ
միմեանս, և վարեալք հարկանէին ընդ
ցուուկս նաւացն Լուկուղղեայ։ Եւ բա-
զումք յայնժամ տապաստ անկեալ, գտա-
նէին անդ 'ի մէջ գերեալն և զՄարիոս զ-
ըրագլուխ զարձակեալն 'ի Սերտորիոսէ։
Էր սա միականի, և Լուկուղղոս պատուէր
տուեալ էր զօրականին 'ի կռուին մի զոք

սպանանել 'ի միականեացն. քանզի կենդանուոյն ինդրէր ձերբակալ առնել զՄարիոս՝ տալ նմա անարգաբար մահ։

Ապա յետ այնորիկ փութայր Ճեպէր Լուկուղղոս զհետս սնդել Միհրդատայ. ակն ունէր հասանել ունել զնա մօտ 'ի Բիւթինիա, որում և զգուշանայր Բոկովնիոս, զոր ինքնին արձակեալ իսկ էր 'ի Նիկոմիդիա հանդերձ նաւուք քարընդոսն լինել փախստեան նորա։ Այլ Բոկոնիոս զկայ առեալ 'ի Սամոթրակէ խուզգլխիլ 'ի նուիրականն և ոճնախմբել, ոչ ժամանեաց. և Միհրդատ անցեալ գնայր հանդերձ նաւահանգիստն. և մինչ 'ի շտապ տագնապի Ճեպէր նա հասանել ունել զՊոնտոս՝ մինչև դարձեալ յետս Լուկուղղեայ, պաշարեցաւ յահագին մրրկէ. և յայնժամ 'ի նաւաց նորա՝ էր որ յայսկոյս յայնկոյս օձտեալք ցանեցան, և էր որ անդնդասոյզ կորեան. մինչև առհասարակ ծովափունք զաւուրս բազումս լցեալ ծածկեցան 'ի նշխարաց նաւաբեկութեանն՝ վարեալք 'ի ծփանաց անոր։ Յայնմ մեծի տագնապի տեսեալ Միհրդատ, զի յաղթ բեռնաբարձ նաւուն իւրոյ ոչինչ հեշտեաւ առ մեծութեանն էր ունել զցամաքն, ապստամբ 'ի ղեկավարացն եղեալ յահագին ծփանան և 'ի մէջ ամենի աղեացն, և զի՝ և ջուր ևս առեալ երթալով երթայր և ծանրանայր, վազեաց եմուտ 'ի նաւակ մի հինիցն, և անձնատուր նոցա եղեալ՝ յանհնարին վտանգին և արտաքոյ

ակնկալութեանն անկեալ ապրեցաւ յԵ-
րակլիա Պոնտոսի։

Եւ ապա 'ի գեղեցիկ Էլից ասաի՝ ան-
բամբաս մնաց Լուկուղղոս 'ի ձոխաբար
պանծանան առ Սինկղեառսին. յորժամ
վՃիռ տուեալ ծերակուտին հանդերձել
կազմել 'ի մարտն բանակ նաւական 'ի ծախս
քանքարաց երից հազարաց, անդուստ Լու-
կուղղոս յանձն չառեալ գրէր պանծանօք,
եթէ առանց այնչափ ինչ ծախուց և մեծաց
հանդերձանաց՝ միայն նիզակակցացն նա-
ւուք յաջողեսցի նա վանել 'ի ծովէ զՄի-
հրդատ. գործ՝ որ յաջողեցաւ նմա ար-
դեօք 'ի մարտակցութենէ աստուածայ-
նոյն. քանզի ասէն՝ ահագին մրրկին այն-
միկ որ հարեալ վատթարեաց զՊոնտացիսն՝
յուզել առ 'ի ցասմանէն Արտեմեայ Պրիա-
պինեայ. զի մեհենակապուտք նորա եղեն
Պոնտացիք և 'ի վայր քարշեցին զդրօշեալն
նորա։

Բայց Լուկուղղոս յայնժամ յորդո-
րեալ առ 'ի բազմաց դուլ տալ պատերազ-
մին, ոչինչ անասաց. անցեալ ընդ Բիւթի-
նիա և Գաղատիա՝ հորդան տայր յաղթայու-
թիւնն Միհրդատայ։ Ընդ թէպէտ և զա-
ռաջինն մեծապէս սոլեցաւ, զի և զՀեա-
լուր վարեալ խաղացուցանէր երեսուն հա-
զար 'ի Գաղատացւոցն, մէն մի 'ի նոցանէն
բարձեալ յուս գրիւ մի ցորեան, այլ ապա
յառաջագէմ տկրացեալ ամենայնին, լիա-
ցաւ յոլիացաւ՝ զի և 'ի բանակին նորա ա-
ւելի քան զդրամակշիռ չարժէր եղն մի, և

ոչ մի ոք 'ի գերեզոյն՝ աւելի քան զչորս։ Իսկ վասն այլոց աւարաց փոյթ ինչ չառնէին. ուստի և կէսք անդէն լքեալ թողուին, և կէսք դարձեալ՝ վատնէին, զի և պէտք ինչ չէին նոցա. այնչափ իմն առհասարակ յօրացեալք յղփացեալք էին։

Յետ այնորիկ ասպատակ սփռեալ մինչև 'ի Թեմիսկիւր, և ընդ դաշտավայրսն ուր անցանէ Թերմոդոն, յաղարտ վարեալ զերկիրն և քանդեալ աւերեալ, անդանօր բամբասանս լսէր 'ի զօրականէն, իբրու դանդաղեալ գեգերեալ նմա՝ յինքն զքաղաքսն յանկուցանեալ. և զի՝ և ոչ գուցէ թոյլ տայ նա 'ի վերայ քաղաքի ունել բռնութեամբ, և այնպէս 'ի հարուստ անկածէ ընուլ զնոսա. և յաւելեալ 'ի բանս՝ ասէին նոքա. "Եւ զարդիս հեշտին ի՞նչ հասանել ունել զԱմիսոն քաղաք բարեբաստ և բազմահարուստ, և գործ մեծ չէ պաշարմամբ նեղել զնա. այլ թողեալ և ածեալ խաղացուցանէ զմեզ յանշէն ամայիս Տիբարինացւոց և Փաղդէացւոց 1, մարտ դնել կռուել ընդ Միհրդատայ"։ Բայց Լուկուղղոս ոչինչ կարծեալ յայն չափ խեռութեան ստահակել զօրականին՝ յոր յանդգնեցան յետ այնորիկ, ուստի և երես չարարեալ քրթմնջանացն՝ դուն դործէր մանաւանդ 'ի չքմեղս լինել վասն ժամավաճառ գեգերանացն յաւանան յայն և 'ի դուզնաքեայ քաղաքսն, և թողուլ այնպէս բարգաւաճել զՄիհրդատ, և ասէր Լուկուղղոս։

«Դա՛ այդ է աւագիկ՝ զոր էան խընդրեմ, և հնարիմաց խորհրդով դարանեալ նստիմ, զի անդրէն միւսանգամ մեծապէս բարգաւաճեսցի այրն, և առեալ կուտեսցէ զօր բաւական 'ի մարտ. զի կացցէ մինասցէ դա, և մի՛ փախստեայ անկցի 'ի դրոհ տալ մեր։ Կամ թէ ո՞չ իսկ յակն արկանէք դուք զանդորրն զայն անապատ և զահագին՝ որ կայ 'ի Թիկանց նորա. անդ մօտ կայ Կաւկաս, և գօտիք լերանց շառք և բարձրակատարք, և բիւրուց արքայից՝ որ 'ի մարտէն խուսեսցեն՝ ասպնջական է վայրդ առնուլ և յանդորր հանել։ Ա՛ռ այս՝ և սակաւուց աւուրց ճանապարհ է 'ի Հայս 'ի Կաբիւրացւոց անտի. և անդ 'ի Հայաստան աշխարհ բազմեալ հանդէպ Տիգրան արքայից արքայ։ Մե՛ծ է զօրութիւն, զի և Պարթևաց ինքնին գլխովին 'ի ձեռաց հանէ զԱսիա, և զՀելլենացւոց քաղաքն առեալ փոխադրէ 'ի Մարս, և յԱսորւոց վերայ տիրացեալ կայ և Պաղեստինոյ, և զՍելևկեան Թագաւորն 'ի մահ վարէ, և զդստերս նոցա և զկանայս տարադէմ խաղացուցանէ։ Սա այս է ընտանի Միհրդատայ և փեսայ. և արդեօք զանց նա ոչինչ արասցէ, եթէ երբէք ողբաւոր առ նա անկցի Միհրդատ. այլ մարտ եդեալ կըռուեսցի ընդ մեզ։ Եւ արդ՝ մեր ձեռեալ վանել ընկրկել զՄիհրդատ, վասնզի մեծապէս է 'ի մեր վերայ շարժեալ զՏիգրան, որ 'ի վաղնջուց արդեօք պատճառս խնդրէ կռուել ընդ մեզ. իսկ զարդիս ոչինչ այլ

արդեօք քաջավայելուչ պատճառք լցեն նմա քան զօրավիգն կալ առն ընտանւոյ և ողղաւոր արքայի։ Արդ զի՞նչ պէտք լցեն ինքնին նիւթել մեզ զբանդ, և ուսուցանել Միհրդատայ զայն ինչ՝ զոր ոչն գիտէ՝ թէ որո՞վք արդեօք պարտ լցէ նմա մարտ ընդդէմ մեր յարդարել. առ այս՝ և մեզէն շտապել զայրն 'ի բուռն արկանել Տիգրանայ՝ զոր արդեօք չկամի և անփառունակ ևս անձին համարի։ Այլ արդ ոչ ժամ տացուք պարապոյ առն՝ յիւրոց անտի խուժանէն պատրաստել կազմել և յոտին կանգնել. և այնպէս ապա ընդ Կողքիսացւոց և ընդ Տիբարինացւոց և ընդ Կապադովկացւոց մարտ դնել կռուել, զորս և բազում անգամ պարտեցաք, քան եթէ ընդ Մարաց և ընդ Հայոց,,։

Այսպիսեօք բանիւք դանդաղեալ դեգերէր Լուկուղղոս յԱմիսոն, պաշարումն ածեալ նմա գուզնաքեայ և Թուլակի. իսկ յետ ձմերայնոյն Թողեալ անդանօր զՄուրենաս՝ ինքն խաղայ գնայ ընդդէմ Միհրդատայ, որ առկայացեալ կայր 'ի Կաբիւրս եդեալ 'ի մոի ընդդէմ կալ մարտիւ Հռոմայեցւոց՝ խմբեալ բանակ քառասուն հազար հետևակաց և չորից հազարաց այրուձիոյ՝ յորս և վստահացեալ իսկ էր. և անցեալ ընդ Գայլ գետ՝ ձայն մարտի տայր Հռոմայեցւոց 'ի դիւրի։ Իբրև անդ խառնեցաւ հեծելամարտն, նկուն Հռոմայեցիք եղեալ 'ի փախուստ դառնային։ Յայնմ պահու վերս առեալ և

Պոմպոնիոս այր ականաւոր՝ ձերբակալ լինէր. և այնպէս վերաւոր ածեալ առ Միհրդատ՝ հարցանէր զնա արքայն, եթէ ապրեցուացէ զնա՝ լինելոյ նորա բարեկամ. ետ պատասխանի Պոմպոնիոս. "Այո՛, եթէ խաղաղութիւն արասցես ընդ Հռոմայեցիսն, ապա թէ ոչ՝ թշնամի"։ Զարմացեալ Միհրդատ ընդ անդրդուելի հաստատութիւն առն 'ի պատասխանւոյն, ոչ ինչ չար գործեաց նմա։

Ապա 'ի գիւղի զանգիտեալ Լուկուղղեայ, զի այրուձիով հզօր էին թշնամիք, առ այս՝ և ոչ համարձակեալ յուղի անկանել ընդ լեռնակողմն, զի երկար էր և դժուարին և մացառախիտ, յայնժամ ըստ դիպաց ձերբակալ առնէին զոմանս 'ի հեծելենացւոց՝ որ անկեալ ապաւինեալ էին 'ի քարանձաւ մի։ Մի ոմն 'ի նոցանէ հինաւուրց Արտեմիդորոս անուն, խոստումն կռէր Լուկուղղեայ առնուլ ածել զնա 'ի վայր մի անդորր բանակի զօրուն, ուրանօր և գղեակ մի բարձրացեալ կայ 'ի վերոյ Կաբիւրացւոց։ Հաւասս առն ընծայեալ Լուկուղղեայ, 'ի գալ գիշերոյն բորբոքեալ անդէն խարոյկս խիտ առ խիտ, խաղայր գնայր և անցեալ զանձուկն անվտանգ, գայր հասանէր 'ի վայրն՝ զոր Արտեմիդորոսն խոստացաւ. և այնպէս 'ի ծագել աւուրն երևեցաւ նա անդ 'ի վերոյ թշնամեացն բանակ հարեալ 'ի վայր դիպան 'ի մարտ պատերազմի, և ապաստանարան անդորր բանակին։

Բայց անդանօր ոչ Միհրդատ և ոչ դարձեալ Լուկուղղոս խնդրէին 'ի կռիւ կաքաւէլ. այլ ասէն՝ եթէ զօրականք արքային 'ի պահուն զհետ մտեալ վանեալ զելջերու մի, անդուստ Հռովմայեցիք վազեցին արգելուլ զնոսա, և այնպէս ապա խառնեցաւ կռիւն յերկաքանչիւր ևս կողմանց՝ 'ի խռնել ամբոխին: Այլ 'ի վերջէ յաղթական եղանէր կողմն արքային. իսկ Հռովմայեցիք յիւրեանց զակշէն յակն արկեալ զփախուստ ընկերացն, 'ի սրտմտութիւն վառեալք՝ ընթացեալք առ Լուկուղղոս աղաչէին ճակատեցուցանել զնոսա և նշան խնդրէին զկռուոյ մարտին: Բայց նա 'ի ժամուն ցուցեալ նոցա եթէ քանիւն մեծապէս իցէ 'ի վտանգս դժուարինս դիմագրաւ նահատակութիւն հանճարեղ զօրավարի, հրաման տայր նոցա անշշունչ կալ, և ինքն յարուցեալ իջանէր 'ի դիւր անդր. և ընդ առաջ արձանացեալ փախստէիցն՝ հրաման տայր նոցա դառնալ յետս: Նոցա հնազանդեալք և դարձեալք առհասարակ և խմբեալք ընդ նմա, 'ի փախուստ յայնժամ դարձուցանէին զթշնամիսն, և վանեալ ընկրկէին մինչև 'ի բանակ անդր նոցա: Իսկ 'ի դարձին Լուկուղղոս պատուհաս անփառունակ 'ի վերայ ածեալ փախստէիցն ըստ օրինացն, հրամայէր նոցա անգօսի պարեգօտիս խրամ հատանել երկոտասան ոտնաչափից 'ի զնին այլոց զօրականին:

Բայց 'ի բանակին Միհրդատայ էր այր

ոմն վիթխարի հասակաւ Ոլթակոս անուն. էր սա 'ի գաւառէն Դարդարացւոց (և էն Դարդարացիք ցեղ 'ի բարբարոսաց անտի բնակաւորացն Մէովտեայ). և էր Ոլթակոս յաղթաբազուկ յոյժ և արի 'ի մարտս և քաջուշիմ 'ի գործս մեծամեծս, և 'ի կենակից քաղաքավարութեան շնորհաշուք և բաղձալի։ Սա այս այր ցանգ էլ և էլս առնելով ընդ այլում պայազատի համացեղի, և 'ի նախանձ բերեալ լինել նախաթոռ, խոստումն կռէր առաջի Միհրդատայ գործ գործել մեծ, և ինքնին սպանանել զԼուկուղղոս։ Մեծապէս գովեալ զնա արքային, և համախորհուրդ հնարիմացութեամբ ընդ առն՝ թշնամանաք իմն հարստահարեալ զնա, որ աղագաւ կեղծաւորեալ Ոլթակոս 'ի պատմութիւն բարկութեան ընդդէմ արքային, յարուցեալ մեկնէր 'ի նմանէ, և ձիրնթացիկ գայր անկանէր առ Լուկուղղոս. նա մտադիւրագոյնս ժողովեալ զայրն, քանզի և համբաւ մեծ հնչեալ էր զնմանէ 'ի զօրուն, և անդէն փորձ փորձեալ զնորա, սիրեաց ըզհանձար զուշիմութեան առն, զի այնուհետև սեղանակից իւր արար զնա և կենակից կենցաղակից։

Ապրդ դէպ ժամանակ երևեալ բարբարոսին, հրաման տայր իւրոց ծառայիցն աՁել նմա զերիվարն արտաքոյ պատնէշին, և ինքն 'ի միջօրէի 'ի հանդէՁել զօրականին, չոքաւ 'ի վրան զօրավարին, իբրու անիսափան ունել զմուտն իբրև կենակից զօրա-

վարին. և զի՝ և ասէր ևս նա պատմել նմա ստիպաւ իր մի 'ի կարևորացն։ Եւ արդեօք անշուշտ մոռեալ էր առ նա, եթէ քունն ինքնին՝ որ շատից զօրավարաց մահաբեր գտաւ, չէր յայնժամ փրկեալ զԼուկուղղոս։ Քանզի 'ի ժամուն ըստ դիպաց 'ի քուն մոռեալ Լուկուղղեայ, և անդանօր Մենեդեմոս մի 'ի սենեկապետացն առ դուրսն կացեալ ասէր առ Ոլթակոս, 'ի տարաժամու գալ նմա. զի այն ինչ 'ի քուն մոռեալ հանդչի Լուկուղղոս յետ երկար տքնութեանցն և բազում վաստակոցն։ Իբրև ոչ 'ի բաց գնայր Ոլթակոս, նա և պնդեալ էր անխափան մտանել և խօսել ընդ Լուկուղղեայ վասն կարևոր և մեծի բանին, պատմեալ Մենեդեմոս ասէր, չիք ինչ կարևոր քան զքաջողջութիւն Լուկուղղեայ, և երկոքումբք ձեռօքն 'ի բաց մերժէր զայրն։ Ընդ զահի հարեալ բարբարոսին, փութացաւ էլ գաղտ արտաքս 'ի պատնչէն, և հեծեալ յերիվարն, մորակ 'ի կուշտ անցանէր 'ի բանակ Միհրդատայ՝ վճարեալ և ոչինչ։ Այսպէս ուրեմն դէպ ժամանակն ինքնին՝ ոյժ կենաւրութ կամ մահաւրութ տայ ընծայէ՝ որպէս դեղոցն՝ 2 նոյն և գործոցն գլխովին։

Յետ այսորիկ արձակէր Սորնատիոս հանդերձ տասն գնդաւ յանձանձել զպաշար զօրուն. և խոչ ընդ ոսն իւր գտեալ զՄենանդրոս զմի 'ի զօրավարացն Միհրդատայ, ընդդէմ դարձեալ և կռուէ ընդ նմա հարուած մեծապէս 'ի վերայ ածէր և 'ի

փախուստ դարձուցանէր։ Իսկ և այլ անգամ արձակեալ Ադրիանոս բազում զօրականօք ածէլ միւսանգամ կերակուր՝ որով լիացուցանէլ զբանակն խնդրէր Լուկուղղոս, ոչինչ անհոգացեալ Միհրդատ՝ առեալ արձակէր ընդդէմ նորա զերկուս յիւրոց անտի զՄենեմաքոս և զՄիռոնն հանդերձ բազում այրուձիով և բազում հետևակօք, որք և առհասարակ՝ որպէս ասեն՝ բայց յերկուց անտի՝ 'ի սուր մաշեցան Հռոմայեցւոց։ Այլ Միհրդատ 'ի ծածուկ պահեալ զհարուածն՝ իբրու որ դուզնաքեայ ելցեն տուգանքն յանհմտութենէ զօրավարացն, անդուստ Ադրիանոս շքով անցեալ առ երի բանակին ածեալ բազմութիւն մեծ զսայլից՝ բեռնաբարձս ցորենոյ և աւարին, բեկանէր զզօրութիւն Միհրդատայ, և արհաւիրս արկանէր մեծամեծս 'ի վերայ զօրականին նորա. որպէս զի և ո՛չ ևս հանդուրժեցին մնալ անդէն։ Իսկ մերձաւորք արքային յառաջ արձակեալ դաղտ զաղին իւրեանց և ուղի հորդեալ բռնութեամբ ընդ մէջ զօրականին, սրսմռեալ զօրուն յելսն 'ի պատնէշն յարձակեալ 'ի վերայ աղևին՝ աւարէին, և ըզտեարան 'ի մահ վարէին. անդ անկանէր և զօրավարն Դորիղայոս՝ քանզի հանդերձ ծիրանի արկեալ էր միայն զանձամբ. անդ առաթուր առ դուրս հարկանէին և զԵրմէոն քուրմ։

Իսկ Միհրդատ յայնժամ ո՛չ ընկեր զոք ունելով և ո՛չ ասպատեր, էլ արտաքս 'ի

զակշէն 'ի խուան խուժանին. ցդոյր նորա յայնժամ և երիվար յարքունեաց անսի. իբրև հարուստ ժամանակ այնպէս 'ի վերայ անցանէր և զնա տարուբերր 'ի խուճապել խուժանին յակն արկեալ Պողոմէոս ներքինի, ինչեալ յերիվարէն յիւրմէ՝ տայր նմա: Բայց Հռոմայեցիք 'ի ժամուն 'ի Թիկանց նորա հասեալ, և վայրիկ մի ձեռս 'ի նա մխեալ էր նոցա և վրիպեցան, զի և մերձեալ յոյժ էին. բայց ընչաքաղցուԹիւն և զոչաքաղուԹիւն զօրականին վրիպեցոյց զՀռոմայեցիս յորսոյն, զոր այնչափ մարտիւք և վտանգօք խնդրեցին. և զԼուկուղղոս ինքնին վրիպեցոյց 'ի մրցանակէ յաղԹուԹեանն: Քանզի այն ինչ ժամանեալ նոցա մօտ յերիվարն Միհրդատայ, մի ոմն 'ի ջորեաց անսի բեռնաբարձից ոսկւոյ, կամ ըստ դիպաց ինքնին կամ Թէ արքայի իսկ զնոյն պատուիրեալ, անկանէր ընդ մէջ նորա և հետամտիցն. որք և յաւար դիմեալ ոսկւոյն և 'ի կագ ևս ընդ միմեանս եղեալք, անցեալ փախստեայ յայնժամ մաղապուր զերծանէր Միհրդատ: Եւ ոչ այս միայն տուգանք Լուկուղղեայ ընչաքաղց զօրականէն, այլ և պատուիրեալ նա նոցա ածել 'ի բանակ անդր կենդանւոյն զԿալլիստրատոս ձերբակալ՝ այր խորհրդական արքային, իրազեկ եղեալ կալանաւորացն տանել նմա 'ի կամարին հինգհարիւր դահեկան ոսկի, անդէն ապանանէին զայրն: Յայսր ամենայնի վերայ տայր նոցա Լուկուղղոս աւարել և կա-

պուտ կողոպուտ թողուլ զբանակ թըշ-
նամւոյն։

Ապա հասեալ կալեալ զԿաբիւրս և
շատ ևս յանխաբ վայրաց, անդանօր գտա-
նէր գանձս մեծամեծս, և բանտարգեալս
ևս բազումս 'ի Հելլենացւոց, և զբազումս
'ի մերձաւորաց արքային, որք անդ ակնկա-
լեալ մնային մահու 'ի վաղ ժամանակաց
և փրկեալ ապրեցան յայնժամ 'ի ձեռն
Լուկուղղեայ, և իբրու նորոդապէս ծնան
նոքա յերկրորդ 'ի կեանս։ Անդ ձերբա-
կալ լինէր և քոյր մի Միհրդատայ Նիւսսա
անուն 'ի փրկութիւն անձին իւրոյ. քանզի
այլք 'ի քէրց անտի նորա և 'ի կանանց՝ որ
յանդորրու գոգցեալ բնակեցուցեալ էին
յանկասկածելի վայրի մօտ 'ի Փերնակիա,
մահ անողորմ մեռան նոքա. քանզի 'ի
փախչել իւրում Միհրդատ առաքեաց
առ նոսա զԲակքիդէս Նեբքինի պանա-
նել զնոսա։ Եւ էին 'ի նոսա և կրկին քորք
արքային Ռովքս և Ստատիրէ, և թէպէտ և
զքառանամենիւք ուրեմն, տակաւին չէին
հարսնացեալք. առ այսոքիւք՝ և երկու
լծակիցք արքային՝ Յոնիացիք ազգաւ, Բե-
ռինիկէ Քիացի, և Մոնիմէ Միլետացի։
Եւ էր առհասարակ առ Հելլենացիս ըզ-
համբաւի հարեալ այս Մոնիմէ. քանզի
զառաջինն փորձ փորձեալ Միհրդատայ և
յղեալ առ նա 'ի պարգև հնգետասան հա-
զար դահեկան ոսկի, նա ընդդէմ դարձաւ
քաջութեամբ՝ մինչև 'ի կռել զդաշինս
զամուսնութեանն և 'ի յղել առ նա ըզ-

պակն և համբաւել գլխոյ։ Սակայն կեանս վարէր նա լի՛ տրտմութեամբ և ցաւով, և արտասուէր և աղաղակէր զիւր գեղն, որ ամուսնոյ փոխան տէր 'ի նեղքս եբեր նմա, և փոխանակ պսակաստանին և պալատան՝ փակարան զբաղբաղոսայ. ուր և տարագիր տարագէմ յԵլլադայ՝ յանուրջս միայն իրաւանայր յակնկալութեան բարեացն, իսկ արդեամբք անբաժ 'ի վայելեցն Ելլադայ։

Արդ հասեալ առ նոսա Բակքիդէս, ազգ առնէր նոցա զհրաման արքային. և թոյլ տայր իւրաքանչիւր նոցա ընտրել զօրինակ մահուն՝ զհեշտն և զանցաւն։ Անդ Մոնիմէ կորզեալ զպսակն 'ի գլխոյն, և 'ի խեղդ զայն պարուրեալ զպարանոցաւն, կախէր անձամբ զանձն. բայց խորտակեալ պսակին, ասէր. "Ո՞վ նզովեալ խեղդան, դու և ո՛չ 'ի դոյն եղեր ինձ պիտեան"։ և զդեանեալ զայն արտմտութեամբ և թքեալ ևս 'ի նա, մատուցանէր առաջի Բակքիդեայ զպարանոցն։ Իսկ Բերենիկէ առեալ բաժակ թունալից, մատն մի առեալ մատուռակէր մօրն՝ որ էր ընդ իւր, և աղաչէր զնա. և այնպէս գեղբմբու լինէին երկոքին նոքա։ Այլ մայրն գեղակուր արագ արագ զբաւէր 'ի կենաց 'ի վատեալ մարմնին. իսկ զԲերենիկէ ո՛չ ըստ բաւականին գեղակուր՝ և 'ի դժար ևս եղեալ՝ 'ի խուճապ տագնապին Բակքիդեայ՝ խեղդամահ առնէին։ Բայց յերկուց անուն ամուրի քերցն՝ ասեն՝ եթէ Ռովքսանէ անէծս արձակեալ բազումս և յիշոցս ընդդէմ Միհրդատայ,

ըմպէր և նա զդէզն. նոյնպէս և Ստատիրէ-
սակայն ոչինչ թշնամանեալ սա՝ գժպա-
տեհ աղնուականութեանն, նա՛ և գովեալ
ևս զեղբայրն՝ որ 'ի վտանգել կենացն՝ հոգ
զնոցայն կալաւ ազատաբար մահու, զի մի
ինչ կրեսցեն 'ի գժնդակացն։

Յոյժ 'ի խոր խոցեալ Լուկուղղոս ընդ
իրան, քանզի և 'ի բոյս բարուցն հեզ էր
նա և մարդասէր, ապա հետամուտ Մի-
հրդատայ եղեալ՝ չոքաւ մինչև 'ի քաղաքն
Տաղաւրացւոց։ Անդանօր լուր առեալ, զի
'ի չորից աւուրց հետէ անկեալ իսկ էր
Միհրդատ 'ի Հայաստան աշխարհ առ Տի-
գրան, դարձաւ յետս. և պարտեալ զՔաղ-
դէացիսն և զՏիբարինացիս, և գրաւեալ
զփոքրն Հայս, և նուաճեալ զամրոցս և
զքաղաքս, արձակէր զԱպպիոս առ Տի-
գրան՝ խնդրէր զՄիհրդատ. և ինքն խաղաց
գնաց յԱմիսոն, որ դեռ ևս մարտ եղեալ
զդէմ ունէր. քանզի անդանօր Կալլիմա-
քոս զօրավար քաղաքին՝ քաջափորձ 'ի
կազմութիւն մենքենայից և կիրթ 'ի հնա-
րիմացութիւնս պաշարման՝ մեծապէս վնաս
հասուցանէր Հռոմայեցւոց, ուստի և ըզ-
վրէժն ելոյծ ապա։ Բայց յայնժամ նկուն
լինէր նա 'ի Լուկուղղեայ, որ 'ի պահու
սովորական հանգստեան զօրականի քա-
ղաքին, յանկարծակի յեղակարծումն գը-
ռոյթս տուեալ տիրանայր 'ի վերայ փո-
քու մասին պատուարացն. զայն տեսեալ
Կալլիմաքոս 'ի փախուստ մտաբերէր՝ հուր
հարեալ զքաղաքէն. կամ զի խանդացաւ

Հռոմայեցւոց զբազմահարուստ աւար քաղաքին, կամ զի դիւր առնէր իւրում փախստականն. քանզի և ոչ ոք յայնժամ փոյթ ինչ կալաւ զնաւելոցն և զփախստականէիցն, այլ յընթանալ ծաւալել բոցոյն մինչև շուրջ զպատուարօքն՝ անդուստ զորականք Լուկուղղեայ առհասարակ գոտեպնդ յաւարն լինէին։

Բայց Լուկուղղոս արդահատեալ 'ի քաղաքին աշխարանս, խնդրէր արտաքուստ ձեռն տալ, և յորդորէր զզօրականն շինուցանել զհուրն. այլ նոքա անսասանեալք յուզէին զառ և զապուր քաղաքին, և բարձրանայր ձայն աղաղակի նոցա և կայթս ահագինս զինուց հարկանէին, մինչև բռնադատեալ Լուկուղղոս հաւանէր, ակն ունէր թերևս նովին 'ի հրոյն փրկել զքաղաքն։ Սակայն ընդ հակառակս նոքա ջահիւք վառելովք եկեալ 'ի խնդիր ամենայնին, և հուր ածեալ ընդ ամենայն, շատ ինչ և նոքա հրդեհակէզ առնէին յապարանիցն։ Վասն որոյ և Լուկուղղոս յերկրորդումն աւուր մտեալ 'ի նեղքս, յարտասուս հարեալ՝ ասէր ցբարեկամսն՝ բազում անգամ երջանիկ համարել նմա զՍիւղղաս, այլ յաւէտ յաւուրն յայնմիկ հրաշանալ նմա ընդ գեղեցիկ բախտ առն, որ 'ի խնդրելն փրկել զԱթէնս, փրկեաց. "Դակ ես ինքնին՝ ասէ՝ որ հանգուցեալ նմին ցանկայի լինել, զիս 'ի Մոմիոսին բախտին առեալ կացոյց Քաջն,, ։ Սակայն և ըստ բաւականի ձեռինն գուն գործեաց

նա նորոգել զքաղաքն, յորմէհետէ հան-
դարտեալ շինչանէր հուրն 'ի տեղատարափ
անձրևոյն՝ յաստուածեան իմն գոգցես
տեսչութենէ 'ի ժամու առմանն։ Եւ մինչ-
չև մեկնեալ նա 'ի քաղաքէն, կանգնեաց
զբազում յապարանից անսի հրդեհելոց,
և առեալ ժողովեաց 'ի ներքս զքաղաքա-
ցիսն փախստեայս. առ այս՝ և փոխադրեալ
բնակեցոյց անդէն և 'ի Հելլենացւոց՝ որ
խնդրէին, տուեալ նոցա գետին հարիւր
և քսան ասպարիսաց։ Եւ էր այն քաղաք
գաղթական Աթենացւոց՝ շինեալ առ ժա-
մանակօք բարգաւաճելոյն նոցա և ծովա-
կալութեանն, ուստի և բազումք 'ի նոցա-
նէն փախուցեալք 'ի բռնաւորութենէն
Արիստոթելի, անդանօր նաւագնաց լինէին.
և իբրև քաղաքացիք՝ միջամուխք յիրս է-
ղեալք, այնպէս զսեպհականն թողեալք՝
զօտարին ժառանգէին։

Արդ՝ Լուկուղղոս յազատութիւն յան-
դորր հանեալ զմնացեալսն, առ այս՝ և
վայելուչս զգեցուցանէր զնոսա, և առն
առն 'ի նոցանէ տայր դրամակշիռս երկե-
րիւր։ Անդ ձերբակալ առնէին և զՏիրան-
նիոնն Գրամատիկոս, զոր ապա խնդրեալ
Մուրենաս և առեալ յինքն, յազատու-
թիւն դրեր զնա. յորում՝ և ոչ ազատա-
կանս ինչ գործեաց նա 'ի պարգևն Լու-
կուղղեայ. քանզի և յառաջն Լուկուղղոս
ինքնին ոչ եթէ իբրև ծառայ ունէր զայրն
բազմահմուտ և ապա յազատութիւն հա-
նեալ. քանզի ազատութիւն այդպիսի 'ի

շնորհս տուեալ նմա՝ անբաժ արդեօք կացուցանէր զնա յընտաբոյսն ազատութենէն։ Ալ արդեօք Մուրենաս ո՛չ այս անգամ միայն՝ խակուութիւնս երևեցոյց անձահս զօրավարի։

Ապա չու արար գնայր Լուկուղղոս 'ի քաղաքն Ասիոյ, պարապեալ 'ի գործոյ պատերազմաց խնդրեր օրէնս և իրաւունս հաստատել անդանօր. յորոց յայնպիսեաց անտի անբաժ այն աշխարհ 'ի վաղ ժամանակաց՝ պաշարէր յաղէտս ամբաւս, և կապտեալ և ստրկացեալ 'ի վաշխառուաց և 'ի մաքսաւորաց, որ շտապեալ նեղէին ըզբնակիչսն վաճառել 'ի տանէն զմանկունս իւրեանց զգեղեցիկսն և զդստերս իւրեանց զկոյսսն, և ապա և 'ի քաղաքին զհասարակաց զձօնսն, զպնակս նկարուց և զանդրիս նուիրականս. առ այսոսիկ և պարտապանք 'ի ստրկութիւն ևս արկանէին զանձինս։ 'Ի վերայ այսր՝ էր նոցա և կիրս ցաւագին կրել նոցա և դժոխամբերելի, լկանս և խոշտանգանս և բանտարգելութիւնս և ձիաձև տանջանարանս. և կանգուն արձանացուցանէին զնոսա 'ի բացօթեայս, ամարայնի 'ի տօթ սաստիկ արևուն, և ձմերայնի ընկղուզեալ 'ի սիկս մօրից կամ 'ի մէջ սառամանեաց. որպէս զի և դիւր հանդստեան՝ կիրք ստրկութեանն երևէր նոցա։ Յաղէտից սատի 'ի սուղ ժամանակի փրկեր Լուկուղղոս զվշտատեսսն. քանզի նախ հրաման տայր՝ զհարիւրորդն միայն և մի աւելի՝ համարել առ 'ի վաշխ. իսկ երկրորդ

անգամ՝ եբարձ միանգամայն զամենայն վաշխ առաւելեալ քան զգլուխն. իսկ երրորդ անգամ՝ մեծ ևս, սահմանեաց պարտատեառն ունել զչորրորդ մասն զհասից պարտապանին. և եդ պատուէր՝ զի եթէ ոք յաւելցէ տոկոսի 'ի գլուխն՝ յամենայնէն միանգամայն վրիպեալ գտցի: Եւ այնպէս ապա գոգցես ընդ ամս չորս հատուցան ամենայն պարտք, և կալուածք ազատացեալք դարձուցան առ տեարս:

Եւ էր հասարակաց պարտքն երկուց բիւրուց քանքարաց, զոր տուգանեաց Սիւլլաս զԱսիա. և հատուցեալ իսկ էին պարտատեարցն առաւել քան զկրկինն. այլ սոքա տոկոսեաքն առաւելեալ էին ըզպարտան մինչև 'ի քանքարս երկոտասան բիւրուց: Ոյր աղագաւ և իբրու կարի հարստահարեալք բողոք բառնային 'ի Հռոմ ընդդէմ Լուկուղղեայ, և շարժէին ընդդէմ նորա գնոց արծաթոյ և 'ի հռետորաց անսի ռամկին. քանզի և զօրացեալ իսկ էին նոքա և յանգուցեալ ևս էին զբազումս յաւագանւոյն: Բայց Լուկուղղոս ոչ սիրելի միայն իւրոց երախտաւորելոցն, այլ և նախանձելի գտաւ այլոց ևս գաւառաց՝ որ երջանիկս ասէին զվիճակեալսն այնպիսումն իշխանի:

Բայց յայնժամ զԱպպիոս Կղովդիոս զտագրն Լուկուղղեայ զդեսպանն առ Տիգրան՝ արքն ուղեցոյց 'ի բարբարոսացն առեալ յածեալ շրջեցուցանէին 'ի վերնագաւառն ընդ Ճանապարհ բազմօրեայ և

ընդ շրջանաւոր պողոտայս անպէտս. ո-
րում իրազեկ նա եղեալ յաղատագրեալ
ծառայէն Աստի ազգաւ, և տեղեկացեալ
կուռ պողոտային և 'ի մոլորեալ ուղւոյն
դարձեալ արագ ընդ այլ արահետ, 'ի բաց
արձակէր յիւրմէն՝ շատ ինչ թշնամանեալ
զբարբարոսան. և ապա ընդ սակաւ աւուրս
անցեալ ընդ Եւփրատ հասանէր յԱնտիոք՝
որ մօտ կայ 'ի Դափնին։ Անդ հրաման ա-
ռեալ սպասել մնալ Տիգրանայ, (քանզի
'ի նուաճել գնացեալ էր նա քաղաքացն
Փիւնիկիոյ), զայն ժամ պարապոյ գտեալ
Ապպիոս՝ յինքն յանկուցանէր զբազումս
'ի տանուտէարցն՝ որ գժկամակն կային 'ի
հնազանդութեան Հայոյն, (յորս և Զար-
բիենոս տէր Գորդիւնեայ)։ Ապա և բա-
զումք 'ի քաղաքաց հնազանդելոց գաղտա-
բար առաքէին առ նա. որոց և առհասա-
րակ խոստանայր նոցա զզօրավիգն Լու-
կուղղեայ, պատուէր տուեալ հանդար-
տել 'ի ժամուն։ Քանզի գժոխամբեր-
ուն էր Հելլենացւոց տերութիւնն
Հայոց, յաւէտ ինն առ այնու թագաւո-
րաւն՝ այն որ 'ի բախտս իւր գեղեցիկս յօ-
րացեալ և պերճացեալ յոյժ էր, կար-
ծեալ յիւրում բռին ունել միանգամայն
ոչ միայն զամենայն իսկ զտարփալիս և ըզ-
զարմանալիս զկանանցածնաց, այլ զի և
յիւր սակս միայն լցեն առհասարակ ամե-
նայնն։

Քանզի սկիզբն իւրոյ բարգաւաճելոյն
առեալ 'ի դուշնաքեայ ակնկալութեանց

յուսոյ, գնալով գնաց և ազգս առեալ նուաճեաց բազումս. և նկուն առնէր պարտէր՝ որպէս և ոչ ոք երբէք՝ զՊարթևաց զօրութիւնն. և լցեալ զերկրսը զՄիջագետս 'ի բնակաւորաց Հելլենացւոց. բազումս ածեալ 'ի Կիլիկիոյ, և բազումս ևս այլ խաղացուցեալ 'ի Կապադովկիոյ, և բնակեցուցանէր անդր. առ այսոքիւք՝ և շարժեաց դրդուեցոյց զԱրաբացիս զվրանաբնական 'ի վաղնջուց սովորութենէն, և 'ի վրանացն հանեալ զնոսա՝ մօտ իւր բնակեցուցանէր, վարել նոքօք 'ի շահավաճառութիւնս։ Առ այս և բազումք էին նմա թագաւորք սպասարկուք. բայց զչորս 'ի նոցանէ ցանգ առ իւր ունէր իբրև անձնապահապետս ոմանս կամ թիկնապահս. որք և յերիվար աշտանակեալ նորա՝ նոքա առ երի առանց կազմածոյ հետի ընթանային, պատմուճան լոկ արկեալ զանձամբք. և 'ի բազմել 'ի գահու և 'ի պատգամատու լինել՝ նոքա յանդիման կային՝ ձեռս զձեռամբք ածեալ՝ առաւելագունին նշանակ ծառայութենն, իբրու որք վրէպք խսպառ յաղատութենէն՝ զիւրեանց մարմինն ողջոյն 'ի ձեռս տուեալ էն տեարց, կազմք և պատրաստք 'ի կրել քան 'ի գործել։ Եւ ապա յայս ողբերգակ տեսարան ոչ զահի լինէ հարաւ Ապպիոս և ոչ խորշեցաւ, այլ իբրև անդէն յանդիման ընծայեցաւ, համարձակաձայն բարբառեցաւ առ Տիգրան, եթէ՝ հասեալ գայ ինքն ածել տանել 'ի բաց զՄիհրդատ՝ արժանի

յաղթանակացն Լուկուղղեայ, կամ թէ՝ կռուոյ մարտի ձայն կարդալ Տիգրանայ։

Անդանօր թէպէտ և թեւակոխեալ ՀՐԳՆԵՑԱՒ Տիգրան Ճոխաբար երեսօքն և 'ի ժպիտ դիմաց լսել յայսպիսեաց բանից, ոչինչ կարաց ծածկել յաւելին զկիրս ոգւոյն առ 'ի համարձակախօս բարբառոյ պատանւոյն. և արդեօք զայն առաջին նուագ լուաւ նա յայնպիսի ազատաբար ձայնից՝ զկնի գոգցեաւ ամաց քսան և հընգից, քանզի և նոյնչափ նա արքայացաւ՝ մանաւանդ թէ՝ ամբարտաւանեցաւ։ Ապա պատասխանի առնէր Ապպիոսի, երբէք զՄիհրդատ ջոտալ 'ի ձեռս. և եթէ հռոմայեցիք ինքնին առաջին նմա ձայն տան մարտի, քա՞զ ինքն զդէմ կալցի նոցա։ Եւ արտմտեալ ևս ընդ Լուկուղղոս, զի 'ի նամականին առ նա՝ միայն անուն արձանագրեաց Արքայի, և ոչ արքայից Արքայի, նա յառ նա պատասխանին և ոչ անուն տայր նմա ապարապետի։ Համայն և այնպէս առեալ ընծայս պայծառս առաքէր Ապպիոսի. նա ջառեալ յանձն, իբրև յաւել միւսանգամ յղել առ նա մեծամեծս ևս քան զառաջինսն, ապա զի մի ինչ առ խէթ թշնամութեանն կարծեսցի արհամարհել, առնուլ էառ Ապպիոս բաժակ մի, և զմնացեալսն յետս դարձուցանէր. և ապա ելեալ շտապաւ գառնայր առ Լուկուղղոս։

Բայց Տիգրան՝ որ յառաջն և ոչ տեսանել անգամ յանձն առնոյր զՄիհրդատ

և ոչ խօսել անդամ, թէպէտ և այնչափ մերձաւոր և յարքայութենէն ևս անկեալ հիգացեալ, և արհամարհութեամբ և գոռոզութեամբ գնայր ընդ նմա, պահ արկեալ նմա'ի վայրս բացականս, մօրուս, և ախտակիրս. իսկ յայնժամ առաքեալ կոչէր զնա, և շքով և մարդասիրապէս հիւրամեծարութեամբ ժողովէր զնա. և երկոքին նոքա 'ի ծածուկ զբանիւք անկեալ յարքունիսն՝ այր զընկերին ամոքեալ հանդարտէր զկսէթ մտացն, զբարեկամքն արկեալ զամենայն իսկ զվնասն։ Յորս էր և ինքնին Մեսրոպորոս Սկեպսիոս այր քաղցրաբան և բազմահմուտ և մտերիմ այնչափ, մինչև և հայր գլխովին կոչել արքայի։ Բայց Մեսրոպորոս յառաջն դեսպան 'ի Միհրդատայ արձակեալ առ Տիգրան խընդրել օգնութիւն ընդդէմ Հռոմայեցւոց, կատարեալ զդեսպանութիւնն՝ ապա հարցանէր զնա Տիգրան. "Ա՛յլ դու ինքնին ո՞վ Մեսրոպորե, զի՞նչ խորհուրդ տաս ինձ վասն բանիդ այդորիկ"։ Իսկ Մեսրոպորոս կամ զի զօգուտն խնդրեալ Տիգրանայ, կամ զի զփրկութիւն ցկամէր Միհրդատայ, էտ պատասխանի. Իբրև դեսպան՝ յորդորէ, և Իբրև խորհրդական՝ 'ի բաց քեցէ։ Զայս բանս ապա պատմէր Տիգրան Միհրդատայ. ոչինչ կարծէր՝ եթէ չար ինչ հասցէ Մեսրոպորեայ. բայց Միհրդատ մեկնեալ անտի՝ անդէն սպանանէր զայրն։ Սորջացաւ Տիգրան ընդ պատմութիւնն. թէպէտ և ինքն չեկայց բովանդակ

պատճառք աղէտից առն, սակայն և թինդս
էտ նախկին ատելութեանն Միհրդատայ
առ նա։ Քանզի և 'ի վաղնջուց իսկ էր նա
խեթացեալ առ նա, ըստ որում և 'ի ծա-
ծուկ գրենոյն Միհրդատայ 'ի վերս եկ՝ զորս
'ի ձեռս բերին, յորս կնքեալ իսկ էր մահն
Մեսրոգորոսի։ Այլ Տիգրան գիտահանս
շքեղ հանդերձեաց նմա, ոչինչ խնայեալ
'ի ծախսն՝ տալ նմա պատիւ 'ի մահուանն,
որում մատն եղև 'ի կենդանութեանն։

Անդանօր առ Տիգրանայ մեռանէր և
Ամփիկրատէս հռետոր, (եթէ և արժան
իցէ 'ի մեծարանս քաղաքին Աթենայ՝ յի-
շատակ ատտէն առնել զսորա)։ Սոեն՝ ե-
թէ սա այս Ամփիկրատէս վտարանդի լեալ
ջրքաւ 'ի Սելևկիա 'ի սահմանս Տիգրիսի.
ուրանօր և աղաչեալ բանալ վարժարան,
նա յաւակնագոյնս ունչա առնէր և ասէր.
ոչինչ արդեօք մարթի դլբին ամփոփել 'ի
կոնքի։ Ապա անտի գնացեալ առ Կղեո-
պատրա դուստր Միհրդատայ՝ կին Տիգրա-
նայ, խնթացեալ զնմանէ՝ արդելին նմա
բան ոչինչ ունել ընդ Հելլենացւոց. և
անդանօր ապա յանսուաղութենէն մեռա-
նէր նա։ Սմա դարձեալ շքով թաղումն
տայր Կղեոպատրա մօտ 'ի Սափա շէն փո-
քրիկ՝ որում զայն անուն կարդային նմա։
Այլ Լուկուղղոս յայնժամ խաղաղու-
թիւն հաստեալ յԱսիա, և օրէնս 'ի նմա
սահմանեալ գեղեցիկս, յետ այնորիկ և
բերկրականաց և սփոփութեանց զհետ
կրթեցաւ, և 'ի սեսարանաց հանդէս և

յաշխարհատոնս յաղթականս և 'ի մրցանս ըմբշաց և մենամարտից. և կացեալ յԵ-փեսոս՝ ոմոփէր և յինքն յանկուցանէր զքաղաքն. իսկ և նոքա 'ի շուք առնն փոխարինէին զհանդէս տօնիցն՝ որ անուա-նեալ կոչին Լուկուղեանք. և սէր աննենդ 'ի նեղբս բերէին նմա՝ որ քան զշուք պա-տուոյն բերկրալի էր։

ԱՅԼ երբև դարձաւ եկն Ապպիոս, մարտ պատերազմի կարգեալ ընդդէմ Տի-գրանայ, չու արար Լուկուղղոս՝ անցանէր միւսանգամ 'ի Պոնտոս, և պաշարումն ա-ծէր Սինոպայ. մանաւանդ եթէ՝ Կիլի-կեցւոց արքունի որերոյն որ 'ի հնազանդու-թեան ունէին զքաղաքն, որք և ապա զբա-զումն 'ի Սինոպացւոց անտի հարեալ 'ի բերան սրոյ, և հրձիգ 'ի քաղաքն եղեալ դիշերագնաց փախստականք լինէին։ Իրա-զեկ եղեալ Լուկուղղոս՝ անդէն մոտանէր 'ի նեղբս, և 'ի սուր սուսերի մաշէր զմնա-ցեալս նոցա ոգիս ութ հազար. և առեալ դարձուցանէր առ Սինոպացիս զաստուածս նոցա, փոյթ գեղեցիկ կալեալ քաղաքին՝ յաւէտ ինն յանրջոց անտի զոր եառեալ։ Քանզի 'ի քուն թուէր նմա մոտել առ նա ուրումն և ասել այսպէս. "Վայր մի յա-ռաջ խաղասցես, ո՞վ Լուկուղղէ. աւադիկ դայ Աւտոլիւկոս խօսել ընդ քեզ,,։ Զար-թուցեալ 'ի քնոյն՝ ոչինչ խմանայր զելս երազոյն. ապա 'ի նմին աւուր առեալ զզ-քաղաքն և հետամուտ Կիլիկեցւոցն եղեալ ծովագնաց փախստականն, ոչ ասանէ անկեալ

առ ափամբն արձան, զոր ոչ ժամանեցին նոքա ամբառնալ 'ի նաւն։ Եւ էր այն գործ ճարտարագործ 'ի ձեռակերտացն Սթենի-դեայ. և ասէին՝ անդրի զայն լեալ Աստո-լիւկեայ հիմնադրին Սինոպայ։ Եւ պատ-մեն զայս Աստոլիւկոս որդի լեալ Դէիմա-քոսի և մի 'ի նիզակակցացն Հերակլեայ, որ 'ի Թեսաղիոյ խաղացին 'ի մարտ ընդ-դէմ Ամազոնաց. և անտի անցեալ ընդ Դէմողէոնտեայ և ընդ Փղոդեայ, հարեալ նաւուն 'ի վայր Քերրոնեսեայ՝ անուն Դե-տաղիոն՝ անդ խորտակէր. այլ ինքն զեր-ծեալ 'ի Սինոպ հանդերձ զինուքն և նի-զակակցօքն, 'ի ձեռաց հանէր Սիւրացւոց զքաղաքն։ Քանզի Սիւրացիք տիրացեալ իսկ էին նմա 'ի սերնդոց անտի գողով Սիւ-ռոսի՝ որդւոյն Ապողոնի՝ որպէս ասեն՝ և Սինոպեայ, որում մայր եկաց Աստվէ։ Զայսոսիկ ապա լուեալ Լուկուղղեայ, յուշ իւր բերէր զիսրատն Սիւղղայի որ 'ի Յիշատակագիրսն, եթէ ոչինչ այնպէս ար-ժանահաւատ համարել արժան է և հաս-տատուն՝ իբրու զաղդել անրջոցն։

Յետ այսորիկ լուր առեալ եթէ Մի-հրդատ և Տիգրան հանդերձեալ են արագ արագ խաղալ 'ի Լիւկոնիա և 'ի Կիլի-կիա՝ հորդան տալ նախ յԱսիա, հիացեալ յոյժ էր Լուկուղղոս ընդ Հայն՝ զի որ կը-ռուէլ յօժարեալ էր ընդ Հռոմայեցիս՝ 'ի ձեռն չէառ զՄիհրդատ մինչդեռ յոտին կայր այրն, և ոչ խմբեցաւ ընդ նմա՝ մինչ-դեռ յուժի կայր, այլ յոտանհարութեան

թողեալ զայրն՝ ապա երազայոյս ակնկա-
լութեամբն սկիզբն առնէր կռուոյն խար-
դաւանել և զիւր անձն 'ի վիհ ընդ անյարիր
անկելոցն։ Իսկ իբրև Մաքարէս որդի Մի-
հրդատայ իշխան Բոսփորոսի առաքէր
առ Լուկուլլոս պսակ հազար դահեկա-
նաց ոսկւոյ, աղաչէր դաշնաւոր և բարե-
կամ Հռոմայեցւոց լինել, եդ 'ի մտի Լու-
կուլլոս իբրև 'ի գլուխս զառաջինն զայն
տարեալ մարտ, և թողոյր անդէն զՍորնա-
սիոս ոստիկան քաղաքին հանդերձ վեց
հազար զօրականօք. և ինքն երկոտասան
հազար հետեւակօք և այրուձիով իբրև ե-
րեքհազար՝ չու արար խաղայր 'ի մարտն
երկրորդ, ոչինչ արդեօք ողջախոհ մտա-
ծութեամբ այնպէս դիմագրաւ 'ի մէջ
մարտիկ ամբոխից և 'ի մէջ բիւրաւորաց
այրուձիոյն, 'ի գաւառն ամբաւ՝ յանդգն-
դախոր գետոց ամրափակ և 'ի միշտ ձիւ-
նախաղաղ լերանց. որ զի և զօրականն
ինքնին՝ ոչինչ այնչափ հլուք յայլ արշա-
ւանս՝ դժգոհեալ էին և խլրտէին։ Բայց և
'ի Հռոմ բողոք ընդդէմ նորա բարձեալ
Ճարտասանք խուժանին, ասէին՝ մարտից
'ի մարտս անցանել նմա ոչ 'ի պէտս ինչ
քաղաքին, այլ զի ցանգ զզօրավարութիւն
խնդրէ դա զբանակի, և 'ի բաց զզէնսն դնել
չկամի, և միշտ օգտաձարաւ է առ 'ի հա-
սարակացն վտանգից։ Այլ սոքա յետ ժա-
մանակաց գամագիւտ գտան ընդդէմ նորա։

Արդ ուղի արահետ կալեալ Լուկուլ-
լոս՝ վաղվաղակի հասանէր գայր յափն

Եւփրատայ, և անդ գետն լցեալ դարիւ և դարիւ գնայր պղտոր 'ի պատճառս ձմեռայնոյն. վարանեցաւ Լուկուղղոս եթէ ժամավաճառութիւն և քիրան մեծապէս հասցէ նմա առնուլ կապել նաւակս և լաստս և կամուրջ գործել։ Բայց յերիկունն անձկացեալ հոսանացն, և գիշերի նուազեալ յոյժ, զի և յառաւօտուն ծագել պարագրեալ 'ի գոգին երևէր գետն. և գաւառականքն կղզեակս իմն ակնարկեալ 'ի ծոց նորա՝ առ որով երթեալ ընթանայր ջուրն, շուք շատ հարկանէին Լուկուղղեայ, զի և դուն ուրեք երբէք պատահեալ գիտէին յայնպիսեաց անսի յառաջագոյն. և զի՝ և գետն ինքնին գլխովին կամակար խոնարհեալ հեզացաւ և անցս անաշխատ և արագ դիւրեաց նմա։ Եւ այնպէս ապա յաջողեալ անցանէր Լուկուղղոս հանդերձ բանակաւն, և նշան ևս յայնժամ տեսանէր բարեգուշակ։

Անդանօր 'ի շրջակայսն էին արօտական երինջք նուիրականք Արտեմեայ պարսկականի. զայն դիցուհի պաշտեն բարբարոսք բնակաւորք յայնկոյս Եփրատայ։ Եւ զայն երինջսն առնուն նոքա առ 'ի զոհ միայն, թողեալ այնպէս 'ի դաշտին աբձակս թափառականս, խարանեալ 'ի նոսա խարան ղդիցուհւոյն՝ ջահ մի. իսկ ունել 'ի նոցանէ առ 'ի զոհ ոչ հեշտին ինչ է։ Արդ՝ մի յերինջոց անսի յետ անցանելոյ զօրուն դնացեալ ելեալ 'ի վեր 'ի վեմ մի նուիրական դիցուհւոյն, անդ զկայ առեալ և

զդլուխն խոնարհեցուցեալ՝ իբրու եթէ 'ի փոկոյ իմէքէ թեքեալ պարանոցին, ինքնանուէր այնպէս կայր 'ի զոհ Լուկուղղեայ։ Նա առեալ յազէր յայնժամ և ցուլ մի ևս 'ի զոհ Եփրատայ 'ի շնորհս գեղեցիկ անցիցն։ Ուր և խորան հարեալ յաւուր յայնմիկ, յերկրորդումն ապա ջուառնէր խաղայր ընդ Սովիենէ՝ յանդորրու պահեալ զժողովուրդն անձնատուր և հիւրընկալու բանակին։ Բայց զօրականն խընդրէր անդանօր հասանել ունել գղեակ մի, ուր կարծէին գանձ բաղում. իսկ Լուկուղղոս մատնանիշ նոցա զլեառն արարեալ զՏաւրոս որ 'ի բացէ, ասէր. "Մանաւանդ որ անդանօր զդղեակն պարտ է մեզ հասանել ունել. զի որ աստանօր մթերեալքն՝ վասն յաղթականացն են"։ Ասաց, և շտապ ուղղոյն տուեալ և անցեալ ընդ Տիգրիս, եկն մխեցաւ 'ի Հայաստան աշխարհ։

Յայնժամ որ առաջին գոյժ առ Տիգրան տայր վասն յառաջագէմ չուոյն Լուկուղղեայ, պատուհաս ընդունէր գըլխատմամբ 'ի հրամանէն Տիգրանայ. ուստի և ոք ամենևին ոչինչ այնուհետև իրազեկ առնէր զնա, այլ այնպէս անգէտ բռնեալ նստէր նա՝ շուրջ զհրդեհն ունելով զմարտին, շնթեալ 'ի բանից շաղաւաշուրթն մարդկանն, որ ճառ արկեալ ասէին. Արդեօք զօրավար քաջ ելցէ Լուկուղղոս, եթէ երբէք ժամացի մնալ Տիգրանայ անդէն Յեփեսոս, և ոչ մանաւանդ արագ 'ի փա-

խուսաւ խուճապեսցէ զա յԱսիոյ 'ի զնին այնչափ բիւրաւորաց թշնամեացն։ Վասն որոյ և գեղեցիկ է ասել, եթէ զոր օրինակ ոչ ամենայն մարմնոյ է անապակ շատ քամել և բերել, սակայն և ոչ ամենայն մտաց՝ ողջախոհ ունել զմտածութիւնն 'ի յաջողութիւնս մեծամեծս։

Ապա յայնժամ Միթրոբարզան առաջին 'ի բարեկամն նորա իշխեաց ասել նմա զՃշմարիան. այլ ոչ և մրցանակ գեղեցիկ ինչ տարաւ նա զհամարձակութեանն. քանզի անդէն զնա ինքն առեալ արձակէր Տիգրան ընդդէմ Լուկուղղեայ երեքհազար այրուձիով և անթիւ հետևակօք, պատուէր տուեալ կենդանւոյն ունել զզօրավարն, և զմնացեալսն 'ի սուր սուսերի մատնել։ Այն ինչ զօրք Լուկուղղեայ կէս մի բանակ հարեալ էին, և կէս մի ժողովեալք խմբէին, լուր 'ի լրտեսացն հասանէր հրամակի բարբարոսին. զահի հարաւ Լուկուղղոս՝ եթէ շտապաւ 'ի վերայ անկեալ վեր 'ի վայր գործեսցէ, մինչև զօրականին իւրոյ առհասարակ խմբեալ ճակատեալ եցէ։ Ապա ինքն զտեղի առեալ ամբրուութիւն ածել բանակին, առեալ գունդ հատանէր ընդ Սեքստիլեայ տեղապահին՝ հազար և վեցհարիւր այրուձիոյ, և ոչ բազմագոյն այլ ևս հետևակ և թեթևազէն զօրականին. հրաման տայր մոտ առ թշնամին զտեղի առնուլ՝ մինչ ինքն առհասարակ զիւրան խմբեալ ամրացուսցէ 'ի բանակին։ Թէպէտ և հրամանին Լուկուղղեայ ան-

ասցեալ Սէքստիլիոս, սակայն ստիպեցաւ 'ի վեգ ընդ Միթրոբարզանայ գալ՝ որ յանդգնաբար հորդան էտ. ուրանօր և խառնեալ մարտին, անդ նահատակեալ տապաստ անկանէր Միթրոբարզան, և զօրքն Թիկնադարձոյցք առհասարակ կոտորէին բայց 'ի սակաւուց ոմանց։

Հարուած զայս առեալ՝ Թողոյր Տիգրան զՏիգրանակերտ քաղաք մեծ զդաստակերտ իւր, և վերջոտնեալ գնայր 'ի Տաւրոս. և անդր 'ի կողմանց կողմանց գային ժողովէին առ նա ամենայն զօրք նորա։ Բայց Լուկուղղոս ոչ ժամ տուեալ նմա պարապոյ, խորհուրդ առեալ արձակէր ստիպաւ զՄուրենաս խոչ ընդ ոտն լինել հարկանել՝ որք 'ի չու անկեալ գնային առ Տիգրան. առ այս՝ և զնոյն Սէքստիլիոս միւսանգամ արձակէր գնալ վանել զստուար գունդ զԱրաբացւոցն, որոց դէմ եդեալ էր առ արքայն։ Ապա ասէր Սէքստիլիոս անկեալ 'ի վերայ Արաբացւոցն՝ մինչդեռ զնորանն հարկանէին՝ 'ի սուր սուսերի մաշէր զբազումն 'ի նոցանէ. և անդուստ Մուրենաս զհետ մտեալ Տիգրանայ՝ անկանէր և նա 'ի վերայ 'ի դէպ ժամուն, մինչդեռ նա անկարգ ամբոխիւ անցանէր ընդ ձոր մի դժուարին և անձուկ։ Անդանօր 'ի փախուստ խուճապեցաւ Տիգրան, և Թողոյր լքանէր զամենայն աղին. և բազումք 'ի Հայոց տապաստ անկեալք, և բազումք ևս 'ի գերութիւն վարեցան։

Իբրև այս կատարեցաւ՝ ժողովեալ Լու-

կուլլեայ զբանակն, դէմ եդեալ խաղայր
'ի Տիգրանակերտ. անդ պաշարումն ա-
ծեալ շուրջանակի առկայացուցանէր զամ-
բոխ զօրուն: Էին անդ 'ի քաղաքին բա-
զումք 'ի Հելլենացւոց բնակաւորք գաղ-
թականք 'ի Կիլիկիոյ, և բազումք ևս 'ի
բարբարոսաց՝ ըստ Հելլենացւոցն օրինակի
Արաբինացիք և Ասորեստանեայք և Կոր-
դուացիք և Կապադովկացիք, զորոց և զՀայ-
րենիսն քանդեալ՝ անդանօր զնոսա ածեալ
էտ գաղթել Տիգրան: Եւ էր քաղաքն ըն-
չաւէտ յոյժ և զեղուն 'ի զարդս զարդս
ձօնից. քանզի և այր այր սոսկական և որ
միանգամ 'ի նախարարաց՝ սատար էին 'ի
շուք մրցանաւոր ընդ արքային՝ բարգաւաճ
և հոյակապ յարդարեալ զքաղաքն զայն.
այր աղագաւ և Լուկուլլոս պաշարումն
սաստիկ ածեալ 'ի նեղն արկանէր, զմնաւ
ածէր՝ եթէ ոչինչ արդեօք հանդարտեա-
ցէ Տիգրան, այլ և յակամայս 'ի սրտմտու-
թիւն բերեալ՝ ինքն 'ի կռիւ մարտին. և
քաջիկ զայս զմնաւ ած Լուկուլլոս:

Բայց յայնժամ Միհրդատ 'ի ձեռն
հրեշտակաց՝ դարձեալ և նամականեաւ
առէպ 'ի բաց 'ի մարտէն քեցէր զՏիգրան.
և ասէր՝ այրուձիով միայն կալ և կուրա-
ցուցանել զանցս Ճանապարհաց կերա-
կրոյն. և ինքնին ևս Տաքսիղէս յայնժամ
գնացեալ առ Տիգրան և զենուորեալ՝ ա-
ղաչէր անձնապահ 'ի զենուց անտի Հռո-
մայեցւոց լինել խրև յանվանելեաց: Զա-
ռաջինն հեզաբար լսէր խրատուն Տիգրան.

իսկ իբրև խմբեցան առ նա առհասարակ զինուորութիւնք Հայոց և Կորդուացւոց, գարձեալ և զիւրեանցն զինուորութիւն առհասարակ ածին կացուցին թագաւորք Մարաց և Ադաբիացւոց, առ այսոքիւք՝ և յԱրաբացւոց անտի գունդք եկին հասին առ նա 'ի ծովեզերեայց Բաբիլոնի, բազումք և 'ի Կասպից և 'ի Վրաց՝ սահմանակիցք Աղուանից, ոչ սակաւք և 'ի բնակաւորացն Երասխայ անթագաւորք՝ եկին հասին կամ զի 'ի շնորհս ինչ երեսաց Տիգրանայ, կամ զի անդր դրդեցան 'ի պարգևաց ընծայից, անդ էր ապա տեսանել զի առհասարակ կոչունք և բազմականք արքային և ժողովք և ատեանք խորհրդոց լի էին 'ի յոյս ակնկալութեանց և 'ի յանդգնութիւնս գոռութեանց և 'ի բոհմունս սպառնալեաց բարբարոսացն։

Եւ անդ Տաքսիղէս ինքնին զդէմ դարձեալ խորհրդոյ պատերազմին, 'ի վտանգ պաշարեցաւ մահու. և կարծեցաւ իմն անդ այնպէս՝ 'ի բաց զՏիգրան քեցել Մի-հրդատայ 'ի մեծէ նահատակութենէ առ խանդ նախանձուն։ Ուստի և Տիգրան ոչ ինչ եկաց մնաց նմա, զի մի հասարակորդ 'ի փառան լինցի. հորդան ետ խաղաց գնաց ամենայն բանակաւն, մեծապէս դժուարեալ յանձն՝ որպէս պատմեն՝ առաջի բարեկամացն, իբրև ընդ Լուկուղղեայ միայնոյ 'ի վեդ եղեալ մարտնչի, և չեն անդ մօտ միահամուռ ամենայն զօրավարքն Հռովմայեցւոց։ Եւ արդեօք ոչ գոռութեան

ինչ էր բարբառն և անբանութեան, որ Ժողովուրդ ամբաւ և Թագաւորս այնչափ յակն արկանէր զհետ իւր և բազմակոյտ անԹիւ հետևակաց ողջ սպառազինաց, և բիւրաւորս բազումս այրուձի գնդաց։ Քանզի առեալ խաղացուցանէր երկուս բիւրս ընդ աղեղնաւոր և ընդ պարսաւոր. իսկ այրուձի հինգ բիւրս և հինգ հազար. բիւր մի և եօԹն հազար 'ի նոցանէն էին պատենազէնք վառեալք, զոր և Լուկուղղոս ինքնին գրեաց առ Սինկղիտոսն. իսկ հետևակաց վառելոց հնգետասան բիւր. կէսք կարգեալք 'ի գունդս գունդս, և կէսք գարձեալ՝ 'ի փաղանգս փաղանգս. առ այսոքիւք՝ երեսուն և հինգ հազար ևս որեար՝ ուղեհորդս և կամրջակապս և գետայարդարս և մայրահատս անտառաց և յամենայն 'ի գործս պիտանացուս. ոլք և կարգեալք կազմեալք յետոյ մարտկացն, տեսիլ գործէին ողջոյն բանակին և ոյժ ևս պնդութեան էին նոցա։ Հորդան տուեալ անցեալ ընդ Տաւրոս միախումբ միահամուռ, հանէր յերևան զողջոյն բանակն. և ինքն 'ի բարձանց գագաԹանց գէտակն կալեալ տեսանէր զՀռոմայեցւոց զօրն 'ի պաշարման կացեալ Տիգրանակերտին։ Իսկ անդուստ խուժանին բարբարոսաց որ 'ի քաղաքին՝ ձայն հնչէր ցնծութեան 'ի տեսանել զնա, ծափ զծափի հարեալ կայԹէին, և 'ի պարսպաց անտի սպառնալիս 'ի վերայ կապեալ Հռոմայեցւոց՝ մատնանիշ առնէին նոցա զբանակն Հայոց։

Աբդ մինչև 'ի մարան ձեռնամուխ՝ 'ի խորհուրդ մտեալ Լուկուլլոս, կէաք թողուլ ասէին ողջոյն զպաշարումն և խաղալ ընդդէմ Տիգրանայ. և կէաք դարձեալ մի ամենևին տեղի տալ և մի 'ի թիկանց զդունդ պաշարելոցն ունել։ Իսկ Լուկուլլոս ասէր, եթէ և ոչ մի կողմն ուրոյն առանձինն գեղեցիկս խորհեցաւ. այլ միանգամայն նոքա խորհուրդ քաջ 'ի նեբքս բերեն. ապա բաժանէր զբանակն, թողոյր զՄուրենաս անդէն 'ի պաշարմանն վեց հազար հետևակօք. և ինքն առեալ գունդս քսան և չորս՝ ոչինչ առաւել քան զբիւր մի հետևակաց և ողջոյն զայրուձիոյ, և արանց ևս հազարաց ընդ պարսաւոր և ընդ աղեղնաւոր, դիմեաց խաղաց ընդդէմ Տիգրանայ։ Ապա բանակ հարեալ առ գետոնն յընդարձակ դաշտի, յոյժ սակաւաձեռն երևէր Տիգրանայ գունդ հռոմայեցւոցն. յորմէ և պատճառս առեալ ծաղու՝ մարդելոյզք նորա կէաք ունչս առնէին Լուկուլլեայ, և կէաք դարձեալ՝ ընդ խաղ վնձակ հանէին զաւարացն։ Եւ անդ այր այր 'ի զօրավարացն և մէն մի յարքայից մատուցեալ առ Տիգրան՝ խնդրէր 'ի նա ապաստան զմարան առնել, ինքն 'ի զնին կացեալ հանդիսին։ Նա և Տիգրան ինքնին յայնժամ հենգնախօս զկծեալ, զհամբաւեալն ասաց բան. "Եթէ իբրև դեսպանք՝ ասէ՝ գան դոքա, բաղումք են. ապա եթէ իբրև զօրականք՝ նուազունք են"։ Այսպէս ուրեմն 'ի ժամանակին յայնմիկ 'ի բա-

նից հեգնութիւնս սփոփէին նոքա առհասարակ

Այլ Լուկուլլոս յաւուրն երկրորդի 'ի բանակէն արտաքս խաղացուցանէր առհասարակ զզօրն 'ի զէն 'ի զարդ վառեալ. իսկ բարբարոսացն բանակ կայր յայնկոյս գետոյն ընդ արևելս. և գնայր անդ գետն և դառնայր յարևմուտս կոյս, ուրանօր հեշտին էր հունն. անդր ստիպաւ Լուկուլլոս ածեալ զզօրականն, թուեցաւ ինն այնպէս Տիգրանայ՝ ընդ կրունկն դառնալ նմա, և առ ինքն զնոյն Տաքսիլէս կոչեալ՝ ասէր ծաղու. "Ո՞չ իսկ տեսանես դու 'ի փախուստ զՀռոմայեցիսն դարձեալ զանկռուելիս"։ Եւ պատասխանի Տաքսիլէս և ասէ. "Կամէի իսկ քաջ ոմ արքայ, 'ի քումդ բախտէն լինել բանիդ արտաքոյ ակնկալութեան։ Բայց արքդ Հռոմայեցիք ոչ արդեօք հանդերձ պայծառ արկանեն զանձամբ յուղևորել իւրեանց, և ոչ դարձեալ վահանս 'ի գործ առնուն փայլունս, և ոչ գլխանոցս արկանեն մերկս՝ իբրու զայժմուս՝ 'ի բաց զպատիպանակն զենուց առեալ զկաշեայ։ Արդ շողունդ այդ և փայլունն՝ արանց մարտկաց է, և խաղան գոքա աւադիկ ընդդէմ թշնամեաց"։ Այն ինչ բանքն 'ի բերան Տաքսիլեայ էին, անդուստ երևեցաւ առաջին արծիւ Լուկուլլեայ դարձեալ յառաջոյ գնդացն՝ որ կարդ առեալ մի ըզհետ միոյ անցեալ խաղային։ Ապա հաղիւ ուրեմն Տիգրան իբրև յարբեցութենէ ի-

մեռեալ սթափեալ, ձայն բարձեալ կրկնէր և երեքկնէր. «Արդ ընդդէմ մեր ուրեմն արքդ այդոքիկ»։ Եւ յայնժամ 'ի շտապ մեծի տագնապի կարդ առեալ անբաւ խուժանին իւրոյ, ինքն 'ի միջոցին արձանացեալ, առեալ տայր զձախոյ թևն արքային Ադաբիացւոց, և զաջոյն՝ արքային Մարաց, յորում և յոգնաթիւ ճակատեալ պատենազէն այրուձիոյն։

Իսկ յանցանել Լուկուղղեայ ընդ գետն, ազդ լինէր նմա 'ի զօրապետացն զգուշանալ աւուրն. զի էր իսկ 'ի վատահատար աւուրց անսի՝ զոր անուանեալ կարդային Սէաաա, զի և 'ի նմին աւուր հարեալ խորտակեցաւ բանակ Սկիպիոնի 'ի մարտին Կիմբրացւոց. նա ետ պատասխանի զհրաշակերտին բան, «Ես և զդոյն զայդ օր՝ ասէ՝ բարեբաստիկ յարդարեցից Հռոմայեցւոց». Եւ էր օրն առաջին քան զմի Նոնայիցն Հոկտեմբերի։ Ասաց և իրախոյս բարձեալ՝ անցանէր ընդ գետն. ինքն նահատակեալ խաղայր առաջին ընդդէմ թշնամեացն, արկեալ զանձամբ զրահս երկաթի փայլունս վերոս, և քղամիդ փողփողեալ 'ի վերջաւորս, և մերկապատեան զսուրն ձգէր շողացուցանէր, իբրու արագ արագ ընդ հեռամարս մարդկանն խառնել 'ի կռիւ, արշաւասոյր առ ձեպ հատեալ զանջրպետ զվայրն զնեռընկէց և զարդնընկէց։

Այլ նա դէտակն 'ի վեր տեսեալ զայրուձին պատենազէն ահեղ և երևելի՝ ձա-

կատեալ առ սգորոտով բլրին և 'ի վերոյ նորա հովիտ լայնարձակ, և բլուրն զառ 'ի թափ չորս ասպարիսաց՝ ոչինչ սեպացեալ և առապար, հրաման տայր այրուձիոյն թրակացւոց և գաղատացւոց՝ խաղալ հարկանել զնոսա 'ի կողմանէ, շարժել դրդել զնոսա 'ի վայրացն, և վանել սուսերօք ըզգեղարդունս նոցա. քանզի և զօրութիւն բոլոր պատենազէն այրուձիոյն է 'ի գեղարդունս նոցա, և առանց նոցա գործեն նոքա և ոչինչ՝ ոչ 'ի պաշտպանել անձանց և ոչ 'ի վնասել թշնամեաց, զի և 'ի յաղթ և յահագին պատենից անտի իբրև նեղեալք պաշարեալ կան նոքա. և ինքն փութայր ձեպէր 'ի բլուր անդր երկու գնդօք հետևակաց՝ մոտաղիւր նահատակեալք ըզհետ նորա, որ հետի յառաջոյ նոցա ընթանայր մեծաքիրտն աճապարեալ ելանել 'ի վեր: Հասեալ 'ի կատար անդր, զկայ առեալ՝ ուստի յամենայն կողմանց երևէր, ձայն բարձեալ գոչէր. "Յաղթեցաք յաղթեցաք ո՞վ նիզակակիցք,,. Գոչէաց և առեալ խաղացուցանէր զնոսա 'ի վերայ սպառազինացն, հրաման տայր մի՛ շարժել նիզակս, այլ գոռոյթ տուեալ մօտ առ թշնամին հարկանել խոցել զսրունս նոցա և զկողս. զի պատենազէն այրուձիոյն այս մասունք անսպատեանք են:

Այլ չեղեն պէտք իրացն, զի ոչ քաջացան նոքա զդէմ Հռոմայեցւոցն ունել. աղաղակ բարձեալ ահագին՝ նշաւակեալք 'ի փախուստ դառնային, յորում և ընդ-

հարեալ բախեալ յաղթահարուստք նոցա և երիվարք նոցա 'ի զէնս 'ի զարդս հետևա-
կազօրուն՝ մինչև նոցա 'ի կռիւ կաքաւեալ, զի և բիւրաւորք նոցա յայնժամ անվէրք
և անարիւնք նկուն եղեալք պարտեցան. զի հարուած ահագին կոտորածին պատա-
հեցաւ 'ի փախչել նոցա, մանաւանդ եթէ և 'ի խուճապել. քանզի արգելեալ կա-
ռեալ մնացին յամբաւից անտի հետևա-
կացն, որ կուռ միագունդք ստուարա-
գունդք քաջամուր արձանացեալ կային։
Յայնմ մեծի տագնապին և Տիգրան ինք-
նին 'ի փախուստ ածապարեաց ընդ սակա-
ւուց ոմանց. անդ 'ի նոյն տագնապ տե-
սեալ և զորդին, կորզեալ զպսակն 'ի գլուխ-
նոյն տայր 'ի նորա ձեռս արտասուօք, պա-
տուէր տուեալ անձնապուր լինել ընդ այլ
ճանապարհ։ Ոչ իշխեաց պատանին 'ի
գլուխս դնել, յանձն առնէր զայն հաւա-
տարիմ իւրում պաշտօնէին յաւանդ. իսկ
ինքն 'ի խուճապ խուժանին ձերբակալ ա-
ծաւ առ Լուկուլլոս, և ապա ընդ ան-
կածս մարտին գտաւ և պսակն Տիգրանայ։
Եւ պատմեն՝ տասն բիւրուց հետևակաց և
աւելի՝ անդանօր տապաստ անկանել, և
սակաւուց այրուձիոյն ճողոպրել փախըս-
տեամբ. իսկ 'ի Հռոմայեցւոց խոց վիրա-
ւոր մնալ արանց հարիւրոց, և դիտապատ
անկանել՝ հնգից։ Որպէս և Ամոնիոքոս ի-
մաստասէր յիշատակ արարեալ մարտին
այնմիկ 'ի դիցաբան յիւրում մատենին ա-
սէ. Հանգունատիպ այսմ երբէք չէտես

արեգակն։ Իսկ Սորաբոն միւս այլ խմաստասէր 'ի պատմական յիշատակարանն ասէ. Հռոմայեցւոց ինքնին անձնանախատ զամօթի հարկանել, զի զէնս շարժեցին ընդդէմ այնպիսի վատ որերոյն։ Իսկ Լիվիոս ինքնին գրէ, երբէք Հռոմայեցւոց ոչ ճակատել այնչափ սակաւաձեռն գնդաւ ընդ այնչափ խուժանի թշնամեացն. քանզի յաղթականք առ յաղթեցեալսվքն յայնժամ և ոչ քաներորդ հաշուեցան, այլ պակաս ևս։

Բայց յայնժամ քաջք 'ի զօրավարացն Հռոմայեցւոց և հմուտք մարտից մեծապէս 'ի գովութիւն առին զԼուկուղղոս, զի արքայս կրկին երևեալս և մեծս 'ի պարտութիւն մատնեաց ներհակաբար հանդիսիս, արագ և յուշիկ. քանզի ժամավաճառութեամբ դեգերեալ վատնեաց զՄիհրդատ 'ի քաջառոյդ ուժին, և շտապաւ արագեալ՝ նկուն արար զՏիգրան. 'ի վար արկեալ՝ որպիսի և ոչ ոք թերևս յառաջնոց զօրավարացն՝ ժամավաճառութիւն ազդոյ, դարձեալ և դիմադրաւութիւն ընդերկեան։ Ոյր աղագաւ և Միհրդատ ինքնին ոչինչ ճեպեաց փութացաւ 'ի կռիւն, զմտաւ ածեալ՝ եթէ ընդաբոյս անձնապահ դանդաղանօքն խաղացէ Լուկուղղոս. ուստի և ինքն յուշիկ ընթանայր առ Տիգրան։ Սակայն յուղղոջ պատահեալ ինքն Հայոց ահաբեկ փախստէից, կասկածեցաւ զբրէն. և ապա միւսանգամ բազմութեան խուժանին ընդառաջ ելեալ նմա մերկոց

և վերաւորաց, և լուր առեալ զմեծի հաղորդածոյն, պնդեցաւ խնդրել զՏիգրան։ Ապա գտեալ զնա ամայի յամենեցուն միջաբեկ յուսակտուր, ոչինչ ոտնհար և ինքն լինէր հիքացելոյն, այլ իջեալ յերիվարէն, ախտակից արտասուակից լինէր հասարակաց աղէտիցն. զանձնապահպետան իւր զարքունի տայր նմա, և քաջալերէր և խրախոյս 'ի ներքս բերէր նմա 'ի յոյս հանդերձելոցն. և ապա երկոքին նոքա միւսանգամ զօրաժողով լինէին։

Իսկ յայնժամ 'ի Տիգրանակերտ քաղաքի խռով հարեալ ընդ Հելլենացիս և ընդ բարբարոս, և խնդրեալք մատն լինել քաղաքին, 'ի դէպ ժամուն գոյթ տուեալ քաղաքին Լուկուլլոս, տիրանայր նմա։ Առնոյր զգանձն արքունի, և թողոյր զքաղաքն յառ և յապուր զօրականին. անդանօր՝ թո՛ղ զայլ ընչաւէտութիւնն, գտանէին և ութ հազար քանքար դրամոց հատելոց. առ այս դարձեալ՝ առն առն 'ի զօրականէն բաշխէր տայր ութ հարիւր դրամակշիռ յանկածէ թշնամւոյն։ Իրազեկ ապա եղեալ՝ զի ձերբակալ եղեն անդ բազումք 'ի դերասանից խաղուցն Դիոնիսեայ, զորս 'ի կողմանց կողմանց անդր խաղացոյց Տիգրան 'ի տօն նուիրաց թատրոնին՝ զոր ինքնին Տիգրան կանգնեաց, զնոսա առեալ Լուկուլլոս վարէր 'ի հանդէս խաղուց և տեսարանաց իւրոյ յաղթութեանն։ Ապա 'ի սեպհական հայրենիսն առեալ արձակէր զՀելլենացիսն՝ տուեալ պաշար զճա-

նապարհին. զնոյն՝ և զբարբարոսան զբը-
նադատ գաղթականն։ Եւ այնպէս յաւէ-
րածոյ միոյ քաղաքի շատք 'ի քաղաքաց
յոտին կանգնեցան բնակեալք 'ի բնակա-
նուն բնակչացն, որք և մեծապէս սիրով
կապեցան ընդ Լուկուղղեայ, իբրու որ
բարեգործ նոցա և հիմնադիր։ Եւ ապա
այլն ամենայն յաջողէր Լուկուղղեայ ըստ
արժանի անձին նորա. բայց նա ըղձակաթ
էր գովութեանց արդեանցն՝ որ յարդա-
րութենէ անտի և 'ի մարդասիրութենէ,
քան որ 'ի մարտից նահատակութեանցն.
քանզի 'ի վերջինագ ոչ գուշնաքեայ ինչ
հասարակորդ է և զօրականն ինքնին, և մե-
ծապէս ևս՝ բախտն գլխովին. իսկ առա-
ջինքն՝ հեզ և հրահանգ հոգւոյն հաւաս-
տիք են։

Այսպիսեաք բարեզգեաց հանդիսիք
անզէն նուաճէր յայնժամ Լուկուղղոս
զնուժագուժան, էկեալ հասեալ առ նա
ինքնին և արքայից Արաբացւոց տալ նմա
'ի ձեռս զամենայն իսկ զգոյս իւրեանց.
առ այս՝ և ժողովուրդ Սովփինացւոց անձ
նատուր նմա լինէր։ Բայց և Կորդուացիք
այնպէս ինն սիրեցին զնա, զի և մատդիւ-
բադոյնս թողուլ լքանել զքաղաքն և ըզ-
հետ երթալ նորա հանդերձ որդւովք և
կանամբք։ Քանզի Զարբիէնոս արքայ Կոր-
դուացւոց՝ ըստ որում և ասացաքն՝ գաղտ
նիզակակցութիւն կռեալ էր ընդ Լու-
կուղղեայ 'ի ձեռն Ապպիոսի, ոչ ևս հան-
գուրժեալ բերել զբռնաւորութիւն զՏի-

գրանայ. որում իրազդած Տիգրան եղեալ՝ տայր սպանանել զԶարբիէնոս և զորդիս նորա և զկին նորա՝ մինչև Հռոմայեցւոցն հորդան տուեալ էր 'ի Հայս։

Ապա Լուկուղղեայ ոչինչ մոռացօնք եղեալ, անդէն հասեալ առ Կորդուացիսն՝ հանդէս կատարէր յուղարկաւորութեան Զարբիէնեայ. և պաճուճեալ զնարոյկ նորա 'ի հանդերձս պատուականս և յոսկի նորուն իսկ արքային և յանկածս աւարացն Տիգրանայ, ինքնին առեալ հուր մատուցանէր և ձօն ձօնէր նուիրաց 'ի միասին ընդ բարեկամաց և մերձաւորաց սպանելոյն. և կարգայր զնա իւր ընկեր և նիզակակից Հռոմայեցւոց. առ այս՝ և հրաման տայր կանգնել նմա շիրիմ հոյակապ անխնայ 'ի ծախսն. քանզի և եգիտ իսկ մթերս սասակ ոսկւոյ և արծաթոյ յարքունիսն Զարբիէնոսի. և ամբարս ևս ցորենոյ երից հարիւրոց բիւրուց գրուաց, յորմէ և լիացան յօրացան զօրականք։ Եւ աքանչացաւ մեծապէս Լուկուղղոս, զի և ոչ գրամակշռով չափ 'ի հասարակաց գանձարանէն՝ 'ի նմին իսկ 'ի մարտէն 'ի գլուխս տարաւ ըզմարտն։

Յայնմ ժամանակի և Արքայն Պարթևաց հրեշտակութիւն առաքեալ առ Լուկուղղոս՝ հրաւիրէր կռել գաշն և բարեկամութիւն. մեծապէս հաճեալ Լուկուղղոս՝ արձակէր և ինքն հրեշտակս առ արքայն. որոց գնացեալ՝ 'ի վարանս տարակուսի գտանէին զնա. քանզի գաղտաբար

գաշինք էին նորա և ընդ Տիգրանայ. խընդրէր 'ի նմանէ զՄիջագետս 'ի փոխարէն օգնականութեան ձեռինն՝ զոր խոստացեալ նմա։ Ազդ Լուկուղղեայ եղեալ բանին, եդ 'ի մտի թողուլ զՄիհրդատ և զՏիգրան՝ իբրու վատեալս ոմանս, և փութ զզօրութեանն փութալ Պարթևաց 'ի մարտ պատերազմի. զմոտաւ ածէր՝ մեծաց հանդիպել փառաց, կուռ զհետ միմեանց իբրու ըմբիշ քաջ 'ի մի թափ մարտի զդէտ նեալ արքայս երիս՝ յաղթական որ ընդ արեգակամբս երից վերհագունիցն արանց։ Ապա հրաման արձակէր 'ի Պոնտոս առ Սորնատիոս և առ այլս 'ի զօրավարացն՝ ածել խաղացուցանել առ նա զզօրականն. քանզի կամէր 'ի Կորդուաց անտի խաղալ 'ի վերնագաւառ անդր։ Բայց նոքա և յառաջնմէ գիտակք ստահակութեան զօրականին, իսկ յայնժամ և համօրէն 'ի վերայ կացին ապերասան լրբութեան նոցա. ոչ ինչ ձեռնհաս եղեն հնազանդել ոչ հաւանողական բանիւք և ոչ սպառնալեաց և ոչ բռնութեամբ. նա և բոլոր բառնային նոքա՝ և ոչ անդէն կալ մնալ, այլ յառնել չու առնելլքեալ ամայի զՊոնտոս։ Զհամբաւի հարեալ բանին առ Լուկուղղոս՝ ստերիւրեցան և նորա զօրականք. քանզի և յընչաւէտութենէն և 'ի փափկութենէն գրգացեալ իսկ էին և 'ի կռիւն յուլացեալք. ինդրէին կեանս վարել պարապորդս. ապա և զհամարձակաձայն բարբառն լուեալք զզօրականին Պոնտոսի՝ իբ-

րու արա քաջս առեալ գովէին զնոսա և զանձինս ևս 'ի նոյն խառնէին. իբրև շատ իսկ 'ի ներքս բերին նոքա նահատակութիւնս, զի և այնուհետև ըստ արժանի յանդորրու կացցեն։

Յայսպիսեաց բանից և որ չար ևս՝ լուեալ Լուկուղղեայ, յետս կացեալ 'ի խորհրդոյն ընդդէմ Պարթևաց, անդրէն միւսանգամ չու առնէր խաղայր գնայր ընդդէմ Տիգրանայ 'ի խոր ամարայնի։ Անցեալ ընդ Տաւրոս, տարակուսէր յանձն՝ զի դեռ ևս դալարի զարտորայսն տեսանէր. այնպէս իմն 'ի սահմանն յայնոսիկ անագանեալ աեսանին եղանակք 'ի ցուրտ օդոց վայրացն։

Ապա ելեալ 'ի վայր երկիցս և երիցս 'ի փախուստ դարձուցանէր զՀայս՝ որ 'ի դիմի հարան նմա. և արձակ արձակ աւարէր զաւանս նոցա, և այնպէս 'ի բաց 'ի նոցանէն զամբարսն հանեալ զՏիգրանայ, 'ի նոյն՝ յորմէ ինքն խլեալ՝ 'ի կարօտութեն զիշնամին արկանէր։ Այլ քանզի ստէպ ստէպ ասպարէզ կարդալով մարտի, և փոս և խրամ հատեալ զնոցա բանակաւն, առայս՝ և ակն յանդիման նոցա յաղարտ ըզգաւառն վարելով, իբրև ոչինչ կարաց զնոսա 'ի Ճակատ հանել, զի բազում անգամ հարան 'ի նմանէ. ժողովեալ զամենայն զբանակ իւր դէմ եդեալ խաղայր ՅԱրտաշատ յարքունիսն Տիգրանայ, ուր և էին նորա տղայ մանկունք իւր և տիկնայք. զմտաւ ածէր եթէ ոչինչ հանդար-

տեալ ժուժեացէ Տիգրան անդիմամարտ թողուլ զնոսա։

Եւ պատմեն՝ Աննիբաղայ Կարքեդոնացւոյ յետ հարուածոյն Անտիոքոսի 'ի Հռոմայեցւոց՝ յառնել գնալ առ Արտաշէս Հայ, և անդ շատ ինչ 'ի պիտանեաց թելադիր ուսուցանել նմա. յորս և զայն ինչ՝ զի վայր մի յաշխարհին զնեալ անգաստին 'ի բնութենէն քաջավայր և բերկրապատար՝ լքեալ ամայի, 'ի նոյն վայր մտախորհ լինէր Աննիբաղ հովանագրել զձև քաղաքին, և անդր զԱրտաշէս ածեալ ցուցանէր և խելամուտ առնէր զնա հիմն արկանել։ Հաւանեալ արքային՝ աղաչէր ըզնոյն ինքն զԱննիբաղ՝ ոստիկան վերակացու կալ 'ի վերայ գործոյն, և այնպէս շինէր քաղաք մեծ և գեղեցիկ յոյժ. և անուն կարդացին նմա զարքային, և լինէր Քաղաքամայր Հայոց 3։

Ապա 'ի նոյն քաղաք դէմ եդեալ Լուկուղղոս, ո՛չ ևս հանդարտեաց Տիգրան. խաղաց չու արար ամենայն զօրութեամբ և հասեալ բանակ հարկանէր յաւուրն չորրորդի մօտ Հռոմայեցւոց, առեալ 'ի միջոցին զԱրսանիսա գետ 4, ընդ որ հարկ իսկ էր անցանել Հռոմայեցւոց խաղալ յԱրտաշատ։ Անդ զոհ գլցն զոհեալ Լուկուղղոս՝ խրրու 'ի բռին զյաղթութիւնն ունելով՝ առեալ անցուցանէր զզօրն՝ հորդան տուեալ կարգ առ կարգ երկոտասան գնդաց, զայլսն վերջապահ կալեալ՝ զի մի 'ի նեղքս փակեսցի 'ի թշնամեաց։ Իսկ 'ի

ճակատուն Տիգրանայ կարգեալ արձա-
նացեալ կային յոքնաթիւ ընտիր ընտիր
այրուձիոյն, և յառաջոյ Մարք կիրթք
դիպաղեղունք յերիվարէ, և Վիրք նիզա-
կաւորք. յորս և քան զամենայն եկս բա-
նակին յոյժ վստահ էր Տիգրան՝ իբրև 'ի
կորովիս քաջամարտակաց։ Բայց յայնժամ
գործ ինչ նահատակութեան ոչ ցուցին
նոքա. և վայր մի ընդդէմ կացեալ այրու-
ձիոյն Հռոմայեցւոց, 'ի խուժել հետևա-
կացն՝ ոչ կացեալք յակաստանի՝ քակ-
տեալ բաժանեցան և ցիր և ցան 'ի փա-
խուստ դարձեալք՝ 'ի նոյն և զայրուձին
զհետ առեալ ձգէին 'ի վանել զնոսա։

Ապորիկ այսպէս եղելոյ՝ այրուձի այլ
յառաջ խաղացուցեալ Տիգրանայ, 'ի
փայլիւն 'ի շողիւն բազմութեանն զահի
հարեալ Լուկուղղեայ՝ ձայն տայր դարձի
հետամուտ այրուձիոյն, և ինքն առ ետեղ
նահատակ 'ի դիմի հարեալ Նախարարացն՝
որ այրընտիր 'ի քաջաց առեալ խաղացին
ընդդէմ նորա, անդէն ահ մեծապէս ար-
կեալ՝ մինչև 'ի մարտ մատուցեալ 'ի փա-
խուստ դարձուցանէր զնոսա։ Բայց յե-
րից անտի արքայից Ճակատելոցն, յաւէտ
ինն նշաւակ 'ի փախուստ խուճապէր Պոն-
տացին Միհրդատ, որ և հանդարտեաց իսկ
ոչ՝ ձայնի աղաղակի Հռոմայեցւոցն։ Ապա
հետամուտ հարուստ միջոցաւ փախստէիցն
եղեալ, ողջոյն զգիշերն տապաստ 'ի նոցա-
նէն արկեալ՝ և կենդանւոյն ևս ձերբակալ
արարեալ, ածէին կապուտ և կուտէին

զառ և զապուր, մինչև յոգնեալք տեղի տային։ Արդ՝ Լիվիոս պատմէ յառաջնում անդ մարտին բազմագոյն լինել անկելոց և գերեալոյն Թշնամեաց. իսկ 'ի վերջնումն՝ աւագ որերոյն նոցա։

Յետ այսորիկ մեծապէս քաջալերեալ Լուկուղղէայ, խորհէր 'ի վերնագաւառ անդր յառաջ խաղալ, և 'ի սպառ զբարբարոսսն վանել. սակայն՝ անկարծելի 'ի հասարակածի անդ աշնայնոյն 'ի գառնաշունչ եղանակին ձիւնաբերք սաստիկ եղեն, և ապա 'ի պարզել օդոցն՝ եղեմունք անհնարին և սառամանիք. զի և դժուարըմբռուք լինէին երիվարքք 'ի գետոց առ սաստիկ ցրտութեանն, առ այս՝ և դժուարագնալիք. քանզի 'ի հերձուլ սառիցն՝ ջիղք սմբակացն կտրէին 'ի դժնդակաց անտի. բայց և աշխարհն ինքնին բազում ուրեք խաւարարգել, և անձկուղի և անտառամոլ. և տամկացեալ ձիւնախաղաղ էր 'ի չուն զօրականն, և մեծաւ տառապանօք օթէին նոքա 'ի ծմակս։ Ուստի և ոչ բազում ինչ աւուրս զհետ չուեալք Լուկուղղէայ, սկսան նոքա խոտորնակս գնալ. զառաջինն յողոք խոնարհեալք՝ առեալ արձակէին առ Լուկուղղոս զհազարապետս իւրեանց. ապա 'ի մի վայր խառնեալ՝ ձայն աղաղակի ամբոխին նոցա բազմանայր գիշերի 'ի բանակեսեղս նոցա. և էր այն մոտալուտ ապստամբութեանն նշանակ։

Յայնժամ Լուկուղղոս աղերս բազում արկեալ և քաջալերեալ ևս 'ի համբերու-

թիւն, մինչև զԿարքեդոնն Հայոց հիմն 'ի վեր քանդեացեն զձեռակերտ զոխերիմ թշնամւոյն իւրեանց, (և ասէր զԱննիբա-ղայ)։ Իբրև ոչինչ կարաց համոզել զնոսա 'ի հանդարտութիւն, խաղացոյց յեռս և անցեալ զբարձունսն Տաւրոսի՝ ընդ այլ ուղի ի Ջանէր'ի գաւառ անդր որ անուանեալ կոչի Միւգդոնեան, գաւառ ամենաբեր և արևահայեաց, յորում և քաղաք ընդարձակատարը և բազմաժողով. բարբարոսք անուն կարդային նմա Մծբին, և Հելլենք՝ Անտիոք Միւգդոնեան։ Իշխէր քաղաքին ըստ աւագութեան բարձին Գուրաս էղբայր Տիգրանայ, այլ ըստ քաջափորձ հմտութեանն'ի Մէքենականն՝ տիրացեալ էր 'ի նմա Կալլիմաքոս. այն՝ որ և յԱմիսոն աշխատութիւն բազում հասոյց Լուկուղղեայ։ Անդանօր բանակ հարեալ Լուկուղղոս, պաշարումն հնարիմաց արուեստիւ ածէր քաղաքին, զի և 'ի սակաւ ժամանակի տիրացաւ նմա։ Ապա մարդասիրութիւն բազում ցուցեալ առ Գուրաս՝ որ անձնատուր լինէր նմա, ոչինչ հայեցաւ 'ի Կալլիմաքոս, Թէպէտ և խոստանայր ևս նմա 'ի վերս հանել գանձս ծածուկս մեծամեծս. ետ հրաման 'ի կոձեղս ունել զնա, 'ի վրէժ հրայրեաց աւերածոյն՝ զոր ած նա 'ի վերայ Ամիսոնացւոց քաղաքին. և 'ի դերև եհան զնա 'ի ժամուն 'ի փառաց հանդիսի մարդասիրութեան իւրոյ առ Յոյնս։

Յայս վայր աւադիկ բախտն գլխովին

Իբրու ցանգ զուդահետ Լուկուղղեայ՝ մարտակից նմա լինէր յամենայն նահատակութիւնս նորա. բայց ասսի և անդր՝ Իբրու որ վրէպ 'ի յաջողակ հողմոյ՝ շատ տառապեցաւնա յամենայն 'ի բանս և յամենայնի գտանէր քար ընդ ոտն. Թէպէտ և քաջութիւն համբերատար յանձին եբեր արժանի քաջի զօրավարի, ոչ փառաւորեցաւ ինչ այնուհետև 'ի գործս իւր. նա և վայրիկ մի ևս՝ յաղէտից կրեցն և 'ի հերձուածոց ամբոխիցն կապտեր նա յառաջնոց անտի իւրոց փառացն: Եւ ապա աղէտիցն այնոցիկ ոչ գուշնաքեայ ինչ պատճառք էր և ինքն գլխովին. ոչ գիտաց յինքն զսէր յանկուցանել զօրականին. կարծեաց այնպէս՝ 'ի հաճել զհնազանդեալսն՝ անփառունակ զանձն յարդարել և զաւագութիւն զանձինն տապալել: Եւ որ մեծն, բոյս էր նորա բարուց՝ և ոչ ընդ աւագ արան և ընդ հանգիստապատիւան զիջանել, այլ ամենեցուն առ իւրև ունչս իմն առնէր. այս ինչ էին՝ որպէս ասեն՝ Լուկուղղեայ խակութիւնք խառն 'ի բազում գեղեցիկ հանգիսից նորա: Քանզի աւագանձն էր և գեղանի, պերճ և զօրաւոր բանիւք և հանճարեղ և զգօն յատենի և 'ի բանակի: Արդ Սալլուստիոս ասէ, եթէ և անդստին 'ի բնէ մարտին՝ ուծացեալ էր զօրականն 'ի սիրոյ նորա. Իբրև ստիպեցան նոքա ձմերել երկիցս 'ի բանակին, 'ի Կիլիկոն, և միւս ևս՝ յԱմիսոն, և ապա 'ի ձմերումնան որ զկնի՝ տաղտկացան յոյժ նո-

քա. քանզի ձմերեցին կամ 'ի Թշնամեաց գաւառին, կամ առ նիզակակից ժողովուրդն 'ի բացէ 'ի դաշտի ընդ վրանօք. զի և ոչ միանգամ եմուտ զօրու Լուկուղղոս 'ի քաղաք Հելլենացւոց և բարեկամաց:

Աւրդ 'ի չար ժամուն՝ Թինդս մեծապէս տային զօրականին անդուստ 'ի Հռովմայ Ճարտասանք սուտակասպասք խուժանին, որք առ նախանձու դատախազ զԼուկուղղեայ կային՝ յերկարաձգել նմա զմարտ պատերազմին առ իղձ զօրավարութեան և ընչաւէտութեան, 'ի բուն դոգցես կալեալ ինքնին միայնակ զԿիլիկիա, և զԱսիա, և զԲիւԹանիա, և զՊափղագոնիա և զԳալատիա, և զՊոնտոս և զՀայաստան, և որ անդր մինչև 'ի Փառիս. և 'ի վերջէ՝ զի յաւարի առեալ կողոպտեաց նա և զՏիգրանայ զարքունին. իբրու որ արձակեցաւ անդր կապտել մերկել զԹագաւորս, և ոչ նուաճել զնոսա: Եւ պատմեն՝ Լիւկիոսի Կուինտոսի ժողովրդապետի ասել յայսպիսեաց բանից. յորմէ և մեծապէս դրդեալ խուժանին վճիռ տայր փոխանակ առաքել Լուկուղղեայ, առ այս՝ և զբազումս 'ի զօրականէն նորա արձակել 'ի բաց:

Անդ յաղէտն 'ի մեծ յաւելաւ և այլ՝ որ հիմն 'ի վեր զերան տապալեաց զԼուկուղղեայ: Սա այս էր Պոպղիոս Կղովգիոս այր խեռ և անառակ և ժպիրհ. էր սա տագր Լուկուղղեայ, և բամբասեցաւ անկանել սմա և ընդ անժուժկալ կնոջն: Իսկ յայնժամ զինուորեալ նա առ Լուկուղ-

ղեայ, 'ի բարձէ աւագութեանն՝ որում արժանի զանձն համարէր՝ վրիպեալ գոսա. և ոչ այսչափ միայն՝ այլ քան զամենեսեան 'ի վեր յաւակնեալ, առ վատթարութեանն՝ բազմաց ևս այլոց 'ի վերջոյ եկայց։ Սա ապա հնարեցաւ որսալ գողանալ զզօրականն Փիմբրիասայ և յուզել զնոսա ընդդէմ Լուկուղղեայ. հրապոյրս արբուցանէր նոցա ախորժակս, զոր և մոգդիւրս ընկալան նոքա բնաւորեալք 'ի մարդահաճութիւն։ Քանզի և այն զօրականք էին նոքա՝ հրապուրեալքն 'ի Փիմբրիասայ 'ի սպանութիւն Փլակկոսին հիւպատեան և ընտրել զինքն 'ի զօրավար. ուստի և յօժարամիտս ժողովէին նոքա և զԿղովդիոս, փարելի և բարեկամ զօրականին կարդային զնա, քանզի և ախտակից կարեկից ցուցանէր զանձն նոցա.

"Ո՞չինչ արդեօք՝ ասէր՝ եզը և սահման լինիցի այնչափ մարտից և քրտանց. այլ ոդեսպառ թերևս լիցուք մեք մարտ դնել կռուել ընդ ամենայն ժողովրդոց, և ընդ ամենայն երկիր երերել տատանել առանց մրցանակի՝ արժանի բազմաժամանակեայ զինուորութեանս. և կարապետ կառավար լինել ցանգ կառաց և ուղտուցն Լուկուղղեայ՝ բեռնաբարձից ոսկի բաժակացն և ականակապ։ Եւ արդեօք անդանօր զօրականք Պոմպէի ժողովրդացեալք՝ բնակեցան ուրեք յանդորրու հանդերձ կանամբք և և որդւովք, և զերկիր կալան բարի, և քաղաքս. նոքա ո՛չ զՄիհրդատ և ո՛չ զՑիդրան

վանեալք վարեցին յանապատս անշէնս, և ոչ զարքունեան քանդեցին նոքա զԱսիոյ. այլ մարտ միայն եղեալ կռուեցան յԻբերիա ընդ տարագիր որերոյն, դարձեալ և ընդ փախստականից յԻտալիա։ Եւ զի՞նչ ապա. եթէ արդեօք անդադար լինել պարտ իցէ 'ի մարտից պատերազմաց, զի՞ մեք չպահեմք զնշխարեալ մեր մարմին և զոգի վասն այնպիսուն զօրավարի, որ զարդ մեծապէս անձին վարկանի զընչաւէտութիւն զօրականին իւրոյ"։

Յայսպիսեաց բանից հրապուրեալ զօրականին, ո՛չ ևս կամէին զհետ խաղալ Լուկուղղեայ՝ ո՛չ ընդդէմ Տիգրանայ և ո՛չ Միհրդատայ, այն՝ որ արդէն միջամուխ 'ի Պոնտոս 'ի Հայաստանէ գրաւեալ ունէր զիւր արքայութիւնն։ Ապա զժամանակ պատճառեալ նոքա զձմերայնոյն, դեղեալ կային 'ի Կորդիս. ժամ 'ի ժամէ ակնկալեալ մնային գալստեանն Պոմպէի կամ թէ այլում ումեք զօրավարի փոխանակ Լուկուղղեայ։ Բայց լուր առեալ զի Միհրդատ 'ի պարտութիւն զՓաբիոս մատնեալ, խաղայ գնայ ընդդէմ Սորնատեայ և Տրիարեայ, ապա զամօթի հարեալք յաբեան զհետ Լուկուղղեայ։ Իսկ յայնժամ Տրիարիոս իբրու անկասկած զյաղթութենէն՝ պատուասիրեալ մարտ յարդարել մինչև հասեալ Լուկուղղեայ՝ որ առ դուրս կայր, հարուածս աչադին ընդունէր. քանզի ասեն՝ անդ տապաստ անկանել Հռոմայեցւոց աւելի քան եօթն հա-

զարաց. յորս և հարիւրապատք հարիւր և յիսուն, և հազարապատք քսան և չորք, և տիրանալ Միհրդատայ բանակին նոցա։ Յետ սակաւուց հասեալ Լուկուղղեայ՝ առեալ 'ի ծածուկ ունէր զՏրիարիոս անդր ժելի 'ի սրտմտութենէ զօրականին՝ որ խնդրէին զնա։ Բայց Միհրդատ յայնժամ անկուիս ակնկալեալ Տիգրանայ՝ որ զօրու ծանու գայր ի Հայաստանէր, եդ 'ի մտի Լուկուղղոս մինչև նոցա երկոցուն 'ի մի խմբեալ՝ խաղալ ընդդէմ Տիգրանայ և կռուել։

Այլ խռով ապստամբութեան առեալ յուղղոջ 'ի Փիմբրիանեանս՝ դատալք լինէին, իբրու որք արձակեալք վճռաւ 'ի զենուորութենէն, և յայլս ոմանս ապաստան զօրավարութեանն եղեալ, ոչ ևս հրամանատար կացցէ Լուկուղղոս։ Եւ ապա յայնժամ զամենայն հանդէս անարժան իւրում բարձին և շքոյն՝ խոնարհեալ 'ի ներքս քերէր Լուկուղղոս. միում միում 'ի նոցանէն յողոք անկեալ պաղատէր, շուրջ եկեալ յածէր գնայր 'ի խորանս նոցա՝ վայրանկեալ ակնկոր և 'ի դէմն արտասուագին, էր՝ ղի և զուրուք 'ի նոցանէն զաջոյն կալեալ. այլ նոքա ողոքանացն երեսս չառնէին, առեալ զգեանէին թափուր դատարկ զքսակս իւրեանց. ասէին ինքնին միայնակ գնալ կռուել ընդ թշնամին, յորոց միայնակ գիտէ ինքն ընչահաւաքն լինել։ Համայն և այնպէս 'ի խընդրուածս այլոց զօրականին խոնարհեալ Փիմբրիանեանց, միաբանեցան կալ մնալ

անդէն զամառն ողջոյն. դաշն եղեալ՝ զի թէ երբէք զժամանակն զայն մարտ ուստեք ոչ յուզեսցի, ազատացեալք այնուհետև գնասցեն 'ի բաց։ Հարկ էր Լուկուղղեայ հաճել ընդ բանն, կամ թէ ամայի ինքն լքեալ, թողուլ ողջոյն զաշխարհն 'ի բարբարոսացն ձեռս։

Ապա առեալ պահէր զնոսա անբռնադատս, և 'ի կռիւ չհանէր. շատ համարեցաւ առ իւր զնոսա ունել. թոյլ ետ այնուհետև Տիգրանայ աւարել քանդելզկապադովկիա. և զիջանէր տեղի տայր միւսանգամ պերճութեանն և խեռութեանն Միհրդատայ. և այն զի՝ գրեալ իսկ էր Լուկուղղոս առ Սինկղիտոսն վասն իսպառնուաճութեան առն. որ աղագաւ և պատուիրակք եկեալ հասեալ էին առ նա 'ի Հռոմայ կարգ և յօրինուած տալ իրացն Պոնտոսի, քանզի կարծեալ իմն այնպէս էին՝ տիրացեալ Լուկուղղեայ յանդորրու աշխարհին այնմիկ. սակայն հասեալք առ նա, տեսանէին և ո՛չ անձին անգամ տիրացեալ զնա՝ խոտեալ և ոտնհար յիւրոց անտի զօրացն։ Որոց և ըրբենի դիմաք 'ի վախճանեալ ամարայնոյն արկեալ միանգամայն զանձամբ զէնս և մերկեալ զսուսերս, մարտի ասպարէզ թշնամեացն կարդային, յորժամ նոքա չէին ուրեք 'ի միջի և վերջոտնեալ իսկ էին. ապա ձայն աղաղակի բարձեալ և ստուերամարտք եղեալ, հորդան արտաքս առհասարակ տային 'ի պատնէշն, բողոք բարձեալ՝ եթէ անցեալ է ժամա-

նակակէտ սահմանին մնալոյ իւրեանց առ Լուկուղղեայ։

Իսկ անդուստ Պոմպէոս նամականի տուեալ կոչէր առ ինքն 'ի զօրականէն. քանզի և ինքն իսկ կարդեցաւ յայնժամ զօրավար մարտին ընդդէմ Միհրդատայ և Տիգրանայ 'ի ձեռն խուժանին և 'ի շնթելոյ հռետորաց ռամկին։ Բայց յայնժամ Սինկղիտոսն և լաւ որեարն զնոյն մեծապէս նախատինս վարկանէին Լուկուղղեայ, իբրու որ ոչ փոխանակս մարտին կալցի, այլ յաղթանակին իւրում. և բռնութիւն լինիցի առն՝ տեղի տալ այլում ոչ 'ի զօրավարութենէն, այլ 'ի վարձուց փոխարինացն։ Զնոյն և քստմնելի էր նոցա՝ որ անդէն 'ի զօրուն կային, յորժամ 'ի բանակին կապտեալ յիշխանութենէն տեսին զԼուկուղղոս. ոչ պարգևել կարէր, և ոչ պատուհաս 'ի վերայ ածել. դարձեալ և անդուստ Պոմպէոս ումեք չտայր թոյլ մօտ երթալ առ նա, կամ ունկն դնել սահմանի հրամանաց նորա և տասանց պատուիրակացն որ ընդ նմա, այլ և աշխարհաւ հրովարտակ հանեալ արդել և կնքեաց. առ այս՝ և զի անդ մօտ կացեալ ահաբեկ էր առ մեծի ուժոյն։ Սակայն և այնպէս հաճոյ թուեցաւ բարեկամացն, դալ նոցա խօսել ընդ միմեանս։

Ապա 'ի մի վայր եկեալ նոքա յաւանի ուրեք Գաղատիոյ, մեծապէս մարդասիրութեամբ խօսէին ընդ իրեարս՝ այր ընկերին խնդակից լինէր վասն գերեցիկ նահա-

տակութեանցն։ Էր իսկ Լուկուղղոս տիՀք աւագ, այլ Պոմպէոս քան զնա աւագութեան վիճակեալ բարձի, յաճախ ևս կացեալ զօրավար բանակի, և կրկնակի տարեալ յաղթանակի հանդէս. բայց և երկաքանչիւր նոցա գնային յառաջոյ գաւազանք՝ 'ի նշանակ ոգուն մրցանացն՝ սարդենաբարձք. այլ Լուկուղղեայ գաւազանակիրք տեսեալ զսարդենիս թարշամեալըզգաւազանացն Պոմպէի, զի յերկիր անՀրդի և ծարաւուտ երկայն հատեալ էր ուղի, առեալ դալարագեղս և առոյգս տային գաւազանակրացն նորա յիւրեանց անտի. և զայն բարեգուշակ ասէին բարեկամքն Պոմպէի։ Եւ արդեօք գեղեցիկ նահատակութիւնք նորա՝ շուք և զարդ 'ի ներքս բերին զօրավարութեան սորա։ Բայց յայնժամ 'ի կենակից խօսելոյն նոցա պայման և ո՛չ մի հաստատեցաւ ընդ նոսա. Էլին մեկնեցան այր յընկերէ ոխերիմք առաւել քան զառաջինն։

Առեալ ապա Պոմպէոս անվաւերական գործէր զամենայն սահմանս կարգաց զԼուկուղղեայ, և յինքն ժողովեալ զամենայն զօրականն, թողոյր առ նա 'ի հանդէս յաղթանակին ոգիս միայն հազար և վեց հարիւր. այլ և ո՛չ սոքա յօժարամիտք յոյժ էին զհետ երթալ նորա. այնպէս ուրեմն կամ ձախողակի հանդիպեալ 'ի բնութէն, կամ թէ վատաբախտեալ գլխովին էր Լուկուղղոս յառաջինն յայն և 'ի մեծ հանդէս առն զօրավարի. որպէս զի երթէ յան-

կարծ և զնոյն ընդ սեպհականին իւրում պատուաստեալ էր պերճ և բազմադէմ առաքինութեան անձինն, (ընդ քաջութեան ասեմ արութեանն, ընդ անկիրտ տքնութեանն, ընդ հանճարոյն զգօնութեան, և ընդ արդարութեանն), արդեօք ոչ զԵփրատէս սահման յԱսիա ունէր Հռոմայեցւոց տէրութիւնն, այլ և անդր մինչև 'ի սահմանս վերջինս ձգէր տարածէր և մինչև 'ի ծովն Վրկանայ. քանզի և այլ ժողովուրդք նուաճեալ իսկ էին ընդ ձեռամբ Տիգրանայ. և Պարթևաց զօրութիւնն ինքնին առ Լուկուղղեաւ՝ չէր որպէս առ Կրասոսիւ, և ոչ դարձեալ միաբան և միախորհ. այլ յընտանի կռուոց անտի և 'ի սահմանակից՝ և ոչ զՀայոցն անգամ արշաւան ուժէին նոքա վանել։

Ապրդ ինձ թուի՝ քան շահ օգտի յիւր ձեռն՝ զեան մեծապէս յայլոց ձեռս հասուցանել Լուկուղղեայ իւրոց հայրենեացն։ Քանզի այն ախոյեանք կանգնեալք 'ի Հայաստան աշխարհ մօտ Պարթևաց 'ի Տիգրանակերտ և 'ի Մծբին, և հարստութիւնք ամբաւք ածեալք 'ի Հռոմ յերկուց անտի քաղաքաց, առ այս և պտակն ինքնին Տիգրանայ կալեալ 'ի մարտին և տարեալ 'ի յաղթանակին, այդ ամենայն յուղեալ դրդեցին զԿրասոս ընդդէմ Ասիոյ. իբրու եթէ որպէս պատրաստք՝ անդանօր մնան նմա այն բարբարոսք և աւարք դիւրըմբռնելիք։ Բայց ապա արագ արագ պատահեալ նորա նեռիցն Պարթևաց, յայտնանդիմանու-

թեամբ ցուցանէր՝ զի ոչ յանհմտութենէ թշնամեաց և յանարի վատութենէն յաղթեաց նոցա Լուկուղղոս, այլ քաջութիւն արութեամբն և 'ի գեղեցիկ հրահանգացն մարտից։ Այլ յաղագս այդոցիկ զկնի։

Աբդ 'ի Հռոմ դարձ արարեալ Լուկուղղեայ, գտանէ զեղբայր իւր զՄարկոս դատախազեալ 'ի Գայոսէ Մեմմիոսէ վասն գործոց ինչ նորա 'ի հրամանէն Սիւղղայի 'ի գանձաւորութեան իւրում. բայց ապա արձակեալ Մարկոս՝ ընդդէմ Լուկուղղեայ դառնայր Մեմմիոս, խռով հարեալ 'ի խուժանին սադրէր հրապուրէր՝ մի յաղթանակին թոյլ տալ Լուկուղղեայ. իբրև աւար սաստիկ յինքն տարաւ նա գաղտագողի, և այնչափ յերկարաձգեաց զմարտ պատերազմին։ Անդ բուռն դիմամարտութեան եղելոյ ընդդէմ Լուկուղղեայ, ալք աւադք և ձոիք քաղաքին 'ի մէջ անցեալ՝ երթեալք միջամուխ 'ի ցեղս ցեղս խուժանին, հազիւ ուրեմն ողղանօք թախանձեալ ամոքէին զամբոխն՝ թոյլ յաղթանակին առնել. որ և ոչ իբրու զայլոցն այնպէս ձոխասանծ գտաւ յաղթանակն, և տաղտուկ 'ի յերկարաձգել հանդիսին և 'ի խռնել աւարացն։ Քանզի յայնժամ Փլամինեան ձիրնթացք զարդարուն յօրինեցան յաւարս զինուց ամբաւից թշնամեաց և 'ի մանդղիոնս արքունիս, և եդաւ անդանօր ամենայն գեղեցիկ կարգաւ 'ի բերկրութիւն տեսանելեացն հանդերձանաց։ Եւ ապա 'ի բուն հանդիսի յաղթանակին

նուազունք էին երիվարք համակ պատե-
նազէնք, և կառք գերանգազէնք՝ տասն, և
բարեկամք և զօրավարք արքունի՝ վաթ-
սուն. զհետ խաղային հարիւր և տասն
նաւք երկայնք պղնձացռուկք. ապա ար-
ձան անարի ոսկի վեց ոտնաչափ 'ի տիպ
Ճշգրտեալ Միհրդատայ և վառեալ յաս-
պար ականակուռ: Զհետ դային ապա շա-
լակք քսան՝ անօթոց արծաթոյ, և բաժա-
կաց ոսկւոյ, և զինուց և դահեկանաց ե-
րեսուն և երկու. և զոսսա բարձեալ բե-
րէին մարդիկ, և զհետ սոցա խաղային ջո-
րիք ութ և բարձեալ տանէին արծաթ 'ի
ձոյլ. դարձեալ և հարիւր և եօթն բեռ-
նաբարձք դահեկանաց արծաթոյ՝ իբրև եր-
կու հարիւր և եօթանասուն բիւրուց դրա-
մակշռոց: 'Ի վերջէ դային և պնակք՝ ողջ-
ոյն արձանագրեալ 'ի նոսա դրամոցն՝ զոր
տուեալ իսկ էր Լուկուղղոս Պոմպէի 'ի
մաշտ ընդդէմ հինիցն, և զոր դանձաւո-
րացն. առ այս և ինն հարիւր և յիսուն
դրամակշիռք՝ զոր առին մէն մի 'ի զօրա-
կանէն:

Յետ այսորիկ 'ի խնձոյս հրաւիրէր մե-
ծահացս Լուկուղղոս ողջոյն զքաղաքն, և
զշրջակայ զվայրսն՝ որոց անուն կարդան
Հռոմայեցիք՝ Վ.Ի.Ռ.Ս.: Եւ ապա արձա-
կեալ 'ի բաց զԿղովդիա կին պագչոտ և
անզգամ՝ ած 'ի կին զՍերվիլիա քոյր Կա-
տոնի, այլ և ոչ 'ի նմա երջանկացաւ ինչ.
քանզի 'ի չարեացն Կղովդիայ միով միայն
պակաս էր Սերվիլիա, զի չանկանէր ընդ

եղբարն. իսկ էր նա իբրև զնա ցոփ և խառնակրօն. զի և հարուստ ժամանակ ժուժեալ ընդ նմա 'ի մեծարանս երեսացն Կատոնի՝ 'ի վերջէ ուրեմն արձակէր և զնա։

Բայց յայնժամ աւագանին ակնկա-ռոյց 'ի Լուկուլլոս, իբրև մեծապէս յու-սայր՝ եթէ այն այր համբաւատենչ և ա-ւագամեծար ախոյեան աւագպետութեն ընդդէմ դարձցի բռնաւորութեանն Պոմ-պէի, նա խսպառ լքեալ զքաղաքին իրա՝ չլինէր ինչ միջամուխ, կամ զի ախտա-կրեալ յոյժ եռեռս նա զքաղաքն գժուար-ընկալ գեղեցիկ կարգին. կամ զի (որպէս կէսք ասեն) յօրացեալ 'ի փառս յետ այն-չափ մրցանացն և քրտանց՝ որ ոչ խսպառ գեղեցիկ վիճակեցան ելից, անդորրաւէտ ցանկացաւ կենաց։ Եւ որք զայս ասեն՝ զմեծապէս փոփոխութիւն զառն 'ի գո-վութիւն առնուն. զի ոչ զհետ օրինակին ջոքաւ Մարիոսի, այն՝ որ յետ մրցանացն ընդդէմ Կիմբրացւոց և յետ մեծաց նա-հատակութեանցն՝ ոչ յապեցաւ 'ի փա-ռացն, այլ անյագ յաւագութեանն և նո-րոց ըղձակաթ փառաց, 'ի վեդ ալևորն ընդ երիտասարդաց ելեալ յառաջնորդութիւն քաղաքին, արհաւիրս գործեաց, և ևս աղ հաւրօք լի կրեաց կիրս։ Ընդ այս և ասեն՝ եթէ և Կիկերոն ինքնին դլխովին գեղեցիկ ևս 'ի ծերութիւն պարարտութեան յե-ցեալ էր, եթէ յետ Կատիլինեայն նուա-ճութեանն հանդարտեալ տեղի տայր. ըզ-նոյն և Սկիպիոն՝ եթէ անդորրայեալ հանգ-

չէր յետ յաւելլոյն 'ի Կարքեդոն զնոման-
տիա. հանդերձ այսու՝ և տիք ևս էն հա-
սակին յորում հանդարտել արժան է 'ի
գործոց քաղաքին. քանզի և հանգունա-
տիպ յոյժ էն մրցանք քաղաքականք ընդ
ըմբշայն մրցանաց, զորս ընդ վայր հարեալ
խոտեմք 'ի նուազել նոցա առոյգութեան
և աշխուժից տիոցն: Իսկ անդուստ Կրասսոս
և Պոմպէոս խաղ առնէին զԼուկուղղոս,
զի այնպէս բերկրանաց և գրգանաց զհետ
կրթեցաւ. իբրու որ փափկանալ գրգել 'ի
տիս ծերութեան չիցէ առաւել գժպա-
տեհ՝ քան միջամուխ յիրս լինել քաղաքի
և բանակի:

Արդ Լուկուղղոսին կեանք անշուշտ
նմանատիպ վայելչուցն այնոցիկ գտաւ կա-
տակերգութեանցն, յորս է տեսանել զա-
ռաջինն հանդէս իմն պերճս քաղաքա-
կանս և զինուորականս, և ապա 'ի վախ-
ճանին՝ գինեբբուս ոմանս և խնճոյս՝ և
և փոքր մի ևս և անառակութիւնս կոչնոց
և ջահս գիշերականս, և համբուն՝ սիո-
փութիւնս խաղու գունակ գունակ: Քան-
զի և իբրև խաղս համարեցայց ես զբաղ-
մահանդերձ զայն ձեռակերտն և զհոյա-
կապ ճեմարանն և զբաղանիսն. առ այ-
սոքիւք՝ և զնկարն և զհասակն, և ըզ-
փոյթ խնամոցն Լուկուղղեայ յայտոսիկ,
զոր կուտեաց ժողովեաց նա մեծապէս
ծախիւք, վատնեալ 'ի նոսա բնաւ իսկ
զընչաւէտութիւնն՝ զոր մթերեալ ամբա-
րեաց նա յիւրոց անտի արշաւանացն. նա

զի և այսօր առ մեզ՝ յորում ծայրալիր յորդեցին գրդանք, ընդ դրախտս արքունիս հոյակապս՝ ընդ մի համար են և Լուկուղղեան դրախտք։ Իսկ յաղագս արարրոց և դաստակերտաց նորա 'ի ծովափնեայ վայրս և առ Նէապոլսեաւ, ուր կախեաց նա լերինս ծակեալ 'ի մեծամեծ կապանս, և զջուր ծովուն ած գնացոյց առ բնակութեամբք 'ի խաղս ձկնատնոյցս և ձկնաւէտս, և կանգնեաց ապարանս 'ի ծովահայեացս. և որ ընդ այս ամենայն հրաշակերտութիւնս հիացեալ զարմացաւ՝ Տուբերոնն Ստոյիկեան, անուն կարդայ նմա՝ Քուէրքուս Պոպմուճանուոր 5։ Առ այսոքիւք՝ էին նորա և ապարանք 'ի Տուսկլոն, գիտանոցք գեղեցիկք ամենահայեացք, և հովանոցս արեգունիս այրանոցաց և ձեմարանաց. ուր և է զի եկեալ Պոմպէոս հեգնէր զԼուկուղղոս, զի գեղեցիկ շինեաց իւր ամարաստուն ապարանս, սակայն և անբնակս ձմերանի. ծիծաղեցաւ Լուկուղղոս, ասէր. "Եւ զի՞նչ, նուազեալ թերևս 'ի հանձարոյ թուեցայց ես քեզ քան ըզխորդս և քան զարագիլս, որպէս զի և ըստ եղանակացն ոչ փոխանակել ինձ և ապարանս,,։ Իսկ և երբեմն 'ի զօրավարացումն պատուասիրեալ տալ խուժանին տեսարան երևելի, խնդրեր քաղամիդս ծիրանիս 'ի Լուկուղղեայ՝ 'ի զարդ դասուն. ետ պատասխանի Լուկուղղոս հայել, զի եթէ ունիցի, տացէ. ապա յաւուրն երկրորդի հարցեալ ցզօրավարն, ուրչափ ինչ պէտք

լցեն, և լուեալ հարիւր. հրամայեաց առ-
նուլ կոկնապատիկ առաւել։ Ոյր աղա-
գաւ և Փլակկոս քերթող 6 մակագանչու-
թիւն 'ի վերայ ածեալ ասէր. Ո՛չ բազմա-
հարուստ համարել նմա զայր, որ կարա-
սիք աներևոյթք և զանխուլք՝ չլցեն առա-
ւել քան զերևեալսն։

Բայց և հանապազորեայ ընթրիք Լու-
կուղղեայ շքեղք և երևելիք, իբրու այն
ինչ ընչաւէտելոյ առն, ոչ միայն 'ի բաղ-
մոցս ծիրանեաց և 'ի բաժակս ականակապս,
և 'ի հանդէսս պարուց և 'ի նուագս վիպից,
այլ և 'ի համագամն գունակ գունակ և 'ի
քաքարս համահամն անուշարար խախա-
մոքից. ոյց աղագաւ և սքանչելի էր նա
խաժամուժ ամբոխին։ Ապա մեծապէս 'ի
գովութիւն առաւ Պոմպէոս՝ որ 'ի խօթու-
թեան իւրում պատուէր առեալ 'ի բժըշ-
կէն ուտել կաքաւ. և յասել ընտանեացն՝
ամարայնի ուրեք ոչ գտանել կաքաւու,
բայց առ Լուկուղղեայ որ բուծանէ զնո-
սա, չէառ յանձն Պոմպէոս առնուլ 'ի
նմանէ. այլ առ բժիշկն դարձեալ՝ ասէր,
"Ապա ուրեմն եթէ գրգացեալ չէր Լու-
կուղղեայ, չգոյր Պոմպէի ապրել,,. և հրա-
ման տայր ածել ինքեան 'ի դիւրավաճառ
իրաց։ Իսկ և Կատոն ինքնին բարեկամ
նորա և մերձաւոր՝ յոյժ գժգոհեալ էր
ընդ քաղաքավարութիւն կենաց նորա. զի
և երբեմն 'ի Սինկղիտոսին պատանի ոմն
գժպատեհս ճառ արկեալ երկար և տաղ-
տուկ յաղագս սակաւապէտ կենաց և

ժուժկալութեան, յոտն կանգնեալ կա-
տուին՝ ասէր. "Երբէք դու վախճան չառ-
նիցես ճառիդ. բազմահարուստ գոլով քո
իբրև զԿրասոս, և կեանս վարելով քո իբրև
զԼուկուղղոս, և խօսիս դու աւագիկ իբրև
զԿատուին"։ Իսկ կէսք ասեն խօսել զայս
այսպէս, այլ ոչ 'ի Կատուինէ։

Բայց թէ և Լուկուղղոս ինքնին ոչ վայե-
լէր միայն, այլ և խնդայր ևս ընդ այնպիսի
քաղաքավարութիւն կենացն և պարծէր,
յայտնի է 'ի բանից անտի նորա՝ զոր ասան-
դեն։ Քանզի պատմեն՝ գալ երբեմն 'ի
Հռոմ արանց Հելլենացւոց, և Լուկուղ-
ղեայ զաւուրս բազումս հրաւիրել զնոսա
յընթրիս. իսկ նոցա իբրև արդարև Հելլե-
նացւոց՝ հրաժարեալ ապա 'ի կոչնոց նորա,
պատկառեալք ընդ մեծապէս ծախսն օր
ըստ օրէ վասն անձանց. զայն լուեալ Լու-
կուղղեայ, ծիծաղեալ ասէ. "'Ի ծախուց
այսի մասն՝ ոմ արք Հելլենացիք, վասն
ձեր է անշուշտ. սակայն առաւելագոյնն՝
վասն Լուկուղղեայ"։ Էր և երբեմն՝ զի
միայնակ ընթրեալ և սեղան մի պատրաս-
տեալ նմա, և ընթրիք չափաւոր, կոչեալ
զմատակարարն զայրագինս կշտամբէր. իսկ
յասեալ պաշտօնէին՝ եթէ զի 'ի հրաւիրե-
լոց ոք չէկաց զայն օր, ոչ կարծեաց մե-
ծահայց սեղանոյ ունել պէտս. ետ պա-
տասխանի Լուկուղղոս և ասէ. "Զինչ ա-
սես. ոչ գիտես՝ զի ընդ Լուկուղղոսի ըն-
թրէ այսօր Լուկուղղոս"։ Ընդ յայնժամ՝
որպէս և բնաւորեցաւ իսկ՝ զբուցաց բազ-

մաց եղեալոց 'ի քաղաքին վասն նորա, էր երբեմն զի պարապորդ կացեալ նորա 'ի հրապարակին՝ մասնաւոր առ նա Կիկերոնէն և Պոմպէոս՝ ընդ որս և բարեկամութեամբ սերտեալ էր. և թէպէտ և գժտութեան եղեալ ընդ նա և ընդ Պոմպէոս վասն զօրավարութեանն, սակայն և ստէպ կենակից բնաւորեցան նոքա ընդ միմեանս քաղցրութեամբ։ Անդ ողջոյն տուեալ նմա Կիկերոնէի, հարցանէր՝ զիարդ պարապեսցին նոքա ընդ միմեանս. ետ պատասխանի Լուկուղղոս՝ մտադիւրագոյնս յոյժ. և բռնադատեալ ևս զնոսա գալ 'ի տուն, ասէ Կիկերոնէն. "Եւ կարի խակ քաջ, ելցուք մեք այսօր ընթրել ընդ քեզ, որչափ ինչ միանգամ վասն քո պատրաստեալ ելցէ,,։

Դժուարեալ Լուկուղղոս ընդ բանն, աղաչէր յայլ օր սահմանել զընթրիսն. յանձն չառին նոքա, նա և թոյլ չետուն նմա խօսել ընդ ծառայից, մի արդեօք ինչ մի առաւել քան զսովորականն հրամայեսցէ. բայց թոյլ միայն ետուն՝ որ խնդրէր իւրեանց խակ լու 'ի լու ասել միում 'ի ծառայիցն՝ եթէ զայն օր յԱպողոնէի ընթրել հասանէ նմա, (և Ապողոնէն անուն ունէր մի 'ի հրաշակերտ սենեկաց նորա), և այնպէս ասա հնարիմացութեամբ գաւառացնա զարան։ Քանզի առ մէն մի 'ի սենեկացն՝ ուր միանգամ ընթրէր՝ սահմանեալ էին ծախք ընթրեացն. և միոյ միոյ 'ի նոցանէն էին կարասիք առանձինն, և կահք կազմածոցն՝ առանձինն, զի և 'ի լսել անդ ծա-

ռայիցն զվայր ընթրեացն՝ անդէն խեղա-
մուտ էին չափու ծախուցն և զարդուն և
մեծահաց պատրաստութեան ընթրեացն։
Արդ յընթրել նորա յԱպողոնիի սենե-
կին, ծախք սովորականք էին հինգ բիւրուց
դրամակշռոց. որոց և յայնժամ 'ի ծա-
խել՝ յապուշ հարեալ կայր Պոմպէոս ընդ
այնչափ արծաթն և ընդ շուտափութիւն
հանդերձանացն։

Բայց յայսոսիկ վարէր զինչսն Լուկուղ-
ղոս՝ իբրու խոտելով զնոսա իբրև աւարս
պատերազմի և բարբարոսական ոմանս.
իսկ ծախք նորա գեղեցիկ և սքանչելի եղեն
վասն մատենից դպրութեանց. քանզի շատ
իսկ և գեղեցկագիրս ժողովեաց կուտեաց
նա 'ի նոցանէն։ Իսկ և պէտք նոցուն՝ շուք
մեծապէս հանդերձեաց նմա քան զժա-
ռանգութիւնն գլխովին. քանզի առհա-
սարակ ամենեցուն առաջի բաց ունէր նա
զմատենադարանն. և արձակ համարձակ
մտանէին Հելլենացիք 'ի Ճեմարանս անդր
շուրջ զնոքօք, և 'ի դպրանոցս՝ իբրու յո-
թեվանս իմն Մուսայից. ուր և ստէպ կե-
նակիցք միմեանց անցուցանէին զօրն՝ մտա-
գիւրագոյնս զամենայնն 'ի բաց դնելով
զգործ։ Անդանօր ստէպ և ինքնին Լու-
կուղղոս 'ի Ճեմարանն կենակից կենցա-
ղակից գտանէր ընդ բանասէր որերոյն, և
'ի պէտս քաղաքականս նոցա՝ և ինքնին
դարձեալ պարապեալ գործակից լինէր
նոցա։ Եւ համբուն էր նորա տուն՝ յարկ
և Պրիւտանիոն Հելլենացի՝ առհասարակ

որոց միանգամ հասեալ գային 'ի Հռոմ։ Բնաւ իսկ խմաստասիրութեան մարզք սիրելի էին նմա, և հետամուտ ըղձակաթ էր գունակ գունակ վարժիցն նորա, այլ յաւէտ անդստին յառաջին տիոցն յոյժ վառեալ 'ի սէր Ակադեմիայ. ոչ որում ա՜նուն կարդան 'Ն՜Ը, (Թէպէտ և յայնժամ բարգաւաճ յոյժ էր վարդապետութիւնն Կարնէադեայ՝ 'ի Ջանից անտի Փիլոնի,) այլ Հնոյն՝ որում ոսաիկան 'ի վերայ կայր 'ի ժամանակին Անտիոքոս Ասկալոնացի, այր Ճարտարաբան և հզօր։

Ա՜ԼՐԴ Լ՜ուկուղղոս փութոյ պնդութիւն յիւր բարեկամութիւն յանկուցեալ զայս խմաստասէր և ածեալ 'ի տուն իւր, առեալ զնա ախոյեան ընդդէմ հանէր աշակերտացն Փիլոնի. յորոց մին էր և Կիկերոնն ինքնին գլխովին, որ և գիրս ամենագեղեցիկ արձանագրեաց յիւրն վարդապետութիւն. յորում և Լ՜ուկուղղեայ ինքնին բանս 'ի բերան տայ Ջատագովս. և ինքն ախոյեան ընդդէմ զինի։ Եւ մակագրեալ կայ այս Մատեան՝ Լ՜ՈՒԿՈՒՂՂՈՍ. քանզի որպէս և ասացաքն՝ բարեկամք սերտք էին Կիկերոնն և Լ՜ուկուղղոս, և համաշունչք ևս էին 'ի բան առաջնորդութեան քաղաքին, յորմէ և ոչ իսպառ արդեօք սեղի տուեալ էր Լ՜ուկուղղոս. բայց մրցեալ և այր զարամբ ելանել 'ի բարձ առաջին աւագութեան և իշխանութեան՝ իբրու ոչինչ անվտանգ իրք և ոչ աներկեան, զայն ելթող Կրասսոսի և Կատոնի։ Իսկ և

ողք խիթացեալք էին 'ի զօրութենէն Պոմ-
պէի, առեալ զերկոսին զտոսա՝ ախոյեանս
ճակատեցուցանէին զօրավիգն Սինկղիտո-
սին. քանզի 'ի բարձերէց աթոռոյն հրա-
ժեշտ տայր Լուկուղղոս։ Սակայն և իջա-
նէր նա 'ի հրապարակն ձեռն տալ բարե-
կամացն, և մոռանէր ևս 'ի Սինկղիտոսն առ
'ի պէտս նուաճութեան ջանիցն Պոմպէի
կամ պատուասիրութեան ինչ խորհրդոց
նորա։ Ուստի և անվաւերական տայր գոր-
ծել զսահմանս հրամանին նորա՝ յետ զար-
քայն նուաճելոյ նորա. առ այս՝ և բաշ-
խից ինչ զօրականին առ 'ի հրամանէն Պոմ-
պէի՝ խոչ ընդակն եղև նա ձեռնտուութիւն
Կատոնի։ Այր աղագաւ և Պոմպէոս եր-
թեալ ապաւինէր 'ի բարեկամութիւն
կամ թէ մանաւանդ 'ի դաշնաւորութիւն
անդր Կրասոսի և Կեսարու. և յորդեալ 'ի
նոցա ձեռն զքաղաքն զինուք և զօրականօք՝
վաւերական գործէր զսահմանս հրամանին,
'ի բաց 'ի հրապարակէն հանեալ զԿատոնն
և զԼուկուղղոս։

Բայց զգործ զայս խոտեալ սրտմտու-
թեամբ արանց լաւաց և առաքինեաց, ան-
դուստ Պոմպէոսեանք զոմն Բրեատիոս ա-
նուն յանդիման կացուցեալ՝ ասէին ըմբռ-
նեալ զարիկայն զայն 'ի գործ անդր սպա-
նութեանն Պոմպէի։ Քննութիւն 'ի Սին-
կղիտոսին եղեալ, մատն և գուշակ լինէր
այրն և այլոց ևս ոմանց, և 'ի Ժողովրդեան
անդ յականէ յանուանէ և Լուկուղղեայ
ինքնին, իբրու 'ի նորայն գրգռութենէ

մասաբերեալ 'ի գործ դառնութեանն։ Հաւատս և ոչ ոք ընծայեաց բանին, այլ առ հասարակ յայտնի 'ի վերայ կացին կաշառելոյ առն 'ի Պոմպէոսեանց անտի 'ի զբաղարտութիւն Լուկուղղեայ. և առաւել ևս յերևան գային իրք՝ յետ սակաւ աւուրց քարշեալ 'ի բանտէ արտաքս զդիակն առն, զորմէ ասէին՝ զիւրովին երթեալ. սակայն գեռ ևս էին իսկ 'ի նմա նշանք խեղդին և հարուածոյն. ուստի և հաստատեցան սպանեալ զայրն 'ի նոցուն իսկ 'ի կաշառողաց անտի նորա։

Եւ ապա յայսպիսեաց ատի մեծապէս ուծացաւ Լուկուղղոս 'ի սիրոյ քաղաքին. իսկ 'ի վտարանդի լինել Կիկերոնի և յառաքել Կատոնի 'ի Կիպրոս, բնաւ իսկ այնուհետև տեղի տուեալ մենացաւ Լուկուղղոս։ Եւ պատմեն՝ մինչև մեռեալ նորա՝ խելաց ծփումն առնել. և իբրու վտեալ առ 'ի տիոցն՝ տակաւ ծիւրիլ և ծընգիլ։ Բայց Կուռնելիոս Նեպովս ասէ՝ ոչ 'ի ծերութենէ պարարտութեանն և ոչ առ խօթութեանն ծնգիլ Լուկուղղեայ, այլ հիւծել առն 'ի դեղատուութենէ՝ մատուակեալ նմա 'ի Կալլիստենեայ աղատագրելոյն. ակն ունելով ծառային յինքն զսէր տեառնն յանգուցանել 'ի կարծեալ զօրութենէ անտի դեղոյն։ Սակայն և անշուշտ այնչափ ապուշ և խելագիրկ եղեալ Լուկուղղեայ, զի և առ կենդանութեամբն՝ եղբայր նորա ունէր զհոգ զնրացն։

Բայց և 'ի սուգ մեծ համակէցան ժողովուրդք ընդ մահն նորա, իբրու որ անդէն 'ի բարգաւաճ յիւրում զօրավարութեանն և 'ի քաղաքականութեանն պակասեալ 'ի կենաց իցէ այրն. և խռնէին ընթանային 'ի դիակն նորա՝ զոր բարձեալ տանէին 'ի հրապարակ անդր պատանիք աւագ տոհմիկք քաղաքին, և բուռն առնէին տալ նմա թաղումն 'ի դաշտին Արեսի, ուր և թաղեցին իսկ զՍիւղլաս։ Սակայն յանկարծակի եղեալ բանին, և ո՛չ հեշտին ըստ արժանի վայրացն կարգեալ զհանգերձանսն, եղբայր նորա յաղերս անկեալ ամբոխին՝ հաւանեցուցանէր 'ի Տուակղոն յագարակին տալ մեռելոյն դիահանս պատրաստեալ նմա։ Ապա և ինքնին եղբայրն ո՛չ հարուստ մի ժամանակ կեցեալ այնուհետև, այլ որպէս տիոց և փառաց նորա, նոյնպէս և փոքր միւս ևս՝ զուգահետ գոտաւ և ժամանակի մահուն նորա, յո՛յժ եղբայրասէր եղեալ։

ԶՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ԿԻՄՈՎՆԻ ԵՒ ԼՈՒԿՈՒՂՂԵԱՑ

ԱՅԻ արդէօք երջանիկ կարծեսցի Լուկուղղոս վասն ժամանակի մահուն, զի կանխեաց մեռաւ՝ մինչեւ ամբոխեց շվոթիցն յընտանի մարտից յուզեալ 'ի քաղաքին 'ի վերին անտեսութենէն. և զրաւեցաւ 'ի կենաց՝ մինչդեռ ազատ հայրենիքն էին՝ թէպէտ և ախտակրեալ. և այս ապա հասարակ է նմա ընդ Կիմոնի։ Քանզի և նա մեռաւ՝ յորժամ չև էին ամբոխեալ իրք Հելլենացւոցն, նա բարգաւաճ իսկ էին. սակայն և 'ի բանակին մեռանէր Կիմոնն և 'ի զօրավարութեանն, ոչինչ տաղտկացեալ 'ի գործոյն և վերջոսանեալ. և ոչ դարձեալ իբրև մրցանակ իւրում արշաւանին և մարտից պատերազմաց և ախոյենիցն՝ 'ի նեղքս բերեալ զնոցանից կոչունսն և զդիներ-

բուաց, ոյր աղագաւ հեգնէ Պղատոն զՈրփէոս 7, որ ասէ. Բարեկեցիկ մարդկանն մրցանակ 'ի գժոխս առնուլ յաւերժական արբեցութիւն։

Արդ հանգիստ անդորրաւէտ և 'ի գրպրութիւնն պարապել իմաստնախոհս և հեշտաբերս, են իսկ գեղեցիկ և վայելուչ սփոփութիւնք առն ծերունւոյ՝ որ 'ի մարտից պատերազմաց և 'ի քաղաքական ըզբաղմանց 'ի բաց կացեալ իցէ։ Սակայն զգեղեցիկ մրցանսն առնուլ շրջել 'ի հեշտութիւն իբրև 'ի կէտ նպատակի նոցա, և յետ մարտից պատերազմաց և զօրավարութեանն՝ կեանս կեալ 'ի խաղուց հանդէսս և 'ի բերկրութիւնս և 'ի տօնս Աստղկանն, չեն արդեօք գործք արժանիք գեղեցիկ Ակադեմիայ, և ո՛չ դարձեալ Քսենոկրատեայ հեաւոդի. այլ որ առ Եպիկուրոս անդր հակամիտեալ իցէ։

Իսկ որ առաւել պանչելին է, զի յառաջին տիսն ընդ հակառակս գտան նոքա 'ի վարս իւրեանց. քանզի՝ որպէս Թուի՝ Կիմոնն յայնժամ անժուժկալ եկաց և խոտան. իսկ Լուկուղղոս՝ հրահանգ և պարկեշտ։ Սակայն լաւ ևս է այր՝ որ 'ի լաւագոյնսն փոխի. քանզի լաւ ևս է բոյս բարուց՝ յորում մոլութիւնք ծերացեալք վաստին, և առաքինութիւնք բարգաւաճ աճոյգանան։

Բայց և երկոքին նոքա ընչաւէտք էին. այլ ոչ զնոյնօրինակ՝ ընչաւէտութեամբն վարեցան. զի և ո՛չ 'ի կշիռ ոք ձգեսցէ որ-

գէօք ընդ հարաւային պատուարի դղեկին՝ զոր կառոյց Կիմոնն առ 'ի դրամոց պատերազմացն, զապարանիցն շինութիւնս առ Նէապոլսեաւ, և զՀովանոցն Ծովահայեաց՝ բերկրալիս և գեղատեսիլս, զոր կանգնեաց Լուկուղղոս յանկածէ անտի բարբարոսացն։ Եւ ո՛չ դարձեալ ընդ սեղանոյն Կիմոնի՝ զԼուկուղղեայն, ընդ ռամկականին այնմիկ հիւրընկալութեան՝ զբազմահանդերձն զայն և զդրդալիցն՝ արժանի առն նախարարի. քանզի առաջին սեղանդ 'ի ծախս դուզնաքեայ շատ մարդիկ բուծանէր զօր ամենայն. իսկ վերջինդ՝ մեծապէս շռայլութեամբ հանդերձեալ կազմեալ կայր առաջի սակաւուց միայն գրգասիրաց։ Այլ ո՛ն և օ՛ն Արամազդ՝ Թերևս տիք հասակին նոցա կացին պատճառք տարբերութեան իրաց նոցա. քանզի և գիտեմք իսկ ո՛չ՝ եթէ և Կիմոնն 'ի գործոց անտի քաղաքին և 'ի զօրավարութենէն յեցեալ 'ի ծերութիւն՝ անգործ այնուհետև և անպիտան 'ի մարտս, Թերևս և նա ինքն կեանս վարէր առաւել պերճս և գրգասունս. իբրև առաւել գինեձան էր այրն և զհետ կրթեալ էր սփոփութեանց, և իգասէր բամբասեալ էր՝ որպէս ասացաք։ Այլ գեղեցիկ մրցանք և նահատակութիւնք՝ հեշտասիրելք և նոքա գլխովին, կարձեալ զամենայն ցանկութիւն վատթար 'ի մոռացօնս դարձուցանեն նոցա՝ որոց անդստին 'ի բնութենէն ախորժակք բնաւորեցան քաղաքականք և պերճք։ Այսպէս եթէ 'ի

կռուի անդ անկեալ էր Լուկուղեայ և 'ի զօրավարութեանն, ինձ թուի՝ և ոչ քննիչ ոք անաչառ և ոչ դատաւոր դառն՝ ստգիւտ 'ի նմա գտանէր և ոչ մի։ Եւ այսոքիկ ա-ւադիկ յաղագս քաղաքավարութեան կե-նաց նոցա։

Իսկ 'ի մրցանս զինուորութեանն, յայտ-նի իսկ քաջք և կորովիք գտան երկոքին նոքա ընդ ծով և ընդ ցամաք։ Այլ զոր-օրինակ ըմբիշք պսակաւորք՝ 'ի միում միայն աւուր տարեալ յաղթութիւն 'ի գօտէկռուի և յայլ ևս մրցանս Պանկրա-տեանս, անուանեալ կոչեն զայն՝ Յաղ-թութիւնք նորահրաշք. այսպէս և Կի-մոնն 'ի միում անդ աւուր պսակեալ զԵլ-լադա 'ի կրկին ախոյեանս՝ 'ի կրկնակի յաղ-թութեանց ընդ ծով և ընդ ցամաք, իրա-ւապէս արդէօք բարձերէց կայցէ քան զա-մենայն զօրավարս։

Առ այս և Լուկուղեայ՝ հայրենիքն, բայց Կիմոնն՝ հայրենեացն ետ զտէրու-թիւն։ Նա յաւել քաղաքին իշխանու-թիւն նոր 'ի վերայ թշնամեացն, մինչդեռ տիրացեալ իսկ էր 'ի վերայ նիզակակցացն։ Սա առաջնորդ կացեալ քաղաքին՝ մինչ-դեռ այլոց հնազանդեալ կայր, միանգա-մայն և տէր 'ի վերայ նիզակակցացն կա-ցուցանէր, և զթշնամին պարտեալ նուա-ճէր, նկուն զՊարսիկսն վանեալ 'ի ծովէն, և զԼակեդեմոնացիսն ածեալ՝ կամակար տեղի տալ 'ի տէրութենէն։

Առ այս՝ և գործ զօրավարի գոլով վեհ

և գեղեցիկ՝ 'ի հլուԹեան զզօրականն պա-
հել մարդասէր բարոյիւք, տեսանելիք զԼու-
կուղղոս յիւրոց անտի արհամարհեալ և
խոտեալ. իսկ զԿիմոնն և 'ի նիզակակցաց
անտի յար սքանչացեալ: Քանզի 'ի Լու-
կուղղեայ 'ի բաց օձտեալ սարսեան իւրքն.
և առ Կիմոնն եկեալ դային և եկք և օ-
տարք. Լուկուղղոս եալ մեկնեցաւ բազում
ամբոխիւ ընդ իւրով ձեռամբ, և այսրէն
դարձաւ ամայի. Կիմոնն արձակեցաւ ամ-
բոխիւ ընդ այլոց ձեռամբ, և դարձ արար
եկն նովին ամբոխիւ՝ հնազանդեալ միայն
ընդ իւրով ձեռամբ. երիս իմն յոյժ դը-
ժուարինս պատրաստեալ իւրում քաղա-
քին, խաղաղուԹիւն ընդ Թշնամեաց, ա-
ւագուԹիւն 'ի վերայ նիզակակցաց, և միա-
բանուԹիւն ընդ Լակեդեմոնացւոցն:

Բայց երկոքին դարձեալ՝ գօտէպինդք
քանդեալ տապալեալ տերուԹիւնս մեծա-
մեծս, ենկուն ողջոյն առնեալ զԱսիա, եր-
կոքին ևս՝ անվճարք վրիպեցան 'ի գործոյն.
մին գլխովին առ 'ի բախտէն, քանզի մե-
ռաւ 'ի զօրավարուԹեան անդ և 'ի բարո-
րուԹեանն. այլ ոչ և միւսն անպարտ դըլ-
խովին կացեալ. կամ զի ոչ գիտաց, կամ
զի ոչ զօրեաց հանդարտել զաղմուկ և
զբրԹմնջիւն զօրականին, որով և այնչափ
ատելի գտաւ: Ա՛յլ արդեօք զնոյն կրեաց
և Կիմոնն, քարշեալ 'ի դատաստան յիւրոց
անտի քաղաքացեացն, և 'ի վերջէ վտա-
ռանդեալ խեցեկոյտ վճռով. որպէս զի՝
ըստ Պղատոնին առասացուԹեանն՝ ընդ

ամն տան մի լուիցեն զձայն Կիմոնիսի։ Քանզի որք միանգամ յաւագպետութիւն անդր միտեալք իցեն, նոքա ոչինչ այնպէս հեշտընկալք և փարելիք բնաւորեցան խուժանին. և ստէպ ևս բռնութիւն 'ի վար արկեալ ուղղել և ողջացուցանել զթերին 'ի նոսա և զծամածռեալն՝ ցաւ ածեն նոցա և տաղտուկ. զոր օրինակ և կապք պատանաց բժշկացդ պրկեալք 'ի կազդուրումն ընդաբոյս կայից, խախտեալ անդամոցն։ Սակայն 'ի բանիդ յայդմիկ և ոչ մին արդեօք 'ի նոցանէ ընդ բամբասանօք ոչ իցէ։

Ալ 'ի մարտ պատերազմին յառաջադէմ առաւել խաղաց Լուկուղղոս, ինքն առաջին 'ի Հռոմայեցիս վանեալ բանակաւ զՏաւրոս, և անցեալ ընդ Տիգրիս. և հասեալ կալաւ և 'ի հուր դատեցաւ ակն յանդիման արքայիցն զարքունիսն զԱսիոյ, զՏիգրանակերտ, և զԿաբիրս, և զՍինոպ, և զՄծբին. և ձգեալ տարածեցաւ և տիրեաց և յինքն յանկոյց ձգեաց զժողովուրդս 'ի Հիւսիսոյ կողմանէ մինչև 'ի Փասիս, և յարևելից՝ մինչև 'ի Մարս, և 'ի հարաւոյ՝ մինչև 'ի ծոցն կարմիր, 'ի միասին ընդ արքայութեանցն Արաբացւոց. և հարեալ զլեռրութիւնս զարքայից, վրէպ միայն դատաւ ձերբակալ առնել զնոսա. զի և իբրև զգազանս՝ յանապատս և 'ի մայրիս անկոխս և անմատոյցս Ճողոպրեալք զերծան նոքա։ Իսկ թէ խապառ հար նա զզորութիւն նոցա և 'ի նոյն առաւելաւ նա քան զԿիմոնիսն, քաջայայտ կայ՝ զի անդ

Պարսիկք ոչինչ արդեօք տուգանեալք 'ի Կիմոնէ՝ արագ արագ դարձան և 'ի գիմի Հելլենացւոց հարան, և բանակ ևս ստուար հարին զնոցա յԵգիպտոս։ Իսկ յետ մեկնելոյն Լուկուլլեայ՝ Տիգրան և Միհրդատ նահատակութիւն և ոչ մի այնուհետև 'ի ներքս բերին. այլ Միհրդատ վարեալ յառաջնոց անտի մարտից պատերազմաց, և ոչ մի նուազ ժոռեցաւ արտաքոյ զակշին երևեցուցանել Պոմպէի զզօրն. նա 'ի փախուստ ևս դարձեալ՝ տեղի տուեալ 'ի Բոսփորոն՝ անդ ապա մեռանէր։ Իսկ Տիգրան մերկ և զինաթափ, ինքնին խոնարհեալ անկանէր առաջի Պոմպէի, և 'ի գլխոյն զգսակն առեալ եդեալ առ նորա պատուանդանին, ոչ եթէ իւրովքն ինչ չնթէր Պոմպէի, այլ անկածիւքն յաղթանակին Լուկուլլեայ. և շատ իսկ սիրեաց նա առնուլ ապա 'ի ձեռաց Պոմպէի զնշանակն արքունի՝ իբրու որ յառաջագոյն կապտեալ 'ի նոցանէն։ Եւ արդեօք զօրավար վեհ՝ ըստ որում և ըմբիշ, համարել արժան է զայրն, որ նկուն զախոյեանն թողուցու այնմ՝ որում զհետ նորա կռուել հանդերձեալ ի՞նչ է։

Առ այս և Կիմոնն՝ յորժամ արքային զօրութիւն վատթարեալ իսկ էր, և Պարսիկք ինքնին վատասրտեալք առ 'ի մեծամեծ հարուածոցն և 'ի բազում անգամ փախստենէն, զոր անդուլ և կուռ 'ի վերայ ածին նոցա Թեմիստոկղէս և Պաւսանիաս և Լէովտիւքիդէս, յայնժամ յար-

ձակեցաւ 'ի նոսա. ուստի և հեշտին պարտեաց նա զմարմինս նոցա, որոց ոգիքն 'ի վաղնջուց իսկ էին հարեալք։ Բայց ընդ Լուկուղղեայ 'ի վէգ էկն Տիգրան՝ անպարտելին 'ի բազում մարտս պատերազմաց և գոռոզացեալն 'ի խորհուրդս։

Իսկ 'ի Թիւ բազմութեան խուժանին ոչինչ զուգակշիռք էն մարտուցեալքն ընդ Լուկուղղեայ և պարտեալքն 'ի Կիմուլնէ։ Զի և քաջապէս զուգակշռեալ զամենայնն՝ դժուարին յոյժ ելեալ 'ի նեղութս բերել զդատաստանն վասն երկոցուն նոցա. քանզի Թուի և դից ինքնին գլխովին Թիկնածուք բարեմոյն լինել առ նոսա երկոսին, միումն ազգեալ զոր նահատակելն պարտ էր, և միւսումն՝ յորմէ զգուշանալն պարտ էր։ Որպէս զի և 'ի դից անտի՝ երկոցուն նոցա միանգամայն տալ քուէիցն՝ իբրու լաւ և աստուածաբուն արանց։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Քաղդէացիք կոչէին բնակիչք վայրացն. և կոչին ևս սոքա Քաղիբացիք, որ կային առ սահմանօքն հնոյն Տրապիզոնի և Փառնակիոյ։

2. Օրինակ նմանութեան, քան զոր ոչ ինչ գեղեցիկ, ոչինչ ճշգրիտ, և ոչինչ իմաստասիրագոյն։ Եւ ակնարկէ Պլուտարքոս նմանութեամբն 'ի հանճարեղ Առաջնոն Հիպպոկրատեայ 'ի բժշկականին, յորս ասէ առաջին. Ἡ δὲ τέχνη μακρή, ὁ δὲ καιρὸς ὀξύς. Արհեստն երկար, դէպ ժամանակն սրաւոր։ Եւ զի սրաւարեալ փախչի դէպ ժամանակն, պարտ է 'ի ձեռաց չհանել զնա. այլ զքաջագիտութիւն ժամանակին վարել կամ 'ի կեանս կամ 'ի մահ, որպէս 'ի դեղս, նոյն և յամենայն 'ի գործս։

3. Տե՛ս զայսմանէ 'ի Պատմ. Հայոց. Հատ. Ա։

4. Արսանիա կոչեալն 'ի Պլուտարքեայ՝ է մերս Արծանի։

5. Քանզի և Քսերքսէս էր երբեմն զի եհատ ծակեաց զլեառն Աթոս 'ի Յունաստան՝ անցուցանել ընդ այն զնաւս իւր։ Իսկ Պոպ մոռճանաւոր, փոխանակ ասելոյ՝

Հռովմայեցի. քանզի արկանէին զանձամբ Հռոմայեցիք ազգ ինչ պատմուճանի, որ յն. կոչէր Դիվենոս. և լտ. Դօկա:

6. Փլակկոս Ովրատիոս քերթողն է Հռովմայեցի:

7. Պղատոն 'ի ԺԲ. գիրս. Հասարակապետութեանն՝ որ առ մեօք, ընծայէ զայս ոչ Որփէոսի, այլ Մուսէոսի:

ՊԼՈՒՏԱՐՔԵԱՆ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ՍԵՐՏՈՎՐԻՈՍԻ

ԵՒ

ԵՒՄԵՆԵԱՆ

ՍԵՐՏՈՎՐԻՈՍ

ՈՉԻՆՉ զարմանալի իցէ արդեօք, եթէ յանսահման ժամանակին տարուբեր յաւ-ծեալ բախտին, պատահումն զնոյն բաղում անգամ 'ի նեղքս բերցեն դէպք։ Քանզի եթէ անսահմանաւոր է պատահմանցդ թիւ, ամբաւ իմն ապա մատակարար նման-նուութեան գործոց՝ զհարատուութիւն նիւ-թոյն ունի ինքեան բախտդ գլխովին։ Եւ եթէ արդարև 'ի սահմանաւոր թուոց ան-կեալ նիւթեալ կան գործք, հարկ է ապա բաղում անգամ նոյնօրինակ իրաց լինել 'ի նոյնօրինակ հանդիպից։ Արդ քանզի սի-րեն ոմանք յայսպիսեաց աստի, և ծաղ-կաքաղ ևս ժողովեն 'ի պատմութեանց դարձեալ և 'ի լրոց, որչափ ինչ միանգամ դէպք իցեն իրաց՝ նմանօրինակ խորհրդով և մտաւորութեամբ գործեցելոց. Օրինակ իմն՝ զի երկու կացին Աստեղոսք ականա-ւորք, մին՝ Աստի, և միւսն՝ Արկադացի, և

զերկոսին զնոսա կէ զէքեալ գիշատեաց վա՝
բաղ. և զի՝ և յերկուց անտի Ակտէոնէից՝
մին գէշ արկաւ 'ի շանց, և միւսն՝ 'ի տար՝
փածուաց. և զի և յերկուց անտի Սկիպիո՝
նից՝ մին զառաջինն 'ի պարտութիւն մատ՝
նէր զԿարքեդոնացիս, և միւսն ապա հիմն
'ի վեր քանդէր. և զի և զԵղիոն հասեալ
կալաւ Հերակլէս 'ի պատճառս մատակաց
երիվարացն Լաոմեդոնտեայ, և Ագամեմ՝
նոն ապա 'ի ձեռն փայտակերտ երիվա՝
րին. և երրորդ անգամ դարձեալ Քարի՝
դեմոս, զի երիվար մի անկեալ կայր առ
սեամն գրացն, ուստի արագ ոչ ժամանեցին
փակել Եղիոնացիք։ Եւ զի և յերկուց քա՝
ղաքաց անտի՝ անուանակիցք երկուց բու՝
սոց անուշահոտից, այն է՝ Ցոն և Զիւոնիա,
սահեն՝ 'ի միումն ծնանել քերթողին Հո՝
մերոսի, և 'ի միւսումն՝ մեռանել։

Բէր և մեք յաւելցուք յայսոսիկ ինչ
մի, եթէ և 'ի զօրավարաց անտի քաջա՝
մարտիկքն և որք հնարիմացութեամբ միան՝
գամայն և մեծապէս քաջութեամբ բա՝
զումս առաքինացան 'ի մրցանս իւրեանց,
միականքք էին նոքա. ըստ որում Փիլիպ՝
պոս և Անտիգոնոս և Աննիբաղ, և զորմէ
առեալս եմք 'ի գրել՝ Սերտովրիոս. և որ
ժուժկալութիւն առ կանայս 'ի դէմն բե՝
րէր առաւել քան զՓիլիպպոս, և հաւա՝
տարմութիւն առ բարեկամն՝ առաւել
քան զԱնտիգոնոս, և հեզութիւն առ թըշ՝
նամին՝ առաւել քան զԱննիբաղ. ոչինչ
խոնարհագոյն և 'ի հանճարն քան զմէն մի

'ի նոցանէն. իսկ վեհ քան զնոսա 'ի բախ-
տին, որ դժպհի առաւել գտաւ նմա և ո-
խերիմ ևս քան զմեծազօր զիւր թշնամին.
սակայն և այնպէս հանդուգնատիպ Մեռե-
ղեայ գտանէր 'ի փորձ հմտութեանն, և
Պոմպէի՝ յարիութեանն, և Սիւզայի՝ 'ի
բախտն գլխովին, և Հռոմայեցւոց առհա-
սարակ՝ 'ի զօրութեանն, 'ի դիմի արձանա-
ցեալ նոցա յիւրում վտարանդութեանն
և յեկամուտ զօրավարութեան իւրում 'ի
վերայ բարբարոսացն:

Արդ՝ հանդուգնատիպ սմա գտանեմք
առաւել քան զամենայն այր Հելլենացի
զԿարդիացին Եւմենէս. քանզի և երկոքին
սոքա մեծապէս քաջացան 'ի զօրավարել
բանակի, և քաջամարտիկք միանգամայն և
հնարիմացք, և վտարանդիք դարձեալ եր-
կոքին նոքա յիւրեանց քաղաքաց՝ 'ի գլուխ
կացին օտար ժողովրդոց: Առ այսոքիւք՝ և
ձախողակ վիճակեցան բախտի յիւրեանց
վախճանի, դաւաճանեալք երկոքին նոքա
յարանց անտի՝ ընդ որս 'ի միասին պարտե-
ցին զթշնամին:

Էր Կուինտոսի Սերտորիոսի զարմն՝ ոչ
ինչ անփառունակ 'ի Նուասսոս քաղաք Սա-
բինացւոց: Որբացեալ 'ի հօրէն մնաւ պար-
կեշտութեամբ յայրի մօրէն, և յոյժ էր
մայրասէր. և ասէն զանուն մօրն՝ Ռէա:
Մեծապէս վարժեցաւ նա 'ի փաստաբա-
նականն, և գեռ ևս պատանեակ՝ զօրացաւ
'ի քաղաքին 'ի Ճարտարախօս արուեստէն:
Այլ առ շուք պատուոյն 'ի զինուորու-

թենէն և առ գեղեցիկ մրցանացն, բնաւ իսկ 'ի նոյն պատուասիրեալ կրթեցաւ։ Ապա զինուորեալ առ Կեպիոնէի, յորժամ անդ առաջին Կիմբրացիք և Տեւտոնք հորդան եռուն 'ի Գաղատիա, և նկուն եղեալ 'ի փախուստ խուճապեցան Հռոմայեցիք, սա այս Սերտովրիոս կորուսեալ զերիվարն՝ ինքն վիրաւոր ընդ Հռոդանոս անցանէր 'ի լիւղ հանդերձ զբահիւք պատենիցն և վահանաւն ընդ ահագին հոսանսն. այնպէս իմն կորովի էր մարմնով և վշտամբեր առ կրթանաց մարզիցն։

Իսկ և երկրորդ անգամ 'ի հորդան տալ թշնամեացն ամբաւ խուժանին ահագին սպառնալեաք, զի և հազիւ անդ հանդարտեր այր Հռոմայեցի կալ յակատանի և անսալ զօրավարին, Մարիոս յայնժամ անցեալ կայր 'ի գլուխ բանակին, և Սերտովրիոս յանձն առնոյր գնալ հետազօտել զբանակ թշնամւոյն։ Արկեալ զանձամբ ձորձ կեղտացի և ուսեալ ևս անուանս իմն հասարակս զնոցա բարբառոյն 'ի զբոյցս առ ժամն, չոքաւ խառնեցաւ ընդ խուժադուժսն. և շատ ինչ անդանօր 'ի կարևորաց տեսեալ և շատ ևս լուեալ, դառնայր գայր առ Մարիոս։ Ապա և մրցանակս տանէր նա յայնժամ զքաջութեան զօրականին, և 'ի մարտին բազումս նահատակեալ իմաստութեամբ և արիութեամբ, արդոյ և պատուական լինէր առաջի զօրավարին։ Բայց յետ Կիմբրացւոց և Տեւտոնեանց մարտին արձակեալ նա 'ի հաղարապետութիւն

յԻբերիա առ զօրավարութեամբն Դիդիոսի, կայր 'ի ձմերոցս 'ի Կաստլոն քաղաք Կեղտիբերացւոց։ Իսկ անդանօր զօրականքն բազմահամբարք՝ խեռացեալք և գինեհարեալք՝ արհամարհեցան 'ի բարբարոսացն, որք և գիշերի առաքեալ խնդրեալ օգնութիւն 'ի մօտաքաղաքացի Գիւրիսացւոց անտի, դիմեալք անկան 'ի տունս և խողխողեցին զնոսա։ Գաղտաբար յայնժամ Սերտովրիոս 'ի դուրս ընդ սակաւուց ելեալ և խմբեալ ևս զփախստեայսն, չուրջ եկն զքաղաքաւ և գտեալ բաց զդրունսն՝ ընդ որ բարբարոսք օգնականք սպրդեալ էին 'ի ներքս, չարար ըստ նոցա. այլ պահնակս կացուցեալ անդէն և զքաղաքն 'ի բուռն կալեալ յամենայն կողմանց, զչափահաս մարդիկն առհասարակ կոտորէր։ Յետ այնորիկ զօրականին հրաման տայր մերկանալ 'ի զինուց իւրեանց և 'ի հանդերձիցն, և զբարբարոսացն արկեալ զանձամբ՝ զհետ իւր խաղալ 'ի քաղաք անդր՝ ուստի առաքեցան գիշերային այն հրոսակք։ Եւ այնպէս դաւաճանեալ զբարբարոսան 'ի հանդէս զինուցն այնոցիկ, և անդ բաց զդրունսն գտեալ, որեար շատ անդուստ ընդ առաջ գային 'ի քաղաքէն՝ իբրու քաղաքացեաց իւրեանց և բարեկամաց՝ որ գեղեցիկ 'ի գլուխս զգործն տարեալ ի՛ցեն։ Ուստի և բազումք յոյժ յայնժամ 'ի սուր հարան Հռոմայեցւոց առ դուրս քաղաքին, և կէսք դարձեալ անձնատուրք՝ վաճառեցան։

Յայսմանէ զհամբաւի հարեալ Սերտով-
րիոս յԻբերիա, անդէն իբրև դարձաւ 'ի
Հռոմ՝ կարգեցաւ գանձաւոր Գալլատիոյ
առ Բադոս գետոնին. և կարի 'ի դէպ։
Քանզի և խորհուրդ կալեալ յայնժամ
զՄարսիկեան մարտին, նմա յանձն լինէր
զօրաժողով առնել և զէնս կուտել. զոր
և դեղեցիկս և արագապէս 'ի գլուխս տա-
րեալ՝ ոչ իբրու զայլս 'ի պատանեաց յամր
և դրդասուն՝ այլ երևեցաւ նա ժիր և քա-
ջագործ։

Ապա յաւագութիւն ամբարձեալ զօրա-
վարութեան, ոչինչ կասեալ թուլանայր
'ի զինուորական աշխուժիցն. այլ հանդէս
սքանչելի զբաղկացն 'ի դէմս բերեալ և դի-
մագրաւ 'ի վտանգս նահատակեալ, մօտ
խլեալ կորոյս զմի ակն։ Ընդ որ մեծապէս
պանծայր և ասէր, այլոց ոմանց ոչ ցանգ
յանձինս բարձեալ բերել վկայս զիւրեանց
քաջութեանն, այլ 'ի բաց երբէք դնեն
զմանեական և զնիզական և զպսակսն, իսկ
ինքն հանապազօր ընդ իւր զնշանակսն շըր-
ջեցուցանէ զքաջութեանն, և հանդիսա-
տեսս իւրոյ առաքինութեանն ունի զնո-
սա՝ որ յակն արկանիցեն զաղէտս նորա։
Բայց և ժողովուրդն զարժանին շուք
հատուցանէր առն, քանզի մտեալ նորա
'ի թատրոն՝ 'ի ծափս և 'ի կայթս և 'ի ձայն
ցնծութեան առեալ ժողովէին զնա. ո-
րում և ոչ արք աւագք տիրք և փառաք հեշ-
տեաւ հանդիպեցան։

Սակայն և այնպէս՝ թեկն ապա ածեալ

նորա զԺողովրդապետութեանն, չՀասա-
նէր ինդրոյն արդելեալ 'ի հերձուածոյ
անտի Սիւղղայի, ուստի և Թուի յատե-
լութիւն բերիլ նորա ընդ նմա։ Իսկ իբրև
Մարիոս նկուն եղեալ 'ի Սիւղղայէ՝ փա-
խեաւ, և Սիւղղաս չոչ արար խաղաց ընդ-
դէմ Միհրդատայ, յայնժամ Հոկտաւիոս
հիւպատոս կայր ունէր զկողմն Սիւղղայի.
իսկ Կիննաս միւս այլ հիւպատոս նորու-
թեանց զՀետ կրթեալ՝ թեւակոխէր 'ի վեր
առնուլ զկողմն Մարիոսի զանկեալն։ Յայն-
ժամ Սերտովրիոս չոքաւ միամտեցաւ ընդ
նմա, իբրև անդ և Հոկտաւիոս ինքնին թու-
լակի գործէր և զանդիտէր ևս 'ի բարեկա-
մացն Մարիոսի։ Ապա հիւպատոսք երկո-
քին մարտ մեծ յարդարեալ 'ի հրապա-
րակին, յաղթական եղանէր Հոկտաւիոս.
և Կիննաս և Սերտովրիոս կորուսեալ ոգիս
իբրև բիւր մի, 'ի փախուստ դնային։ Այլ
ապա յինքեանս զբազումս յանկուցեալ 'ի
զօրականէն՝ որ վարատեալ ցանեցան ընդ
Իտալիա, զօրաԺողով անդրէն Ճակատ ընդ-
դէմ յարդարեցին Հոկտաւիոսի։

Իսկ իբրև դարձ 'ի Լիբիոյ արար Մա-
րիոս՝ դալ խմբիլ ընդ Կիննասայ իբրև սոս-
կական ընդ հիւպատոսի, առհասարակ լաւ
համարեցան Ժողովել զայրն. միայն Սեր-
տովրիոս ընդդէմ դառնայր, կամ զի հա-
մարեցաւ՝ ոչինչ այնպէս այնուհետև փոյթ
զնմանէն առնել Կիննասայ, առ իւր զօ-
րավար ունելով քաջ ևս քան զնա. կամ
զի զանդիտէր ևս՝ դուցէ Մարիոս առ վայ-

բաղ բարոյեցն սրտմտութեամբ վեր 'ի վայր արասցէ զամենայնն 'ի յաղթել իւրում։ Եւ ասէր Սերտովրիոս, փոքր մի ևս և վճարել ամենայնին՝ իբրև յօրացեալ իսկ են նոքա. ապա եթէ առ իւրեանս զՄարիոս ժողովեսցէն, նա ոչ ոչինչ զփառսն տարցի զգործոյն և զզօրութեանն, այլ նա գոլով յիշխանակցութիւնն դժուարընդել և անհաւատարիմ։ Ապա յասել Կիննասայ՝ ուղղապէս խորհել Սերտովրիոսի, սակայն ինքն վարանի՝ զիարդ զՄարիոս մերժել՝ զոր ինքնին կոչեաց 'ի գործ անդր, յայնժամ Սերտովրիոս կարձեալ զխօսսն՝ ասէր. "Այլ ես կարծէի՝ Մարիոսի ինքնին անկոչ գալ յԻտալիա, որ աղագաւ և զօդտակարն խորհեցայ. ապա եթէ 'ի քոց հրաւիրանաց, չէր արժան և ոչ խորհուրդ անգամ 'ի սկզբանն առնուլ վասն բանիդ, այլ առանց բանս ինչ ընդ միտ ածելոյ՝ անդէն ժողովել և 'ի գործ վարել զնա"։ Եւ այնպէս ապա կոչէր Կիննաս զՄարիոս. և յելիս զզօրն բաժանեալ, երեքին նոքա կացին զօրավարք։

Իսկ 'ի մարտին վճարել՝ Կիննաս և Մարիոս կիրս ելին յոյժ անհաղորդն 'ի դէմս բերին, զի և Ռէնէ համարել Հռոմայեցւոց զմարտին աղէտն։ Բայց յայնժամ Սերտովրիոս միայն՝ որպէս ասեն՝ ոչ զոք ապանանէր առ սրտմտութեանն, և յետ յաղթութեանն դարձեալ ոչ զոք հարստահարեաց. նա և խոժոռեալ էր ընդ Մարիոս, և առանձինն ընդ Կիննասայ խօ-

սեալ և աղաչեալ, 'ի չափու ածէր բե-
րէր զնա։ Իսկ 'ի վերջէ՝ քանզի ջոլիրք ծա-
ռայից նիզակակցացն Մարիոսի 'ի մարտ՝
սատարք բռնաւորութեան նորա և զօրա-
ցեալք առ 'ի նմանէ և յոքնաթիւք ևս,
կէս մի 'ի թոյլ տալոյն նորա և 'ի հրաման-
նէն, և կէս դարձեալ՝ ուժգինս անիրաւ-
էին ընդդէմ տերանց, փողոտեալ զտեարս,
և բռնաբարեալ զտիկնայս և պղծեալ զման-
կունս, ապա Սերտովրիոս ոչինչ հանդուր-
ժեալ, տայր առհասարակ նեռահար 'ի
մահ վարել զնոսա՝ մինչդեռ նոքա բանա-
կեալ կային համախուռք 'ի միում վայրի.
և էին նոքա բազմութիւն ոչինչ պակաս
քան զչորս հազար։

Իսկ յետ մահուն Մարիոսի և ապա-
նութեանն Կիննասայ, կարգէր 'ի հիւպա-
տոս կրսէրն Մարիոս յակամայս Սերտով-
րիոսի և ընդդէմ օրինաց. և անդ յորժամ
Կարբոնք և Նորբանք և Սկիպիոնք ձախող-
ակի մարտ եդեալ կռուէին ընդ Սիւ-
ղայի 'ի դարձին նորա, և վատթարեալ
կային իրք կէս մի յանարութենէ և 'ի վա-
տութենէ զօրավարացն և կէս մի 'ի մատն-
չաց անտի, ոչինչ բաւական եղև Սերտով-
րիոս առ ժամն ձեռն տալ իրացն՝ որ գնա-
լով գնային և յոռանային. քանզի անդ
հրամանատարքն ինքնին վատախորհուրդք
էին. և ապա ուրեմն իբրև բանակ մօտ Սկի-
պիոնի հարեալ Սիւղայս և բարեկամու-
թեամբ գնացեալ ընդ նմա՝ իբրու 'ի հաշ-
տութիւն խաղաղութեան գալ ընդ մի-

մեանս, յանդուցանէր որսայր զզօրն Նո-
րա, և Սերտովրիոս անդուստ նախասպա-
տուամ եղեալ Սկիպիոնի և խրատեալ՝ էլի-
նէր կամագիւտ, ապա յուսակտուր Սեր-
տովրիոս 'ի փրկութենէ քաղաքին՝ 'ի չու
անկանէր յԻբերիա կոյս. զի թէ երբէք
կանուխ յաջողեսցի հասանել ունել զաշ-
խարհն, անդանօր ամուր ապաստանի էղի-
ցի նա բարեկամացն վտարելոց։

Բայց յուզուէջ նա սաստիկ և դառնա-
շունչ պատահեալ մրրկաց, և հարկաւո-
րեալ անցանել ընդ վայրս լեռնուտս, գնոց
գնէր զանցսն 'ի բարբարոսաց անտի և հարկ
ևս հարկանէր նոցա։ Յայնժամ 'ի սրտմտու-
թիւն բրդեալ արանցն որ ընդ նմա ընդ
դժպատեհ բանն՝ զի Հռոմայեցւոց փոխա-
նակ ոք հիւպատոսի հարկս հարցէ մարդա-
խոշոշ խժդժիցն, նա արհամարհեալ զա-
մենի՝ ասէր գնոց դնել միայն զժամանակն՝
քան զոր արգոյ և պատուական չինք ար-
դեօք՝ որում 'ի մեծամեծս զակն յառեալ
ի՛ցէ. և այնպէս արծաթով յինքն զբար-
բարոսն յանկուցեալ՝ անդէն ետ ընդ ետ
մտանէր ՅԻբերիա։ Անդանօր գտեալ բազ-
մութիւն մեծ մարդկան և առոյգահասակս,
սակայն խեթացեալս առ կուսակալն վասն
զոշաքաղութեան նոցա և խեռութեանն՝
որ ընդ ժամանակս ժամանակս առաքէին
անդր, ուստի և Սերտովրիոս զՀոխան մար-
դասէր քաղաքավարութեամբ յանդուցա-
նէր, և զխուժանն՝ թեթևութեամբ հար-
կացն. և առաւել սիրելի զանձն ընծայէր

նոցա զերծ կացուցեալ զնոսա յօթևա-
նաց զօրականին, պատուէր տուեալ ձմե-
ռոց առնել յարուարձանեայս և ինքն ա-
ռաջին անդ հարկանէր իւր խորան։ Սա-
կայն և ոչ խոպառ ըստ քիմն գնայր բար-
բարոսացն. քանզի՝ի զէն՝ի զարդ վառեալ
զՀռոմայեցիսն որ չոքան ընդ նմա բնակել
անդր՝ արք կատարելահասակք, և ձեռն
ևս՝ի գործ արարեալ կազմել մանգղիոնս
աղգի աղգի և նաւակերտս եռաթիոց, ՝ի
բռին ունէր զքաղաքն. զի թէպէտ և հեզ
և հանդարտ էր՝ի խաղաղութեան, սակայն
և ահաբեկ զանձն ընծայէր թշնամեացն՝ի
մեծամուր պատրաստութենէն։

Յետ այսորիկ լուր առեալ տիրանալոյն
Սիւղղայի՝ի Հռոմ, և զի՝ և Մարիոսի և
Կարբոնի հերձուածն քակտեցաւ, խի-
թայր այնուհետև՝ եթէ արագ արագ հաս-
ցէ անդր զօրու ոք՝ի զօրավարաց՝ի մարտ
ընդ նմա. վասն որոյ և տայր Յուլիոսի Սա-
լինատովրի առնուլ փակել զկիրճն Պիւրե-
նեան լերանցն հանդերձ վեցհազար զօրա-
կանօք։ Յետ ոչ բազմաց ինչ եկեալ հա-
սանէր անդր Գայիոս Աննիոս արձակեալ՝ի
Սիւղղայէ. բայց տեսեալ զանխաբ ա-
մուրսն Յուլեայ, անդանօր առ ստորո-
տովքն նստէր վարանեալ։ Այլ ապա նեն-
դասպան եղեալ Յուլիոս՝ի Կալպուրնիոս-
սէ ումեմնէ՝ մականուն Լանարիոս, և
լքեալ զօրականին զբարձունսն Պիւրենեան,
հասեալ ունէր զայնոսիկ Աննիոս. և յա-
ռաջ ևս խաղացեալ բազմաձեռն գնդաւ

վանէր հալածէր զհակառակամարտսն։ Իսկ Սերտովրիոս անձէռնհաս ճակատ ընդդէմ յարդարել, չոքաւ ապաւինեցաւ 'ի նորն Կարքեդոն երեքհազար արամբք. անդուստ ամբարձեալ 'ի նաւ և հատեալ զծովն՝ ուներ զԼիբիա 'ի Մաւրուսիա։ Անդանօր բարբարոսացն 'ի վերայ անկեալ զօրականին՝ որ յանզգոյշս գնային 'ի խնդիր ջրոյ, զբազումս յիւրոց անտի կորուսեալ Սերտովրիոս՝ միւսանգամ նաւէր յԻբերիա կոյս. անտի վանեալ, խմբեալ ընդ իւր զնաւս հինիցն Կիլիկեցւոց՝ խաղաց 'ի կղզին Պիտուսա, և անդ ունէր զցամաքն՝ վանեալ զդունդ զօրականին զԱննիոսի։

Յետ սակաւուց հասանէր անդր ինքնին Աննիոս բազում նաւուք հանդերձ հինգ հազար վառելովք։ Ընդդէմ նորա կազմեցաւ պատրաստեցաւ Սերտովրիոս 'ի նաւամարտի, և էին նորա միայն մակոյկք թեթեւք արագընթացք, բայց ոչինչ պնդակազմք։ Անդանօր յուզեալ ամբոխեալ ծովուն 'ի սաստկաշունչ զեփիւռէ, յամբառնալ ալեացն բազումք 'ի նաւակաց անտի Սերտովրեայ առ թեթեւութեանն գնացեալ հարկանէին ընդ ժայռսն. և ինքն սակաւ նաւակօք վանեալ 'ի ծովէն բռնութեամբ հողմոյն, և 'ի ցամաքէն դարձեալ՝ 'ի թշնամեաց անտի, այնպէս ծփեալ 'ի խորս աւուրս տասն հազիւ ուրեմն բերէր ընդդէմ ամենի ալեացն և ահագին մրրկին։ Մինչև հանդարտեալ հողմոյն, երթեալ հասանէր նա 'ի կղզիս ուրեք ցիր և ցան և

անջրդի, յորս և գեգերեալ նատէր. ան-
դուստ եղեալ և անցեալ ընդ նեղուցն
Գադիրեայ՝ քերեալ առ աջակողմանէն
արտաքս 'ի խորս ՅԲերիա կոյս, վայր մի
'ի վերոյ բերանոյն Բետեայ՝ որ 'ի ծոցէն
իջեալ Ալանտեան, յանուն նորա կար-
դան զշրջակայ մասն Իբերիոյ։ Անդանօր
նմա պատահեցին նաւաղք այն ինչ եկեալ
Ալանտեան կղզեացն՝ 1 որ են կրկին՝
բաժանեալք ընդ կիրճ մի անձուկ, 'ի բա-
ցէ կան 'ի Լիբիոյ ասպարէզս բիւր մի, և
անուն կարդան նոցա Երանէնսոյ։

Իսկ յայն կղզիսն սեղայ անձրև դուն
ուրեք և չափաւոր, և շնչեն անդ ստէպ
հողմունք քաղցրասիւդ և ցօղատարափք,
և արդասաւոր գործեն և լաւ՝ ոչ 'ի վար
միայն և 'ի տունկ, այլ և պտղածնութիւն
պարգևեն անդանօր ինքնաբոյս մրգաց ա-
ռատ և քաղցր՝ բաւական 'ի բուծանել ան-
վաստակ և անքիրան զժողովուրդն հան-
դարտեալ։ Եւ է յայն կղզիս օդ մշտա-
զուարճ 'ի քաղցրահառնութենէ եղանա-
կացն և 'ի բարեխառն փոփոխութեանցն։
Քանզի հիւսիսին հողմունք և արևելեան 'ի
ցամաքէս մերմէ շնչեալ յայն կողմն, առ
բացաձիգ տարակայութեանն 'ի միջոցին
ամբաւութեան ցանեալ վարատին մինչև
հասեալ անդր։ Իսկ ծովայինքն հիւսիս-
արևմտեան և զեփիւռք շնչեալք անդ շուր-
ջանակի, բերեալ 'ի ծովէն շաղս անձրևոյ
ցիր ու ցան և զովարար 'ի պարզ ցօղագին՝
քաղցր և անոյշ սնուցանեն։ Ոյր աղագաւ

և բարբարոսք ինքնին հաստատութեամբ հաւատան անդանօր զԵղիւսեան զՄարդն և զԵրանելեաց զբնակարանն, զոր Հոմերոսն երգեաց։ Յայսպիսեաց ասոի լուեալ Սերտովրիոս՝ վառեցաւ ցանկութեամբ երթալ բնականալ յայն կղզիս, և 'ի տէրութենէ և ողջոյն 'ի մարտից պատերազմաց հրաժեշտ տուեալ՝ անդանօր կեալ յանդորրու։ Իրազդած բանին եղեալ Կիլիկեցւոց՝ ուրք անխաղաղասէրք և անդադարելիք և ընչաքաղցք և աւարասէրք, ելեալք նաւէին 'ի Լիբիա՝ երթալ և զԻփիթեանն զԱկալիոս 'ի դահն բազմեցուցանել Մաւրուսացւոց։

Յայնժամ Սերտովրիոս ոչինչ սրտաբեկ՝ հաստատեցաւ և ինքնին խաղալ գնալ յօգնութիւն արանցն՝ որ մարտ եդեալ կռուէին ընդ Ակալէայ. զի յոյս նորոգածին առեալ իւրն զօրականք և 'ի մրցանս պատաղեալք, մի թերևս առ կարօտութեան 'ի նմանէն 'ի բաց փարատեսցին։ Մեծապէս խնդացեալ Մաւրուսացւոց ընդ գալուստն նորա, կազմեցաւ պատրաստեցաւ 'ի գործ անդր. և հարեալ վանեալ զԱկալէս՝ նեղէր զնա պաշարմամբ։ Իսկ Սիւրզաս 'ի Թիկունս Ակալէայ արձակեալ զՊակկիակոս ստուար բանակաւ, 'ի դիմի հարեալ Սերտովրիոս՝ սպանանէր զՊակկիակոս, և զբանակն նորա խմբեալ ընդ իւրում զօրականին, եկեալ կռուէր ընդ Տիգենեայ՝ ուր անկեալ ապաւինեալ էր Ակալէս հանդերձ եղբարքք իւրովք։

Արդ Լիբէացիք պատմեն անդանօր 'ի վայրին Թալէաւ զԱնտէոս. բայց Սերտովրիոս անհաւատացեալ բարբարոսացն յաղագս յաղթ հասակի առն, տայր փոր ել զդերեզմանն, և 'ի նմա մարմին դոռեալ երկայնադէզ հասակաւ՝ որպէս ասեն՝ վաթանականգնեան 2, յապուշ հարեալ և պատրուճակս յաղեալ՝ անդրէն զհողակոյտն 'ի վերայ բերէր, և հուչակ հարկանէր զշուք և զհամբաւ զառնն։ Եւ պատմեն Տիգենեացիք, 'ի մեռանել Անտէոսի՝ կնոջ նորա անուն Տիւդէ ամուսնանալ ընդ Հերակլեայ, և 'ի նոցանէ ծնանել Սոփակեայ, որ թագ կապեալ յաշխարհին՝ յանուն ծոր իւրոյ անուանէր զքաղաքն. և թէ՝ 'ի Սոփակեայ ծնեալ Դիոդովրոս՝ բազումս ընդ ձեռամբ նուաճէր 'ի Լիբէացւոց ժողովուրդս, ունելով ընդ իւր բանակ զՀելլենացւոց և զՈղբիանացւոց և զՄիւկենացւոց՝ զորս անդ դաղթականս ած Հերակլէս։ Արդ՝ այսոքիկ պատմեցան ասանօր 'ի մեծարանս երեսաց Յոբայ՝ քաջ պատմաբանի առհասարակ 'ի թագաւորս. քանզի պատմեն՝ նախնեաց սորա սերել 'ի Դիոդովրեայ և 'ի Սոփակեայ։

Անդանօր ապա Սերտովրիոս տիրացեալ ամենայնին, որք միանգամ անձնատուր անկան և ողբաւորք, ոչինչ զրկեաց զնոսա. զգոյս նոցա դարձուցանէր առ նոսա, զքաղաքս, և զիշխանութիւնն. և առնոյր ընդունէր միայն զոր կամակար տային նմա։ Ապա խորհուրդ կալեալ՝ յոր կողմն

խաղալ դիմել, գայլին հասանէին առ նա դեսպանք 'ի Լիւսիտանացւոց հրաւիրակք նմա 'ի զօրավարութիւն. քանզի և աւագ և քաջի զօրավարի պէտք էին նոցա առ ա՜հի երկիւղին Հռոմայեցւոց, և 'ի նա միայն ակնկառոյց էին, զի և բարոյից առն 'ի վերայ կացեալ էին 'ի մերձաւորաց նորա։ Եւ ասէն զՍերտորիոս ոչինչ դիւրըմբռնելի ոչ 'ի հեշտութենէ և ոչ յերկիւղէ, այլ անդատին 'ի բնութենէն անզարհուրելի այր 'ի դժոխըմբերելիս, և պարկեշտացեալ անձն 'ի գեղեցիկ բախտին. առ այս՝ և ոչ ինչ այնպէս դիմագրաւ իբրև զզօրավարս ժամանակին խաղալ դիմել և արագ արագ մարտ յարդարել. սակայն և յամենայն 'ի դէպս և 'ի պէտս մարտին՝ խարդաւանել և զդէպ ժամանակն զբռամբ ածել և վայրս անխաբս հասանել ունել և շուտափոյթ չու առնել և հնարիմացութիւնս խորագիտութեամբ 'ի վեր բերել, էր նա այսոցիկ ամենայնի 'ի ժամանակին Հարտարապետ վեհագոյն. և զի և լիաբաշխ 'ի մրցանակս քաջութեանց՝ չափով զպատուհաս յանցանացն 'ի վերայ ածէր։ Թէպէտ և անագորոյն և աննուէր նորա հանդէս գործոյն 'ի վախճանի կենացն առ պատանդան, Թուի իմն ոչինչ հեզ և հանդարտ անդատին 'ի բնութենէն զնա 'ի դէմս բերել մեզ, այլ խոհականութեամբ հեզացեալ 'ի պէտս ժամանակին. բայց ինձ Թուի՝ Ճշմարիտ առաքինութեանն և քաջարմատ ըստ խոհականութեան բանին՝ եր-

բէք 'ի հակառակն չյոռանալ կիրս ըստ բախտին. սակայն և անհնարին չէ, եթէ և արք քաջախորհուրդք և քաջամոյնք 'ի բարս՝ 'ի դժպհի կիրս ըմբռնեալ մեծաց աղէտից, միանգամայն ընդ բախտին շրջեսցին և յիւրեանց բարոյից։ Զոր և յայնժամ պատահեալ գիտեմ Սերտովրիոսի. այն՝ որ ամայի լքեալ 'ի բախտէն և դառնացեալ 'ի ձախողակ եղիցն՝ ժանտացաւ ընդդէմ արանցն՝ որ հարստահարեցին զնա։

Արդ յայնժամ հրաւիրեալ Սերտովրիոս 'ի Լուսիտանացւոց անտի, յուղի անկեալ 'ի Լիբիոյ, և զօրավար միահեծան կարգեալ առ 'ի նոցանէ և անդէն 'ի կարգ ածեալ զնոսա, առնոյր գրաւէր զմերձաւորն Իբերիա. քանզի և շատք անդանօր կամակար յանձն լինէին 'ի նա, յաւէտ ինն՝ առ հեզութեան և ժրութեան քաջութեան առնն, նա և ինքն գլխովին խորագիտութեամբ նիւթէր իրս համոզակեր հանդիսիւ. որոց և առաջին դէպքն այն Եղին, պատահեալ օրինակ զայս. Սպանոս ոմն այր սոսկական և գիւղաբնակ՝ էր երբեմն զի պատահեալ նորածին Եղին 'ի դաշտի՝ որ փախուցեալ գնայր 'ի ձեռաց որսորդացն, Եղին ոչ կարացեալ ժամանել՝ հետամուտ կալաւ զեղնորթն, յապուշ հարեալ ընդ նորաբքանչ գոյնն, (քանզի էր համակ սպիտակ)։ Անդանօր մօտ ըստ դիպաց բանակ հարեալ Սերտովրիոսի, և խնդամտաբար բնաւորեալ առնուլ ընդունել զՀիւրոյթս զամենայն զորսոց էրէոց

և զպտղոց անդաստանաց, և մարդասիրա-
պէս ևս վարձատրէր ընծայաբերիցն. ապա
և Սպանոսի առեալ զեղնորթն առաջի մա-
տուցանէր նմա։ Ար ընկալաւ Սերտովրիոս
և ինդամտէր առ ժամն, այլ ոչ մեծ ինչ
համարեցաւ. յետ այնորիկ ձեռնընդէմ և
հեշտընկալ ուսուցեալ զեղնորթն, զի և 'ի
կոչելն զնա՝ իմանայր էրէն և զհետ ընթա-
նայր նորա ամենայն ուրեք. առ այս՝ և ոչ
ահաբեկէր ինչ նա 'ի խռով և 'ի շառա-
չիւն բանակին. և այսպէս տակաւ տակաւ
զբան զայն 'ի բարեպաշտութիւն անդր վեր
առեալ Սերտովրիոս, ասէր զայն եղնորթն
պարգև գալ յԱրտեմեայ. և հռչակ ևս
հարկանէր՝ բազում ինչ 'ի գաղտնեաց ցու-
ցանել նմա 'ի կենդանւոյն. գիտելով չափ
զբարբարոսացն զանկակից հեշտընկալու-
թիւն 'ի նորակրօնութիւն անդր։

Ար այս դարձեալ՝ և հնարս այլ նիւթէր
նա։ Յորժամ 'ի ծածուկ ինքն իրաղեկ
լինէր զթշնամեաց հրոսակէն 'ի սահմանս
սէրութեանն, կամ թէ զմտաբերել 'ի
վտարանջութիւն ինչ քաղաքի, այնպէս
իմն կարծեցուցանէր՝ եղնորթին պատմել
նմա զայն 'ի քուն և հրաման տալ 'ի պատ-
րաստի զզօրն ունել։ Դարձեալ և յոր-
ժամ լուր ղյաղթութեանն առնոյր զնե-
րոց զօրավարացն, 'ի ծածուկ զաւետաբերն
պահեալ՝ արտաքս զեղնորթն ածէր բոլո-
րեալ պսակաւ 'ի նշան աւետեաց, և քա-
ջալերէր խրախոյս կարդայր խժդժիցն զոհ
յաղթել դիցն, իբրու որ մերձ ընդ մերձ առ-

ցեն նոքա լուր զգեղեցիկ Եղից։ Ապա զայս
օրինակ հեզացուցեալ զվայրենի մարդիկն,
պատրաստս և յօժարամիտս գտանէր զնո-
սա և յայլ ամենայն գործս. քանզի և հա-
ւանեցան իսկ նոքա 'ի միտս՝ եթէ ոչ պատ-
գամ ուրեմն օտարական առն առաքինորդէ
նոցա, այլ աստուած ոմն գլխովին։ Ա-
այսոքիւք՝ և հաւատոիք ևս 'ի նեբքս գայլն
յարդեանց անտի. քանզի գնալով գնայր
և բարգաւաճէր զօրութիւն նորա 'ի վեր
քան զբան։ Քանզի արամբք երկու հազար
և վեցհարիւր՝ որոց անուն կարդայր Հ-
մայեցիս, Թէպէտ և եօթն հարիւր 'ի Ա-
բէացւոց խառն կային՝ անցեալք ընդ նմա
'ի Ալեսիանիա, և չորիւք հազարօք՝ յաս-
պարաւորաց Ալեսիանացւոց և եօթնհա-
րիւր այրուձիով, մարտ եգեալ կռուէր
ընդդէմ չորից զօրավարաց Հռոմայեցւոց.
որոց էին երկոտասան բիւր հետևակաց, և
վեցհազար այրուձիոյ, երկու հազար ա-
ղեղնաւորաց և պարսաւորաց, և քաղաքք
բազումք. իսկ ինքն քսան միայն քաղաքաց
տիրացեալ էր։

Ա՛յլ Թէպէտ և այնչափ փոքրոգի զօ-
րութեամբ ձեռնամուխ 'ի գործն եղև, ոչ
ժողովուրդս միայն բազումս ընդ իւրև
նուաճեաց, և քաղաքս բազումս հասեալ
կալաւ, այլ և 'ի զօրավարաց անտի ա-
խոյենից հար վանեաց զԿոտոտաս 'ի նա-
ւամարտի 'ի կրճն անդ մօտ 'ի Մելլաւրիա.
'ի փախուստ դարձոյց զՓիդիոս իշխան Բե-
տիկեայ մօտ 'ի Բետիա՝ տապաստ արկեալ

երկուս հաղարս 'ի Հռոմայեցւոց. և 'ի ձեռն իւրոյ գանձաւորին վանեաց զԴոմ-
տիոս և զԼուսիոս փոխանակ հիւպատոսի զմիւսոյ Իբերիոյ. 'ի մահ վարեաց զԹովրա-
նիոս զմիւս զօրավար նոցա՝ զոր արձակեաց Մեռեղղոս բանակաւ ընդդէմ նորա: Նաև
զՄեռեղղոս ինքնին գլխովին զայր աւագ և նշանաւոր 'ի ժամանակին յամենայն
Հռոմայեցիս՝ ոչ 'ի սակաւ ինչ աղէտս ա-
ռեալ պաշարեաց. և այնպէս իմն 'ի նեղն
արկանէր, զի և Լևկիոսի Լուկլիոսի 'ի Նաբ-
բոնեան Գաղատիոյ խաղալ գալ 'ի Թի-
կունս առնն. առ այս՝ և 'ի շտապ տագնա-
պի առաքել անդր 'ի Հռովմայ մեծին Պոմ-
պէի զօրու հանդերձ: Որպէս զի և վարա-
նեալ իսկ էր Մեռեղղոս հնարել կռուել
ընդ քաջի և ընդ խիզախ առն. զի նա ցանգ
խոյս տուեալ 'ի Ճակատամարտ մարտէ՝
բիւրազգի փոփոխէր ժիրաժիր և թեթև
Իբերացի զօրականաքն. իսկ անդուստ Մե-
ռեղղոս 'ի մարտ բնաւորեալ համագունդ
և կարգաւոր, 'ի գլուխ կացեալ էր քա-
ջամուր և միախուռմբ փաղանգի. և որ քա-
ջապէս կիրթ էր 'ի վեգ գալ ընդ թշնա-
միսն և վանել հարկանել, այլ ոչինչ ձեռն-
հաս էր՝ ըստ որում Սերտովրեանքն՝ լեռ-
նագնաց չու առնել խաղալ, հետամուտ
զհետ պնդել յարափախուստ հոլմանթռիչ
մարդկանն, և բերել զկիրս քաղցուն և
բուծանել անհուր կերակրովք և անվրան
կալ: Առ այս՝ և 'ի ծերութիւն յեցեալ
Մեռեղղոս, և 'ի բազում և 'ի մեծաց մար-

տից հանդարտեալ կեանս վարէր դիրդս, և անդուստ ախոյեան 'ի ժամուն ունէր զՍերտովրիոս զառոյգ անձն և աշխոյժ, քաջակորով սքանչելի և արագ և ժուժկալ։ Որ և ոչ 'ի պարապութեանն անդամ երբէք նա ոչ հատաւ 'ի գինեբբուս, և սովորեալ ևս էր ժուժալ քրտնաջան վաստակոց և երկայն ճանապարհաց և անդուլ տքնութեանց, շատ համարեալ զկեկակրիկն և զանպաճոյճն. և ցանգ տարաշրջիկ և յորս ելանելով 'ի պարապութեանն՝ գիտէր իսկ քաջ և ճողոպրել փախստեամբ և հետամուտ փակել պաշարել, զի և տեղեակ և հմուտ էր ամենայն ապատ և անապատ վայրացն։

Ուստի և Մեռեղլոս ոչ կարելով մարտ ընդ նմա յարդարել պատերազմի, ինքն զպարտեցելոց մարդկանն կրէր կիրս, և Սերտովրիոս փախստեայ հնարիմացութիւնն՝ զհետամուտ յաղթականացն։ Քանզի և ոչ պարապ թողոյր նմա պաշար ժողովել զջրոյ և զկերակրոյն, քարընդոան եղեալ նմա 'ի չու ճանապարհին նորա, և չարչարէր 'ի բանակել նորա. և ուրեք 'ի նստել և 'ի պաշարել նորա, արագ և ինքն 'ի վերայ հասեալ նեղէր զնա կարօտութեամբ, մինչև զօրականին նորա ոչ ևս հանդուրժել վչտին։ Եւ քանզի և 'ի մարտ մենամարտիկ ձայն տայր Սերտովրիոս Մեռեղլեայ, անդուստ զօրականն աղաղակ բարձեալ ասիպէին զնա 'ի կռիւ զօրավարի ընդ զօրավարի, և հռոմայեցի առն ընդ հռոմայեցւոյ.

իսկ 'ի խոյս տալ նորա՝ Թէպէտ և Եպէրէին
ևս, նա ծիծաղէր, և կարի իսկ քաջ. քան-
զի առն զօրավարի՝ որպէս Թէոփրաստոս
ասէ՝ զմահ մեռանել պարտ է զզօրավարի,
և ոչ զվահանաւոր սոսկականի։ Ապա տե-
սեալ Մետեղղոս՝ զի 'ի ծարաւ ջրոյ դիւր-
ըմբռնելիք են Լանգոբրացիք՝ որ ոչ սա-
կաւ Թիկունս էին Սերտովրիոսի, (քանզի
և 'ի քաղաքին մի միայն ջրհոր էր նոցա. և
որ պաշարէր՝ տիրանայր 'ի վերայ աղբերցն
որ 'ի բուրաստանն և որ առ պատուա-
րոքն), անդր ապա խաղաց գնաց Մետեղ-
ղոս պաշարել՝ եդեալ 'ի մոի յեռ աւուրց
երկուց ունել զքաղաքն 'ի պակասել ջրոյն.
հրաման ետ զօրականին պաշար հինգօրեայ
միայն բառնալ ընդ իւրեանս։ Բայց Սեր-
տովրիոս ՃԵպով 'ի Թիկունս հասեալ քա-
ղաքին, հրաման տայր տիկս երկու հազար
ընուլ ջրով, և առ մէն մի տիկ բաշխէր ար-
ծաթ բազում. իսկ յԻբերացւոց անտի և
Մաւրուսացւոց նահատակելոց, այրընտիր
զկորովիսն արարեալ և զարագոտինսն, ար-
ձակեալ զնոսա զլեառն լեռնայն գնալ՝
պատուիրէր զտիկսն յանձն առնել քաղա-
քացեացն, և 'ի դուրս ընդ իւրեանս ածել
զխուժան քաղաքին, զի կայցէ ջուր բաւա-
կան զօրականին յարբումն։

Լուր զբանին առեալ Մետեղղոս, 'ի
խոր խոցեցաւ. քանզի և զօրականին իւրոյ
կերակուրք սպառեալ էին։ Առեալ յայն-
ժամ զԱկուինոս առաքէր վեց հազար ա-
րամբք 'ի խնդիր կերակրոյ։ Իրազեկ Սեր-

տովրիոս եղեալ՝ դարանամուտ լինէր 'ի վերայ Ճանապարհին. և անդ 'ի դարձին Ակուինոսի դռոյթս տուեալ 'ի հովանաւոր ձորոց՝ երից հազարաց արանց 'ի վերայ նորա, ինքն 'ի հանդիպոյ անկեալ 'ի վերայ՝ 'ի փախուստ դարձուցանէր զնա. զկէսս տապաստ արկանէր, և զկէսս ձերբակալ առնէր 'ի զօրականէն։ Ապա Մետեղղոս ժողովեալ զԱկուինոս կապուեալ 'ի զինուց և յերիվարէն, կորանոք զպաշարումն լքեալ դառնայր յեռս, մեծապէս հեգնեալ 'ի քրքիջ յԻբերացւոց անտի։ Ոյց աղագաւ և սքանչացաւ Սերտովրիոս և սիրեցաւ 'ի բարբարոսացն. առ այս դարձեալ՝ զի և 'ի զէն 'ի զարդ վառեալ զնոսա և կազմութիւն տուեալ նոցա, և նշանս ևս նոցա ըստ Հռոմայեցւոց օրինին բաշխեալ, և այնպէս զվայրագութիւնն 'ի նոցանէն կարճեալ և զգազանութիւնն, 'ի բազմաձեռն գեղգուրայն՝ բանակ զօրաց առեալ յարդարէր։ Դարձեալ առ այս՝ և արծաթ և ոսկի յոյժ 'ի գործ առեալ՝ զարդարէր ըզսաղաւարոս գլխանոցաց նոցա, և խայտաճամուկ յօրինէր զասպարս նոցա. և ուսուցեալ ևս նոցա քղամիդս ծաղկեայ արկանել և պատմուճան, և զամենայն ըզծախսն յանձնէն 'ի նեղքս բերեալ, և գեղեցիկ և յարդարուն ցուցեալ, այնպէս յինքն յանդուցանէր զնոսա։ Բայց 'ի վերքան զամենայն յանդոյց զնոսա՝ բարեգործեալ առ մանկունս նոցա։ Քանզի ժողովեալ 'ի մեծ քաղաքն Ոսկա 'ի քաջազար-

մից մանկանցն, և վարժեալ հելլենացի և հռոմայեցի դպրութեանց կարգեալ նոցա, թէպէտ և 'ի Նեղբոյ՝ իբրև 'ի պատանդի ունէր առ իւր զնոսա, սակայն և քաջ կրթէր մարդէր զնոսա՝ զի յարբունս հասեալ 'ի քաղաքին գործս և յիշխանութիւն պարապեցուցէ զնոսա։ Մեծապէս խնդացեալ էին հաւք՝ տեսեալ զմանկունս իւրեանց, զի այնպէս հրահանգք և համբաւք ժամ 'ի ժամէ ելեալ հեռևէին 'ի վարժարանս. և զի՝ և Սերտովրիոս ինքնին ծախէր վասն նոցա, և ստէպ ինքն նստեալ համար առնոյր զնոցա, և բաշխէր տայր մրցանակս արժանաւորացն, և պարգևէր զնոսա 'ի քայռից անտի ոսկւոյ՝ որոց անուն կարդան Հռոմայեցիք՝ Պ՝-ԼԼ։

Եւ էր յայնժամ սովորութիւն զօրացեալ Իբերիա, զի անձնապահապէտք զօրավարին՝ յանկանել նորա տապաստ՝ մահակից նմա լինէին. և կոչէին զայն բարբարոսք՝ Զօն Նո-Իրոց։ Արդ այլոց զօրավարացն նուազունք էին թիկնապահք և նիզակակիցք՝ յանձն առնուլ զայն գործ. բայց Սերտովրիոսի՝ բազումք բիւրաւորաց մարդկան 'ի նոյն նուիրեալք զհետ գնային։ Եւ պատմեն՝ բանակի նորա երբեմն 'ի պարտութիւն մատնիլ մերձ քաղաքի ուրեք, և 'ի վանել յերեսաց թշնամւոյն, անդ զանձանց անհոգացեալ Իբերացիք և միայն Սերտովրիոսի փրկութեանն պատկառ կացեալք, բարձեալ զնա 'ի վերայ ուսոց այնպէս տեղւոջէ 'ի տեղի ածէին

բերէին մինչև 'ի պարիսպ անդր, և այնպէս յանդորր զնշխանն հանեալ՝ ապա այր այր 'ի փախուստ խուճապէր։

Բայց ո՛չ Իբերացւոց միայն ըղձակերտ զանձն ընծայեաց Սերտովրիոս, այլ և Իտալիոյ զօրականին գլխովին. ուստի և անդր յԻբերիա եկեալ հասեալ յայնժամ բաղմահարուստ ընչիւք և բազմաձեռն գնդաւ Պերպենեաս վէնտուլեէս 'ի կուսակցաց անտի Սերտովրիոսի, և խորհուրդ կալեալ մարտ ինքնին առանձին գնել կռուել ընդ Մեսեղղեայ, զչարեալ ցասնուին զօրականք նորա. և բաղում ինչ զբոյց 'ի բանակին նորա լսելի լինէր վասն Սերտովրիոսի, որ աղագաւ 'ի խոր խոցէր ինքնին Պերպենեաս՝ այր ճոխացեալ ազնուականութեամբ և ընչաւէտութեամբ։ Անդանօր լուր առեալ և զչուոյ անցիցն Պոմպէի ընդ Պիւրենեանս՝ յայնժամ զօրականք Պերպենեայ զէն 'ի ձեռս առեալ և զգնդաց դրօշական կորզեալ՝ բողոք բարձեալ ընդդէմ նորա՝ ստիպէին առնուլ տանել զնոսա առ Սերտովրիոս. և սպառնալիս ևս կապէին թողուլ լքանել զնա և երթալ խմբիլ ընդ քաջի առնն՝ որ զանձն և զընկերսն ապրեցուցանել կարօղն իցէ։ Ապա բռնադատեալ Պերպենեաս, առեալ ածէր զնոսա և խմբէր առ Սերտովրիոսի գունդ զօրաց յիսուն և երեք։ Իսկ և Սերտովրիոս յաւելեալ առհասարակ և զորս յայսկոյս Իբերոս գետոյն (քանզի և 'ի կողմանց կողմանց խուռն ընթանային առ նա ժողո-

վուրդք), տիրացաւ ստուարացոյց զդունդն. սակայն տագնապեցաւ յանձն իւր ընդ վայրենի յանդգնութիւն խժգժիցն, որ բողոք բարձեալ անդէն ձեպ ընդ ձեպ ժողեցան անկանել 'ի վերայ թշնամեացն։ Նա կայր և ամոքէր ողոքէր զնոսա. իբրև զայրագինս եռեալս զնոսա և ըմբոստացեալս, թողոյր այնուհետև ըստ կամն նոցա կռուել. ակն ունէր թէ ո՛չ սպառասպուռ հարեալք՝ այլ միայն վատթարեալք 'ի կռուին՝ 'ի հնազանդութեան այնուհետև կացցեն նոքա։ Որպէս և դէպք իրացն յաջողեալք ըստ խորհրդոյն, ինքն փութացեալ 'ի թիկունս նոցա և ժողովեալ 'ի փախչել նոցա, առեալ յանդորրու ածէր 'ի բանակ անդր։

Ապա 'ի քաջալերս խրախոյս արտաբերկութեան նոցա՝ յետ սակաւ աւուրց 'ի մի վայր խմբեալ զամենեսեան եկեղեցի մեծ, տայր ածել զառաջեաւ երիվարս երկու, մին վատեալ յոյժ և ծերացեալ, և միւս ևս՝ յաղթ և առոյգագաւակ՝ ագի ունելով գեղեցիկ և թաւամազ։ Առեալ կացուցանէր առ վատելոյն զայր մի յաղթահասակ և հաստաբազուկ, իսկ առ քաջի երիվարին՝ զայր փոքրահասակ և նկուն։ Տուեալ ապա նշան երկոցուն նոցա, անդէն հաստաբազուկն կալեալ երկոքումբք ձեռօքն զագի զվատելոյ երիվարին, ձիգն զամենայն թափեալ քարշէր ձգէր՝ իբրու ողջ առնուլ կորզել զնա. իսկ անդուստ ապիկարն այր՝ զմազս զքաջի երիվարին

կայր և մի մի առեալ խլէր։ Արդ երբև ա-
ռաջինն ոչ սակաւ ինչ անավաստակ յոգ-
նեալ, և քրքիջ ևս շատ գործեալ 'ի տե-
սանելիսն՝ 'ի բաց եկաց 'ի գործոյն, իսկ
անդ ապիկարն 'ի սուղ ժամանակի և ան-
քիրան մաղազերծ զագին առնէր, յայն-
ժամ յոտն կանգնեալ Սերտովրիոս ասէր
այսպէս. "Տեսէք աւադիկ ոգք նիզակա-
կիցք, զի քան զբռնութիւն զօրաւոր ևս
է երկայնմտութիւն. և շատ ևս իրք՝ զոր
ձեպ ընդ ձեպ հնար չէ գործել՝ տակաւ
տակաւ գան 'ի կատարումն։ Որպէս զի և
համբերատար երկայնմտութեան անկռուե-
լի է զօրութիւն. և նովաւ զամենայն ոյժ
հարեալ վատթարէ ժամանակն ինքնին,
մարտակից բարեկամ որոց միանգամ դէտ-
ակն կալցեն խոհականութեամբ քաջա-
դիպութեան նորա. իսկ և ոխերիմ յոյժ՝
ոգք միանգամ յանդէպ ժամուն ձեպեալ
փութացին"։ Յայսպիսեաց ասոի նիւ-
թեալ օր ըստ օրէ Սերտովրիոս 'ի քաջալեր
միխթար բարբարոսացն, ակնկալեալ մնայր
դէպ ժամանակին։

Բայց և հնարիմացութիւն նորա առ
Քարակիտացովքն՝ ոչ անչացաւ ոչինչ պա-
կաս քան զամենայն նահատակութիւնս
նորա. Քարակիտացիք այս՝ ժողովուրդ են
'ի վերոյ գետոյն Տագոնի. ոչ բնակեն նո-
քա ոչ 'ի քաղաքի և ոչ 'ի շէնս, այլ կայան
բնակութեան նոցա է լեառն մեծ և բարձր,
ուր են անձաւք և քարանձաւք դիտելով
ընդ հիւսիս. իսկ գաւառն՝ որ 'ի ներքոյ՝

շաղախ լինն կաւուտ և աղդ բերէ հողոյ դիւրափխրելի սանդանման, ոչ ժուժկալէ ոտից ընթանալեաց, և վայրիկ մի հպեալ՝ հոսի մանրամաղ իբրև կիր անշէջ կամ իբրև աճիւն։ Արդ այս բարբարոսք մտեալք զօղեալք 'ի դարանն յայն յահէ երկիւղի պատերազմաց, և անդր կուտեալ զկապուտ և զաւար իւրեանց՝ կային յանդորրու ապահովեալք իբրու յանքոյթ և յանխաբ վայրս։ Իսկ էր յայնժամ Սերտովրիոս մեկուսի 'ի Մեռեղղոսէ, բանակ հարեալ մօտ 'ի լեառն անդր. և անդուստ բարբարոսք անգոսնէին զնա իբրև 'ի պարտութիւն մատնեալ։ Նա կամ 'ի սրտմտութիւն բերեալ, կամ թէ ցուցանել նոցա՝ զի փախստական չէ, աշտանակեալ ընդ ծագել աւուրն՝ չոքաւ զիններ զկայսն զայն անկասկածելի յամենայն կողմանց. և մինչ դեռ անդ յայսկոյս յայնկոյս ընդվայրայած լինէր և 'ի զուր սպառնալիս գոռայր, տեսանէր ամբ մեծ փոշւոյ ամբարձեալ 'ի հողոյ անտի և հողմավար գումարեալ գայր ընդդէմ նոցա։ Քանզի՝ (որպէս ասացի)՝ հիւսիսահայեացք էին քարանձաւք նոցա. և հողմն շնչեալ ՅԱՐՕՅ անտի՝ որում կէսք անուն կարդան ԿԷՆԻՈՍ, յոյժ տիրացեալ գոյ 'ի վայրն, և սաստկաշունչ ևս է քան զամենայն հողմունս վայրացն՝ թափեալ միանգամայն 'ի գիծին դաշտաց և 'ի ձիւնախաղաղ լերանց. և 'ի ժամանակին ևս յայնմիկ 'ի խոր ամարայնի սաստկացեալ և յօրացեալ ևս 'ի հալելոյ

հիւսին սառամանեաց, քաղցր և անոյշ
ընչեալ՝ զովացուցանէր զցերեկ զբարբա-
րոսն և զանասունս նոցա։ Ապա մոսխորհ
վասն իրացն եղեալ Սերտովրիոս, և տեղե-
կացեալ ևս 'ի գաւառականաց անտի, հրա-
ման տայր զօրականին զի առեալ կունծս
'ի սպնգային հողոյ անտի և յաճիւնային,
բերեալ հանդէպ լերին՝ կուտեսցեն կոյտս
կոյտս. զայն տեսեալ բարբարոսացն և կար-
ծեալ ամբարտակ կանգնելընդդէմ նոցա,
ծաղր առնէին։ Իսկ Սերտովրիոս անդ ոչ-
ջոյն զցայգն 'ի գործ առեալ զզօրականն,
ապա յետ այնորիկ յետս նահանջէր։

Այլ յառաւօտուն պահու զառաջինն
սիւգ հանդարտ ընչեալ՝ յուզէր շարժէր
զմանրամաղն զհողակուտին, և ցան և ցիր
գնային սիւռէին իբրև փետեկս նրբինս,
բայց ապա յարևածայրն ուժգնակի շըն-
չեալ կեկիսս, և փոշոտեալ բարձանցն,
անդ և զօրականն ձեռն 'ի գործ հիմն 'ի
վեր քրքրեալ յուզէին զհողաբլուրն և մանր
էին փշրէին զկաւն. և կէսք դարձեալ ե-
րիվարս 'ի վեր 'ի վայր գնացուցանէին անդր
և ամբոխեալ սաստիկ ևս զփոշեալից հողն՝
տային հողմոյն, որ և ոչջոյն զաճիւնա-
ցեալն առեալ նիւթ և ամբարձեալ արկա-
նէր Թափէր 'ի կայս անդր բարբարոսացն.
ոյց և մուտք դրացն կային 'ի հանդիպոյ կե-
կիսին, և լուսանցոյց այլ ոչ գոլով 'ի
քարանձաւն բայց 'ի մոխց անտի հողմոյն,
անդէն արագ մեգ մառախուղ ելեալ
զբբոք խժդժիցն, հեղձամղձուկ լինէին 'ի

տուր և առ ընչոյն՝ ծծեալ զոգն գժոխքմ-
բեր և զաձիւնախառն։ Ուստի և 'ի տագ-
նապ տարակուսի բերելով վշտին զաւուրս
երկուս, ապա յերրորդումն անձնատուր
լինէին, յօրացեալ Սերտովրիոսին քան 'ի
զօրութեան՝ առաւել ևս 'ի փառս. զի
հնարաւոր իմաստութիւն քաջացաւ յայն
ինչ՝ որ 'ի զինուցն անվանելին էր։

Ապրդ Սերտովրիոս ցոր վայր մարտ ե-
գեալ կռուէր ընդ Մեռեղղեայ, թուէր
ինձն այնպէս բազում ինչ նահատակել նմա՝
առ 'ի ծերութենէ հասակին և 'ի անկա-
կից դանդաղութենէն Մեռեղղեայ, որ
նկուն կայր առաջի խրոխտ և խիզախ առն՝
որ 'ի գլուխս անցեալ էր քան զօրաց՝ ա-
ռաւել ևս ասպատակաց բանակի. իսկ
յորժամ բանակ հարեալ մօտ Պոմպէի որ
անցեալ իսկ էր ը Պիւրենեանն, 'ի գործ
վարեաց ընդդէմ նորա բնաւ իսկ զձիգն
մրցանաց զզօրավարաց մարտի, և հնարից
ընդդէմ հնարս նիւթեալ և մեծապէս ըզ-
գուշացեալ՝ 'ի վերոյ անցանէր քան զՊոմ-
պէոս, յոյժ ապա այնուհետև զհամբաւի
հարաւ այրն և մինչև անդր 'ի Հռոմ, ի-
բրու որ քան զամենայն՝ որ առ նովաւ զօ-
րավարք՝ առաւել ևս քաջ 'ի մղել մար-
տի։ Քանզի և ոչ գուշնաքեայ ինչ էր
համբաւ փառացն Պոմպէի 'ի ժամանա-
կին 'ի քաջագործի նահատակութեանց
առնն ընդդէմ Սիւզղայի, որպէս զի և
Սիւզղայի ինքնին մականուն կարդալ նմա
Մ«ինոս», այն է՝ մեծ. առ այս՝ և զյաղթա-

նակի փառս տարաւ նա՝ մինչչև տէգ մո-
ւրուացն արձակեալ էր. ուստի և շատք 'ի
քաղաքաց անտի Սերտովրիոսի ակնկառոյցք
'ի Պոմպէոս՝ յօժարէին անձնատուր նմա
լինել. բայց ապա յանակնուն եալի գործոյն
որ 'ի Լաւրոնի՝ հանդարտեալ լռեցին։

Քանզի 'ի պաշարել զայն Սերտովրիոսի,
խաղայր գնայր Պոմպէոս 'ի Թիկուանս նորա
ամենայն բանակաւն։ Յայնժամ Սերտով-
րիոսի դիմեալ հասանել ունել բլուր մի՝
անգուստ հարկանել վանել զքաղաքն, ա-
ճապարեաց Պոմպէոս խոչ ընդ ոտն լինել
նմա. բայց Սերտովրիոս կանխեաց կալաւ,
և Պոմպէոս անդ առկայացուցեալ զզօրն՝
խնդայր ընդ իրացն պատահումն՝ իբրու որ
ընդ քաղաքն և ընդ իւր զօրն 'ի միջոցին
փակեցաւ Սերտովրիոս. և առաքեաց ևս
առ Լաւրոնացիս քաջալեր խրախոյս կար-
դայր նոցա, կալ առ պարսպօքն և հայել
տեսանել զպաշարումն Սերտովրիոսի. իսկ
Սերտովրիոս լուեալ ծիծաղէր, ասէր՝
քաջ իսկ ուսուցանել աշակերտին այնմիկ
Սիւղայի (քանզի այսպէս կոչէր 'ի խաղոյ
զՊոմպէոս՝) եթէ պարտ և արժան է զօ-
րավարի քան զհանդիպոյն՝ առաւել զառ
'ի յետոյն դառնալ հայել. զայս ասաց՝ և
ձեռն ձգեալ ցուցանէր պաշարելոցն զվեց
հազարան հետևակաց՝ զորս թողեալ իսկ
էր նորա 'ի բուն զակչի անդ իւրում՝ ուս-
տի դիմեալ կալաւ զբլուրն. զի 'ի խաղալ
երբէք Պոմպէի 'ի նա, նոքա 'ի Թիկանց
կուսէն փակեալ անկցին 'ի վերայ նորա։

Անագան ուրեմն իրազգած բանին եղեալ Պոմպէի, ոչինչ ժառեցաւ 'ի վերայ անկանել Սերտովրիոսի, զանգիտեալ առ 'ի նեղքս փակելոյ. միանգամայն և ակնկորեալ ամաչէր թողուլ լքանել զվտանգեալ քաղաքացիսն, մօտ նստեալ այնպէս սոխպեցաւ 'ի զնին կորստեան նոցա. զի և բարբարոսք ինքնին յուսակտուրք՝ անձնատուրք 'ի վերջէ ուրեմն լինէին Սերտովրիոսի: Նա շնորհեաց նոցա զկեանսն և յազատութիւն արձակեալ առհասարակ, սակայն հուր հարեալ այրէր զքաղաքն ոչ առ սրտմտութեան ինչ, կամ յանագորոյն ինչ կրից (քանզի և թուի իսկ առնն քաջի՝ քան զամենայն զօրավարս առաւել գժուարընդել լինել 'ի հրայրս կրից), այլ յամօթ և 'ի նկուն առնել զորս սքանչացեալ էին ընդ Պոմպէոս. զի ասասցեն ուրեմն բարբարոսք՝ եթէ մօտ անդ նստեալ Պոմպէի և գոգ ջերեալ ևս առ հրովնիզակակցացն, չժամանեաց ձեռն տալ:

Սակայն և հարուածս բազումս տարաւ Սերտովրիոս, այլ ցանգ անպարտելի պահեաց զանձն և զնիզակակիցսն, սակայն և 'ի զօրագլուխս իւր վիրաւորեցաւ: Իսկ ապա 'ի կազդուրել զանձն 'ի հարուածոց անտի առաւել ևս սքանչացաւ նա 'ի պարտութեան իւրում՝ քան զթշնամեաց զօրավարսն 'ի յաղթութեան նոցա. ըստ որում դէպ եղև տեսանել 'ի մարտին ընդդէմ Պոմպէի մերձ 'ի Սուկրոնն. դարձեալ և 'ի կռուել իւրում մերձ 'ի Տուտոխա 'ի

միասին ընդդէմ Պոմպէի և Մետեղղոսի։ Արդ զմարտ պատերազմին 'ի Սուկրոնն ասեն դրդռեալ յաճապարելոյ անտի Պոմպէի 'ի կռիւն՝ զի մի բաժանորդ յաղթութեանն կացցէ Մետեղղոս. նա և Սերտովրիոս ինքնին խնդրէր մարտ ընդ Պոմպէի դնել մինչև հասեալ Մետեղղեայ։ Ուստի և զիւր զօրն յառաջ վարեալ ընդ Երեկս աւուրն դրդռեաց զմարտն. ակն ունէր զի եկք և օտարք գոլով նոքա և անհմուտք վայրացն, մութ գիշերոյն մեծապէս քարընդոտն կայցէ նոցա՝ և 'ի փախչելն և 'ի հետամուտ վանել։

Իբրև մարտն խառնեցաւ, յաջոյ թև անդր կացեալ Սերտովրիոս զառաջինն ոչ զՊոմպէոս ունէր իւր ախոյեան, այլ զԱֆրանիոս՝ որ կայր 'ի ձախոյն։ Լուր առեալ եթէ անդանօր որք 'ի վէգ ընդ Պոմպէի եկին՝ տեղի տուեալ վատթարեցան, զաջոյ թևն անդէն 'ի ձեռս յանձնեալ այլոց զօրագլխացն, ինքն փութայր ձեպէր ձեռն տալ պարտելոյ կողմանն։ Ուր և խմբեալ և խրախուսեալ զփախստեայսն և զորս առեալ կացեալ իսկ էին, յարձակէր անդրէն 'ի վերայ Պոմպէի 'ի հետամուտ վանել նորա, և շտապ տագնապի փախստեան 'ի վերայ հասուցանէր առնն, յորում և և ինքնին Պոմպէոս վտանգեալ առ 'ի մահ և վերս առեալ՝ մազապուր ճողոպրէր. քանզի անդ Լիբէացիք որ ընդ Սերտովրիոսի ձերբակալ զերիվար նորա արարեալ ոսկեսար և շքեղ կազմածով, 'ի բաժա-

նել անդ յիւրեանս զկապուտն և 'ի մաքառելն, վատացան զհետ պնդել նորա։ Բայց 'ի մեկնել անդ Սերտովրիոսի 'ի Թևոյն աջոյ, անդէն Ափրանիոս 'ի վերայ անկեալ պարտէր զԹևն՝ վանեալ մինչև 'ի բանակեցող անդր, ուր խառն և ինքն մնեալ 'ի նեղքս՝ յաւարի առնոյր. մուԹ պատեալ էր գիշերոյն և չէր ինչ Ափրանիոս իրազգած փախստեանն Պոմպէի, և ոչ զզօրականն սանձել ինչ բաւէր յաւարաց անտի։ Մինչ այս մինչ այն՝ անդուստ և Սերտովրիոս դարձ 'ի յաղԹուԹենէն ապրեալ, և անկեալ 'ի վերայ երամակարձակ զօրուն Ափրանեայ, հարկանէր սատակէր զբազումս 'ի նոցանէ։

Բայց ընդ այդն ընդ առաւօտն վառէր միւսանգամ 'ի զէն և 'ի զարդ մարտ յարգարել պատերազմի. այլ լուր առեալ ըզմօտելոյն Մետելլեայ, լուծեալ զկարգն՝ ժողովէր զբանակն, և ասէր այսպէս. "Քաջ իսկ՝ զմանուկդ զայդ, եԹէ այս պառաւ 'ի վերայ հասեալ չէր, գանիւ խարազանաւ խրատեալ զնա՝ արձակեալ էր իմ 'ի Հռոմ,,։ Սակայն էր Սերտովրիոս 'ի ժամանակին մեծապէս վշտացեալ, զի ուրեք չերևէր եղնորԹն նորա, և զուրկ ինքն գտանէր 'ի հրաշալին իւրն մենքենայէ առ բարբարոսան, որոց 'ի ժամուն առաւելապէս պէտք էին քաջալերը բանից։ Դէպ եղև յայնժամ՝ գիշերաշրջիկ երբեմն եղեալ արանց նորա 'ի վայրն՝ հանդիպել եղնորԹին, և 'ի գուշնոյն ճանաչեալ զնա ձերբակալ առնէին։

Զայն լուեալ Սերտովրիոս՝ արծաթ յոյժ խոստանայր արանցն եթէ ումեք 'ի վեր չհանցեն զբանն։ Եւ այնպէս 'ի ծածուկ կալեալ զեղնորթին, յետ աւուրց սակաւուց զուարթագին եղեալ գնայր ինքն յատեանն, և պատմէր զօրավարացն բարբարոսաց՝ եթէ աւետիս մեծ նմա 'ի քուն ազդ արարեալ է դից։ Ապա եղեալ 'ի բեմն 'ի դատել ըստ սովորութեանն, անդանօր 'ի վայրն արձակեալ եղնորթին 'ի պահպանացն, և տեսեալ զՍերտովրիոս մօտ ընթանայր խայտալով 'ի բեմ անդր, և զկայ առեալ՝ եդեալ զդլուխ իւր 'ի վերայ ծնգաց նորա դրդայր և բերանովն փայփայէր զալն նորա՝ սովորեալ առ 'ի նոյն յառաջագոյն։ Անդանօր և Սերտովրիոս գգուանս ըղձակաթս ցուցեալ եղնորթին խբրև յանկեղծաւոր մտաց և արտասուս ևս հեղեալ, յապուշ հարեալ կային հանդիսատեսք. ապա և ծափս հարեալ 'ի ձայն ցնծութեան ընթացակիցք Սերտովրիոսի խբրու առն աստուածայնոյ և աստուածոց սիրելւոյ՝ լինէին 'ի խորանի նորա խրախամիտք և քաջալերեալք։

Յետ այսորիկ 'ի դաշտավայրսն Սեգունտինացւոց փակեալ և սաստիկ քաղցու նեղեալ զթշնամին, դրդռեցաւ ընդ նոսա 'ի կռիւ մարտի՝ 'ի գնալ նոցա ժողովել համբար։ Եւ անդ սաստիկ և բուռն մարտի մղելոյ յերկոցունց կողմանց, Մեմմիոս քաջամարտիկ քան զամենայն զօրագլուխսն Պոմպէի 'ի գոռին անկանէր մեռեալ։

Յաղթական Սերտովրիոս եղեալ խաղայր գնայր ընդդէմ Մեռեղղեայ. հարուածս մեծամեծս հասուցանէր ախոյենիցն, յորում և Մեռեղղոս 'ի վեր քան զտիս հասակին շահատակեալ քաջութեամբ՝ տիգահար եղեալ վիրաւորէր. իսկ Հռոմայեցիք որք ականատեսք և որք ականջալուրք վտանգին՝ զամենի հարեալք թողուալ լքանել զզօրավարն՝ 'ի սրամտութիւն բրդեցան, և ամուր վահանափակ գործեալ Մեռեղղեայ՝ այնպէս քաջապէս բարձեալ տարեալ զնա 'ի բաց, յետս զԻբերացիսն ընկրկեալ վանէին։ Իբրև յաղթական եղին նոքա՝ Սերտովրիոս յանդորր հանեալ ըզփախստեայս իւր և զօրաժողով ևս այլ 'ի Թիկունս գաղտաբար ածեալ, ջոքաւ անկաւ 'ի քաղաք մի լեռնակողմեան և անխաբ. անդ ամրութիւն ածէր պարսպին և աղխեալ պնդէր զդրունսն. Թէպէտև չէին իսկ նորա միտք զդէմ ունել պաշարմանն, սակայն նենդէր 'ի դաւել զԹշնամին. և արդեօք նոքա անդր զիւրեանց բանակն առկայացուցեալ սպասեալ ինային հեշտին հասանել ունել զվայրն. Թոյլ ետուն փախչել այլոց բարբարոսացն և փոյթ ինչ չարարին զօրաժողովին Սերտովրիոսի, որ 'ի քաղաքս քաղաքս յիւրոց անտի զօրապետաց արձակեալ իսկ էր վասն նորուն իրի, հրաման տուեալ 'ի կատարել բանին՝ ազդ առնել նմա։

Իբրև նմա ազդումն լինէր, ինքն յանդորրու հատեալ անցեալ ընդ մէջ Թշնա-

մեացն՝ գայր խմբէր ընդ զօրաժողովին և հաստահարուստ այնպէս դիմէր անդրէն 'ի Թշնամիսն. արդէլոյր խափանէր զպաշար կերակրոյն նոցա 'ի ցամաք կուսէն, դարան գործէր, 'ի նեբքս փակէր, և յայսկոյս յայնկոյս ասպատակ կապեալ՝ արագ արագ 'ի վերայ անկանէր. իսկ 'ի ծովէ՝ հասանէր ունէր զափունան 'ի մակոյկս հինից. մինչև և Հռոմայեցւոց զօրավարք քակտեալ բաժանեցան. Մետեղղոս տեղի տուեալ գնայր 'ի Գաղատիա, և Պոմպէոս ձմերէր առ Բակկացիս և նեղեալ տագնապէր 'ի սպառել դրամոյն. առեալ գրէր առ Սինկղիտոսն՝ դարձուցանել ածել զզօրն Յիտալիա՝ եթէ արծաթ չառաքէն նմա, իբրև սպառեցան նորա ամենայն ինչք 'ի կռուին վասն Իտալիոյ:

Իսկ յայնժամ 'ի Հռոմ համբաւ հասրեալ էր, եթէ քան զՊոմպէոս կանուխ Սերտովրիոս հասցէ Յիտալիա: Եւ ապա յայս սահման ած ձգեաց Սերտովրեայ քաջութիւնն զմեծապօրան և զաւագ զօրավարս ժամանակին: Նաև ինքնին Մետեղղոս յայտնանգիմանութեամբ քաջ 'ի դէմս բերէր զահ երկիւղին 'ի քաջէն և զմեծապէս համբաւ զառնն. որպէս զի և 'ի ձայն քարոզի հրատարակէր տալ առն Հռոմայեցւոյ սպանողի նորա հարիւր քանքար արծաթոյ և երկու բիւր լծավար գեանոյ. ապա եթէ 'ի վտարանդեաց ոք ելցէ՝ դարձուցանել զնա 'ի Հռոմ. և այնպէս յուսակտուր եղեալ յայտնապէս պարտել

զայրն՝ նենգաւ գնոց գնէր։ Ա՛ռ այս՝ զի և Երբեմն 'ի կռուի պարտեալ զնա Մեռեղղոս, այնչափ ինն բարձրացաւ վիրացաւ և խայտաց ընդ յաղթութիւնն, զի և անուն տայր կոչել իւր՝ Ինքնակալ. և քաղաքք ինքնին առնուին ժողովէին զնա զոհիւք և բագինս կանգնէին. և ասեն ևս խնդրել նմա՝ պսակս առնուլ գնել 'ի գլուխս նորա, և ընթրիս տալ մեծահացս և բազմակատարս. ուր և բազմեալ ըմպէր նա՝ հանդերձ արկեալ յաղթանակի, և անգանոր 'ի մենքենայից ոմանց հոլովելոց գայլն ի-ջանէին առ նա Յաղթութիւնք ընծայաբերք բոլորից պսակաց և Ախոյենից ոսկւոյ. անդ և մանկանց երամ և կանանուցն դասակ նուագս առնուին յաղթական 'ի պատիւ նորա։ Յորս և իրաւապէս այպանելի գտաւ Մեռեղղոս՝ յայնչափ պարծանան և 'ի ծայրայեղ խնդութեանն, զի միանգամ վանեաց զՍերտովրիոս 'ի վերջոտնել նորա. զոր կոչէր նա՝ փախստական Սիւղղայի և նշխար Կարբոնեան վտարանդութեանն։

Ա՛յլ մեծանձնութիւն Սերտովրիոսի գեղեցիկ, էր նորա առաջին՝ զի յանուն Սինկղիտոսի կոչեաց զՍինկղեանիկոսան՝ որ փախստեայք 'ի Հռովմայ անկան առ նա. և 'ի նոցուն կարգէ ընտրէր տայր գանձաւորս և զօրագլուխս, և սահմանէր յայսպիսեաց ասոն ըստ կարգի հայրենատուր օրինացն. և երկրորդ անգամ՝ զի թէպէտև յայն մարտ պատերազմին 'ի գործ վարեաց

զղէնս Իբերացւոց և զարծաթնոցա և զքա-
ղաքս նոցա, և ոչ բանիւք չափ երբէք յանձն
էառ ինքնակալ աւագութեան 'ի ձեռս տալ
նոցա. այլ տայր բաշխէր նոցա զօրավարս
և ոստիկանս Հռոմայեցիս. իբրու որ զա-
զատութիւն անդրէն 'ի բուռն տալ Հռո-
մայեցւոց, և ոչ եթէ Հռոմայեցւոց ընդ-
դէմ ախոյեան զԻբերացիսն կանգնել: Քան-
զի այր հայրենասէր էր նա, և դարձին իւ-
րում յոյժ ըղձակաթ 'ի քաղաք անդր: Ա-
այս՝ և 'ի ձախողակ եղեն ցանգ առաքինա-
ցաւ, և երբէք վատութիւն ոչ խառնեաց
առ թշնամիս իւր. նա՛ և 'ի յաղթութիւնս
իւր առաքէր բանագնաց լինէր առ Մե-
տեղղոս և առ Պոմպէոս, յօժարէր զէնքն-
կէց կեանս վարել սոսկականի, եթէ եր-
բէք յաջողեսցի նմա դառնալ 'ի հայրե-
նիսն. իբրու որ քան վտարանդի ինքնակա-
լել ամենեցուն՝ առաւել ևս կամէր ան-
փառունակ քաղաքացի կալ 'ի Հռոմ: Եւ
ասէն՝ ըղձակաթ դարձին լինել մանաւանդ
'ի պատճառս մօրն, որ մանուկ սնոյց զնա
որբացեալ 'ի հօրէն, որում և խանդակաթ
յոյժ էր նա. որպէս զի և 'ի լուր մահուան
մօրն՝ յորժամ բարեկամք նորա անդանօր
Իբերիա հրաւէր կարդային նմա յառաջ-
նորդութիւն բանակի, վայրիկ մի ևս առ
ցաւոյն վճարէր նա 'ի կենացն. և այնպէս
դեռնատարած դառացեալ զաւուրս եօթն՝
ոչ նշանս բաշխէր զօրականին և ոչ ումեք
երևէր 'ի բարեկամացն. մինչև հաղիւ ու-
րեմն զօրավարք նիզակակիցք նորա և հան-

գիտասպատիւք եկեալ զնովաւ 'ի խորանի նորա, բռնադատեցին ելանել արտաքս՝ խօսել ընդ զօրականին, և ձեռնամուխ 'ի յաջողութիւն լինել ժամանակին։ Ուստի և բազմաց թուէր՝ անգատին 'ի բնութենէն հեզ լինել առն և անդորրասէր, և 'ի պատճառաց անտի հարկաւորեալ յանձն առնուլ զզօրավարութիւնն, և 'ի թշնամեաց իւրոց վանեալ՝ յանձին փրկութիւն ստիպեալ զէն առնուլ և անձին պաշտպանել։

Եւ հաւաստիք նորա մեծանձնութեանն կացին՝ և բանագնացութիւնք նորա առ Միհրդատ։ Քանզի միւսանգամ Միհրդատ յոտին կանգնեալ իբրու յերկրորդ գօտէկռուութիւն՝ զգեստեալ 'ի Սիւղայէ, ժառեցաւ արշաւել ունել զԱսիա. և յայնժամ ամենայն ուրեք մեծապէս հռչակ հարեալ էր Սերտովրիոսի, և ողջոյն Պոնտոս զեղեալ 'ի լուր համբաւոյ նորա՝ իբրու 'ի վաճառս իմն եկամուտս՝ յորոց միանգամ անդր նաւեալ գնային 'ի մսիցն աբրևու։ Յօժարեցաւ յայնժամ Միհրդատ հրեշտակութիւն առաքել առ Սերտովրիոս, գրդեալ մանաւանդ 'ի մեծաբան սուտակասպասիցն՝ որ զՍերտովրիոս Աննիբաղայ հանգուցատիպ եղեալ և զՄիհրդատ ինքնին Պիւռռոսի, ասէին՝ ոչ ևս այլ Հռոմայեցւոց ժուժկալել առաջի այնչափ իմաստութեան և այնչափ զօրութեան նահատակաց երկոցուն, եթէ երբէք քաջամարտիկն 'ի զօրավարս եկեալ միասցի ընդ վեհագունին բոլորից արքայից։ Յանձն

առ Միհրդատ, արձակէր դեսպանս յԻբերիա տուէալ դիր առ Սերտովրիոս, և ասէլ ևս 'ի բերանոյ, զի արծաթ և նաւս պատրաստեալ է նմա վասն մարտին. և 'ի նմանէն խնդրէ յանդորր հանել նմա զտէրութիւն ողջոյն զԱսիոյ, զոր ինքնին 'ի ձեռս եառ Հռոմայեցւոց՝ ըստ պայմանացն ընդ Սիւղղայի։

Ապա Սերտովրիոս խմբեալ զաւուրանն՝ որում անուն կարդային Սինկղիտոս, և յասէլ անդ այլոց՝ հաճել հաւանել մտադիւրագոյնս ընդ առաջարկութիւն խնդրոյն, (իբրև զի բան մի խնդրէին 'ի նոցանէ և արձանագրութիւն 'ի նանիր վասն իրացն՝ որ չէր իսկ յիշխանութեան նոցա, և ապա փոխարէն առնուլ իրս ինն՝ որոց մեծապէս յայնժամ պէտք էին նոցա)։ Այլ Սերտովրիոս ոչինչ հանդարտեաց, և ասէր՝ եթէ զդէմ գառնայ և ոչինչ Միհրդատայ ունել զբիւթիւնիա և զԿապադովկիա՝ որ միշտ կացին ընդ ձեռամբ արքայից, և Հռոմայեցւոց չէր ինչ բան ընդ գաւառացն ընդ այնոցիկ. սակայն վասն գաւառին՝ զոր իրաւամբք յառաջագոյն ունէին Հռոմայեցիք, և Միհրդատ ինքնին յափշտակեաց կալաւ, և ապա վանեալ 'ի Փիմբրիասայ՝ 'ի վերջէ ուրեմն հրաժեշտ տայր յայնմանէ 'ի հաշտութեանն Սիւղղայի, երբէք հաւանի ոչ՝ միւսանգամ զբռամբ ունել նմա զայն. քանզի և պարտ և արժան է աձել քաղաքին յիւրմէ յաղթութենէն, և ոչ եթէ նուազել ինչ 'ի

տէրութենէն. քանզի առն քաջի և մեծանձին պարտ է խնդրել յաղթութիւն գեղեցիկ փառաք. իսկ անփառունակ՝ և ոչ փրկութիւն խնդրել անձին։ Եւ ապա այս բանք պատմեալ առաջի Միհրդատայ՝ յապուշ կրթեցին զայրն. և պատմեն նա՝ ասել նմա առ բարեկամն այսպէս. "Եւ զինչ ինչ ապա մեզ պատգամ յղեսցէ Սերտովրիոս 'ի Պալատիոնէ. եթէ զարդիս յԱտլանտեանն հալածեալ ծով, այդպէս սահմանս կարդէ արքայութեանս մերում, և մարտս ևս սպառնայ 'ի թեւակոխել մեր 'ի տէրութիւն Ասիոյ"։

Յայսր ամենայնի վերայ պայմանք կռեցան երդմնակուռք, առնուլ Միհրդատայ 'ի բուռն զԿապադովկիա և զԲիւթինիա, և առաքել առ նա Սերտովրիոսի զօրավար և զօրականս, և Սերտովրիոսի առնուլ 'ի Միհրդատայ քանքարս երիքհազար և նաև քառասուն։ Եւ էր զօրավարն առաքեալ 'ի Սերտովրիոսէ յԱսիա Մարկոս Մարիոս 'ի ծերակուտէն՝ որք սպաւինեցան առ նա։ Ապա 'ի միասին ընդ նմա հասեալ կալեալ Միհրդատ 'ի քաղաքաց անտի Ասիացւոց, 'ի մտանել անդ Հռոմայեցւոյն 'ի քաղաքն՝ վարոցս յառաջոյ ունելով և տապարս, ինքնին Միհրդատ զհետ ընթանայր նորա՝ մտադիւրագոյնս զերկրորդն կալեալ տեղն և զկերպարան սպասարկուի։ Եւ յայնժամ կէսք 'ի քաղաքացն յանդորր աղատութեան էլին, և կէսք դարձեալ ապահարկ լինէին. և գրով

աղդ առնէր քաղաքացն զՆորհ զայն զմարգասիրութեանն Սերտովրիոսի. և այնպէս Ասիա չարչարեալ 'ի մաքսաւորաց անտի և հարստահարեալ յընչաքաղց և 'ի խեռ զօրականէ անտի պահակերացն, ոգի առեալ խնդայր ընդ անձկացեալ պատահումն։

Բայց յԻբերիա Սինկղիտիկոսք որ ընդ Սերտովրիոսի և արք աւագք բարձակիցք, իբրև զօրացեալք ակն ունէին այնուհետև քաջապէս զդէմ ունել թշնամեացն, զահ երկիւղին 'ի բաց եդեալ անհանձար նահանձաւորութեամբ խանտացին զտէրութիւն նորա։ Եւ էր նոցա պարագլուխ Պերպէննաս, որ անապարծ ևս փքացեալ ընդ քաջազարմութիւնն՝ թեկն ածէր զզօրավարութեան. և սփռէր տարածէր գաղտաբար բանսարկութիւն 'ի մէջ ընկերացն, և ասէր. "Եւ ո՞ր այն ապա ոգի չար հարեալ 'ի մեզ, ածեալ ձգէ զմեզ 'ի չարեաց 'ի չարիս։ Մեր ինքնին սրումնեալ էր ընդ հնազանդութեամբ կալ Սիւղղայի 'ի տան անդ մերում, այն որ գոգցես ցամաքի ողջոյն և ծովու տիրացեալ իսկ էր. և այսր մեր 'ի չար ժամու հասեալ՝ իբրու կեալ յաղատութեան, ծառայութիւն կամակար աւադիկ հարկանեմք՝ թիկնապահք պաշտպան վտարանդութեանն կացեալ Սերտովրիոսի. և զանուն տարեալ մեր Սինկղիտոսի՝ անուն այպանելի առ 'ի լսելեաց, բերեմք թշնամանաց և հրամանաց և քրտանց՝ ոչինչ պակաս քան զԻբերացիսդ և քան զԼիւսիտանացիսդ"։

Յայսպիսեաց զբուցացս գրգռեալ շատից, Թէպէտև 'ի յայտնի վտարանջութիւն ոչ մոռաբերեցին առ ահի տերութեանն Սերտովրիոսի, 'ի ծածուկ աղարտեալ խանգարէին զգործ նորա. ջարչարեալ նեղէին զբարբարոսսն, դառնապէս պատուհաս 'ի վերայ կապէին նոցա, և հարկս ծանուցնս հանէին 'ի նոցանէ, իբրու 'ի հրամանէ անտի Սերտովրիոսի: Եւ յայնմանէ ապա ապստամբութիւնք և աղմուկք շփոթից յուզեցան 'ի քաղաքս քաղաքս. և ողբ միանգամ 'ի Սերտովրիոսէ արձակեցան անդր դարման տանել իրացն և ողոքել համոզել, դարձ արարեալ գայլին՝ սաստիկ ևս գրգռելով մարտս, և մեծ ևս վտարանջութիւնս. որպէս զի և յայնժամ փոխեալ Սերտովրիոս յառաջին իւր հեզութենէն և 'ի քաղցրութենէն՝ ձեռն արկանէր յանիրաւութիւն ընդդէմ մանկանցն Իբերացւոց դաստիարակելոցն յՈսկա. զկէսս 'ի նոցանէն 'ի մահ վարէր, և զկէսս դարձեալ 'ի վաճառ տայր:

Իսկ յայնժամ Պերպենեաս բաղումս ունելով դաշնաւորս 'ի վտարանջութիւնն, յաւել 'ի նոյն և զՄալլիոս զմի 'ի զօրավարացն: Սա այս Մալլիոս 'ի սէրն հարեալ պատանեկի ուրումն, և խանդակաթս գգուեալ զնա՝ 'ի վեր նմա հանէր զդաշնաւոր խորհուրդն. և յորդորէր զնա թողուլ զքանել զայլս 'ի տարփածուացն և յինքն միայն յանկչել՝ որում ընդ մօտ աւուրս 'ի մեծ աւադութիւն հասցէ ամբառ-

նալ։ Բայց պատանեակն՝ որ առաւէլ հա-
րեալ էր յայլ ոք՝ Ավիդիոս անուն, չո-
քաւ 'ի վերս հան նմա զբանն. Զայն լուեալ
Ավիդիոս՝ զարհուրեցաւ յանձն, քանզի
և ինքն 'ի Թուոյ անտի էր դաշնաւորացն,
այլ գիտէր ոչ՝ եթէ 'ի նոցանէն ելցէ և
Մալլիոս. ապա լուեալ 'ի պատանուոյն և
զանուանս Պերպեննասայ և զԳրակինեայ
և զայլոց ոմանց՝ զորս քաջ իսկ գիտէր 'ի
դաշնաւորաց անտի, խռովեալ 'ի յոգին՝
հնարէր զմիտս գողանալ պատանեկին և
այպանելի զբանն ասէր. և իրատէր ևս
զնա՝ առ ոչինչ զՄալլիոս համարել իբրև
ումպէտ այր և յախուռն. և ինքն գնացեալ
առ Պերպեննաս՝ կայր և ցուցանէր քա-
նիսն արագափախուստ ելցէ քաջադիպու-
թիւն ժամանակի, և քանի՞ մեծապէս վը-
տանգն, և սնդէր արագ արագ ձեռն 'ի
գործ առնել։ 'Ի նոյն միաբանեցան և դաշ-
նաւորք, և առեալ այր մի կաշառեցին. յղէին
առ Սերտովրիոս տալ նմա նամակ աւետա-
բեր յաղթութեան զմիոյ ուրուք 'ի զօրա-
վարաց նորա և զմեծի հարուածոյ զթշնա-
մեացն։ Մեծապէս յանձն իւր զուարճա-
ցեալ Սերտովրիոս և զոհ ևս յաղեալ վասն
աւետեացն, յայնժամ Պերպեննաս հաս-
տատէր ընթրիս տալ նմա և բարեկամացն
որ անդ, (և էին նոքա 'ի դաշնաւորաց ան-
տի). և շատ աղերսէր զՍերտովրիոս ինք-
նին գալ 'ի կոչունսն։

Ա.ՐԴ ՅԸՆԹՐԻՍՆ Սերտովրիոսի ցանգ սո-
վորեալ էին մեծապէս պատկառ կալ պար-

կեշտութեան. քանզի և երբէք նա չէր ան-
դուրժէր տեսանել կամ լսել ինչ մի յան-
պարկեշտից. և հրահանգեալ ևս էր զիւր
սեղանակիցս՝ կատակս պարկեշտս և անթըշ-
նամանադիրս 'ի վար առնուլ և մտերմու-
թիւնս մարդասիրել։ Իբրև խնճոյքն հա-
սարակէին, սկիզբն խնդրեալ նոցա զպայ-
քարաց և զկռուոյ՝ յայտնապէս խօսս 'ի
մէջ առին անպարկեշտս. և գինեհարեալս
կեղծաւորեալ զանձինս՝ բազումս լկտէին
շարժել զցասումն Սերտովրիոսի։ Բայց նա
կամ զի գժդմեալ ընդ անհամութիւնն,
կամ թէ 'ի հատկէեալ խօսելոյն և յար-
համարհոտ լրբելոյն նոցա հակառակ սովո-
րութեանն՝ խելամուտ խորհրդոյն նոցա ե-
ղեալ, փոխեալ զդէրսն բազմոցին՝ յորմէ
անկանէր իբրու ոչ միտս ինչ դնել այնու-
հետև կամ ունկն երբէք մատուցանել։
Իսկ Պերպենտաս յայնժամ բաժակ մի ա-
նապակի 'ի ձեռին կալեալ, և լրմնել անդ
իւրում՝ թողեալ 'ի ձեռացն անկանել և շա-
ռաչիւն արձակեալ (զի զայն նշան տուեալ
էր նոցա), անդ Անտոնիոս որ 'ի վերոյ
Սերտովրիոսի բազմեալ կայր՝ խոցեաց զնա
սուսերաւ. առեալ զվերն Սերտովրիոս՝
իբրև անդէն ուղղեալ կամէր յոտն վազել,
նա թափ անկեալ 'ի վերայ լանջացն, պրն-
դապէս ունէր զերկոսին զձեռս նորա, մին-
չև վերս 'ի բազմաց անպատասպար առեալ
յայնժամ Սերտովրիոս՝ մեռանէր։

Յետ այսորիկ բազումք յԻբերացւոց ան-
տի վաղվաղակի 'ի բաց սարտուցեալք և

հրեշտակութիւն առաքեալ առ Մետեղ-
ղոս և առ Պոմպէոս՝ անձնատուր լինէին
'ի նոսա։ Իսկ Պերպենեաս առեալ զորս
ընդ իւրն էին՝ գուն գործէր ինչ մի նահա-
տակութիւն 'ի ներքս բերել։ Այսպա զան-
ձամբ զկազմած և զհանդերձանսն Սերտով-
րիոսի արկեալ՝ միայն 'ի նախատինս ան-
ձինն և յայտնի առակել զանձն, իբրու որ
անդատին 'ի բնութենէն ոչինչ քաջացեալ
իցէ ոչ իշխել և ոչ իշխիլ, խաղայր գնայր
'ի դիմի հարկանել Պոմպէի. յորմէ և ա-
ռաջ արագ հարեալ վատթարեալ և ձեր-
բակալ եղեալ, և ոչ վերջին այս աղէտից
գիտաց բերել նա իբրև այր զօրավար, այլ
տիրացեալ ինքն գոլով դիւանին Սերտով-
րիոսի, խոստանայր Պոմպէի ցուցանել
զինքնագիր նամականի զհիւպատեան ա-
ռանցն և զաւագացն Հռոմայեցւոց, որ
հրաւէր յԻտալիա Սերտովրիոսի կարդային,
իբրև բազմաց ոմանց խնդրել աղաչել զա-
ռաջիկայսն և փոխել շրջել զկարգ քա-
ղաքին։

Բայց Պոմպէոս բան 'ի ժամուն ցու-
ցեալ արդարև ոչ զերիտասարդական մտաց,
այլ զհաստատուն առն և զհանճարեղի,
փրկէր զՀռոմ 'ի մեծաց արհաւրաց և
յամբոխից շփոթից. քանզի 'ի մի վայր կու-
տեալ միանգամայն զնամականին և ըզ-
գրուածն Սերտովրիոսի, 'ի հուր այրէր առ-
հասարակ. ոչ ինքն վերծանեաց և ոչ այ-
լոմ թոյլ էտ վերծանել. և ապա անդէն
արագամահ և զՊերպենեաս կորուսանէր.

խիթացաւ եթէ 'ի վերս հանցէ այրն զանուանս աւագորէրսոյն և աղմուկք յուզէսցին մեծամեծք։ Իսկ յայլոց անտի դաշնաւորացն Պերպենասայ՝ որք միանգամ ածան առ Պոմպէոս՝ 'ի մահ վարեցան. իսկ որք 'ի Լիբիա փախստեայք ջղքան՝ նեռտահար կորեան 'ի Մաւրուսացւոց անտի. մինչև և ոչ միում ումեք անձնապուր լինել բայց Յանվիդիոսէ նախանձորդէն Մալլիոսի. և սա այս՝ կամ 'ի թաքստի ղօղեալ, կամ թէ այնպէս անհոգացեալ՝ անդ 'ի գիւղ մի բարբարոսաց ջքաւորեալ և աստեղեալ, ծերացաւ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Են սոքա Քանարեան կղզիքն, որ և՝ Երանելեաց։ Զորոց և զերանաւէտ զմոյն վայրացն՝ յառաջ խաղացեալ պատմէ Պլուտարքոս։

2. Պլուտարքոս պարզաբար առաջի առնէ՝ զոր միանգամ պատմեն։ Եւ միտ դիր՝ երբէք 'ի հրէշալեան զանց չառնէ՝ որպէս սատ, նոյնպէս և այլուր, կարգեալ զյաւելուածդ՝ Որպէս սոէն. Որպէս պապոէն, Վանանանգնէան են։ Եւ զարմանալի է մի և նոյն չափ վաթսուն թուոյ վասն հասակի Տիտանեանցն 'ի վէպս ազգաց. ըստ որում և 'ի Գիրս՝ բարձրութիւն պատկերին, զոր կանգնեաց Նաբուգոդոնոսոր. զորմէ հնախօսելով Յովհ. Խմաստ. գրեաց, եթէ "Քաղդէացւոցն տեսեալ զՏիտանեանն զայն վեթխարի ... վաթանականգնեան ... ըստ իւրաքանչիւր լեզուաց այլաձևելով զնորա զանունն, Քուշացիք՝ Նեբրովթ կոչելով. Բաբեղացիք՝ Բեղ. Փղշտացիք՝ Բահաղ. Եղլենացիք՝ Դիոս. Պարսիկք՝ Որմըզդ. Հայք՝ Արամազդ"։ Եւ ինձ թուի անշուշտ՝ եթէ և Լիբէացիք՝ Անտէոս, ըստ առաջիկայ հնախօս պատմութեանն Պլուտարքեայ։

ԵՒՄԵՆԷՍ

ԵՒՄԵՆԵԱՑ Կարդիացւոյ հայրն՝ որպէս պատմէ Դուրիս՝ առ աղքատու-թեանն սայլորդ էր 'ի Քէրրոնիսոն. այլ ննաւ նա իբրև զազատորդիս 'ի դպրու-թիւնս և 'ի մարզս ըմբշաց։ Եւ մինչդէռ տակաւին մանուկ էր Եւմենէս, հասեալ անդր Փիլիպպոս և պարապեալ 'ի զնին կայր ասպարիսական խաղուց Կարդիացի պատանեացն, և գօտէկռուութեան մանկ-ուոյն. յորս առաւել իմն առաքինացեալ Եւմենէս, և հնարիմացութիւն և քաջու-թիւն 'ի դէմս բերեալ, հաճեալ Փիլիպպոս առնոյր զԵւմենէս առ ինքն։ Այլ թուի իմն առաւել տպաւորագոյն՝ զոր այլք պատմեն՝ յառաջագէմ լինել Եւմենեայ 'ի ձեռն Փիլիպպոսի 'ի բարեկամութեանն պատճառս ընդ հօրն Եւմենեայ, և 'ի հիւ-րընկալութեանն 'ի տուն նորա։

Իսկ 'ի մեռանել Փիլիպպոսի՝ առաւելեալ Եւմենէս 'ի հանճարն և 'ի հաւատարմութեան քան զամենայն աւագորեար Աղեքսանդրի, անուանեալ կոչեցաւ դիւանապետ. սակայն էր նորա շուք իբրու զբարեկամաց և զմտերմաց արքայից. զի և 'ի Հնդկաց արշաւանին արձակեցաւ նա 'ի զօրավար բանակին. առ այս՝ և զկուսակալութիւն փոխանորդեաց նա զՊերդիկկասայ, յորժամ 'ի մեռանել Եփեստիոնի՝ անցանէր ունէր Պերդիկկաս զբարձն նորա։ Ուստի և յետ մահուն Աղեքսանդրի յասել Նէոպտղոմեայ ասպարապետի, էթէ ինքն ասպար և տէգ բարձեալ տանի, իսկ Եւմենէս զհետ գայ՝ բարձեալ դրիչ և պնակիտ, 'ի ծաղր հատանէին Մակեդոնացիք. գիտելով չափ՝ զի ոչ այնչափ միայն, այլ և 'ի շուք ամբարձաւ Եւմենէս ազգականութեան արքայի։ Քանզի յերկուց անտի քերց Բարսինեայ դստերն Արտաբազի, ընդ որում առաջին ամուսնացաւ Աղեքսանդր յԱսիա և ծնաւ 'ի նմանէ որդի ըզՀերակլէս, տայր զԱպամէ Պտղոմէոսի 'ի կին, և զերկրորդն Բարսինէ անուն՝ տայր Եւմենեայ, 'ի բաշխել անդ Աղեքսանդրի զայլ ևս 'ի Պարսից օրիորդաց 'ի կանայս բարեկամաց իւրոց։

Սակայն և այնպէս՝ բաղում անգամ դրդռեաց Եւմենէս զԱղեքսանդր, և 'ի վտանգ ևս պաշարէր 'ի պատճառս Եփեստիոնին։ Քանզի այս Եփեստիոնն տուեալ Եվմենոսի սրնգահարի տուն մի, զոր յառա-

ջագոյն կալեալ էին պաշտօնեայք Եւմենեայ վասն տեառն իւրեանց, անդ Եւմենէս 'ի սրտմտութիւն բրդեալ՝ այնպէս չոքաւ առ Աղեքսանդրոս. բողոք բարձեալ աղաղակէր 'ի միասին ընդ Մենտորի քաջ սենգահարի և երաժշտի, և զէնընկէց լինէր առաջի Աղեքսանդրի, մինչև Աղեքսանդրի սրտմտեալ ընդ զրկանն կշտամբէր զԵփեստիոնն. սակայն և անդէն փոփոխեալ բրդէր 'ի ցասումն և ընդդէմ Եւմենեայ՝ իբրու առաւել ինքն հարստահարեալ 'ի համարձակաձայն բանից նորա ընդդէմ Եփեստիոնի։

Յետ այսորիկ Աղեքսանդրոս արձակեալ զՆէարքոս նաւուք 'ի ծովն՝ որ արտաքոյ, խնդրէր դրան 'ի բարեկամաց, (զի արքունի դանձք սպառեալ էին). խնդրեալ և յԵւմենեայ քանքարս երեքհարիւր, նա առեալ եբեր նմա հարիւր միայն. ասէր՝ հազիւ ուրեմն և զայնչափ արծաթն ժողովել 'ի գործակալաց անտի իւրոց։ Իսկ Աղեքսանդրոս ոչ զչարեալ ինչ, և ոչ դարձեալ զարծաթն առեալ, հրաման տայր պաշտօնէիցն հուր հարկանել 'ի ծածուկ 'ի վրանին Եւմենեայ. խնդրէր իբրև ստահօս առակել զԵւմենէս՝ 'ի փախուցանել նորա զդրամն 'ի հրոյն. սակայն կանուխ հրդեհակէզ վրանն եղեալ՝ փաշաման կրէր և ինքնին Աղեքսանդրոս ընդ աճիւնանալ դիւանին։ Այլ ապա ոսկւոյ և արծաթոյ հալած գտեալ 'ի հրայրեացն՝ էր հազար քանքարաց ձոյլն։ Բայց Աղեքսանդրոս ոչ

ինչ առնոյր 'ի նոցանէ. և տուեալ նամականի առ նախարարս և առ զօրավարս ընդ ամենայն տեղիս՝ առաքել առ նա զհաւասարս հրդեհակէզ գրոց դիւանին, հրաման տայր Եւմենեայ առնուլ ժողովել զամենայնն։

Այլ անդրէն միւսանգամ գժտեալ Եւմենեայ ընդ Եփեստիոնի 'ի պատճառս ինչ ընծայից, և միմեանց յիշոցնատուք եղեալ, ոչինչ յայնժամ տուգանք լինէին Եւմենեայ. այլ յետ ոակաւուց 'ի մեռանել Եփեստիոնի՝ կարի յոյժ 'ի խոր խոցեալ Աղեքսանդրի և մեծապէս խստիւ գնացեալ առհասարակ ընդ յաջողոտս առնն առ կենդանութեամբն և ընդ խնդացողսն 'ի մահուանն, առաւել քան զամենեսեան 'ի կատկածի էր վասն Եւմենեայ՝ յուշ ածեալ զբազում անգամ գժտութիւնս նորա ընդ առն։ Բայց Եւմենէս խորագէտ և հնարիմաց, հնարս հնարէր փրկութեան 'ի մահաւելթ բանէն։ Զհետ կրթեալ մտերմութեան սիրոյն Աղեքսանդրի առ Եփեստիոնէ, թելադիր նմա լինէր 'ի մեծապէս շուք վախճանելոյն, և մոագիւրագոյնս ևս յանձնէն առատ 'ի ներքս մատուցանէր արծաթ 'ի կանգնել շիրմի մեռելոյն։

Յետ այսորիկ 'ի մեռանել Աղեքսանդրի և 'ի վտարանջել փաղանգին ընդդէմ բարեկամացն արքային, թէպէտև 'ի ներքոյ Եւմենէս կուսակից էր նոցա, 'ի վերին երեսս 'ի բաց զինքն զատուցանէր իբրև այր

սոսկական, եկ գոլով և օտար՝ իբրու ոչ ինչ 'ի ճահ նմա միջամուխ 'ի պայքարս լինել Մակեդոնացւոց։ Ապա 'ի չու առնել խաղալ այլոց նիզակակցացն 'ի Բաբիլոն՝ ինքն կացեալ 'ի քաղաքին ամոքէր զհետեւակս զօրուն և 'ի հաշտութիւն կրթէր զնոսա։ Իսկ 'ի խմբել այնուհետեւ զօրավարացն խաղաղութեամբ և 'ի բաժանել յիւրեանս զնախարարութիւնս և ըզկուսակալութիւնս, յինքն առնոյր Եւմենէս զԿապադովկիա և զՊափլագոնիա, որ առ Պոնտոսին ծովու մինչև 'ի Տրապեզոն, որում և չև էին տիրացեալ Մակեդոնացիք (զի անդ թագ կապէր Արիարաթէս). սակայն պարտ էր Լէոննատեայ և Անտիգոնոսի բազմաձեռն գնդաւ ածել անդր զԵւմենէս և կարգել իշխան սահմանացն այնոցիկ։ Արդ Անտիգոնոս ոչինչ անսաց թղթոյն Պերտիկկասայ վասն բանին այնորիկ, քանզի և այր էր ամբարտաւան և արհամարհոտ։ Իսկ Լէոննատոս իջեալ 'ի Փռիւգիա 'ի վերին սահմանաց անտի յանձն առնոյր զարշաւանն վասն Եւմենեայ. այլ առ նա եկեալ Եկատէոս բռնաւոր Կարդիացւոց բերան 'ի բերան խօսել և աղաչել՝ խաղալ մանաւանդ 'ի թիկունս Անտիպատրոսի և Մակեդոնացւոց՝ որ պաշարեալ կային 'ի Լամիա, դիմեաց նա անդր և զԵւմենէս ինքնին 'ի նոյն սոսկէր և գուն ևս գործէր հաշտեցուցանել զնա ընդ Եկատեայ. քանզի և ընդ ակամբ հայէին նոքա ընդ միմեանս 'ի հայրենի գժտու-

թեանց անտի՝ զոր գժտեցան յիրս քաղաքին. և բաղում ևս անդամ Եւմենէս յայտնի ամբաստան կացեալ էր զԵկատեայ իբրև զբռնաւորէ, և յորդորեալ ևս զԱղեքսանդր դարձուցանել զազատութիւնն առ Կարդիացիս։

Այր ազգաւ յայնժամ խոյս տուեալ Եւմենէս 'ի կռուոյ անտի ընդդէմ Հելլենաց, ասէր զանդիտել յԱնտիպատրեայ՝ որում և 'ի վաղնջուց իսկ ատելի լեալ էր, գուցէ դաւաճան կենացն լինել՝ 'ի հաճել և զԵկատէոս։ Ապա Լէոննատոս վստահ յԵւմենէս եղեալ՝ զխորհուրդ մտացն 'ի վեր հանէր նմա, իբրու որ յայնժամ օգնականութիւնն 'ի վերին երեսս իցէ, այլ 'ի մտի ինքն եդեալ է 'ի ժամանել անդր՝ արագ արագ տիրանալ Մակեդոնիոյ. և ցուցանէր ևս նմա գիրս իմն զԿղէոպատրեայ՝ հրաւիրակ նմա 'ի Պելլա, իբրու հանդերձեալ ամուսնանալ ընդ նմա։ Իսկ Եւմենէս կամ զանդիտեալ իսկ յԱնտիպատրեայ, կամ թէ յուսակտուր 'ի գեղեցիկ Եղից խորհրդոյն Լէոննատեայ՝ զի այր ապուշ էր և խիզախ և անհանձար, յարուցեալ գիշերային չու առնէր հանդերձ աղխիւն. և էին նորա այրուձի երեքհարիւր և պաշտօնեայ թիկնապահք զինաւորք երկերիւր, և ոսկի՝ հինգհազար քանքարաց արծաթոյ. և եկեալ անկեալ առ Պերսիկկաս՝ և պատմեալ նմա զամենայն խորհուրդն Լէոննատեայ, զօրացաւ առ նմա և մտանէր ևս յատեան խորհրդոյն։

Ապա յետ սակաւուց էջ նա 'ի Կապադովկիա ստուար բանակաւ ընդ Պերտիկկասայ՝ որ առաջնորդ էր զօրուն և ձերբակալ արարեալ զԱրիարաթէս և նուաճեալ զդաւառն, անդ նստէր կուսակալ Եւմենէս. տայր զառաջնորդութիւն քաղաքացն 'ի ձեռս բարեկամացն, և կարգէր զօրապետս պահապան գնդացն, և թողոյր անդ դատաւորս և գործակալս՝ որպէս ինքն կամէր, և Պերտիկկաս ոչինչ միջամուխ լինէր 'ի բանն։ Ապա եղեալ ինքն չու առնէր ընդ Պերտիկկասայ, շուք հարկանէր նմա, ոչ կամէր որիշ կալ 'ի Թագաւորաց։ Այլ Պերտիկկաս վստահ եղեալ ինքնին 'ի գլուխ տանել զխորհուրդ մտացն, և զմտաւ ածեալ եթէ և այլոց ևս գործոց պէտք ի ցեն առն քաջի և հաւատարմի 'ի վերակացութիւն, առաքեաց զԵւմենէս 'ի Կիլիկիոյ. 'ի վերին երեսս իբրու երթալ նստել յիւրում կուսակալութեանն, այլ 'ի ներքոյ՝ սանձել խաղաղել զՀայոց աշխարհն զսահմանակից՝ զոր յուզեալ աղմկէր Նէոպտողեմոս։ Եւ թէպէտ նա հպարտացեալ յողն կայր ամբարտաւանութեամբ, գուն գործէր Եւմենէս կենակից կենցաղակից լինելով 'ի չափու ունել զայրն. անդ և զՄակեդոնացւոց փաղանգն տեսեալ նա յամբարտաւանութե և խրոխտ, ձեռն արկեալ կազմէր հանդերձէր ընդդէմ խումբ այրուձիոյ. բնաւ իսկ ապահարկ զդաւառացիսն արարեալ բաւական 'ի ձիաւորել, և երիվարս յանձնէն բաշխէր

տայր արանց գնդին իւրոյ՝ յորս և վստա-
հացեալ իսկ էր. քաջալերէր խրախուսէր
'ի նախանձ գեղեցիկ և 'ի պարգևս ընծայից.
և մարդէր կրթէր զկորով մարմնոցն 'ի
քիրսն անդուլ. որպէս զի և Մակեդոնա-
ցւոց կէսք յայնժամ յապուշ հարեալ
կային, և կէսք՝ խրախուսեալ քաջալերե-
ցան, տեսեալ 'ի սուղ ժամանակին ժողո-
վեալ առ նա ոչինչ պակաս քան զվեց հա-
զար և երեքհարիւր այրուձիոյ։

Իսկ իբրև Կրատերոս և Անտիպատրոս 'ի
պարտութիւն մատնեալ զՀելլենացիս, խա-
ղային անցանէին յԱսիա աւերել քանդել
զտէրութիւնն Պերտիկկասայ, և լուր ևս
հասանէր արշաւանին նոցա 'ի Կապադով-
կիա, յայնժամ Պերտիկկաս՝ քանզի մարտ
պատերազմի յարդարէր ընդդէմ Պտղո-
մեայ՝ առեալ զԵւմենէս կարդէր զօրավար
ինքնակալ բանակին որ 'ի Հայոց աշխար-
հին և 'ի Կապադովկիա. ոյր աղագաւ և
նամականի ևս տայր՝ զի Աղկետաս և Նէո-
պտղոմէոս 'ի Թիկուն կայցեն Եւմենեայ.
և Եւմենէս իշխան առաջնորդ լեցի գոր-
ծոյն՝ որպէս և զիարդ հաճոյ լեցէ նմա։
Բայց անդ Աղկետաս յայտնի հրաժեշտ
տայր 'ի մարտէն, և ասէր՝ իւրոց մակեդո-
նացւոցն ամաչել 'ի դիմի հարկանել Անտի-
պատրեայ. և զԿրատերոս մտադիւրագոյնս
առնուլ ժողովել յինքեանս առ սէր մտեր-
մութեան ընդ առն։ Իսկ Նէոպտղոմէոս
անշուշտ մտաբերէր մատն լինել Եւմե-
նեայ. և կոչեալ ևս ոչ հնազանդեցաւ,

այլ կարդեաց Ճակատեցոյց զԼուր զօրն ընդ-
դէմ Նորա։

Ապա առաջին այն անգամ կռեաց Եւ-
մենէս զպատուլ զԼուրոյ Նախատեսութեանն
և զպատրաստութեանցն. քանզի 'ի պար-
տութիւն մատնեալ 'ի հետևակազօրն Լուր,
զայրուձին յառաջ վարեալ՝ եհար վանեաց
զՆէոպտղոմէոս և կալաւ զաղին Նորա. և
զՀետ մտեալ այրուձիոյն վարատելոյ փա-
ղանգին, 'ի Նեղ արկանէր զնոսա զէնընկէց
զինաթափ լինել, և առեալ զերդումն՝ զի-
նուորել ընդ ձեռամբ Նորա։ Բայց Նէո-
պտղոմէոս ժողովեալ նուազունս 'ի փա-
խստէից անտի՝ դնացեալ անկանէր առ
Կրատերոս և Անտիպատրոս։ Այլ սոքա
հրեշտակութիւն առաքեալ առ Եւմենէս՝
յորդոր տային կուսակից Լուրեանց լինել.
և հաւատարմացուցանէին ևս զնա կալ
հաստատուն 'ի բարձի կուսակալութեան
Լուրոյ. առ այս՝ և զօր այլ տալ նմա և դա-
ւառ այլ, եթէ 'ի թշնամութենէն Անտի-
պատրեայ 'ի բարեկամութիւն դարձցի.
դարձեալ և 'ի բարեկամութենէն ընդ
Կրատերեայ՝ մի՛ շրջեսցի 'ի թշնամութիւն։
Լուեալ Եւմենեայ զբանսն՝ ասէր, եթէ
'ի վաղնջուց թշնամութիւն բերեալ ընդ
Անտիպատրեայ՝ յանձն չառնու յայնժամ
'ի բարեկամութիւն գալ, զի ընդ բարե-
կամն դնայ դա աւադիկ Լբրև ընդ թշնա-
միս. իսկ զԿրատերոս մտադիր ինքն հաշ-
տեցուցէ ընդ Պերտիկկասայ, և դաշինս
ևս տացէ նոցա կռել ընդ միմեանս՝ Լրաւս

և արդարս. և ապա 'ի հարատահարել նոցա այր զընկեր, ինքն 'ի Թիկունս զրկելոյն կայցէ ոգւով ջափ. և մինչև զուխան Թողեալ՝ Թողցէ զմարմին իւր և զկեանս։

Մինչդեռ Անտիպատրոս և Կրատերոս լուեալ զբանն Եւմենեայ՝ 'ի խորհուրդ մտանէին ողջոյն վասն իրացն, եկեալ հասանէր առ նոսա Նէոպտղոմէոս փախուցեալ, և պատմէր նոցա զմարտ պատերազմին և աղերսէր ձեռն տալ, առաւել ևս զԿրատերոս. քանզի ասէր՝ մեծապէս անձուկ առ Կրատերոս ունել Մակեդոնացւոց, և 'ի տես միայն արտախուրակին նորա և 'ի լուր ձայնին արագ արագ զինու զարդու ժողովեցին առ նա։ Եւ արդարև մեծապէս էր համբաւ Կրատերեայ, և յետ մահուն Աղեքսանդրի փարելի էր նա Մակեդոնացւոց. յուշ ածեալ նոցա՝ զի 'ի նոցա սակս ընդ իւր 'ի Թշնամութիւն դրդեալ էր զԱղեքսանդր ինքնին գլխովին. քանզի զդէմ դառնայր նա՝ տեսեալ զԱղեքսանդրոս Թեկն ածել զքաղաքավարու Թեան կարգի Պարսից. և հայրենատուր կարգացն պաշտպան կայր՝ որ խոտեալ Թըշնամանեալ կային 'ի գիրգ և 'ի պերճ կենաց անտի։

Ապա յայնժամ Կրատերոս առեալ արձակէր զԱնտիպատրոս 'ի Կիլիկիա. և ինքն ածեալ ընդ իւր գունդ բազում 'ի զօրաց իւրոց՝ խաղաց գնաց ընդ Նէոպտղոմեայ ընդդէմ Եւմենեայ. զմտաւ ածէր անկանել 'ի վերայ յանակնկալ յեղակար-

ծումն ժամու, զի այն ինչ գյաղթութիւնն տարեալ զօրականին նորա՝ Թերևս երա-
մակարձակ նոքա 'ի գինեբբուս մոռեալ ի-
ցեն։ Արդ՝ զի նախագրած գալատեանն
Կրատերեայ էղև Եւմենէս և կանխեաց
կազմեցաւ պատրաստեցաւ, զայս ինչ՝
զուարթուն զօրավարի համարեսցի զբ ար-
դեօք, այլ ոչ և ծայր ուշիմութեան. բայց
զի գիտաց իսկ քաջ ծածկել նա 'ի թշնա-
մեաց՝ զոր ինչ օգուտ չէր նմա յիմանալ
նոցա. և զի՝ և զօրականին իւրում ետ
մարտ դնել կռուել ընդ Կրատերեայ՝ մինչ-
չև գիտացեալ նոցա՝ ընդ ո՞ւմ կռուել,
գաղեալ 'ի նոցանէ զզօրավարն ախոյեան,
այս ապա անշուշտ գործ համարեսցի գե-
ղեցիկ յոյժ մեծի զօրավարի։ Ոյր աղա-
գաւ և ինքն հռչակ հարեալ 'ի զօրն քա-
ջոզ կարդայր, եթէ Նէոպտղոմէոս ինքնին
միւսանգամ 'ի վերայ հասեալ գայ ընդ
Պիգրեայ հանդերձ այրուձիով Կապադով-
կացւոց և Պափղագոնացւոց. բայց 'ի գի-
շերին՝ յորում կամէր հորդան տալ բա-
նակին, տեսանէր նա 'ի քուն տեսիլ օտար։
Քանզի թուէր նմին տեսանել Աղեքսան-
դրոսա կրկին վառեալ 'ի կռիւ ընդ միմեանս,
և երկոքին դարձեալ 'ի գլուխ կացեալ
փաղանգի. և միումն 'ի թիկունս խաղալ
Աթենասայ, և միւսումն՝ Դեմետրի. և
հզօր մարտի եղելոյ՝ 'ի պարտութիւն մատ-
նիլ՝ որ ընդ Աթենասայն էր. իսկ Դեմե-
տրի հասկս մանգաղել և պսակ 'ի գլուխ
բոլորել յաղթականին։

Բայց տեսլեանն այնմիկ խեղամուտ այն-
պէս լինէր Եւմենէս՝ որպէս թէ յիւր
կողմն. իբրև մարտ եղեալ կռուէր նա
վասն քաջաբեր երկրին, յորում էր յայն-
ժամ առոք և գեղեցիկ հասակ 'ի փեսնեկին.
քանզի և ողջոյն այն սահման վարեալ սեր-
մանեալ էր, և տեսիլ 'ի գէմն բերէր զխա-
զաղաւէտ ժամանակի, զի և էին անդաս-
տանք վարսագեղք բազմաբեղունք: Եւ ա-
ռաւել ևս հաստատեցաւ 'ի կարծիսն Եւ-
մենէս, լուր առեալ՝ եթէ թշնամեացն նը-
շան 'ի կռուին՝ էր Աթենաս և Աղեքսան-
դրոս. ուստի և ինքն իւրում զօրականին
բաշխէր տայր նշան՝ Դեմետր և Աղեքսան-
դրոս. և հրաման ևս տայր առհասարակ
ամենեցուն պատկել 'ի բոլորս հասկաց և
նովին զարդարել զզէնսն: Բազում ան-
գամ յօժարեցաւ՝ խնդրէր 'ի վեր հանել
զօրավարաց և զօրագլխացն զայրն ընդ ո-
րում հասանէ կռուել նոցա. զի մի յայ-
լոցն քօղարկեալ, ինքն միայնակ մեծի գաղտ-
նեացն գիտակ կայցէ. սակայն և միշտ
ժուժկալեաց 'ի խորհրդոյն, և իւրում
գիտուութեանն ապստարեաց զվտանգն: Ա-
պա 'ի կարգել զօրուն՝ և ոչ զոք 'ի Մա-
կեդոնացւոց 'ի գիմի Ճակատեցուցանէր
Կրատերեայ, այլ կարգէր անդ խումբս
երկու զայրուձիոյ զեկաց և զօտարաց, և զօ-
րավար զՓարնաբազ զորդի Արտաբազեայ
և զՓիլոնիկս Տէնեդացի. և պատուէր տայր
նոցա՝ զի անդէն յերևել թշնամեացն՝
մորակ 'ի կուշտ յարձակեալք խառնեսցին

'ի գոռն, ոչ ժամ տացէն պարապոյ վերջոտնել տեղն տալ, և ոչ դարձեալ ունկն երբէք դիցէն բանագնաց պատուիրակաց. քանզի և մեծապէս խիթայր Եւմենէս՝ թէ յանկարծ ծանուցեալ Մակեդոնացւոց ըզ Կրատերոս՝ անցեալք ժողովեսցին առ նա:

Ապա և ինքն 'ի կարգի ճակատեցուցեալ երեքհարիւր ընտիր ընտիր նահատակաց զայրուձիոյն՝ յառաջ խաղայր յաջմէ կողմանէն կռուել ընդ Նէոպտղոմեայ: Իբրև հատին անցին զբլուրն՝ որ 'ի միջոցին, և յակն զնոսա արկին թշնամիք յարձակեալ արագ արագ մեծաւ զօրութեամբ, զահի հարաւ Կրատերոս. և անդ կայր և թշնամանս շատ յարձակէր Նէոպտղոմեայ, իբրու որ նեղեալ դնացեալ ընդ նմա 'ի բանն յաղագս փոփոխութեան Մակեդոնացւոցն. հապա խրախոյս կարդայր իւրոց զօրագլխացն և խաղայր ընդդէմ: Սաստիկ և բուռն էր առաջին մարտն, և անդէն հարեալ խորտակեցան տէգք և գեղարդունք, և խառնեցան 'ի մարտ սուսերաց: Անդանօր Կրատերոս ստուերածս ոչ ինչ 'ի վերայ ածեալ փառացն Աղեքսանդրի և տապաստ զբաղումս արկեալ և բազում անգամ ընդ կրունկն յետս զախոյեանսն դարձուցեալ, ապա և ինքն հարեալ վերս առնոյր 'ի Թրակացւոյ առնէ՝ որ 'ի կողմանէ յարձակեցաւ 'ի նա, և այնպէս թաւալգլոր անկանէր յերիվարէն: Իբրև այնպէս անկեալ կայր՝ դային առհասարակ անցանէին առ նովաւ և ճանա-

էին ոչ զնա. բայց Գորգիաս մի 'ի զօրապետաց անտի Եւմենեայ քաջ իսկ ծանուցեալ զայրն՝ ելանէր յերիվարէն, և շուրջ զմարմնովն պահ ունէր նմա՝ որ 'ի վերջինն վտանգեալ և յոգւոց պարզել ապաստան լեալ էր։

Յայնմ պահու և Նէոպտղոմէոս ինքնին խառնեալ 'ի մարտ ընդ Եւմենեայ, որ 'ի հարուստ ժամանակաց նոքա ատելիք միմեանց և ոխերիմք, երկիցս պատահեալք՝ ոչ ծանեաւ այր զընկեր. ապա յերրորդումն ուշ կալեալ՝ երկոքին միանգամայն ուժգին գոչմամբ շէշտ 'ի միմեանս վազեալ զաբար յարձակեցան մերկացեալք զվաղակաւորս։ Անդ թափ ընդ միմեանս ահագին դոփմամբ բախեալ երիվարաց նոցա՝ իբրու երկուց ոմանց եռաթիոց, նոքա զերասանական թողեալ՝ բուռն այր զընկերէ հարկանէին, մեծաւ ուժով կապտել զմիմեանց սաղաւարտս և քարշել կորզել յուսոց զպատեանս զրահիցն. իսկ 'ի բռնամարտիկ կռուին՝ զերծեալ նոցա 'ի ներքուստ երիվարացն՝ տապաստ յերկիր անկանէին այր 'ի վերայ ընկերի, և զմիմեանց կալեալ պնդապէս՝ այնպէս գօտեկուիւք լինէին։ Բայց 'ի շտապել Նէոպտղոմեայ կանուխ յոտին կանգնել, անդ Եւմենէս հարեալ կորեալ զթամբ սրունիցն նորա, և անդէն ինքն աճապարեալ 'ի վեր կանգնէր։ Յայնժամ Նէոպտղոմեայ մի 'ի ծընդացն վատեալ 'ի հարուածոյն, հաստատեցաւ 'ի վերայ միւսոյն, և այնպէս 'ի խո-

նարհ կացեալ կռուէր հզօրեղապէս. սա-
կայն հարուած մահացու չառուեալ ախոյե-
նին, ինքն կրկին վերս առեալ առ պարա-
նոցաւն՝ նուաղեալ տապաստ յերկիր տա-
րածէր։ Իսկ յայնժամ Եւմենէս 'ի սրտ-
մտութեան խրո

մենէս իբրև տան աւուրքք յետոյ քան զառաջինն. և ապա մեծապէս զհամբաւի հարկանէր, զի գեղեցիկ 'ի գլուխս տարաւ զբանն հանճարով և քաջութեամբ: Սակայն և նախանձաբեկ ընդ նա եղեն, և յոյժ ատեցին զնա միանգամայն և նիզակակիցք նորա և թշնամիք նորա. զի այր մի այնպէս եկամուտ և օտարական՝ 'ի զէն և 'ի բազուկ նոցուն Մակեդոնացւոց զայր հոյակապ զնոցա և զաւագամեծար 'ի կենաց զրաւեաց: Արդ եթէ Պերտիկկասայ յառաջագոյն առեալ էր զլուր մահուն Կրատերեայ, արդեօք և ո՛չ ոք նախաթոռ բազմեալ էր 'ի վերայ Մակեդոնացւոց. սակայն զհետ աւուրց երկուց սպանութեանն Պերտիկկասայ Յեգիպտոս յաղմուկս շփոթից՝ հասանէր 'ի բանակ նորա համբաւ պատերազմին այնորիկ: Ապա 'ի սրտմտութիւն բարկութեան բրդեալ Մակեդոնացիք՝ հաստատեցին 'ի մահ վարել զԵւմենէս. և կարգեցին զօրավար ընդդէմ նորա զԱնտիգոնոս 'ի միասին ընդ Անտիպատրեայ: Իսկ Եւմենէս յետ այսորիկ պատահեալ կուսակց արքունի երիվարացն ազատականաց 'ի լեառն Իդաս, ընտրէր առնոյր 'ի նոցանէ ո՛րչափ ինչ պէտք էին նմա. և գրեալ վասն այնորիկ առ կոյտասպանն, պատմեն՝ ծիծաղել յայնժամ Անտիպատրեայ և զարմանալ ընդ նախատեսութիւնն Եւմենեայ, զի այնպէս 'ի պատրաստի կայ նա տալ կամ խնդրել 'ի նոցանէ համար զիրացն արքունի:

Ապա զօրացեալ Եւմենեայ այրուձիով, խնդրէր մերձ 'ի Սարդի մարտ պատերազմի յարդարել 'ի դաշտավայրսն Լիւդեայ. պատուասիրէր ցուցանել Կղէոպատրեայ զզօրութիւն իւր. բայց աղաչեալ առ 'ի նմանէ (քանզի զանգիտէր Կղէոպատրէ ամբաստանութիւն կրել առ Անտիպատրոսի), ապա ելեալ գնայր Եւմենէս 'ի Փռիւգիա վերին և ձմերէր 'ի Կեղենէ. ուրանօր Աղկետաս և Պողեմոնէն և Դոկիմոս 'ի պայքար ընդ նմա վասն զօրավարութեան ելեալ, ասէր Եւմենէս. "Այս իսկ է բանն՝ որ ասէ եթէ 'Ի Խրոպէանն՝ փէղի էֆ բանին։ Ապա խոստումն զօրականին տուեալ Եւմենէս՝ տալ նոցա ռոճիկ զերիս աւուրց, առեալ վաճառէր նոցա զաւանս և զամրոցս գաւառին լի մարդկամբք և անասնովք. և անդ գնդապետս վարձկանաց զօրուն՝ մանդղիոնս և մենքենայս առեալ յԵւմենեայ՝ մարտ եդեալ կռուէր ընդ վայրսն. և զօրականք դարձեալ բաժանէին յիւրեանս զամենայն զաւարն, մինչև ընուլ զչափ ռոճկին։ Ապա զայս օրինակ անդրէն միւսանգամ սիրելի ընծայեցաւ Եւմենէս. զի և տեսեալ Մակեդոնացւոց երբեմն 'ի բանակին գիրս ինն արկեալ անդ 'ի թշնամեաց զօրապետացն, քանքարս հարիւր 'ի նեղքս մատուցանել և պատիւս մեծամեծս առն՝ որ զԵւմենէս սպանցէ, մեծապէս 'ի բարկութիւն բրդեալ հաստատեցին կարգել նմա թիկնապահս հանապազորեայս հազար մի 'ի քաջաց զօրակա-

նին, պահել զնա յամենայն ճանապարհս
իւր և առ նմա ցանգ օթագայել։ Եւ ապա
այնպէս մոգիւրս պահ կալեալ նմա,
մոգիւրագոյն ևս առնուին 'ի նմանէ զշուք
պատուոյն՝ զոր յարքայից առնուն բարե-
կամք. քանզի և իշխան էր Եւմենէս բաշ-
խել տալ և արտախուրակս ծիրանիս և
քղամիդս. և այս ձիրք մեծապէս են առ
Մակեդոնացիս 'ի բաշխոյս պարգևաց թա-
գաւորաց։

Եւ արդ՝ ելք յաջողակք բնաւորեցան
քաջալերութեամբ խրախուսել և զփոքրո-
գիսն անդամ, զի և 'ի բարգաւաճել իրացն
թուի ինն կերպարան պերճ 'ի դէմս բերել
նոցա. բայց այր մեծանձն և անդրդուելի
առաւել ևս 'ի վեր վազէ 'ի ձախողական,
ըստ որում և Եւմենէս։ Քանզի նախ 'ի
պարտութիւն յԱնտիգոնոսէ մատնեալ
մատնութեամբ յՈրկինացիս Կապադով-
կիոյ, թէպէտև զհետ մուտեալ վանէին զնա,
նա թոյլ չետ մատնչին զերծանել փախչու-
տեամբ առ թշնամին. Եհաս և ձերբակալ
արարեալ զնա հանէր 'ի կախաղան, ապա
ինքն փախուստ առեալ ընդ այլ ճանա-
պարհ 'ի հետամտիցն, ընթացաւ զանխուլ
և անցեալ յառաջ և հասեալ 'ի տեղի պա-
տերազմին, կայր և ամփոփեր զդիակունս
անկելոցն. և պատառեալ զփեղկս դրանց
ՁՀՐՉակայ դիւղիցն՝ այրեր զդիակունսն զօ-
րականին որիշ 'ի զօրապետացն. ապա կար-
կառ գործեալ հողակոյտ՝ գնայր 'ի բաց.
'ի վերայ հասեալ ապա Անտիգոնոս 'ի

վայրն՝ հիացեալ զարմանայր ընդ արիու-
թիւն առնն և ընդ քաջութիւն ոգւոյն։

Յետ այսորիկ Եւմենէս յուղղոջ ընդ
առաջ երեալ աղխին Անտիգոնեայ, և անդ
ձեռնհաս էր հեշտին հասանել ունել բա-
զում որեար ազատ և շատ ևս ծառայս և
մթերս հարուստ զբաղում մարտից և զշատ
աւարաց. բայց զանգիտէր՝ եթէ ծանրա-
բեռինք իւրն զօրականք յաւարաց անտի և
յանկածէն՝ յամրաքայլք բերցին 'ի փա-
խուստն, և դրդացեալք վերջասցին յա-
ծել գնալ և սպասել դէպ ժամանակին՝
յոր զյոյս առաւել հաստատեալ էր Եւ-
մենէս զմարտին զայնորիկ, իբրև 'ի մտի ու-
նէր այլ ուրեք առնուլ փոխել զԱնտիգո-
նոս։ Բայց քանզի և դժնդակ էր յայտնի
'ի բաց քեցել զՄակեդոնացիս 'ի կազմ և
'ի պատրաստ աւարէն, հրաման տայր նոցա
հաց առնուլ և կերակուր ևս տալ երիվա-
րացն, և ապա խաղալ յաւարն։ Իսկ ինքն
'ի նոյն գաղտաբար առաքէր ասել առ Մե-
նանդրոս ոստիկան աղխին Անտիգոնեայ,
եթէ հոգ ինքն զնորա կալեալ իբրու բա-
ռեկամի և ընտանւոյ՝ ազդ առնէ նմա անձ-
նապահ 'ի շտապ տագնապի տեղի տալ
մեկնել 'ի զինջագոյն վայրաց անտի այրու-
ձիոյն, և գնալ մօտ 'ի լեռնակողմն անկոխ
յայրուձիոյն և յանքոյթ վայր։ Խելամուտ
վտանգին եղեալ Մենանդրոս և ժողովեալ
անտի զաղխն, ապա Եւմենէս առեալ արձա-
կէր յայտնի լրտես յառաջոյ. և պատուէր
տայր զօրականին վառեալ կազմել և երիվա-

բացն սանձ արկանել՝ իբրու անդէն 'ի վերայ աղեսին յարձակել։ Բայց լուր 'ի լրտեսացն առեալ՝ զի զՄենանդրոս չէք հնարունել, զի անկեալ ապաւինեալ կայ 'ի դժուարս վայրաց, յայնժամ Եւմենէս 'ի վերին երեսս մեծապէս դառնացեալ՝ 'ի բաց առեալ տանէր զզօրականն։ Եւ պատմեն՝ եթէ ապա 'ի վկայել ինքնին Մենանդրեայ առաջի Անտիգոնոսի վասն բանին այնորիկ, իբրև 'ի գովութիւն առեալ զԵւմենէս Մակեդոնացիք մարդասիրէին առնա, զի այնպէս ձեռնհաս այն գերի վարել զմանկունս նոցա և խայտառակել զկանայս նոցա՝ տեղի եւ 'ի քաջագէպ ժամուն, ասէր Անտիգոնոս. "Այլ տեղի եւ Եւմենէս՝ ո՞ երանելիք, ո՛չ եթէ հոգ զձեր ինչ կալեալ, այլ զանգիտեաց՝ գուցէ քար ընդ ոտն շատ դիցէ 'ի փախչել իւրում"։

Իսկ յետ այնորիկ Եւմենէս ցանգ 'ի թափառել և 'ի խոյս տալ, ածէր հաւանեցուցանէր զբաղումս 'ի զօրականէն գնալ ազատ 'ի բաց. կամ զի հոգ զնոցանէն կալեալ, կամ զի չկամէր զհետս իւր խաղացուցանել ամբոխ՝ առ 'ի մարտ սակաւաձեռն, և առ 'ի թաքուստ՝ բազմաձեռն։ Ապա գնացեալ ապաւինէր 'ի Նովպա աւան ընդ սահմանագլուխս Լիկայոնեայ և Կապադովկիոյ հինգ հարիւր այրուձիով և երկերիւր հետեւակօք. անդ 'ի բաց արձակէր և զամենայն բարեկամսն համբուրիւ սիրոյ՝ որ խնդրեցին, զի ո՛չ կարացին բերել դառնութեան վայրացն և կարօտութեան կե-

բակրոյն։ Բայց 'ի գալ հասանել անդր Անտիգոնեայ, առաքէր և կոչէր զԵւմենէս խօսել բերան 'ի բերան՝ մինչչև նեղեալ զնա պաշարմամբ. ետ պատասխանի Եւմենէս՝ եթէ բազում են արդեօք բարեկամք Անտիգոնեայ, բազում և զօրավարք ընդ նմա. սակայն 'ի նոցանէ՝ որոց ինքն պաշտպան կայ, կայցէ և ոչ ոք 'ի մահուն նորա, բայց խնդրէ 'ի նմանէ պատանդս՝ եթէ կամք ի՞ցեն խօսել ընդ նմա։ Իբրև կրկին ստիպեաց Անտիգոնոս՝ գալ խօսել ընդ նմա իբրև ընդ քաջագունի քան զինքն, ասէ Եւմենէս. "Քաջ առաւել քան զիս համարիս և ոչ զոք, ցորչափ սուսերին ի մոյ իշխան եմ"։

Ապա Անտիգոնոս յղեալ առնա յաւանն զիւր Թոռնն զՊտղոմէոս 'ի պատանդի՝ զոր խնդրեացն Եւմենէս, ի՞նչանէր և ինքն. և անդ երկոքին նոքա ողջոյն տուեալ միմեանց և գիրկ ընդ իսառն լինէին՝ իբրու որ բարեկամք և մտերիմք, և բազում անգամ յառաջագոյն կենակիցք կենցաղակիցք լեալ էին։ Եւ բազումս անդանօր զբանիւք անկեալ նոցա, երբէք Եւմենէս բան չասէր յաղագս աներկևանութեան անձինն կամ պայմանաց ինչ դաշին, այլ խնդրեալ պընդագոյնս հաստատել զինքն յաւագութե՛ նախարարութեան իւրոյ և դարձուցանել յինքն զպարգևս ընծայից իւրոց, յապուշ զտեսանելիսն հարկանէր ընդ արութիւն ոգւոյն և քաջութեանն իւրոյ։ Բայց անդր յայնժամ խուռնընթաց գիմէին Մակեդո-

նացեալք՝ անձկացեալք տեսանէլ զայրն Եւ-
մենէս. քանզի և յետ մահուն Կրատե-
բեայ՝ սատակ վասն նորա մանաւանդ շը-
շնչիւն էր 'ի բանակին։ Ուստի և Անտիգո-
նոս զանգիտեալ վասն առնն եթէ բուռն
ինչ եղիցի նմա, ձայն բարձեալ արգելոյր
զմօտելն, և վիրդս և բռնաքարս ևս տայր
արձակել ընդդէմ խուժելոցն. ապա 'ի
վերջէ 'ի մէջ բազկաց իւրոց գիրկ ընդ անձն
առեալ զԵւմենէս և 'ի բաց զամբոխն փա-
րատեալ տիգաւորքն՝ այնպէս հազիւ ու-
բեմն յանդորր հանէր զնա։

Ապա Անտիգոնոս պատնէշ մի ածեալ
շուրջ զՆովբայիւ, և գունդ պահապան
թողեալ անդէն, չու առնէր բանակին։
Եւ այնպէս պատեալ պաշարեալ Եւմե-
նէս՝ նստէր անդ յամրի 'ի վայրին, ուր և
առատ էր ցորեան և ջուր և աղ. իսկ այլ
կերակուր և այլ հանդերձանք և համեմունք
ցորենոյն չէին անդանօր։ Սակայն և այն-
պէս կեանս իմն զուարթ և խրախամիտ
տայր նա վարել ընկերացն՝ առեալ զնոսա
ըստ կարգի իւր սեղանակիցս. և համեղա-
ճաշակ զայն կոչունան յարդարէր նոցա
շնորհաշուք բարոյիւք և մարդասէր քաղա-
քավարութեամբն։ Զի և էր իսկ ինքն այր
զուարթադէմ, և ոչ իբրև այլքն 'ի պա-
տերազմիկ որերոյն և 'ի զէնսն փառարե-
լոց, այլ կայտառ իբրև զոմն 'ի պատանեաց
և առոյգ. և էր նորա մարմինն համակ գե-
ղեցիկ յօդաւոր, իբրու որ աքանչելապէս
արուեստիւ չափակցեալ անդամոցն մե-

ծապէս ճշդութեամբ։ Ձէր նա կորովի 'ի բանն, այլ լի՛ էր շնորհօք և յաջողեալ յամոքել հաւանեցուցանել, ըստ որում և քա՛ջ տեսանեմք 'ի նամականին նորա։

Բայց քանզի յայնժամ սուաւել քան զամենայն՝ առ անձկութեան վայրացն տագնապ էր պաշարելոց, յածեալք ընթացեալք 'ի յարկս անձուկս և 'ի միջոց շրջապատի երկուց ասպարիսաց, և առնուին կերակուր մինչև կրթանս 'ի գործ առեալ, և կեր տային երիվարացն պարապորդ անդէն գադարելոց, ապա ո՛չ առանթարշամ միայն պահել զաժխոյժս նոցա, այլ և 'ի փախուստ կրթել՝ թէ երբէք պէտք լցեն, յարկ մի մեծ ևս քան զամենայն յարկս տեղւոյն՝ երկայն չորեքտասան կանգնոց տայր մարդկանն 'ի ձեմն ոտից, և պատուիրէր նոցա գնալ ընթանալ և տակաւ արագ ևս և սաստիկ գործել զընթացսն։ Նաև երիվարացն հոգ տարեալ, զառաջակողմանս նոցա պատեալ առ պարանոցաւն ստուար փոկովք պնդեալ ընդ ձեղուն յարկին, ամբառնայր 'ի վեր ճախարակաք՝ զի յետի սրունքն հաստատեալք ողջ 'ի գետին՝ առաջինքն ծայրիւ չափ ամբակացն քերէին. մինչդեռ այնպէս ամբարձեալ կային երիվարքն, ձիագարմանք մատ նոցա գոռութեան ձայնիւ և 'ի հարուած խարազանի դրդռէին զնոսա. ապա նոքա անհնարին թափ տուեալք՝ և այսր անդր յետի սմբակաքն կայթս սաստիկ հարկանէին, և գուն ևս գործեալ առաջա-

կողմն սմբակօք դավր հատեալք ունել զգեստինն, այնպէս առեալ ձգտեալ ողջոյն զմարմինն և ընդ քիրան սաստկապէս հարեալք՝ յոգւոց թասէին. գեղեցիկս զայն օրինակ կրթեալ զնոսա յարագ 'ի վազս և 'ի կորուն. ապա առաջի արկանէին նոցա գարիս անփեճոկս, զի արագ ևս ծամեալք, և լաւ ևս հալեսցեն։

Իսկ իբրև այնպէս յերկարէր պաշարումն, լուր առեալ Անտիգոնոս զմահուն Անտիպատրեայ 'ի Մակեդոնիա, և զաղմկելոյ իրացն 'ի գժտութեանց անտի Կասանդրոսի և Պոլիսպերքոնտեայ, ոչ ևս այնուհետև յոյս դուշնաքեայ կալեալ, այլ ողջոյն իսկ զտէրութիւնն անձին դրաւեալ 'ի խորհուրդս իւր, բարեկամ իւր խնդրէր զԵւմենէս Նիզակակից գործոց նահատակութեան։ Ուստի և առեալ զՀերոնիմոս 2 առաքէր առ նա, դաշինս կռէր ծանր ծանր երդմամբք։ Իսկ Եւմենէս ուղղագրեալ զդաշինսն, ապա 'ի կամս ազատութեան թողոյր Մակեդոնացւոցն դատել զարժանն։ Քանզի Անտիգոնոս հարևանցի և վեր 'ի վերոյ առաջին յիշատակ արարեալ զարքայիցն, ապա զայլ ամենայն երդումն անձին պահէր. բայց Եւմենէս յերդմունսն առաջին յիշատակէր զՈլիմպիա 'ի միասին ընդ արքայիցն. ապա յետ այնորիկ երդնոյր ոչ բարեկամ միայն լինել Անտիգոնեայ և բարեկամացն, և թշնամի՝ թշնամեացն, այլ և զնոյն օրինակ վարել և առ Ոլիմպիա և առ արքայսն։ Իրաւ զբանսն հա-

մարեալ Մակեդոնացւոց և երդմնեցուցեալ այնպէս զԵւմենէս՝ լուծանէին զպաշտ-
րումն. առաքէին և առ Անտիգոնոս երդ-
նուլ զերդումն Եւմենեայ։ Եւ յայնժամ
դարձուցանէր Եւմենէս զամենայն զպա-
տանդն Կապադովկիոյ՝ զոր ունէր 'ի Նով-
րա. և առնոյր 'ի տանողացն երիվարս և
գրաստս և վրանս, և ժողովէր խմբէր զվա-
ղատեալ զօրականն 'ի գաւառէն, և գու-
մարեալ այրուձի իբրև հազար՝ դէմ եդեալ
ճեպով փախչէր յերեսաց Անտիգոնեայ։
Քանզի ոչ միայն հրաման տուեալ էր նա
Մակեդոնացւոց՝ միւսանգամ առնուլ փա-
կել 'ի նեբքս զԵւմենէս, այլ և պատասխա-
նի խիստ գրէր առ նոսա՝ զի յանձին կալան
զուղղագրել երդմանն։

Բայց 'ի փախստեայ գնալ Եւմենեայ
բերէին առ նա նամականի գրեալ յարանց՝
որ 'ի Մակեդոնիա զանգիտեալ լին էին
ընդ բարգաւաճելն Անտիգոնեայ. աղաչէր
և ինքնին Ոլիւմպիա զԵւմենէս՝ գնալ ինամ
ունել վասն որդեկին Ալեքսանդրի՝ զի դա-
ւաճանէին զկեանսն, և առնուլ սնուցա-
նել զնա։ Բայց և Պոլիւպերքոնտէս և ար-
քայն Փիլիպպոս Թախանձէին զնա մարտ
դնել կռուել ընդ Անտիգոնեայ՝ առեալ
զզօրն Կապադովկիոյ. առ այս և 'ի գան-
ձուց անտի որ 'ի Կուինդի՝ առնուլ վասն
իւր հինգ հարիւր քանքար. իսկ վասն մար-
տին՝ որչափ ինչ միանգամ կամք ելցեն ծա-
խել. և վասն այսորիկ ետուն նամականի և
առ Անտիգենէս և առ Տեւտամոս զօրա-

վարս Արդիւրասպացւոց, այն են՝ Արծաթասպարք։ Առեալ սոցա զնամականին՝ 'ի վերին երեսս մարդասիրապէս ժողովեցին զԵւմենէս. այլ 'ի նեղքոյ մեծապէս խանտային՝ զի խոնարհագոյն քան զնա գտան։ Իսկ նա դարման նախանձուն տարեալ՝ չէառ իւր զՀինգ հարիւր քանքարն իբրև բնաւ իսկ անկարօտ։ Այլ և անսաստութեան և իշխանասիրութեան նոցա՝ զի ոչ հրամայել գիտէին և ոչ հնազանդել կամէին, խնամ տարաւ հնարիմաց սնապաշտութեամբ։ Քանզի ասէր նոցա՝ 'ի քուն երևեալ նմա Աղեքսանդրի, և ցուցանել նմա խորան արքունի զարդու և 'ի նմա գահոյք, և ասել՝ անդանօր խմբել զատեան խորհրդոյն, ուր և ինքնին նա մերձ կացցէ՝ զօրավիգն ամենայն խորհրդոց և գործոց նոցա՝ եթէ միայն անսասցեն։ Եւ այսպէս ապա հեշտեաւ հաւանեցոյց նա զԱնտիգենէս և զՑեւտամոս. զի և ոչ իսկ կամէին նոքա գնալ առ նա, և ոչ դարձեալ ինքն յանձին ունէր առ դուրս գեգերել այլոց։ Եւ այնպէս խորան իսին արքունի կանգնեալ և 'ի նմա գահոյս՝ որում անուն կարգային Աղեքսանդրի, անդր խմբէին 'ի խորհուրդ վասն մեծաց իրաց։

Ապա յետ այնորիկ յառաջագէմ խաղացեալք 'ի վերնագաւառն, անդ Պեւկեստաս բարեկամ Եւմենեայ եկն նմա ընդ առաջ և ընդ նմա այլք ևս 'ի նախարարաց՝ հանդերձ զօրու, և այնպէս հասատահարուստ կահեցին զՄակեդոնացիս 'ի

բազմութիւն զինուց և 'ի հանդերձանս
հոյակապս։ Բայց նախարարքն այս ապե-
բասանք ինքնիշխան սուագութեամբ, և 'ի
կեանս իւրեանց ցուցացեալք յետ մա-
հուանն Աղեքսանդրի, 'ի միումանդ վայրի
բռնացեալք և ամենեքիք ամբարտաւանու-
թեամբ, այր զընկեր հարստահարէին, և
միաբանութիւն չէր 'ի նոսա։ Ահա այս՝ և
տարապայման շնթեալք նոքա Մակեդո-
նացւոցն, և անկղնոտացեալք 'ի խնճոյս և
'ի զոհս, 'ի սակաւ ժամանակի առեալ
գործեցին զբանակն՝ ոճնավաճառ ան-
ժուժկալութեան. ուստի և այնուհետև
յընտրութեան զօրավարացն գգուանօք ըզ-
միաս պարտ էր հաճել զնուժանին, ըստ
որում և բնաւորեցաւ 'ի ռամկապետու-
թիւնս։ Յայսցանէ ապա խրազգած եղեալ
Եւմենէս, եթէ այր զընկեր նոքա արհա-
մարհել արհամարհէն, սակայն առհասա-
րակ երկուցեալք 'ի նմանէ՝ դէպ ժամանա-
կին դէտ ակն ունին բառնալ զկեանս նո-
րա, կեղծաւորեցաւ նա ինքն պէտս ունել
դրամոց. և առնոյր 'ի փոխ քանքար բա-
զում յարանցն առաւել ատելեաց անձին
իւրոյ, զի յանձն եղեալք 'ի նա, և զի մի
դաւաճանեսցեն զնա առ սէր արծաթոյն
իւրեանց։ Եւ այսպէս նա յօտարին ընչից
ամուր ապատանի գործէր փրկութեան
անձին. և ուր այլք ինչս բաշխեն տան յան-
դորր անձանց, նա միայն անդորրացաւ ինչս
ժողովելով։

Բայց Մակեդոնացիք ցորքան ժամանակ

յաներկիւղս կային, քաջ իսկ կաշառաբեկ
լինէին 'ի պարգևաբաշխից անտի և սպա-
սարկուք դեգերէին առ դուրս նոցա, պահ
կալեալ արանցն՝ որ միանգամ զզօրավա-
րութեան թեկն ածէին. այլ իբրև ան-
դուստ երևեցաւ Անտիգոնոս և բանակ
հարկանէր մօտ առ նոսա զօրու ծանու, և
իրքն գլխովին բողոք բարձեալ էին 'ի խըն-
դիր քաջի զօրավարի, անդ ոչ միայն ամբոխ
զօրականին մերձեցաւ առ Եւմենէս, այլ
և այր այր 'ի նախարարաց անտի որ 'ի գիր-
գանան յօրացեալք էին՝ եկին խոնարհե-
ցան առ նա և լռիկ հնազանդեցան ունել
զտեղի իւրաքանչիւր՝ որպէս և զիւրդ հրա-
մայեաց նոցա. ուստի և յորժամ Անտի-
գոնոս կազմեցաւ պատրաստեցաւ անցա-
նել զգետն Պասիտիգրիս, անդանօր պա-
հապանք իւրաքանչիւր վայրաց՝ և ոչ զգա-
ցին անգամ. միայն Եւմենէս ամենապա-
տեալ ախոյեան 'ի դիմի հարաւ. մարտ
յարդարեալ պատերազմի բազում յոյժ 'ի
թշնամեացն հարկանէր սատակէր, և 'ի
բազմակոյտ դիականցն ընդոյր զեղոյր զգետն,
և գերի վարէր ոգիս չորեք հազար:

Բայց մասնաւոր՝ 'ի ժամանակի անդ
խօթուրթեանն Եւմենեայ՝ յայտնի ցուցա-
նէին Մակեդոնացիք, զի եթէ զայլն յիշ-
խանաց առ սեղանապետս ոմանս մեծա-
հաց կոչնոց ունէին նոքա և առ տօնակա-
տարս աշխարհաժողովս, իսկ զԵւմենէս
միայն ունէին նոքա առաջնորդ և զօրավար
քաջ մարտից պատերազմաց: Քանզի անդ

'ի Պարսս կոչունս մեծահաց տուեալ նոցա Պեւկեստաս, և առ այր այր ոչխար մի բաշխեալ առ 'ի զոհ, եդ 'ի մոի մեծապէս աւագուԹեամբ տիրանալ նոցա. այլ յետ սակաւուց չու արարեալ զօրականին ընդդէմ Թշնամեաց, դէպ եղև Եւմենեայ 'ի պատճառս գժուարին խօԹուԹեանն բարձեալ շալակաւ տանել արտաքս 'ի բանակէն՝ ոչ լսել զշաչիւն շառաչիւն, զի և ննջել չկարէր. և իբրև զօրականն վայր մի յառաջ խաղաց, անդուստ յեղակարծումն յերևան ելին Թշնամիք, հատեալ անցեալ զկատարս բարձանցն՝ 'ի վայր հորդան տային 'ի դիւր անդր։ Իսկ 'ի ճառագայԹից արեգականն 'ի բարձունս կատարացն նշոյլք հատանէին նոցա 'ի զինուց զարդուց ոսկւոյ գունդագունդ զօրականին՝ որ կարգեալ այնպէս համախումբ յառաջ խաղային. անդ և զբարձրաշէնս յակն արկեալ զաշտարակաց 'ի վերայ փղացն, և զծիրանիսն (զի զայն զարդ տանին նոքա 'ի կռուին), անդէն որ յառաջամարտիկ նահատակքն էին Մակեդոնացւոց՝ զտեղի առեալ, ձայն բարձեալ կարդային զԵւմենէս. զի և ոտնփոխ երբէք չլինիցին՝ Թէ ոչ նա ինքնին 'ի վայրն հասեալ 'ի գլուխ կացցէ բանակին. և առեալք զզէնսն վարսէին 'ի գետին, և այր ընկերին ազդ առնէր զտեղի ունել՝ զնոյն և զօրավարացն Թելադիր լինել, հանգարտել մնալ և ընդ Թշնամիսն չխառնել առանց Եւմենեայ։

Զլուր առեալ Եւմենէս՝ 'ի շտապ սագ-

նապի հասեալ գայր առ նոսա, ձեպ տուեալ՝ որ բարձեալն տանէին զնա. և աստի անտի 'ի բաց զվարագոյրսն պարուրեալ զշալակին, առեալ զաջ լուր 'ի գուրս կարկառէր զուարթագին. իսկ զօրականն տեսեալ զնա՝ արագ արագ ոչՁոյն տային 'ի լեզու Մակեդոնացի. առին ամբարձին զասպարսն և զդայլսոնսն հարեալ 'ի վերայ, ձայն ցնծութեան բառնային և թշնամեացն ասպարէզ կարդային՝ ակնարև զզօրավարն իւրեանց ունելով: Իսկ Անտիգոնոս լուեալ 'ի գերեալն զխօթութիւնն Եւմենեայ, և զի 'ի դժուարութենէ ախտին բարձեալ տանին զնա, հեշտեաւ այնուհետև համարեցաւ հարկանել զնոսա 'ի հիւանդութեան նորա, և փութայր ձեպէր խառնուրդ առնել մարտին: Իբրև յառաջ նահատակեցաւ, տեսանէր զձև կարգի նոցա և զգեղեցիկ դասաւորութիւն զօրուն, հարուստ մի այնպէս յապուշ հարեալ զտեղն ունէր. ապա և զշալակն զԵւմենեայ յանկն արկեալ յայսկոյս յայնկոյս 'ի թևէ 'ի թև բարձեալ բերեալ, 'ի քրքիջ մեծ այնուհետև հատեալ Անտիգոնոս՝ ըստ որում և բնաւորեալն իսկ էր, ասէր առ բարեկամն. "Սա այս շալակ է՝ որպէս Էրևիդ՝ որ կարգ դասաւորութեան ընդդէմ մեր տայ". զայս ասաց, և անդէն ընդ կրունկն տեղի տուեալ զօրուն՝ բանակ հարկանէր:

Իսկ որք ընդ Եւմենեայ էին՝ վայր մի ոգի առեալ, դարձան անդրէն 'ի գժտութիւնս խուժանին. և խեռացեալք ընդդէմ զօ-

բավարացն՝ ցանեալ շրուեցան 'ի ձմերոցս
գոգցես ողջոյն ընդ դաւառս Դաբէնա-
ցւոց. զի և վերջինքն յօթևանաց 'ի բացեայ
կային յառաջնոցն սասպարիսաք հազար։
Լուր զայսորիկ առեալ Անտիգոնոս, ա-
ճապարեաց ընդդէմ նոցա ընդ ճանա-
պարհ դժուարին և անջրդի, դժուարա-
կոխ՝ բայց 'ի կարճոյ. ակն ունէր 'ի վերայ
անկեալ նոցա 'ի վարատեալ նոցա 'ի ձմե-
ռոցն՝ ոչինչ այնպէս հեշտեաւ խմբեալ զո-
րավարաց զչջին։ Իբրև եմուտ վիսեցաւ նա
յանապատս անդր դաւառին, անդ մրրիկք
դառնաշունչք և ահագին սառամանիք
քարընդոտն լինէին ուղւոյն, և շատապ տագ-
նապի 'ի վերայ հասանէր զօրուն։ Ապա
հարկաւորեալք 'ի զօրավիդն ունել զնիտ
առ խիտ վառեալ խարուկաց, յորմէ և ոչ
զանխուսալ եկաց նա 'ի Թշնամեացն. քանզի
անդ խուժդուժք բնականունդք լերանց՝
որ 'ի վերոյ անապատին՝ հիացեալք 'ի տե-
սիլ խիտ առ խիտ խարուկացն, հրեշտակս
ձիաւորեալ յուղղոս արձակէին առ Պեւ-
կեստաս. լուեալ նա և պակուցեալ և 'ի
նոյն արհաւիրս և զայլսն տեսեալ՝ 'ի փա-
խուստս խուճապէր. զնոյն տայր առնել և
առհասարակ զօրականին՝ որոց միանգամ
պատահէր յուղղոջն։ Բայց Եւմենէս 'ի
բաց զերկիւղն փարատեալ՝ դադարեցու-
ցանէր զաղմուկն. և խոստանայր ևս տալ
դեգերանս խուճապին Թշնամեաց, և երեք
աւուրքք քան զակնկալութիւնն, անագա-
նեալ զգալուստ նոցա. իբրև նոքա հանդար-

տեցան, առեալ արձակէր պատուիրակս շուրջանակի, հրաման տայր 'ի ձեպ տագնապի խմբել զօրուն որ 'ի ձմերոցն, և այլ ևս զօրականին. և 'ի ժամանակին յայնմիկ ինքն յերիվար աշտանակեալ ընդ զօրավարացն և շուրջ յածեալ, 'ի վայր մի բարձրաւանդակ և յերևան զօրուն՝ որ խաղացեալ գայլին ընդ անապատն, և չափեալ սահման՝ անդ հրաման տայր խարոյկս խիտ առ խիտ բացատ 'ի միմեանց արկանել, զոր բանակք զօրաց բնաւորեցան գործել։

Իբրև այս եղև, անդուստ Անտիգոնոս տեսեալ զխարուկածին բոց 'ի լեռնակողմանն, յոյժ 'ի խոր խոցեալ սրտառուչ լինէր. կարծեաց իրազգած Թշնամեացն եղեալ՝ խաղալ նմա ընդ առաջ։ Ապա զի մի այնպէս պարտասեալ ինքն ասպատեցի 'ի կռիւ ընդ նահատակաց կաքաւել և ընդ հանդարտելոց զօրականին, Թողեալ զկարճոյ ուղին՝ տեղի տայր ընդ քաղաքաշէնան, և 'ի չու հանդարտիկ դիւր առնէր զօրականին իւրոյ։ Բայց խոչընդոտն և ոչ մի գտեալ 'ի վերջոտնել իւրում, ըստ որում և պատահէ իսկ՝ 'ի ճակատել Թշնամեաց ընդդէմ միմեանց, և լուեալ ևս 'ի չրջակայ բնակչացն՝ եԹէ խիտ առ խիտ վառեալ կան խարոյկք, բայց զոր անդ չկք ուրեք 'ի միջի, խելամուտ ապա լինէր հնարիմացութեանն Եւմենեայ 'ի դաւել զնա. 'ի ցասումն բրդեալ՝ խաղացուցանէր զզօրն, խնդրէր ճակատամարտ հանդիպիւ սահմանել զբանն։ Այլ 'ի ժամուն բաղումք 'ի

զօրականէն խմբեալ առ Եւմենէս՝ զար-
մացեալք ընդ հնարաւոր խմաստութիւն
առն՝ խնդրէին նմա միայնոյ զօրավարել.
որ աղաչաւ 'ի խոր խոցեալ Անտիգենէս
և Տեւտամոս զօրավարք Արգիւրասպացւոց
խանտային, և խորհեցան դաւաճանել զնա.
և զբազումս 'ի նախարարաց անտի սադրեալ
և 'ի զօրավարաց, 'ի խորհուրդ մտանէին՝
երբ և զիարդ դարանակալ լինցին Եւմե-
նեայ: Եւ անդ առհասարակ միաբանե-
ցան՝ 'ի գործ զնա վարել նախ յառաջա-
կայ կռուին, և ապա արագ արագ սպա-
նանել զնա: Յայնժամ Եւդամոս փղա-
պետ և Փեդիմոս գնացեալ գաղտ 'ի վեր
զխորհուրդն հանէին Եւմենեայ, ոչ առ
բարեկամութեան ինչ և 'ի հաճել զնա,
այլ զանգիտեալք կորուսանել զդրամն՝
զոր 'ի փոխ տուեալ իսկ էին նմա:

Իսկ Եւմենէս գովեալ և շնորհս ևս կա-
լեալ նոցա, մտեալ 'ի վրան իւր՝ ասէր առ
բարեկամն 'ի մէջ վոհմակաց գաղանաց
շրջել. և այնպէս նստեալ գրէր զկտակ
իւր, և առեալ խաթարէր պատառէր զնա-
մականին զամենայն որ առ իւր. ոչ կամէր
եթէ յետ մահուն 'ի գաղտնեաց գրենոյն
զրպարտեալք ինչ ելնասեցին գլոռքն: Եւ
այնպէս զիւր իրն յարդարեալ, 'ի խոր-
հուրդ մտանէր՝ արդեօք զյաղթութիւնն
գլխովին թողուլ թշնամեացն, եթէ խա-
ղալ 'ի Կապադովկիա փախստեայ ընդ
Մարս և ընդ աշխարհն Հայոց: Ոչինչ հաս-
տատեաց մինչև եկին առ նա բարեկամք,

ապա շատ ինչ անհնարին վարանեալ 'ի խորհուրդս վասն նորուն իրի, առեալ կարդէր զզօրականն և քաջալերէր խրախոյս կարդայր միանգամայն Հելլենաց և խը-ժադիցն։ Անդ և փաղանգն, զնոյն և Ար-գիւրասպայիք խրախուսէին զնա, իբրու անշուշտ ոչինչ ժուժկալել թշնամեացն ընդդէմ նոցա։ Քանզի այս զօրականք էին հինաւուրց զինուորեալք առ Փիլիպպոսի և առ Աղեքսանդրի, նահատակք 'ի մար-տի, անվկանդք և անպարտելիք. շատք 'ի նոցանէ զեօթանասնամենիւք ուրեմն էին և 'ի նոցանէն և ոչ ոք պակաս էր 'ի վաթ-սնամենից. ուստի և յառաջ նահատա-կեալ նոքա ընդդէմ Անտիգոնոսեանցն, ձայն բարձեալ գոչէին. "Ընդդէմ ձերոց իսկ հարց մեզանէք, ո՞ Զարադլուխք"։

Եւ այնպէս մեծաւ ուժով յարձա-կեալք 'ի դիմի, հարին խորտակեցին առ հասարակ զփաղանգն. և չեկաց ոք ա-խոյեան ընդդէմ, և 'ի սուր մաշեցան նոքա բազմագոյն մասամբ։ Անդանօր ապա խ-ապառ հարեալ վատթարեցաւ Անտիգոնոս. սակայն և 'ի գունդ այրուձիոյն յաղթա-կան ելանէր. քանզի Պեւկեստաս անարի վատացեալ 'ի կռուին, հասեալ յայնժամ կալաւ Անտիգոնոս զամենայն ալին՝ քա-ջապէս նահատակեալ 'ի վտանգս մեծա-մեծս. գործակից նմա և վայրն ինքնին լի-նէր, զի էր անդ դաշտաւայր լայնատարդ, ոչ խորագոյնս և ոչ կորդ և կարծր, այլ իբրև աւազակոյտ ափանց և համակ աղ-

տաղտին արեւակէզ, և հարեալ յուզեալ 'ի բիւրուց երիվարաց և 'ի բիւրաւորաց մարդկան 'ի խառնեալ մարտին՝ ահագին ամբէ ելանէր դիզանայր փոշւոյ Իբրև կիր անշէջ, և ցիրուցան սպիտակացուցեալ զօդդ և մեայլ 'ի վերայ տեսանելեացն ածէր. ուստի և հեշտին Անտիգոնոս յաներևոյթս հասեալ տիրացաւ աղխին:

Իբրև մարտին վախճան լինէր, արձակէր Տեւտամոս հրեշտակս առ Անտիգոնոս՝ խնդրէր դարձուցանել զաղին: Խոստացեալ նորա զայն Արգիւրասպացւոց, առ այս և յայլ ինչ ևս իրս բարեկամութեամբ գնալ ընդ նոսա, եթէ միայն 'ի ձեռս տացեն զԵւմենէս՝ յայնժամ ապա յամբարշաւութեան խորհուրդն հաստատեցան նոքա տալ կենդանւոյն զայրն քաջ 'ի ձեռս թշնամեացն: Զառաջինն եկին մերձեցան նոքա առ նա, և ինքն անկասկած կայր. մօտ եկին և հայէին 'ի նա, կէսք լային ըզկորուստ աղխին, և կէսք խրախոյս քաջալեր տային նմա Իբրու յաղթականի. և կէսք դարձեալ զայլս 'ի զօրավարաց անտի ընդ վայր հարեալ խոտէին: Ապա 'ի վերայ խուժեալ նորա առհասարակ առին կորզեցին զվաղակաւորն, և զձեռաքն շուրջ զգօտին պարուրեալ պրկեցին զնա: Յայնժամ յԱնտիգոնոսէ առաքեալ Նիկանովք առնուլ տանել զնա, անդ ընդ մէջ Մակեդոնացւոցն անցեալ Եւմենէս, աղաչէր խօսել ինչ մի, ոչ յողոք անկանել նոցա և ոչ պատասխանի անձին առնել, այլ ինչ

մի ասէլ նոցա պիտանի։ Իբրև առհասարակ լռութիւն լինէր, նա կացեալ 'ի բարձրաւանդակի և ձգեալ զձեռան կապեալս, ասէր այսպէս.

"Եւ զոր ասա՝ ով եղեռնաւորք Մակեդոնացւոց, զոր խնդրէր ախոյեան՝ ընդդէմ ձեր կանգնել Անտիգոնոս, մեծ ևս քան զոր դուք ինքնին կանգնէք աւադիկ ձեր ընդդէմ, գերի 'ի ձեռս նորա զձերդ տալով զօրավար։ Եւ ոչ արդեօք անարժան իցէ բանդ և դժպատեհ, յաղթական դուք ինքնին գոլով պարտութիւն խոստովանեալ 'ի շնորհս աղխին և կարասւոյն, իբրու որ յաղթութիւնն գլխովին 'ի կարասին իցէ և ոչ 'ի զէնս։ Արդ դուք և զձերոյինդ զօրավար 'ի փրկանս առաքէք կարասւոյն. բայց ես ինքնին անպարտելի ածեալ գնամ աւադիկ՝ պարտեալ զթշնամիսն, սակայն մատնեալ 'ի կորուստ յիմոց անտի նիզակակցաց։ Օ՞ն առեալ ես աւադիկ երդմնեցուցանեմ զձեզ յԱրամազդ խնամակալ բանակաց և 'ի դիս ոստիկանս երդմանց, աղէ՝ դուք ինքնին ասուէն ապանէք զիս. քանզի և անդանօր եթէ սպանանիմ, դարձեալ ձեր է ոճիրն։ Ոչինչ արդեօք բամբասեսցէ Անտիգոնոս, իբրև պէսք են նմա Եւմենեայ մեռելոյ՝ և ոչ կենդանւոյ։ Ապա եթէ զձեր ձեռս խնայէք շաղախել, շատ է զմի յիմոցս ձեռաց ունել արձակ՝ 'ի գլուխս զբանդ տանել։ Ապ՝ եթէ և սուր մի չվստահանայք յիմ ձեռս, աղէ՝ կապեալ զիս այսպէս առաջի արկէք

դաղանաց. թէ զայդ առնիցէք՝ իմ իսկ աւադիկ արձակեալ է զձեզ 'ի պատուհասէն իմմէ, իբրու որ անշուշտ մեծապէս սրբութեամբ և արդարութեամբ գնացեալ ձեր ընդ ձեր զօրավար ,, :

Յայսպիսեաց ասոյ խօսեալ Եւմենէս, անդ առհասարակ զօրականն 'ի խոր խոցեալ դառնապէս հեծէր. իսկ Արդիւրասպացիք ձայն բարձեալ աղաղակէին՝ առնուլ 'ի բաց տանել զԵւմենէս, և մի շաղակրատանաց բանից ունկն մատուցանել. իբրու որ դժնդակ չիցէ արդեօք՝ զի անըզգամ ոք այր Քէրրոնիսացի 'ի մարտս բիւրս զՄակեդոնացիսն վաստակեցուցեալ՝ լուծցէ զպատուհասն, այլ դժնդակ այն է՝ զի զօրականք քաջամարտիկք Աղեքսանդրի և Փիլիպպոսի այնչափ ինն ընդ քիրան յոգնեալք, և 'ի ծերութեան իւրեանց 'ի դերևս 'ի մրցանակէն ելեալք՝ 'ի մուրանաց ժողովեսցեն հաց. և նոցուն կանայք աւադիկ զայս երրորդ գիշեր անկեալ ննջեն ընդ թշնամեաց: Զայս ասացին և փութապէս 'ի բաց տանէին զԵւմենէս: Բայց անդուստ Անտիգոնոս երկուցեալ՝ եթէ կոխեսցի այրն 'ի խուժանէն (քանզի և ոչ ոք մնաց անդ 'ի զակշին), արձակէր 'ի դուրս տասն 'ի փղաց կորովեաց և տիգաւորս բազումս 'ի Մարաց և 'ի Պարթևաց՝ 'ի բաց զամբոխն փարատել. իսկ ինքն առվաղնջուց մտերմութեանն ընդ առն՝ ոչինչ պնդեցաւ յոգին այնպէս տեսանել զնա. և հարցեալ 'ի պահապանացն՝ եթէ զիարդ

պահել զայրն արժան ի՞նչ է, եւ պատասխանի. "Իբրև զմի 'ի փղաց, կամ զմի յառիւծուց"։ Այլ վայրիկ մի ապա մեծապէս արգահատեալ՝ հրաման տայր առնուլ 'ի նմանէ զշղթայս ծանրաբեռինս, և տալ նմա զմի յիւրոց պաշտօնէիցն իւղել օծանել զնա, և թոյլ ևս տայր բարեկամացն կամ որք կամեսցին՝ կենակից նմա լինել և ընուլ զպէտս նորա։

Արդ 'ի խորհուրդ Անտիգոնոս մոռեալ աւուրս բազումս վասն Եւմենեայ, ունկն դնէր և նէարքոսի կրեսացւոյ բանիցն և խոստմանցն, և Դեմետրիոսի որդւոյ իւրում, որ խնդրէին ապրեցուցանել զԵւմենէս. իսկ այլք գոգցես առհասարակ հակառակ ամբարձեալք ստիպէին զայրն 'ի մահ մատնել։ Եւ պատմեն՝ եթէ հարցանէր Եւմենէս յՈնոմարքոսէ յիւրմէ պահապանէն, եթէ "Առ ի՞նչ ապա 'ի բուռն իւր կալեալ աւադիկ Անտիգոնոս զայր թշնամի և ոխերիմ, ո՛չ վաղվաղակի 'ի մահ վարէ, և կամ թէ մեծանձնութիւն յանդորր հանէ"։ Իսկ Ոնոմարքոս թշնամանօք ասացեալ առ նա, եթէ ո՛չ յայնժամ՝ այլ 'ի մարտին ժամու պարտ էր նմա զքաջութիւն զայն քաջանալ ընդդէմ մահու, "Օ՜ն և օն Արամազդ, ասէր Եւմենէս, իմ և յայնժամ քաջացեալ է. հարց դու զորս միանգամ ընդ իս 'ի վէգ եկին. այլ ես չգոսի զոք յայնժամ քաջագոյն քան զիս"։ Կրկնեաց Ոնոմարքոս. "Արդ զի աւադիկ գտեր զայր քաջ ևս քան զքեզ, զի՞

դու չմնաս դէպ ժամանակին նորա ,, : Ապա
իբրև հաստատեաց Անտիգոնոս 'ի մահ մատ-
նել զԵւմենէս , հրաման տայր ոչ ևս տալ
նմա կերակուր : Եւ այնպէս զաւուրս եր-
կուս և երիս անսուաղ կացեալ նա , 'ի
դուրս մերձենայր մահու . իսկ յայնժամ
յեղակարծումն դէպ եղեալ չու առնել
բանակին , առաքեցին այր մի գնալ սպա-
նանել զնա : Բայց զդիակն Եւմենեայ
տուեալ Անտիգոնոս 'ի ձեռս բարեկամացն
նորա , Թոյլ տայր այրել զնա և առնուլ
տանել զնշխարս նորա 'ի սափոր արծաթի
և տալ կնոջ իւրում և զաւակացն :

Զայս օրինակ ապա մահ առեալ Եւմե-
նէս , յետ այնորիկ և արժանահաս պա-
տուհաս զօրավարաց և զօրականին՝ որ մատն
եղեն նմա, հասանէր 'ի վերայ 'ի դից անտի-
ոչ յօտարաց ինչ ձեռն , այլ 'ի նորուն իսկ
Անտիգոնեայ . քանզի խոտեալ նորա այ-
նուհետև զԱրդիւրասպացին զայն իբրև
ամբարիշտ որեար և դաղանամիտ, 'ի ձեռս
տայր զնոսա Հիւբիրոիոսի կուսակալին
Արաքովսիոյ . պատուէր տուեալ զամե-
նայն ազգ չարչարանաց անցուցեալ ընդ
նոսա՝ 'ի միջոյ պակաս առնել, զի և մի ոք
'ի նոցանէն մի դարձցի 'ի Մակեդոնիա , և
մի զՀելլենականն տեսցէ ծով:

ԶՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ՍԵՐՏՈՎՐԻՈՍԻ ԵՒ ԵՒՄԵՆԵԱՅ

Ա.ՅԴՈՔԻԿ են աւադիկ՝ զոր յաղագս Սերտովրիոսի և Եւմենեայ 'ի յիշատակաց արժանիսն անցեալ մեք։ Իսկ 'ի զուգակըշռութեանդ գտանեմք ինչ հասարակ յերկպանչիւրդ. զի օտարք և եկք գոլով գոքա, յօտար աշխարհի և վտարանդիք, զօրավար կացին մինչև ցվախճան այլալեզու ազգաց, և քաջամարտիկ և բազում զօրաց։

Իսկ է և մասնաւոր Սերտովրիոսի, զի զօրավարեաց նա 'ի միաբան հաւանութենէ նիզակակցացն, որ յանձն առին 'ի պատճառս աւագութեան առն։ Իսկ Եւմենեայ, զի շատք և նախանձաւորք թեկն ածեալ զզօրավարութեան, ինքն նախաթոռ ամբարձաւ միայն 'ի պէտս նահատակութեան գործոցն. ուստի առաջնոյն

իրաւամբք արդեօք հպատակեցան՝ որ միանգամ հաճեալ իսկ էին ընդ իշխանութիւն նորա. և վերջնոյն՝ 'ի պէտս օգտի հնազանդեցան՝ որ միանգամ յիշեալ անբաւականք էին։

Քանզի մին գոլով Հռոմայեցի՝ զօրավար 'ի վերայ Իբերացւոցն եկաց և Լիւսիտանացւոց. և միւսն Քէրրոնիսացի՝ 'ի վերայ Մակեդոնացւոց։ Եւ 'ի ժողովրդոց այսոր առաջինքդ ծառայութիւն 'ի վաղնջուց հարկանէին Հռոմայեցւոց. և վերջինքդ յայնժամ զամենայն մարդիկ ծառայեցուցանէին։

Առ այս՝ և Սերտորիոս ամբարձաւ 'ի զօրավարութիւն, յորժամ և աքանչացեալ իսկ էր իբրև այր սինկղիտիկոս և զօրավար։ Իսկ Եւմենէս՝ յորժամ խուռեալ լիմն էր 'ի պաշտաման անդ դպրի, և ոչ ապիկար միայն էր նա յաւագութեան իւրում, այլ և խոչ ընդ ակն մեծապէս եղեն նմա 'ի բարգաւաճել իւրում. զի բազումք յայտնապէս ընդդէմ դառնային նմա, և բազումք դարձեալ գողաբար դաւաճանէին զնա։ Իսկ Սերտորիոսի յայտնի հակառակամարտ դաւաւ և ոչ ոք, և նուազունք ոմանք 'ի նիզակակցացն 'ի ծածուկ միայն ընդդէմ դարձան նորա. ուստի վասն միոյն վախճան վտանգաց էր՝ յաղթել թշնամւոյն. և վասն միւսոյն վտանգք 'ի վեր բուսանէին 'ի յաղթութենէն՝ առ 'ի յաչաղկոտաց անտի։

Իսկ զինուորական նահատակութիւնք

դոցա նմանատիպք էն և զուգակշիռք, այլ էին նոքա այլաբունք 'ի միմեանց. Եւ-մենէս պատերազմասէր և կռուասէր. և Սերտովրիոս՝ խաղաղասէր և հեզ և հանդարտ. մինչդեռ Եւմենեայ 'ի ձեռս էր յանդորրու վարել կեանս և շքով 'ի տեղի տալ իւրում, յաւերժացաւ 'ի մարտ 'ի պայքար ընդդէմ աւադաց. և Սերտովրիոս անդորրաւէտ անձն՝ ստիպէր առ 'ի մարտ յաներկևանութիւն անձինն ընդդէմ աղարտողաց խաղաղութեան նորա: Քանզի Անտիգոնոս մոադիւրագոյնս արդեօք 'ի գործ զԵւմենէս վարէր, եթէ սա տեղի տուեալ առաջին բարձին՝ գոհ էր երկրորդին. այլ Պոմպէոս՝ և ոչ անվիշտ կենացն ներէր Սերտովրեայ: Ոյր աղագաւ և մին կամակար մտօք մարտ եդեալ կռուէր յիշխանութեան պատճառս. և միւսն յակամայս իշխէր՝ զի ընդդէմ յուզէր պատերազմ: Արդ՝ մարտասէր պարտ է համարել զայրն, որ զաւելաստացութիւնն նախապատիւ քան զաներկևանութիւնն գործիցէ. և քաջամարտիկ զայրն՝ որ մարտիւ զաներկևանութիւնն հանդերձեսցէ:

Ա՛ռ այսոքիւք դարձեալ՝ զի 'ի դոցանէ մին մեռանէր, և չէր նախազգած. և միւսն՝ և կանուխ ակն ունէր մահուն. առաջինդ՝ հեզութեան է յայտարար, (քանզի վստահ 'ի բարեկամն եցոյց զանձն). իսկ երկրորդդ՝ տկարութեան. քանզի կամելով փախչէր՝ ձերբակալ եղև: Եւ արդեօք

մահն ինքնին ոչ անփառունակ ինչ գործեաց զկեանսն միոյն. քանզի յիւրոց անտի նիզակակցաց կրեաց կիրս՝ զոր 'ի Թշնամեաց և ոչ ոք անցոյց ընդ նա. այլ միւսդ՝ ոչինչ բաւական 'ի փախչել մինչև ըմբռնեալ, և ապա յետ ըմբռնելոյն՝ կենաց ցանկացեալ, գեղեցիկս այնուհետև՝ ոչ 'ի մահուանէն ապրեցաւ և ոչ մեռաւ. առ այս՝ և 'ի խնդրուածոց անտի իւրոց և յողբանաց՝ և 'ի վերայ հոգւոյն տիրացուցանէր զԹշնամին, որ 'ի վերայ մարմնոյն միայն կարծէր ունել իշխանութիւն:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Ողորմ և աշխարհելի կերպարան կրից բարեկամի յակամայս ոգորելոյ ընդ առն բարեկամի, ճշգրիտ և քաջիկ նկարագրեալ 'ի Պլուտարքեայ։

2. Այս Հերոնիմոս հայրենակից և բարեկամն էր Եւմենեայ։ Եւ է սա 'ի նշանաւոր պատմագրաց. և գրեաց սա զկուսակալացն՝ որ բաժանեցին զարքայութիւնն Աղեքսանդրի։

ՑՈՒՑԱԿ

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՑՍ

ԱՐԻՍՏԻԴԷՍ 7

ՄԱՐԿՈՍ ԿԱՏՈՎՆ 65
Զուգակշռումներ 119

ՊԻՒՌՈՍ 133

ԳԱՅԻՈՍ ՄԱՐԻՈՍ 213
. . . . . .

ԼԻՍԱՆԴՐՈՍ 307

ՍԻՂԼԱ 367
Զուգակշռումներ 451

ԿԻՄՈՎՆ 465

ԼՈՒԿՈՒԼԼՈՍ 509
Զուգակշռումներ 607

ՍԵՐՏՈՎՐԻՈՍ 619

ԵՒՄԵՆԷՍ 669
Զուգակշռումներ 709